5189

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

12004

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

Նուէր Մխիթարեան Գրադարանին

22-5-1978 [illegible]

[illegible]

digitised by A.R.A.R.@



Երթայք յաշխարհ ամ. եւ քարոզեցէք զա-
ւետարանն ամենայն արարածոց. Մրկ. ԺԶ. 15:

digitised by A.R.A.R.@

225
Գ-83
518-ԱՐՉ

# ԳՈՐԾՔ
## ԱՌԱՔԵԼՈՑ

## ԹՈՒՂԹՔ ՊՕՂՈՍԻ
## ԱՌԱՔԵԼՈՑ

## ԹՈՒՂԹՔ
## ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

## ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1824

digitised by A.R.A.R.@

5189-տև.

ԳՐԱԴԱՐԱՆ

550-78

digitised by A.R.A.R.@

# ԳՈՐԾՔ

# ԱՌԱՔԵԼՈՑ

## ԳԼ. Ա.

1 ԶԲԱՆՆ ԱՌԱՋԻՆ
զոր արարի վ͞ս ամենայնի
ո՛ Թէոփիլէ. զոր սկսաւ
Յ͞ս առնել եւ ուսուցանել,
2 * մինչեւ յօրն պատուիրելոյ առաքելոցն
'ի ձեռն հոգւոյն ս͞բյ. զորս ընտրեացն,
3 եւ վերացաւ: * Որոց յանդիման կացոյց
զինքն կենդանի յետ չարչարանացն իւ-
րոց 'ի բազում արուեստս՝ յաւուրս քա-
ռասուն երեւել ն͞ց եւ ասել վ͞ս արքայ-
4 ութեան ա͞յ: * Եւ 'ի հաղորդել ը͞ն նոսա
հացին, պատուէր տայր ն͞ց՝ յե͞ղմէ մի
մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր՝
5 զոր լուարուքն յինէն: * Զի յովհան-

նէս



digitised by A.R.A.R.@

նէս մկրտեաց 'ի ջուր . այլ դուք մկր-
տիցիք 'ի Հոգւոյն Սրբ , ոչ յետ բազում
ինչ աւուրցս այսոցիկ : * Եւ նոքա մա-
տուցեալ հարցանէին զնա՝ և ասէին .
Տր՝ եթէ 'ի ժմկի աստ յայսմիկ հաստա-
ցանելո՞յ իցես զարքայութի իէլի : * Ասէ
ցնս . ոչ է ձեզ գիտել զժամս և զժա-
մանակս, զոր Հայր եդ յիւրում իշխա-
նութեան . * այլ առջիք զօրութիւն 'ի հա-
սանել Հոգւոյն սրբոյ 'ի վր ձեր . և եղի-
ջիք ինձ վկայք յեհմ և յամ հրէաստա-
նի և 'ի սամարիա, մինչև 'ի ծագս երկ-
րի: * Եւ զայս իբրև ասաց, մինչ դեռ
հայէին նոքա՝ վերացաւ . և ամպն կա-
լաւ զնա յաչաց նոցա: * Եւ մինչ դեռ 1
պշուցեալ էին ընդ երկինս երթալոյ նր,
և ահաւասիկ արք երկու երևեցան նց 'ի
հանդերձս սպիտակս,* որք և ասացին . 1
արք գալիլեացիք՝ զի՞ կայք հայեցեալ ընդ
երկինս: Այս յս՝ որ վերացաւ 'ի ձէնջ
յերկինս, սոյնպէս եկեսցէ՝ զորօրինակ
տեսիք զնա երթալ յերկինս : * Ապա 1
դարձան յեհմ յանուանեալ լեռնէն ձի-
թենեաց . որ է մերձ յեհմ ըստ շաբա-
թու ճանապարհի : * Եւ իբրև մտին , 1
ելին 'ի վերնատունն՝ ուր վանքն իսկ էին .
պետրոս և յակոբոս՝ յովհաննէս և անդ-
րէաս՝ փիլիպպոս և թովմաս՝ բարթո-
ղոմէոս և մատթէոս՝ յակովբոս աղ-
փեան և շմաւոն նախանձայոյզ՝ և յու-

digitised by A.R.A.R.@

դա

14 դա Յակովբեան : * Սոքա ամենեքեան
էին համապաղորդեալ միաբան յաղօթս
հանդերձ կանամբք, և Մարեմաւ մարբն
յ՟ի՝ և եղբարբք նորա :
15 * Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ
Պետրոս 'ի մէջ եղբարցն՝ ասէ . և էր
անդ բազմութի՟ անուանց իբրև հարիւր
16 և քսանից : * Արք եղբարք՝ պարտ էր
կատարել գրոյն, զոր յառաջագոյն ա-
սաց Հոգին ս՟բ 'ի բերանոյ Դաւթի, վ՟ս
Յուդայի՝ որ եղև առաջնորդ ունելեացն
17 յ՟ի . * զի 'ի թիւս մեր էր ընդ մեզ . և
հասեալ էր ն՟մ վիճակ պաշտամանս այ-
18 սորիկ : * Սա ստացաւ գեօղ 'ի վարձուց
անիրաւութե՟ . և ուռուցեալ հերձաւ ը՟
19 մէջ՝ և հեղաւ ա՟մ փոր ն՟ր : * Եւ յայտ-
նի եղև ամենեցուն որ բնակեալ են յե-
րուսաղէմ . մինչև կոչել գեղջն այնմիկ
բարբառով իւրեանց ակեղդամայ . այս-
20 ինքն է՝ գեօղ արեան : * Զի գրեալ է
'ի գիրս սաղմոսաց . եղիցի բնակութի՟ ն՟ր
աւերակ, և մի ոք իցէ՝ որ բնակիցէ 'ի
21 ն՟մ . և զկարգ նորա առցէ այլ : * Արդ՝
պարտ է յարանցս յայսցանէ՝ եկելոցս ը՟
մեզ յա՟մ ժամանակի, յորում մուտ և
22 ել առ մեզ տ՟ր յ՟ս . * սկսեալ 'ի մկր-
տութէն Յովհաննու մինչև յօրն՝ յորում
վերացաւ 'ի մէնջ . վկայ յարութե՟ ն՟ր ը՟
23 մեզ լինել միում 'ի սոցանէ : * Եւ կա-
ցուցին երկուս . զՅովսէփ՝ որում Բար-
սա-

digitised by A.R.A.R.@

սաբայն կոչէին, որ անուանեցաւն յուս-
տոս. և զմատաթիա : * Եւ կացեալ յա- 2
ղօթս՝ ասեն. դու Տէր սրտագէտ ամի՝
յայտնեա՛ զմի ոք՝ զոր ընտրեցեր 'ի սո-
ցանէ յերկոցունց. * առնուլ զվիճակ 2
պաշտաման այսորիկ՝ և զառաքելութե՛,
յորմէ անկաւ յուդաս գնալ 'ի տեղի իւր:
* Եւ ետուն վիճակս նց, և ելանէր վի- 2
ճակն մատաթեայ. և համարեցաւ ընդ
Վ. Ջ մետասան առաքելոցն :

## ԳԼ : Բ :

Եւ 'ի կատարել աւուրցն պենտեկոս-
տէից՝ էին ամենեքեան միաբան 'ի
միասին : * Եւ եղև յանկարծակի հնչ-
չիւն յերկնից՝ եկել իբրև սաստիկ հող-
մոյ. և ելից զամ տունն յորում նստէին :
* Եւ երևեցան նց բաժանեալ լեզուք
իբրև 'ի հրոյ, և նստաւ իւրաքանչիւր
'ի վ՛ր նց : * Եւ լցան ամենեքեան հոգ-
ւով սրբով, և սկսան խօսել յայլ և այլ
լեզուս՝ ոպ և հոգին տայր բարբառել
նց : * Եւ էին յէմ բնակեալ հրեայք
արք երկիւղածք՝ յամ ազգաց որ 'ի ներ-
քոյ երկնից : * Եւ իբրև եղև բարբառս
այս՝ եկն միաբան բազմութիւն և խռնե-
ցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօ-
սել նց : * Սքանչանային ամենեքեան,
և զարմանային՝ և ասէին ը միմեանս.
Ոչ աւասիկ ամենեքին սոքա որ խօսին՝
գա-

digitised by A.R.A.R.@

8 Գալիլեացիք են. * Եւ զիա՞րդ լսեմք մեք
յիւրաքանչիւր բարբառս մեր յորում
9 ծնեալ եմք ։ * Պարթեւք, եւ Մարք, եւ
Ելամացիք, եւ որ բնակեալ են ՚ի Միջա-
գետս, ՚ի Հրէաստանի եւ ՚ի Գամիրս ՚ի
10 Պոնտոս եւ յԱսիա. * ՚ի Փռիւգիա եւ ՚ի
Պամփիւլիա՝ յԵգիպտոս եւ ՚ի կողմանս Լի-
բէացւոց, որ է Կիւրենացւոց, եւ որ եկք
11 Հռովմայեցիք ։ * Հրեայք՝ եւ եկք նորոյն,
Կրետացիք եւ Արաբացիք՝ լսեմք խօսից
նոցա ՚ի մեր լեզուս զմեծամեծս Այ ։
12 * Աքանչանային ամենեքեան զարմա-
ցեալք, եւ առէին զմիմեանս. զի՞նչ կա-
13 միցի այս լինել ։ * Եւ կէսոցն է խաղ
արկեալ առէին, թէ քաղցուալից իցեն ։
14 * Յարուցեալ Պետրոս հանդերձ մետա-
սանիւքն՝ ամբարձ զձայն իւր՝ եւ խօսե-
ցաւ ընդ նս. արք Հրէաստանեայք՝ եւ որ
բնակեալ էք յԵմ ամենեքին, այս ձեզ
յայտնի լիցի՝ եւ ունկն դիք բանից իմոց ։
15 * Ոչ որպէս դուք կարծէք՝ թէ սոքա ար-
բեալ իցեն. զի դեռ երեք ժամք են ա-
16 ւուրս ։ * Այլ այս է՝ որ ասացաւ ՚ի ձեռն
17 մարգարէին Յովելեայ ։ * Եւ եղիցի յետ
այսորիկ յաւուրս յետինս՝ ասէ Ած, հե-
ղից յոգւոյ իմմէ ՚ի վր ամ մարմնոյ. եւ
մարգարէասցին ուստերք ձեր, եւ դըս-
տերք ձեր. եւ երիտասարդք ձեր տեսիլս
տեսցեն, եւ ծերք ձեր երազովք երազե-
18 ցին ։ * Եւ ՚ի վր ծառայից իմոց՝ եւ ՚ի վր
աղախ-

digitised by A.R.A.R.@

աղախնայց իմոց՝ յաւուրս յայնոսիկ հե-
ղից յոգւոյ իմմէ, և մարգարէասցին:
* Եւ տաց նշանս յերկինս 'ի վեր՝ և նշա- 19
նս յերկիր 'ի խոնարհ, արիւն և հուր
և մրրիկ ծխոյ: * Արեգակն դարձցի 'ի 20
խաւար, և լուսին յարիւն՝ մինչև ե-
կեալ իցէ օր տ՟ն մեծ և երևելի: * Եւ 21
եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն
տ՟ն, կեցցէ:
ԱԲ * Արք իէ՟լացիք, լուարուք զբանս զայ- 22
սոսիկ. զյ՟ս նազովրեցի, զայր ցուցեալ
յա՟յ 'ի ձեզ՝ զօրութ՟ և նշանօք և արուես-
տիւք, զոր արար նովաւ ա՟ծ 'ի մէջ ձե-
րում. ո՟պ և դուք իսկ գիտէք: * Զնա 23
նկատեալ խորհրդով և կանխագիտու-
թե՟ն ա՟յ՝ մատնեալ 'ի ձեռս անօրինաց՝
բևեռեալ 'ի փայտի սպանիք. * զոր ա՟ծ 24
յարոյց՝ լուծեալ զերկունս մահու. ք՟զի
ոչ էր հնար ըմբռնել նմա 'ի նմանէ:
* Դաւիթ իսկ ասէ զնմանէ. յառաջա- 25
գոյն տեսանէի զտ՟ր առաջի իմ յամե-
նայն ժամ, զի ը՟ աջմէ իմմէ է, զի մի
սասանեցայց. * վ՟ա այսորիկ ուրախ եղև 26
սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ. Եւ և
մարմին իմ բնակեսցէ յուսով: * Զի 27
ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ
տացես սրբոյ քում տեսանել զապակա-
նութի՟: * Ծանուցեր ինձ զճանապարհս 28
կենաց. լցուցեր զիս ուրախութ՟ յերե-
սաց քոց 'ի քաղցրութե՟: * Արք եղբարք՝ 29
պարտ

digitised by A.R.A.R.@

պարտ է համարձակութիւն ասել վն նա-
հապետին Դաւթի. զի մեռաւ՝ և թա-
ղեցաւ. և գերեզման նորա կայ 'ի միջի
30 մերում մինչև ցայսօր: * Զի մարգարէ
էր, և գիտէր՝ եթէ երդմամբ երդուաւ
նմա Ած 'ի պտղոյ յորովայնէ նր նստու-
31 ցանել յաթոռ նր: * յառաջագոյն ծա-
նուցեալ խօսեցաւ վն յարութեն քի՝ զի
ոչ թողաւ ոգի նր 'ի դժոխս, և ոչ մար-
32 մին նր ետես զապականութի: * Զայս
յս յարոյց Ած՝ որում ամենեքին մեք
33 վկայեմք: * Աջովն այ բարձրացեալ,
զաւետիս հոգւոյն սբյ ընկալեալ 'ի հօ-
րէ՝ սփռեաց զայս, զոր դուք իսկ տեսա-
34 նէք՝ և լսէք: * Զի ոչ եթէ Դաւիթ ել
յերկինս. ասէ իսկ ինքն՝ ասաց Տր ցՏր
35 իմ, նիստ ընդ աջմէ իմմէ՝ * մինչև եդից
զթշնամիս քո պատուանդան ոտից քոց:
36 * Արդ՝ Ճշմարտիւ գիտասցէ ամ տունն
Իլի, զի և Տր զնա և օծեալ Ած արար.
37 զայն յս՝ զոր դուքն խաչեցէք: * Եւ
լուեալ զայս՝ զղջացան 'ի սիրտս իւրեանց.
և ասեն ցպետրոս՝ և ցայլ առաքեալսն.
38 զի՞նչ գործեսցուք արք եղբարք: * Ասէ
ցնս պետրոս. ապաշաւեցէք՝ և մկրտես-
ցի իւրաքանչիւրոք 'ի ձէնջ յանուն տն
յի քի 'ի թողութի մեղաց, և ընկալ-
39 ջիք զաւետիս հոգւոյն սբյ: * Զի ձեզ
են աւետիքս՝ և որդւոց ձերոց, և ամե-
նայն հեռաւորաց՝ զորս կոչեսցէ Տր Ած
մեր:

digitised by A.R.A.R.@

մեր : * Եւ այլովք բանիւք բազմօք 40
վկայութիւն դնէր, և մխիթարէր զնոսա և
ասէր. ապրեցարուք յազգէ աստի խոտո-
տորելոյ յայսմանէ : * Ոմանց յօժա- 41
րութեամբ ընկալեալ զբանն նորա մկրտեցան.
և յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբ-
րև երեք հազարք :
ԱԳ *Եւ էին հանապազորդեալք վարդա- 42
պետութեան առաքելոյն, և հաղորդութեան՝
և բեկանելոյ հացին, և աղօթից : * Եւ 43
լինէր ամենայն անձին՝ ահ և երկիւղ. բազում
նշանք և արուեստք 'ի ձեռս առաքելոցն
գործէին : * Ամենայն հաւատացեալքն 44
էին 'ի միասին, և ունէին զամենայն ինչ հա-
սարակաց : * Եւ զստացուածս և զինչս 45
վաճառէին, և բաշխէին զայն ամենե-
ցուն՝ ում զինչ պիտոյ ինչ լինէր :
* Հանապազօր կանխեալ միաբանութեամբ 46
'ի տաճարն, և առտնին՝ բեկանէին ըզ-
հացն, և առնուին կերակուր ուրախութեամբ
և միամտութեամբ սրտի : * օրհնէին զԱստուած՝ 47
և ունէին շնորհս առ ամենայն ժողովուրդն.
և Տէր յաւելոյր 'ի փրկեալսն հանապա-
զօր 'ի նոյն :

## ԳԼ. Գ.

Պետրոս և Յովհաննէս ելանէին 'ի տա- 1
ճար անդր յիններորդ ժամու աղօ-
թիցն : * Եւ էր այր մի կաղ յորովայնէ 2
մօր իւրոյ՝ զոր բարձեալ դնէին հանա-
պազ

digitised by A.R.A.R.@

պաղ առ դրան տաճարին, որ կոչէր գե-
ղեցիկ. խնդրել ողորմութի՟ յայնցանէ՝
3 որ մտանէին 'ի տաճարն: * Որոյ տե-
սեալ զպետրոս և զյովհաննէս՝ զի մտա-
նէին 'ի տաճարն, աղաչէր ողորմութի՟
4 առնուլ: * Հայեցաւ 'ի նա պետրոս յով՟
հաննու հանդերձ, և ասէ. հայեաց 'ի
5 մեզ: * Նա դարձաւ 'ի նո՟, և ակն ու-
6 նէր առնուլ ինչ 'ի նոցանէ: * Եւ ասէ
պետրոս. արծաթ և ոսկի ոչ ունիմ.
բայց զոր ունիմ՝ զայս տաց քեզ. յա-
նուն յի՟ք՟ի նազովրեցւոյ արի՝ և գնա՛:
7 * Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նո՟՝ յարոյց
զնա. և անդէն հաստատեցան բարձք
8 նո՟՝ և սրունքն: * Ի վեր վազեաց և սկ-
սաւ գնալ, և եմուտ ը՟ նո՟ 'ի տաճարն.
գնայր և վազվազէր՝ և օրհնէր զա՟ծ:
9 * Եւ ետես ա՟մ ժողովուրդն զնա՝ զի
10 գնայր և օրհնէր զա՟ծ. * և գիտէին
զնա՝ զի սա էր, որ նստէր վ՟ն ողորմութե՟
առ գեղեցիկ դրան տաճարին, և լցան
զարմանալեօք 'ի վ՟ր նշանին՝ որ եղև:
11 * Եւ մինչ նա ունէր զպետրոս և զյով-
հաննէս, ընթացաւ ա՟մ ժողովուրդն առ
նո՟ 'ի սրահն՝ որ կոչէր սողոմոնի՝ զար-
12 մացեալք: * Տեսեալ պետրոս, պա-
տասխանի ետ ժողովրդեանն. արք իս-
րայէլացիք՝ զի՞ զարմացեալ էք 'ի վերայ
այսորիկ՝ կամ ը՟ մեզ՝ զի՞ էք պշուցեալ,
իբրու թէ անձին զօրութե՟ ինչ՝ կի՟ք քա-


digitised by A.R.A.R.@

ջութ արարեալ իցէ գնալդ դմա ։ * Ած 13
աբրահամու՝ և ած սահակայ՝ և ած յա-
կովբայ, ած հարցն մերոց փառաւորեաց
զորդի իւր զյս ․ զոր դուքն մատնեցէք՝
և ուրացայք առաջի պիղատոսի, 'ի դա-
տել նր արձակել ։ * Եւ դուք զսրբն և 14
զարդարն ուրացայք, և խնդրեցէք այր
մի մահապարտ շնորհել ձեզ ։ * Եւ զա- 15
ռաջնորդ կենացն սպանէք, զոր ած յա-
րոյց 'ի մեռելոց ․ որում մեք իսկ վկայ
եմք ։ * Եւ հաւատովք անուան նորա 16
զսա՝ զոր տեսանէքդ և գիտէք, հաստա-
տեաց անուն նր ․ և հաւատքն որք նո-
վաւ, ետուն դմա զառողջութիւն զայս՝
յանդիման ձեր ամենեցուն ։ * Եւ արդ 17
եղբարք՝ գիտեմ զի անգիտութ արարէք՝
ոպ և իշխանքն ձեր ։ * Այլ ած՝ որպէս 18
յառաջագոյն պատմեաց 'ի բերանոյ ա-
մենայն մարգարէից զչարչարելն քրի իւ-
րոյ՝ նոյնպէս և կատարեաց ։ * Արդ՝ ա- 19
պաշաւեցէք և դարձարուք 'ի ջնջել ըզ-
մեղս ձեր ․ * որպէս զի եկեսցեն ժամա- 20
նակք հանգստեան յերեսաց տն ․ և ա-
ռաքեսցէ զյառաջագոյն նկատեալն ձեզ՝
զյս քս ։ * Զոր պարտ է երկնից ընդու- 21
նել մինչև 'ի ժամանակս ամենեցուն
հաստատելոյ ․ զորոց խօսեցաւ ած 'ի բե-
րանոյ սրբոց իւրոց մարգարէից ։
Աղ * Մովսէս ասաց ցհարսն մեր, թէ մար- 22
գարէ յարուսցէ ձեզ տր ած ձեր յեղ-

բարց

digitised by A.R.A.R.@

բարց ձերոց իբրև զիս, նմա լուիջիք՝ ըստ
23 ամենայնի՝ որ զինչ և խօսեսցի առ ձեզ։ *Եւ
եղիցի ամենայն անձն՝ որ ոչ լուիցէ մարգա֊
րէին այնմիկ, սատակեսցի 'ի ժողովրդե֊
24 նէն։ *Եւ ամենայն մարգարէքն՝ որ 'ի Սամուե֊
լէ և այսր՝ խօսեցան, և պատմեցին զա֊
25 ւուրս զայսոսիկ։ *Դուք էք որդիք մար֊
գարէիցն՝ և ուխտին, զոր ուխտեաց Աստուած
ընդ հարս ձեր, և ասէ ցԱբրահամ. 'ի զա֊
ւակի քում օրհնեսցին ամենայն ազգք երկրի։
26 *Ձեզ նախ յարոյց Աստուած զորդի իւր, և
առաքեաց զնա օրհնել զձեզ՝ 'ի դառնալ
ձեզ իւրաքանչիւր 'ի չարեաց ձերոց։

## ԳԼ. Դ։

1 Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովր֊
դեանն, հասին 'ի վերայ նոցա քահանայա֊
պետքն և իշխանք տաճարին՝ և սադու֊
2 կեցիքն, *զայրագնեալք՝ վասն ուսուցա֊
նելոյ նոցա զժողովուրդն՝ և պատմելոյ յՅիսուս
3 զյարութիւն մեռելոց։ *Արկեցին 'ի նոսա ըզ֊
ձեռս իւրեանց. և եդին զնոսա 'ի բանտի՝
4 մինչև 'ի վաղիւն, զի էր ընդ երեկս։ *Իսկ
բազումք 'ի լսողաց բանին՝ հաւատացին.
և եղև թիւ մարդկան իբրև հազարաց
5 հնգից։ *Եւ եղև 'ի վաղիւ անդր՝ ժո֊
ղովել նոցա զիշխանսն և զերիցունս և ըզ֊
6 դպիրսն յԵրուսաղէմ, *և զԱննա քահանայա֊
պետ՝ և զԿայիափա, և զՅովհաննէս և
զԱղեքսանդրոս, և որք միանգամ էին
յազ֊

digitised by A.R.A.R.@

յազգէ քահանայութեան ։ * Եւ կացու- 7
ցեալ զն՟ո ՚ի մէջ՝ հարցանէին . որո՞վ զօ-
րութե՟բ կա՟մ որո՞վ անուամբ արարէք դուք
զայս ։ * Յայնժամ պետրոս լցեալ հոգ- 8
ւովն սրբով՝ ասէ ցն՟ո . իշխանք ժողովր-
դեան՝ և երիցունք ի՟էլի . * եթէ արժա՞ն 9
ինչ իցէ դատել զմեզ այսօր վ՟ս երախ-
տեաց առն միոյ տկարի , որով սա բժշկե-
ցաւ ։ * Յայտնի լիցի ամե՟ն ձեզ՝ և ա՟մ 10
ժողովրդեանդ ի՟էլի . զի յանուն յ՟ի ք՟ի
նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցէք՝ զոր
ա՟ծ յարոյց ՚ի մեռելոց , նովաւ սա կայ
աւասիկ առաջի ձեր ողջացեալ ։ * Սա է 11
վէմն անարգեալ ՚ի ձէնջ շինողաց , որ ե-
ղև գլուխ անկեան . * և չի՛ք այլով իւիք 12
փրկութի՟ . զի և ո՛չ անուն այլ դոյ ՚ի ներ-
քոյ երկնից տուեալ ՚ի մարդիկ՝ որով ար-
ժան իցէ կեալ մեզ ։
Աւ * Հայեցեալ ՚ի համարձակութի՟ն պետ- 13
րոսի և յովհաննու , և ՚ի վ՟ր հասեալ՝ թէ
արք տգէտք՝ և առանց դպրութե՟ են ,
զարմանային . զի ճանաչէին զն՟ո՝ թէ ը՟
յ՟ի էին . * և զայրն ևս տեսանէին զբժշ- 14
կեալն՝ զի կայր ը՟ նո . և ոչինչ կարէին
տալ պատասխանի ։ * Եւ հրամայեալ 15
ն՟ց արտաքս քան զատեանն ելանել , խոր-
հեցան ը՟ միմեանս , * և ասեն . զի՞նչ 16
արասցուք արանցս այսոցիկ՝ զի երևելի
նշան եղև ՚ի ձեռն սոցա . ա՟մ իսկ բնակ-
չաց ե՟մի յայտ է , և ո՛չ կարեմք ուրա-
նալ ։

digitised by A.R.A.R.@

17 նալ։ * Այլ զի մի առաւել հռչակեսցի
՚ի ժողովուրդն, սպառնասցուք նոցա՝ մի ևս
խօսել յանուանն յայն՝ մի ումեք ՚ի մարդ-
18 կանէ։ * Եւ կոչեցեալ զնոսա պատուիրե-
ցին ամենևին մի խօսել՝ և մի ուսուցա-
19 նել յանուն յի։ * Իսկ պետրոս և յով-
հաննէս պատասխանի ետուն՝ և ասեն ցնս,
եթէ արժա՞ն իցէ առաջի այ՝ ձեզ լսել
20 առաւել քան այ, ընտրեցէք։ * Այլ
մեք ոչ կարեմք՝ զոր տեսաքն և լուաք՝
21 չխօսել։ * Նք սպառնացեալ արձակեցին
զնս՝ և ոչինչ գտեալ թէ որպ պատուհա-
սեսցեն զնս՝ վն ժողովրդեանն. զի ամե-
նեքեան փառաւոր առնէին զած՝ վն ի-
22 րացն եղելոց։ * Զի ամաց էր այրն՝ աւե-
լի քան զքառասուն՝ յորոյ վր եղև նշանս
23 այս բժշկութե։ * Եւ անտի արձակեալ՝
եկին առ իւրեանսն, և պատմեցին՝ որ-
չափ ինչ ասացին ցնս քահանայապետքն
24 և երիցունքն։ * Եւ նք լուեալ ամբար-
ձին զձայնս իւրեանց առ ած՝ և ասեն։
Դու տր ած՝ որ արարեր զերկինս և զեր-
25 կիր՝ զծով և զամ որ ՚ի նս. * որ ՚ի բե-
րանոյ հօր մերոյ դաւթի ծառայի քո՝ ՚ի
ձեռն հոգւոյն սբյ ասացեր. զմէ՞ խռո-
վեցան հեթանոսք՝ և ժողովուրդք խոր-
26 հեցան ՚ի սնոտիս. * յանդիման եղեն
թագաւորք երկրի, և իշխանք ժողովե-
ցան ՚ի միասին վն տն և վասն օծելոյ նր
27 * Ժողովեցան արդարև ՚ի քաղաքիս յայս
միկ

digitised by A.R.A.R.@

միկ ՚ի վ՟ր սբ՟յ որդւոյ քո յս՟ի՝ զոր օծերն,
Հերովդէս եւ պոնտոս պիղատոս՝ ազ-
գօք եւ ժողովրդովք իլ՟ի, * առնել՝ որչափ 28
ձեռն քո եւ կամք յառաջագոյն սահմա-
նեցին լինել ։ * Եւ արդ տ՟ր՝ հայեաց ՚ի 29
սպառնալիս ն՟ց, եւ տուր ծառայից քոց
ա՟մ համարձակութ՟բ խօսել զբանն քո ․
* ՚ի ձգել զձեռն քո ՚ի բժշկու՟թ, եւ նշ- 30
շանս եւ արուեստս՝ լինել անուամբն սբ՟յ
որդւոյ քո յս՟ի ։ * Եւ մինչ կային նոքա 31
յաղօթս՝ շարժեցաւ տեղին՝ յորում էին
ժողովեալ, եւ լցան ա՟մքին հոգւով ս՟րբով ․
եւ խօսէին զբանն ա՟յ համարձակու՟թբ ։
ԱԶ * Եւ բազմու՟թն հաւատացելոցն էր սիրտ 32
եւ անձն մի ․ եւ ոչ ոք ՚ի նոցանէ ասէր զըն-
չից իւրոց թէ իւր իցէ ․ այլ էր ն՟ց ա՟մ
ինչ հասարակաց ։ * Եւ զօրութ՟բ բազ- 33
մաւ տային վկայու՟թ առաքեալքն զյա-
րու՟թն տ՟ն յս՟ի քս՟ի ․ եւ շնորհք մեծամեծք
էին ՚ի վ՟ր ամենեցուն ն՟ց ։ * Եւ ոչ ոք կա- 34
րօտէր ՚ի ն՟ս ․ զի որ միանգամ տեարքն
էին գեղջից կ՟մ ագարակաց՝ վաճառէին
եւ բերէին զգինս վաճառելոցն, * դնէին 35
առ ոտս առաքելոցն ․ եւ բաշխէին իւրա-
քանչիւր՝ ո՟պ ումեք պիտոյ ինչ լինէր ։
* Յովսէփ՝ որ կոչեցաւն բառնաբաս յա- 36
ռաքելոց անտի, որ թարգմանի՝ որդի
մխիթարու՟թ, ղեւտացի յազգէ՝ կիպրա-
ցի ․ * էր ն՟ր գիւղ, վաճառեաց՝ եւ եբեր 37
զգինսն՝ եւ եդ առ ոտս առաքելոցն ։

ԳԼ ․

digitised by A.R.A.R.@

## ԳԼ. Ե.

1 Եւ այր ոմն անանիա անուն, հանդերձ
կնաւ իւրով սափիրաւ՝ վաճառեաց
2 ագարակ. * և խորեաց ՚ի գնոց անտի՝
գիտելով և կնոջն. և եբեր մասն ինչ՝ եդ
3 առ ոտս առաքելոցն: * Ասէ պետրոս.
անանիա՝ ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ
քո՝ ստել քեզ հոգւոյն ս̅բյ, և խորել ՚ի
4 գնոց գեղջն. * ո՞չ ապաքէն մինչ կայրն՝
քո էր, և ՚ի վաճառելն՝ ը̅ քո իշխանութ̅
էր. զի՞ է՝ զի եդիր ՚ի սրտի քում զիրս
զայս. ո՛չ ստեցեր մարդկան, այլ ա̅յ:
5 * Եւ լուեալ անանիա զբանս զայսոսիկ՝
անկաւ՝ և եհան զոգի. և եղև ահ մեծ
՚ի վերայ ամենեցուն՝ որ լուանն զայն:
6 * Յոտն կացին երիտասարդքն՝ և ամփո-
7 փեցին զնա, և տարան թաղեցին: * Եւ
եղև իբրև ժամք երեք անցին, և կին նր̅
ո՛չ գիտէր զինչ եղեալն էր, եմուտ ՚ի
8 ներքս: * Պատասխանի ետ նմ̅ պետրոս՝
և ասէ. ասա՛ դու ինձ՝ թէ ա՞յնչափ գնոց
զգեօղն վաճառեցիք: և նա ասէ. այո՛
9 այնչափ: * Եւ ասէ ցնա պետրոս. զի՞ է՝
զի միաբանեցայք դուք փորձել զհոգին
տ̅ն. ահա ոտքն՝ որ թաղեցին զայրն քո
10 ՚ի դրան, հանցեն և զքեզ: * Եւ անկաւ
անդէն առ ոտս նր̅՝ և եհան զոգի. մտին
երիտասարդքն՝ գտին զնա մեռեալ, և
11 հանին թաղեցին առ առն իւրում: * Եւ
եղև

digitised by A.R.A.R.@

Եղեւ երկեւղ մեծ 'ի վ՟ր ա՟մ եկեղեցւոյն,
եւ 'ի վ՟ր ամենեցուն՝ որ լսէին զայս :
Աւ. *Եւ 'ի ձեռս առաքելոցն լինէին նշանք 12
եւ արուեստք բազումք 'ի ժողովրդեանն.
եւ էին միաբան ամենեքեան 'ի սրահին
Սողոմոնի :*Եւ յայլոց անտի ոչ՛ք իշխէր 13
մերձենալ առ նո՟. այլ յարգէր զնո՟ ժո-
ղովուրդն :*Եւ առաւել եւս յաւելուին 14
հաւատացեալքն 'ի տ՟ր, բազմութի՟ ա-
րանց եւ կանանց .*մինչեւ 'ի հրապարակ- 15
սըն հանել զհիւանդս եւ դնել պատգա-
րակօք եւ մահճօք իւրեանց. զի է՟ անցա-
նելն պետրոսի՝ գոնէ հովանի նո՟ր հասցէ
ումեք 'ի նոցանէ : *Եւ ժողովէր բազ- 16
մութի՟ շուրջ 'ի քաղաքաց անտի յե՟մ,
բերէին զհիւանդս եւ զնեղեալս յայսոց
պղծոց. որք եւ բժշկէին ամենեքեան :
* Յարուցեալ քահանայապետն, եւ ա- 17
մենեքին որ է՟ն նմ՟ եւ աղանդ սադուկեց-
ւոց՝ լցան նախանձու :* Եւ արկին ըզ- 18
ձեռս յառաքեալսն, եւ եդին զնո՟ հրապա-
րակաւ 'ի բանտի :* Այլ հրեշտակ տ՟ն 19
գիշերի եբաց զդուրս բանտին, եւ հան-
եալ զնո՟՝ ասէ .*գնացէք՝ կացէք 'ի տա- 20
ճարին, եւ խօսեցարո՛ւք է՟ ժողովրդեանն
զա՟մ պատգամս կենացս այսոցիկ :*Եւ 21
իբրեւ լուան, մտին է՟ առաւօտն 'ի տա-
ճարն՝ եւ ուսուցանէին : Եկն քահանա-
պետն՝ եւ որ ընդ նմա, կոչեցին միաբան
զատեանն՝ եւ զա՟մ ծերակոյտ որդւոյն
Ի՟լի,

digitised by A.R.A.R.@

նոսա, և առաքեցին 'ի բանտն ածել զնոսա:
22 * Եւ իբրև եկին սպասաւորքն՝ ոչ գտին
զնոսա 'ի բանտին. դարձեալ անդրէն պատ-
23 մեցին, * և ասեն. Թէ զբանտն գտաք
փակեալ ամ զգուշութբ, և զպահապան-
սն զի կային առ դրանն. բացաք՝ և 'ի
24 ներքս զոք ոչ ևս գտաք: * Իբրև լուան
զբանս զայս իշխանք տաճարին և քահա-
նայապետքն՝ հիանային վնոցանէ, թէ զի՞նչ
25 արդեօք լինիցի այն: * Եւ եկն ոմն պատ-
մեաց նոցա՝ թէ ահա արքն զորս եդիք 'ի
բանտի՝ կան 'ի տաճարին, և ուսուցա-
26 նեն զժողովուրդն: * Յայնժամ երթեալ
իշխանն սպասաւորօքն հանդերձ՝ ած զնոսա
ոչ բռնութբ. քանզի երկնչէին 'ի ժողովր-
27 դենէն՝ զի մի քարկոծեսցին: * Եւ ած-
եալ զնոսա՝ կացուցին յատենի. եհարց ցնոսա
28 քահանայապետն, * և ասէ. Ո՞չ պատ-
ուիրելով պատուիրեցաք ձեզ՝ մի ուսու-
ցանել յանունն յայն, և արդ՝ ահաւա-
սիկ լցէք զԵրուսաղէմ ուսմամբ ձերով, և կա-
միք ածել 'ի վերայ մեր զարիւն զառնն զայ-
29 նորիկ: * Պատասխանի ետ պետրոս և
այլ առաքեալքն և ասեն. Հնազանդել
30 պարտ է այ առաւել քան մարդկան: * Ած
հարցն մերոց յարոյց զյս՝ զոր դուք սպա-
31 նիք կախեալ զփայտէ: * Զնա ած ա-
ռաջնորդ և փրկիչ բարձրացոյց աջով
իւրով տալ ապաշխարութիւն իլի՝ և թո-
32 ղութիւն մեղաց: * Եւ մեք եմք վկայք բա-
նիցս

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ... Գոս. Библиотека
digitised by A.R.A.R.@
550-78

նիցս այսոցիկ, և հոգին ս̃ր՝ զոր ետ ա̃ծ
հնազանդելոց իւրոց : * Եւ նոքա իբրև 33
լուան, առատանային և խորհէին սպա-
նանել զնոսա :
Բ Կ * Յարուցեալ ոմն 'ի մէջ ատենին փարի- 34
սեցի՝ որում անուն էր Գամաղիէլ, օրէնս-
ուսոյց՝ պատուական ամենայն ժողովր-
դեանն. հրամայեաց սակաւիկ մի զարսն
արտաքս տանել : * Եւ ասէ ցն̃ս. ա՛րք 35
ի̃էլացիք՝ հայեցարո՛ւք 'ի ձեզ մ̃տ արանցս
այսոցիկ՝ զինչ արժան իցէ գործել : * Յա- 36
ռաջ քան զաւուրս զայսոսիկ յարեաւ
Թևդաս՝ ասել զանձնէ, թէ իցէ ոմն.
յոր անկան արք թուով իբրև չորեք հա-
րիւր. որ սպանաւ՝ և ամենեքեան որ միա-
բանեալ էին ը̃նմ, քակտեցան՝ և եղեն
յոչինչ : * Յետ նր̃ յարեաւ Յուդա գալի- 37
լեացի՝ յաւուրս աշխարհագրին. և ապ-
ստամբեցոյց ժողովուրդ բազում զկնի
իւր. և նա կորեաւ՝ և ամենեքեան որ
նմայն հաւանեալ էին, ցրուեցան : * Եւ 38
զարդս ասեմ ձեզ. 'ի բա՛ց կացէք յա-
րանցդ յայդցանէ՝ և թո՛յլ տուք դոցա.
զի թէ 'ի մարդկանէ իցէ խորհուրդդ
այդ կ̃մ գործդ, քակտեսցի. * ապա թէ 39
յա̃յ է՝ ո՛չ կարէք քակտել զդոսա. գու-
ցէ և ա̃ծամարտք գտանիցիք : * Հաւա- 40
նեցան նմ. և կոչեցեալ զառաքեալսն՝
գան հարին, և պատուիրեցին՝ մի ևս խօ-
սել յանուն յ̃սի. և արձակեցին զն̃ս :
* Եւ

digitised by A.R.A.R.@

41 * Եւ նոքա գնացին խնդալով յերեսաց
ատենին, զի վ՛ն անուանն յ̃ն արժանի ե-
42 ղեն անարգելոյ։ * Եւ զա̃մ օր 'ի տա-
ճարին և տունսն ոչ դադարէին ուսու-
ցանել՝ և աւետարանել զյ̃ս ք̃ս։

## ԳԼ. Զ.

1 Եւ յաւուրսն յայնոսիկ 'ի բազմանալ
աշակերտացն, եղև տրտունջ յոյ-
նաց առ հեբրայեցիսն. զի արհամար-
հեալ լինէին 'ի պաշտամանն հանապա-
2 զորդ այրիք ն̃ց։ * Կոչեցին երկոտասան-
քըն զբազմութիւն աշակերտացն՝ և ասեն.
ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն ա̃յ՝ և
3 պաշտել զսեղանս։ * Ընտրեցէք եղբարք՝
վկայեալս 'ի ձէնջ արս եօթն, (լի հոգ-
ւով սրբով և իմաստութ̃բ.) զորս կա-
4 ցուսցուք 'ի վ̃ր պիտոյիցս այսոցիկ. * և
մեք աղօթից և պաշտաման և բանին
5 հպատակ լիցուք։ * Եւ հաճոյ թուեցաւ
բանն առաջի ա̃մ բազմութ̃ն. և ընտ-
րեցին զստեփաննոս՝ այր լի հաւատովք
և հոգւով սրբով, և զփիլիպպոս և զպ-
րոքորոն և զնիկանովրա և զտիմոնա և
զպարմենա՝ և զնիկողայոս զեկն անտիո-
6 քացի։ * Զորս կացուցին առաջի առա-
քելոցն. և աղօթս արարեալ՝ եդին 'ի
7 վերայ նոցա զձեռս։ * Եւ բանն ա̃յ ա-
ճէր. և բազմանայր թիւ աշակերտացն
յոյժ յերուսաղէմ։ և բազում ժողովք
digitised by A.R.A.R.@ քա-

'ի քահանայիցն անսային հաւատոյն :
Բ Բ * Ստեփաննոս՝ այր լի շնորհօք եւ զօրու- 8
թեամբ, առնէր արուեստս եւ նշանս մեծա-
մեծս 'ի ժողովրդեանն : * Յարեան ոմանք 9
'ի ժողովրդենէն, որ կոչէր լիբեացւոց՝
եւ կիւրենացւոց՝ եւ աղեքսանդրացւոց՝ եւ
որ 'ի կիւլիկեցւոց՝ եւ յասիայ, վիճել ընդ
ստեփաննոսի . * եւ ոչ կարէին զդէմ ու- 10
նել իմաստութեանն եւ հոգւոյն, որով
խօսէր : * Յայնժամ հրապուրեցին արս 11
ոմանս ասել . թէ լուաք զդորա խօսել
բանս հայհոյութեան 'ի մովսէս եւ յած :
* Եւ խռովեցին զժողովուրդն եւ զերի- 12
ցունս եւ զդպիրսն . եւ հասեալ 'ի վր՝ յափշ-
տակեցին զնա՝ եւ ածին յատեան : * Եւ 13
կացուցին վկայս սուտս՝ որ ասէին, այրս
այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյու-
թեան զտեղւոյն սրբոյ՝ եւ զօրինացն : * Լու- 14
աք 'ի դմանէ զի ասէր՝ թէ յս նազովրե-
ցի նա քակեսցէ զտեղիս զայս, եւ փո-
խեսցէ զօրէնս՝ զոր ետ մեզ մովսէս : * Եւ 15
հայեցեալ 'ի նա ամենեցուն՝ որ նստէին
յատենին, տեսին զերեսս նր իբրեւ զե-
րեսս հրեշտակի :

## ԳԼ. Է :

Ասէ քահանայապետն՝ թէ արդարեւ 1
այդ այդպէս իցէ : * Եւ նա ասէ . 2
արք եղբարք եւ հարք՝ լուարուք ինձ : Ած
փառաց երեւեցաւ հօր մերում աբրահա-
մու

digitised by A.R.A.R.@

մու մինչդեռ ՚ի Միջագետս էր, մինչչև
բնակեցուցեալ էր զնա ՚ի Խառան. և ա-
3 սէ ցնա. * Ե՛լ յերկրէ քումմէ և յազգէ
քումմէ, և եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ:
4 * Յայնժամ ելեալ յերկրէն Քաղդեացւոց
բնակեաց ՚ի Խառան. և անտի յետ մե-
ռանելոյ հօր ն՟ր՝ փոխեաց, և պանդըխ-
տեցոյց զնա յերկիրս յայսմիկ, յորում
5 դուք այժմ բնակեալ էք: * Եւ ոչ ետ
ն՟մ ժառանգութի՟ ՚ի սմա, և ոչ քայլ մի
ոտին. և խոստացաւ տալ ն՟մ զսա ՚ի բնա-
կութի՟, և զաւակի ն՟ր յետ ն՟ր, մինչ ոչ
6 գոյր ն՟ր որդի: * Խօսեցաւ ա՟ծ այսպէս,
թէ եղիցի զաւակ ն՟ր պանդուխտ յօտար
երկրի. և ծառայեցուսցեն զնա՝ և չար-
7 չարեսցեն ամս չորեքհարիւր: * Եւ զազ-
գն՝ որում ծառայեսցեն՝ դատեցայց ես,
ասէ ա՟ծ. և յետ այսորիկ ելցեն՝ և պաշ-
8 տեսցեն զիս ՚ի տեղւոջս յայսմիկ: * Եւ
ետ ն՟մ ուխտ թլփատութե՟: և ապա ծնաւ
զԻսահակ, և թլփատեաց զնա յաւուր
ութերորդի. և Իսահակ զՅակոբ. և
9 Յակոբ զերկոտասան նահապետսն: * Եւ
նահապետքն նախանձեալ ը՟ն Յովսեփայ՝
վաճառեցին յԵգիպտոս. և էր ա՟ծ ը՟ն ն՟մ:
10 * Եւ փրկեաց զնա յա՟մ նեղութեանց ն՟ր.
և ետ ն՟մ շնորհս և իմաստութի՟ առաջի
Փարաւոնի արքային Եգիպտացւոց. և
կացոյց զնա իշխան Եգիպտացւոցն՝ և ա՟մ
11 տան նորա: * Եւ եկն սով յա՟մ երկիրն
Եգիպ-

digitised by A.R.A.R.@

եգիպտոսի, և ՚ի քանան նեղութիւն մեծ.
և ոչ գտանէին կերակուր հարքն մեր։
* Իսկ լուեալ յակովբայ թէ գտանի կե- 12
րակուր յեգիպտոս, առաքեաց զհարսն
մեր յառաջագոյն։ * Իսկ յերկրորդումն 13
եւ ծանօթս յովսէփ եղբարց իւրոց. և
յայտնի եղև ազգն նորա փարաւոնի։
* Առաքեաց յովսէփ՝ և կոչեաց զյա- 14
կովբ զհայր իւր, և զա̃մ ազգատոհմն՝
ոգիս եօթանասուն և հինգ։ * Իսկ էջ 15
յակովբ յեգիպտոս՝ և վախճանեցաւ
ինքն և հարքն մեր։* Իսկ փոխեցան ՚ի սիւ- 16
քեմ, և եդան յայրին, զոր ստացաւ աբ-
րահամ գնոց արծաթոյ յորդւոյն եմով-
րայ՝ ՚ի սիւքեմ։* Իբրև մերձեցաւ ժա- 17
մանակ աւետեացն՝ զոր խոստացաւ ա̃ծ
աբրահամու, աճեաց ժողովուրդն՝ և
բազմացաւ յեգիպտոս. *մինչև յարեաւ 18
այլ թագաւոր յեգիպտոս՝ որ ոչ ճանա-
չէր զյովսէփ։ *Նա հնարեցաւ ազգին 19
մերում, և չարչարեաց զհարսն մեր՝ առ-
նել ընկեցիկ զմանկունս նց՝ զի մի ապ-
րեսցին։ * Յորում ժամանակի ծնաւ և 20
մովսէս, և էր կայտառ առաջի ա̃յ. որ և
սնաւ ՚ի տան հօր իւրոյ ամիսս երիս։
* Իսկ յընկեցիկն առնել զնա՝ եբարձ զնա 21
դուստր փարաւոնի, և սնոյց զնա իւր
յորդեգիրս։ * Իսկ վարժեցաւ մովսէս 22
ա̃մ իմաստութիւն եգիպտացւոցն. և էր զօ-
րաւոր բանիւք և գործովք իւրովք։* Իբ- 23
րև

digitised by A.R.A.R.@

րեւ լցաւ նորա քառասնամեայ ժամանակ,
անկաւ 'ի սիրտ նորա շրջել զեղբարբքն իւ-
24 րովք՝ զորդւովքն Իսրայէլի : * Եւ տեսեալ
զոմն զրկեալ՝ զաւրեցաւ, եւ խնդրեաց ընդ
վրէժ զրկելոյն՝ սպանեալ զեգիպտացին :
25 * Զմտաւ ածէր թէ իմասցին եղբարք
նորա, զի Աստուած 'ի ձեռն նորա տալոց էր զփրկու-
26 թիւն նոցա. եւ նոքա ոչ իմացան : * Եւ 'ի
վաղիւ անդր երեւեցաւ նոցա մինչ դեռ մար-
տնչէին՝ եւ վարեաց զնոսա 'ի խաղաղութիւն,
ասէ. արք՝ եղբարք էք, ընդէ՞ր զրկէք
27 զմիմեանս : * Իսկ որ զրկէր զընկերն,
մերժեաց զնա՝ եւ ասէ. ո՞ կացոյց զքեզ
28 իշխան եւ դատաւոր 'ի վերայ մեր : * Միթէ
սպանանե՞լ կամիցիս զիս՝ զոր օրինակ ըս-
29 պաներ երէկ զեգիպտացին : * Եւ փախ-
եաւ Մովսէս 'ի բանիցս յայսցանէ, եւ եղեւ
պանդուխտ յերկրին Մադիամու. ուր
ծնաւ երկուս որդիս :
30 * Եւ 'ի կատարել ամացն քառասնից, ԲԳ·
երեւեցաւ նմա յանապատի լերինն Սի-
նեայ հրեշտակ Տեառն 'ի բոց հրոյ մորենւոյն :
31 * Եւ Մովսէսի տեսեալ՝ զարմացաւ ընդ
տեսիլն, եւ 'ի մատչելն նորա նշմարել՝ եղեւ
32 ձայն Տեառն : * Ես եմ Աստուած հարց քոց, Աստուած
Աբրահամու՝ եւ Սահակայ՝ եւ Յակոբայ.
Եւ զահի հարեալ Մովսէս՝ ոչ իշխէր հայ-
33 ել : * Եւ ասէ ցնա Տէր. լոյծ զկօշիկս ո-
տից քոց, զի տեղիդ՝ յորում դուդ կա-
34 ցեր՝ երկիր սուրբ է : * Տեսանելով տեսի

digitised by A.R.A.R.@

զչարչարանս ժողովրդեան իմոյ՝ որ յե-
գիպտոս, և լուայ հեծութեանց, և իջի
փրկել զնոսա. և արդ՝ եկ առաքեցից զքեզ
յեգիպտոս։ * Զայն մովսէս՝ զոր ուրա- 35
ցանն և ասեն. ո՞ կացոյց զքեզ իշխան և
դատաւոր ՚ի վերայ մեր, զնա աստուած իշխան և
փրկիչ առաքեաց ՚ի ձեռն հրեշտակին,
որ երևեցաւ նմա ՚ի մորենւոջն։ * Նա 36
եհան զնոսա՝ արարեալ նշանս և արուես-
տըս յերկրին եգիպտացւոց՝ և ՚ի կարմիր
ծովուն, և յանապատին՝ ամս քառա-
սուն։ * Այս է մովսէս, որ ասաց ցոր- 37
դիսն իսրայէլի. մարգարէ յարուսցէ ձեզ տէր
աստուած ձեր յեղբարց ձերոց իբրև զիս, նմա
լուիջիք։ * Սա է՝ որ եղև յեկեղեցւոջն 38
յանապատին ընդ հրեշտակին, որ խօսե-
ցաւ ընդ նմա ՚ի լերինն սինայ՝ և ընդ հարսն
մեր. որ ընկալաւ զպատգամս կենդա-
նիս՝ տալ մեզ։ * Որում ոչ կամեցան 39
հնազանդ լինել հարքն մեր. այլ մեր-
ժեցին՝ և դարձան սրտիւք իւրեանց յե-
գիպտոս։ * Եւ ասեն ցահարոն. արա 40
մեզ աստուածս, որ երթիցեն առաջի
մեր. զի մովսէսն այն՝ որ եհան զմեզ
յերկրէն եգիպտացւոց, ոչ գիտեմք զի՞
եղև նմա։ * Եւ արարին յաւուրսն յայ- 41
նոսիկ որթ, և մատուցին զոհս կռոց, և
ուրախ լինէին ՚ի գործս ձեռաց իւրեանց։
* Դարձոյց աստուած՝ և մատնեաց զնոսա ՚ի 42
պաշտօն զօրութեան երկնից. որպէս և գրեալ
է

digitised by A.R.A.R.@

է 'ի գիրս մարգարէից. միթէ զո՞հս և
պատարագս մատուցէք ինձ զամս քառա-
43 սուն յանապատին՝ տունդ Ի͞լի: * Եւ ա-
ռէք զխորանն Մողոքայ, և զաստղն աս-
տուծոյն Հռեմփայ, զպատկերսն՝ զոր ա-
րարէք երկիրպագանել ն͞ց. և փոխեցից
44 զձեզ յայն կողմն Բաբելացւոց: * Խո-
րանն վկայութ͞ե էր ը͞ն հարսն մեր յանա-
պատին. ո͞պ հրամանն ետ որ խօսէրն ընդ-
Մովսէսի, առնել զայն ը͞ս օրինակին զոր
45 ետես: * Զոր և ընկալեալ բերին հարքն
մեր հանդերձ յեսուաւ 'ի միջակ ազ-
գացն, զորս մերժեաց ա͞ծ յերեսաց հար-
46 ցըն մերոց. մինչև յաւուրս Դաւթի, *որ
եգիտ շնորհս առաջի ա͞յ, և խնդրեաց
47 գտանել զյարկս ա͞յ յակովբայ: * Նա
48 և սողոմոն շինեաց նմա տուն: * Այլ
ոչ եթէ բարձրեալն 'ի ձեռագործ տա-
ճարս բնակէ. այլ ո͞պ մարգարէն ասէ.
49 * երկինք աթոռ իմ են, և երկիր պա-
տուանդան ոտից իմոց. որպիսի՞ տուն շի-
նեցէք ինձ, ասէ տէր. կամ զի՞նչ տեղի
50 հանգստեան իմոյ. * ո՞չ ձեռն իմ արար
51 զայս ա͞մ: * Խստապարանոցք և անթլ-
փատք սրտիւք և ականջօք. դուք հա-
նապազ հոգւոյն ս͞րբ հակառակ կայք.
52 ո͞պ հարքն ձեր և դուք: * Զո՞ 'ի մար-
գարէիցն ոչ հալածեցին հարքն ձեր. և
սպանին զայնոսիկ որ յառաջագոյն պատ-
մեցին վ͞ս գալստեան արդարոյն, որոյ


digitised by A.R.A.R.@

դուք այժմ մատնիչք և սպանօղք եղէք.
* Որք առէք զօրէնս ՚ի հրամանս հրեշ- 53
տակաց, և ոչ պահեցէք: * Եւ լուեալ 54
զայս զայրանային ՚ի սիրտս իւրեանց, և
կրճտէին զատամունս ՚ի վ՟ր ն՟ր: * Եւ 55
նա էր լի հոգւով սրբով. հայեցաւ յեր-
կինս՝ և ետես զփառս ա՟յ, և զյ՟ս զի
կայր ընդ աջմէ ա՟յ. և ասէ՝ ահա տեսա-
նեմ զերկինս բացեալ՝ և զորդի մարդոյ
զի կայ ընդ աջմէ ա՟յ: * Աղաղակեալ ՚ի 56
ձայն մեծ՝ խցին զականջս իւրեանց, և
դիմեցին առ հասարակ ՚ի վ՟ր ն՟ր: * Եւ 57
հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին.
և վկայքն դնէին զձորձս իւրեանց առ
ոտս երիտասարդի միոջ՝ որ կոչէր Սա-
ւուղ: * Եւ քարկոծ առնէին զՍտեփան- 58
նոս, որ կարդայր և ասէր. Տ՟ր յ՟ս՝ ըն-
կալ զոգի իմ: * Եդ ծունր՝ և աղաղա- 59
կեաց ՚ի ձայն բարձր. Տ՟ր՝ մի համարիր
զոքա զայս մեղս. և զայս իբրև ասաց՝
ննջեաց. և Սօղոս էր կամակից սպան-
ման նորա:

## Գլ. Ը:

Եւ եղև յաւուր յայնմիկ հալածումն 1
մեծ ՚ի վ՟ր եկեղեցւոյն յեմ՟. և ա-
մենեքեան ցրուեցան ՚ի գեօղս Հրէաս-
տանի և ՚ի Սամարիա՝ բաց յառաքելոցն:
* Եւ բարձին զՍտեփաննոս արք երկիւ- 2
ղածք՝ և արարին կոծ մեծ ՚ի վ՟ր ն՟ր:
* Բայց

digitised by A.R.A.R.@

3 *Բայց սօղոս վնասակար էր եկեղեց֊ Բ Դ
ւոյն. 'ի տունս տունս մտանէր. քարշէր
զարս և զկանայս՝ մատնէր 'ի բանտ:
4 *Իսկ սփռեալքն՝ շրջէին աւետարանէին
5 զբանն: *Իսկ փիլիպպոս իջեալ 'ի քա֊
ղաքն սամարացւոց՝ քարոզէր նց զքս:
6 *Ունկն դնէին ժողովուրդքն բանիցն
փիլիպպոսի միաբան՝ 'ի լսել նց և 'ի տե֊
7 սանել զնշանսն զոր առնէր: *Քանզի
բազումք որ ունէին զայսս պիղծս՝ աղա֊
8 ղակէին 'ի ձայն մեծ և ելանէին: *և բա֊
զում անդամալոյծք և կաղք բժշկէին:
9 *Եւ եղև ուրախութի մեծ 'ի քաղաքին
յայնմիկ: Այր ոմն անուն սիմոն՝ յա֊
ռաջագոյն էր 'ի քաղաքին. մոգ էր, և
ապշեցուցանէր զազգն սամարացւոց. ա֊
10 սել զանձնէ թէ իցէ մեծ ոմն: *Յոր
հայէին ամենեքին 'ի փոքուէ մինչև 'ի
մեծամեծս. և ասէին, սա է զօրութի
11 այ՝ որ կոչի մեծ: *Հայէին 'ի նա վն
բազում ժամանակաց մոգութբքն ապ֊
12 շեցուցանելոյ զնս: *Բայց յորժամ հա֊
ւատացին փիլիպպոսի, որ աւետարանէր
վն արքայութեն այ, և անուանն յի քի,
մկրտէին ամենեքեան արք և կանայք:
13 *Այլ և ինքն սիմոն հաւատաց, և մկր֊
տեալ կանխէր առ փիլիպպոս: տեսեալ
զնշանսն և զմեծամեծ զօրութիսն որք
14 լինէին՝ զարմանայր: *Իբրև լուան՝ որ
յերէմ առաքեալքն էին, թէ և 'ի սամա֊
րիա

digitised by A.R.A.R.@

րիա ընկալաւ զբանն այ, առաքեցին առ
նա զպետրոս եւ զյովհաննէս : * Որք ի- 15
ջեալ կացին յաղօթս 'ի վր նց, ոպ զի
առցեն զհոգին սբ . * զի ցայնժամ չե- 16
ւէս էր եւ ոչ 'ի վր միոյ նց հասեալ. բայց
միայն մկրտեալք էին յանուն տն յի :
* Յայնժամ եդին զձեռս 'ի վր նց եւ 17
առնուին հոգի սբ : * Տեսեալ սիմոնի՝ 18
թէ ձեռն 'ի վր դնելով առաքելոցն՝ տը-
ւեալ լինի հոգին սբ , մատոյց նց ինչս՝
եւ ասէ . * տուք եւ ինձ զիշխանութիս զայս, 19
զի յոյր վր դնիցեմ զձեռս՝ առցէ հոգի
սբ : Եւ պետրոս ասէ ցնա . * արծաթ 20
քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ , զի զպար-
գեւն այ համարեցար ընչիւք ստանալ :
* Ո՛չ գոյ քեզ մասն եւ վիճակ 'ի բանիդ 21
յայդմիկ. քանզի սիրտ քո ոչ է ուղիղ
առաջի այ : * Ապաշաւեա դու 'ի չար- 22
եացդ քոց յայդցանէ, եւ աղաչեա զտր .
թերեւս թողութի լիցի քեզ 'ի մեղմեխ
խորհրդոց սրտի քո : * Քանզի 'ի դառ- 23
նութի մաղձի, եւ 'ի կնճիռն անիրաւու-
թե տեսանեմ զքեզ : * Պատասխանի 24
ետ սիմոնին եւ ասէ . աղաչեցէք դուք վս
իմ զտր , զի մի ինչ եկեսցէ 'ի վր իմ՝ յո-
րոց դուքդ ասացիք : * Եւ նոցա եդեալ 25
զվկայութի՝ խօսեցան զբանն այ , եւ դար-
ձան յէրմ . եւ 'ի բազում գեօղս սամա-
րացւոցն աւետարանէին :
ԲԵ * Հրեշտակ տն խօսեցաւ առ փիլիպպոս՝ 26

եւ

digitised by A.R.A.R.@

և ասէ. արի՛ և գնա՛ դու ՚ի կողմն հա-
րաւոյ՝ ընդ ճանապարհն որ իջանէ յԵրուսաղէմէ ՚ի
27 Գազայ. զի այս է անապատ ։ * Եւ յա-
րեաւ գնաց ։ Եւ ահաւասիկ այր մի ե-
թեովպացի ներքինի հզօր՝ կանդակայ
տիկնոջ եթեովպացւոյ. որ էր ՚ի վերայ ամենայն
գանձուց նորա. որ եկեալ էր երկիրպագա-
28 նել յԵրուսաղէմ. * և էր անդրէն դարձեալ,
և նստեալ ՚ի կառս իւրում, ընթեռնոյր
29 զմարգարէն զեսայի ։ * Ասէ Հոգին ցփի-
լիպպոս. մատի՛ր՝ և յարեա՛ց ՚ի կառսդ
30 յայդոսիկ ։ * Եւ ընթացեալ փիլիպպոս՝
լուաւ զի ընթեռնոյր զեսայի մարգարէ,
և ասէ. գիտիցե՞ս արդեօք՝ զոր ընթե-
31 ռնուցուս ։ * Եւ նա ասէ՝ զիա՞րդ կարի-
ցեմ, թէ ոք ոչ առաջնորդեսցէ ինձ ։ և
աղաչեաց զփիլիպպոս ելանել նստել ընդ
32 նմա ։ * Եւ գլուխ գրոյն զոր ընթեռնոյր՝
էր այս. իբրև զոչխար ՚ի սպանդ վարե-
ցաւ, և իբրև զորոջ առաջի կտրչի իւրոյ
անմռունչ, այնպէս ոչ բանայ զբերան
33 իւր ։ * ՚Ի խոնարհութեան նորա դատաստան
նորա բարձաւ, և զազգատոհմն նորա ո՞ պատ-
մեսցէ. զի բառնին յերկրէ կեանք նորա ։
34 * Պատասխանի ետ ներքինին փիլիպպո-
սի, և ասէ. աղաչեմ զքեզ՝ վասն ո՞յր ասէ
մարգարէն զայս. վասն իւր՝ եթէ վասն այ-
35 լոյ ուրուք ։ * Եբաց փիլիպպոս զբերան
իւր, և սկսեալ ՚ի գրոյս յայսցանէ՝ աւե-
36 տարանեաց նմա զՅիսուս ։ * Իբրև երթային
զճա-

digitised by A.R.A.R.@

զճանապարհայն՝ եկին ՚ի ջուր ինչ. և
ասէ ներքինին, ահաւասիկ ջուր՝ զի՞նչ
արգելու զիս ՚ի մկրտելոյ: * Եւ ասէ 37
ցնա. եթէ հաւատաս բոլորով սրտիւ
քով՝ մարթ է: Պատասխանի ետ և ասէ.
հաւատամ՝ եթէ յս քս է որդի այ: * Եւ 38
հրամայեաց կացուցանել զկառսն. և ի
ջին երկոքեան ՚ի ջուրն՝ փիլիպպոս և ներ-
քինին, և մկրտեաց զնա: * Եւ իբրև ե- 39
լին ՚ի ջրոյ անտի՝ հոգին տն եկն ՚ի վր
ներքինւոյն. և հրեշտակ տն յափշտա-
կեաց զփիլիպպոս՝ և ոչ ևս ետես զնա ներ-
քինին. և գնայր զճանապարհ իւր ուրա-
խութբ: * Բայց փիլիպպոս գտաւ յա- 40
զովտոս. և շրջեալ աւետարանէր ամ
քաղաքայն մինչև ՚ի գալն իւր ՚ի կեսարիա:

## Գ Լ. Թ.

Բ.Ձ Իսկ սօղոս տակաւին լցեալ սպառնա- 1
լեօք և սպանմամբ աշակերտացն տն,
մատուցեալ առ քահանայապետն. * խնդ- 2
րեաց ՚ի նմանէ թուղթս ՚ի դամասկոս
առ ժողովուրդսն. ոչ թէ զոք գտցէ
զայնր ճանապարհի՝ արս կամ կանայս,
կապեալս ածցէ յեմ: * Եւ ի երթալ 3
նր՝ եղև մերձենալ ՚ի դամասկոս. յան-
կարծակի շուրջ զնովաւ փայլատակեաց
լոյս յերկնից: * Եւ անկեալ յերկիր, 4
լուաւ բարբառ՝ որ ասէր ցնա. սաւուղ
սաւուղ՝ զի՞ հալածես զիս: * Եւ ասէ՝ 5
ով

digitised by A.R.A.R.@

ո՞վ ես տ՟ր։ Եւ նա ասէ. ես եմ յ՟ս՝ զոր
դու հալածես. (խիստ է քեզ ընդդէմ
6 խթանի աքացել։ *Եւ զարհուրեալ՝
և անշշունջ լեալ ասաց. տէր՝ զիս զի՞նչ
7 կամիս առնել։ *Եւ ասէ ցնա տ՟ր։) այլ
յարի՛ց կաց՝ և մո՛ւտ ’ի քաղաքդ, և պատ-
մեսցի քեզ՝ զի՞նչ պարտ իցէ առնել։ Եւ
արքն՝ որ ընդ նմայն երթային, կային անշը-
շունջ. զձայնն միայն լսէին՝ բայց տեսա-
8 նէին և ոչզինչ։ *Յարեաւ Սօղոս յերկրէ
անտի, և աչօք բացօք ոչ զո՛ք տեսանէր.
զձեռանէ առեալ ն՟ր՝ մուծին ’ի Դամաս-
9 կոս։ *Եւ էր անդ աւուրս երիս՝ և ո՛չ
10 տեսանէր, և ո՛չ եկեր և ո՛չ արբ։ *Եւ
էր ոմն աշակերտ ’ի Դամասկոս՝ Անանիա
անուն. ասէ ցնա տէր ’ի տեսլեան, Ա-
նանիա։ Եւ նա ասէ, ահաւասիկ եմ տ՟ր։
11 *Եւ ասէ ցնա տ՟ր. յարի՛ց կաց՝ և գնա՛ ը՟ն
փողոցն՝ որ կոչի Ուղիղ, և խնդրեսցես
յապարանսն Յուդայ՝ Սօղոս անուն զՏար-
12 սոնացի՝ զի կայ դեռ յաղօթս։ *Եւ ե-
տես ’ի տեսլեան այր մի Անանիա անուն՝
մտեալ և եդեալ ’ի վերայ ն՟ր ձեռն, ո՛րպ զի
13 տեսցէ։ *Պատասխանի ետ Անանիա.
տ՟ր՝ լուեալ ’ի բազմաց վ՟ս առնն այնորիկ՝
14 որչափ արար չարիս սրբոց քոց յԵ՟մ. *Եւ
աստ ունի իշխանութի՛ւն ’ի քահանայապե-
տիցն կապել զամենեսեան որ կարդան
15 զանուն քո։ *Ասէ ցնա տ՟ր. Երթ դու՝
զի անօթ ընտրութեան է ինձ նա, կրել
զա-

digitised by A.R.A.R.@

զանուն իմ առաջի հեթանոսաց՝ և թա-
գաւորաց՝ և որդւոցն իսրայելի: *Զի ան- 16
գի ես իսկ ցուցից նմա՝ որչափ պարտ իցէ
նմա չարչարիլ վն՛ անուան իմոյ: *Եւ 17
գնաց անանիա՝ և եմուտ յապարանսն.
և եդեալ ՚ի վ՛ր նր ձեռս, ասէ. սաւուղ
եղբայր՝ ՚ի վեր հայեաց, տր առաքեաց
զիս՝ յս որ երևեցաւն քեզ ՚ի ճանապար-
հին՝ յորում գայիրն, ոպ զի տեսցես՝ և
լցցիս հոգւով սրբով: *Եւ վաղվաղակի 18
անկան յաչաց նր իբրև կեղևանք. եատես՝
և յարեաւ մկրտեցաւ. *և առեալ կե- 19
րակուր՝ զօրացաւ. և եղև ՚ի դամասկոս
ը աշակերտան աւուրս ինչ: *Եւ վաղ- 20
վաղակի ՚ի ժողովուրդսն քարոզեաց զյս,
թէ սա է որդին այ: *Զարմացեալ 21
էին ամենեքեան որ լսէինն, և ասէին.
ոչ սա էր՝ որ աւար հարկանէր յեմ զայ-
նոսիկ, որ կարդային զանուն յսի. և
այսր նմին իրի եկեալ է, զի կապեալս
զսոսա տարցի առ քհնյպետսն: *Այլ 22
սօղոս առաւել ևս զօրանայր՝ և յաղթա-
հարէր զհրէայսն, որ բնակեալ էին ՚ի
դամասկոս. և խելամտեցուցանէր թէ
սա է քս: *Իբրև կատարէին աւուրք 23
բազումք. խորհեցան հրէայքն սպանա-
նել զնա: *Յայտնեցաւ սօղոսի նենգու- 24
թի նց. քզի պահէին զդրունսն ՚ի տուէ
և ՚ի գիշերի՝ ոպ զի սպանցեն զնա: *Եւ 25
առեալ զնա աշակերտացն ՚ի գիշերի՝ ը
պա-

digitised by A.R.A.R.@

պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ :
26 *Իբրև եկն սօղոս յերուսաղէմ, ընդե-
լանէր յարիլ յաշակերտսն . և ամենե-
քեան երկնչէին 'ի նմանէ, չհաւատային
27 թէ իցէ աշակերտ : *Բայց բառնաբաս
առեալ զնա՝ ած առ առաքեալսն . և
պատմեաց ն՟ց՝ ո՟րպ 'ի ճանապարհին ետես
զտ՟ր, և զի խօսեցաւ ը՟նդ նմ՟. և զի 'ի դա-
մասկոս համարձակեցաւ յանուն յ՟սի :
28 *Եւ էր ը՟նդ ն՟ս 'ի մտանել և ելանել յե՟ղէմ,
29 համարձակեալ յանուն տ՟ն : *Խօսէր՝
և վիճէր ը՟նդ յոյնս . և նոքա խոկային
30 սպանանել զնա : *Եւ իմացեալ եղբարց՝
իջուցին զնա 'ի կեսարիա, և առաքեցին
31 զնա 'ի տարսոն : *Բայց եկեղեցին ը՟նդ
ա՟մ հրէաստան՝ և 'ի սամարիա և 'ի գա-
լիլեա ունէր խաղաղութի, շինեալ և եր-
թեալ զհետ երկիւղի տ՟ն . և մխիթա-
րութ՟բ հոգւոյն ս՟ր բազմանայր :
32 *Եւ եղև 'ի շրջելն պետրոսի առ ամե- ԲՆ
նեքումբք, իջանել նո՟ր և առ սուրբսն՝ որ
33 բնակեալ էին 'ի լիւդիայ : *Եւ եգիտ
անդ այր մի, որում անուն էր ենեա,
ութամեան դնէր 'ի մահիճս անդամա-
34 լոյծ : *Եւ ասէ ցնա պետրոս . Ենեա՝
բժշկէ զքեզ տ՟ր յ՟ս ք՟ս, արի՝ և քեզէն
թօթափեա զանկողինս քո : և վաղվա-
35 ղակի յարեաւ : *Եւ տեսին զնա ամե-
նեքեան, որ բնակեալ էին 'ի լիւդիայ և
'ի սարոնայ, որք և դարձան իսկ 'ի տ՟ր :



digitised by A.R.A.R.@

*Եւ 'ի յոպպէ էր կին ոմն աշակերտեալ 36
անուն տաբիթա, որ թարգմանեալ կոչի
այծեմնիկ. սա էր լի գործովք բարեօք
և ողորմութեամբք զոր առնէր: *Եւ եղև 37
յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ նմա և
մեռանել. լուացին զնա՝ և եդին 'ի դըս-
տիկոնի անդ: *Եւ մերձ էր լիդիա 'ի 38
յոպպէ. աշակերտացն լուեալ թէ պետ-
րոս անդ է, առաքեցին երկուս արս առ
նա՝ աղաչել, զի մի՛ դանդաղեսցի գալ առ
նա: *Եւ յարուցեալ պետրոս՝ եկն ընդ 39
նոսա, զոր՝ իբրև եկն՝ հանին 'ի վերնա-
տունն, և կացին շուրջ զնովաւ այրիքն
ամ̃. լային և ցուցանէին զձորձս և զըղ-
հանդերձս՝ որչափ առնէր նմա այծեմնիկն:
*Եւ հանեալ արտաքս զամենեսեան 40
պետրոսի, եդ ծունր՝ եկաց յաղօթս. և
դարձաւ 'ի մարմինն և ասէ. տաբիթա՝
արի կաց յանուն տն̃ յի̃ քի̃: Եւ նա եբաց
զաչս իւր, և տեսեալ զպետրոս՝ նստաւ
կանգուն: *Ձեռն ետ նմա՝ և յարոյց 41
զնա. կոչեաց զսուրբս և զայրիս, առաջի
կացոյց զնա կենդանի: *Եւ յայտնի ե- 42
ղև ընդ ամ̃ յոպպէ, և հաւատացին բա-
զումք 'ի տր̃: *Եւ եղև աւուրս բա- 43
զումս լինել նմա 'ի յոպպէ՝ առ ումեմն
սիմոնի խաղախորդի:

digitised by A.R.A.R.@

## ԳԼ. Ժ.

1 Այր մի էր 'ի կեսարիա անուն կոռնե֊ Գ Կ
լիոս՝ հարիւրապետ, 'ի գնդէ որ
2 կոչէր իտալացի. *բարեպաշտօն՝ և եր֊
կիւղած յԱյ ամ տամբ իւրով. առնէր ո֊
ղորմութիւն բզմն 'ի ժողովրդեանն, և յա֊
3 ղօթս կայր առ Այ յամ ժամ։ *Ետես
'ի տեսլեան յայտնապէս զիններորդ ժա֊
մու աւուրն՝ զհրեշտակ Այ, զի մտանէր
4 առ նա՝ և ասէր ցնա. կոռնելիէ։ *Եւ
նա հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ, և
ասէ. զի՞ է տր։ և ասէ ցնա. աղօթք քո՝
և ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առա֊
5 ջի Այ. *և արդ՝ յղեա արս 'ի յոպպէ՝ և
կոչեա զսիմոն զոմն՝ որ կոչի պետրոս.
6 *Նա մտեալ է առ սիմոնի ումեմն խա֊
ղախորդի, որոյ է տունն մերձ 'ի ծով։
7 *Եւ իբրև գնաց հրեշտակն՝ որ խօսէր
ընդ նմ, կոչեաց երկուս 'ի ծառայից իւրոց՝
և զինուոր մի բարեպաշտօն 'ի սպասա֊
8 ւորացն իւրոց, *և պատմեալ նց զամ՝
9 առաքեաց զնս 'ի յոպպէ։ *Եւ 'ի վա֊
ղիւ անդր 'ի ճանապարհ անկանելն նց՝ և
մօտ 'ի քաղաքն լինել, ել պետրոս 'ի տա֊
նիսն կալ յաղօթս զվեցերորդ ժամուն։
10 *Քաղցեաւ՝ և կամէր ճաշակել. և 'ի
պատրաստելն նց՝ եղև 'ի վր նր զարմա֊
11 ցումն։ *Եւ տեսանէր զերկինս բացեալ.
և զչորեցունց տըտնոց կապեալ անօթ

ինչ

ինչ իբրև զկտաւոյ մեծի, իջեալ նստեալ 'ի
վ՟ր երկրի. *յորում էին ա՟մ չորքոտա- 12
նիք և սողունք երկրի՝ և թռչունք երկ-
նից: *Եւ եղև ձայն առ նա. արի՛ պետ- 13
րոս, զե՛ն՝ և կե՛ր: *Եւ պետրոս ասէ. 14
քա՛ւ լիցի տ՟ր, զի ո՛չ երբէք կերայ խառ-
նակ ինչ և անսուրբ: *Ձայն եղև կրկ- 15
կին անգամ առ նա. զոր ա՟ծ սրբեաց՝
դու մի՛ պղծեր: *Այս եղև երիցս և 16
վերացաւ անօթն յերկինս: *Եւ մինչդեռ 17
զարմացեալ էր ընդ միտս պետրոս՝ թէ
զի՞նչ իցէ տեսիլն՝ զոր ետես. ահա՛ արքն
առաքեալք 'ի կոռնելեայ՝ հարցին զա-
պարանիցն սիմովնի, կացին առ դրանն.
*կոչեցին՝ և հարցանէին, եթէ սիմոն՝ 18
որ կոչի պետրոս՝ աստ մտեա՞լ իցէ: *Եւ 19
մինչդեռ պետրոս զմտաւ ածէր վ՟ս տես-
լեանն, ասէ հոգին ցնա. ահաւասիկ արք
ոմանք խնդրեն զքեզ: *Այլ արի՛ էջ՝ 20
և երթ ը՟ նմա առանց իրիք խղճելոյ, զի
ես առաքեցի զն՟ա: *Եւ իբրև էջ պետ- 21
րոս առ ն՟ա, ասէ. ահաւասիկ ես եմ
զոր խնդրէքն. զի՞նչ իրք են՝ վ՟ս որոյ ե-
կիք: *Եւ նոքա ասեն, կոռնելիոս 22
հարիւրապետ՝ այր արդար և երկիւղած
յա՟յ, վկայեալ յա՟մ ազգէն հրէից. հրա-
ման առ 'ի հրեշտակէ ս՟րբ՝ կոչել զքեզ
'ի տուն իւր՝ և լսել բանս 'ի քէն: *Կո- 23
չեաց զն՟ա 'ի ներքս՝ և առ իւր ագոյց. և
'ի վաղիւ անդր յարուցեալ պետրոս գնաց

ը՟

digitised by A.R.A.R.@

ընդ նմա. և ոմանք յեղբարց անտի որ 'ի յոպ-
24 պէ էին՝ եկին ընդ նմա։ * Եւ 'ի վաղիւ-
անդր մտին 'ի կեսարիա. և կոռնելիոս
մնայր նոցա՝ կոչեցեալ զազգատոհմս իւր՝
և զկարևոր բարեկամսն ։
25 * Եւ եղև 'ի մտանելն պետրոսի՝ ընդ ա- ԳԲ
ռաջ եղև նմա կոռնելիոս, անկեալ առ
26 ոտսն՝ երկիր պագանէր։ * Եւ պետրոս
կանգնեաց զնա՝ և ասէ. յոտն կաց՝ և
27 ես ինքն մարդ եմ։ * Եւ խօսելով ընդ նմա
եմուտ 'ի ներքս. և գտանէր անդ ժողո-
28 վեալ բազմս։ * Եւ ասէ ցնոսա. դուք ինք-
նին գիտէք՝ որպէս անմարթ է առն հրէի
հպել կամ մերձենալ առ այլազգի. և
ինձ ած եցոյց մի զոք խառնակ կամ ան-
29 սուրբ ասել 'ի մարդկանէ ։ * Վասն այ-
սորիկ և առանց ընդ բանս ինչ ածելոյ եկի
կոչեցեալ. բայց արդ հարցանեմ, յինչ
30 պէտս կոչեցէք զիս ։ * Եւ կոռնելիոս
ասէ. յառաջ քան զչորս աւուրս մինչ ցայս
ժամ կայի յաղօթս յիննն ժամու 'ի տան ի-
մում, և ահա այր մի եկն եկաց առաջի
իմ 'ի հանդերձս սպիտակս, և ասէ.
31 * Կոռնելի է լսելի եղեն աղօթք քո. և
32 ողորմութիւնք քո յիշեցան առաջի այ։ * Եւ
արդ յղեա՛ 'ի յոպպէ՝ և կոչեա՛ զսիմոն,
որ կոչեցեալն է պետրոս. սա մտեալ է 'ի
տան սիմոնի ուրուխէ խաղախորդի մերձ
'ի ծովն. որ եկեալ, և խօսեսցի բանս
33 ընդ քեզ։ * Եւ ես իսկ և իսկ յղեցի առ քեզ.

դու

digitised by A.R.A.R.@

դու բարւոք արարեր՝ զի եկիր. արդ՝ ա-
մենեքին մեք առաջի այ կամք լսել զամ
զոր հրամայեցաւ քեզ 'ի տնէ։ *Եբաց 34
պետրոս զբերան իւր՝ և ասէ. Ճշմարտու-
թբ հասեալ եմ, զի ոչ գոյ ակնառութի
առ 'ի յայ. *այլ յամ ազգս՝ որ երկնչին 35
'ի նմանէ՝ և գործէ զարդարութի, ընդ-
ունելի են նմ։ *Զբանն առաքեաց որդ- 36
ւոցն իլի աւետարանել զխաղաղութի
'ի ձեռն յի քի. սա է ամի տր։ *Դուք 37
ինքնին գիտէք զբանն, որ եղև ընդ ամ
հրէաստան սկսեալ 'ի գալիլեէ յետ մկր-
տութեն՝ զոր քարոզեաց յովհաննէս։
*Զյս որ 'ի նազարեթէ՝ զոր օծն ած 38.
հոգւով սրբով և զօրութբ. որ շրջեցաւ
բարի առնել՝ և բժշկել զամ ըմբռնեալս
'ի սատանայէ. զի ած էր ընդ նմ։ *Եւ 39
մեք վկայ եմք ամի զոր արար յերկրին
հրէաստանի՝ և յեմ. զոր և սպանին կա-
խեալ զփայտէ։ *Զնա ած յարոյց յեր- 40
րորդ աւուր. և ետ նմ յայտնի լինել.
*ոչ ամ ժողովրդեանն, այլ մեզ վկայիցս 41
յառաջագոյն ընտրելոցս այ. որ և կե-
րաք՝ և արբաք ընդ նմ յետ յարութե նր
'ի մեռելոց։ *Եւ պատուիրեաց մեզ 42
քարոզել ժողովրդեանն՝ և վկայութի դնել,
թէ նա է սահմանեալն այ՝ դատաւոր
կենդանեաց և մեռելոց։ *Սմ ամ մար- 43
գարէք վկայեն, թողութի մեղաց առ-
նուլ անուամբ նր՝ ամ հաւատացելոց 'ի
նա։

digitised by A.R.A.R.@

44 նա: *Եւ մինչդեռ խօսէր պետրոս ըզ-
բանս զայս, հանգեաւ հոգին ս՟բ 'ի վե՛ր
45 ամենեցուն՝ որ լսէին զբանն: *Զար-
մացան՝ որք 'ի թլփատութենէ անտի հա-
ւատացեալքն եկեալ էին ը՟ն պետրոսի. զի
և 'ի հեթանոսս պարգևք հոգւոյն ս՟բյ
46 զեղուին: *Քանզի լսէին 'ի նոցանէ խօ-
սել լեզուս՝ և մեծացուցանել զա՟ծ:
47 *Յայնժամ պատասխանի ետ պետրոս.
մի՞թէ զջուր ոք արգելուլ կարէ՞ առ 'ի
չմկրտելոյ զսոսա, որք և զհոգին ս՟բ ըն-
48 կալան՝ որպէս և մեք: *Եւ հրամայ-
եաց ն՟ց մկրտել յանուն յ՟ի ք՟ի: յայն-
ժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս
ինչ:

## ԳԼ. ԺԱ:

1 Լուան առաքեալքն և եղբարքն՝ որ էին գ. գ.
'ի կողմանս հրէաստանի, զի և 'ի
2 հեթանոսս ընկալան զբանն ա՟յ: *Բայց
յորժամ ել պետրոս յե՟մ, խղձէին 'ի
նմանէ որ 'ի թլփատութենէ անտի հաւա-
3 տացեալքն. *և ասէին, թէ եմուտ առ
4 արս անթլփատս՝ և եկեր ը՟ն ն՟ս: *Եւ
սկսաւ պետրոս պատմել ն՟ց կարգաւ՝ և
5 ասէ: *Ես էի 'ի քաղաքին 'ի յոպպէ
յաղօթս՝ և տեսանէի 'ի զարմացման
տեսիլ. իջանել անօթ ինչ իբրև կտա-
ւոյ մեծի չորեցունց ծագաց կախեալ
6 յերկնից՝ և եհաս մինչև առ իս: *Յոր
պշու-

digitised by A.R.A.R.@

պշուցեալ հայէի. և տեսի զչորքոտանիս
երկրի, և զգազանս՝ և զսողունս, և
զթռչունս երկնից. *Եւ լուայ բարբառ՝ 7
որ ասէր ցիս. արի՛ Պետրոս՝ զե՛ն և կե՛ր։
*Եւ ասեմ. քա՛ւ լիցի տ՟ր, զի խառնակ 8
ինչ և անսուրբ ոչ երբէք եմուտ 'ի բե-
րան իմ։ *Պատասխանի ետ ինձ երկիցս 9
անգամ բարբառն յերկնից. զոր ա՟ծ
սրբեաց՝ դու մի՛ խառնակ համարիր։
*Այս եղև երիցս, և վերացաւ ամե- 10
նայն դարձեալ յերկինս։ *Եւ ահա՛ 11
անդրէն երեք արք եկին կացին առ ա-
պարանիցն՝ ուր եմն էի, առաքեալքն 'ի
կեսարիայ առ իս։ *Եւ ասէ ցիս հո- 12
գին՝ երթալ ը՟ն նոսա՝ և մի՛ ինչ խղճել։ Ե-
կին ը՟ն իս և ս՟ք վեցեքին եղբարքս, և
մտաք 'ի տուն առնն այնորիկ։ *Եւ 13
պատմեաց մեզ՝ ո՟պ ետես զհրեշտակն 'ի
տան իւրում, զի կայր և ասէր ցնա. ա-
ռաքեա՛ 'ի Յոպպէ, և կոչեա՛ զսիմոն ըզ-
կոչեցեալն պետրոս. *որ խօսեսցի բանս 14
ը՟ն քեզ, որովք կեցցես դու՝ և ա՟մ տուն
քո։ *Եւ իբրև սկսայ խօսել՝ եկն հո- 15
գին ս՟բ 'ի վ՟ր նց. ո՟պ և 'ի վերայ մեր 'ի
սկզբանն։ *Յիշեցի զբանն տ՟ն զոր ա- 16
սէրն. յովհաննէս մկրտեաց 'ի ջուր.
բայց դուք մկրտիջիք 'ի հոգին ս՟բ։ *Իսկ 17
արդ՝ եթէ զհաւասարական պարգևն ետ
ա՟ծ և նոցա՝ ո՟պ և մեզ՝ 'ի հաւատալն 'ի
տ՟ր յ՟ս ք՟ս. ես զի՞նչ կարող էի արգելուլ
զա՟ծ

digitised by A.R.A.R.@

18 զԱծ ։ * Եւ լուեալ զայս՝ լռեցին եւ փա-
ռաւոր առնէին զԱծ՝ եւ ասէին. ուրեմն
եւ 'ի հեթանոսս ետ Ած զապաշխարու-
թի՛ւն կենաց ։
19 * Եւ ցրուեալքն 'ի նեղութենէն որ եղեւ Դ.Դ.
'ի վերայ ստեփաննոսի՝ հասին մինչեւ 'ի
փիւնիկէ եւ 'ի կիպրոս եւ յանտիոքիայ.
ոչ ումեք խօսէին զբանն, բայց միայն
20 հրէից ։ * Եւ էին ոմանք 'ի նոցանէ արք
կիպրացիք եւ կիւրենացիք՝ որք մտեալ
յանտիոք խօսէին ընդ յոյնս աւետարա-
21 նեալ զՏր Յս ։ * Եւ էր ձեռն Տն ընդ նս.
եւ բազմութի հաւատացելոց դարձաւ 'ի
22 Տր ։ * Եւ եղեւ բանս այս յականջս
եկեղեցւոյն՝ որ էր յեհմ, վս նց. եւ ա-
ռաքեցին զբառնաբաս մինչեւ յանտիոք.
23 * որ իբրեւ եկն՝ եւ ետես զշնորհսն այ՝
ուրախ եղեւ, եւ մխիթարէր զամենեսին՝
24 յօժարութբ սրտի կալ նց 'ի Տր ։ * Զի
էր այր զուարթամիտ՝ եւ լի հոգւով սբով
եւ հաւատովք. եւ յաւելաւ ժողովուրդ
25 բզմ Տն ։ * Եւ ել 'ի տարսոն խնդրել
զսօղոս, եւ գտեալ զնա՝ ած յանտիոք ։
26 * Եւ եղեւ նց զամն ողջոյն ժողովել յե-
կեղեցին՝ եւ ուսուցանել ժողովուրդ բա-
զում, եւ անուանել նախ յանտիոք զա-
27 շակերտսն Քրիստոնեայս ։ * Ընդ ա-
ւուրսն ընդ այնոսիկ իջին յեհմէ մարգա-
28 րէք՝ յանտիոք ։ * Յարուցեալ մի ոմն 'ի
նոցանէ անուն ագաբոս՝ նշանակեաց
հոգ-

digitised by A.R.A.R.@

հոգւովն սով մեծ լինել ը̅ ա̅մ աշխարհ՝
որ եղեւ առ կղօդեաւ։ * Բայց յաշա- 29
կերտաց անտի ո̅չ̅ զիարդ կարօղ ոք էր՝
իւրաքանչիւրոք ՚ի նոցանէ որոշեցին ա-
ռաքել ՚ի պէտս եղբարցն որ բնակեալ
էին ՚ի հրէաստանի. * զոր և արարին 30
իսկ՝ առաքեալ առ երիցունսն ՚ի ձեռն
բառնաբայ և սօղոսի։

## ԳԼ. ԺԲ.

Գ.Ե Ընդ ժամանակս ը̅ այնոսիկ արկ հե- 1
րովդէս արքայ ձեռն՝ չարչարել զո-
մանս յեկեղեցւոյն, * և սպան զյակով 2
բոս զեղբայրն յովհաննու սրով։ * Եւ տես 3
եթէ հաճոյ է հրէիցն, յաւել ևս ունել
զպետրոս. և էին աւուրքն բաղարջակե-
րաց։ * Զոր իբրև կալաւ՝ եդ ՚ի բանտի, 4
և մատնեաց չորից չորրորդաց զինուորաց
պահել զնա. և կամէր յետ զատկին ա-
ծել զնա ժողովրդեանն։ * Եւ պետրոս 5
՚ի պահեստի էր ՚ի բանտին. և աղօթք
ստէպ լինէին յեկեղեցւոյն վ̅ն̅ ն̅ր̅ առ
ա̅ծ։ * Իբրև կամեցաւ զնա ածել հե- 6
րովդէս. ՚ի գիշերին յայնմիկ էր պետրոս
՚ի քուն ՚ի մէջ երկուց զինուորաց՝ կա-
պեալ կրկին շղթայիւք. և պահապանքն
առաջի դրանն պահէին զբանտն։ * Եւ 7
ահա հրեշտակ տ̅ն̅ եկն եկաց ՚ի վ̅ր̅՝ և
լոյս ծագեաց ՚ի տանն, և խթեաց ըզ-
կողմն պետրոսի՝ յարոյց զնա՝ և ասէ.
արի

digitised by A.R.A.R.@

արկ վաղվաղակի։ և անկան շղթայքն 'ի
8 ձեռաց նորա։ *Եւ ասէ հրեշտակն ցնա.
ած զգօտի քո, և արկ զհողաթափս յոտս
քո. և արար այնպէս։ և ասէ ցնա, արկ
9 զձորձս քո՝ և եկ զկնի իմ։ *Եւ ելեալ
երթայր զհետ, և ոչ գիտէր՝ թէ ճշմա-
րիտ իցէ որ ինչ եղեն 'ի հրեշտակէն.
10 այլ համարէր երազ տեսանել։ *Եւ իբ-
րև անցին նոքա ընդ մի պահ և ընդ երկուս,
եկին մինչև 'ի դուռն երկաթի՝ որ հա-
նէր 'ի քաղաքն. որ ինքնին բացաւ նոցա.
և մտեալ անցին ընդ փողոց մի. և վաղ-
վաղակի 'ի բաց եկաց 'ի նմանէ հրեշ-
11 տակն։ *Եւ պետրոս իբրև 'ի միտս ե-
կն, ասէ, արդ գիտեմ ճշմարիտ եթէ
առաքեաց տէր զհրեշտակ իւր, և փրր-
կեաց զիս 'ի ձեռաց հերովդի, և յամ
12 ակնկալութենէ ժողովրդեանն հրէից։ *Եւ
լեալ 'ի միտ՝ եկն 'ի տուն մարեմու մօր
յովհաննու, որ կոչեցաւն մարկոս. ուր
էին բազումք ժողովեալ՝ և աղօթս առնէին։
13 *Եւ 'ի բախել զդուրս դրանն, մա-
տեաւ աղախին մի ունկն դնել, որում
14 անուն էր հռովդէ։ *Եւ ծանուցեալ
զձայնն պետրոսի 'ի խնդալոյն ոչ եբաց
զդուռն. 'ի ներքս ընթացեալ պատմեաց,
15 թէ պետրոս առ դրանն կայ։ *Նոքա
ասեն ցնա՝ մոլիս։ և նա եւս պնդէր՝ թէ
այսպէս է։ և նոքա ասէին՝ հրեշտակ նորա
16 իցէ։ *Եւ պետրոս ստէպ բախէր.
իբ-

digitised by A.R.A.R.@

իբրև բացին, տեսին զնա և զարմացան։
*Եւ նա ձեռամբ ցուցանէր նց լռել. և 17
պատմեաց՝ ոպ տէր եհան զնա 'ի բան-
տէն. և ասէ՝ պատմեցէք յակոբայ և
եղբարց զայս։ և ել գնաց յայլ տեղի։
*Եւ իբրև այգ եղև՝ էր խռովութիւն մեծ 18
'ի մէջ զինուորացն, զի՞ արդեօք պետ-
րոսն եղև։ *Իսկ հերովդէս իբրև խնդ- 19
րեաց զնա՝ և ոչ եգիտ, հարցեալ զպա-
հապանսն՝ հրամայեաց սպանանել։ և
իջեալ 'ի հրէաստանէ 'ի կեսարիա՝ և
անդ լինէր։ *Եւ էր հերովդէս ցաս- 20
մամբ ը տիւրացիս և ը սիդոնացիս. և
նոքա առ հասարակ եկին առ նա. և 'ի
բանի արարեալ զբղաստոս սենեկապետ
արքային, խնդրէին զխաղաղութիւն վն կե-
րակրելոյ երկրին նոցա յարքունուստ։
*Յաւուր միում յերևելւոջ՝ հերովդէս 21
զգեցեալ էր զհանդերձ թագաւորութեան՝
և նստէր յատենի, և խօսէր ը նս հրա-
պարակաւ։ *Եւ ամբոխն աղաղակէր՝ 22
թէ այ բարբառ է, և ոչ մարդոյ։ *Եւ 23
անդէն եհար զնա հրեշտակ տն, փոխա-
նակ զի ոչ ետ փառս այ. և եղեալ որդ-
նալից՝ սատակեցաւ։ *Եւ բանն այ ա- 24
ճէր և բազմանայր։
գ.Ջ*Բառնաբաս և սօղոս դարձան յեմէ՝ 25
իբրև կատարեցին զպաշտօնն. առեալ
էր ը իւրեանս և զյովհաննէս՝ որ կոչե-
ցեալն էր մարկոս։

Գլ։

digitised by A.R.A.R.@

## Գլ. ԺԳ.

1 Էին ոմանք յանտիոք ը՟ եկեղեցւոյն ,
» մարգարէք և վարդապետք , բառ-
նաբաս՝ և շմաւոնն կոչեցեալն նիւգէր,
և ղուկիոս կիւրենացի, և մանայէն դայ-
եակորդի հերովդի չորրորդապետի, և
2 սօղոս ։ * Մինչդեռ 'ի պաշտաման տ՟ն
կային՝ և պահէին , ասէ հոգին ս՟ր . ո-
րոշեցէք ինձ զբառնաբաս և զսօղոս 'ի
գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա ։
3 * Յայնժամ պահեալ՝ և աղօթս արա-
րեալ՝ եդին ձեռն 'ի վ՟ր ն՟ց՝ և արձակե-
4 ցին։ * Եւ նոքա առաքեալք 'ի հոգւոյն
ս՟բյ՝ իջին 'ի սելեւկիա, և անտի նաւե-
5 ցին 'ի կիպրոս ։ * Եւ հասեալ 'ի սաղա-
մինա՝ պատմէին զբանն ա՟յ 'ի ժ՟ղովուրդս
հրէիցն . ունէին և զյովհաննէս պաշ-
6 տօնեայ ։ * Շրջեալ ը՟ ա՟մ կղզին մին-
չև 'ի պափոս, գտին անդ զայր ոմն մոգ
սուտ մարգարէ հրէայ՝ որում անուն
7 էր բարէ յեսու ։ * Որ էր ը՟ փոխանակի
բդեշխին սերգեայ պօղոսի՝ առն իմաստ-
նոյ ։ Ն՟ր աղաչեալ զբառնաբաս և զսօ-
8 ղոս՝ խնդրէր լսել զբանն ա՟յ ։ * Ընդդէմ
եկաց ն՟ց եղիմաս մոգ , քանզի այսպէս
թարգմանի անուն ն՟ր . խնդրէր շրջել
9 զփոխանակ բդեշխին 'ի հաւատոց։ * Իսկ
սօղոս, որ և պօղոսն՝ լցեալ հոգւով սր-
10 բով հայեցաւ 'ի նա , * և ասէ . ո՜վ լի
ա՟մ

digitised by A.R.A.R.@

ամ՟ նենգութ՟ և խորամանկութ՟ որդի
սատանայի՝ թշնամի ամ՟ արդարութե՟, ոչ
լռես 'ի թիւրելոյ զճանապարհս տն՟ զու-
ղիղս։ *Եւ արդ՝ ահա ձեռն տն՟ 'ի վե՟ 11
քո, և եղիցիս կոյր՝ չտեսանել զարեւ մին-
չև 'ի ժամանակ մի։ և անդէն անկաւ
'ի վե՟ նր՟ մէգ և խաւար, և շրջեն խնդ-
րէր առաջնորդս։ *Յայնժամ տեսեալ 12
փոխանակն դեշխին զիրսն որ եղեն՝ հա-
ւատաց, զարմացեալ ընդ վարդապե-
տութիւն տն՟։
գ.Է *Եւ ամբարձեալ 'ի պափեայ պօղո- 13
սեանց՝ եկին 'ի պերգէ պամփիւլեայ.
յովհաննէս մեկնեալ 'ի նոցանէ՝ դար-
ձաւ յեմ՟։ *Եւ նոքա գնացեն 'ի պեր- 14
գեայ՝ եկին յանտիոք պիսիդեայ, և մը-
տեն 'ի ժողովուրդն յաւուր շաբաթուց՝
նստան։ *Եւ յետ ընթեռնլոյ զօրէնսն 15
և զմարգարէս, առաքեցին առ նս՟ ժո-
ղովրդապետքն՝ և ասեն. արք եղբարք՝
եթէ իցեն 'ի ձեզ բանք մխիթարութե՟
առ ժողովուրդդ՝ խօսեցարո՛ւք։ *Յոտն 16
եկաց պօղոս՝ շարժեաց զձեռն և ասէ.
արք իէ՟լացիք՝ և որք երկնչիք յայ՟՝ լուա-
րո՛ւք։ *Ած՟ ժողովրդեանս այսորիկ իս- 17
րայէլի ընտրեաց զհարսն մեր. և զժո-
ղովուրդն բարձրացոյց 'ի պանդխտութե՟
յերկրին եգիպտացւոց. և 'ի բազուկ
բարձր եհան զնս՟ անտի։ *Եւ իբրև քա- 18
ռասնամեայ ժամանակ կերակրեաց զնս՟

յա-

digitised by A.R.A.R.@

19 յանապատի: *Եւ քակեաց ազգս եօթն
յերկրին Քանանու՝ ժառանգեցոյց նոցա
20 զերկիր նց՝ *իբրեւ ամս չորեքհարիւր եւ
յիսուն: Եւ յետ այսորիկ ետ նց դատա-
21 ւորս մինչեւ 'ի Սամուէլ մարգարէ: *Եւ
անտի յառաջ խնդրեցին թագաւոր: Եւ
ետ նց ած զՍաւուղ որդի Կիսեայ՝ այր
յազգէ Բենիամենի, ամս քառասուն:
22 *Եւ իբրեւ փոխեաց զնա, յարոյց նոցա
զԴաւիթ թագաւոր, որում եւ ասաց
վկայութի. Գտի զԴաւիթ որդի Յեսսեայ
այր ըստ սրտի իմում. որ արասցէ զամ
23 զկամս իմ: *Ի սր զաւակէ ած ըստ աւե-
24 տեացն յարոյց Յսի զփրկիչն յի. *Ըստ յա-
ռաջագոյն քարոզութեն յովհաննու. ա-
ռաջի երեսաց մտին նր մկրտութի ապաշ-
25 խարութե ամ ժողովրդեանն Իլի: *Եւ
իբրեւ լնոյր յովհաննէս զընթացսն, ա-
սէր. զո՞ ոք կարծէք զինէն թէ իցեմ.
չեմ ես այն. այլ ահա գայ զկնի իմ,
որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն լու-
26 ծանել: *Արք եղբարք՝ որդիք աբրա-
համեան տոհմին, եւ որ 'ի ձեզ երկիւ-
ղածք իցեն յայ. ձեզ բանս այս փրկու-
27 թե առաքեցաւ: *Որք բնակեալ
են յեմ, եւ իշխանք նոցա՝ անծանօթ ե-
ղեն 'ի նմանէ. եւ ըստ բարբառոյ մարգա-
րէիցն, որ զամ շաբաթս ընթեռնուին՝
28 դատեալ՝ կատարեցին. *Եւ ոչ մի ինչ
պտճառս մահու գտեալ՝ խնդրեցին 'ի պի-
ղա-

digitised by A.R.A.R.@

ղատոսէ սպանանել զնա : * Եւ իբրեւ 29
կատարեցին զա՟մ՝ որ վ՟ն ն՟ր գրեալ էր,
իջուցեալ 'ի փայտէն՝ եդին 'ի գերեզ-
մանի : * Այլ ա՟ծ յարոյց զնա 'ի մեռե- 30
լոց. որ երեւեցաւ աւուրս բազումս այ-
նոցիկ, * որ ելեալ էին ը՟ն նմա 'ի Գալի- 31
լեէ յԵ՟ղմ. որք եւ արդ իսկ վկայք են ն՟ր
առ ժողովուրդն : * Եւ մեք ձեզ աւե- 32
տարանեմք զխոստումն՝ որ առ հարսն ե-
ղեալ էր : * Զի զնոյն ա՟ծ կատարեաց 33
առ մեզ որդիս ն՟ց՝ յարուցեալ զՅ՟ս. որ՟պ
եւ 'ի սաղմոսին գրեալ է յերկրորդում.
որդի իմ ես դու. եւ ես այսօր ծնայ ըզ-
քեզ : * Եւ զի յարոյց զնա 'ի մեռելոց, 34
եւ ոչ եւս դառնալոց է յապականութի.
այսպէս ասէ, եթէ տաց ձեզ զօրհնու-
թիւնս Դաւթի զհաւատարիմս : * Բան- 35
զի եւ 'ի միւսումն ասէ. ոչ տացես սրբոյ
քում տեսանել զապականութի : * Այլ 36
Դաւիթ յազգի անդ իւրում պաշտեաց.
եւ 'ի կամս ա՟յ ննջեաց, եւ յաւելաւ առ
հարս իւր՝ եւ ետես զապականութիւն :
* Բայց՝ զոր ա՟ծն յարոյց՝ ոչ ետես զա- 37
պականութի : Յայտնի լիցի ձեզ արք 38
եղբարք, զի սովաւ ձեզ թողութի մեղաց
աւետարանի : եւ յա՟մէ՝ յորմէ ոչ կարա-
ցէք օրինօքն Մովսէսի արդարանալ. * սո- 39
վաւ ա՟մ որ հաւատայ՝ արդարանայ :
* Զգոյշ կացէք՝ գուցէ եկեսցէ 'ի վ՟ր 40
ձեր ասացեալն 'ի մարգարէս : * Տեսէք 41
ար-

digitised by A.R.A.R.@

արհամարհոտք՝ և զարմացարո՛ւք և եղ-
ծարո՛ւք. զի գործ մի գործեմ ես յաւու-
րս ձեր, գործ՝ որում ո՛չ հաւատայցէք՝
42 եթէ ոք պատմեսցէ ձեզ: * Եւ իբրև ե-
լին անտի, աղաչէին 'ի միւսում շաբա-
43 թու խօսել նոցա զնոյն բանս: * Իբրև
արձակեցաւ ժողովուրդն, զհետ եր-
թային բազումք 'ի հրէից անտի և 'ի պաշտօ-
նէից եկամտից՝ զպօղոսի և զբառնաբայ.
որք խօսէին ը՟ ն՟ս, և հաւանեցուցանէին
զն՟ս կալ մնալ 'ի շնորհսն ա՟յ:
44 * Եւ 'ի գալ միւսոյ շաբաթուն, գրեթէ դ-կ
ամ՟ քաղաքն ժողովեցաւ լսել զբանն ա՟յ:
45 * Իբրև տեսին հրէայքն զամբոխն՝ լցան
նախանձու. և ընդդէմ դարձեալ ասա-
46 ցելոցն 'ի պօղոսէ՝ հայհոյէին: * Հա-
մարձակեալ պօղոսի և բառնաբայ՝ ա-
սէին. առ ձեզ նախ պարտ էր խօսել ըզ-
բանն ա՟յ. և քանզի դուք մերժեցէք զնա, և
ո՛չ արժանի համարիք զձեզ կենացն յա-
ւիտենականաց, ահաւասիկ դառնամք
47 'ի հեթանոսս: * Զի այսպէս պատ-
ուիրեաց մեզ տ՟ր. եդի զքեզ 'ի լոյս
հեթանոսաց՝ լինել քեզ 'ի փրկութի՟ մին-
48 չև 'ի ծագս երկրի: * Զայս լուեալ հե-
թանոսացն՝ ուրախ լինէին, և փառաւոր
առնէին զբանն տ՟ն. և հաւատացին՝ որք
էին կարգեալ 'ի կեանսն յաւիտենականս:
49 * Եւ շրջէր բանն ա՟յ ը՟ ամ՟ գաւառն:
50 * Բայց հրէայքն գրգռեցին զպաշտօ-



digitised by A.R.A.R.@

նեայ կանայս զգաստս՝ և զգլխաւորս
քաղաքին, և յարուցեալ հալածանս 'ի
վ՜ր պօղոսի և բառնաբայ՝ հանին զն՜ս 'ի
սահմանացն իւրեանց: * Եւ ն՜ք թօթա- 51
փեալ զփոշին յոտից 'ի վ՜ր ն՜ց, եկին յի-
կոնիոն: * Եւ աշակերտքն լնուին խնդ- 52
դութբ՜՝ և հոգւով սրբով:

## ԳԼ. ԺԴ.

Եւ եղև յիկոնիոն 'ի միասին մտանել 1
նոցա 'ի ժողովուրդ հրէիցն, և խօսել
նոյնպէս. մինչև հաւատալ հրէից՝ և
յունաց բազմաց յոյժ: * Բայց անհա- 2
ւանն հրէայքն յարուցին և չարացուցին
զանձինս հեթանոսացն 'ի վ՜ր եղբարց:
* Բազում ժամանակս շրջէին համար- 3
ձակեալք տ՜ն վկայու՜թբ, բանիւ շնորհաց
իւրոյ. և տալ նշանս և արուեստս լինե-
լոյ 'ի ձեռս ն՜ց: * Եւ եղեն հերձուածք 4
'ի բազմութե՜ն քաղաքին. ոմանք էին 'ի
հրէայսն, և ոմանք յառաքեալսն: * Իբ- 5
րև եղև դիմել հեթանոսացն և հրէից
իշխանօքն իւրեանց՝ 'ի թշնամանել և
'ի քարկոծել զն՜ս, * ազդ եղեալ նոցա՝ 6
փախեան 'ի քաղաքս լիկայոնացւոց 'ի
լիւստրա և 'ի դերբէ՝ և շուրջ զգաւա-
ռաւն, և անդ աւետարանէին:
ԴԿ * Եւ այր մի լիւստրացի տկար յոտից
նստէր՝ կաղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ
երբէք չէր գնացեալ: * Սա լուաւ զխօսսն 9
պօ-

digitised by A.R.A.R.@

պօղոսի. որոյ հայեցեալ 'ի նա, եւ տե-
9 սեալ՝ թէ ունի հաւատս փրկութե՟, * ա-
սէ մեծաձայն. քե՟զ ասեմ յանուն տ՟ն
մերոյ յի՟ս քի՟ի՝ յոտն կաց 'ի վ՟ր ոտից քոց
10 ուղիղ. եւ վազվազեր՝ եւ գնայր: * Եւ
ժողովրդոցն տեսեա՟լ զոր արարն պօղոս,
բարձին զձայնս իւրեանց լիկայոնարէն,
եւ ասեն. աստուածք նմանեալք մարդ-
11 կան իջին առ մեզ: * Եւ կոչէին զբառ-
նաբաս դիոս, եւ զպօղոս հերմէս, քան
12 զի նա էր առաջնորդ բանին: * Իսկ
քուրմն դիայ որ կայր առաջի քաղաքին,
ցուլս եւ պսակս հասուցեալ 'ի դուռնն՝
հանդերձ բազմութե՟քն՝ կամէր զոհել:
13 * Եւ լուեալ առաքելոցն բառնաբայ եւ
պօղոսի, պատառեալ զհանդերձս իւ-
րեանց՝ արտաքս վազեցին յամբոխն.
14 աղաղակէին՝ * եւ ասէին. արք՝ զի՞նչ
գործէք զայդ. մեք ձեզ նմանօղք կա-
րեօք մարդիկ եմք, աւետարանել ձեզ
յայդպիսի ունայնութե՟ց դառնալ յա՟ծ
կենդանի. որ արար զերկինս եւ զերկիր
15 եւ զծով՝ եւ զա՟մ որ 'ի նոսա: * Որ յան-
ցեալ ազգմն՝ թոյլ ետ ա՟մ հեթանոսաց
16 գնալ 'ի ճանապարհս իւրեանց: * Եւ սա-
կայն ոչ եթէ առանց վկայութե՟ զինքն
եթող՝ բարերարութե՟քն տալ յերկնից
ձեզ անձրեւս՝ եւ ժամանակս պտղաբերս,
լնուլ կերակրովք եւ ուրախութե՟ զսիրտս
17 ձեր: * Եւ զայս ասացեալ՝ հազիւ լռե-
ցու-

digitised by A.R.A.R.@

ցուցանէին զժողովուրդսն 'ի չզոհելոյ
նոցա. այլ գնալ յիւրաքանչիւր տեղիս:
ԴԳ * Իսկ 'ի շրջելն նց̅ և յուսուցանել՝ եկին 18
հասին յանտիոքէ և յիկոնիէ հրէայք.
և 'ի վիճել նոցա համարձակութ̅բ՝ պատրե-
ցին զժողովուրդսն 'ի բաց կալ 'ի նոցա-
նէ, և ասէին՝ թէ ոչինչ ճշմարտութ̅ի ա-
սեն, այլ զա̅մ ստեն. և քարկոծեալ
զպօղոս՝ քարշեցին արտաքս քան զքա-
ղաքն, և համարեցին զնա մեռեալ: * Իսկ 19
'ի պատել զնովաւ աշակերտացն՝ յա-
րեաւ եմուտ 'ի քաղաքն. և 'ի վաղիւ-
անդր ել բառնաբաւ հանդերձ 'ի դեր-
բէ: * Աւետարանեալ 'ի քաղաքին յայն- 20
միկ՝ և աշակերտեալ զբզ̅մս, դարձան 'ի
լիւստրայ՝ և յիկոնիոն՝ և յանտիոքիայ,
* հաստատել զանձինս աշակերտելոցն՝ 21
և մխիթարել կալ հաստատուն 'ի հա-
ւատսն. և թէ բզ̅մ նեղութ̅բք պարտ է
մեզ մտանել յարքայութ̅ին ա̅յ: * Ձեռ- 22
նադրեցին նց̅ ք̅հ եկեղեցւոյ՝ երիցունս.
աղօթս արարեալ հանդերձ պահօք,
յանձն արարին զն̅ս տ̅ն՝ յոր հաւատա-
ցեալն էին: * Իսկ շրջեալ ը̅դ պիսիդայ՝ 23
եկին 'ի պամփիւլեայ. * և խօսեցեալ 24
'ի պերգէ զբանն տ̅ն, իջին յատալիայ:
* Իսկ անտի նաւարկեալ՝ գնացին յան- 25
տիոք, ուստի էին յանձն արարեալ շնոր-
հացն ա̅յ՝ 'ի գործն զոր կատարեցին:
* Եկեալ և ժողովեալ զեկեղեցին պատ- 26
մե-

digitised by A.R.A.R.@

մեծին որչափ արար ա՟ծ ը՟ նոսա. և զի
եբաց հեթանոսաց դուռն հաւատոց:
27 * Ուրջէին ժամանակս ոչ սակաւ ը՟ ա-
շակերտսն:

## Գլ. ԺԵ.

1 Եւ ոմանք իջեալ ՚ի Հրէաստանէ՝ ու- ԴԴ
սուցանէին զեղբարս. եթէ ոչ թլ-
փատիք ը՟ օրինացն Մովսէսի՝ ոչ կարէք
2 ապրել: * Եւ ՚ի լինել ոչ սակաւ հա-
կառակութե՟ և խնդրոյ՝ Պօղոսի և Բառ-
նաբայ ը՟ նո՟, եդին ելանել Պօղոսի և
Բառնաբայ և ոմանց ՚ի նոցանէ՝ առ ա-
ռաքեալսն և երիցունս յեր՟մ վ՟ խնդ-
3 րոյն այնորիկ: * Նոքա յուղարկեալք
յեկեղեցւոյն, շրջէին ը՟ Փիւնիկէ. և
ը՟ Սամարիայ պատմէին զդարձն հեթա-
նոսաց, և առնէին ուրախութի՟ մեծ ա՟մ
4 եղբարց: * Եւ հասեալք յեր՟մ, ընկա-
լեալք յեկեղեցւոյն և յառաքելոցն և
յերիցանց՝ պատմեցին որչափ ինչ արար
5 ը՟նդ նո՟ ա՟ծ: * Յարեան ոմանք ՚ի հերձ-
ուածոյն փարիսեցւոց հաւատացեալք,
և ասեն՝ թէ պարտ է թլփատել զդոսա,
և պատուիրել պահել զօրէնսն Մովսէ-
6 սի: * Եւ ժողովեցան առաքեալքն և ե-
րիցունք տեսանել վ՟ բանիս այսորիկ:
7 * Եւ յետ բազում խնդրոյ լինելոյ՝ յառն ե-
կաց Պետրոս՝ և ասէ ցնո՟. Արք եղբարք՝
դուք ինքնին գիտէք, զի յաւուրցն ա-
ռա-

digitised by A.R.A.R.@

ռաջնոց'ի միջի ձերում ընտրեաց ած բե-
րանով իմով լսել հեթանոսաց բանին
աւետարանի, և հաւատալ: * Եւ սրր- 8
տագէտն ած վկայեաց նց, տալով նոցա
զհոգին սբ որպ և մեզ. * և ոչինչ ընտ- 9
րութի արար 'ի մէջ նց և մեր, հաւա-
տովք սրբեալ զսիրտս նց: * Արդ՝ ընդէ՞ր 10
փորձէք զած, դնել լուծ 'ի վզ պարա-
նոցի աշակերտացն, զոր ոչ հարքն մեր՝
և ոչ մեք կարացաք բառնալ: * Այլ 11
շնորհօքն տն յսի քսի հաւատամք ապ-
րել, զորօրինակ և նոքա: * Լռեաց ամ 12
ժողովուրդն, և լսէին բառնաբայ և պօ-
ղոսի պատմելոյն. որչափ արար ած նշ-
անս և արուեստս 'ի հեթանոսս 'ի ձեռս
նոցա:

Դե * Եւ յետ լռելոյն նց՝ պատասխանի ետ 13
յակովբոս և ասէ. արք եղբարք՝ լուա-
րուք ինձ: * Շմաւոն պատմեաց՝ որպէս 14
յառաջագոյն ած այց արար առնուլ ժո-
ղովուրդ 'ի հեթանոսաց անուան իւրոյ:
* Եւ այնմ միաբանին բանք մրգրէից. 15
որպ և գրեալ է: * յետ այսորիկ դար- 16
ձայց և շինեցից զյարկն դաւթի զան-
կեալն, և զկործանեալսն նր վերստին
շինեցից՝ և կանգնեցից զնա. * որպ զի 17
խնդրեսցեն մնացորդք մարդկան զտր.
և ամ հեթանոսք յորոց վր կոչեցեալ է
անուն իմ, ասէ տր. որ առնէ զայս ամ
* յայտնի է 'ի յաւիտենից, (տն գործ 18
իւր: )

digitised by A.R.A.R.@

19 իւր ։ ) * Վասն որոյ և ես իրաւունս հա-
մարիմ, մի՛ նեղել զայնոսիկ՝ ոյք 'ի հե-
20 թանոսաց դառնան առ ա̅ծ ։ * Այլ
տալ թուղթ առ ն̅ս, խորշել 'ի կերակ-
րոց կռոց՝ և 'ի պոռնկութե̅ և 'ի մեռե-
21 լոտւոյ՝ և յարենէ ։ * Զի մովսէս յազ-
գացն առաջնոց ը̅. քաղաքաց զ.քարոզիչս
իւր ունի 'ի ժողովս ը̅ ա̅մ շաբաթուց
22 ընթերցեալ ։ * Յայնժամ հաճոյ թուե-
ցաւ առաքելոցն և երիցանցն ա̅մ եկե-
ղեցեաւն, արս ընտրեալս 'ի նոցանէ ա-
ռաքել յանտիոք ը̅ պօղոսի և ը̅ բառ-
նաբայ, զյուդա՝ զկոչեցեալն բարսաբա,
23 և զշիղա՝ արս գլխաւորս . * գրեալ առ
եղբարս 'ի ձեռն նոցա զայս ինչ ։ Առա-
քեալքն և երիցունքն և եղբարքն, յանտիոք
և 'ի սիւրիա և 'ի կիւլիկիայ եղբարցդ՝
24 որ 'ի հեթանոսացդ էք, ողջոյն ։ * Զի ան-
գի լուաք՝ թէ ոմանք իբրև 'ի մէնջ
խռովեցուցին զձեզ բանիւք, խախտել
զանձինս ձեր . ասեն թլփատել և պա-
հել զօրէնսն՝ որոց ոչ հրամայեցաք ։
25 * Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողո-
վելոցս, արս ընտրեալս յղել առ ձեզ ը̅
սիրելիս մեր՝ ը̅ բառնաբայ և ը̅ պօղո-
26 սի . * արք՝ որք մատնեցին զանձինս իւ-
րեանց վ̅ս անուան տ̅ն մերոյ յ̅ի ք̅ի ։
27 * Արդ՝ առաքեցաք զյուդա և զշիղա .
28 և ն̅ք 'ի բանից զնոյն պատմել ։ * Զի
հաճոյ թուեցաւ հոգւոյն ս̅բյ և մեզ,
մի

digitised by A.R.A.R.@

մի ինչ աւելի բեռն դնել ձեզ. բայց
միայն 'ի կարեւորացս յայսցիկ * 'ի բաց
կալ, 'ի զոհելոյ կռոց' և յարենէ' և 'ի
հեղձուցելոյ' և 'ի պոռնկութ̃է. յորոց
պահէք զանձինս բարւոք գործէք: ողջ
լերուք: * Եւ նոքա արձակեալք' իջին 30
յանտիոք, և ժողովեալ զժողովուրդն'
ետուն զթուղթն: * Եւ ընթերցեալ' ու- 31
րախ եղեն 'ի վ̃ր մխիթարութ̃ն: * Յու- 32
դա և շիղա, զի և նոքա մարգարէք էին'
բանիւք բազմօք մխիթարեցին զեղբարս'
և հաստատեցին: * Եւ եղեալ անդ ժա- 33
մանակս' արձակեցան խաղաղութ̃բ յեղ-
բարց առ առաքեալսն: * Եւ հաճոյ 34
թուեցաւ շիղայի մնալ անդէն: * Բայց 35
պօղոս և բառնաբաս շրջէին յանտիոք,
ուսուցանել և աւետարանել' և այլովք
բազմօք' զբանն տ̃ն:
Դ.Ճ. * Իսկ յետ աւուրց ինչ ասէ պօղոս ցբառ- 36
նաբաս. դարձցուք և շրջեսցուք զեղ-
բարբք' ը̃ն ա̃մ քաղաքաց յորս քարոզե-
ցաք զբանն տ̃ն' թէ ո՞պ ունիցին: * Բառ- 37
նաբաս կամէր առնուլ և զյովհաննէս
զկոչեցեալն մարկոս. * բայց պօղոս ա- 38
ղաչէր' թէ զմեկնեալն 'ի նոցանէ 'ի պամ-
փիւլիայ, և զչեկեալն ը̃ն նո՛ա 'ի գործն,
մի առնուլ ը̃ն ինքեանս: * Եւ եղև գրժ- 39
տութ̃ի' մինչև մեկնել նոցա 'ի միմեանց,
բառնաբայ առնուլ զմարկոս' նաւել 'ի
կիպրոս. * Եւ պօղոսի ընտրեալ զշիղա' 40
ել,

digitised by A.R.A.R.@

եւ, յանձն արարեալ շնորհացն այ՝ յեղ-
41 բարց անտի ։ * Եւ շրջէր 'ի կողմանս աս-
որւոց և կիւլիկեցւոց, և հաստատէր
զեկեղեցիսն ։

## ԳԼ. ԺԶ.

1 Եկն եհաս 'ի դերբէ և 'ի լիւստրա. և
ահա աշակերտ ոմն էր անդ՝ անուն
տիմոթէոս, որդի կնոջ հրէի հաւատա-
2 ցելոյ՝ և հօր հեթանոսի ։ * Որ վկայեալ
էր 'ի լիւստրացւոց և յիկոնացւոց եղ-
3 բարց ։ * Զսա կամեցաւ պօղոս ը̃ իւր
տանել. և առեալ թլփատեաց զնա վ̃ն
հրէիցն, որ էին 'ի տեղիսն յայնոսիկ.
քանզի գիտէին ամենեքին զհայր նր̃՝ թէ
4 հեթանոս էր ։ * Իբրև անցանէին ընդ
քաղաքսն՝ աւանդէին նց̃ պահել զհրա-
մանսն պատուիրեալս յառաքելոցն և
5 յերիցանցն՝ որ յե̃մ ։ * Եւ եկեղեցիքն
հաստատէին 'ի հաւատս, և յաւելուին
'ի թիւն հանապազօր ։
6 * Եւ շրջեցան ը̃ փռիւգիա և ընդ կող- Դե
մանս գաղատացւոց, արգելեալք 'ի հոգ-
7 ւոյն սր̃յ խօսել զբանն յասիայ ։ * Բայց
եկեալ առ միւսեաւ՝ թևակոխէին եր-
թալ 'ի բիւթանիա, և ոչ համարձա-
8 կեաց նց̃ հոգին յի̃ ։ * Եւ անցեալ ը̃
9 միւսիա՝ իջին 'ի տրովադա ։ * Եւ տե-
սիլ երևեցաւ 'ի գիշերին պօղոսի. այր
ոմն մակեդոնացի կայր, աղաչէր զնա՝



digitised by A.R.A.R.@

և ասէր . անցեալ 'ի Մակեդոնիա՝ օգ-
նեսցես մեզ ։* Եւ իբրև զտեսիլն ետես, 10
վաղվաղակի խնդրեցաք ելանել 'ի Մա-
կեդոնիա . տեղեկացեալք՝ թէ հրա-
ւիրեաց զմեզ Տէր աւետարանել նոցա ։
* Եւ ելեալ 'ի Տրովադայ՝ դէպ ուղիղ 11
գնացաք 'ի Սամոթրակէ, և 'ի վաղիւ-
անդր 'ի Նոր քաղաք . * և անտի 'ի Փի- 12
լիպպուս, որ է առաջին վիճակ՝ Մակե-
դոնացւոց քաղաք՝ կողոնիա . և անդ
'ի քաղաքին դադարեմք մեր աւուրս ինչ,
* յաւուրն շաբաթու ելաք արտաքոյ քա- 13
ղաքին առ գետափն՝ ուր համարէր աղօ-
թըս մատուցանել . և նստեալ խօսէաք
ընդ ժողովեալ կանայս ։ * Եւ կին ոմն 14
անուն Լիդիա ծիրանավաճառ՝ 'ի Թիւա-
տիր քաղաքէ՝ երկիւղած յԱյ՝ լուաւ .
զորոյ Տէր եբաց զսիրտն անսալ խօ-
սիցն Պօղոսի ։ * Եւ իբրև մկրտեցաւ 15
ինքն և տուն իւր, աղաչէր և ասէր . ե-
թէ համարիցիք զիս հաւատացեալ Տն,
մտեալ 'ի տուն իմ ագերուք . և բռ-
նադատեաց տարաւ զմեզ ։ * Եւ եղև 16
մինչ երթայաք մեք յաղօթս, պատահ-
եաց մեզ աղախին ոմն՝ զոր ունէր այս
հարցուկ . որ շահս բազումս տայր տերանց
իւրոց՝ մոլեգնելովն ։ * Նա զհետ եղեալ Պօ- 17
ղոսի և մեր՝ աղաղակէր և ասէր . արքս
այս՝ ծառայք Այ բարձրելոյ են, որ պատ-
մեն ձեզ զճանապարհս փրկութեան ։ * Եւ 18
զայս

digitised by A.R.A.R.@

զայս առնէր 'ի բազում աւուրս : Ձանձրա-
ցեալ Պօղոս՝ դարձաւ և ասէ ցայսն .
պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի, ել
19 'ի դմանէ . և ել 'ի նմին ժամու : * Իբ-
րև տեսին տեարքն նորա՝ եթէ հատաւ յոյս
շահին նոցա, առեալ զպօղոս և զշիղա՝ ձգե-
20 ցին 'ի հրապարակ առ իշխանսն : * Եւ
ածեալ զնոսա առ զօրագլուխսն՝ ասէին .
արքս այս խռովեցուցանեն զքաղաքս
21 մեր . ինքեանք հրէայք են, * և պատմեն
մեզ օրէնս՝ զոր ոչ է արժան մեզ ընդունել,
և ոչ առնել . զի հռովմայեցիք եմք :
22 * Եւ կուտեցաւ ամբոխն 'ի վերայ նոցա . և
զօրագլուխքն պատառեցին զհանդերձս
իւրեանց . հրամայեցին գան հարկանել .
23 * և բազում վէրս եդեալ 'ի վերայ նոցա՝ արկին
'ի բանտ, պատուիրեցին բանտապետին
24 զգուշութեամբ պահել զնոսա : * Որոյ առեալ
զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա 'ի ներքին
բանտն . և զոտս նոցա պնդեաց 'ի կոճեղս :
25 * Եւ 'ի մէջ գիշերոյն պօղոս և շիղա
կային յաղօթս՝ և օրհնէին զԱստուած . և ունկ-
26 կըն դնէին նոցա կալանաւորքն : * Եւ ե-
ղև յանկարծակի շարժումն մեծ՝ մինչև
'ի շարժել հիմանց բանտին . և բացան
անդրէն դրունքն ամենայն, և ամենեցուն կապանք
27 լուծան : * Իբրև զարթեաւ բանտապե-
տըն՝ և ետես բացեալ զդուրս բանտին,
ձգեաց զսուսեր՝ և կամէր երթալ զիւ-
րովին . կարծէր փախուցեալ զկապեալսն :

* Եւ

digitised by A.R.A.R.@

* Եւ գոչեաց 'ի ձայն մեծ Պօղոս՝ և ա- 28
սէ. մի ինչ գործեր ընդ անձն քո չար,
քանզի ամենեքին աստ եմք։ * Խնդրեաց 29
լոյս՝ և դիմեաց 'ի ներքս. և զահի հա-
րեալ անկաւ առաջի Պօղոսի և Շիղայի.
* Եւ ածեալ զնս արտաքս՝ ասէ. տեա՛րք՝ 30
զի՞նչ պարտ է ինձ առնել՝ զի ապրեցայց։
* Եւ նոքա ասեն. հաւատա՛ 'ի տր յս 31
քս, և ապրեսցիս դու՝ և ամ տուն քո։
* Եւ խօսեցան նմա զբանն տն՝ և ամե- 32
նեցուն որ էին 'ի տան նր։ * Եւ առեալ 33
զնս 'ի նմին ժամու գիշերւոյն՝ լուաց 'ի
վիրաց անտի. և մկրտեցաւ ինքն և իւր-
քըն ամենեքեան անդէն վաղվաղակի։
* Եւ ածեալ զնս 'ի տուն իւր, եդ առա- 34
ջի նց սեղան. և ուրախ եղև ամ տամբն
հաւատացեալ յած։ * Եւ իբրև այգ 35
եղև՝ առաքեցին զօրագլուխքն զնուի-
րակսն, և ասեն. արձակեա՛ զարսդ զայ-
դոսիկ։ * Եւ պատմեաց բանտապետն 36
զբանսն՝ Պօղոսի, եթէ առաքեցին զօ-
րագլուխքն զի արձակիցիք. արդ ելէք՝
և երթա՛յք խաղաղութբ։ * Իսկ Պօղոս 37
ասէ ցնս. գան հարեալ զմեզ հրապա-
րակաւ՝ առ անմեղս հռովմայեցիս ար-
կին 'ի բանտ, և արդ լռելեա՞յն հանեն
զմեզ. ո՛չ այդպէս, այլ եկեսցեն ին-
քեանք իսկ հանցեն զմեզ։ * Եւ պատմե- 38
ցին զօրագլխացն նուիրակքն զբանսն.
զահի հարան իբրև լուան՝ թէ հռովմայե-
ցիք

digitised by A.R.A.R.@

39 ցիք են. եւ եկեալ աղաչեցին զն՟ս։ * Եւ
իբրեւ հանին, աղաչէին գնալ 'ի քաղա-
40 քէն։ * Եւ ելեալ 'ի բանտէն՝ մտին առ
Լիւդիա. եւ տեսեալ զեղբարս՝ մխիթա-
րեցին զն՟ս, եւ գնացին։

## ԳԼ. ԺԷ.

1 Եւ շրջեալ ը՟ն ամփիպոլիս եւ ը՟ն ապո- ԵԿ
ղոնիա, եկին 'ի Թեսաղոնիկէ, ուր
2 էր ժողովուրդ հրէից։ * Եւ ըստ սովո-
րութե՟ն պօղոս եմուտ առ ն՟ս, եւ 'ի շա-
բաթս երիս խօսեցաւ ը՟ն նոսա 'ի գրոց։
3 * բանայր՝ եւ դնէր առաջի, եթէ պա՛րտ
էր ք՟ի չարչարիլ եւ յառնել 'ի մեռելոց.
եւ թէ նա է ք՟ս յ՟ս՝ զոր ես պատմեմ
4 ձեզ։ * Եւ ոմանք 'ի նոցանէ հաւանե-
ցան, եւ վիճակեցան պօղոսի եւ շիղայի.
բայց պաշտօնէիցն հեթանոսաց էր բազ-
մութի՟ւ յոյժ, եւ 'ի կանանց գլխաւորաց
5 ո՛չ սակաւք։ * Եւ նախանձեցան հրէայքն,
եւ առեալ արս ոմանս գռեհիկս անօրէնս՝
ամբոխ արարեալ խռովեցին զքաղաքն.
եւ կուտեալ առ ապարանսն յասոնի,
խնդրեցին զնոսա ածել 'ի հրապարակ։
6 * Եւ իբրեւ ոչ գտին զն՟ս, քարշէին զյա-
սոնն եւ զոմանս եղբարս առ քաղաքա-
պետսն. բողոք բարձեալ՝ թէ որք զաշ-
խարհս խռովեցին՝ սոքա եւ այսր հասին.
7 * զորս ընկալեալ է յասոնի. եւ սոքա
ա՟մքն հակառակ հրամանացն կայսեր
գոր-

digitised by A.R.A.R.@

գործեն . Թագաւոր զոմն ասեն զյս :
* Եւ խռովեցուցին զժողովուրդսն և 8
զքաղաքապետսն , որ լսէին զայս : * Եւ 9
առեալ երաշխաւորութիւն առ 'ի Յասո-
նայ և յայլոցն՝ արձակեցին զնս : * Բայց 10
եղբարք վաղվաղակի գիշերայն յուղար-
կեցին զպօղոս և զշիղայ 'ի բերիա . որք
իբրև հասին անդր՝ 'ի ժողովուրդն հրէից
գնացին : * Զի սք̃ էին ազնուականա- 11
գոյնք՝ քան որ 'ի Թեսաղոնիկէն էին . որք
ընկալան զբանն ամ̃ յօժարութբ̃ . հա-
նապազ քննէին զգիրս , եթէ իցէ այս
այսպէս : * Եւ բզ̃մք 'ի նոցանէ հաւա- 12
տացին . և 'ի յունաց կանանց զգաստից՝
և յարանց՝ ոչ սակաւք : * Բայց իբրև 13
գիտացին՝ որ 'ի Թեսաղոնիկէ հրէայքն
էին , եթէ և 'ի բերիայ պատմեցաւ 'ի
պօղոսէ բանն այ̃ , եկին և անդր՝ շար-
ժել և խռովեցուցանել զժողովուրդսն :
* Յայնժամ վաղվաղակի զպօղոս առա- 14
քեցին եղբարքն գնալ մինչև 'ի ծովեզր .
և մնացին շիղա և տիմոթէոս անդէն :
* Եւ որք տանէին զպօղոս , ածին զնա 15
մինչև յաթէնս . և առեալ պատուէր 'ի
նմանէ առ շիղա և տիմոթէոս , զի վաղ-
վաղակի եկեսցեն առ նա . և գնացին :
ԵԲ * Եւ յաթէնս 'ի մնալն նր̃ պօղոսի , զայ- 16
րանայր հոգին 'ի նմա . զի տեսանէր 'ի
կռապաշտութե̃ զքաղաքն : * Եւ խօսէր 17
'ի ժողովրդեանն ը̃ հրէայս և ը̃ պաշտօ-
նեայսն՝

digitised by A.R.A.R.@

նեայսն՝ և 'ի հրապարակսն զա՟մ օր՝ ը-
18 րոց և պատահէին ։ * Ոմանք յեպիկուր-
եանցն , և 'ի ստոյիկեանց փիլիսոփայից
հակառակէին ը՟ն նմ՟. և ոմանք ասէին ,
զի՞նչ կամիցի սերմանաքաղս այս խօսել.
իսկ այլք , թէ օտարոտի ի՟մ դից թուի
պատմիչ լինելոյ. ք՟զի զյ՟ս և զյարու-
19 թ՟ն աւետարանէր ։ * Եւ առեալ զնա
ածին յարիսպագոսն , և ասէին. կարաս-
ցուք իմանալ՝ թէ զի՞նչ է նոր վարդա-
20 պետութիդ՝ որ 'ի քէն պատմի ։ * օտա-
րացուցիչս ի՟մ բերես 'ի լսելիս մեր. կա-
միմք գիտել՝ թէ զի՞նչ կամիցի այս լի-
21 նել ։ * Եւ աթենացիք ամենեքին՝ և
եկքն օտարք ո՛չ յայլ ինչ պարապէին ,
բայց ասել ինչ կամ լսել նորագոյնս ։
22 * Եկաց պօղոս 'ի մէջ արիսպագին՝ և
ասէ . ա՛րք աթենացիք , ըստ ա՟մ իբրև
23 պաշտօնասէրս տեսանեմ զձեզ ։ * Քան-
զի շրջեալ և տեսե՟լ զպաշտամունս ձեր ,
գտի բագին մի՝ յորում գրեալ էր , ան-
ծանօթի ա՟յ. զոր դուք յանծանօթս
24 պաշտէք , ես զնոյն պատմեմ ձեզ ։ * Ա՟ծ
որ արար զաշխարհս և զա՟մ որ 'ի նմա ,
նա երկնից և երկրի է տ՟ր . ո՛չ 'ի ձեռա-
25 գործ տաճարս բնակէ , * և ո՛չ 'ի ձե-
ռաց մարդկան պաշտի իբրև կարօտ ի-
միք. նա տայ ա՟մ կեանս և շունչ՝ և զա-
26 մենայն ինչ ։ * Արար 'ի միոջէ արենէ
զա՟մ ազգս մարդկան՝ բնակեալ 'ի վ՟ր
ա՟մ

digitised by A.R.A.R.@

ա̃մ երեսաց երկրի. հաստատեաց կար-
գեալ ժամանակս և սահմանադրութիս
բնակութե̃նց՝ խնդրել զա̃ծ. * զի Թերևս 27
զննիցեն զնա՝ և գտանիցեն. նա և ոչ
հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ 'ի
մէնջ: * Զի նովաւ կեամք և շարժիմք 28
և եմք, ո̃պ և ոմանք 'ի ձերոց Ճարտարաց
ասացին, Թէ նր̃ և ազգ իսկ եմք: * Արդ 29
արդ՝ որովհետև ազգ եմք ա̃յ, ոչ պար-
տիմք համարել ոսկւոյ՝ կամ արծաթոյ՝
կմ̃քարի, որ 'ի Ճարտարութե̃ և 'ի մտաց
մարդոյ քանդակեալ իցէ՝ զա̃ծականն
լինել նմանող: * Բայց զժամանակս ան- 30
գիտութե̃ն անտես արարեալ ա̃յ, արդ
զայս պատուիրէ մարդկան՝ ա̃մ ումեք
ապաշխարել: * Քանզի հաստատեաց 31
օր, յորում պարտ է դատել զաշխարհս
արդարութ̃բ, 'ի ձեռն առն որով սահ-
մանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յա-
րուցեալ զնա 'ի մեռելոց: * Իբրև լուան 32
զյարութի̃ մեռելոց, ոմանք ծաղր առ-
նէին. կէսքն ասէին լուիցուք 'ի քէն վ̃ս
այդորիկ միւսանգամ: * Եւ ապա պօ- 33
ղոս ել գնաց 'ի միջոյ նոցա: * Եւ ոմանք 34
արք անկեալք 'ի նա, հաւատացին. ը̃
որս էր և Դիոնէսիոս արիսպագացի, և
կին մի անուն Դամարիս՝ և այլք ընդ
նոսա:

Գլ.

digitised by A.R.A.R.@

## ԳԼ. ԺԸ.

1 Յետ այսորիկ մեկնեալ պօղոսի յաթե֊ ԵԳ
2 նացւոց անտի՝ եկն 'ի կորնթոս . * Եւ
եգիտ հրեայ զոմն անուն ակիւղաս՝ յազ֊
գէ պոնտացի , այն ինչ եկեալ յիտա֊
լիայ . և զպրիսկիղա կին նր , վն հրա֊
մանին կղօդեայ՝ որոշել զամ հրեայս 'ի
3 հռովմայ . և յարեցաւ 'ի նոս ։ * Եւ վն
զի համարուեստ էր , եղև առ նոսա՝ և
գործէր . քանզի էին խորանակարք ար֊
4 ուեստիւ ։ * Եւ խօսէր 'ի ժողովրդեանն
ըն ամ շաբաթուց , և հաւանեցուցանէր
5 զհրեայս և զհեթանոսս ։ * Իբրև իջին
'ի մակեդովնիա՝ շիղա և տիմոթէոս ,
ստիպէր հոգւովն պօղոս դնել վկայուն
6 հրէիցն՝ թէ յս է.քն ։ * Եւ յընդդէմ
դառնալ նոցա՝ և 'ի հայհոյել , թօթա֊
փեաց զձորձս՝ և ասէ ցնս . արիւն ձեր 'ի
գլուխս ձեր , քաւեալ եմ ես . յայսմ
7 հետէ 'ի հեթանոսս երթամ ։ * Եւ գը֊
նացեալ անտի եմուտ 'ի տուն ուրուք ,
որում անուն էր տիտոս յուստոս՝ պաշ֊
տօնեայ այ . որոյ ապարանքն էին մերձ
8 'ի ժողովետղն ։ * Կրիսպոս ժողովրդա֊
պետ հաւատաց 'ի տր ամ տամբ իւրով .
և բազմաց 'ի կորնթացւոցն լուեալ՝ հա֊
9 ւատացին և մկրտեցան ։ * Եւ ասէ տր
'ի գիշերին տեսլեամբ ցպօղոս . մի երկն֊
10 չիր՝ այլ խօսեաց՝ և մի լռեր . * քանզի
ես

digitised by A.R.A.R.@

ես ը՟նդ քեզ եմ, և ոչ ոք ընդդէմ դարձցի
քո՝ ի չարչարել զքեզ. զի ժողովուրդ
է իմ բազում ի քաղաքիս յայսմիկ։ * Եւ 11
նստաւ անդ տարի մի և ամիս վեց՝ ու-
սուցանել նոցա զբանն այ՟։
ԵԴ * Եւ գաղղիոնի փոխանակաւ բդեշ- 12
խին աքայեցւոց, յարեան միաբան հրէ-
այքն ի վ՟ր պօղոսի, և ածին զնա յա-
տեան. * Եւ ասէին, եթէ արտաքոյ օրի- 13
նաց պատրէ սա զմարդիկ պաշտել զա՟ծ։
* Եւ իբրև մերձ էր պօղոս բանալ զբե- 14
րան իւր, ասէ գաղղիոն ցհրէայսն. ե-
թէ էր ինչ անիրաւութի՟ կամ խարդա-
խութի՟ չարեաց՝ ո՛վ հրէայք, ի դէպ էր
ինձ անսալ ձեզ։ * Ապա եթէ խնդիրք 15
ինչ են վ՟ն բանի և անուանց և օրինաց
ձերոց, տեսջիք ձեզէն. քանզի դատաւոր
այդպիսի իրաց չկամիմ լինել։ * Եւ 16
մերժեաց զն՟ս յատենէ անտի։ * Եւ ա- 17
ռեալ ամենեցուն յունայն զսոսթենէս
ժողովրդապետն՝ հարկանէին առաջի ա-
տենին. և ոչինչ զայնմանէ գաղղիոնի
փոյթ լինէր։ * Բայց պօղոսի տակաւին 18
մնացեալ աւուրս բ՟զմս, յեղբարց հրա-
ժարեալ նաւէր յասորիս. և ը՟նդ նմա պրիս-
կիղա և ակիւղա, փոքրել զգլուխ ի կեն-
քրայ, քանզի ուխտաւոր էր։ * Եւ հա- 19
սեալ յեփեսոս՝ զն՟ս եթող անդ, և ինքն
մտեալ ի ժողովուրդն խօսէր ը՟նդ հրէայսն։
* Եւ աղաչէին զնա՝ բ՟զմ ժամանակս 20
լինել

digitised by A.R.A.R.@

21 լինել անդ. եւ ոչ առ յանձն. * այլ
հրաժարեաց 'ի նոցանէ, եւ ասէ. դար-
ձեալ շրջեցայց առ ձեզ այ կամօք։ ան-
22 բարձաւ յեփեսեայ,* եւ իջեալ 'ի կե-
սարիայ՝ ել եւ ետ ողջոյն եկեղեցւոյն։
23 Իջ յանտիոք,* եւ եղեալ անդ ժամա-
նակ ինչ, ել շրջել կարգաւ ընդ գա-
ղատացւոց աշխարհն եւ ը փռիւգիայ,
հաստատել զամենայն աշակերտեալսն։
24 * Հրեայ ոմն ապողոս անուն՝ աղեքսանդ-
րացի յազգէ, այր ճարտարաբան, եկն
եհաս յեփեսոս. զօրաւոր էր գրովք։
25 * Սա էր տեղեկացեալ ճանապարհին
տն, եւ եռայր հոգւով. խօսէր՝ եւ ուսու-
ցանէր ճշմարտութբ վս յսի. գիտէր միայն
26 զմկրտութիւն յովհաննու։ * Սա սկսաւ
համարձակել 'ի ժողովրդեանն. եւ լու-
եալ 'ի նմանէ ակիւղայ եւ պրիսկիղղայ,
առին զնա առ իւրեանս, եւ ճշմարտա-
գոյնս պատմեցին նմ զճանապարհն այ։
27 * Իբրեւ կամեցաւ նա գնալ յաքայիա,
յօժարեալ եղբարք՝ գրեցին առ աշա-
կերտսն ընդունել զնա։ որ իբրեւ եհաս
անդր՝ բզմ նպաստ լինէր հաւատացե-
28 լոցն՝ 'ի ձեռն շնորհացն։ * Քանզի պըն-
դագոյն զհրեայսն յանդիմանէր հրա-
պարակաւ. ցուցանել գրովք՝ եթէ քն
է յս։



digitised by A.R.A.R.@

## Գլ. ԺԹ.

ՆԵ Եւ եղեւ մինչ դեռ ապողոս 'ի կորն- 1
թոս էր , պօղոսի շրջեալ զվերին
կողմամբքն՝ և իջեալ յեփեսոս , և գը-
տեալ զոմանս զաշակերտս , * ասէ ցն̃ս . 2
եթէ հոգի ս̃բ ընկալարո՞ւք 'ի հաւա-
տալն : Նոքա ասեն ցնա . այլ և ոչ եթէ
հոգի ս̃բ գուցէ՝ լուեալ է մեր : * Եւ 3
ասէ , իսկ յի՞նչ մկրտեցարուք : Նոքա ա-
սեն . 'ի յովհաննու մկրտութիւն : * Եւ 4
ասէ պօղոս . յովհաննէս մկրտեաց մկըր-
տութի̃ ապաշխարութե̃ ա̃մ ժողովրդեանն .
և ասէր , զի որ գալոցն է յետ նր̃՝ 'ի նա
հաւատասցեն . այսինքն է՝ 'ի յս̃ ք̃ս :
* Եւ իբրև լուան , մկրտեցան յանուն 5
տն̃ յի̃ի : * և 'ի դնել 'ի վր̃ նոցա պօղոսի 6
զձեռն , եկն հոգին ս̃բ 'ի վր̃ նց̃ . խօսէին
լեզուս՝ և մարգարէանային : * Եւ էին 7
ամենեքեան արք իբրև երկոտասան :
* Եւ մտեալ 'ի ժողովուրդն՝ համարձա- 8
կէր ամիսս երիս . խօսէր և հաւանեցու-
ցանէր վս̃ արքայութե̃ն ա̃յ : * Իբրև ո- 9
մանք խստանային՝ և ը̃դդէմ դառնային
բամբասել զճանապարհն առաջի բազ-
մութե̃ն , մեկնեալ 'ի նոցանէ որոշեաց
զաշակերտսն . հանապազօր խօսէր 'ի դը-
ւանին տիւրաննեայ ուրումն : * Եւ այս 10
եղեւ զերկեամ մի , մինչև ա̃մ բնակչացն
ասիացւոց լսել զբանն տն̃՝ հրէից և հե-

թա

digitised by A.R.A.R.@

11 Թամնոսայ : * Եւ զօրութիւնս ոչ սակաւս
12 առնէր ա՟ծ 'ի ձեռն պօղոսի . * մինչ զի
և 'ի հիւանդս տանել 'ի քրտանէ նորա
Թաշկինակս կամ վարշամակս , և մեր-
ժել 'ի նոցանէ ախտից , և այսոց չա-
13 րաց ելանել : * Յանդգնեցան ոմանք և
'ի շրջող հրէից՝ որ երդմնեցուցիչքն
էին , անուանել 'ի վ՟ր այնոցիկ որ ու-
նէին այսս չարս , զանուն տ՟ն յ՟ի , և ա-
սէին , երդմնեցուցանեմ զձեզ 'ի յ՟ս՝ զոր
14 պօղոսն քարոզէ : * Էին ուրումն սկևայ
հրէի քահանայապետի եօթն որդիք , որ
15 զայս առնէին : * Պատասխանի ետ այսն
չար՝ և ասէ ցն՟ս . զյ՟ս գիտեմ և զպօղոս
16 ճանաչեմ , բայց դուք ո՟վ էք : * Եւ վա-
զեաց այրն յորում էր այսն չար , ըմբռ-
նեալ զերկոսեան յաղթահարեաց զն՟ս .
մինչև մերկս և վիրաւորս փախչել 'ի տա-
17 նէ անտի : * Եւ այս յայտնի եղև ա՟մ
հրէից և հեթանոսաց՝ որ բնակեալ էին
յեփեսոս . և անկաւ երկիւղ յամենե-
սեան 'ի ն՟ս . և մեծանայր անուն տ՟ն յ՟ի :
18 * Եւ այլ բազումք 'ի հաւատացելոցն
գային և խոստովան լինէին՝ և պատմէին
19 զգործս իւրեանց : * Եւ բազումք 'ի կա-
խարդասարացն բերէին զգիրսն, այրէին
առաջի ամենեցուն . և համարեցան ըզ-
գինս նոցա՝ և գտանէին արծաթոյ բիւրս
20 հինգ : * Եւ այսպէս բանն ա՟յ աճէր՝ և
զօրանայր :

* Եւ

digitised by A.R.A.R.@

ԺԹ *Եւ իբրեւ կատարեցաւ այս, եդ Պօղոս 21
'ի մտի շրջել ըն Մակեդոնիա եւ ընդ Ա-
քայիա՝ եւ գալ յԵմ. ասէ, եթէ յետ
երթալոյն իմ անդր, պարտ է ինձ եւ զՀռ-
ոմ տեսանել: * Առաքեաց 'ի Մակե- 22
դոնիա երկուս 'ի պաշտօնէիցն իւրոց ըզ-
Տիմոթէոս եւ զԵրաստոս, եւ ինքն մնաց
ժամանակ ինչ յԱսիա: * Եւ եղեւ 'ի 23
ժամանակին յայնմիկ խռովութի ոչ սա-
կաւ վս Ճանապարհին: * Իսկ Դեմետ- 24
րիոս ոմն անուն՝ արծաթագործ, գոր-
ծէր մեհեանս արծաթիս Արտեմի դից.
եւ տայր ճարտարացն լինել ոչ սակաւ
շահ. * որ ժողովեաց իսկ զձեռագէտս 25
արուեստին, եւ ասէ. արք՝ դուք ձեզէն
իսկ գիտէք, զի յայսմ գործոյ է շահ
մեզ: * Եւ տեսանէք եւ լսէք՝ եթէ ոչ 26
միայն զԵփեսացւոց, այլ գրեթէ զամ
իսկ Ասիացւոց՝ Պօղոս այս հաւանեցու-
ցեալ շրջեաց բազում ժողովս՝ ասել թէ
ոչ են աստուածք՝ ձեռագործք: * Եւ 27
ոչ միայն այս Ճգնէ զմեր կողմն գալ 'ի
յանդիմանութի, այլ եւ զմեծին դյ Ար-
տեմեայ զմեհեանն յոչինչ համարել.
նաեւ քակելոց ես իցէ մեծութի նր, զոր
ամ Ասիա՝ եւ տիեզերք պաշտեն: * Եւ 28
զայս իբրեւ լուան, լի եղեն բարկութբ.
աղաղակէին եւ ասէին, մեծ է Արտեմիս
Եփեսացւոց: * Եւ լցաւ քաղաքն խռո- 29
վութբ. դիմեցին առ հսրկ 'ի թէատրոնն,
յափշ-

digitised by A.R.A.R.@

յափշտակեցին զԳայիոս և զԱրիստար-
քոս Մակեդոնացի՝ զուղեկիցսն Պօղոսի ։
30 * Բայց Պօղոս իբրև կամեցաւ մտանել
յամբոխն, ոչ Թողին զնա աշակերտքն ։
31 * Ոմանք և յասիապետացն՝ որ էին նորա
բարեկամք, յղեցին առ նա՝ և աղաչէին,
32 մի տալ զանձն 'ի Թէատրոնն ։ * Այլք
այլ ի̃ն աղաղակէին . զի էր ժողովն ն̃դ
խռովեալ . և բ̃զմք 'ի նոցանէ ոչ գիտէին
33 Թէ վ̃ն ո̃յր ժողովեալ իցեն ։ * Եւ յամ-
բոխէն բազմութ̃ն յառաջ կալան զԱղէք-
սանդրոս . և իբրև ածին զնա Հրէայքն
յառաջ, աղեքսանդրոս շարժեաց զձեռն՝
և կամէր պատասխանի տանել ամբոխին ։
34 * Իբրև գիտացին՝ եթէ այրն Հրէայ է,
միաբարբառ եղեալ յամենեցունց՝ իբ-
րև ժամս երկուս աղաղակել, եթէ մեծ
35 է Արտեմիս եփեսացւոց ։ * Լռեցոյց
դպրապետն զամբոխն՝ և ասէ . արք ե-
փեսացիք՝ իսկ ո՞ է 'ի մարդկանէ՝ որ ոչ
գիտէ զեփեսացւոց քաղաքս մեհենա-
զարդ՝ մեծին Արտեմեայ դիցն, և դիո-
36 պետեայ ։ * Եւ զի այդ այդ̃պ է անշուշտ՝
ձեզ պարտ է հանդարտել, և մի ինչ
37 յանդգնութ̃ե գործել ։ * Ածէք զարդ
զայդոսիկ այսր, ոչ մեհենակապուտս՝
38 և ոչ հայհոյիչս ա̃յ մերոյ ։ * Զի եթէ
Դեմետրիոս և որք ը̃ նմա ճարտարք՝ ու-
նիցին ինչ ը̃ ումեք բանս, յատեան եր-
Թիցեն, և դատաւորք գոն, և ամբաս-
տան

digitised by A.R.A.R.@

տան լիցին զմիմեանց : * Ապա եթէ վն 39
այլ իրիք խնդիր իցէ՝ յօրինաւոր ժո-
ղովն վճարեսցի : * Քանզի և մեզ վիշտ վ- 40
տանգի է ընդ կռուոյս այսր աւուր՝ ա-
ռանց իրիք յանցանաց լինելոյ. զորմէ
ոչ կարասցուք պատասխանի տալ վասն
ժողովոյս այսորիկ : Եւ զայս ասացեալ՝
արձակեաց զժողովն :

## ԳԼ. Ի :

ե է Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց 1
պօղոս զաշակերտսն և մխիթարեաց.
ողջոյն ետ, և ել գնաց 'ի մակեդոնիա :
* Եւ շրջեալ ընդ կողմանսն ընդ այնոսիկ՝ 2
և մխիթարեալ զնոսա բանիւք բազմօք, եկն
յելլադայ : * Արար անդ ամիսս ե- 3
րիս, եղև նմա դաւ 'ի հրէիցն, մինչ դե-
կամէր ելանել յասորիս. խորհուրդ կա-
լաւ դառնալ ընդ մակեդոնիայ : * Եւ 4
երթայր ընդ նմա մինչև յասիայ՝ սոսիպատ-
րոս պիւռ բերիացի, և 'ի թեսաղոնիկե-
ցւոց՝ արիստարքոս և սեկունդոս՝ և գայ-
իոս դերբեացի, և տիմոթէոս, և ասիա-
ցիք՝ տիւքիկոս և տրոփիմոս : * Սոքա յա- 5
ռաջ երթեալ մնային մեզ 'ի տրովադայ :
* Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բա- 6
ղարջակերաց 'ի փիլիպպեայ՝ և եկաք առ
նոսա 'ի տրովադա՝ մինչև յաւուրս հինգ.
անդ դադարեցաք աւուրս եօթն : * Եւ 7
յաւուրն շաբաթուց մինչ դեռ ժողովեալ
էաք

digitised by A.R.A.R.@

էաք բեկանել զհացն, պօղոս խօսէր ընդ
նոսա՝ զի գնալոց էր 'ի վաղիւ անդր . եւ եր-
կայնեաց զբանն մինչեւ 'ի մէջ գիշերոյն :
8 * Եւ էին լապտերք բազումք 'ի վերնա-
9 տանն, ուր էաքն ժողովեալ : * Եւ նըս-
տէր ոմն երիտասարդ՝ անուն Եւտիքոս՝
'ի վերայ պատուհանին, նիրհէր 'ի քուն
թանձրութեան 'ի խօսելն պօղոսի յաճախ,
ընկղմեալ 'ի քնոյ անտի՝ անկաւ յերրորդ
դստիկոնէն 'ի վայր, եւ բարձաւ մեռեալ :
10 * Եւ իջեալ պօղոսի անկանէր զնովաւ .
ածնոյր զնա ընդ գիրկս՝ եւ ասէր . մի խռո-
11 վիք, քանզի հոգի սորա 'ի սմին է : * Եւ
ել եբեկ զհացն՝ եւ ճաշակեաց . եւ ընդ երկար
եւ խօսեցաւ մինչեւ յառաւօտ, եւ ապա
12 ել գնաց : * Եւ ածին զպատանին կեն-
13 դանի, եւ մխիթարեցան ոչ սակաւ : * Եւ
մեք մտեալ 'ի նաւն՝ ամբարձաք յա-
սոն . անտի ակն ունէաք միւսանգամ
առնուլ զպօղոս . զի այնպէս պատուի-
րեալ էր՝ մինչ ինքն զցամաքաւն երթա-
14 լոց էր : * Եւ իբրեւ դիպեցաւ մեզ 'ի յա-
սոն, առեալ զնա եկաք 'ի մետիլինէ :
15 * Եւ անտի նաւեալ՝ 'ի վաղիւ անդր հա-
սաք հանդէպ քիայ . եւ 'ի միւս օրն հա-
սաք 'ի սամոս . եւ 'ի վաղիւ անդր եկաք
16 'ի միլիտոն : * Զի 'ի մտի եդեալ էր պօ-
ղոսի նաւել առ եփեսոսաւ, որպէս զի մի լի-
ցի նմա ժամանակ ինչ յամել յասիայ .
քանզի փութայր եթէ հնար ինչ իցէ նմա

4 զօրն

digitised by A.R.A.R.@

գօրն պենտեկոստէից երթալ յԵրուսա-
Ձկ *Եւ 'ի Միլիտեայ յղեալ յԵփեսոս՝ կո- 17
չեաց զերիցունս եկեղեցւոյն: *Եւ իբ- 18
րեւ եկին առ նա, ասէ ցնո. դուք ձեզէն
գիտէք յօրէ յառաջնմէ յորմէ եկի յա-
սիայ, որպէս ը՟ ձեզ զա՟մ ժամանակսն
եղէ. *Ծառայել տ՟ն ա՟մ խոնարհութ՟բ 19
եւ բազում արտասուօք եւ փորձութե՟ք՝ որ
դիպեցան ինձ 'ի նենգութենէ հրէից:
*Որպէս ոչինչ զանգիտեցի յօգտակա- 20
րացն չպատմել ձեզ, եւ ուսուցանել զձեզ
հրապարակաւ եւ առտնին. *տալ վկայ- 21
ութի՟ հրէից եւ հեթանոսաց զապաշխա-
րութե՟ն՝ որ առ ա՟ծ, եւ զհաւատոցն որ
'ի տ՟ր մեր յ՟ս ք՟ս: *Եւ արդ՝ ահաւասիկ 22
ես կապեալ հոգւով երթամ յԷ՟մ. եւ
որ ինչ անդ ը՟ իս պատահելոց իցէ՝ չգի-
տեմ: *Բայց զի հոգին ս՟բ ը՟ս քաղաքաց 23
վկայէ ինձ եւ ասէ, եթէ կապանք եւ նե-
ղութի՟ք մնան քեզ: *Այլ ոչ ինչ հա- 24
մարիմ զանձն իմ պատուական՝ ո՟չ զկա-
տարել զընթացս իմ ուրախութ՟բ, եւ զպաշ-
տօնն զոր առի 'ի տ՟նէ յ՟սէ՝ վկայ լինել
աւետարանի շնորհացն ա՟յ: *Եւ արդ՝ 25
ահաւասիկ գիտեմ ես, թէ ոչ եւս տե-
սանելոց էք զերեսս իմ դուք ամենե-
քեան, յորս շրջեցայ քարոզել զարքայու-
թի՟ն ա՟յ: *Վասն որոյ վկայութի՟ դնեմ 26
ձեզ յաւուր յայսմիկ՝ զի սուրբ եմ յա-
րենէ ամենեցուն. *քանզի ոչ խորշեցայ 27
'ի

digitised by A.R.A.R.@

'ի չպատմելոյ ձեզ զամենայն կամս Այ՟ ։
28 * Զգոյշ կացէք անձանց և ամ՟ հօտին,
յորում եդ զձեզ Հոգին ս՟բ տեսուչս՝ հո-
վուել զժողովուրդ Տն՟, զոր ապրեցոյց
29 արեամբ իւրով ։ * Քանզի գիտեմ ես՝
եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք
յափշտակօղք 'ի ձեզ, որ ոչ խնայես-
30 ցեն հօտին ։ * Եւ 'ի ձէնջ յարիցեն արք՝
որք խօսիցին թիւրս, ձգել զաշակերտսն
31 զկնի իւրեանց ։ * Վասն այսորիկ ար-
թուն կացէք. և յիշեցէք՝ զի զերկեամ մի
զցայգ և զցերեկ՝ ոչ դադարեցի արտա-
սուօք խրատել զմի մի իւրաքանչիւր ։
32 * Եւ արդ՝ յանձն առնեմ զձեզ Այ՟՝ և
բանի շնորհաց նր՟, որ կարօղն է շինել՝
և տալ ձեզ ժառանգութի՟ ը՟ ս՟բսն ամ՟ ։
33 * Արծաթոյ՝ կ՟մ ոսկւոյ կ՟մ հանդերձից՝
34 ոչ ուրուք 'ի ձէնջ ցանկացայ. * դուք ինք-
նին գիտէք՝ զի զպէտսն իմ և որոց ը՟ իմս
35 էին՝ պաշտեցին ձեռքս այս ։ * Եւ զամ՟
ինչ ցուցի ձեզ. զի այսպ՟ պարտ է վաստա-
կել, դարմանել զհիւանդս. և յիշել
զբանն Տն՟ Յի՟, զոր ինքն իսկ ասաց. ե-
րանելի է մանաւանդ տալ՝ քան առնուլ ։
36 * Եւ զայս իբրև ասաց, եդեալ ծունր
37 ամենեքումբք՝ եկաց յաղօթս ։ * Բա-
զում լալիւն եղև ամենեցուն. և ան-
կեալ զպարանոցաւն պօղոսի՝ համբու-
38 րէին զնա ։ * Մորմոքէին մանաւանդ 'ի
վերայ բանին զոր ասէր, թէ ոչ ևս տե-
սա-

digitised by A.R.A.R.@

սամելոց են զերեսս նր. և յուղարկեցին
զնա 'ի նաւ անդր :

## ԳԼ. ԻԱ.

ՁԲ. Եւ իբրև եղև ելանել մեզ և մեկնել 'ի 1
նոցանէ, հանդէպ գնացեալ եկաք 'ի
կով. և 'ի վաղիւ անդր 'ի հռոդոն, և
անտի 'ի պատարայ : * Եւ գտեալ նաւ 2
մի' զի երթայր 'ի փիւնիկէ, և ելեալ 'ի
նա գնացաք : * Եւ յայտ եղեալ կիպ- 3
րեայ' թողաք զնա 'ի ձախակողմն, նա-
ւեցաք յասորիս, և իջաք 'ի տիւրոս.
քզի անդ էր նաւն թափելոց զբեռինն :
* Եւ գտեալ զաշակերտսն' կացաք անդ 4
աւուրս եօթն. որք ասէին ցպօղոս 'ի
ձեռն հոգւոյն' մի ելանել յե՜մ : * Եւ 5
իբրև եղև մեզ կատարել զաւուրսն' ե-
լեալ գնայաք, յուղարկէին զմեզ ամենե-
յուն հանդերձ կանամբք և որդւովք մին-
չև արտաքոյ քաղաքին. և եդեալ ծունր
առ ծովեզերբն' կացաք յաղօթս : * Եւ 6
հրաժարեցաք 'ի միմեանց' և ելաք 'ի
նաւն. և նոքա դարձան յիւրեանց տե-
ղիս : * Եւ մեր զնաւն առխեթեալ 'ի
տիւրոսէ հասաք 'ի պտողեմայիդա. և
ողջոյն տուեալ եղբարցն' եղաք օր մի առ
նմ : * Եւ 'ի վաղիւ անդր ելեալ անտի' 8
եկաք 'ի կեսարիա. և մտեալ յապա-
րանսն փիլիպպոսի աւետարանչի, որ էր
յեւթանց անտի, ագաք առ նմ : * Եւ նո- 9
րա

digitised by A.R.A.R.@

րա էին զատերք չորք կոյսք՝ մարգարէք:
10 * Եւ 'ի լինելն մեր անդ աւուրս բ̃զմս,
էջ ոմն 'ի Հրէաստանէ մարգարէ՝ անուն
11 Ագաբոս : * Եւ եկեալ առ մեզ, առեալ
զգօտին Պօղոսի՝ կապեաց զոտս եւ զձեռս
իւր, եւ ասէ. այսպէս ասէ հոգին ս̃բ.
զայրն որոյ գօտիս այս է՝ այսպէս կապես-
ցեն յե̃ղէմ Հրէայք, եւ մատնեսցեն 'ի
12 ձեռս հեթանոսաց : * Եւ իբրեւ լուաք
զայն՝ աղաչէաք մեք, եւ որ 'ի տեղւոջն
13 էին՝ չելանել նմա յե̃ղէմ: * Յայնժամ
պատասխանի ետ Պօղոս. զի՞նչ գործէք,
զի՞ լայք եւ ձմլեցուցանէք զսիրտ իմ.
քանզի ես ոչ միայն կապելոյ՝ այլ եւ մե-
ռանելոյ յե̃ղէմ պատրաստ եմ վասն ան-
14 ուանն տն̃ յի̃ քի̃ : * Եւ 'ի չանսալն
նր̃՝ լռեցաք, ասեմք. տն̃ կամք լիցին :
15 * Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ համդեր-
16 ձեալ ելանէաք յե̃ղէմ: * Եկին ը̃ մեզ եւ
յաշակերտաց անտի կեսարացւոց, եւ տա-
նէին զմեզ առ որում վանս ունելոց էաք՝
մնասոնի ուրեմն կիպրացւոյ՝ առաջին ա-
17 շակերտի : * Եւ 'ի մտանելն մեր յե̃ղէմ,
18 խնդութ̃բ ընկալան զմեզ եղբարք: * Ի վա-
ղիւ անդր եմուտ պօղոս ը̃ մեզ առ յակով-
19 բոս. եւ եկին ա̃մ երիցունքն: * Եւ ողջոյն
տուեալ ն̃ց՝ պատմէր մի ը̃ միոջէ զոր ա-
րար ա̃ծ 'ի հեթանոսս 'ի ձեռն պաշտա-
20 մանն նր̃: * Եւ ն̃ց լուեալ՝ փառաւոր առ-
նէին զա̃ծ : եւ ասեն ցնա . տեսանես եղ-
բայր՝

digitised by A.R.A.R.@

բայր՝ քանի՛ բիւրք են հաւատացելոցն
Հրէից, և ամենեքեան նախանձաւոր օրէ-
նացն են ։ * Բայց իրազեկ եղեն վ՟ս քո՝ 21
թէ ապստամբութ՟ի ուսուցանես 'ի Մով-
սեսէ՝ որոց 'ի հեթանոսս ա՟մ Հրէայք են.
ասես՝ մի՛ թլփատել զորդիս ն՟ց, և մի՛ ը՟ս
կրօնիցն գնալ ։ * Արդ՝ զի՞նչ լինիցի՝ ա- 22
պաքէն լսեն, եթէ եկեալ ես . * Արդ 23
զայս արա՛ զոր ասեմք քեզ. են 'ի մեզ արք
չորք ուխտաւորք յանձինս իւրեանց .
* զն՟ս առեալ սրբեսցիս ը՟ն ն՟ս. և ծախեա՛ 24
ինչ 'ի ն՟ս զի գերծցեն զգլուխս . և գի-
տասցեն ամենեքին, թէ զորոց իրազեկն
եղեն զքէն՝ ոչի՛նչ է . այլ միաբանիս և
դու պահել զօրէնս ։ * Բայց վ՟ս հաւա- 25
տացելոցն հեթանոսաց, մեք առաքե-
ցաք՝ ո՟չ ընտրեցաք, մի՛ ինչ այնպիսի պա-
հել ն՟ց . բայց միայն զգուշանալ 'ի կռոց
զոհելոյ, և յարենէ, և 'ի հեղձուցելոյ,
և 'ի պոռնկութ՟է ։ * Յայնժամ պօղոսի 26
առեալ զարսն՝ 'ի վաղիւ անդր ը՟ն ն՟ս սր-
բեալ եմուտ 'ի տաճարն . յայտ առնել
զկատարումն աւուրցն սրբութ՟ե, մինչև
մատեաւ 'ի վ՟ր իւրաքանչիւր ուրուք 'ի
նոցանէ պատարագ ։
ԶԴ * Եւ իբրև մերձ էին եօթն աւուրքն 'ի 27
կատարել, տեսեալ զնա 'ի տաճարին ա-
սիացւոց Հրէիցն՝ զեղուին զնովաւ զա՟մ
զամբոխն . և արկեալ 'ի նա ձեռս՝ աղա-
ղակէին . * Ա՛րք իէ՟լացիք՝ օգնեցէ՛ք . այս 28

այր է՝ որ հակառակ ժողովրդեանն և
օրինաց և տեղւոյս այսորիկ՝ ամենեցուն
ամ ուրեք ուսուցանէ . մինչև հեթա-
նոսս ևս եմոյծ 'ի տաճարն՝ և պղծեաց
29 զսուրբ տեղին : * Քանզի էր յառաջագոյն
տեսեալ զտրոփիմոս զեփեսացի 'ի քա-
ղաքին ընդ նմա . զոր կարծէին՝ եթէ 'ի տա-
30 ճար անդր եմոյծ պօղոս : * Շարժեցաւ
քաղաքն ամ, և կուտեցաւ ժողովուրդն .
և առեալ զպօղոս ձգէին արտաքոյ տա-
ճարին . և վաղվաղակի փակեցան դը-
31 րունքն . * և խնդրէին զնա սպանանել :
եհաս զրոյց 'ի հազարապետ գնդին , ե-
32 թէ խռովեալ է ամ երեմ : * Որոյ անդէն
առեալ զօրականս և հարիւրապետս՝ դի-
մեաց 'ի վրն նց . և նց տեսեալ զհազա-
րապետն և զզօրականսն, դադարեցին
33 'ի հարկանելոյ զպօղոս : * Յայնժամ
մատուցեալ հազարապետն կալաւ զնա,
և հրամայեաց կապել կրկին շղթայիւք՝
և հարցանէր թէ ո՞վ իցէ , և զի՞նչ իցէ ա-
34 րարեալ : * Այլք այլ ինչ աղաղակէին
զնմանէ յամբոխին . իբրև ոչ կարաց գի-
տել զստոյգն վն ամբոխին , հրամայեաց
35 ածել զնա 'ի բանակն : * Եւ իբրև ե-
հաս յաստիճանսն , դէպ եղև բառնալ
բերել զնա 'ի զօրականացն՝ վասն բռնու-
36 թեան ամբոխին . * քանզի զհետ եր-
թայր բազմութիւն ժողովրդեանն , և ա-
37 ղէին՝ բարձ զդա : * Մինչ դեռ մտանե-

լոյ

լոց էր պօղոս 'ի բանակն, ասէ ցհազա-
րապետն՝ եթէ արժա՞ն է ինձ խօսել
ընդ քեզ: Եւ նա ասէ. յունարէն գիտե՞ս.
* մի՞ արդեօք դու իցես եգիպտացին, որ 38
յառաջ քան զայս աւուրս ապստամբե-
ցուցեր եւ հաներ յանապատ չորս հազարս
արս սիկարեանս: * Եւ ասէ պօղոս, ես 39
եմ այր հրեայ 'ի տարսոնէ կիլիկեցւոց,
ոչ աննշան քաղաքի քաղաքացի. աղաչեմ
զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժողո-
վուրդն: * Եւ 'ի հրամայելն նորա, պօղոս 40
կացեալ 'ի վերայ աստիճանացն՝ շարժեաց
զձեռն ժողովրդեանն. իբրեւ բազում
լռութիւն լինէր, սկսաւ բարբառել հեբ-
րայեցւոց բարբառովն՝ եւ ասէ:

## ԳԼ. ԻԲ:

Արք եղբարք եւ հարք՝ լուարո՛ւք ինձ 1
այժմ առ ձեզ պատասխանատուու-
թեանս: * Իբրեւ լուան՝ եթէ հեբրայեց- 2
ւոց լեզուաւն բարբառեցաւ նոցա առաւ-
ել եւս դադարեցին 'ի լռութիւն: * Եւ 3
ասէ. ես եմ այր հրեայ ծնեալ 'ի տար-
սոնի կիլիկեցւոց՝ սնեալ 'ի քաղաքիս
յայսմիկ առ ոտս գամաղիելի՝ խրատեալ
ըստ ճշմարտութեան հայրենի օրինաց. նա-
խանձայոյզ էի Աստուծոյ՝ որպէս ամենեքին դուք
այսօր: * Որ զայս ճանապարհ հալածեցի 4
մինչեւ 'ի մահ, կապել եւ մատնել 'ի
բանտս արս եւ կանայս. * որպէս եւ քահա- 5
նա-

digitised by A.R.A.R.@

նայապետդ վկայէ ինձ՝ և ամենայն ծե-
րակոյտդ. յորոց և թուղթս առեալ առ
եղբարս 'ի դամասկոս երթայի, ածել և
անտի կապեալս յե՟մ, զի պատժեսցին։
6 * Եւ եղև ինձ 'ի գնալն և 'ի մերձենալ
'ի դամասկոս, զմիջաւուրբն յանկար-
ծակի յերկնից փայլատակեալ լոյս սաս-
7 տիկ զինև. * և անկայ յերկիր, և լուայ
բարբառ որ ասէր ցիս. սաւուղ սաւուղ՝
8 զի՞ հալածես զիս։ * Եւ ես ետու պա-
տասխանի՝ թէ ո՞վ ես տ՟ր։ և ասէ ցիս,
ես եմ յ՟ս նազովրացի՝ զոր դու հալա-
9 ծես։ * Բայց որ ը՟ իմն էին՝ զլոյսն տե-
սանէին. այլ զձայնն ոչ լսէին՝ որ խօսէր
10 ը՟ իս։ * Եւ ասեմ, զի՞նչ արարից տ՟ր։ և
ասէ ցիս տ՟ր. յարուցեալ երթիցես 'ի դա-
մասկոս, և անդ պատմեսցի քեզ վ՟ս ա՟մի
11 որ հրաման է քեզ առնել։ * Իբրև ոչ
տեսանէի 'ի փառաց լուսոյն այնորիկ,
զձեռանէ ձգեալ 'ի նոցանէ որ ը՟ իմն էին,
12 մտի 'ի դամասկոս։ * Անանիա ոմն այր
երկիւղած ըստ օրինաց, վկայեալ յա՟մ
բնակչաց որ 'ի դամասկոս հրէայքն էին.
13 * եկն եկաց առ իս՝ և ասէ. սաւուղ եղ-
14 բայր՝ 'ի վեր հայեաց։ * Եւ ես նոյնժա-
մայն 'ի վեր հայեցայ 'ի նա. և նա ասէ ցիս,
ա՟ծ հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց
զքեզ ճանաչել զկամս ն՟ր, և տեսանել
զարդարն, և լսել բարբառ 'ի բերանոյ
15 ն՟ր. * զի եղիցիս վկայ ն՟ր առ ա՟մ մար-



digitised by A.R.A.R.@

դիկ՝ որոց տեսերն և լուար ։ * Եւ արդ՝ 16
զի՞ հեղգաս, արի՛ մկրտեաց և լուա՛ ըզ-
մեղս քո 'ի կարդալ զանուն ն̅ր ։ * Եւ 17
եղև ինձ 'ի դառնալն յե̅ղ̅մ՝ և կալ յա-
ղօթս 'ի տաճարին, լինել 'ի զարմաց-
ման. * և տեսանել զնա զի ասէր ցիս. 18
փութա՛ ել յե̅ղ̅մէ վաղվաղակի, քանզի
չե՛ն ընդունելոց զքո վկայութի̅ վ̅ս իմ ։
* Եւ ես ասեմ. տ̅ր՝ ինքեանք իսկ գի- 19
տեն՝ զի ես էի որ 'ի բանտն տայի, և գան
հարկանէի ը̅ ժողովրդոցն զհաւատա-
ցեալս 'ի քեզ ։ * Եւ յորժամ հեղոյր ա- 20
րիւնն ստեփաննոսի վկայի քոյ, ես ինքն
էի՝ որ 'ի վերայ կայի, և կամակից լինէի
սպանմանն ն̅ր, և պահէի զհանդերձս
սպանողացն ն̅ր ։ * Եւ ասէ ցիս. գնա՛, 21
զի ես 'ի հեթանոսս հեռաւորս առաքե-
ցից զքեզ ։ * Եւ ունկն դնէին ն̅մ մինչև 22
ցայս բան. ապա բարձին զձայնս իւր-
եանց՝ և ասեն. բա՛րձ յերկրէ զայդպի-
սիդ, զի չէ՛ պարտ այդպիսւոյդ կեալ ։
* Եւ յաղաղակելն նոցա՝ և ընկենուլ 23
զհանդերձս՝ և զփոշին ցանել յօդսն,
* հրամայեաց հազարապետն մուծանել 24
զնա 'ի բանակն. ասէր՝ գանիւ հարցա-
նել զնա, զի գիտասցէ վ̅ս որոյ յանցման
այնպէս աղաղակէին զնմանէ ։ * Եւ իբ- 25
րև պրկեցին զնա փոկովք, ասէ պօղոս
ցհարիւրապետն որ 'ի վ̅ր կայր. եթէ
զայր հռովմայեցի և անպարտ պա՞րտ է-
ցէ

digitised by A.R.A.R.@

26 ցէ ձեզ գան հարկանել ։ * Իբրև լուաւ
հարիւրապետն, մատուցեալ առ հազա-
րապետն պատմեաց և ասէ . զի՞նչ կամիս
առնել՝ քանզի այրս այս հռովմայեցի է ։
27 * Եւ մատուցեալ հազարապետն, ասէ
ցնա . ասա՛ դու ցիս՝ հռովմայեցի՞ ես . և
28 նա ասէ, այո ։ * Պատասխանի ետ հազա-
րապետն . ես բզ̃մ գլխոց զզինուորութիւն
զայս ստացայ . ասէ պօղոս . ես ծնեալ
29 իսկ 'ի դմին եմ ։ * Եւ վաղվաղակի 'ի
բաց կացին 'ի նմանէ՝ որ հարկանելոցն
էին զնա . և հազարապետն իսկ երկեաւ,
իբրև գիտաց եթէ հռովմայեցի է . և զի
կապեալն ևս էր զնա ։
30 * Եւ 'ի վաղիւ անդր կամէր գիտել ըզ- ՉՉ
ճշմարիտն, թէ զի՞նչ չարախօսութի իցէ
հրէիցն . արձակեաց զնա՝ և հրամայեաց
կոչել զքահանայապետսն և զամենայն
ատեանն . և իջուցեալ զպօղոս կացոյց 'ի
մէջ նոցա ։

## ԳԼ . ԻԳ ։

1 Եւ հայեցեալ պօղոսի յատեանն՝ ասէ .
արք եղբարք՝ ես ամ̃ ուղիղ մտօք
գնացեալ եմ առաջի այ̃ մինչև ցայսօր ։
2 * Եւ քահանայապետն անանիա հրա-
մայեաց սպասաւորացն հարկանել զբե-
3 րան նր̃ ։ * Յայնժամ պօղոս ասէ ցնա .
հարկանելոց է զքեզ ած̃՝ որմ բռեալ . և
դու նստիս դատել զիս ը̃ օրինաց , և ա-
ռանց

digitised by A.R.A.R.@

ռանց օրինաց հրամայես զիս հարկանել։
* Եւ որ շուրջն կային՝ ասեն. զքահա- 4
նայապե՟տ ա՟յ հայհոյես։ * Եւ ասէ պօ- 5
ղոս. ոչ գիտէի եղբարք՝ եթէ իցէ քա-
հանայապետ. գրեալ իսկ է՝ զիշխան ժո-
ղովրդեան քո ոչ հայհոյեսցես։ * Իբրեւ 6
գիտաց պօղոս՝ եթէ մի կողմն սադուկեց-
ւոց է՝ և միւսն փարիսեցւոց, աղաղակէր
'ի մէջ ատենին. արք եղբարք՝ ես փարի-
սեցի եմ, որդի փարիսեցւոյ. վ՟ն յուսոյ
և յարու՟ե մեռելոց՝ ես աւասիկ դատիմ։
* Եւ զայս իբրեւ ասաց՝ եղեն հերձ- 7
ուածք փարիսեցւոցն և սադուկեցւոց.
և պատառեցաւ բազմութիւն։ * Քանզի 8
սադուկեցիքն ասեն, չիք յարութ՟ի, ոչ
հրեշտակ՝ և ոչ հոգի. բայց փարիսե-
ցիքն խոստովանին զերկոսեան։ * Եւ 9
եղև աղաղակ մեծ. յարեան կացին ոմանք
'ի դպրացանտի 'ի կողմանէ փարիսեց-
ւոց, հակառակէին և ասէին. ոչինչ չա-
րութ՟ի գտանեմք յառնս յայսմիկ, բայց
թէ հոգի խօսեցաւ 'ի դմա՝ կամ հրեշ-
տակ։ * Եւ 'ի բազմանալ ամբոխին՝ եր- 10
կուցեալ հազարապետն թէ գուցէ ձեղ-
քիցի պօղոս 'ի նոցանէ, հրամայեաց զօ-
րականին իջանել յափշտակել զնա 'ի
միջոյ ն՟ց, և ածել 'ի բանակն։ * Եւ 'ի 11
վաղուեան գիշերին եկաց առ նմ՟ տ՟ր, և
ասէ. քաջալերեաց պօղէ, զի ո՟պ վկայե-
ցեր վ՟ս իմ յերուսաղէմ, նոյնպ՟ս պարտ
է

digitised by A.R.A.R.@

է քեզ և 'ի Հռովմ վկայել ։
12 * Եւ իբրև այգ եղև՝ արարեալ ժողով ԻԳ
Հրէիցն՝ նզովեցին զանձինս ոչ ուտել և
13 ոչ ըմպել՝ մինչև սպանցեն զպօղոս ։ * Եւ
էին աւելի քան զքառասուն՝ որոց զայս
ընդ միմեանս երդմունս արարեալ էր ։
14 * Որք մատեան առ քահանայապետսն և
երիցունս՝ և ասեն ․ նզովիւք նզովեցաք
զանձինս՝ ոչինչ ճաշակել մինչև սպան-
15 ցուք զպօղոս ։ * Արդ դուք զգացուցէք
հազարապետին հանդերձ ատենիւ , զի
իջուսցէ զնա առ ձեզ , որպէս թէ կամիցիք
ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ ․ և
մեք յառաջ քան զմօտելն նորա պատրաստ
16 եմք 'ի սպանանել զնա ։ * Եւ լուեալ քեռ-
որդւոյն պօղոսի զդաւաճանութիւն , եկն
եմուտ 'ի բանակ անդր՝ պատմեաց պօ-
17 ղոսի ։ * Եւ կոչեցեալ պօղոսի առ իւր
զմի 'ի հարիւրապետացն՝ ասէ ․ ըզ-
պատանիս զայս տար առ հազարապետն ,
18 զի ունի ինչ պատմել նմա ։ * Եւ նորա
առեալ զնա տարաւ առ հազարապետն՝
և ասէ ․ կապեալն պօղոս կոչեաց զիս ,
և աղաչեաց զպատանիս զայս ածել առ
19 քեզ , ունի ինչ խօսել ընդ քեզ ։ * Առ-
եալ զձեռանէ նորա հազարապետին՝ գնաց
մեկուսի , հարցանէր՝ թէ զինչ ունիս
20 խօսել ընդ իս ։ * Եւ նա ասէ ․ Հրէայք
միաբանեցին աղաչել զքեզ , զի 'ի վա-
ղիւ զպօղոս իջուսցես յատեան , իբրև
թէ

digitised by A.R.A.R.@

թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս հարցա֊
նել վ՟ն նորա . * արդ՝ դու մի՛ անսայցես 21
նց . քանզի դարան գործեալ է նմ՟ ՚ի նո֊
ցանէ՝ արանց աւելի քան զքառասուն ,
որ նզովեցին զանձինս՝ ոչ ուտել և ոչ ըմ֊
պել՝ մինչև սպանցեն զնա . արդ պատ֊
րաստ են՝ և սպասեն քում հրամանի :
*Ապա հազարապետն արձակեաց զպա֊ 22
տանին, պատուիրեալ մի՛ ումեք ասել
թէ զայս զգայուցեր ինձ : *Եւ կոչեաց 23
երկուս ՚ի հարիւրապետացն՝ և ասէ .
պատրաստեցէ՛ք զօրականս երկերիւր ,
որք զի երթիցեն մինչև ՚ի կեսարիա . և
հեծեալս եօթանասուն՝ և տիգաւորս եր֊
կերիւր , ՚ի յերիր ժամու գիշերոյն . * և 24
գրաստ պատրաստական՝ որք զի իջուցեն
զպօղոս ապրեցուսցեն. և առ փելիքս դա֊
տաւոր գրեալ թուղթ , * որ ունէր օրի֊ 25
նակ զայս : * Կղօդիոս լիւսիաս առ քաջ 26
դատաւորդ փելիքս՝ ողջոյն : * Զայրս 27
զայս կալեալ ՚ի հրէից՝ և մերձ ՚ի սպա֊
նանել ՚ի նոցանէ . հասեալ ՚ի վ՟ր զօրա֊
կանաւ ապրեցուցի, իմացեալ թէ հռով֊
մայեցի է : * Կամեցայ գիտել զպ՟ճառն՝ 28
վ՟ն որոյ ամբաստանէին զդմանէ, իջու֊
ցի զդա յատեան նց : * Զոր գտի ամ֊ 29
բաստանեալ վասն խնդրոյ իրիք իւր֊
եանց օրինաց . և ոչինչ արժանի մահու
կամ կապանաց ունէր մ՟ղս : * Իբրև 30
ազդ եղև ինձ նենգութ՟ե յայրդ լինելոյ
՚ի

digitised by A.R.A.R.@

՚ի նոցանէ՝ յղեցի առ քեզ. հրաման տո-
ւեալ եւ չարախօսացն խօսել զգամանէ ա-
31 ռաջի քո. ողջ լեր: * Եւ զօրականացն
ըստ հրամանի նր առեալ զպօղոս՝ ածին
32 գիշերայն յանտիպատրիս: * Եւ ՚ի վա-
ղիւ անդր արձակեալ զհեծեալսն ընդ նմ
33 երթեալ՝ դարձան ՚ի բանակն: * Նոքա
մտին ՚ի կեսարիա. եւ տուեալ զդատա-
ւորն զթուղթն, առաջի կացուցին նր եւ
34 զպօղոս: * Իբրեւ ընթերցաւ՝ եհարց թէ
յորմէ՞ նահանգէ իցէ. եւ ստուգեալ ե-
35 թէ ՚ի կիլիկեայ է. * լուայց քեզ ասէ՝
յորժամ եւ չարախօսքն քո եկեսցեն. եւ
հրամայեաց յապարանսն հերովդէի սպա-
հել զնա:

## ԳԼ. ԻԴ.

1 Եւ յետ հինգ աւուր էջ քահանայա- ԷԿ
պետն անանիա հանդերձ ծերովք
ոմամբք, եւ Տերտուղեաւ հռետորաւ ոմամբ. որք եւ զգացուցին դատա-
2 ւորին վս պօղոսի: * Եւ ՚ի կոչելն զնա՝
սկսաւ տերտուղոս ամբաստան լինել
եւ ասել: Բազում խաղաղութի գտեալ
է ՚ի քէն, եւ բազում ուղղութի ազգիս այսո-
3 րիկ քով խնամով. * ամի եւ ամ ուրեք
շնորհակալ եմք՝ քաջդ փելիքս՝ ամ գո-
4 հութբ: * Բայց զի մի աւելի եւս աշխատ
արարից զքեզ, աղաչեմ լսել մեզ կարճ
5 ՚ի կարճոյ՝ քոյին հեզութեմբդ: * Գտանք

գտաք

digitised by A.R.A.R.@

գտաք զայրս զայս ապականիչ եւ խռո-
վիչ ամենայն Հրէից՝ որք են ընդ աշխարհս, եւ
առաջնորդ նազովրացւոց հերձուածոյն.
*որ եւ զտաճարն իսկ կամեցաւ պղծել. 6
զոր եւ կալաք, եւ ըստ մերոյ օրինաց դա-
տել կամեցաք: *Եկեալ Լիւսիաս հազա- 7
րապետ՝ մեծաւ բռնութեամբ 'ի ձեռաց մե-
րոց եհան: *Հրամայեաց եւ չարախօ- 8
սացն նորա գալ առ քեզ. յորմէ դու իսկ
բաւական լինիցիս վերստին դատեալ,
ամենայնի հասու լինել՝ զորոց մեքս ամբաս-
տանեմք զդմանէ: *Միաբանեցին եւ 9
Հրէայքն՝ ասեն՝ այդ այդպէս է: *Պա- 10
տասխանի ետ Պօղոս, յակնարկել նմա
դատաւորին խօսել. 'Ի բազում ամաց լի-
նել քեզ դատաւոր ազգիս այսորիկ գի-
տեմ. յօժարութեամբ վասն իմոց իրաց պատաս-
խանի առնեմ: *Քանզի կարող ես գի- 11
տել, զի ոչինչ աւելի է իմ քան զաւուրս
երկոտասան՝ յորմէ հետէ ելի երկիրպա-
գանել յԵրուսաղէմ: *Եւ ոչ 'ի տաճարի անդ 12
գտին զիս ընդ ումեք խօսեցեալ, եւ կամ
ժողովս արարեալ բազմաց, ոչ 'ի ժողո-
վուրդս՝ *եւ ոչ 'ի քաղաքի. եւ ոչ յան- 13
դիման առնել կարեն քեզ՝ վասն որոց
այժմ չարախօսեն զինէն: *Բայց զայս 14
խոստանամ քեզ, եթէ ըստ ճանապարհին
զոր ասեն հերձուած, այնպէս պաշտեմ
զհայրենի Աստուածն. հաւատացեալ ամենայնի՝ որ
ինչ յօրէնս եւ 'ի մարգարէս գրեալ է:
*Ու-

digitised by A.R.A.R.@

15 * Ունիմ յոյս առ ած. որում և դոքա
իսկ ակն ունին՝ եթէ յարութեն լինելոց է
16 արդարոց և մեղաւորաց: *Յորում և ես
իսկ ջանամ, անխիղճ միտս ունել առ ած
17 և առ մարդիկ յամ ժամ: *Ի բազում
ամաց ողորմութիւնս եկի առնել յազգ-
18 իմ. և պատարագս. *որովք գտին
զիս սրբեալ՝ ի տաճարին՝ ոչ բազմօք և
19 ոչ ամբոխիւ: *Ոմանք յասիացւոց ան-
տի հրեայք՝ որոց պարտ էր գալ առաջի
քո՝ և ամբաստան լինել, եթէ ունիցին
20 ինչ զինէն. *և կամ ինքեանք սոքա ա-
սասցեն, զինչ գտին յիս անիրաւութիւն՝
21 մինչդեռ կայի յատենին: *Բայց միայն
վն միոյ բարբառոյս այսորիկ՝ զոր աղա-
ղակեցի մինչ կայի ՚ի մէջ նց. եթէ վն
յարութեն մեռելոց դատիմ ես այսօր ՚ի
22 ձէնջ: *Եւ յապաղեաց զնս փելիքս,
զի ստուգագոյնս գիտէր վն ճանապար-
հին, ասէ. յորժամ լիւսիաս հազարա-
պետ իջցէ այսր, տեղեկացայց վն ձեր:
23 *Հրամայեաց հարիւրապետին պահել
զնա: և ունել յընդարձակի, և մի զոք
յիւրոց անտի արգելուլ ՚ի պաշտելոյ
զնա:
24 *Եւ յետ աւուրց ինչ եկն փելիքս համ- ԿԲ
դերձ դրուսեղաւ կնաւ իւրով, որ էր
հրեայ. կոչեաց զպօղոս՝ և լուաւ ՚ի նմա-
25 նէ վն որ ՚ի յս քս հաւատոյն: *Եւ ՚ի
խօսելն նր վն արդարութե և ժուժկա-
լու-

digitised by A.R.A.R.@

լութե՛ և հանդերձեալ դատաստանին ,
զահի հարեալ փելիքս , ետ պատասխա-
նի . դու առ այժմ երթ՝ և յորժամ ժամ
լինիցի , կոչեցից զքեզ ։ *Միանգամայն 26
և ակն ունէր՝ թէ տացի ինչ նմա 'ի պօ-
ղոսէ . վ՛ն որոյ և ստէպ կոչեցեալ զնա՝
խօսէր ընդ նմա ։ *Իսկ 'ի կատարել եր- 27
կուց ամաց՝ եկն փոխանակ փելիքսի՝ փես-
տոս պորկիոս ։ իբրև կամեցաւ շնորհս
առնել հրէիցն փելիքս , եթող զպօղոս
կապեալ ։

## Գլ . ԻԵ ։

Փեստոս իբրև եհաս յիշխանութիւնն, 1
յետ երից աւուրց ել յե՛մ 'ի կե-
սարիայ ։ *Եւ զգացուցին նմա քահա- 2
նայապետքն և գլխաւորք հրէիցն զպօ-
ղոսէ ,* և աղաչէին խնդրել շնորհս 'ի 3
նմանէ . զի կոչեսցէ զնա յե՛մ . դարան
գործեալ սպանանել զնա 'ի ճանապար-
հի ։ *Իսկ փեստոս արար պատասխանի՝ 4
պահել զնա 'ի կեսարիայ . թէ ինքն իսկ
ը՛ հուպ անդր երթալոց է ։ *Եւ որ 'ի 5
ձէնջ կարողք իցեն՝ ասէ , ը՛ իս իջցեն ,
և եթէ իցէ ինչ յառնն վնաս՝ ամբաս-
տան լիցին զնմանէ ։ *Եւ լեալ անդ 6
աւուրս՝ ոչ աւելի քան զութ կ՛մ զտասն ,
եկն էջ 'ի կեսարիա . և 'ի վաղիւ անդր
նստեալ յատենի, հրամայեաց ածել
զպօղոս ։ *Եւ իբրև եկն , կացին շուրջ 7
զնո-

digitised by A.R.A.R.@

զնովաւ՝ որ յԵ՟մէ իջեալ էին Հրեայք․
բազում և ծանր վնասս դնէին՝ զոր ոչ
8 կարէին ցուցանել: * Քանզի տանէր պա-
տասխանի պօղոս, եթէ ոչ յօրէնս Հրէից՝
և ոչ ՚ի տաճարն՝ և ոչ ՚ի կայսր ինչ վնա-
9 սակար եմ: * Բայց փեստոս կամեցեալ
Հրէիցն շնորհս առնել, պատասխանի ետ
պօղոսի՝ և ասէ. կամի՞ս յԵ՟մ երթալ՝
և անդ վ՟ն դոցին իրաց դատել առաջի
10 իմ: * Եւ ասէ պօղոս. յատենի կայսեր
հասեալ կամ, ուր պարտ է ինձ դատել․
Հրէից ինչ չեմ վնասակար, ո՟պ և դու
11 իսկ քաջ գիտես: * Ապա թէ վնասա-
կար իցեմ՝ և արժանի մահու ինչ գոր-
ծեցի, ոչ զանգիտեմ ՚ի մեռանելոյ. իսկ
եթէ ոչինչ իցէ՝ զորոց սոքա ամբաստան
լինին զինէն, ոչ՛ք կարէ զիս դոցա շնոր-
12 հել. ՚ի կայսր բողոքեմ: * Յայնժամ
փեստոս խօսեցեալ ը՟ն խորհրդակիցսն՝ ա-
րար պատասխանի, ՚ի կայսր բողոքեցեր՝
առ կայսր երթիցիր:
13 * Իբրև անցին աւուրք ինչ՝ Ագրիպպաս ԿԳ
արքայ և Բերենիկէ եկին ՚ի Կեսարիա՝
14 յողջոյն փեստոսի: * Եւ իբրև աւուրս
բազումս հանէին անդր, փեստոս զե-
կոյց արքայի զպօղոսէ՝ և ասէ. այր մի է
15 աստ մնացեալ կապեալ ՚ի փիլիքսէ: * Վ՟ն
որոյ իբրև չոգայ յԵ՟մ, զգացուցին ինձ
քահանայապետքն և գլխաւորք Հրէիցն․
խնդրէին յինէն առնել նմ՟ պատուհաս:
* որոյ

* որոց եւ տու պատժինի, եթէ չէ օրէն 16
համարձակեցուց չնորհել ումեք զոք, մինչ
չև ամբաստանեալն յանդիման ունիցի
զդատախազսն, և տեղի պատասխանւոյ
առնուցու վն ամբաստանութեն : * Իսկ 17
իբրև եկին այսր՝ ոչինչ յապաղեցի, այլ
'ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայե-
ցի ածել զայրն : * Վասն որոյ մատու- 18
ցեալ ամբաստանքն և ոչ մի ինչ վնաս
չարուն 'ի մէջ բերելին՝ զորոց ես կար-
ծէի . * Բայց խնդիրս ինչ՝ որ վն իւրեանց 19
պաշտաման ունէին ընդ նմ . և վն յսի ու-
րումն մեռելոյ, զորմէ ասէր պօղոս թէ
կենդանի է : * Իբրև յանհնարս մտի վն 20
այնպիսի իրաց քննութե, ասեմ եթէ կա-
միցի երթալ յեէմ, և անդ դատել վն
նոյնին իրաց : * Բայց 'ի պօղոսի բողո- 21
քելն՝ զի պահիցի 'ի քաջի արանցն յան-
դիմանութե, հրամայեցի պահել զնա՝
մինչև տաց տանել առ կայսր : * Ագրիպ- 22
պաս ցփեստոս ասէ . կամէի և ես լսել
առնն : և նա ասէ՝ 'ի վաղիւ լուիցես :
Է Դ * Իսկ 'ի վաղիւ անդր իբրև եկն ագրիպ- 23
պաս և բերինիկէ՝ բզմ և երևելի սպա-
սուք, և մտին յատեանն հանդերձ հա-
զարապետօքն և արամբք պատուականօք
քաղաքին . և հրամայեալ փեստոսի՝ ա-
ծին զպօղոս : * Իսկ ասէ փեստոս, ար- 24
քայ ագրիպպա՝ և ամ արք որք ընդ մեզ
էք . տեսանէք զսա, վն որոյ ամ ժողովք
հրէից

digitised by A.R.A.R.@

հրէից ամբաստան եղեն ինձ յե՟էմ, և
աստ աղաղակէին՝ թէ չէ պարտ դմա
25 կեալ: *Բայց ես 'ի միտ հասի թէ ոչինչ
է դորա արժանի մահու գործեալ. և
դորա ինքնին բողոք կալեալ առ քաջա-
26 րանցն, խորհեցայ յղել: *Վասն որոյ
ստուգութ՟ ինչ գրել տեառն իմում ոչ
ունիմ. վասն այնորիկ ածի զդա առաջի
ձեր՝ և մանաւանդ առաջի քո արքայ ագ-
րիպպա. ո՟պ վերստին քննեալ՝ մարթա-
27 ցից ինչ գրել: *Քանզի անպատեհ իմն
թուի ինձ՝ տալ տանել կապեալ մի, և
ոչինչ զվնաս զնմանէ նշանակել:

## ԳԼ. ԻԶ.

1 Եւ ագրիպպաս ասէ ցպօղոս. հրամայ-
եալ է քեզ՝ վ՟ն քո խօսել: յայնժամ
պօղոս ձգեալ զձեռն՝ առնէր պատաս-
2 խանի: *Վասն ա՟մ ամբաստանութե՟
հրէիցդ զինէն՝ արքայ ագրիպպա՝ հա-
մարիմ զանձն երանելի. զի քո առաջի
3 այսօր տալոց եմ պատասխանի: *Մա-
նաւանդ զի գիտակ ես իսկ ա՟մ կրօնից
և խնդրոց հրէից. վ՟ն որոյ աղաչեմ եր-
4 կայնմտութ՟ լսել ինձ: *Քանզի զկե-
նաց իմոց՝ որ 'ի մանկու՟է, 'ի սկզբանէ
լեալ յազգի իմում յե՟էմ, տեղեակ են
5 ա՟մ հրէայք: *Յառաջագոյն գիտեն 'ի
վաղուց հետէ, եթէ կամիցին վկայել.
զի ը՟ ճշմարտագոյն կրօնից օրինացն մե-

րոց

digitised by A.R.A.R.@

րոց կեցեալ եմ փարիսեցի: * Եւ արդ 6
վն յուսոյն՝ առ հարսն եղելոյ աւետեացն
այ՝ դատեալ կամ յատենի. * յոր եր- 7
կոտասան ազգատոհմս մերոյ անպա-
կաս զցայգ և զցերեկ պաշտեն՝ ակն ու-
նին հասանել. վն որոյ յուսոյ ամբաս-
տանիմ արքայ ՚ի հրէից: * Զինչ ան- 8
հաւատ թուի ձեզ՝ եթէ ած զմեռեալս
յարուցանէ: * Ես իսկ ինքնին պատշաճ 9
համարէի՝ զբազում ինչ հակառակ ան-
ուանն յինազովրեցւոյ գործել: * Զոր 10
և արարի իսկ յէմ. և զբազումս ՚ի սըր-
բոցն ես բանտարգել առնէի, ՚ի քահա-
նայապետացն առեալ իշխանութի. և զըս-
պանելոցն նց բերէի համար: * Եւ ընդ 11
ամ ժողովրդոցն՝ բզմ անգամ պատժէի
զնս բռնադատէի հայհոյել. առաւել
ևս մոլեալ ՚ի վերայ նց՝ հալածէի մինչև
յարտաքինս քաղաքսն: * Որովք գնացեալ 12
՚ի դամասկոս՝ իշխանութբ և հրամանօք
քահանայապետացն, * զմիջաւուրբն ՚ի 13
ճանապարհի տեսի՝ արքայ՝ յերկնից ա-
ռաւել քան զլուսաւորութի արեգական
ծագեալ զինև լոյս, և զնոքօք որ ըն իսն
երթային: * Եւ ամենեցուն մեր անկա- 14
նել յերկիր, լուայ ձայն որ ասէր ցիս՝
հեբրայեցւոյ բարբառով. սաւուղ սա-
ւուղ՝ զի՞ հալածես զիս. խիստ է քեզ ըն-
դէմ խթանի աքացել: * Եւ ես ասեմ, 15
ո՞ ես տր: և տր ասէ. ես եմ յս՝ զոր

դուն

digitised by A.R.A.R.@

16 դուն հալածես։ * Այլ արի և կաց 'ի
վ՟ր ոտից քոց. զի վ՟ն այսորիկ երևեցայ
քեզ՝ առնուլ զքեզ 'ի ձեռն պաշտօնեա
և վկայ որոց տեսերդ զիս, և որոց երևե
17 ցայց քեզ. * փրկել զքեզ 'ի ժողովրդե
նէդ՝ և 'ի հեթանոսաց, յորս ես առա
18 քեցից զքեզ. * բանալ զաչս նո՟ց, դար
ձուցանել 'ի խաւարէ 'ի լոյս, և յիշխա
նութենէ սատանայի՝ յա՟ծ. առնուլ նոցա
զթողութի՟ն մեղաց, և վիճակ ը՟ս՟բ՟ց՝ հա
19 ւատովքն որ յիս։ * Ուստի արքայ Ագ
րիպպա՝ ոչ եղէ անհաւան երկնաւոր
20 տեսլեանն. * այլ նախ որոց 'ի Դամաս
կոս և յԵ՟ր՟էմ էին, և ընդ ա՟մ գաւառս
Հրէաստանի և 'ի հեթանոսս, պատմե
ցի զղջանալ՝ և դառնալ յա՟ծ կենդա
նի. արժանի ապաշխարութե՟ն գործս գոր
21 ծել։ * Վասն այսորիկ Հրէից կալեալ
զիս 'ի տաճարին, կամէին սպանանել.
22 * օգնութե՟ն հասեալ առ յա՟յ՝ մինչև ցայ
սօր կացի վկայեալ փոքու և մեծի. ո
չինչ արտաքոյ ասէի՝ քան զոր մարգա
րէքն և Մովսէս խօսեցան զհանդերձե
23 լոյն լինելոյ. * եթէ չարչարելոց է ք՟ն,
եթէ առաջին 'ի յարութե՟ն մեռելոց՝ լոյս
պատմելոց է ժողովրդեանն՝ և հեթա
24 նոսաց։ * Եւ նորա զայս պատասխանի
տուեալ, Փեստոս 'ի ձայն մեծ ասէ. Մո
լիս Պօղէ, բա՟զմ դպրութի՟նքդ զքեզ 'ի մո
25 լութի՟ն դարձուցանեն։ * Իսկ Պօղոս ա
սէ,

digitised by A.R.A.R.@

սէ, ո՛չ մոլիմ՝ քաջդ փեստոս, այլ զցա-
ծութե և զճշմարտութե բանս բարբառիմ:
* Գիտակ իսկ է այսոցիկ արքայ, ընդ ո- 26
րում և համարձակեալդ խօսիմ. քանզի
ծածկել 'ի քէն իմիք 'ի սոցանէ՝ չառ-
նում յանձն. զի ո՛չ եթէ յանկեան ու-
րեք գործեալ իցէ այս: * Հաւատա՞ս 27
արքայ ագրիպպա մրգրէից. գիտեմ զի
հաւատաս: * Եւ ասէ ագրիպպաս ցպօ- 28
ղոս, փոքու իմն հաւանեցուցանես զիս
լինել քրիստոնեայ: * Եւ պօղոս ասէ. 29
խնդրեի յայ՝ և փոքու և մեծաւ, ո՛չ
միայն զքեզ՝ այլ զամենեսեան որ լսեն
ինձ այսօր՝ լինել այսպիսի ոպ և եսեմ,
բաց 'ի կապանաց աստի: * Յոտն եկաց 30
արքայն և դատաւորն և բերինիկէ, և որ
ընդ նոսայն նստէին: * Եւ իբրև գնային, 31
խօսէին ընդ միմեանս և ասէին. թէ ո՛չ
ինչ արժանի մահու կամ կապանաց գոր-
ծէ այրս այս: * Իսկ ագրիպպաս ցփես- 32
տոս ասէ. արձակել մարթ էր զայրս
զայս՝ եթէ ոչ էր բողոքեալ 'ի կայսր:

## ԳԼ. ԻԷ:

ԻԵ Իբրև հրամայեցաւ մեզ նաւել յիտա- 1
լիա, տային զպօղոս՝ և զայլս ոմանս
կապեալս ցհարիւրապետ մի, որում ա-
նուն էր յուլիոս սեբաստեան գնդէն:
*Եւ ելեալ 'ի նաւ մի անդրամիտացի, 2
որ երթալոց էր 'ի կողմանս ասիացւոց՝
գնա-

digitised by A.R.A.R.@

գնացաք․ էր ը̅ մեզ և Արիստարքոս՝ Մա-
3 կեդոն Թեսաղոնիկեցի ։ * Եւ 'ի վաղիւ-
անդր իջաք 'ի սիդոն․ և մարդասիրու-
թե̅ ցուցեալ յուլիոս առ պօղոս, հրա-
մայեաց առ բարեկամսն երթալ՝ և դար-
4 մանս գտանել ։ * Եւ անտի ելեալ խո-
նարհագոյն նաւեցաք 'ի կիպրոս՝ վասն
5 հողմոյն ընդդէմ լինելոյ ։ * Յայնժամ
ը̅ մէջ ծովուն կիլիկեայ և պամփիլեայ
6 նաւէ̃՝ իջաք 'ի սմիւռայ լիկիացւոց ։ * Եւ
անդ գտեալ հարիւրապետին զնաւ մի
աղեքսանդրացի՝ որ երթայր յիտալիա,
7 եմոյծ զմեզ անդր ։ * Եւ 'ի բազում
աւուրս ծանրանաւեալք՝ հազիւ հասաք
առ կնիդաւ․ և 'ի չթողացուցանել մեզ
հողմոյն, նաւեցաք խոնարհագոյն 'ի
8 կրետէ առ սաղմոնեաւ ։ * Հազիւ ան-
ցեալ առ նովաւ՝ եկաք 'ի տեղի ինչ՝ որ
կոչէր գեղեցիկ նաւահանգիստ․ յոր
9 հուպ էր քաղաքն ղասեայ ։ * Եւ իբրև
բզ̃մ ժամանակք անցանէին, և սխալ
ևս լինէր նաւելոյն․ և վ̃ն այն ինչ ևս
պահոցն անցանելոյ, տայր խրատ պօղոս,
10 * և ասէ ցն̃ս․ արք՝ տեսանեմ զի թշ-
նամանօք և բազում վնասու՝ ոչ միայն
բեռինդ և նաւիդ, այլ և անձանց մե-
11 րոց լինելոց է նաւարկութիս ։ * Իսկ հա-
րիւրապետն նաւապետին և նաւավարին
առաւել անսայր՝ քան բանիցն պօղոսի ։
12 * Իբրև դժպատեհ իմ̃ն թուէր նաւա-



digitised by A.R.A.R.@

հանգիստն առ 'ի ձմերել, բազումք խորհե-
ցան գնալ անտի, թերևս կարասցեն հա-
սանել 'ի փիւնիկէ՝ ձմերել 'ի նաւա-
հանգստին կրետացւոց, որ հայէր ընդ հա-
րաւակողմն և ընդ աշխարհն։ *Եւ 'ի շն- 13
չել հարաւոյն, համարեցան ուր դիմեալ
էին հասանել. և արկեալ մօտ անցա-
նէին զկրետեաւ։ *Եւ ոչ յետ բազում 14
ժամուց՝ անկաւ զնովաւ հողմ ուռուցիկ,
որ կոչի եւրակիկլոն։ *Ընդ յափշտա- 15
կել նաւին՝ և 'ի չհանդուրժել ընդդէմ
հողմոյն, թոյլ տուեալ երթայաք և գայ-
աք. *'Ի կղզի ինչ դիմեալ՝ որ կոչէր 16
կղօդէա, հազիւ կարացաք ըմբռնել
զմակոյկն. *զոր առեալ՝ յօգնականու- 17
թիւն կապէին ընդ նաւն։ երկուցեալ թէ
գուցէ 'ի յորձանուտն անկանիցին, ի-
ջուցեալ զառագաստն՝ այնպէս երթային
և գային։ *Եւ 'ի սաստկագոյն վշտա- 18
նալոյն մերոյ՝ 'ի վաղիւ անդր զկարասին
ընկեցիկ առնէին. *և յերիր աւուր ընդ 19
իւրեանց ձեռն՝ զգործին նաւին ընկե-
ցին։ *Իբրև ոչ արև՝ և ոչ աստեղք ե- 20
րևէին 'ի բազում աւուրս, և ձմեռն ոչ սա-
կաւ կայր 'ի վերայ, ապա բառնայր ամենայն
յոյս փրկութեան մերոյ։ *Եւ զի բազում աւու- 21
րս նօթի էին, յայնժամ պօղոս կացեալ
'ի մէջ նոցա՝ ասէ. պարտ էր ձեզ ով արք՝
անսալ ինձ, և ոչ ելանել 'ի կրետեայ՝
և շահել զվիշտս զայս՝ և զվնաս։ *Եւ 22
արդ՝

digitised by A.R.A.R.@

արդ՝ խրատեմ զձեզ քաջալերել. զի
վնաս անձին՝ և ոչ միում 'ի ձէնջ լինիցի,
23 բայց 'ի նաւէդ : * Քանզի երևեցաւ ինձ
յայսմ գիշերի հրեշտակ ա̄յ՝ որոյ եմն եմ
24 և պաշտեմ զնա, * և ասէ. մի՛ երկնչիր
պօղէ, կայսեր և ս պարտ է քեզ յանդիման
լինել. և ահա շնորհեա՛ց է քեզ ա̄յ՝ զամե-
25 նեսեան, որ են ը̄դ քեզ 'ի նաւիդ : * Առ
այսորիկ քաջալերեցարուք արք, զի հա-
ւատամ յա̄ծ՝ թէ այսպէս լինի՝ զորօրի-
26 նակ խօսեցաւ ը̄դ իս : * Բայց 'ի կղզի ինչ
հասանել մեզ անկանել :
27 * Երբև չորեքտասաներորդ գիշեր լինէր Զ
ներ՝ մինչ դեռ ծփէաք 'ի հանդրին ան-
դունդս, 'ի մէջ գիշերին կարծէին նա-
ւավարքն եթէ հասեալ իցեն յաշխարհ
28 ուրեք : * Եւ ընկեցեալ զգունդսն՝ գը-
տին գիրկս քսան. և սակաւ ինչ դադա-
րեալ՝ դարձեալ ընկեցին՝ և գտին գիրկս
29 հնգետասան : * Ահի հարեալ թէ
դուցէ 'ի խիստ ինչ տեղիս անկանիցին,
յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս
30 չորս. ըղձանային այգուն լինելոյ : * Բայց
նաւավարքն խնդրէին փախչել 'ի նաւէ
անտի. և իջուցեալ զկուրն 'ի ծով անդր՝
պատճառանօք՝ ո̄ւ թէ առաջոյ կողմա-
31 նէ խարիսխս ձգելոց իցեն : * Ասէ պօ-
ղոս ցհարիւրապետսն և ցզօրականսն. ե-
թէ ոչ դոքա մնան 'ի նաւիս՝ դուք ապ-
32 րել ոչ կարէք : * Յայնժամ զօրականքն
հա-

digitised by A.R.A.R.@

Հատին զլարս կրին՝ և ՚ի բաց ընկեցին ։
* Եւ մինչ դեռ այգն կամէր լինել, ա- 33
ղաչէր պօղոս զամենեսեան առնուլ կե-
րակուր, ասէ. այս չորեքտասաներորդ
օր է՝ որում ակն ունիք նօթիս կատա-
րել, և չէ ինչ ճաշակեալ. * վ՟ որոյ ա- 34
ղաչեմ զձեզ՝ ճաշակել կերակուր, զի
այն իսկ վ՟ ձերոյ փրկութե՛ է. զի ոչ
ուրուք ՚ի ձէնջ մազ մի ՚ի գլխոյ կորի-
ցէ ։ * Եւ իբրև ասաց զայս, առեալ 35
հաց՝ գոհացաւ զա՟յ առաջի ամենեցուն.
եբեկ՝ և սկսաւ ուտել ։ * Եւ քաջալե- 36
րեցան ամէքին, և ն՟ք առին կերակուր ։
* և էաք ա՟մ հոգիք ՚ի նաւին՝ երկերիւր 37
եօթանասուն և վեց ։ * Իբրև յագե- 38
ցան կերակրոյն, թեթևայուցին զնաւն՝
թափեալ զցորեանն ՚ի ծովն ։ * Եւ իբ- 39
րև այգ եղև՝ զերկիրն ոչ ճանաչէին,
բայց զգոգ մի նշմարէին՝ թէ ափն ծո-
վուն իցէ. յոր խորհէին թէ հնար ինչ
իցէ՝ զերծուցանել զնաւն ։ * Եւ զխա- 40
րիսխսն հատեալ՝ ընկեցին ՚ի ծովն, թո-
ղացուցին զխառնելիս թևոցն, և ՚ի բաց
առին զառագաստն. և ետուն հողմոյն
յափն կոյս ծովուն ։ * Անկեալ ՚ի տե- 41
ղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն. և ա-
ռաջին կողմն նաւին խրեալ անշարժ մը-
նայր, և յետին կողմն քակէր ՚ի բռնու-
թ՟էն ։ * Եւ զօրականացն խորհուրդ ա- 42
րարեալ՝ զի զկապեալսն սպանցեն, և մի

ոք

digitised by A.R.A.R.@

43 որ լուղիցէ և փախիցէ ։ * Իսկ հարիւրա-
պետն քանզի կամեցաւ ապրեցուցանել
զպօղոս՝ արգել զնս ՚ի խորհրդոյն ․ հրա-
մայեաց զի որ կարօղն իցեն լուղել՝ ան-
կանիցին նախ և ՚ի ցամաք ելանիցեն ․
44 * և զայլսն՝ զոմս ՚ի տախտակս, զոմս
յայլ ինչ կահ ՚ի նաւէ անտի ․ և այս-
պէս եղև ամենեցուն փրծանել յերկիր ։

## ԳԼ․ ԻԸ․

1 Իսկ ապրեալք՝ յայնժամ գիտացաք թէ
մելիտինէ էր անուն կղզւոյն ․ բայց
բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մար-
2 դասիրութի մեզ ։ * Քանզի լուցին խա-
րոյկ՝ և ընկալան զամենեսին զմեզ վն
անձրևին որ սաստիկ էր՝ և վասն ցրտոյն ։
3 * Իսկ ՚ի ժողովել պօղոսի խուռն ինչ բա-
զում՝ և դնել ՚ի վերայ խարուկին, իժ
մի ՚ի ջերմութենէն ելեալ՝ կալաւ զձեռա-
4 նէ նր ։ * Իսկ իբրև տեսին բարբարոսքն
կախեալ զգազանն զձեռանէ նր, ասէին
ցմիմեանս ․ ուրեմն սպանօղ է այրս այս՝
որ թէպէտ և ապրեցաւ ՚ի ծովէն, իրա-
5 ւունքն չետուն կեալ ։ * Իսկ նր թօթա-
փեալ զգազանն ՚ի հուրն, եղև նմ չար
6 և ոչինչ ։ * Իսկ նոքա ակն ունէին նմա
այտնլոյ՝ կմ անկանելոյ՝ և յանկարծա-
կի մեռանելոյ ։ իբրև շատ ակն կալեալ՝
և տեսանէին թէ ոչինչ վնաս եղև նմա՝
դարձեալ դարձուցեալ զմտանսն՝ ասէին
թէ

digitised by A.R.A.R.@

թէ աստուած ոմն է :* Եւ շուրջ զտե- 7
ղեաւն զայնուիկ էին գիւղք գլխաւորի
կղզւոյն՝ որում անուն էր Պոպղիոս. որ
առ զմեզ յերաշխի զերիս աւուրս՝ եւ սի-
րով ընկալաւ:* Եւ եղեւ հօրն Պոպղեայ 8
՚ի ջերմն եւ յախտ թանչից հիւանդանալ՝
դնել : առ որ մտեալ պօղոս՝ եւ կացեալ
յաղօթս՝ եդ զձեռն եւ բժշկեաց զնա :
* Եւ իբրեւ այս եղեւ, այլ հիւանդք՝ որ 9
էին ՚ի կղզւոջն՝ գային եւ բժշկէին.* որք 10
եւ բազում պատուովք պատուեցին զմեզ. եւ
իբրեւ գնացաք, ետուն որ ինչ պէտք էին:
Ե Ե* Եւ յետ երից ամսոց ելաք ՚ի նաւ մի 11
աղեքսանդրացի՝ որ ձմերեալ էր ՚ի կղզւ-
ւոջն նշանաւորաւ դիոսկուրացւոց :* Եւ 12
իջեալ ՚ի սիրակուսա՝ եղաք աւուրս երիս.
* ուստի գնացեալ հասաք ՚ի հռեգիոն : 13
եւ յետ աւուր միոյ ՚ի շնչել հարաւոյն,
երկօրեայք եկաք ՚ի պատիողոս :* ուր 14
եւ գտաք եղբարս՝ աղաչեցեալք ՚ի նոցա-
նէ լինել աւուրս եօթն : եւ ապա ելաք ՚ի
հռոմ :* Եւ անտի լուեալ եղբարց ըզ- 15
մէնջ՝ ելին ընդ առաջ մեր մինչեւ յորդոս-
տայն ապփեայ՝ եւ երիցն կրպակաց. զորս
տեսեալ պօղոսի՝ գոհացաւ զայ՝ եւ քա-
ջալերեցաւ :* Եւ իբրեւ մտաք ՚ի հռոմ, 16
հրամայեցաւ պօղոսի լինել առանձինն
հանդերձ զինուորաւն՝ պահպանաւ իւ-
րով :* Եւ եղեւ յետ երից աւուրց՝ կո- 17
չել նմ զհրէիցն գլխաւորս. եւ իբրեւ ե-

կին,

digitised by A.R.A.R.@

կին, ասէ ցնոսա. Ես՝ արք եղբարք՝ ոչինչ
հակառակ գործեալ ժողովրդեանն՝ կամ
կրօնիցն հայրենեաց, կապեալ յԵրուսա-
ղեմէ՝ մատնեցայ 'ի ձեռս Հռովմայեց-
18 ւոց: * Որք իբրև դատեցան զիս՝ կամէ-
ցին արձակել, վասն զի և ոչ մի ինչ վնաս մա-
19 հու գտանէին յիս: * 'Ի հակառակել
Հրէիցն, հարկ եղև բողոքել 'ի կայսր.
իբր ոչ եթէ զազգէն իմմէ ունէի ինչ չա-
20 րախօսել: * Վասն այսր պատճառանաց
աղաչեցի զձեզ՝ տեսանել և խօսել. քան-
զի վասն յուսոյն Իսրայէլի կամ 'ի շղթայս
21 յայսոսիկ: * Եւ նոքա ասեն ցնա. մեք
ոչ թուղթս ինչ վասն քո ընկալաք 'ի Հրէաս-
տանէ, և ոչ եկեալ ոք յեղբարց պատ-
մեաց՝ կամ խօսեցաւ ինչ վասն քո չարութիւն:
22 * Բայց աղաչեմք 'ի քէն լսել՝ թէ զինչ
խորհիցիս. զի վասն հերձուածոյդ այդո-
րիկ յայտ իսկ է մեզ, զի ամենայն ուրեք
23 հակառակութիւն կրէ: * Ժամ եդեալ
նմա օր մի, եկին 'ի վանսն առ նա բազումք.
որոց պատմէր վկայութեամբ զարքայութիւն Աստուծոյ.
և հաւանեցուցանէր զնոսա վասն Յիսուսի, յօ-
րինացն Մովսէսի և 'ի մարգարէից՝ յայ-
24 գուէ մինչև ցերեկոյ: * Եւ ոմանք հա-
ւանէին բանիցն, և կէսքն չհաւատային:
25 * Եւ անմիաբանք լեալ միմեանց՝ արձա-
կէին. յասելն Պօղոսի բան մի, թէ բար-
ւոք խօսեցաւ Հոգին սուրբ 'ի ձեռն Եսայ-
26 եայ մարգարէի առ հարսն մեր. * և ա-
սէ.

digitised by A.R.A.R.@

աէ. Երթ առ ժողովուրդդ, եւ ասասցես.
լսելով լուիջիք՝ եւ մի իմասջիք, եւ տեսա-
նելով տեսջիք՝ եւ մի տեսջիք։ * Զի 27
թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնո-
րիկ, եւ ականջօք իւրեանց ծանր լուան.
եւ զաչս իւրեանց կափուցին, զի մի եր-
բեք տեսցեն աչօք եւ ականջօքն լուիցեն
եւ սրտիւք իմասցին՝ եւ դարձցին, եւ բը-
ժշկեցից զն̃ս։ * Եւ արդ՝ յայտնի լի- 28
ցի ձեզ, զի հեթանոսաց առաքեցաւ
փրկութիւն ա̃յ՝ նոքին եւ լուիցեն։ ( * Եւ 29
իբրեւ զայս ասաց՝ արտաքս գնացին 'ի
Նմանէ Հրէայքն. որք ունէին 'ի մէջ իւ-
րեանց զբազում խնդիրս։) * Եւ եկաց 30
զերկեամ մի բովանդակ իւրով վարձու.
* եւ ընդունէր զամենեսեան որ մտանէին 31
առ նա։ * Քարոզէր զարքայութիւն ա̃յ, 32
եւ ուսուցանէր վ̃ս տ̃ն յ̃ի ք̃ի, անխա-
փան՝ ամենայն համարձակութ̃բ։





digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍՆ։
## ԳԼ. Ա։

1 ՊՕՂՈՍ ԾԱՌԱՅ ԱՔ
յի՟ի քի՟ի, կոչեցեալ առա-
քեալ, որոշեալ յաւետարանն
2 այ՟. * որ յառաջ խոստացաւ
'ի ձեռն մարգարէից իւրոց գրովք սըր-
3 բովք, * վ՟ն որդւոյ իւրոյ եղելոյ 'ի զա-
4 ւակէ դաւթի ը՟ստ մարմնոյ. * սահմանե-
լոյ որդւոյն այ՟ զօրութ՟բ ը՟ստ հոգւոյն սըր-
բութ՟ե. 'ի յարութ՟է մեռելոց յի՟ի քի՟ի
5 տ՟ն մերոյ. * որով ընկալաք շնորհս և
առաքելութ՟ի 'ի հնազանդութ՟ի հաւա-
տոց յամենայն հեթանոսս վ՟ն անուան
6 ն՟ր. * յորս և դուք էք կոչեցեալ յի՟ի քի՟ի։
7 * Ամենեցուն որոց էք 'ի հռովմ, սիրե-
լեաց այ՟՝ կոչեցելոց սրբոց, շնորհք ընդ
ձեզ և խաղաղութ՟ի յա՟յ հօրէ մերմէ՝ և
8 'ի տ՟նէ յի՟է քի՟է ։ * Նախ գոհանամ զա՟յ

 իմոյ

digitised by A.R.A.R.@

իմոյ ՚ի ձեռն յի՟ ք՟ի վ՟ն ձեր ամենեցուն.
զի հաւատք ձեր պատմեալ են ը՟ն ա՟մ աշ-
խարհ: * Վկայ է ինձ ա՟ծ, զոր պաշ- 9
տեմն հոգւով իմով յաւետարանի որդւոյ
նո՟ր, * թէ ո՟չ զյիշատակս ձեր առնեմ 10
յա՟մ ժամ յաղօթս իմ աղաչելով զի թեր-
ևս երբեք յաջողեսցի ինձ կամօքն ա՟յ
գալ առ ձեզ: * Քանզի անձկացեալ եմ 11
տեսանել զձեզ, զի փոխեցից ՚ի ձեզ շը-
նորհս ինչ հոգևորս՝ առ ՚ի հաստատել
զձեզ. * այսինքն է, մխիթարակից լի- 12
նել ձեզ վ՟ն ը՟ն միմեանց իմոյ և ձերդ հա-
ւատոց: * Ո՛չ կամիմ եթէ տգէտք իցէք 13
եղբարք. զի բ՟զմ անգամ յօժարեցի գալ
առ ձեզ, և արգելայ մինչև ցայժմ. զի
և ՚ի ձեզ գտից պտուղ ինչ ո՟պ և յայլ
հեթանոսս: * Քանզի յունաց և բար- 14
բարոսաց՝ իմաստնոց և անմտից պարտա-
պան եմ, * այնպէս՝ որչափ իմովսանն 15
յօժարութ՟ք՝ և ձեզ որ ՚ի Հռովմ էք՝
աւետարանել: * Ո՛չ եթէ ամօթ ինչ 16
համարիմ զաւետարանն. ք՟զի զօրութի՟ն
ա՟յ է ՚ի փրկութի՟ն ա՟մ հաւատացելոց. նախ
հրէի՝ և՟ ապա հեթանոսի: * Զի արդա- 17
րութի՟ն ա՟յ նովաւ յայտնի ՚ի հաւատոց
՚ի հաւատս. ո՟պ և գրեալ է, թէ ար-
դարն ՚ի հաւատոց կեցցէ:
ԱԳ * Քանզի յայտնելոց է բարկութի՟ն ա՟յ 18
յերկնից ՚ի վ՟ր ա՟մ ամբարշտութե՟ և ա-
նիրաւութե՟ մարդկան. որք զճշմարտութի՟ն
անի-
digitised by A.R.A.R.@

19 անիրաւութեամբ ունին. * Վ̄ն զի գիտու-
թի̄ն ա̄յ յայտնի է ՚ի նս̄. քանզի ա̄ծ իսկ
20 յայտնեաց նց̄ ։ * Զի աներեւոյթք նր̄ ՚ի
սկզբանէ աշխարհի, արարածովք իմա-
ցեալ տեսանին. այսինքն է՝ մշտնջենա-
ւորութի̄ւ զօրութի̄ եւ ա̄ծութի̄ նր̄. զի ոչ
գտանիցեն ամենեւին տալ պատասխա-
21 նի ։ * Զի ծանեան զա̄ծ, եւ ոչ իբրեւ
զա̄ծ փառաւորեցին՝ կամ գոհացան.
այլ նանրացան ՚ի խորհուրդս իւրեանց,
եւ խաւարեցան անմտութե̄բ սիրտք նց̄ ։
22 * Զանձինս առ իմաստունս ունէին՝ յի-
23 մարեցան ։ * եւ փոխեցին զփառս անեղ-
ծին ա̄յ՝ ՚ի նմանութի̄ պատկերի եղծա-
նելի մարդոյ եւ թռչնոց եւ չորքոտանեաց
24 եւ սողնոց ։ * Վ̄ն որոյ մատնեաց զնս̄
ա̄ծ ՚ի ցանկութի̄ սրտից նց̄ ՚ի պղծութի̄,
անարգել զմարմինս իւրեանց յանձինս
25 իւրեանց. * որք փոխանակեցին զճշմար-
տութի̄ն ա̄յ ը̄ ստութե̄. հնազանդեցան՝
եւ պաշտեցին զարարածս, եւ ոչ զարա-
րիչն. որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն ։
26 * Վ̄ն այնորիկ մատնեաց զնս̄ ա̄ծ ՚ի կա-
րիս անարգութե̄. զի էգք նց̄ փոխանա-
կեցին զպէտս բնականս ՚ի պէտս անբը-
27 նականս ։ * Նոյնպէս եւ արուացն թո-
ղեալ զբնական պէտս իգուե̄ն, բորբոքե-
ցան ցանկութե̄ք իւրեանց ՚ի միմեանս.
արուք ը̄ արուս զխայտառակութի̄ գոր-
ծէին, եւ զդարձ փոխարինին՝ որ պարտ
էր

digitised by A.R.A.R.@

եր մոլորութեան նոցա՝ յանձինս իւրեանց
ընդունէին: * Եւ որպէս զի ոչ ընտրեցին 28
զԱծ ունել ՚ի գիտութեան, մատնեաց զնոսա
ԱԾ ՚ի միտս անարգութեան՝ գործել զան-
արժանս. * զլցեալսն ամ̃ անիրաւութբ̃, 29
պոռնկութբ̃ անզգամութբ̃ ագահութբ̃
չարութբ̃, լի նախանձու, սպանութբ̃
հեռիւ՝ նենգութբ̃ չարաբարութբ̃, շողմողք
* չարախօսք ա̃ծատեացք թշնամանօղք 30
ամբարտաւանք ամպարհաւանք, գտիչք
չարեաց, ծնողաց անարգուք. * անմիտք 31
ուխտադրուժք անագորոյնք աննուէրք
անողորմք: * Որք հասեալ էին ա̃յ իրա- 32
ւանցն վ̃ր, եթէ որք զայսպիսիսն գոր-
ծեն՝ արժանի են մահու. և ոչ միայն որ
զայն առնեն, այլ և որ կամակիցն լինին
գործելեացն:

## ԳԼ. Բ.

Վասն որոյ առանց պատասխանի տա- 1
լոյ ես ով մարդ՝ որ դատիդ: զի ո-
րով դատիս զընկերն, զանձն քո դատա-
պարտես, զի դու զնոյն գործես՝ որով
դատիս:
ԱԴ * Բայց գիտեմք՝ եթէ ա̃յ դատաս- 2
տանն ճշմարտութբ̃ է ՚ի վ̃ր այնոցիկ՝ որ
զայնպիսիսն գործեն: * Իսկ արդ՝ խոր- 3
հիցիս զայս ով մարդ, որ դատիս զայ-
նոսիկ որ զայնպիսիսն գործեն՝ և դու ըզ-
նոյն գործես, եթէ դու ապրելոց իցես
՚ի

digitised by A.R.A.R.@

4 'ի դատաստանաց անտի այ ։ * Եթէ ըզ-
մեծութիւն քաղցրութեան նորա, և զներելոյն
և զերկայնմտութիւնն արհամարհիցես.
չգիտիցես՝ զի քաղցրութիւն այ զքեզ յա-
5 պաշխարութիւն ածէ ։ * Այլ ըստ խստու-
թեան քում, և ըստ անզեղջ սրտի՝ գանձես
անձին քում բարկութիւն՝ յաւուր բար-
կութեան և յայտնութեան արդար դատաւո-
6 րութեանն այ ։ * Որ հատուցանէ իւրաքան-
7 չիւր ըստ գործս իւրեանց ։ * որ համբե-
րութիւն են 'ի գործս բարութեան՝ զփառս
և զպատիւ և զանեղծութիւն խնդրեն,
8 զկեանսն յաւիտենից ։ * Իսկ որ 'ի հա-
կառակութէ անտի են՝ և ապստամբք 'ի
ճշմարտութենէն՝ և զհետ երթեալ զանի-
րաւութեան, բարկութիւն և սրտմտութիւն,
9 * նեղութիւն և անձկութիւն 'ի վերայ ամ մար-
դոյ՝ որ գործէ զչար. նախ Հրէի՝ և ապա
10 հեթանոսի ։ * Փառք և պատիւ և խա-
ղաղութիւն ամի՝ որ գործէ զբարի. նախ
11 Հրէի՝ և ապա հեթանոսի ։ * Զի ոչ է
ակնառութիւն առաջի այ ։
12 * Որք միանգամ արտաքոյ օրինացն մե- Աւ։
ղան, արտաքոյ օրինացն և կորնչին. և
որք ընդ օրինօքն մեղան, օրինօքն և դա-
13 տեսցին ։ * Զի ոչ եթէ որ լսելիք օրի-
նացն են՝ արդարացեալ են առաջի այ,
այլ առնելիք օրինացն արդարասցին ։
14 * Այլ յորժամ հեթանոսք որ զօրէնս
ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործիցեն,
նո-

digitised by A.R.A.R.@

նոքա որ զօրէնսն ոչ ունին՝ անձանց իւ-
րեանց իսկ են օրէնք. * որք ցուցանեն 15
զգործս օրինացն գրեալ 'ի սիրտս իւր-
եանց՝ վկայութ՟ մտաց իւրեանց, և յան-
դիմանել զմիմեանս 'ի խորհրդոց իւր-
եանց, կամ թէ պատասխանի իսկ տալ,
* յաւուրն յորում դատիցի ա՟ծ զգաղտ- 16
նիս մարդկան՝ ը՟ստ աւետարանիս իմոյ, 'ի
ձեռն յ՟ի ք՟ի ։ * Ապա եթէ դու հրէայ 17
անուանեալ ես, և յեցեալ ես յօրէնսն՝
և պարծիս յա՟ծ, * և գիտես զկամս ն՟ր, 18
և ընտրես զլաւն, և խրատեալ ես յօրի-
նացն. * վստահ ես յանձն քո առաջնորդ 19
լինել կուրաց՝ լոյս խաւարելոց՝ * խրա- 20
տիչ անզգամաց՝ վարդապետ տղայոց.
ունել զկերպարանս գիտութ՟ և ճշմար-
տութ՟ օրինացն ։ * Իսկ արդ՝ որ ուսուցա- 21
նես զընկերն, զանձն քո ոչ ուսուցանես.
որ քարոզես չգողանալ՝ գողանաս. * որ 22
ասես չշնալ՝ շնաս. որ գարշիս 'ի մեհե-
նաց՝ զսեղանս կողոպտես. * որ օրինօքն 23
պարծիս՝ յանցանել ը՟ստ օրէնսն զա՟ծ ա-
նարգես ։ * Զի անուն ա՟յ վ՟ն ձեր հայ- 24
հոյի 'ի մէջ հեթանոսաց որ՟պ և գրեալ է ։
Աշ * Թլփատութ՟ օգնէ՝ եթէ զօրէնսն պա- 25
հիցես. ապա եթէ յանցաւոր օրինացն
իցես, թլփատութ՟ քո անթլփատութ՟
եղև ։ * Իսկ եթէ անթլփատութ՟ն զի- 26
րաւունս օրինացն պահիցէ. ո՞չ ապա-
քէն անթլփատութ՟ ն՟ր 'ի թլփատութ՟

համ-

digitised by A.R.A.R.@

27 համարեսցի. * Եւ դատեսցի՝ որ 'ի բնէ
անթլփատութիւն է՝ զօրէնսն կատարելով
զքեզ, որ գրովն եւ թլփատութեամբն յանցա-
28 ւոր օրինացն իցես ։ * Զի ոչ եթէ որ
յայտնի հրէայն է, եւ ոչ որ յայտնի մարմ-
29 նով թլփատութիւն. * այլ որ 'ի ծածուկ
հրէայն է, եւ թլփատութիւն սրտի հոգւով
եւ ոչ գրով. որոյ գովութիւն ոչ 'ի մարդկա-
նէ է, այլ յա͞յ ։

## ԳԼ. Գ.

1 Իսկ արդ՝ զի՞նչ աւելի է հրէին, կամ
զի՞նչ օգուտ 'ի թլփատութենէ անտի ։
2 * Բազում ինչ՝ ա͞մ իրօք. նախ այն իսկ՝
զի հաւատարիմ եղեն պատգամքն ա͞յ ։
3 * Իսկ արդ՝ եթէ չէին հաւատացեալ ո-
մանք՝ միթէ անհաւատութիւն ն͞ց զա͞յ հա-
4 ւատսն խափանեսցէ. քաւ լիցի ։ * Արդ՝
եղիցի ա͞ծ ճշմարիտ՝ եւ ա͞մ մարդ սուտ.
ո͞պ եւ գրեալ է. որպէս արդար եղիցիս 'ի
բանս քո, եւ յաղթեսցես 'ի դատել քեզ ։
5 * Իսկ արդ՝ եթէ ապիրատութիւն մեր զա͞յ
արդարութիւն յանդիման կացուցանէ՝
զի՞նչ ասեմք. մի թէ անիրաւ ի՞նչ է ա͞ծ՝
6 որ ածէ զբարկութիւն. * ըստ մարդկութեան ա-
սեմ. քաւ լիցի ։ ապա թէ ոչ՝ զիա՞րդ դա-
7 տի ա͞ծ զաշխարհ. * Զի եթէ ճշմար-
տութիւն ա͞յ յիմում ստութեան առաւել 'ի
փառս նորա, զի՞ եւս ես իբրեւ զմեղաւոր
8 դատիմ ։ * Իսկ կամ թէ՝ ո͞պ հայհոյիմքն,
եւ

digitised by A.R.A.R.@

և ո՞չ ասեն զմէնջ ոմանք ասել, թէ ա-
րասցուք զչար՝ զի եկեսցէ բարի. որոց
դատաստանքն յիրաւի են: * Եւ արդ՝ 9
իւ իւիք առաւել իցեմք. ապաքէն և ո՛չ
իւիք. քանզի յառաջագոյն իսկ մեղադիր
եղեաք հրէից և հեթանոսաց՝ ամենե-
ցուն ը̅ մեղօք լինելոյ: * Որպէս և գրեալ 10
է. թէ ո՛չ ո՛ք է արդար՝ և ո՛չ մի. * և ո՛չ 11
գո՛յ որ իմանայ, և ո՛չ ո՛ք է՝ որ խնդրէ զա̅ծ:
* Ամենեքեան խոտորեցան, ՚ի միասին 12
անպիտանացան: ո՛չ ո՛ք է որ առնէ զքաղց-
րութի̅, և ո՛չ ո՛ք է մինչև ՚ի մի: * Գերեզ- 13
ման բաց է կոկորդ ն̅ց, լեզուօք իւրեանց
նենգաւորք եղեն: Թոյնք իժից ՚ի ներ-
քոյ շրթանց նոցա: * որոց բերանք անի- 14
ծիւք և դառնութ̅բ լի են: * Երագ են 15
ոտք ն̅ց հեղուլ զարիւն: * Բեկումն և 16
թշուառութի̅ ՚ի ճանապարհս նոցա. * և 17
զճանապարհն խաղաղութե̅ ո՛չ ծանեան:
* Ո՛չ է երկիւղ ա̅յ առաջի աչաց ն̅ց: 18
ԲԴ * Բայց գիտեմք՝ որ ինչ միանգամ օ- 19
րէնքն ասեն, այնոցիկ որ ը̅ օրինօքն են
ասեն. զի ա̅մ բերան խցցի, և դատա-
պարտ լիցի ա̅մ աշխարհ ա̅յ: * Զի ՚ի 20
գործոց օրինաց ո՛չ արդարասցի ա̅մ մար-
մին առաջի ն̅ր. քանզի օրինօքն է գիտութի̅
մեղաց: * Բայց արդ՝ առանց օրինացն 21
իսկ արդարութի̅ ա̅յ յայտնեալ է՝ վկայ-
եալ յօրինաց անտի՝ և ՚ի մարգարէից:
* Քանզի արդարութի̅ ա̅յ ՚ի հաւատոց 22
ան-

digitised by A.R.A.R.@

անտի յսի քսի յամ հաւատացեալս. և
23 ոչինչ է խտիր։ *Քանզի ամենեքեան
մեղան. և նուաղեալ են ՚ի փառաց ան-
24 տի ածյ։ *Այլ արդարանան ձրի նորին
շնորհօք ՚ի ձեռն փրկութեան որ ՚ի քս յս.
25 *զոր յառաջին եդ ած ՚ի քաւութիւն ՚ի ձեռն
հաւատոց արեամբն նր, ՚ի հանդէս ար-
դարութեան նր վս թողութեան յառաջագոյն
26 մեղացն գործելոց, *՚ի ներելն ածյ՝ ՚ի
հանդէս արդարութեան նր ՚ի ժամանակի
յայսմիկ. զի եղիցի նա արդար, և ար-
դարացուսցէ զայն՝ որ ՚ի հաւատոյն յսի։
27 *Իսկ արդ՝ ուր են պարծանքն. արգե-
լան։ յորոյ օրինաց, ՚ի գործոց անտի՞.
28 ոչ, այլ ՚ի հաւատոց օրինաց. *Քանզի հա-
մարիմք հաւատովք արդարանալ մար-
29 դոյ՝ առանց գործոց օրինաց։ *Եթէ
հրէից միայն իցէ ած՝ և հեթանոսաց ոչ.
30 այո և հեթանոսաց։ *Զի եթէ մի է
ած՝ որ արդարացուցանէ զթլփատութիւն
՚ի հաւատոց, ապա և զանթլփատութիւն
31 նովին հաւատովք. *Արդ՝ զօրէնսն խնչ
խափանեմք հաւատովքս, քաւ լիցի.
այլ զօրէնսն հաստատեմք։

## ԳԼ. Դ.

1 Իսկ արդ՝ զինչ ասիցեմք զգտանելն Աբ- ԲԶ
րահամու նահապետին մերոյ ըստ
2 մարմնոյ. *Զի եթէ աբրահամու գոր-
ծովք էր արդարացեալ ունէր պար-
ծանս՝

digitised by A.R.A.R.@

ծանս՝ այլ ո՛չ առ ա՟ծ ։ * Իսկ զի՞նչ ա- 3
սիցէ գիր . հաւատաց աբրահամ յա՟ծ՝
և համարեցաւ նմ՟ յարդարութ՟ի ։ * Բայց 4
այնմ որ գործիցէն, ոչ համարին վարձքն
ը՟ս շնորհաց՝ այլ ը՟ս պարտեաց ։ * Իսկ այնմ 5
որ ո՛չն գործիցէ՝ բայց հաւատայցէ յայն
որ արդարացուցանէ զամբարիշտն, հա-
մարին հաւատքն նր՟ յարդարութ՟ի ։ * Որ- 6
պէս և դաւիթ ասէ զերանութ՟ի մարդոյ՝
որում ա՟ծ համարի արդարութ՟ի առանց
գործոց ։ * Երանի՛ որոց թողան անօրէ- 7
նութ՟իք, և որոց ծածկեցան մեղք իւ-
րեանց ։ * երանեալ է այր՝ որում ոչ 8
համարեսցի տ՟ր զմեղս նր՟ ։ * Արդ՝ ե- 9
րանութ՟իս այս 'ի վր՟ թլփատութ՟ե՞ է,
եթէ 'ի վր՟ անթլփատութ՟ե . քանզի ա-
սեմք՝ եթէ համարեցաւ աբրահամու
հաւատքն յարդարութ՟ի ։ * Արդ զիա՞րդ 10
համարեցաւ . մինչդեռ 'ի թլփատութ՟ե՞
էր՝ եթէ յանթլփատութ՟ե ։ ոչ 'ի թլ-
փատութ՟են, այլ յանթլփատութ՟ե ։ * Եւ 11
նշանակ առ զթլփատութ՟ին, կնիք արդա-
րութ՟ե հաւատոյն՝ որ յանթլփատութ՟է ան-
տի . * զի եղիցի նա հայր ա՟մ հաւատա- 12
ցելոց, որ յանթլփատութ՟է անտի իցեն .
առ 'ի համարելոյ և նց՟ արդարութ՟ի . և
հայր թլփատութ՟ե՝ որոց ոչ 'ի թլփա-
տութ՟է անտի և եթ, այլ և որոց երթայ-
ցեն ը՟ս հետս անթլփատութ՟ե հաւատոց
հօր մերոյ աբրահամու ։

* Ոչ

digitised by A.R.A.R.@

13 * Զի ոչ եթէ օրինօքն են աւետիքն ար- Գ Դ
դարանալու՝ և զաւակի նորա ժառանգ լի-
նել աշխարհի, այլ 'ի հաւատոյն ար-
14 դարութենէ : * Զի եթէ որք յօրինացն են,
ժառանգք լիցեն. ապա ընդունայն են
15 հաւատքն՝ և դատարկ աւետիքն. * Քան-
զի օրէնքն զբարկութիւն գործեն. բայց ուր
16 ոչ են օրէնք՝ և ոչ յանցանք լինին : * Վասն
այնորիկ 'ի հաւատոյ անտի, զի ըստ շնոր-
հացն իցէ. առ 'ի լինելոյ հաստատուն
աւետեացն ամենայն զաւակին. ոչ այնմ մի-
այն՝ որ յօրինաց անտի, այլ և այնմ
որ 'ի հաւատոյն աբրահամու, որ է հայր
17 մեր ամենեցուն. * որպէս և գրեալ է, թէ
հայր ազգաց բազմաց արարի զքեզ ա-
ռաջի Աստուծոյ. որում հաւատաց՝ եթէ կեն-
դանի առնէ զմեռեալս, և կոչէ զչգոյսն
18 իբրև զգոյ : * Որ յանյոյսն յուսով հա-
ւատաց լինել նմա հայր ազգաց բազմաց.
որպէս և ասացաւ, թէ այնպէս եղիցի զա-
19 ւակ քո : * Եւ նա ոչ երկմտեաց 'ի հա-
ւատոյն. թէպէտ և հայեցաւ 'ի մարմին
իւր այնուհետև իբրև 'ի մեռեալ. քանզի
զհարիւրամենիւք ուրեմն էր. և 'ի մե-
20 ռելութիւն յարգանդին սառայի : * Բայց
յաւետեացն Աստուծոյ ոչ երկմտեաց անհաւա-
տութեամբ. այլ զօրացաւ հաւատովք, ետ
21 փառս Աստուծոյ. * և հաստատեցաւ 'ի միտս
իւր, եթէ որ խոստացաւն՝ կարող է առ-
22 նել : * Վասն որոյ համարեցաւ նմա յար-
դա-

digitised by A.R.A.R.@

դարութի ։ * Արդ՝ զի գրեցաւ, ոչ եթէ 23
վ՟ն նր միայն՝ եթէ համարեցաւ նմա .
* այլ և վասն մեր՝ որոց համարելոց է . 24
որք հաւատամք յայն՝ որ յարոյց զՅ՟ս
զՏ՟ր մեր ՚ի մեռելոց . * որ մատնեցաւ 25
վ՟ն յանցանաց մերոց . և յարեաւ վասն
զմեզ արդարացուցանելոյ ։

## ԳԼ. Ե ։

Այսուհետև արդարացեալք ՚ի հաւա- 1
տոց անտի, խաղաղութի կալցուք առ
ած ՚ի ձեռն տն մերոյ յի քսի . * որով 2
և զընծայութի ընկալաք հաւատովք ՚ի
շնորհս յայսոսիկ՝ յորում կամք, և պար-
ծիմք յուսով փառացն այ ։ * Եւ ոչ 3
այսչափ միայն, այլ և պարծիմք ես ՚ի
նեղութիւս մեր . քանզի գիտեմք, եթէ
նեղութիւք զհամբերութի գործէ, * համ- 4
բերութի զհանդէս, հանդէս զյոյս .
* յոյս՝ ոչ երբէք ամաչեցուցանէ . զի 5
սէրն այ սփռեալ է ՚ի սիրտս մեր՝ ՚ի ձեռն
հոգւոյն սբյ՝ որ տուաւ մեզ ։ * Զի մինչ- 6
դեռ տկարքն էաք՝ քս վ՟ն մեր ՚ի ժամա-
նակի ՚ի վ՟ն ամբարշտաց մեռաւ ։ * Զի 7
վ՟ն արդարոյ հազիւ ոք մեռանիցի . այլ
վ՟ն բարւոյ թերևս համարձակիցի ոք մե-
ռանել ։ * Յայտնեաց այ զսէրն իւր ՚ի 8
մեզ . զի մինչդեռ մեղաւորքն էաք,
* քս վ՟ն մեր մեռաւ . որչափ ևս առա- 9
ւել յարդարանալս մերում այժմիկ ար-
եամբն

digitised by A.R.A.R.@

եամբն որ ապրեսցուք նովաւ 'ի բար-
10 կութենէ անտի ։ * Զի եթէ մինչ թշնա-
միքն էաք՝ հաշտեցաք ը̅ ա̅յ մահուամբ
որդւոյ ն̅ր . ո՜րչափ ևս առաւել 'ի հաշ-
տելս մերում՝ ապրեսցուք կենօքն ն̅ր ։
11 * Եւ ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք
ևս յա̅յծ 'ի ձեռն տ̅ն մերոյ յ̅սի ք̅սի . ո-
րով և զհաշտութի̅ն իսկ ընկալաք ։
12 * Զի որպէս 'ի միոջէ մարդոյ մեղք յաշ- Գ.Զ
խարհ մտին՝ և 'ի մեղաց անտի մահ . և
այնպէս յա̅մ մարդիկ տարածեցաւ մահ՝
13 որով ամենեքին մեղան ։ * Քանզի մինչև
յօրէնսն մեղք էին յաշխարհի . բայց
մեղք ոչ համարէին , ուր օրէնք ոչ իցեն ։
14 * Այլ թագաւորեաց մահ յադամայ
մինչև ցմովսէս՝ և 'ի վ̅ր չյանցուցելոցն ,
ը̅ նմանութե̅ յանցուածոցն ադամայ .
15 որ է օրինակ հանդերձելոցն ։ * Այլ
ոչ ո̅պ յանցանքն՝ նոյնպէս և շնորհքն .
զի եթէ միոյն յանցանօք բազումք մե-
ռան , ո՜րչափ ևս առաւել շնորհքն ա̅յ և
պարգևքն՝ շնորհօք միոյն մարդոյ յ̅սի ք̅սի
16 'ի բազումս առաւելան ։ * Եւ ոչ ո̅պ 'ի միո-
ջէ յանցուցելոյն պարգևքս . զի դա-
տաստանն 'ի միոջէ յանցուածոյ անտի
'ի դատապարտութի̅ . այլ շնորհքն 'ի բազ-
17 մաց յանցուածոցն յարդարութի̅ ։ * Զի
եթէ 'ի միոյն յանցանաց մահ թագա-
ւորեաց միովն , ո՜րչափ ևս առաւել՝ որք
զառաւելութի̅ շնորհաց և զպարգևաց
ար-

digitised by A.R.A.R.@

արդարութեան առնուցուն, կենօք թագա-
ւորեսցեն 'ի ձեռն միոյն յիսուսի քրիստոսի: * Ա- 18
պա ուրեմն որպէս միոյն յանցանօք յամենայն մար-
դիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն
արդարութեամբ յամենայն մարդիկ արդարութիւն
կենաց: * Զի որպէս անհնազանդութեամբ 19
միոյ մարդոյ՝ մեղաւորք բազումք եղեն.
նոյնպէս և հնազանդութեամբ միոյն, ար-
դարք բազումք եղիցին: * Այլ օրէնքն 'ի 20
ներքս անկան, զի յանցանքն բազմա-
սցին. զի ուր առաւել եղեն մեղքն, ա-
ռաւել ևս յաւելան շնորհքն: * Զի որպէս 21
թագաւորեցին մեղք 'ի մահու անդ.
նոյնպէս և շնորհքն թագաւորեսցեն ար-
դարութեամբ 'ի կեանսն յաւիտենից 'ի ձեռն
Գ.Զ յիսուսի քրիստոսի տեառն մերոյ:

## ԳԼ. Զ:

Իսկ արդ՝ զի՞նչ ասիցեմք, յաճախես- 1
ցուք 'ի մեղսն՝ զի շնորհքն բազմա-
սցին: * Քաւ լիցի: որք մեռաք մեղացն, 2
զիա՞րդ տակաւին 'ի նմին կեցցեմք: * Ե- 3
թէ ո՞չ գիտէք՝ զի որ միանգամ մկրտե-
ցաք 'ի քրիստոս յիսուս՝ 'ի մահ անդր նորին մկրտեցաք.
* Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն 'ի մահ: 4
զի որպէս յարեաւ քրիստոս 'ի մեռելոց փառօք
հօր. նոյնպէս և մեք 'ի նորոգութեան կե-
նաց շրջեսցուք: * Զի եթէ տնկակից 5
եղեաք նմանութեան մահու նորա. այլ և յա-
րութեան նորա լինիցիմք: * Զայս գիտասջիք՝ 6
զի

digitised by A.R.A.R.@

զի հին մարդն մեր խաչակից եղեւ նորա,
զի խափանեսցի մարմին մեղացն, մի եւս
7 ծառայել մեզ մեղացն: * Զի որ մեռա-
նին՝ արդարացեալ է ՚ի մեղաց անտի:
8 * Իսկ եթէ մեռաք ընդ Քրիստոսի, հաւատամք՝
9 թէ եւ կեցցուք ընդ նմա: * Գիտեմք եթէ
Քրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց. այսուհե-
տեւ ոչ մեռանի, եւ մահ նմա ոչ եւս տիրէ:
10 * Զի որ մեռաւն՝ մեղացն մեռաւ մի-
անգամ, եւ որ կենդանին է՝ կենդանի
11 է Աստուծոյ: * Նոյնպէս եւ դուք համարեսջիք
զանձինս մեռեալս մեղացն, եւ կենդա-
նիս Աստուծոյ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր:
12 * Մի այսուհետեւ թագաւորեսցեն մեղք Դկ
՚ի մահկանացու մարմինս ձեր՝ հնազան-
13 դել ցանկութեանց նորա: * Եւ մի պատրաս-
տէք զանդամս ձեր զէն անիրաւութեան
մեղացն. այլ պատրաստեսջիք զանձինս
ձեր Աստուծոյ՝ որպէս ՚ի մեռելոց ՚ի կենդանիս. եւ
զանդամս ձեր զէն արդարութեան Աստուծոյ:
14 * Զի մեղք ձեզ ոչ տիրեսցեն. քանզի
15 ոչ էք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք: * Իսկ
արդ՝ զի՞նչ, մեղիցո՞ւք՝ զի չեմք ընդ օրի-
16 նօք՝ այլ ընդ շնորհօք. քաւ լիցի: * Ոչ գի-
տէք՝ թէ որում պատրաստէք զանձինս
ձեր ծառայս ՚ի հնազանդութիւն, ծառայ
էք, որում հնազանդիքդ, եթէ մեղաց՝
՚ի մահ, եւ եթէ ՚ի հնազանդութիւն արդա-
17 րութեան՝ ՚ի կեանս: * Այլ շնորհք Աստուծոյ.
զի էիք ծառայք մեղաց՝ հնազանդեցայք
՚ի

digitised by A.R.A.R.@

'ի սրտէ՝ որում աւանդեցայք յառակ
վարդապետութեան ։ *Արդ՝ ազատեցեալք 18
'ի մեղաց՝ ծառայեցէք արդարութեան ։
*Մարդկօրէն ասեմ վն տկարութեան մար- 19
մնոյ ձերոյ. զի ոպ պատրաստեցիք զան-
դամս ձեր ծառայս պղծութեան և անօրէ-
նութեան յանօրէնութիւն. նոյնպէս և այժմ
պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս
արդարութեան 'ի սրբութիւն ։ * Զի մինչ 20
ծառայքն էիք մեղաց՝ ազատացեալ էիք
յարդարութենէն ։ *Իսկ արդ՝ զի՞նչ պտուղ 21
ունէիք յայնժամ, որովք այժմդ զամօթի
հարեալ էք. զի վախճան նց մահ է ։
*Բայց արդ ազատացեալք 'ի մեղացն՝ և 22
ծառայեալք այ՝ ունիք զպտուղ ձեր 'ի
սրբութիւն, և վախճան նր կեանք յաւի-
տենից ։ * Զի թոշակն մեղաց մահ է. 23
այլ շնորհքն այ կեանք յաւիտենից 'ի քս
յս 'ի տր մեր ։

## ԳԼ. Է ։

Դ·Գ Եթէ ոչ գիտէք եղբարք, զի ը գի- 1
տունս օրինաց խօսիմ. զի օրէնք տի-
րեն մարդոյ՝ որչափ ժամանակս կենդա-
նի իցէ ։ *Քանզի կին առնականն 'ի կեն- 2
դանի այր իւր կապեալ կայ օրինօք ։ իսկ
եթէ մեռցի այրն, արձակեալ է յօրինաց
առն ։ *Ապա ուրեմն մինչ կենդանի է 3
այրն, շուն կոչի՝ եթէ լինիցի առն այ-
լում ։ և եթէ մեռցի այրն՝ ազատ է յօ-
րի-

digitised by A.R.A.R.@

րինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի
4 առն այլում: *Այսուհետեւ եւ դուք եղ-
բարք՝ մեռայք օրինացն մարմնովն ք͞ի,
լինել այլում որ 'ի մեռելոյն յարուցեալ
5 է, զի պտղաբեր լիցուք ա͞յ: *Քանզի
մինչ էաքն մարմնով, կիրք մեղաց՝ որ օ-
րինօքն էին՝ զօրանային յանդամս մեր,
առ 'ի պտղաբեր առնելոյ զմեզ մահու:
6 *Բայց այժմ դատարկացաք յօրինաց
անտի. ք͞զի մեռաք այնմիկ՝ որով ըմբռ-
նեալն էաք, առ 'ի ծառայել մեզ նորո-
գութ͞բ հոգւոյն՝ եւ ոչ հնութ͞բ գրոյն:
7 *Իսկ արդ զի՞նչ ասեմք. օրէնքն մե՞ղք
իցեն. քաւ լիցի: այլ զմեղս ոչ գիտէի,
եթէ ոչ օրինօք. եւ զցանկութ͞ի ոչ ճա-
նաչէի, եթէ ոչ օրինացն էր ասացեալ՝
8 մի ցանկանայցես: *Պատճառս առին
մեղքն պատուիրանաւն, եւ գործեցին
յիս զա͞մ ցանկութ͞ի. զի առանց օրինացն
9 մեղքն մեռեալ էին: *Եւ ես առանց օրի-
նացն երբեմն էի կենդանի. այլ իբրեւ
եհաս յիս պատուիրանն, մեղքն կենդա-
10 նացան, *եւ ես մեռայ. եւ գտաւ ինձ
պատուիրանն՝ որ 'ի կեանս էր, նոյն 'ի
11 մահ: *Զի մեղացն պատճառս առեալ
պատուիրանաւն՝ խաբեցին զիս, եւ նո-
վին սպանին:
12 *Այսուհետեւ օրէնքս ս͞բ են՝ եւ պատուի- ԴԶ
13 րանն ս͞բ եւ արդար եւ բարերար: *Իսկ
արդ՝ ինձ բարին մա՞հ եղեւ. քաւ լիցի.



digitised by A.R.A.R.@

այլ մեղքն. զի երեւեսցին մեղքն բար-
եաւն գործել ինձ զմահ, զի եղիցին ըստ
առաւելութեն մեղքն մեղաւոր ՚ի ձեռն
պատուիրանին : * Գիտեմք զի օրէնքն 14
հոգեւոր են. այլ ես մարմնաւոր եմ, ընդ
մեղօք վաճառեալ : * Զի զոր գործեմն 15
ոչ գիտեմ, ոչ եթէ զոր կամիմն՝ զայն առ-
նեմ, այլ զոր ատեամն՝ զայն գործեմ :
* Ապա թէ զոր ոչն կամիմ՝ զայն առ- 16
նեմ, վկայեմ օրինացն՝ եթէ բարւոք են :
* Այլ արդ ոչ եթէ ես գործեմ զայն, 17
այլ բնակեալ յիս մեղքն : * Գիտեմ զի 18
ոչ բնակեալ է յիս, այսինքն ՚ի մարմնի
իմում, բարի ինչ. զի կամքն առաջի կան
ինձ. եւ առնել զբարին ոչ : * Զի ոչ ե- 19
թէ՝ զոր կամիմ զբարին՝ առնեմ, այլ
զոր ոչն կամիմ զչարն, զայն գործեմ :
* Ապա եթէ զոր ոչն կամիմ՝ զայն առ- 20
նեմ, ոչ եւս ես առնեմ զայն՝ այլ բնա-
կեալ յիս մեղքն : * Եւ արդ՝ գտանեմ 21
զօրէնս այնորիկ՝ որ կամիցին առնել յիս
զբարին. եւ ինձ չարն առաջի կայ : * Հա- 22
ճեմ ընդ օրէնսն այ ըստ ներքին մարդոյն.
* Բայց տեսանեմ այլ օրէնս յանդամս 23
իմ, զինեալ հակառակ օրինաց մտաց
իմոց. եւ գերել զիս օրինօքն մեղաց՝ որ
են յանդամս իմ : * Այր մի տառապեալ 24
եմ ես՝ ով ապրեցուցէ զիս ՚ի մարմնոյ
աստի մահու : * այլ շնորհքն այ ՚ի ձեռն 25
յսի քսի տն մերոյ :

Ապա

digitised by A.R.A.R.@

Ապա ուրեմն ես ինքնին մտօք իմովք Եկ
ծառայեմ օրինացն ա͞յ. և մարմնով օրի-
նացն մեղաց ։

## Գլ. Ը ։

1 Թէ այդպէս իցէ՝ ոչինչ դատապար-
2 տութի͞ն է այնոցիկ՝ որ ՚ի ք͞ս յ͞ս ։ * Զի
օրէնք հոգւոյն կենաց ՚ի ք͞ս յ͞ս ազատե-
3 ցին զիս յօրինաց մեղացն և մահու ։ * Զի
որ անհնարին էր օրինացն՝ որով տկարա-
նայր մարմնով. ա͞ծ զորդին իւր առա-
քեաց ՚ի նմանութի͞ն մարմնոյ մեղաց՝ և վ͞ն
մեղաց, և դատապարտեաց զմեղս ՚ի
4 մարմնի անդ. * զի արդարութի͞ն օրինացն
կատարեսցի ՚ի մեզ, որք ոչ ը͞ստ մարմնոյ
5 գնայցեմք՝ այլ ը͞ստ հոգւոյն ։ * Զի որք
ը͞ստ մարմնոյն են՝ զմարմնոյն խորհին, և
6 որք ը͞ստ հոգւոյն՝ զհոգւոյն ։ * Զի խոր-
հուրդ մարմնոյ՝ մահ է, և խորհուրդ հոգ-
7 ւոյն, կեանք և խաղաղութի͞ն ։ * Վասնզի
խորհուրդ մարմնոյ թշնամութի͞ն է յա͞ծ՝
զի օրինացն ա͞յ ոչ հնազանդի. նաև կա-
8 րէ իսկ ոչ ։ * Զի որ մարմնովքն են, ա͞յ
9 հաճոյ լինել ոչ կարեն ։ * Բայց դուք
ոչ էք մարմնով այլ հոգւով, եթէ իցէ
հոգին ա͞յ ՚ի ձեզ բնակեալ. ապա եթէ
10 որ զհոգի ք͞սի ոչ ունի, սա չէ ն͞ր ։ * Իսկ
եթէ ք͞ս ՚ի ձեզ է՝ ապա մարմին մեռեալ
է վ͞ն մեղաց. և հոգին կենդանի է վ͞ն
11 արդարութե͞ն ։ * Եթէ հոգի այնորիկ՝

որ

digitised by A.R.A.R.@

որ յարոյցն զՔս ՚ի մեռելոց, բնակեալ է
՚ի ձեզ. ապա և որ յարոյց զՔս քս ՚ի մե-
ռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու
մարմինս ձեր բնակեալ հոգւովն իւրով
Վ.ջ.՚ի ձեզ։
*Այսուհետև եղբարք՝ պարտապան 12
եմք ոչ մարմնոյ ըստ մարմնոյ կեալ. *զի 13
թէ ըստ մարմնոյ կեայք՝ մեռանելոց էք.
իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպա-
նանիցէք՝ կեցջիք։ *Զի որ հոգւովն այ 14
վարին, նոքա են որդիք այ։ *Զի ոչ 15
առիք զհոգին ծառայութեան միւսանգամ
յերկիւղ, այլ առիք զհոգին որդեգրու-
թեան. որով աղաղակեմք աբբայ, հայր։
*Նոյն ինքն հոգին վկայէ հոգւոյս մե- 16
րում, եթէ եմք որդիք այ։ *Իսկ եթէ 17
որդիք, ապա և ժառանգք. ժառանգք
այ՝ և ժառանգակիցք քի. եթէ չարչա-
րանացն կցորդ լինիմք, և փառացն հա-
ղորդ լինելոց եմք։ *Զնմ այսպէս թուի՝ 18
եթէ ոչ են արժանի չարչարանք ժամա-
նակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտ-
նելոց են ՚ի մեզ։ *Զի ակնկալութիւն ա- 19
րարածոց՝ յայտնութեան որդւոյն այ սպասէ։
*Զի ունայնութեան արարածք հնազան- 20
դեցան, ոչ իւրեանց կամաւ՝ այլ վն այ-
նորիկ՝ որ հնազանդեցոյցն յուսով. *զի և 21
ինքեանք իսկ արարածքն ազատեսցին ՚ի
ծառայութենէ ապականութեան՝ յազատու-
թիւն փառաց որդւոյն այ *Քանզի գի- 22
տեմք,

digitised by A.R.A.R.@

տեամբ, եթէ ամ արարածք հեծեծեն եւ երկ-
23 նեն մինչեւ ցայժմ ։ * Եւ ոչ այսչափ
միայն. այլ եւ մեք իսկ՝ որ զպտուղ հոգ-
ւոյն ունիմք, անձամբ յանձինս մեր հե-
ծեծեմք՝ որդեգրութեան ակն կալեալ փըր-
24 կութեան մարմնոյ մերոյ ։ * Զի յուսով ապ-
րեցաք. այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս. զի
25 զոր տեսանէ ոք՝ զի՞ եւս յուսայ ։ * Ապա
թէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, համ-
26 բերութեամբ ակն ունիմք ։ * Նոյնպէս եւ
հոգին ՚ի թիկունս հասանէ տկարութեան
մերում. զի զոր կամքն յաղօթս՝ որպէս ար-
ժան իցէ՝ ոչ գիտեմք. այլ ինքնին հո-
գին բարեխօս լինի ՚ի հեծութիւն անմռ-
27 ունչս ։ * Բայց որ քննէն զսիրտս՝ գի-
տէ զինչ խորհուրդ է հոգւոյն. զի ըստ այ
28 բարեխօսէ վասն սրբոց ։ * Բայց գիտեմք՝
եթէ որոց սիրեն զած՝ յամենայն գործակից
լինի ՚ի բարիս՝ որք հրաւիրանաւն կոչե-
29 ցան ։ * Զի զորս յառաջն ճանաչէր՝ յա-
ռաջագոյն եւ հրաւիրեաց կերպարանա-
կից լինել պատկերի որդւոյն իւրոյ. զի
եղիցի նա անդրանիկ ՚ի մէջ եղբարց բազ-
30 մաց ։ * Եւ զորս յառաջագոյնն հրաւի-
րեաց՝ զնոսին եւ կոչեաց. եւ զորս կոչ-
եացն, զնոսին եւ արդարացոյց. եւ զորս
արդարացոյցն, զնոսին եւ փառաւորս ա-
31 րար ։ * Իսկ արդ զինչ ասեմք առ այս.
եթէ ած ՚ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հա-
32 կառակ ։ * որ յիւր որդին ոչ խնայեաց .
այլ

digitised by A.R.A.R.@

այլ վ՟ն մեր ամենեցուն մատնեաց զնա.
զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զամ՟ շնորհեսցէ
մեզ: *Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտ- 33
րելոց ա՟յ. ա՟ծ է որ արդարացուցանէ,
*իսկ արդ՝ ո՞վ է որ դատապարտ առնի- 34
ցէ: Ք՟ս յ՟ս՝ որ մեռաւն, մանաւանդ թէ
յարուցեալ իսկ է. և է ը՟ աջմէ ա՟յ, որ
և բարեխօս իսկ է վ՟ն մեր: *Արդ՝ ո՞վ 35
մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն ք՟ի, նեղութի՞ւն՝
թէ անձկութի՞ւն՝ թէ հալածանք՝ թէ սով՝
թէ մերկութի՞ւն՝ թէ վիշտք՝ թէ սուր.
*որպէս և գրեալ է. վ՟ն քո մեռանիմք զօր- 36
հանապազ, համարեցաք իբրև զոչխար
՚ի սպանդ: *Այլ յայսմ ամ՟ի՝ առաւել 37
յաղթեմք նովաւ որ սիրեացն զմեզ:
*Քանզի հաստատեալ եմ, եթէ՝ ոչ 38
մահ և ոչ կեանք և ոչ հրեշտակք և ոչ
իշխանութիւնք, և ոչ որ կանն և ոչ հանդեր-
ձեալքն, և ոչ զօրութիւնք, *և ոչ բարձրութի՜ւն 39
և ոչ խորութի՜ւն, և ոչ այլ ինչ արարած՝
կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյ անտի ա՟յ,
որ ՚ի ք՟ս յ՟ս ՚ի տ՟ր մեր:

## ԳԼ. Թ.

ԵԴ Ստուգութիւն ասեմ ՚ի ք՟ս՝ և ոչ ստեմ, 1
վկայէ ինձ միտք իմ ՚ի հոգի ս՟բ.
*զի տրտմութի՜ւն է ինձ յոյժ՝ և անպակաս 2
ցաւք սրտի իմոյ: *Զի ուխտիւք խնդ- 3
րէի ես իսկ ինքնին նզով լինել ՚ի ք՟է,
վ՟ն եղբարց իմոց և ազգականաց ը՟ մար-
մնոյ,

digitised by A.R.A.R.@

4 մոյ, * որ են իէլացիք. որոց որդեգրու-
թիւն և փառքն և կտակարանքն և օրէնս-
5 դրութիւն և պաշտօնն և աւետիքն, * ո-
րոց հարքն, յորոց և քս ըս մարմնոյն, որ
է 'ի վր ամենեցուն ած օրհնեալ յաւի-
6 տեանս. ամէն։ * Ոչինչ է մարթ՝ եթէ
անկած լինիցի բանն այ. զի ոչ ամենե-
քեան՝ որ յիսրայէլէն են, նոքա իէլեանք
7 իցեն. * և ոչ որ զաւակն աբրահամու
են՝ ամենեքեան որդիք իցեն. այլ իսա-
8 հակաւ կոչեսցի քեզ զաւակ։ * Այսին-
քըն՝ ոչ եթէ որ որդիք մարմնոյն են, են
որդիք այ. այլ որդիք աւետեացն համա-
9 րին 'ի զաւակ։ * Վասնզի աւետեաց իսկ
է բանս այս, եթէ 'ի ժամանակի յայս-
10 միկ եկից՝ և եղիցի որդի սառայի։ * Եւ
ոչ այնչափ միայն՝ այլ և 'ի հռեբեկայ
'ի միոջէ անկողնոյ սահակայ հօր մե-
11 րոյ։ * Զի մինչչև ծնեալ էին, և մինչչև
բարի ինչ կամ չար գործեալ էին։ զի ըս
ընտրութեան առաջադրութիւն այ հաստա-
12 տեսցի. * ոչ 'ի գործոց՝ այլ յայնմանէ
13 որ կոչեացն՝ ասացաւ նմ. * Թէ երէցն
կրտսերոյն ծառայեսցէ. ոպ և գրեալ
է, թէ զյակովբ սիրեցի, և զեսաւ ա-
14 տեցի։ * Իսկ արդ՝ զի՞նչ ասեմք. միթէ
15 անիրաւութի՞ իցէ այ. քա՛ւ լիցի։ * Զի
մովսէսի ասէ. ողորմեցայց՝ որում ողոր-
մեցայցն, և գթացայց՝ յորս գթացայցն։
16 * Ապա ոչ ըս այնմ ինչ է՝ որ կամիցին,
և

digitised by A.R.A.R.@

և ոչ ըստ այնմ՝ որ ընթանայցէ. այլ
ըստ այ՛՝ որ ողորմին ։
ԵԶ *Քանզի ասէ գիր ցփարաւոն. թէ վ՛ն 17
այնորիկ զգրգռեցի զքեզ, զի 'ի քեզ ցու-
ցից զզօրութիւն իմ, և պատմեսցի անուն
իմ ընդ ամ՛ երկիր ։ *Ապա ուրեմն՝ ում 18
կամի ողորմի, և ում կամի՝ խստանայ ։
*Իսկ արդ՝ ասիցես, թէ մեզ ես զի՞ 19
դնէ՝ զի կամացն՛ ոչ ոք կայ հակառակ ։
*Իսկ արդ՝ դու ո՞վ ես մարդ՝ որ պատասխա- 20
խանի տաս այ՛ ։ մի թէ ասիցէ՞ ստեղծ-
ուածն ստեղծողին՝ թէ ընդէ՞ր այդպէս
արարեր զիս ։ *Եթէ ոչ ունիցի իշխա- 21
նութիւն բրուտն կաւոյն, 'ի նմին զանգ-
ուածոյ առնել անօթ՝ զմի 'ի պատիւ և
զմի յանարգանս ։ *Ապա եթէ կամէր 22
այ՛ ցուցանել զբարկութիւն, և յայտնի առ-
նել զզօրութիւն իւր ։ որ համբերեաց բազում
երկայնմտութեամբ անօթոցն բարկութեան՝
պատրաստելոցն 'ի կորուստ ։ *Զի 23
յայտնի արասցէ զմեծութիւն փառաց իւ-
րոց 'ի վ՛ր անօթոցն ողորմութեան, զոր պատ-
րաստեաց 'ի փառս ։ *Զորս և կոչեաց 24
զմեզ, ոչ միայն 'ի հրէից՝ այլև 'ի հեթա-
նոսաց ։ *Որ՛պ և յովսէէ ասէ ։ կոչեցից՝ 25
զոր ոչ ժողովուրդն իմ, ժողովուրդ ինձ ։
և զչսիրեցեալն՝ սիրեցեալ, (և զչողոր-
մեալն՝ ողորմեալ ։) *Եւ եղիցի 'ի տեղւոջ 26
յորում ասացաւ նց՛ թէ ոչ ժողովուրդ
իմ դուք, անդ կոչեսցին նոքա որդիք այ՛
կեն-

digitised by A.R.A.R.@

27 կենդանւոյ ։ *Եսայի աղաղակէ վ̃ն Ի̃ղի·
եթէ իցէ թիւ որդւոցն Ի̃ղի իբրեւ զաւազ
ծովու՝ սակաւ ինչ մնացորդք մնասցեն ։
28 *Զի բան մի հակիրճ եւ համառօտ ար-
դարութ̃բ· զբանն հակիրճ արասցէ Տ̃ր
29 'ի վերայ երկրի ։ *Եւ ո̃պ ասէ Եսայի·
թէ ոչ Տ̃ն զօրութ̃եց թողեալ էր մեզ
զաւակ, իբրեւ զսոդոմ լինէաք՝ եւ զգո-
մորայ նմանէաք ։
30 *Իսկ արդ զի՞նչ ասիցեմք· զի հեթա- ՁԿ
նոսք՝ որ ոչ երթային զհետ արդարութ̃ե
հասին արդարութ̃ե, այնմ արդարութ̃ե
31 որ 'ի հաւատոց անտի ։ *Իսրայէլ եր-
թայր զհետ օրինացն արդարութ̃ե եւ յօ-
րէնս արդարութեանն ոչ ժամանեաց ։
32 *Ընդէ՞ր· զի ոչ 'ի հաւատոց՝ այլ իբրեւ
'ի գործոց օրինաց· քանզի գթեցին ն̃ք
33 առ վիմին գայթագղութ̃ե· *որպէս
եւ գրեալ է· ահաւասիկ դնեմ 'ի սիոն
քար գայթագղութ̃ե եւ վէմ գլորման, եւ
ա̃մ որ հաւատասցէ 'ի նա՝ մի ամաչեսցէ ։

## ԳԼ ։ Ժ ։

1 Եղբարք՝ իմ կամք սրտի եւ աղօթք առ
2 Ա̃ծ, վ̃ն ն̃ց են 'ի փրկութ̃ի ։ *քանզի
վկայեմ ն̃ց՝ թէ զնախանձն Ա̃յ ունին,
3 այլ ոչ գիտութ̃բ ։ *Զի տգէտ են Ա̃յ
արդարութ̃են, եւ զիւրեանցն խնդրեն
կացուցանել· զի արդարութ̃են Ա̃յ ոչ
4 հնազանդեցան ։ *Քանզի կատարած

6 * օրի-

digitised by A.R.A.R.@

օրինացն քս է՝ յարդարութի ամ հաւա-
տացելոց:
ՁԴ * Մովսէս գրէ զարդարութիւն, որ յօ- 5
րինաց անտի է. թէ արասցէ զայն մարդ՝
կեցցէ նովին: * Իսկ զհաւատոյն արդա- 6
րութե այսպէս ասէ. մի ասիցես 'ի սրտի
քում, ո՞վ ելանիցէ յերկինս, այսինքն է՝
զքս իջուցանել. * կամ ո՞վ իջանիցէ յան- 7
դունդս, այսինքն է՝ զքս հանել 'ի մե-
ռելոց: * Այլ զինչ ասէ գիր. մերձ է 8
բանն 'ի բերան քո՝ և 'ի սրտի քում է.
այսինքն է՝ բանն հաւատոյ զոր քարո-
զեմք: * Զի եթէ խոստովանեսցես բե- 9
րանով քով զտր զյս. և հաւատասցես 'ի
սրտի քում, թէ ած յարոյց զնա 'ի մե-
ռելոց, կեցցես: * Զի սրտիւ հաւատայք 10
յարդարութի, և բերանով խոստովա-
նիք 'ի փրկութի: * Վանզի ասէ գիր. 11
ամ՝ որ հաւատասցէ 'ի նա, մի ամաչես-
ցէ: * Զի ոչ գոյ խտիր հրէի և հեթա- 12
նոսի. քզի նոյն տր է ամենեցուն, բա-
ւական ամենեսին՝ որք կարդան առնա:
* Զի ամ՝ որ կարդասցէ զանուն տն՝ 13
կեցցէ: * Իսկ զիա՞րդ կարդասցեն՝ յոր 14
ոչն հաւատացին. կամ զիա՞րդ հաւատաս-
ցեն՝ որում ոչ լուան. կամ զիա՞րդ լուի-
ցեն առանց ուրուք քարոզելոյ. * կամ 15
զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքես-
ցին. որպ և գրեալ է. իբրև զի գեղե-
ցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութե

և

digitised by A.R.A.R.@

16 և աւետարանչացն բարութե՛ : * Այլ ո՛չ
ամենեքեան հնազանդ եղեն աւետարա-
նին . Եսայի աղաղակէ . Տ̃ր՝ ո՛ հաւա-
17 տաց լրոյ մերում : * Ապա ուրեմն՝ հա-
ւատք ՚ի լսելոյ են, և լուր ՚ի բանէն ք̃ի : Վ. Ջ.
18 * Այլ ասեմ. միթէ ո՞չ լուան . մանա-
ւանդ՝ զի ը̃ն ա̃մ երկիր ել բարբառ ն̃ց,
19 և ը̃ն ծագս տիեզերաց խօսք ն̃ց : * Այլ
ասեմ, միթէ Իսրայէլ ո՞չ լուաւ . Նախ
Մովսէս ասէ, Ես նախանձեցուցից զձեզ
ոչինչ ժողովրդեամբ, և ազգաւ անմը-
20 տաւ զկծեցուցից զձեզ : * Բայց Եսայի
համարձակի իսկ՝ և ասէ . գտայ այնո-
ցիկ՝ որ զիս ո՛չ խնդրէին . յայտնի եղէ
այնոցիկ՝ որ զինէն ո՛չ հարցանէին :
21 * Այլ առ Իսրայէլ ասէ . զօ՛ր ա̃մ ձր-
գեցի զձեռս իմ առ ժողովուրդ անհա-
ւան՝ և հակառակօղ :

## ԳԼ. ԺԱ.

1 Իսկ արդ ասեմ, միթէ մերժեա՞ց ա̃ծ ՋՋ.
զժողովուրդ իւր . քա՛ւ լիցի . քանզի և
ես Իսրայէլացի եմ, ՚ի զաւակէ Աբրա-
2 համու յազգէ Բենիամենի : * Ո՛չ մեր-
ժեաց ա̃ծ զժողովուրդ իւր, զոր յառաջ
ծանեաւ . Թէ ո՞չ գիտէք յեղիա զի՛նչ
ասէ գիր . ո՛րպ̃ս ամբաստան լինի ա̃յ զիս-
3 րայէլէ : * Տէ՛ր՝ զմարգարէս քո կոտո-
րեցին, և զսեղանս քո կործանեցին . ես
մնացի միայն, և խնդրեն զանձն իմ :
* Այլ

digitised by A.R.A.R.@

* Բայց զինչ ասէ նմա պատասխանին. 4
Թողի ինձ ասէ՝ եօթն հազար այր, որ
ոչ կրկնեցին ծունր բահաղու: * Նոյն- 5
պէս եւ յայսմ ժամանակի մնացորդք՝ ըստ
ընտրութեան շնորհացն եղեն: * Իսկ եթէ 6
շնորհօք՝ ոչ եւս ՚ի գործոց. ապա թէ ոչ՝
շնորհքն՝ ոչ եւս շնորհք լինին: * Իսկ 7
արդ՝ զոր խնդրէրն Իսրայէլ, այնմ ոչ եհաս.
բայց ընտրութեանն եհաս. եւ այլքն կուրա-
ցան. * որպէս եւ գրեալ է. Ետ նոցա Աստուած հոգի 8
յիմարութեան. աչս՝ որովք ոչ տեսանիցեն,
եւ ականջս՝ որովք ոչ լսիցեն, մինչեւ ցայս-
օր ժամանակի: * Եւ Դաւիթ ասէ. Ե- 9
ղիցի սեղանք նոցա յորոգայթ եւ ՚ի յորս եւ
՚ի գայթագղութիւն եւ ՚ի հատուցումն նո-
ցին: * Խաւարեսցին աչք նոցա զի մի տես- 10
ցեն. եւ զթիկունս նոցա հանապազ կորա-
ցո: * Իսկ արդ ասեմ, մի թէ վասն այնո- 11
րիկ յանցեան՝ զի կործանեսցին. քաւ լի-
ցի: այլ նոցա յանցանօքն փրկութիւն հեթա-
նոսաց. զի նախանձ արկցէ նոցա: * Իսկ 12
եթէ յանցանքն նոցա մեծութիւն աշխարհի,
եւ պարտութիւնն նոցա մեծութիւն հեթանո-
սաց. որչափ եւս առաւել լրութիւն նոցա:
ԷԿ * Բայց ձեզ ասեմ հեթանոսացդ՝ ցորչափ 13
ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ,
զպաշտօնն իմ փառաւոր առնեմ. * զի 14
թերեւս նախանձ արկից նոցա մարմնոյ իմոյ
եւ ապրեցուցից զոմանս ՚ի նոցանէ: * Զի 15
եթէ մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի
է.

digitised by A.R.A.R.@

է. իսկ ընդունելութիւն զինչ իցէ, եթէ
16 ոչ կենդանութիւն 'ի մեռելոց ։ * Իսկ եթէ
սկիզբն սուրբ է՝ և զանգուածն. և եթէ
17 արմատն՝ ապա և ոստքն ։ * Եթէ յոս-
տոց անտի ոմանք փշրեցան, և դու որ
ձիթենիդ վայրենի էիր՝ պատուաստե-
ցար 'ի նոսա, և բաժանորդ եղեր արմա-
18 տոյն՝ և պարարտութեան ձիթենւոյն, * մի՛
պարծիր առ ոստովքն. ապա եթէ պար-
ծիցիս՝ ոչ եթէ դու զարմատն 'ի վեր ու-
19 նիս, այլ արմատն զքեզ. * Իսկ արդ՝ ա-
սիցես, ոստքն փշրեցան՝ զի ես պատուաս-
20 տեցայց ։ * Բարւոք է՝ անհաւատութեամբն
փշրեցան, և դու հաւատովք հաստա-
տեցար. մի՛ հպարտանար՝ այլ երկի՛ր ։
21 * Զի թէ Աստուած 'ի բնուն ոստոյն ոչ խնայ-
եաց, գուցէ երբէք և 'ի քեզ ոչ խնայի-
22 ցէ ։ * Արդ՝ տես զքաղցրութիւն և զսաստ-
կութիւն Աստուծոյ. 'ի վերայ կործանելոցն սաստ-
կութիւն, և 'ի վերայ քո քաղցրութիւն Աստուծոյ, եթէ
կացցես 'ի նմին քաղցրութեան. ապա թէ
23 ոչ՝ և դու կոտորեսցիս ։ * Եւ նոքա ե-
թէ ոչ 'ի նմին անհաւատութեան կայցեն,
պատուաստեսցին. զի կարող է Աստուած միւ-
24 սանգամ պատուաստել զնոսա ։ * Զի ե-
թէ դու 'ի բնէ 'ի վայրենի ձիթենւոյ
անտի հատար՝ և յանբնէ 'ի բարի ձի-
թենւոջն պատուաստեցար, որչափ ևս
առաւել նոքա՝ որ բնովքն իսկ են պատ-
ուաստեսցին յիւրեանց ձիթենւոջն ։

* Ոչ

digitised by A.R.A.R.@

ԻԲ *Ո՛չ կամիմ եղբարք եթէ անգէտ իցէք 25
խորհրդոյս այսմիկ, զի մի՛ յանձինս ձեր
իցէք իմաստունք, զի կուրութի՟ փոքր 'ի
շատէ եղև Ի՟էլի. մինչև լրումն հեթա-
նոսաց մտցէ, *և ապա ա՟մ Ի՟էլ կեցցէ. 26
ո՟պ և գրեալ է. եկեսցէ 'ի Սիօնէ փրկ-
կիչ՝ և դարձուսցէ զամբարշտութի՟ս 'ի
Յակովբայ: *Եւ այս նոցա՝ որ յինէն 27
ուխտ, յորժամ բարձից զմեղս նոցա:
*Ըստ աւետարանին թշնամիք են վ՟ս 28
ձեր, ը՟ ընտրութե՟ն սիրելիք վ՟ս հարցն:
*քանզի անզեղջ են շնորհք՝ և կոչումն 29
ա՟յ: *Զի ո՟պ և դուք երբեմն ապըս- 30
տամբ էիք յա՟յ, և արդ ողորմութի՟ գտիք
առ նոցա ապստամբութե՟ն, *նոյնպէս և 31
նոքա այժմ ապստամբ եղեն առ ձերում
ողորմութե՟դ, զի և նոքա ողորմութի՟ գըտ-
ցեն: *Քանզի արգել ա՟ծ զամենեսին 32
յանհաւանութե՟, զի ամենեցուն ողոր-
մեսցի: *Ո՜վ խորք մեծութե՟ և իմաս- 33
տութե՟ և գիտութե՟ն ա՟յ. որպէս զի անքնին
քննելոյ են դատաստանք ն՟ր, և անքնին
զննելոյ են ճանապարհք ն՟ր: *Զի ո՞վ 34
գիտաց զմիտս տ՟ն, կամ ո՞վ խորհրդակից
եղև նմա. *կամ ո՞վ ետ նմա փոխ, և առ- 35
նուցու զփոխարէն 'ի նմանէ: *Զի 'ի 36
նմանէ՝ և նովաւ՝ և 'ի նոյն ա՟մ: նմա
փառք յաւիտեանս. ամէն:



digitised by A.R.A.R.@

## Գլ ։ ԺԲ ։

1 Աղաչեմ զձեզ եղբարք գթութ̃քն ա̃յ՝
պատրաստել զմարմինս ձեր պատա-
րագ կենդանի ս̃բ՝ հաճոյ ա̃յ՝ զխօսուն
2 պաշտօնդ ձեր. *և մի՛ կերպարանիք կեր-
պարանօք աշխարհիս այսորիկ. այլ նո-
րոգեցարո՛ւք 'ի նորոգութ̃ մտաց ձերոց,
առ 'ի քննել ձեզ զկամն, և եթէ զինչ
են կամքն ա̃յ, բարին և հաճոյն և կա-
3 տարեալն ։ *Ասեմ այս շնորհօքն ա̃յ
որ տուեալ են ինձ, ա̃մի որ է 'ի ձեզ. մի՛
առաւել ինչ խորհել ք̃ զարժանն խոր-
հելոյ. այլ խորհել 'ի պգաստանալ իւ-
րաքանչիւր՝ ո՛ր̃ և բաժանեաց ա̃ծ չափ
4 հաւատոց ։ *Որպէս 'ի միում մարմնի
անդամս բազումս ունիմք. և անդամքն
5 ա̃մ ո՛չ զնոյն գործ ունին ։ *Նոյնպէս
և բազումքս մի մարմին եմք 'ի ք̃ս. այլ
իւրաքանչիւր միմեանց անդամք եմք ։
6 *Բայց ունիմք մեք շնորհս ը̃ստ շնորհացն,
որ տուեալ են մեզ ազգս ազգս. եթէ
մարգարէութ̃ ըստ չափուն հաւատոց,
7 *եթէ պաշտօն՝ ը̃ստ պաշտամանն, եթէ
որ ուսուցանիցէ՝ ը̃ստ վարդապետութ̃ն.
8 *եթէ որ մխիթարիցէ՝ ը̃ստ մխիթարութ̃ն.
որ առատն է՝ զուարթութ̃բ, որ վերակա-
ցուն՝ է փութով, որ ողորմին լրջմտու-
9 թ̃բ ։ *Սէր առանց կեղծաւորութ̃, ա-
10 տել զչար, զհետ երթալ բարեաց. *յեղ-
բայր-

digitised by A.R.A.R.@

բայրսիրութեամբ առ միմեանս գթածք. 'ի
պատիւ զմիմեամբք ելանել. *'ի փոյթ՝ 11
մի՛ վեհերոտք. հոգւով եռացեալք, Տեառն ծա-
ռայեցէք, *յուսով խնդացէք, նեղութեան 12
համբերեցէք, աղօթից ստէպ կացէք.
*'ի պէտս սրբոց հաղորդեցարո՛ւք. ըզ- 13
հիւրասիրութեան զհետ երթա՛յք: *օրհ- 14
նեցէք զհալածիչս ձեր, օրհնեցէ՛ք եւ մի՛
անիծանէք: *Խնդալ ընդ խնդացողս, 15
լալ ընդ լացօղս. *զնոյն միմեանց խոր- 16
հիջի՛ք. մի՛ ամբարտաւանէք՝ այլ ընդ խո-
նարհս զիջանիցի՛ք. մի՛ լինիք իմաստունք
յանձինս ձեր. *մի՛ ումեք չարի չար հա- 17
տուցանէք. խորհեցարո՛ւք զբարիս ա-
ռաջի ամենայն մարդկան: *Եթէ հնար ինչ 18
իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան խաղաղութիւն
կալջի՛ք: *Մի՛ զանձանց վրէժ խնդրէք 19
սիրելի՛ք, այլ տո՛ւք տեղի բարկութեան.
քանզի գրեալ է. իմ է վրէժխնդրութիւն,
եւ ես հատուցից ասէ Տէր: *Այլ եթէ 20
քաղցեալ իցէ թշնամի քո՝ հա՛ց տուր նմա,
եւ եթէ ծարաւի՝ ջո՛ւր տուր նմա. զայս
արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեսցես
'ի գլուխ նորա: *Մի՛ յաղթիր 'ի չարէն. 21
այլ յաղթեա՛ բարեաւն չարին:

## ԳԼ. ԺԳ.

Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ իցէ՝ 1
'ի հնազանդութեան կացցէ. քանզի ոչ
ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. եւ

որ

digitised by A.R.A.R.@

2 որ ենն, յա̃յ կարգեալ են ։ *Արդ յորու-
հետև որ հակառակ կայ իշխանութե̃ն,
ա̃յ հրամանին հակառակ կայ. և որք
հակառակն կան, անձանց դատաստանս
3 ը̃նդունին. *զի իշխանքն ոչ են յերկիւղ
բարեաց գործոց՝ այլ չարաց ։ Կամի՞ս
չերկնչել յիշխանութե̃ անտի, զբարիս
գործեա՛, և ընկալցիս գգովութի̃ ՚ի նմա-
4 նէ. *զի ա̃յ պաշտօնեայ է քեզ ՚ի բա-
րիս։ Ապա եթէ չար գործիցես, երկի՛ր.
զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր
ը̃ մէջ։ ա̃յ սպասաւոր է՝ վրէժխնդիր ՚ի
բարկութե̃, այնմ՝ որ զչարն գործիցէ։
5 *Վասն որոյ հարկ է հնազանդ լինել՝
ոչ միայն վ̃ս բարկութե̃ն, այլև վ̃ս մտացն
6 խղճի։ *վ̃ս այնորիկ և հարկս հարկա-
նէք, զի ա̃յ սպասաւորք են ՚ի նոյն կան-
7 խեալք. *Արդ՝ հատուցէ՛ք իւրաքան-
չիւր զպարտս. որում զհարկ՝ զհարկն,
որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝
զերկիւղն, որում զպատիւ՝ զպատիւն ։
8 *Եւ մի՛ ումեք պարտապան գտանիցի՛ք,
բայց զմիմեանս սիրելոյ. զի որ սիրէ զըն-
9 կերն, զօրէնսն կատարէ, *զմի՛ շնայցես,
և մի՛ սպանանիցես, և մի՛ գողանայցես,
և մի՛ սուտ վկայիցես, և մի՛ ցանկանայ-
ցես. և եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայն
բան բովանդակի, եթէ սիրեսցես զըն-
10 կեր քո իբրև զանձն քո ։ *Սէր ընկերի
իւրում չար ոչ առնէ. լրումն օրինացն

սէր

digitised by A.R.A.R.@

սէր է։ *Եւ զայս գիտասջի՛ք զ՟ի ժա֊ 11
մանակս. զի արդ ժամ իսկ է մեզ՚ի
քնոյ զարթնուլ. զի այժմ մերձ է մեզ
փրկութիւն քան յորժամ հաւատացաքն.
*գիշերն մերժեցաւ՝ և տիւն մերձեցաւ. 12
՚ի բաց արասցուք այսուհետև զգործսն
խաւարի, և զգեցցուք զզէնսն լուսոյ։
*Իբրև ՚ի տուընջեան զգաստացեալք շըր֊ 13
ջեսցուք. մի՛ անառակութ՟ք՝ և արբեցու֊
թ՟ք, և մի՛ խառն անկողնովք՝ և պղծու֊
թ՟ք, և մի՛ նախանձու՝ և հակառակու֊
թ՟բ. *այլ զգեցարո՛ւք զՏ՟ր Յ՟ս Ք՟ս, և 14
մարմնոյ խնամ մի՛ տանիք ՚ի ցանկութ՟ս։

## ԳԼ. ԺԴ.

Այլ զտկարացեալն ՚ի հաւատս ընկա֊ 1
լարուք՝ մի՛ խղճիւ երկմտութ՟եց։
*Ոմն հաւատայ ուտել զա՟մ. և որ հի֊ 2
ւանդն է, բանջար կերիցէ։ Որ ու֊ 3
տէն, զայն՝ որ ո՛չն ուտէ՝ մի՛ անգոսնես֊
ցէ. և որ ո՛չն ուտէ, զայն՝ որ ուտէն, մի՛
դատեսցի. քանզի Ա՟ծ զնա ընկալաւ։
*Դու ո՞վ ես՝ որ դատիս զայլոյ ծառայ. 4
իւրում Տ՟ն կայ՝ կամ անկանի. բայց կաց֊
ցէ՝ զի կարօղ է Տ՟ր հաստատել զնա։ *Ոմն 5
պահէ օր ը՟ս օրէ՝ և ոմն պահէ զօրհանա֊
պազ. իւրաքանչիւրոք զիւր միտս հաճես֊
ցէ։ *Որ խորհի զօրն, Տ՟ն խորհի. և որ 6
ո՛չն խորհի զօրն, Տ՟ն չխորհի. և որ ու֊
տէ, Տ՟ն ուտէ, և գոհանայ զԱ՟յ. և որ
ո՛չն

digitised by A.R.A.R.@

ոչն ուտէ, տ՟ն չուտէ, եւ գոհանայ զա՟յ:
7 * զի ոչոք 'ի մէնջ անձամբ կեայ, եւ ոչ
8 անձամբ մեռանի: * Եթէ կեամք՝ տ՟ն
կեամք, եւ եթէ մեռանիմք՝ տ՟ն մեռա-
նիմք. եւ արդ՝ եթէ կեամք եւ եթէ մե-
9 ռանիմք՝ տ՟ն եմք: * Վասնզի 'ի նոյն իսկ
եւ ք՟ս մեռաւ եւ եկեաց, զի մեռելոց եւ
կենդանեաց առ հասարակ տիրեսցէ:
10 * Դու զի՞ դատիս զեղբայր քո. կամ ընդէ՞ր
անգոսնես զեղբայր քո: Քանզի ամենեքին
11 կալոց եմք առաջի ատենին ք՟սի: * Զի
գրեալ է. կենդանի եմ ես ասէ տ՟ր. զի
ինձ կրկնեսցի ա՟մ ծունր, եւ ա՟մ լեզու
12 խոստովան լիցի ա՟յ: * Ապա ուրեմն՝ իւ-
րաքանչիւրոք 'ի մէնջ ը՟ն անձին համարս
13 տացէ ա՟յ: * Այսուհետեւ՝ մի՛ զմիմեանս
դատեսցուք. այլ առաւել զայս դի՛ք 'ի
մտի՝ չդնել գայթագղութի՟ եղբօրն:
14 * Զայս գիտեմ, եւ հաստատեալ եմ 'ի
ք՟ս յ՟ս, զի ոչինչ է պիղծ նովաւ. բայց
այնմ, որ համարիցի ոք ինչ պիղծ՝ նմ՟ է
15 պիղծ: * Զի եթէ վասն կերակրոյ եղ-
բայրն քո տրտմի, ոչ եւս սիրով գնայցես.
մի՛ կերակրովն քով զնա կորուսաներ, վ՟ր
16 որոյ ք՟ս մեռաւ: * Մի՛ հայհոյեսցի բա-
17 րին ձեր: * Զի ոչ է արքայութի՟ ա՟յ կերա-
կուր եւ ըմպելի, այլ արդարութի՟ եւ խնդութի՟
18 եւ խաղաղութի՟ 'ի հոգին ս՟բ: * Զի որ
յայսմ ծառայէ ք՟սի, հաճոյ է ա՟յ՝ եւ ըն-
19 տիր մարդկան: * Ապա այսուհետեւ ըղ-
հետ

digitised by A.R.A.R.@

հետ երթիցուք զխաղաղութե՛, և զշի-
նութե՛ որ առ միմեանս: *Մ՛ի վ՟ն կե- 20
րակրոյ քակեր զգործ այ՟: ա՟մ ինչ սր՟ է.
այլ չար այնմ մարդոյ է՝ որ խղճիւն ու-
տիցէ: *Բ՟աւ է ոչ ուտել միս, և ոչ ըմ- 21
պել զգինի. և ոչ՝ որով եղբայրն քո գայ-
թագղի կա՛մ զթէ կա՛մ տկարանայ: *Դ՟ու 22
ապաքէն հաւատս ունիս, կա՛լ առանձինն
առաջի այ՟. երանի՜ որ ոչ դատիցի զանձն,
որով զընկերն փորձիցէ: *Բ՟այց որ խըղ- 23
ճէն, թէպէտ և ուտիցէ՝ դատապարտեալ
է՝ զի ոչ ըստ հաւատոյ, զի ա՟մ ինչ որ ոչ
՚ի հաւատոց է՝ մեղք են. Ա՟յլ այնմ
որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւե-
տարանիս իմում և ըստ քարոզութե՛ն յի՟ս
ք՟սի, ըստ յայտնութե՛ խորհրդոյն՝ ժամանա-
կօքն յաւիտենից լռեցելոյ, և յայտնելոյ
այժմիկ ՚ի ձեռն գրոց մարգարէականաց՝
ըստ հրամանի մշտնջենաւորին այ՟, ՚ի հնա-
զանդութի հաւատոց, յա՟մ հեթանոսս
ծանուցելոյ՝ միայնոյ իմաստնոյն այ՟, ՚ի
ձեռն յի՟ք՟սի, որում փառք յաւիտեանս.
ամէն:

## ԳԼ. ԺԵ.

ԿԳ Պարտ է մեզ որ կարողս եմք՝ զտկարու- 1
թե՛ տկարացն բառնալ. և մի՛ ան-
ձանց և եթ հաճոյ լինել: *Ա՟յլ իւրա- 2
քանչիւրոք ՚ի մէնջ ընկերին հաճոյ լիցի
՚ի բարիս՝ վ՟ն շինութե՛: *Ք՟անզի և ք՟ս ոչ 3
եթէ

digitised by A.R.A.R.@

եթէ անձին հաճոյ եղև, այլ որպ՟ և գրե-
եալ է. Նախատինք նախատչաց քոց ան-
4 կան ՚ի վ՟ր իմ։ *Բայց որ ինչ գրեցաւն՝
՚ի մեր վարդապետութի՟ն գրեցաւ. զի
համբերութ՟բ և մխիթարութ՟բ գրոց,
5 զյոյսն ընկալցուք։ *Այլ Ա՟ծ համբե-
րութե՟ն և ա՟մ մխիթարութե՟ն, տացէ ձեզ
զնոյն խորհել ը՟ն միմեանս ը՟ս յ՟ի ք՟ի.
6 *զի միաբանութ՟բ ՚ի մի բերան փառաւոր
առնիցէք զԱ՟ծ, և զՀայր տ՟ն մերոյ յ՟ի
7 ք՟ի։ *Վասն որոյ ընկալարուք զմի-
միեանս. որպ՟ և ք՟ս ընկալաւ զձեզ ՚ի փառս
8 Ա՟յ։ *Այլ ասեմ, թէ ք՟ս սպասաւոր
թլփատութե՟ն լինել՝ վ՟ս ճշմարտութե՟ն
Ա՟յ էր, առ ՚ի հաստատուն առնելոյ զա-
9 ւետիս հարցն։ *Այլ հեթանոսք վ՟ս ո-
ղորմութե՟ն փառաւոր առնեն զԱ՟ծ. որպ՟ և
գրեալ է. վ՟ս այսորիկ գոհացայց զքէն
՚ի հեթանոսս, և անուան քում սաղմոս
10 ասացից։ *Եւ դարձեալ ասէ. ուրախ
լերուք հեթանոսք ը՟ն ժողովրդեան նո՟ր։
11 *Եւ դարձեալ՝ թէ օրհնեցէք ա՟մ հե-
թանոսք զՏ՟ր, և գովեցէք զնա ա՟մ ժո-
12 ղովուրդք։ *Եւ դարձեալ եսայի ասէ.
եղիցի արմատն յեսսեայ. և որ կանգնե-
լոցն է իշխան հեթանոսաց. ՚ի նա հեթա-
13 նոսք յուսասցին։ *Այլ Ա՟ծ յուսոյ՝ լ՟ի
արասցէ զձեզ ա՟մ խնդութ՟բ և խաղաղու-
թ՟բ, առաւելուլ ձեզ յուսով զօրութ՟բ
հոգւոյն ս՟բ։

*Հաւ

digitised by A.R.A.R.@

ԻԴ *Հաստատեալ եմ և ես ինքնին եղ- 14
բարք իմ՝ վ՟ս ձեր, զի դուք լի էք բա-
րութ՟բ. լի էք ա՟մ գիտու՟թ, կարող էք
զմիմեանս խրատել։ *Այլ համարձա- 15
կագոյնս գրեցի առ ձեզ եղբարք իմ՝
փոքր 'ի շատէ, իբրև յիշեցուցանելով
ձեզ վասն շնորհացն որ տուեալ են ինձ
յա՟յ. *լինել ինձ սպասաւոր յ՟սի ք՟սի 'ի 16
հեթանոսս, ըղձակերտս առնել զաւե-
տարանն ա՟յ, զի եղիցի պատարագն հե-
թանոսաց ընդունելի՝ սրբեալ հոգւովն
սրբով։ *Ունիմ այսուհետև պարծանս 17
'ի ք՟ս յ՟ս առ ա՟ծ. *Քանզի ոչ իշխեմ խօ- 18
սել ինչ՝ զոր ոչ գործեաց ք՟ս ինև 'ի հնա-
զանդութ՟ն հեթանոսաց՝ բանիւք և ար-
դեամբք, *զօրութ՟բ նշանաց և արուես- 19
տից, զօրու՟թ հոգւոյն ա՟յ. ա՟պ ինձ յե-
րուսաղէմէ և շուրջ՝ մինչև 'ի կողմանս
իւրիկացւոց լնուլ զաւետարանն ք՟սի։
*Այնպէս առատացեալ յաւետարա- 20
նել, ոչ ուր անուանեցաւ ք՟ս, զի մի իբ-
րև յայլոց հիմանն վ՟ր շինիցեմ. այլ ա՟պ
և գրեալ է, *թէ որոց ոչ պատմեցաւ 21
վ՟ն նո՟ր՝ տեսցեն. և որոց ոչ իցէ լուեալ՝
'ի միտ առցեն։ *Վասն որոյ շատ խա- 22
փանեցայ գալ առ ձեզ։ *Բայց արդ՝ 23
ոչ ևս գոյ ինձ տեղի 'ի կողմանս յայսո-
սիկ. և անձուկ յոյժ ունիմ 'ի բազում
ամաց գալ առ ձեզ։ *Յորժամ անցա- 24
նիցեմ 'ի սպանիա, ակն ունիմ յանցա-
նելն

digitised by A.R.A.R.@

նելն առ նմ՝ տեսանել զձեզ. և 'ի ձէնջ
յուղարկիլ անդր, եթէ նախ իսկ փոքր
25 'ի շատէ ձեօք լցայց: *Բայց այժմ եր-
26 թամ յե՟ղմ պաշտել զսբ՟սն: *Քանզի
հաճոյ թուեցաւ մակեդոնացւոցն և ա-
քայեցւոցն հաղորդութի՟ ինչ առնել ը՟
27 աղքատս սրբոցն՝ որ են յե՟մ: *Հա-
ճոյ թուեցաւ, ք՟ղի և պարտապան իսկ
են ն՟ց. զի եթէ հոգևորացն ն՟ց հաղորդ-
եղեն հեթանոսք, պարտին և մարմնա-
28 ւորացն կցորդ լինել ն՟ց: *Արդ՝ զայս
կատարեալ՝ և կնքեալ զպտուղ ն՟ց, ան-
29 ցից առ ձեօք 'ի սպանիա: *Զայս գի-
տեմ, զի 'ի գալն առ ձեզ, լրութ՟բ օրհ-
նութե՟ աւետարանին ք՟ի եկից:
30 *Աղաչեմ զձեզ եղբարք 'ի ձեռն տ՟ն Ե
մերոյ յի՟ ք՟ի և սիրով հոգւոյն, պա-
տերազմակից լինել ինձ յաղօթս վ՟ս իմ
31 առ ա՟ծ. *զի ապրեցայց յապստամբա-
ցըն, որ 'ի հրէաստանի են. և պաշտօնն
իմ որ յե՟մ, ընդունելի լիցի սրբոցն.
32 *զի խնդութ՟բ եկեալ առ ձեզ 'ի կամս
33 ա՟յ, հանգեայց ը՟ ձեզ: *Եւ ա՟ծ խա-
ղաղութե՟ եղիցի ընդ ձեզ ամենեսին.
ամէն:

## ԳԼ. ԺԶ.

1 Յանձն առնեմ ձեզ զփիբէ զքոյր մեր,
որ է սպասաւոր եկեղեցւոյն կենք-
2 րեացւոյ. *զի զնա ընկալջիք 'ի տ՟ր՝ արժա-
նի

digitised by A.R.A.R.@

նի սրբոց, և վերակացու լինիջիք նմա՝
յոր պէտս իրաց և կոչեսցէ զձեզ. զի
և նա վերակացու եղև բազմաց, և ինձ
իսկ գլխովին: * Ողջոյն տաջիք Պրիս- 3
կեայ և Ակուիղայ՝ գործակցաց իմոց 'ի
քս յս. * որք ը անձին իմոյ զիւրեանց 4
պարանոցս մատուցին. զորոց ոչ ես մի-
այն գոհանամ, այլ և ամ եկեղեցիք հե-
թանոսաց: * Եւ առ տնին եկեղեցւոյն 5
նց: Ողջոյն տաջիք Եպենետեայ սիրելւոյ
իմոյ՝ որ է պտուղ ասիացւոց 'ի քս: * Ող- 6
ջոյն տաջիք Մարեայ՝ որ բզմ վաստակս
վաստակեաց 'ի ձեզ: * Ողջոյն տաջիք 7
Անդրոնիկեայ և Յունեայ ազգականաց
իմոց՝ և գերեկցաց, որք երևելիքն իսկ
են յառաքեալս. որք և յառաջ իսկ քան
զիս եղեն 'ի քս: * Ողջոյն տաջիք Ամպ- 8
ղեայ սիրելւոյ իմոյ 'ի տր: * Ողջոյն տա- 9
ջիք Ուրբանեայ գործակցի իմոյ 'ի տր, և
Ստաքեայ սիրելւոյ իմոյ: * Ողջոյն տա- 10
ջիք Ապեղեայ՝ որ ընտիրն է 'ի տր: * Ող- 11
ջոյն տաջիք նոցա, որ յԱրիստաբուղեայ
տանէ անտի են. Ողջոյն տաջիք Հերով-
դիոնեայ ազգականի իմոյ: Ողջոյն տա-
ջիք այնոցիկ՝ որք 'ի Նարկիսեայ տանէն
իցեն 'ի տր: * Ողջոյն տաջիք Տրիփոնեայ 12
և Տրիփոսեայ վաստակաւորաց 'ի տր:
Ողջոյն տաջիք Պերսիդեայ սիրելւոյ, որ
բազում վաստակս վաստակեաց 'ի տր:
* Ողջոյն տաջիք Ռուփեայ ընտրելոյ 'ի 13
տր,

digitised by A.R.A.R.@

14 տր, և մօր նորա և իմոյ ։ * Ողջոյն տա-
ջիք ասինկրիտեայ՝ փղեգոնտեայ՝ եր-
մեայ՝ պատրոբեայ՝ երմայ, և որ ը̃ նոսա
15 եղբարք են ։ * Ողջոյն տաջիք փիղողո-
գեայ՝ յուղեայ՝ ներեայ՝ և քեռ նորա. և
ողիմպեայ, և որ ը̃ նոսա սուրբք ամե-
16 նեքին են ։ * Ողջոյն տաջիք միմեանց
'ի համբոյր սրբութե̃. ողջոյն տան ձեզ
ամենայն եկեղեցիք քի̃ ։
17 * Աղաչեմ զձեզ եղբարք՝ գիտել զայն- ԿԶ
պիսիսն, որ հերձուածս և գայթագղու-
թիս առնիցեն արտաքոյ վարդապետու-
թե̃ն՝ զոր դուքն ուսայք. և խորշեցա-
18 րուք 'ի նոցանէ ։ * Զի այնպիսիքն տն̃
մերում քի̃ ոչ ծառայեն, այլ իւրեանց
որովայնի. և քաղցրաբանութե̃ և օրհ-
19 նութե̃ պատրեն զսիրտս անմեղաց ։ * Զի
ձեր հնազանդութիւն առ ամենեսեան հա-
սեալ է. և արդ 'ի ձեզ ուրախ եմ. բայց
կամիմ զձեզ իմաստունս լինել 'ի բարիս
20 և անմեղս 'ի չարիս ։ * Եւ ա̃ծ խաղա-
ղութե̃ խորտակեսցէ զսատանայ ը̃ ոտիւք
ձերովք մերձ ը̃ մերձ ։ շնորհք տն̃ մերոյ
21 յի̃ քի̃ ը̃ ձեզ ։ * Ողջոյն տայ ձեզ տիմո-
թէոս եղբայր և գործակից իմ, և ղու-
կիոս, և յասոն, և սոսիպատրոս՝ ազ-
22 գականք իմ ։ * Ողջոյն տամ ձեզ՝ և ես
տերտիոս, որ զթուղթս գրեցի 'ի տր ։
23 * Ողջոյն տայ ձեզ գայիոս ասպնջական
իմ, և ամենայն եկեղեցւոյն ։ Ողջոյն տայ



digitised by A.R.A.R.@

ձեզ Երաստոս շահապ քաղաքիս, և Կու-
արտոս եղբայր։ * Շնորհք տ՟ն մերոյ յ՟ի 24
ք՟ի ընդ ձեզ ընդ ամենեսին. ամէն։
* Այլ այնմ, որ կարողն է հաստատել 25
զձեզ ը՟ աւետարանիս իմում, և ըստ
քարոզութեանն յ՟ի ք՟ի, ը՟ յայտնութե՟
խորհրդոյ այսորիկ՝ ժամանակօք յաւի-
տենից լռեցելոյ, * և յայտնելոյ այժ- 26
միկ 'ի ձեռն գրոց մարգարէականաց՝ ը՟
հրամանի մշտնջենաւորին ա՟յ, 'ի հնա-
զանդութիւն հաւատոց. յամենայն հե-
թանոսս ծանուցելոյ, * միայնոյ իմաստ- 27
նոյն ա՟յ 'ի ձեռն յ՟ի ք՟ի. նմա պատիւ
և փառք յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Առ Հռովմայեցիս գրեցաւ 'ի Կորնթոսէ 'ի ձեռն Փիբեայ սարկաւագի ։

digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԳԼ. Ա.

1 Պօղոս կոչեցեալ առաքեալ յի՟ի ք՟ի ԱՌ
կամօքն ա՟յ, եւ սոսթենէս եղբայր.
2 *եկեղեցւոյդ ա՟յ որ է ՚ի կորնթոս՝ նուի-
րելոց ՚ի ք՟ս յ՟ս, կոչեցելոց սրբոց, ամե-
նեքումբք հանդերձ որք կարդան զա-
նուն տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի յամենայն տե-
3 ղիս նոցա՝ եւ մեր։ *Շնորհք ընդ ձեզ
եւ խաղաղութի յա՟յ հօրէ մերմէ՝ եւ ՚ի
4 տ՟նէ յ՟է ք՟է։ *Գոհանամ զա՟յ իմոյ
յա՟մ ժամ վ՟ս ձեր՝ ՚ի վ՟ր շնորհացն ա՟յ
5 որ տուեալ են ձեզ ՚ի ք՟ս յ՟ս. *զի յա՟մի
մեծացարուք դուքնովաւ՝ ա՟մ բանիւ եւ
6 ա՟մ գիտութ՟բ. *որ՟պ վկայութի՟ն իսկ ա՟յ
7 հաստատեցաւ ՚ի ձեզ. *զի դուք մի՛ նը-
ւազիցիք՝ եւ մի՛ իւիք շնորհօք, ակն կա-
8 լեալ յայտնութե՟ տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի. *որ
եւ հաստատեսցէ զձեզ մինչեւ ՚ի կատա-
րած՝ անարատս՝ յօրն տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի։
9 *Հաւատարիմ է ա՟ծ, որով կոչեցարուք
՚ի

digitised by A.R.A.R.@

՚ի հաղորդութի̃ որդւոյ նորա յի̃ի ք̃ի
տ̃ն մերոյ։
*Աղաչեմ զձեզ եղբարք անուամբ տ̃ն 10
Ա.Զ մերոյ յի̃ի ք̃ի. զի զնոյն բան ունիցիք
ամենեքեան, եւ մի իցեն ՚ի ձեզ հերձ-
ուածք. ք̃զի էիք հաստատեալք ՚ի նոյն
միտս եւ ՚ի նոյն հանճար։ *Ազդ եղեւ 11
ինձ վ̃ն ձեր եղբարք՝ ՚ի քղուացւոց ան-
տի, թէ հակառակութիւնք են ՚ի ձեզ։
*Այս արդ ասեմ իսկ, եթէ իւրաքան- 12
չիւրոք ՚ի ձէնջ ասէ. ես պօղոսեան եմ,
եւ միւսն՝ եթէ ես ապողոսեան, եւ միւ-
սըն՝ եթէ ես կեփայեան. եւ միւսն՝ եթէ
ես ք̃եան։ *Իսկ արդ բաժանեա՞լ ինչ 13
իցէ ք̃ս. միթէ պօղոս ՚ի խա՞չ ելեալ իցէ
վ̃ն ձեր, կա՞մ յանուն պօղոսի՞ մկրտեցա-
րուք։ *Գոհանամ զա̃յ իմոյ՝ զի ոչ զոք 14
՚ի ձէնջ մկրտեցի, բայց միայն զկրիսպոս՝
եւ զգայիոս. զի մի ոք ասիցէ, *թէ յիմ 15
անուն մկրտեցայրուք։ *Հալ ետու կնիք 16
եւ տանն ստեփաննեայ. եւ զայլ ոք ոչ
գիտեմ ամենեւին՝ թէ մկրտեցի։ *զի 17
ոչ առաքեաց զիս ք̃ս մկրտել՝ այլ աւե-
տարանել. ոչ ճարտարութ̃բ բանից, զի
մի ընդունայն լիցի խաչն ք̃ի։ *Զի 18
ճառ խաչին՝ կորուսելոցն յիմարութի̃ է.
այլ փրկելոցս մեզ՝ զօրութի̃ ա̃յ։ *զի 19
գրեալ է. կորուսից զիմաստութի̃ իմաստ-
նոց, եւ զխորհուրդս խորհրդականաց
արհամարհեցից։ *Ո՞ւր իմաստուն, ո՞ւր 20
դպիր,

digitised by A.R.A.R.@

դպիր , ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ .
ոչ ապաքէն յիմարեցոյց ա՟ծ զիմաստութի՟ն
21 աշխարհիս այսորիկ : * Քանզի իմաս-
տութե՟ն ա՟յ ոչ ծանեաւ աշխարհ իմաստու-
թե՟ն զա՟ծ . հաճեցաւ ա՟ծ յիմարութ՟բ քա-
րոզութե՟ն ապրեցուցանել զհաւատացեալս :
22 * Իսկ որովհետեւ հրեայքն նշան հայցեն , Բ Կ
23 և հեթանոսք զիմաստութի՟ն խնդրեն . * մեք
քարոզեսցուք զխաչելեալն ք՟ս , հրէից
գայթագղութի՟ , և հեթանոսաց յիմա-
24 րութիւն . * բայց նոցին իսկ կոչեցելոցն
հրէից և հեթանոսաց , զք՟ս՝ ա՟յ զօրութի՟
25 և ա՟յ իմաստութի՟ : * Զի յիմարն ա՟յ ի-
մաստնագոյն է քան զմարդիկ . և տկարն
26 ա՟յ զօրագոյն է քան զմարդիկ : * Թէ-
պէտ և զձեր իսկ կոչումն տեսէք եղ-
բարք , զի ոչ բա՟զ իմաստունք ը՟ստ մարմ-
նոյ , և ոչ բազում հզօրք , և ոչ բազում
27 ազնուականք . * այլ զյիմարս աշխար-
հիս ընտրեաց ա՟ծ , զի յամօթ արասցէ
զիմաստունս . և զտկարս աշխարհիս ընտ-
րեաց ա՟ծ , զի յամօթ արասցէ զհզօրս .
28 * և զանտոհմս աշխարհի և զարհամար-
հեալս ընտրեաց ա՟ծ՝ և զոչինչսն , զի զէ-
29 սըն ի՟մն խափանեսցէ . * ո՟չ զի մի՟ պար-
30 ծեսցի ա՟մ մարմին առաջի ա՟յ : * Զի ՚ի
նմանէ դուք էք ՚ի ք՟ս յ՟ս , որ եղև մեզ
իմաստութի՟ յա՟յ , արդարութի՟ և սրբու-
31 թի՟ և փրկութի՟ . * զի ո՟րպ և գրեալ է .
որ պարծին՝ ՚ի տ՟ր պարծեսցի :

ԳԼ.

digitised by A.R.A.R.@

## ԳԼ. Բ.

Եւ ես թէպէտ և եկի առ ձեզ եղբարք՝ 1
ոչ ըստ առաւելութեան ինչ բանից իմաս-
տութեան պատմել ձեզ զվկայութիւն Աստուծոյ: * Զի 2
ոչ եթէ ՚ի մտի եդի գիտել ինչ ՚ի ձեզ՝
բայց միայն զՅիսուս Քրիստոս, և զնոյն ՚ի խաչ ե-
լեալ: * Եւ ես տկարութեամբ և երկիւղիւ և 3
դողութեամբ բազմաւ եղէ առ ձեզ. * և բանն 4
իմ և քարոզութիւն, ոչ պատիր բանիւք ի-
մաստութեան՝ այլ արդեամբք հոգւոյն և
զօրութեամբ. * զի հաւատք ձեր մի իցեն ի- 5
Վ. Ձ. իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ:
* Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս. 6
զիմաստութիւն՝ ոչ զաշխարհիս այսորիկ, և
ոչ զիշխանաց աշխարհիս այսորիկ զխա-
փանելեացս. * այլ խօսիմք զԱստուծոյ իմաս- 7
տութիւն ծածուկ խորհրդով, զոր յառաջ
քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած ՚ի
փառս մեր. * զոր ոչ ոք յիշխանաց աշխար- 8
հիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծա-
նուցեալ ոչ արդեօք զՏէրն փառաց ՚ի խաչ
հանէին: * Այլ որպէս և գրեալ է. զոր 9
ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ՚ի
սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց
Աստուած սիրելեաց իւրոց:
ԲԴ * Այլ մեզ յայտնեաց Աստուած հոգւովն իւ- 10
րով. զի հոգին զամենայն քննէ՝ և զխորս Աստուծոյ:
* Զի ո՞ ոք ՚ի մարդկանէ գիտէ ինչ ըզ- 11
մարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն որ ՚ի
նմա.

digitised by A.R.A.R.@

նմա. նոյնպէս և ոչ զա՟յն ոք գիտէ՝ ե-
12 թէ ոչ Հոգին ա՟յ ։ *Այլ մեք ոչ եթէ
զհոգի աշխարհիս առաք՝ այլ զհոգին որ
յա՟յ. զի ծանիցուք զայն՝ որ յա՟յն՝ շնոր-
13 հեցաւ մեզ։ *Եւ զոր խօսիմքս՝ ոչ եթէ
մարդկեղէն ուսմամբ ճարտարութե՟ բա-
նից, այլ վարդապետութե՟ հոգւոյն ը՟ն հո-
14 գևորս զհոգևորսն համեմատեմք։ *Ք՟զի
շնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն ա՟յ՝
զի յիմարութի՟ է նմա. և ոչ կարէ գի-
15 տել՝ եթէ հոգեպէս քննիցի։ *Իսկ հո-
գևորն քննէ զա՟մ, և ինքն յումեքէ ոչ
16 քննի։ *Իսկ արդ՝ ո՞վ գիտաց զմիտս տ՟ն,
որ և խրատտու լինիցի նմա։ այլ մեք
զմիտս ք՟ի ունիմք։

## ԳԼ. Գ։

1 Եւ ես եղբարք՝ ոչ կարացի խօսել ը՟ն
ձեզ իբրև ը՟ն հոգևորս՝ այլ իբրև ը՟ն
2 մարմնաւորս։ *Իբրև տղայոց 'ի ք՟ս,
կաթն ջամբեցի ձեզ՝ և ոչ կերակուր,
զի ոչ ևս կարէիք. նա և արդ իսկ ոչ կա-
3 րէք. ք՟զի դեռ մարմնաւոր էք։ *Ուր և
արդ են իսկ 'ի ձեզ հեռ և նախանձ. ո՞չ
ապաքէն մարմնաւոր էք՝ և ը՟ս մարդկան
4 գնայք։ *Յորժամ ասէ ոք 'ի ձէնջ՝ ես
պօղոսեան եմ, և միւսն՝ թէ ես ապողո-
սեան, ո՞չ մարդիկ էք. իսկ արդ՝ ո՞վ է
5 պօղոսն, կա՟մ ո՞վ է ապողոսն։ *Պաշտօ-
նեայք՝ որովք հաւատացէքն, և իւրա-
քան-

digitised by A.R.A.R.@

քանչիւր ո՛ք և տր եա։ * Ես տնկեցի, Ա- 6
պողոս ջուր ետ, այլ ա՛ծ աճեցոյց։ * Արդ- 7
սուհետև՝ ո՛չ այն ոք ինչ է՝ որ տնկեաց,
և ո՛չ այն՝ որ ջուրն ետ. այլ որ աճեցոյցն
ա՛ծ։ * Որ տնկեացն և որ զջուրն ետ՝ մի 8
են. բայց իւրաքանչիւրոք զիւր վարձս
առնուցու ըստ իւրում վաստակոց։ * Զի 9
այ գործակից եմք, այ արդիւն էք, այ
շինած էք։ * Ըստ շնորհացն այ որ տու- 10
եալ են ինձ, իբրև իմաստուն ճարտա-
րապետ հիմն եդի. բայց այլ է որ շինէն.
այլ իւրաքանչիւրոք զգո՛յշ լիցի՝ թէ ո՛րպ
շինիցէ։ * Զի հիմն այլ ոք ո՛չ կարէ դը- 11
Վ. նել քան զեդեալն՝ որ է յս քս։
* Եթէ ոք շինէ 'ի վե՛ր հիմանս այսորիկ՝ 12
ոսկի արծաթ՝ ականս պատուականս՝
փայտ խոտ եղէգն, * իւրաքանչիւր գոր- 13
ծըն յայտնելոց է. զի օրն ընտրեսցէ, զի
հրով յայտնելոց է. * և զիւրաքանչիւր 14
գործն զի՛արդ և իցէ՝ հուրն փորձեսցէ։
* Եթէ ուրուք գործն զոր շինեաց՝ կաց- 15
ցէ, վարձս առցէ. և եթէ ուրուք գործն
այրեսցի՝ տուժեսցի, բայց ինքն կեցցէ.
այլ այնպէս՝ ո՛րպ թէ 'ի հուր։ * Ո՞չ գի- 16
տէք՝ եթէ տաճար էք այ՝ և հոգի այ բը-
նակեալ է 'ի ձեզ։ * Եթէ ոք զտաճար 17
այ ապականէ, ապականեսցէ զնա ա՛ծ.
զի տաճար այ սուրբ է, որ էք դուք։
* Մի՛ ոք զանձն խաբեսցէ. եթէ ոք կա- 18
մեսցի 'ի ձէնջ իմաստուն լինել յաշխար-
հիս

digitised by A.R.A.R.@

հիս յայսմիկ, յիմար լիցի՝ զի եղիցի ի-
19 մաստուն: * Զի իմաստութիւն աշխարհիս
այսորիկ՝ յիմարութիւն է առաջի Աստուծոյ. քանզի
գրեալ է՝ թէ որ ըմբռնէ զիմաստունս
20 ՚ի խորագիտութեան իւրեանց: * Եւ դարձեալ՝
թէ Տէր ճանաչէ զխորհուրդս իմաստնոց՝
21 զի են ընդունայն: * Այսուհետեւ մի ոք
22 պարծեսցի ՚ի մարդկանէ: * Զի ամե-
նայն ինչ ձեր է. եթէ Պօղոս, եթէ Ա-
պօղոս, եթէ Կեփաս, եթէ աշխարհ, ե-
թէ կեանք, եթէ մահ, եթէ որ կանս,
եթէ հանդերձեալքն. ամենայն ինչ ձեր է.
23 * դուք Քրիստոսի, Քրիստոս Աստուծոյ:

## ԳԼ. Դ.

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ,
իբրեւ զպաշտօնեայս Քրիստոսի՝ եւ հազա-
2 րապետս խորհրդոցն Աստուծոյ: * Այրդ՝ խնդ-
դիր է ՚ի մէջ հազարապետաց՝ եթէ ոք
3 հաւատարիմ գտցի: * Այլ ինձ եւ այս
անարգանք են, եթէ ՚ի ձէնջ դատեցայց՝
կամ բնաւ իսկ ՚ի մարդկանէ. նաեւ զանձն
4 իմ ոչ քննեմ: * Զի ոչինչ գիտեմ զան-
ձին իմոյ. այլ ոչ եթէ այսու արդարա-
5 նամ, զի որ քննէն զիս՝ Տէր է: * Այսու-
հետեւ մի յառաջ քան զժամանակն դատիք.
մինչեւ եկեսցէ Տէր, որ լուսաւոր առնիցէ
զգաղտնիս խաւարի, եւ յայտնիցէ զխոր-
հուրդս սրտից. եւ ապա իւրաքանչիւր
6 գովութիւն եղիցի յԱստուծոյ: * Զայս եղբարք՝

7 * առա-

digitised by A.R.A.R.@

առակեցի յանձն իմ և յապողոս վն ձեր.
զի 'ի մէնջ ուսջիք՝ մի ինչ առաւել քան
զգրեալսն իմանալ. զի մի այր քան զըն֊
կեր հպարտանայցէք 'ի վերայ ընկերին:
*Իսկ արդ ո՞վ է՝ որ քննիցէ զքեզ. զի՞նչ 7
ունիս՝ զոր ոչ իցէ առեալ. և եթէ ա֊
ռեր՝ զի՞ պարծիս իբրև զչառեալ: *Ար֊ 8
դէն իսկ յագեալ իցէք՝ և արդէն մեծա֊
ցարուք, առանց մեր թագաւորեցիք. և
երանի թէ թագաւորէիք՝ զի և մեք ը
ձեզ թագաւորէաք: *Ինձ այսպէս թուի՝ 9
եթէ զմեզ զառաքեալս յետնորդս արար
ած՝ իբրև զմահապարտս. զի տեսիլ ե֊
ղեաք աշխարհի, և հրեշտակաց և մարդ֊
կան: *Մեք յիմարք վն քսի, և դուք 10
իմաստունք 'ի քս. մեք տկարք՝ և դուք
հզօրք. դուք փառաւորեալք՝ և մեք ա֊
նարգք: *Մինչև ցայսօր ժամանակի՝ 11
և քաղցեաք և ծարաւեցաք և մերկ գնա֊
ցաք և կափահարեցաք և անհանգիստ
եղեաք. *և աշխատեցաք ձեռօք մե֊ 12
րովք. բամբասէին զմեզ՝ օրհնէաք. հա֊
լածէին՝ յանձն առնուաք. *հայհոյէին՝ 13
աղաչէաք. իբրև առականշաւակի եղեաք
ամ աշխարհի. ամենեցուն փարելի լի֊
նել մինչև ցայժմ: *Ոչ եթէ յամօթ 14
ինչ առնելով զձեզ՝ գրեմ զայս, այլ իբ֊
րև զորդիս սիրելիս խրատեմ: *Թէպէտ 15
և բիւր դաստիարակս ունիցիք 'ի քս՝ այլ
ոչ եթէ բազում հարս. զի 'ի քս յս ա֊

ւե֊

digitised by A.R.A.R.@

16 ւետարանաւն ես ծնայ զձեզ : * Արդ՝
աղաչեմ զձեզ նմանօղք ինձ եղիջի՛ք, (որպէս
17 և ես Քրիստոսի :) * Վասն այնորիկ առաքեցի առ
ձեզ զՏիմոթէոս, որ է իմ որդի սիրե-
լի՝ և հաւատարիմ ՚ի Տէր. որ յիշեցուս-
ցէ ձեզ զճանապարհս իմ, որ ՚ի Քրիստոս Յիսուս.
որպէս և ամենայն ուրեք՝ յամենայն եկեղեցիս ուսու-
18 ցանեմ : * Որպէս թէ ես չիցեմ գալոց
19 առ ձեզ՝ ոմանք հպարտացան : * Այլ
եկից հուպ ընդ հուպ՝ եթէ Տէր կամեսցի.
և ՚ի միտ առից ոչ զբանս հպարտացելոցն,
20 այլ զզօրութիւն : * Զի ոչ եթէ բանիւք է
21 արքայութիւն Աստուծոյ, այլ զօրութեամբ : * Արդ՝
ո՞չ կամիք՝ գաւազանա՞ւ եկից առ ձեզ,
եթէ սիրով հոգւոյն՝ հեզութեամբ և ար-
դարութեամբ և խոնարհութեամբ :

## ԳԼ. Ե :

1 Բնաւ և անուանի իսկ ՚ի ձեզ ընդ է՞ր
պոռնկութիւն, և այնպիսի պոռնկութիւն՝
որ ոչ և ՚ի հեթանոսս, որպէս թէ զկին հօր
2 իւրոյ ունել : * Եւ դուք հպարտացեալ
էք. և ոչ առաւել սգացարուք, զի բարձ-
ցի ՚ի միջոյ ձերմէ՝ որ զգործն զայն գոր-
3 ծեաց : * Զի ես թէպէտ մարմնով մե-
կուսի եմ, սակայն հոգւով մերձ եմ.
բայց արդէն իսկ իբրև ՚ի մօտոյ ընտրե-
4 ցի. զայն՝ որ այնպէսն գործեաց. * յա-
նուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ժողովել ձեզ
՚ի միասին և իմով հոգւովս զօրութեամբն
հան-

digitised by A.R.A.R.@

'հանդերձ տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի, * մատնել 5
զայնպիսին սատանայի 'ի սատակումն
մարմնոյ. զի ոգին ապրեսցի յաւուրն տ՟ն
մերոյ յ՟ի ք՟ի: * Ո՛չ բարւոք են պար- 6
ծանքդ ձեր. ո՞չ գիտէք՝ եթէ փոքր մի
խմոր զա՟մ զանգուածն խմորէ: * Սրբե- 7
ցէք 'ի բաց զհին զխմորն՝ զի եղիջիք նոր
զանգուած, ո՟պ էքդ անխմորք. քանզի
զատիկ մեր զենաւ ք՟ս: * Այսուհետև 8
արասցուք տօնս. մի 'ի խմորն հին, և մի
'ի խմորն չարութե՟ն և անզգամութե՟ն. այլ
յանխմորս սրբութե՟ն և ճշմարտութե՟ն:
ԲԺ * Գրեցի ձեզ 'ի թղթի այդր չխառնա- 9
կել ը՟ պոռնիկս. * և ո՛չ եթէ ընդ պոռ- 10
նիկս աշխարհիս այսորիկ՝ կա՟մ ը՟ ագահս
և ը՟ յափշտակօղս՝ կա՟մ ը՟ կռապաշտս.
ապա թէ ոչ՝ պարտ էիք և յաշխարհէ
իսկ ելանել: * Բայց արդ՝ գրեցի ձեզ 11
չխառնակել. եթէ ոք եղբայր անուա-
նեալ, կա՟մ պոռնիկ իցէ կա՟մ կռապաշտ՝
կա՟մ ագահ կա՟մ բամբասօղ՝ կա՟մ արբեցօղ՝
կա՟մ յափշտակօղ, ը՟ այնպիսումն և հաց
մի՛ ուտել: * Զի՞ կայ իմ և զարտա- 12
քինսն դատելոյ. ոչ ապաքէն դուք զներ-
քինսդ դատիցիք. * և զարտաքինսն ա՟ծ 13
դատեսցի. բարձէք զչարն 'ի միջոյ ձերմէ:

## ԳԼ. Զ.

Իշխէ՞ ոք 'ի ձէնջ՝ եթէ իրք ինչ իցեն ը՟ 1
ընկերի իւրում, դատել առաջի անօ-

իրա-

digitised by A.R.A.R.@

2 իրաւաց, և ոչ առաջի սրբոց : * Եթէ
ոչ գիտէք՝ զի սուրբք զաշխարհ դատին.
և եթէ ձեօք դատի աշխարհ՝ ապա ոչ էք
3 արժանի անարգ ատենից : * Ոչ գիտէք
եթէ զհրեշտակս դատիմք, թող թէ
4 զերկրաւորս : * Օ երկրաւոր ատեանս ե-
թէ յանձն առնուցուք, զանարգսն եկե-
5 ղեցւոյ դատաւորս նստուցէք : * Առ ամօ-
թոյ ձերոյ ասեմ. այնչափ ոչ գոյ ոք ի-
մաստուն 'ի ձեզ, որ կարիցէ իրաւունս
6 ընտրել 'ի մէջ եղբօր իւրոյ : * այլ եղ-
բայր ընդ եղբօր դատի և զայն՝ 'ի մէջ
7 անհաւատից : * Իսկ արդ՝ ամենևին իսկ
վատթարութիւն է 'ի ձեզ, զի դատաս-
տանք իսկ գոն 'ի միջի ձերում. ընդէր
ոչ դուք զրկիք և ոչ դուք առաւել նե-
8 ղիք. * այլ դուք զրկէք և նեղէք, և
9 այդ՝ զեղբարս ևս : * Եթէ ոչ գիտէք՝
զի անիրաւք զարքայութիւն այ ոչ ժառան-
գեն. մի խաբիք՝ ոչ պոռնիկք, ոչ կռա-
10 պաշտք, ոչ շունք, * ոչ իգացեալք, ոչ
արուագէտք, ոչ գողք, ոչ ագահք՝ ոչ ար-
բեցողք, ոչ բամբասողք և ոչ յափշտա-
կողք զարքայութիւն այ ոչ ժառանգեն :
11 * Եւ դուք այնպիսիք ոմանք էիք. այլ
լուացարուք՝ այլ սրբեցարուք՝ այլ ար-
դարացարուք յանուն տն մերոյ յի քի,
և 'ի հոգւոյն այ մերոյ :
12 * Ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ ոչ ամ Գ.Կ
ինչ օգուտ է. ամ ինչ ինձ մարթ է, այլ
ոչ

digitised by A.R.A.R.@

ոչ եթէ ես ՚ի իշխանութ՟ ուրուք լինիցիմ։
* Կերակուր որովայնի, եւ որովայն կե- 13
րակրոյ. այլ ա՟ծ զսա եւ զն՟ս խափանես-
ցէ. բայց մարմին ոչ պոռնկութե՟ն՝ այլ
տ՟ն, եւ տ՟ր մարմնոյ։ * Այլ ա՟ծ՝ որ եւ 14
զտ՟րն յարոյց, եւ զմեզ յարուսցէ զօրութ՟
իւրով։ * Ոչ գիտէք՝ եթէ մարմինք ձեր 15
անդամք են ք՟սի. արդ՝ առեալ զանդամս
ք՟սի, առնիցեմք անդամս պոռնկի. քա՛ւ
լիցի։ * Եթէ ո՞չ գիտէք՝ զի որ մերձե- 16
նայ ՚ի պոռնիկ՝ մի մարմին է. եղիցին,
ասէ, երկոքեան ՚ի մարմին մի։ * Եւ որ մեր- 17
ձենայ ՚ի տ՟ր՝ մի հոգի է։ * փախերուք 18
՚ի պոռնկութ՟է։ * Զամ՟ մեղս՝ զոր եւ գոր-
ծէ մարդ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ
որ պոռնկին՝ յիւր մարմինն մեղանչէ։
* Եթէ ո՞չ գիտէք՝ զի մարմինք ձեր տա- 19
ճար են հոգւոյն ս՟րբ՝ որ է ՚ի ձեզ՝ զոր ու-
նիք յա՟յ. եւ չէք անձանց իր, * քանզի 20
գնոց գնեցայք. փառաւոր արարէք զա՟ծ
՚ի մարմինս ձեր եւ յոգիս, որ է ա՟յ։

## Գլ. Է։

Այլ վ՟ս որոյ գրեցէք առ իս, բարւոք 1
է մարդոյ ՚ի կնոջ մարդ չմերձենալ։
* Բայց վասն պոռնկութե՟ իւրաքանչիւր- 2
ոք զիւր կին կալցի. եւ իւրաքանչիւրոք
կին զիւր այր կալցի։ * Կնոջ՝ այր իւր 3
զպարտսն հատուսցէ. նոյնպէս եւ կինն՝
առն իւրում։ * Զի կին մարմնոյ իւրում 4
ոչ

digitised by A.R.A.R.@

ոչ իշխէ՝ այլ այրն. նոյնպէս և այրն իւ-
5 րում մարմնոյ ոչ իշխէ՝ այլ կինն: *Մի՛ է-
զրկէք զմիմեանս. բայց եթէ ինչ՚ի միա-
բանութէ առ ժամանակ մի, զի ուխտիցին
պարապիցէք, և դարձեալ ՚ի նոյն դարձ-
ջիք, զի մի փորձեսցէ զձեզ սատանայ
6 վս անխառնութե ձերոյ: *Զայս ասեմ
7 ներելով՝ և ոչ հրաման տալով. *քանզի
կամիմ եթէ ամ մարդ լինէր իբրև զիս.
այլ իւրաքանչիւրոք զիւր շնորհս ունի յայ
8 ոմն այսպէս և ոմն այնպէս: *Բայց ամու-
րեացն և այրեացն ասեմ, լաւ է նց ե-
9 թէ կայցեն իբրև զիս. *ապա թէ ոչ ու-
նիցին ժոյժ՝ ամուսնասցին. զի լաւ է ա-
10 մուսնանալ՝ քան զջեռնուլ: *Այլ կանամ-
բեացն պատուիրեմ, ոչ ես՝ այլ տր. կնոջ
11 յառնէ մի մեկնել: *Ապա եթէ մեկ-
նեսցի, անայր մնասցէ՝ կմ անդրէն ընդ
առն իւրում հաշտեսցի. և առն՝ զկին
իւր մի թողուլ: Վ.Ջ.
12 *Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ
տր. եթէ ոք եղբայր՝ կին ունիցի անհա-
ւատ, և նմ հաճոյ իցէ բնակել ընդ նմ՝ մի
13 թողցէ զնա: *Եւ կին, որ ունիցի զայր
անհաւատ՝ և նմ կամ իցէ բնակել ընդ նմ՝
14 մի թողցէ զայրն. *զի սրբեալ է այրն ան-
հաւատ կնաւն, և սուրբ է կինն անհա-
ւատ արամբն. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր
15 պիղծ են. բայց այժմ սուրբ են: *Ա-
պա եթէ անհաւատն մեկնեսցի, մեկ-
նես-

digitised by A.R.A.R.@

նեացի. զի ոչի՛նչ հարկ 'ի վերայ կայ եղ-
բօրն կամ քեռն՝ յայնպիսի իրս. ք՟զի 'ի խա-
ղաղութի՛ւն կոչեաց զմեզ ա՟ծ: * Զի՞ գի- 16
տես կի՛ն դու՝ եթէ զայրն քո ապրեցուս-
ցես. կամ զի՞ գիտես այր դու՝ եթէ զկի՛ն
քո ապրեցուսցես: *Եթէ ոչ՝ իւրաքանչիւր 17
ումեք ո՟պ և բաժանեաց տ՟ր, զիւրաքան-
չիւրոք ո՟պ և կոչեաց ա՟ծ՝ այնո՟պ գնասցէ.
և այսո՟պ ը՟ ա՟մ եկեղեցիս պատուէր տամ:
* Թլփատեա՛լ ոք կոչեցաւ՝ մի՛ ցանկասցի 18
անթլփատութե՛ան. յանթլփատութե՟ ոք
կոչեցաւ՝ մի՛ թլփատեսցի. * զի թլփա- 19
տութի՟ւն ոչի՛նչ է՝ և անթլփատութի՟ւն ոչի՛նչ.
այլ պահպանութի՟ւն ա՟յ պատուիրանացն:
*Իւրաքանչիւրոք յոր կոչումն կո- 20
չեցաւ՝ 'ի նմին կացցէ: *Ծառայ կոչե- 21
ցար՝ մի՛ փոյթ լիցի քեզ. այլ թէ և կա-
րիցես ազատ լինե՛լ՝ քեզ այնո՟պ լաւ իցէ:
* զի որ 'ի տ՟ր կոչեցեալ է ծառայն՝ ա- 22
զատ տ՟ն է. նոյնո՟պ և որ ազատն կոչե-
ցեա՛լ է՝ ծառայ ք՟սի է: *Գնոց գնեցայք՝ 23
մի՛ լինիք ծառայք մարդկան: *Իւրաքան- 24
չիւրոք՝ յոր կոչումն կոչեցաւ՝ եղբարք,
'ի նմին կացցէ առաջի ա՟յ:
գ.դ. * Իսկ վասն կուսանաց հրամա՛ն ինչ 'ի 25
տ՟նէ ոչ ունիմ. բայց խրատ տամ՝ ո՟պ
ողորմելոյ ուրուք 'ի տ՟նէ, հաւատարիմ
լինել: * Համարիմ՝ թէ այնո՟պ լաւ ի- 26
ցէ. բայց վ՟ս վտանգին որ 'ի վ՟ր կայ՝ բար-
ւոք է մարդոյ՝ թէ այսպէս իցէ: * Կա- 27
պեալ

digitised by A.R.A.R.@

պեալ ես 'ի կին, մի՛ խնդրեր արձակել.
արձակեալ ես 'ի կնոջէ, մի՛ խնդրեր կին։
28 * Օ ի եթէ ամուսնանայցես՝ ոչ մեղար.
և եթէ ամուսնանայցէ կոյսն՝ ոչ մեղաւ,
բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այնպի-
29 սիքն. այլ ես խնայեցի 'ի ձեզ։ * Բայց
զայս ասեմ եղբարք՝ եթէ ժամանակս
կարճեալ է այսուհետև. զի որ ունիցին
30 կանայս՝ որպէս թէ չունիցին. * և որ լան-
ցեն՝ որպէս թէ ոչ լայցեն. և որ խնդանն՝
որպէս թէ չխնդայցեն. և որ գնենն՝ որպէս թէ
31 չունիցին. * և որ վարենն զաշխարհս՝ որպէս
թէ չվայելիցեն. զի անցեալ է վայելչու-
32 թիւն աշխարհիս այսորիկ։ * Այլ կամիմ
զձեզ անհոգս լինել. զի որ անկինն է՝
հոգայ զՏեառն, թէ որպէս հաճոյ լիցի Տեառն.
33 * և որ կանամբին է, հոգայ զաշխարհիս՝
34 թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւրում։ * Նոյն-
ահա մեկնեցան 'ի միմեանց առնականն
և կոյսն. զի կոյսն հոգայ զՏեառն՝ զի լիցէ
սուրբ հոգւով և մարմնով, և առնականն հո-
գայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի առն
35 իւրում։ * Այլ զայս վասն ձերոյ օգտի ա-
սեմ. ոչ եթէ խեղդ ինչ արկանեմ ձեզ,
այլ վասն պարկեշտութեան՝ և հպատակութեան
Տեառն առանց զբաղմանց։

36 * Ապա թէ ոք ամօթ համարեսցի վասն ԳԶ
կուսին իւրոյ՝ եթէ իցէ ելեալ ի չափ,
և այնպէս ինչ պարտ իցէ լինել. զոր կա-
մեսցի արասցէ, ոչ մեղանչէ՝ ամուսնա-
ցի։

digitised by A.R.A.R.@

ցի: * Իսկ որ հաստատեալ է 'ի սրտի իւ- 37
րում, և վտանկ ինչ ոչ իցէ նմա, իշխանու-
թի՟ ունի 'ի վ՟ր կամաց իւրոց. և զայն
ընտրեաց 'ի սրտի իւրում պահել զկոյսն
իւր, բարւոք առնէ: * Եւ որ ամուսնա- 38
ցուցանէ զկոյսն իւր՝ բարւոք առնէ. և
որ ոչ ամուսնացուցանէ՝ լաւ ևս առնէ:
* Կին կապեալ է՝ ցորքան ժամանակս 39
կենդանի է այր նո՟ր. ապա եթէ ննջիցէ
այր նո՟ր, ազատ է՝ ում կամիցի ամուսնա-
նալ. այլ միայն տ՟րամբ: * Բայց երա- 40
նելի ևս է՝ թէ այնպէս կացցէ ը՟ս իմում
խրատու. ես այսպէս համարիմ, եթէ
և յիս իցէ հոգի ա՟յ:

## ԳԼ. Ը.

Այլ վ՟ս զոհից կռոցն գիտեմք՝ եթէ ա- 1
մենեքեան գիտութի՟ ունիմք: գիտութի՟
հպարտացուցանէ, այլ սէր շինէ: * Եւ- 2
թէ ոք կամիցի գիտել ինչ, չև ևս գիտաց՝
որպէս արժանն էր գիտել: * Բայց որ 3
սիրէ զա՟ծ, նա է տեղեկացեալ 'ի նմանէ:
* Այլ վ՟ս կերակրոցն զոհելոց՝ գիտեմք 4
եթէ ոչինչ իսկ կուռքդ են յաշխարհի.
զի չիք ոք ա՟ծ բաց 'ի միոյն: * Զի թէ- 5
պէտ և իցեն անուանեալ աստուածք՝ ե-
թէ յերկինս և եթէ յերկրի. որպէս և
են աստուածք բազումք՝ և տեարք բազումք:
* այլ մեզ մի է ա՟ծ հայր՝ յորմէ ամե- 6
նայն, և մեք 'ի նա, և մի տ՟ր յ՟ս ք՟ս՝ որով
ամե-

digitised by A.R.A.R.@

ամենայն, և մեք նովաւ : Վ. Զ.
7 * Այլ ոչ յամենեսին գիտութի՟ է, ո-
մանք առ խղճի մտաց մինչև ցայժմ ըզ-
կռոցն իբրև զզոհեալ ուտեն. և խիղճ
մտացն նոցա՝ քանզի տկար է, պղծի :
8 * Այլ կերակուր զմեզ առաջի այ՟ ոչ կա-
ցուցանէ. ոչ եթէ չուտեմք՝ պակասիմք
ինչ, և ոչ եթէ ուտեմք՝ առաւելումք
9 ինչ: * Բայց զգոյշ լերուք՝ գուցէ իշխա-
նութի՟դ ձեր այդ՝ գայթագղութի՟ լինի-
10 ցի տկարացն : * Եթէ ոք տեսանիցէ ըզ-
քեզ՝ որ զգիտութի՟դ ունիս՝ բազմեալ 'ի
մեհենի՝ ո՞չ ապա խիղճ մտաց նորա, որ
տկարութ՟ զգածեալ է՝ անդրէն շինիցի ու-
11 տել զզոհեալսն. * և կորնչիցի տկար եղ-
բայրն 'ի քում գիտութեանն, վ՟ն որոյ ք՟ս
12 մեռաւ : * և այնպէս յանցուցեալ յեղ-
բարս, և զխիղճ մտաց տկարացն զայրա-
13 ցուցեալ, 'ի ք՟ս մեղանչէք : * Վ՟ն որոյ ե-
թէ կերակուր գայթագղեցուցանէ զեղ-
բայրն իմ, ոչ կերայց միս յաւիտեան, զի
մի զեղբայրն իմ գայթագղեցուցից :

## ԳԼ. Թ.

1 Ո՞չ ապաքէն ազատ եմ, ոչ ապաքէն ա-
ռաքեալ եմ, ոչ ապաքէն զտ՟ր մեր
յ՟ս ք՟ս աչօք իմովք տեսի, ոչ ապաքէն գործ
2 իմ դուք էք 'ի տ՟ր : * Թէպէտ և այլոց
չիցեմ առաքեալ՝ այլ դէպ ձեզ եմ. զի
կնիք իսկ առաքելութե՟ իմոյ դուք էք 'ի
տ՟ր :

digitised by A.R.A.R.@

տր: *Իմ պատասխանի ուր զիս հարցա- 3
նիցեն՝ այս է: *Միթէ ո՞չ ունիցիմք իշ- 4
խանութի ուտել և ըմպել: *միթէ ոչ ու- 5
նիցիմք իշխանութի զքորս կանայս շրջեցու-
ցանել ընդ մեզ. որպ և այլ առաքեալքն, և
եղբարքն տն, և կեփաս: *Եթէ միայն 6
ես և բառնաբաս ո՛չ ունիցիմք իշխանու-
թի չգործել ինչ: *Ո՞ ոք երբէք զինուո- 7
րիցի ուրովք թոշակօք. ո՞ ոք տնկիցէ
այգի՝ և 'ի պտղոյ նր ո՛չ ուտիցէ. ո՞ ոք
արածիցէ խաշն՝ և 'ի կաթանէ խաշինն
ո՛չ ուտիցէ: *Միթէ ըստ մարդկութե՞ 8
խօսիցիմ զայս. կամ թէ և օրէնքն զսոյն
ո՞չ ասիցեն: *'Ի մովսէսի իսկ յօրէնսն 9
գրեալ է. ո՛չ կապեսցես զցռուկ եզին կա-
լոտւոյ: միթէ զեզանց ինչ փո՛յթ էր այ:
*Ոչ ապաքէն վս մեր ասէ. քանզի վս 10
մեր գրեցաւ: զի յուսով պարտի որ սեր-
մանէն՝ սերմանել. և որ կասուն՝ յուսով
վայելել: *Եթէ մեք 'ի ձեզ զհոգևորն 11
սերմանեցաք՝ մեծ ի՞նչ է, եթէ 'ի ձէնջ
զմարմնաւորսդ հնձիցեմք: *Եթէ այլք 12
ձերով իշխանութդ վայելեն, ոչ առաւել
ևս մեք: այլ ո՛չ 'ի գործ ինչ արկաք զիշ-
խանութիս զայս. բայց ամի համբերեմք.
զի մի՛ խափան ինչ լինիցիմք աւետարա-
նին քի: *Ո՞չ գիտէք եթէ որ 'ի տա- 13
ճարին գործեն, 'ի տաճարէ անտի ու-
տեն. և որ սեղանոյն պաշտօնեայք են,
'ի սեղանոյ անտի վայելեն: *Նոյնպէս և 14
տր

digitised by A.R.A.R.@

տէր հրամայեաց. որոց զաւետարանն աւե-
տարանեն, յաւետարանէ անտի կեալ։
15 *Բայց ես և ոչ զմի ինչ յայսցանէ արկի
՚ի գործ, և ոչ գրեցի զայդ՝ զի ինձ այն-
պէս ինչ լինիցի. լաւ է ինձ մանաւանդ-
մեռանել, և ոչ զի զպարծանս իմ ոք ըն-
16 դունայն համարիցի։ *Զի եթէ աւետա-
րանեմ, ոչինչ են ինձ պարծանք, քանզի
հարկ ՚ի վ͞ր կայ. բայց վայ է ինձ, եթէ
17 ոչ աւետարանեմ։ *Եթէ կամաւ զայն
առնեմ, վարձք են ինձ. և եթէ ակա-
18 մայ՝ տնտեսութիւն յանձն է ինձ։ *Եւ
արդ զինչ վարձք իցեն ինձ, եթէ յաւե-
տարանելն ձրի տաց զաւետարանն՝ զի մի
զեղծիցիմ ինչ իշխանութեամբս իմով յաւե-
19 տարանի անդ։ *Քանզի ազատ էի յամէ
և ամենեցուն զանձն ՚ի ծառայութիւն կա-
20 ցուցի. զի զբազումս շահեցայց։ *Եղէ
ը͞ն հրէայն իբրև զհրէայ, զի զհրէայսն
21 շահեցայց։ *Եղէ ը͞ն օրինօք իբրև զայ-
նոսիկ՝ որ ը͞ն օրինօքն էին. իբր ոչ եթէ
ը͞ն օրինօքն էի, այլ զի որ ը͞ն օրինօքն իցեն
և զնոսա շահեցայց։ Ը͞ն անօրէնս եղէ իբրև
զանօրէն. իբր ոչ եթէ անօրէն ինչ էի
ա͞յ, այլ ը͞ն օրինօք ք͞ի. զի շահեցայց զա-
22 նօրէնսն։ *Եղէ ը͞ն տկարս իբրև զտկար՝
զի զտկարսն շահեցայց։ Ը͞ն ամենայնի ա-
մենայն եղէ. զի թերևս ապրեցուցից զո-
23 մանս։ *Զայս ա͞մ առնեմ վ͞ս աւետա-
րանին, զի կցորդ եղէց նմա։

*Ոչ

digitised by A.R.A.R.@

Դկ * Ոչ գիտէք՝ եթէ որ յասպարիսին ըն- 24
թանան, ընթանալ ամենեքին ընթա-
նան. բայց մի ոք առնու զյաղթութիւն.
այնպէս ընթացարո՛ւք զի հասանիցէք:
* Ամենայն որ պատերազմի՝ ամի ժուժ- 25
կալ լինի. նոքա զի զեղծանելի պսակն
առնուցուն՝ և մեք զանեղծն: * Արդ՝ 26
ես իսկ այնպէս ընթանամ, ո՛չ ոպ յան-
երևոյթս այնպէս մրցիմ, ոպ ո՛չ թէ ըզ-
հողմս ինչ կոծելով. * այլ ճնշեմ զմար- 27
մինս իմ և հնազանդեցուցանեմ. զի գու-
ցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքնին ան-
պիտան գտանիցիմ:

## ԳԼ. Ժ:

Ո՛չ կամիմ, եթէ տգէտք իցէք եղբարք, 1
զի հարքն մեր ամենեքին ը̄ ամպովն
էին. և ամենեքին ը̄ ծովն անցին. * և 2
ամենեքին ՚ի մովսէս մկրտեցան յամպն
և ՚ի ծովն. և ամենեքին զնոյն հոգևոր 3
կերակուրն կերան. * և ամենեքին զնոյն 4
հոգևոր ըմպելին արբին, զի ըմպէին ՚ի
հոգևոր վիմէն՝ որ երթայր զհետ նց̄. և
վէմն էր ինքն քս̄: * Այլ ո՛չ եթէ ը̄ բա- 5
զումս ՚ի նոցանէ հաճեցաւ ա̄ծ. զի տա-
պաստ անկան յանապատի անդ: * Այս 6
այն օրինակաւ լինէր մ̄զ մեր. զի մի՛ լի-
ցուք ցանկացօղք չարեաց, ոպ և նոքայն
ցանկացան: * Այլ մի՛ կռապաշտք լի-
նիջիք՝ ոպ ոմանք ՚ի նոցանէ, ոպ և գրեալ
է.

digitised by A.R.A.R.@

է. նստաւ ժողովուրդն ուտել և ըմպել՝
8 և յարեան 'ի խաղալ։ *Եւ մի պոռն-
կեսցուք. որպ՟ ոմանք 'ի նոցանէ պոռնկե-
ցան, և անկան 'ի միում աւուր քսան և
9 երեք հազարք։ *Եւ մի փորձեսցուք զՔր՟.
որպ՟ ոմանք 'ի նոցանէ փորձեցին, և յօձից
10 անկան սատակեցան։ *Եւ մի տրտնջես-
ցուք. որպ՟ ոմանք 'ի նոցանէ տրտնջեցին,
11 և կորեան 'ի սատակչէ անտի։ *Այլ
այն ա՟մ օրինակաւ անցանէր ը՟ նոսա.
բայց գրեցաւ վ՟ս մերոյ խրատու, յորս
վախճան յաւիտենիցն եհաս։
12 *Այսուհետև որ համարիցի հաստա- Դ
տուն կալ՝ զգոյշ լիցի, գուցէ անկանի-
13 ցի։ *Փորձութ՟ի 'ի ձեր վ՟ր ոչ է եկեալ
բաց 'ի մարդկանէ. այլ հաւատարիմ է
ա՟ծ, որ ոչ արկցէ զձեզ 'ի փորձութ՟ի ա-
ւաւել քան զկար ձեր. այլ արասցէ ը՟
փորձութ՟ն և զելս զի համբերել կարաս-
14 ջիք։ *Վասն որոյ սիրելիք իմ, փախե-
15 րուք 'ի կռապաշտութ՟է։ *Իբրև ը՟ իմաս-
տունս խօսիմ. ընտրեցէք ձեզէն՝ զոր աս-
16 սեմս։ *Բաժակն օրհնութ՟ե զոր օրհնեմք՝
ոչ ապաքէն հաղորդութիւն է արեանն
Ք՟ի. հացն զոր բեկանեմք՝ ոչ ապաքէն
17 հաղորդութ՟ի է մարմնոյն Ք՟ի։ *Զի մի
հաց՝ մի մարմին եմք բազումքս. զի ա՟մքն
18 'ի միոջէ հացէ անտի վայելեմք։ *Տեսէք
զԻ՟էլ ը՟ մարմնոյ. ոչ ապաքէն՝ որ ուտեն
19 'ի զոհիցն՝ հաղորդ են սեղանոյն։ *Իսկ
արդ

digitised by A.R.A.R.@

արդ զինչ. ասեմ, թէ զոհեալն իցէ՞ ինչ.
և կամ թէ կուռքն իսկ իցե՞ն ինչ։ *Այլ 20
զոր զոհենն հեթանոսք ; դիւաց՝ և ոչ
Այ զոհեն։ ոչ կամիմ զձեզ հաղորդս դի-
ւաց լինել. Քզի ոչ կարէք զբաժակն Տն
ըմպել՝ և զբաժակն դիւաց. *Եւ ոչ կա- 21
րէք 'ի սեղանոյ Տն վայելել՝ և 'ի սեղա-
նոյ դիւաց։ *Եթէ նախանձ ինչ արկա- 22
նիցեմք Տն. միթէ զօրագո՞յնք իցեմք ք
զնա։ *Ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ 23
ոչ ամ ինչ օգուտ է. ամ ինչ ինձ մարթ
է, այլ ոչ ամենայն ինչ շինէ ։ *Մի ոք 24
զանձինն և եթ խնդրեսցէ՝ այլ և զընկե-
րին։ *Ամենայն ինչ որ 'ի սպանդանոցի 25
վաճառի, կերա՛յք՝ և մի խտրէք վն խղ-
ճի մտաց. *զի Տն է երկիր լրիւ իւրով։ 26
*Եթէ ոք կոչէ զձեզ յանհաւատից՝ և 27
կամիցիք երթալ. զամ ինչ՝ որ առաջի
դնիցի, կերա՛յք՝ և մի խտրէք վն խղճի
մտաց։ *Ապա եթէ ոք ասասցէ ձեզ՝ 28
թէ այդ զոհեալ է, մի ուտիցէք վնն՝
որ ցուցանն եղև, և վն խղճի մտացն։
*Այլ զխիղճ մտացն ասեմ ոչ զիւրն, 29
այլ զընկերին։ իսկ ընդէ՞ր ըստ ազա-
տութիս իմ դատիցի յայլոյ խղճէն մտաց։
*Եթէ ես շնորհօք վայելեմ, ընդէ՞ր 30
հայհոյիցիմ, վասն որոյ ես գոհանամ։
*Արդ՝ եթէ ուտիցէք՝ եթէ ըմպիցէք՝ 31
եթէ զինչ և առնիցէք, զամ ինչ 'ի փառս
Այ արասջի՛ք։ *Առանց գայթագղութի 32

դնե-

ղնելոյ Հրէից և Հեթանոսաց լինիջիք՝ և
33 եկեղեցւոյն Այ։ *Որպէս և ես ամենևին ա-
մենեցուն հաճոյ լինիմ. ոչ խնդրեմ
զանձին օգուտ, այլ զբազմաց՝ զի ապ-
րեսցին։

## ԳԼ. ԺԱ.

1 Նմանօղք ինձ եղերուք, որպէս և ես Քի։ ԴՁ
2 *Գովեմ զձեզ՝ զի զամ ինչ զիմ յի-
շէք. և որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդու-
3 թիւնս ունիցիք։ *Կամիմ զի գիտիցէք
դուք. եթէ առն ամի գլուխ Քս է, և
4 գլուխ կնոջ այր՝ և գլուխ Քի Ած։ *Ա-
մենայն այր՝ յորժամ յաղօթս կայցէ՝ կամ
մարգարէանայցէ՝ և զգլուխն ծածկեալ
5 ունիցի, յամօթ առնէ զգլուխն իւր։ *Եւ
ամ կին՝ յորժամ յաղօթս կայցէ՝ կամ
մարգարէանայցէ բացագլխով՝ յամօթ
առնէ զգլուխն իւր, զի այնպէս համարէ՝
6 թէ գերծեալ իցէ։ *Զի եթէ ոչ սքո-
ղեսցի կին, փոքրեսցէ զհերս իւր. ապա
եթէ անպատեհ է կնոջ փոքրել կամ գեր-
7 ծուլ, սքօղեսցի։ *Այր մարդոյ չէ պարտ
ծածկել զգլուխ իւր, զի պատկեր և
փառք Այ է. իսկ կին փառք առն իւրոյ
8 է։ *Զի ոչ եթէ այր 'ի կնոջէ է, այլ
9 կին յառնէ։ *Քանզի ոչ իսկ հաստա-
տեցաւ այր վն կնոջ, այլ կին վն առն։
10 *Վն այնորիկ պարտի կինն շուք դնել
11 գլխոյն վն հրեշտակաց։ *Բայց ոչ կին

Ց ա-

digitised by A.R.A.R.@

առանց առն, և ոչ այր առանց կնոջ 'ի
Տր ։ * Զի որպ կին յառնէ՝ նոյնպէս և 12
այր 'ի կնոջէ, բայց ամ յԱյ ։ * Իսկ 13
դուք ձեզէն տուք զիրաւ. արժա՞ն է
կնոջ մարդոյ հոլանի յաղօթս կալ առա-
ջի Այ ։ * Եւ ո՞չ բնութիւն իսկ ուսուցա- 14
նէ զձեզ։ զի այր եթէ գիսաւոր է՝ անար-
գանք են նմա։ * բայց կին եթէ գիսաւոր 15
է՝ փառք են նմա. զի դէսք փոխանակ
զգեստու տուեալ են նմա ։ * Ապա թէ 16
ոք կամի հակառակօղ լինել, մեք չու-
նիմք այնպիսի սովորութիւն, և ոչ եկեղե-
Կ.Ջ ցիքն Այ ։
* Իսկ զայս պատուիրեմ, ոչ որպ թէ գո- 17
վիցեմ, զի ոչ 'ի լաւ անդր՝ այլ 'ի վատ-
թարն նկրտիք ։ * Նախ՝ յորժամ 'ի մի 18
վայր ժողովիցիք յեկեղեցին, լսեմ եթէ
հերձուածք գոն 'ի ձեզ. և սակաւ ինչ
հաւատացի ։ * Բայց և հերձուածք լի- 19
նելոց են 'ի ձեզ. զի որ ընտիրքն իցեն 'ի
ձեզ՝ երևեսցին ։ * Եւ արդ՝ 'ի ժողո- 20
վելն ձեզ 'ի միասին՝ ոչ է տունն Տն ձեզ
տեղի հաց ուտելոյ։ * Զի իւրաքանչիւր- 21
ոք զիւր ընթրիս յառաջանայ ուտել, և
ոմն քաղցեալ՝ և ոմն արբեալ։ * Միթէ 22
տունս ոչ ունիցիք ուտելոյ կամ ըմպե-
լոյ. եթէ զեկեղեցեա՞ւն Այ արհամար-
հիցէք, և յամօթ առնէք զչքաւորսն ։
զի՞նչ ասացից. գովեցի՞ց զձեզ. յայդմ
ոչ գովեմ։ * Զի ես ընկալայ 'ի Տնէ, 23

զոր

digitised by A.R.A.R.@

զոր և ձեզն աւանդեցի, եթէ տր յս 'ի
գիշերին յորում մատնէր, առ հաց.
24 * գոհացաւ՝ եբեկ և ասէ. (առէք՝ և
կերայք.) այս է մարմին իմ, որ վս ձեր
(բաշխի). զայս արարէք առ իմոյ յիշա-
25 տակի: *[a] Նոյնպէս և զբաժակն յետ ըն-
թրեայն առ և ասէ. այս բաժակ՝ նոր
ուխտ է իմով արեամբ. զայս արարէք
քանիցս անգամ եթէ ըմպիցէք՝ առ իմոյ
26 յիշատակի: * Քանիցս անգամ թէ ու-
տիցէք զհացս զայս, և զբաժակս ըմպի-
ցէք, զմահն տն պատմեցէք, մինչև ե-
27 կեսցէ նա: * Այսուհետև՝ որ ուտիցէ
զհացս, կմ ըմպիցէ զբաժակս տն ան-
արժանութբ, պարտական եղիցի մարմ-
28 նոյ և արեան տն: * Փորձեսցէ մարդ-
զանձն իւր, և ապա 'ի հացէ անտի կերի-
29 ցէ, և 'ի բաժակէն արբցէ: * Զի որ ու-
տէ և ըմպէ անարժանութբ՝ դատաստանս
անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խորո-
30 րէ զմարմինն տն: * Վս այնորիկ իսկ են
'ի ձեզ բզմ հիւանդք և ախտաժէտք. և
շատ ևս այն են, որ և ննջեցեալք իսկ ի-
31 ցեն: * Զի եթէ զանձինս քննէաք՝ ա-
32 պա ոչ դատապարտէաք: * և եթէ դա-
տիմք՝ 'ի տնէ խրատիմք. զի մի ընդ աշխար-
33 հի դատապարտեսցուք: * Այսուհետև
եղբարք՝ յորժամ 'ի մի վայր ժողովիցիք
34 ուտել՝ միմեանց մնասջիք: * ապա թէ
ոք քաղցեալ իցէ՝ 'ի տան իւրում կերի-
ցէ.

digitised by A.R.A.R.@

ցէ․ զի մի՛ ՚ի դատապարտութի ժողովի-
ցիք։ Իսկ զայլսն յորժամ եկից, յայն-
ժամ պատուիրեցից։

## ԳԼ․ ԺԲ․

Եկ ԱՅԼ վ՟ն հոգեւորացն եղբարք՝ ոչ կամիմ 1
եթէ տգէտք իցէք։ *Գիտէք իսկ՝ 2
զի մինչ հեթանոսքն էիք, առ կուռսն
անմռունչս որպէս երթայիք եւ գայիք։
*Վասն որոյ ցուցանեմ ձեզ․ զի ոչոք 3
հոգւովն այ՟ խօսի, եւ ասիցէ թէ նզովեալ
յս՟․ եւ ոչ ոք կարէ ասել՝ տր՟ զյս՟, եթէ
ոչ հոգւովն սրբով։ *Թէպէտ եւ բա- 4
ժինք շնորհաց են՝ այլ հոգի նոյն է։ *Ե- 5
թէ բաժինք պաշտամանց են, այլ տէր
նոյն է։ *Եթէ բաժինք յաջողուածոց են՝ 6
այլ ա՟ծ նոյն է, որ յաջողէ զա՟մ յամենայ-
նի։ *Իսկ իւրաքանչիւր ումեք տուեալ 7
է յայտնութի հոգւոյն՝ առ իւրաքանչիւր
օգուտ։ *Ումեմն ՚ի հոգւոյն տուեալ է 8
բան իմաստութե․ այլում բան գիտու-
թե ը՟ստ նմին հոգւոյ․ *միւսումն հաւատք 9
նովին հոգւով․ այլում շնորհք բժշկու-
թեց նովին հոգւով․ *այլում յաջողու- 10
թիք զօրութեց․ այլում մարգարէութի․
այլում ընտրութի հոգւոց․ այլում ազգք
լեզուաց․ այլում թարգմանութի լեզ-
ուաց։ *Այլ զայս ա՟մ յաջողէ մի եւ նոյն 11
հոգի, եւ բաժանէ իւրաքանչիւր որպէս
եւ կամի։

*Որ-

digitised by A.R.A.R.@

12 *Որպ մարմին մի է, և անդամս բազումս ԵԳ
ունի. և ամ բզմ անդամք մարմնոյն՝ մի
13 մարմին է. նոյնպէս և քս։ *Քանզի
միով Հոգւով մեք ամենեքին ՚ի մի մար-
մին մկրտեցաք. եթէ Հրեայք, եթէ Հե-
թանոսք, եթէ ծառայք, եթէ ազատք,
14 ամենեքին զմի Հոգի արբաք։ *Քանզի
մարմին ոչ մի անդամ է, այլ բազում։
15 *Եթէ ասիցէ ոտն, զի չեմ ձեռն՝ չեմ
՚ի մարմնոյ անտի, ո՞չ այնու չիցէ ՚ի մար-
16 մնոյ անտի։ *Եւ եթէ ասիցէ ունկն,
վն զի չեմ ակն՝ չեմ ՚ի մարմնոյ անտի,
17 ո՞չ այնու չիցէ ՚ի մարմնոյ անտի։ *Եթէ
ամենայն մարմին ակն էր՝ ո՞ւր էր ունկն.
և եթէ ամենայն լսելիք էր՝ ո՞ւր էին հո-
18 տոտելիք։ *Բայց արդ՝ ած եդ զան-
դամսն՝ զմի մի իւրաքանչիւր ՚ի նոցանէ
19 ՚ի մարմնի՝ որպէս և կամեցաւ։ *Ապա
թէ էր ամենայն մի անդամ, ո՞ւր էր մար-
20 մին։ *Բայց արդ՝ անդամք բազում
21 են, և մարմին մի։ *Ո՛չ կարէ ակն ասել
ցձեռն, թէ չես ինձ պիտոյ, և կմ դար-
ձեալ գլուխ ցոտս՝ թէ չէք ինձ պիտոյ։
22 *Այլ առաւել որ թուին անդամք մար-
մնոյն թէ տկարագոյնք իցեն, կարևորք
23 են. *և որ թուին թէ անարգագոյնք
իցեն մարմնոյն, այնց առաւելագոյն պա-
տիւ առնեմք. և ամօթոյքն մեր առաւել
24 ևս պարկեշտութի ունին։ *Եւ պարկեշ-
տութիւն մերոց չէ ինչ պիտոյ. քզի ած խառ-
նեաց

digitised by A.R.A.R.@

նեաց զմարմինն, և նուաղին առաւել ևս
պատիւ ետ. *զի մի՛ իցեն հերձուածք ՚ի 25
մարմնի անդ, այլ զի նոյնք զմիմեանց
հոգայցեն անդամքն։ *Եթէ վշտանայ 26
ինչ մի անդամն, վշտանան ամ՟ անդամքն
ը՟ նմ՟. և եթէ փառաւորի մի անդամն,
խնդան ամ՟ անդամքն ընդ նմ՟։ *Այլ 27
դուք մարմին ք՟ի էք՝ և անդամք յան-
Վ.Ջ դամոց նորա։
*Եւ զորս եդ Ա՟ծ յեկեղեցւոջ՝ այս են. 28
նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգա-
րէս, երրորդ՝ զվարդապետս, ապա զօ-
րութ՟ս, ապա շնորհս բժշկութե՟ց, օգ-
նութ՟ս, վարիչս, ազգս լեզուաց, թարգ-
մանութ՟ս լեզուաց։ *Միթէ ամենե- 29
քին առաքեա՞լք իցեն. միթէ ամենեքին
մարգարէ՞ք իցեն. միթէ ամենեքին վար-
դապե՞տք իցեն. միթէ ամենեքին զօրու-
թի՞ք իցեն. *միթէ ամենեքին շնորհս 30
բժշկութե՞ ունիցին. միթէ ամենեքին
՚ի լեզո՞ւս խօսիցին. միթէ ամենեքի՞ն
թարգմանիցեն։ *Բայց նախանձաւո՛ր 31
լերուք շնորհացն, որ լաւն են։ Այլ ես
առաւել ևս ճանապարհ ցուցանեմ ձեզ։

## ԳԼ. ԺԳ.

ԶԶ Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և 1
զհրեշտակաց՝ և սէր ոչ ունիցիմ, ե-
ղէ ես իբրև պղինձ որ հնչէ. կմ՟ իբրև
զծնծղայս որ ղօղանջեն։ *Եւ եթէ ու- 2
նի-

digitised by A.R.A.R.@

նիցիմ մարգարէու՟ն, և գիտիցեմ զխոր-
հուրդս ա՟մ՝ և զա՟մ գիտու՟ն. և եթէ
ունիցիմ զա՟մ հաւատս՝ մինչև զլերինս
փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչի՟նչ
3 եմ։ *Եւ եթէ ջամբիցեմ զա՟մ ինչս
իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմինս
իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ, ոչի՟նչ
4 օգտիմ։ *Սէր երկայնամիտ է՝ քաղցրա-
նայ. սէր ո՛չ նախանձի, ո՛չ ամբարհա-
5 ւաճէ, ո՛չ հպարտանայ. *ո՛չ յանդգնի,
ո՛չ խնդրէ զիւր, ո՛չ գրգռի, ո՛չ խորհի
6 զչար. *ո՛չ խնդայ ը՟ անիրաւութի՟՝ այլ
7 խնդայ ը՟ ստուգու՟. *ա՟մի տանէ. ա՟մի
հաւատայ. ամենեւին յուսայ. ա՟մի համ-
8 բերէ։ *Սէր՝ ո՛չ երբեք անկանի. եթէ
մարգարէութիւնք են՝ խափանեսցին. եթէ
լեզուք՝ լռեսցեն. եթէ գիտու՟ խափա-
9 նեսցի։ *Քանզի փոքր 'ի շատէ գի-
տեմք. և փոքր 'ի շատէ մարգարէա-
10 նամք։ *այլ յորժամ եկեսցէ կատա-
րումն, փոքր 'ի շատէս խափանեսցի։
11 *Մինչ տղայն էի՝ իբրև զտղայ խօսէի, ԶԿ
իբրև զտղայ խորհէի, իբրև զտղայ հա-
մարէի. այլ յորժամ եղէ այր՝ զտղայու-
12 թեն 'ի բաց խափանեցի։ *Այժմ տե-
սանեմք իբրև ը՟ հայելի օրինակաւ, այլ
յայնժամ դէմ յանդիման. այժմ խե-
լամուտ եմ փոքր 'ի շատէ, այլ յայնժամ
գիտացից՝ որպէս և նայն ծանեաւ զիս։
13 *Բայց արդ՝ մնան հաւատք՝ յոյս՝ սէր,
սո-

digitised by A.R.A.R.@

ոք երեքեան. և մեծ քան զսոսա սէր է։

## ԳԼ. ԺԴ.

Զհետ երթայք սիրոյ, և նախանձա- 1
ւոր լերուք հոգևորացն՝ առաւել
զի և դուք մարգարէանայցէք։ * Զի որ 2
խօսի 'ի լեզուս՝ ոչ ը͞ մարդկան խօսի,
այլ ը͞ այ͞։ զի ոչ ոք է որ լսէ, բայց հոգ-
ւով խօսի խորհուրդս։ *Իսկ որ մարգա- 3
րէանայ, մարդկան խօսի շինութի͞ և
մխիթարութի͞ և սփոփութի͞։ * Որ խօսի 4
'ի լեզուս՝ զանձն իւր շինէ. և որ մար-
գարէանայ՝ զեկեղեցին շինէ։ *Կամիմ 5
զի ամենեքին դուք 'ի լեզուս խօսիցիք՝
առաւել զի մարգարէանայցէք. զի լաւ
է որ մարգարէանայ՝ քան զայն՝ որ 'ի
լեզուս խօսիցի. բայց եթէ թարգմանի-
Վ. Զ ցէ՝ զի եկեղեցին շինութի͞ առնուցու։
* Բայց այժմ եղբարք՝ եթէ եկից առ 6
ձեզ 'ի լեզուս խօսելով. զինչ օգուտ լի-
նիցիմ ձեզ՝ եթէ ոչ խօսիցիմ, կամ յայտ-
նութ͞ք, կամ գիտութ͞ք, կամ մարգա-
րէութ͞ք, կամ վարդապետութ͞ք։ * Ան- 7
պէս՝ որպէս անշունչքն ձայն տայցեն, ե-
թէ փող և եթէ քնար. զի եթէ ընտ-
րութի͞ ինչ բարբառոյն չառնիցեն, զիա՞րդ
ճանաչիցի փողոյն հարկանել՝ կամ քնա-
րին հնչել։ *քանզի եթէ խառնաձայն 8
արձակիցի փողն, ո՞վ պատրաստեսցի 'ի
պատերազմ։ * Այնպէս և դուք՝ եթէ 9
լե-

digitised by A.R.A.R.@

լեզուօք ոչ նշանակիցէք զբանն՝ զիա՞րդ
ճանաչիցին խօսքն. զի լինիցիք այնուհե-
10 տեւ իբրեւ ընդ օդս խօսեցեալք։ *Ո՛ ի այն-
չափ ազգք ձայնից են յաշխարհի, և ոչ
11 ինչ անձայն է։ *Իսկ արդ՝ եթէ ո՛չ
գիտիցեմ զզօրութիւն ձայնին, լինիցիմ
այնմ, որ խօսիցին ընդ իս՝ խուժ, և նա որ
12 խօսիցին ընդ իս՝ դուժ։ *Նոյնպէս և դուք՝
քանզի նախանձորդք էք հոգևորացն, վասն
շինուածոյ եկեղեցւոյն խնդրեցէք՝ զի ա-
13 ռաւել ևս իցէք։ *Վասն որոյ որ խօ-
սին ՚ի լեզուս, աղօ՛թս արասցէ՝ զի և
14 թարգմանիցէ։ *Եթէ կամ յաղօթս
լեզուաւ՝ հոգին իմ կայ յաղօթս. այլ
15 միտք իմ անպտուղ են։ *Իսկ արդ՝
զինչ իցէ. կացից յաղօթս հոգւով, կա-
ցից յաղօթս և մտօք. սաղմոս ասացից
16 հոգւով, սաղմոս ասացից և մտօք։ *Ա-
պա թէ ոչ՝ եթէ օրհնիցես հոգւով, որ
կայցէ ՚ի տեղւոջ տգիտին զիա՞րդ ասի-
ցէ ՚ի քում գոհութեան՝ զամէնն. քանզի
17 զոր ասեսն՝ նա ոչ գիտէ։ *Դու բար-
ւոք գոհանաս, այլ ընկերն ոչ շինի։
18 *Գոհանամ զԱստուծոյ՝ վասն ամենեցուն ձեր՝ ՂԲ
19 առաւել լեզուաւ խօսիմ։ *Այլ ՚ի մէջ
եկեղեցւոյ կամիմ բանս հինգ մտօք խօ-
սել՝ զի և զայլս խրատեցից, քան բիւր
20 բանս լեզուաւ։ *Եղբարք մի՛ լինիք տ-
ղայք մտօք, այլ ՚ի չարեաց տղայացա-
21 րուք, և մտօք կատարեալ լինիջիք։ *Քանզի



digitised by A.R.A.R.@

'Ի օրէնսն գրեալ է, եթէ յօտար լե-
զուս՝ և 'ի շրթունս օտարոտիս խօսեցայց
ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ, սա-
կայն և ոչ այնպէս լուիցեն ինձ, (ասէ
տ՟ր)։ * Ապա ուրեմն լեզուք նշանակի 22
մ՟ն են՝ ոչ հաւատացելոց՝ այլ անհաւա-
տից. իսկ մարգարէութիւն՝ ոչ անհաւա-
տից՝ այլ հաւատացելոց։ * Ապա եթէ 23
գայցէ եկեղեցին ամենայն 'ի մի վայր, և
ամենեքին 'ի լեզուս խօսիցին, և մտա-
նիցեն անդր տգէտք կամ անհաւատք.
ոչ ասիցեն՝ եթէ զի՛ մոլիքդ։ * Իսկ ե- 24
թէ ամենեքին մարգարէանայցեն, և մը-
տանիցէ ոք անդր անհաւատ՝ կամ տգէտ,
յանդիմանի յամենեցունց, և քննի յա-
մենեցունց. * և գաղտնիք սրտի նորա 25
յայտնի լինին։ և ապա անկեալ 'ի վ՟ր
երեսաց երկիր պագանիցէ ա՟յ, և խոս-
տովան լինիցի՝ թէ արդարև ա՟ծ է 'ի ձեզ։
ԶԳ * Արդ՝ զի՞նչ իցէ եղբարք. յորժամ 26
'ի մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւրոք
'ի ձէնջ եթէ սաղմոս ունիցի, թէ վար-
դապետութիւն ունիցի, եթէ յայտնութիւն
ունիցի, թէ լեզուս ունիցի, եթէ թարգ-
մանութիւն ունիցի, ա՟մ 'ի շինած լինիցի։
* Եթէ 'ի լեզուս ոք խօսեսցի՝ երկուք, 27
և եթէ ևս աւելի՝ երեք, և ապա մի ը՟ստ
միոջէ. և մինն թարգմանիցէ։ * ապա 28
եթէ չիցէ ոք որ թարգմանիցէ, լռու-
լեսցի յեկեղեցւոջն. ը՟ միտս իւր՝ և ընդ
ա՟յ

digitised by A.R.A.R.@

29 այ խօսեսցի։ *Բայց մարգարէք երկու
կամ երեք խօսեսցին, եւ այլքն քննեսցեն։
30 *Ապա եթէ այլ ումեք որ նստիցին՝
31 յայտնեսցի, առաջինն լռեսցէ։ *Քան-
զի կարող էք ամենեքին մի ըստ միոջէ մար-
գարէանալ. զի ամենեքեան ուսանիցին,
32 եւ ամենեքեան մխիթարեսցին։ *Քան-
զի եւ հոգիք իսկ մարգարէից՝ մարգա-
33 րէից հնազանդ են։ *զի ոչ եթէ խռո-
վութեան է Ած՝ այլ խաղաղութեան, ոպ յամ
34 եկեղեցիս սրբոց։ *Կանայք՝ յամ եկե-
ղեցիս լռեսցեն. զի ոչ հրամայի նոցա
խօսել՝ այլ հնազանդ լինել. ոպ եւ օրէնքն
35 իսկ ասեն։ *Ապա եթէ ուսանել ինչ
կամիցին, ՚ի տան զարս իւրեանց հարցա-
նիցեն. քանզի անպատեհ է կնոջ մար-
36 դոյ յեկեղեցւոջ խօսել։ *Եթէ ՚ի
ձէնջ բանն այ ել. եւ կամ առ ձեզ միայն
37 եհաս։ *Իսկ եթէ ոք համարիցի մար-
գարէ լինել՝ կամ հոգեւոր, գիտասցէ՝ զոր
գրեցի առ ձեզ, թէ տն պատուիրանք
38 են։ *ապա թէ ոք ոչ գիտանայցէ, ոչ գի-
39 տասցի։ *Այսուհետեւ եղբարք, նա-
խանձեցարուք մարգարէանալ, եւ զխօ-
40 սելն լեզուօք մի արգելուք։ *Այլ ամ ինչ
ձեր պարկեշտութեամբ եւ ըստ կարգի լինիցի։ Գ.Ջ.

## ԳԼ. ԺԵ.

1 Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն
իմ, զոր աւետարանեցի ձեզ. զոր եւ
ըն-

digitised by A.R.A.R.@

ընկալարուք, յոր եւ հաստատեալ էք.
*որով ապրեցայքն. որով բանիւ աւե- 2
տարանեցի ձեզ՝ թէ ունիցիք. բայց ե-
թէ 'ի զուր ինչ հաւատացէք։ *Զի ես 3
ձեզ զայն նախ աւանդեցի՝ զոր եւ ես ըն-
կալայ. թէ եւ ք̄ս մեռաւ վ̄ն մեղաց մե-
րոց՝ ը̄ս գրոց. *եւ զի թաղեցաւ, թէ եւ 4
յարեաւ յաւուր երրորդի՝ ը̄ս գրոց. *եւ 5
թէ երեւեցաւ կեփայի, եւ ապա երկոտա-
սանիցն. *ապա երեւեցաւ աւելի եւս ք̄ 6
զհինգ հարիւր եղբարց միանգամայն.
յորոց բազումք կան մինչեւ ցայժմ, եւ ո-
մանք ննջեցին։ *եւ ապա երեւեցաւ յա- 7
կովբայ, ապա առաքելոցն ամենեցուն։
*Յետոյ քան զամենեսին իբրեւ 8
անարգի միոջ՝ երեւեցաւ եւ ինձ։ *զի ես 9
իսկ եմ տրուպն առաքելոց. որ չեմ իսկ
արժանի թէ կոչեցայց առաքեալ. զի հա-
լածեցի զեկեղեցին ա̄յ։ *Այլ շնորհօքն 10
ա̄յ եմ զինչ եւ իցեմ. եւ շնորհքն որ յիս՝
ընդունայն ինչ ոչ եղեն. այլ առաւել
քան զն̄ո ամենեսին վաստակեցի. եւ ոչ ե-
թէ ես՝ այլ շնորհքն ա̄յ որ ը̄ իս։ *Արդ՝ 11
եթէ ես եւ եթէ նոքա՝ այսպէս քարոզե-
ցաք, եւ դուք այսպէս հաւատացիք։ *Ա- 12
պա եթէ ք̄ս քարոզի՝ թէ 'ի մեռելոց յա-
րուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք 'ի ձէնջ՝
եթէ յարութի̄ մեռելոց չիք։ *Եթէ 13
յարութի̄ մեռելոց չիք, ապա եւ ք̄ս չէ
յարուցեալ։ *եւ եթէ ք̄ս չիցէ յարու- 14
ցեալ,

digitised by A.R.A.R.@

ցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր.
15 ընդունայն են և հաւատքն ձեր. * Եւ գտա-
նիցիմք սուտ վկայքն այ, զի վկայեցաք զայ՝
թէ յարոյց զքս. զոր ո՛չն արդեօք յարոյց՝
16 եթէ մեռեալք ո՛չ յառնիցեն: * Իսկ ե-
թէ մեռեալք ո՛չ յառնեն՝ ապա և քս չէ
17 յարուցեալ: * Եւ եթէ քս չիցէ յարու-
ցեալ, ընդունայն են հաւատքն ձեր. և
18 տակաւին 'ի նմին մեղս կայցէք: * Իսկ
արդ՝ որ ննջեցին 'ի քս, կորեա՞ն ար-
19 դեօք: * Եթէ այսու կենօքս միայն յու-
սացեալ եմք 'ի քս, ողորմելի եմք քան
զամ մարդիկ:
20 * Այլ արդ՝ քս յարուցեալ է 'ի մեռե- ԶԴ
21 լոց՝ առաջին պտուղ ննջեցելոց. * Քզի
մարդով եղև մահ, և մարդով յարութ
22 մեռելոց: * Որպէս ադամաւն ամենեքին
մեռանին. նոյնպէս և քսիւ ամենեքեան
23 կենդանասցին. * իւրաքանչիւր յիւրում
կարգի. նախ քս, և ապա քսեանք 'ի
24 գալստեանն նր. * և ապա կատարած:
յորժամ տացէ 'ի ձեռս զթագաւորութիւն
այ և հօր. յորժամ խափանեսցէ զամ
իշխանութիւն և զամ պետութի և զզօրութի:
25 * Զի պարտ է նմա թագաւորել՝ մինչև
դիցէ զամ թշնամիս 'ի ներքոյ ոտից իւ-
26 րոց: * Յետին թշնամին խափանի՝ մահ.
և զամ ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ո-
27 տից նր: * Այլ յորժամ ասիցէ. թէ
հնազանդեալ է նմա ամ, յայտ է՝ թէ
բաց

digitised by A.R.A.R.@

բաց յայնմանէ՝ որ հնազանդեցոյց նմա
զա՟մ։ * Այլ յորժամ հնազանդեսցի 28
նմա ա՟մ՝ յայնժամ և ինքն որդի հնա-
զանդեսցի այնմ, որ հնազանդեցոյց նմ՟
զա՟մ. զի եղիցի ա՟ծ ա՟մ յա՟մի։ * Ապա 29
թէ ոչ՝ զի՞նչ գործիցեն որ մկրտիցին վ՟ս
մեռելոց, եթէ արդարև մեռեալք ոչ
յառնիցեն. ընդէ՞ր իսկ մկրտին վ՟ս
ն՟ց. * ընդէ՞ր և մեք ձգնիմք յա՟մ ժամ, 30
* և համապազ մեռանիմք։ 'ի պարծանս 31
ձեր եղբարք՝ զոր ունիմ 'ի ք՟ս
յ՟ս 'ի տ՟ր մեր։ * Եթէ վ՟ս մարդոյ 'ի գա- 32
զանամարտի լեալ էի յեփեսոս, զի՞նչ
օգուտ էր ինձ՝ եթէ մեռեալք ո՛չ յառ-
նեն։ կերիցո՛ւք արբցո՛ւք՝ քանզի վաղիւ
մեռանիմք։ * Մ՛ի խաբիք. ապականեն 33
զբարս քաղցունս բանք չարք։
Ջե * Սթափեցարո՛ւք արդարու՟թ՝ և մի՛ մե- 34
ղանչէք. զի զգիտութի՟ ա՟յ ո՛չ ունին ո-
մանք։ առ ամօթոյ ձերոյ ասեմ։ * Այլ 35
ասիցէ ոք. զիա՞րդ յառնեն մեռեալք՝ կ՟մ
որո՞վ մարմնով գայցեն։ * Անմիտ՝ դու 36
զոր սերմանես, ո՛չ կենդանանայ՝ եթէ
ոչ մեռանիցի։ * Եւ զոր սերմանես, 37
ո՛չ զնոյն մարմինն զոր ծնանելոցն իցէ՝ սեր-
մանես, այլ հատ մերկ. եթէ ցորենոյ
իցէ՝ և եթէ այլոց սերմանեաց։ * և ա՟ծ 38
տայ նմա մարմին՝ ո՛րպէս և կամի. և իւրա-
քանչիւր սերմանեացն զիւր մարմինն։ * Ո՛չ 39
ա՟մ մարմին նոյն մարմին է, այլ՝ այլ մար-
մին

digitised by A.R.A.R.@

մին է մարդկան , և այլ մարմին անաս֊
նոց , այլ մարմին թռչնոց՝ և այլ մար֊
40 մին ձկանց : * Եւ մարմինք երկնաւորք՝
և մարմինք երկրաւորք . այլ՝ այլ փառք
երկնաւորաց՝ և այլ փառք երկրաւորաց :
41 * այլ փառք արեգական , և այլ փառք
լուսնի, և այլ փառք աստեղաց . և աստղ
42 քան զաստղ առաւել է փառօք : * Նոյն֊
պէս և յարութիւն մեռելոց . սերմանի ա֊
պականութեամբ և յառնէ առանց ապակա֊
43 նութեան . * սերմանի անարգութեամբ և յառ֊
նէ փառօք . սերմանի տկարութեամբ՝ և յառ֊
44 նէ զօրութեամբ . * սերմանի մարմին շնչաւոր՝
և յառնէ մարմին հոգևոր . եթէ գոյ
45 մարմին շնչաւոր , գոյ և հոգևոր : * Որ֊
պէս և գրեալ է , եղև մարդն առաջին
ադամ՝ ի շունչ կենդանի . երկրորդ ա֊
46 դամ՝ ի հոգի կենդանարար : * բայց ո՛չ
նախ հոգևորն . այլ շնչաւորն , և ապա
47 հոգևորն : * Առաջին մարդն յերկրէ՝ հո֊
ղեղէն . իսկ երկրորդ մարդն տր՝ յերկ֊
48 նից : * որպէս հողեղէնն , նոյնպէս և հողե֊
ղէնքս , և որպէս երկնաւորն՝ նոյնպէս և երկ֊
49 նաւորքն : * Եւ որպէս զգեցաք զպատ֊
կեր հողեղինին . զգեցցուք և զպատկեր
երկնաւորին :
50 * Բայց զայս ասեմ եղբարք՝ եթէ մար֊ ջջ
մին և արիւն զարքայութիւն այ ժառան֊
գել ո՛չ կարեն . և ո՛չ ապականութիւն զա֊
51 նապականութիւն ժառանգէ : * Ահա՛ խոր֊
հուրդ

digitised by A.R.A.R.@

հուրդ մի ասեմ ձեզ. ամենեքեան ննջես-
ցուք, այլ ոչ ամենեքեան նորոգեսցուք:
*Յանկարծակի յական թօթափել՝ 'ի 52
փող յետին. քանզի փող հարկանի, և
մեռեալք յարիցեն առանց ապականու-
թեան, և մեք նորոգեսցուք: *Զի պարտ 53
է ապականութեանս այսմիկ զգենուլ զա-
նապականութիւն, և մահկանացուիս այս-
միկ զգենուլ զանմահութիւն: *Եւ յոր- 54
ժամ մահկանացուս այս զգեցցի զան-
մահութիւն, և ապականութիւնս զանապակա-
նութիւն, յայնժամ եղիցի բանն՝ որ գրե-
ցաւ. եթէ ընկլաւ մահ 'ի յաղթութիւն:
*Ո՞ւր է մահ յաղթութիւն քո. ո՞ւր դժոխք 55
խայթոց քո: *Խայթոց մահու մեղք են, 56
և զօրութիւն մեղաց օրէնք: *Եւ շնորհք 57
այ՝ որ ետ մեզ զյաղթութիւն 'ի ձեռն տն
մերոյ յի քի:
ԱԴ *Այսուհետև եղբարք իմ սիրելիք, 58
հաստատունք եղերուք, անշարժ կայցէք,
առաւելլերուք 'ի գործս տն յամ ժամ.
գիտասջիք՝ զի վաստակքն ձեր ոչ են ը-
ունայն առաջի տն:

## ԳԼ. ԺԶ.

Եւ վն հաշուելին որ 'ի սուրբսն է, որպ 1
պատուէր ետու եկեղեցեաց գա-
ղատացւոց՝ նոյնպէս և դուք արասջիք:
*Ըստ իւրաքանչիւր միաշաբաթուն իւ- 2
րաքանչիւր 'ի ձենջ առանձին իւրում
գանձ

digitised by A.R.A.R.@

3 գանձեսցէ՝ որ ինչ և յաջողեսցի։ *Զի
մի յորժամ գայցեմ, յայնժամ հաշուեք
լինիցին։ այլ յորժամ եկից՝ զոր միան-
գամ ընտրեցէք թղթովք, զնոսա առաքե-
4 ցից տանել զշնորհս ձեր յեէմ։ *Ապա
թէ արժան իցէ և ինձ երթալ՝ ընդ իս եր-
5 թիցեն։ *Այլ եկից առ ձեզ՝ յորժամ
՚ի Մակեդոնիա անցանիցեմ։ բայց իբրև
6 շրջեցայց ՚ի Մակեդոնիա, *թէ դէպ
լիցի, առ ձեզ մնացից՝ և կամ ձմերե-
ցից. զի և դուք յուղարկիցէք զիս՝ ուր
7 և երթալոցն եմ։ *Զի ոչ կամիմ զձեզ
այժմ ՚ի հարևանցի տեսանել. ակն ու-
նիմ ժամանակ ինչ առնել առ ձեզ, ե-
8 թէ Տէր հրամայեսցէ։ *Բայց այժմ լի-
9 նիմ յԵփեսոս մինչև ցպենտէկոստէ. *զի
դուռն բացեալ է ինձ մեծ և կարևոր,
10 և հակառակորդք բազում են։ *Արդ՝ ե-
թէ եկեսցէ Տիմոթէոս՝ տեսջիք զիարդ-
աներկիւղ լինիցի առ ձեզ. զի զգործ Տեառն
11 գործէ՝ որպէս և ես. *Մի ոք զնա անգոս-
նեսցէ։ և յուղարկեսջիք զնա խաղաղու-
թեամբ՝ զի եկեսցէ առ իս. քանզի ակն ու-
նիմ նմա եղբարբք հանդերձ։
12 *Այլ վասն Ապողոսի եղբօր՝ յոյժ աղաչե- Ա.Զ
ցի զնա՝ զի եկեսցէ առ ձեզ եղբարբք
հանդերձ. և արդեօք ոչ էին կամք զի
այժմ եկեսցէ. այլ եկեսցէ յորժամ և
13 պարապեսցէ։ *Հսկեցէք՝ հաստատուն
կացէք ՚ի հաւատս. ժրացարուք, զօրա-
ցա-

digitised by A.R.A.R.@

ցարուք ։ *ա̃մ ինչ ձեր սիրով լինիցի ։ 14
* Աղաչեմ զձեզ եղբարք՝ գիտէք ըզ- 15
տունն ստեփանեայ և փորտունատեայ՝
որ են պտուղ աքայեցւոց, և 'ի պաշտօն
սրբոց կարգեցին զանձինս ։ *զի և դուք 16
հնազանդ լինիցիք այնպիսեացն. և ա̃մ՝
որ գործակից իցէ և վաստակակից ։ *Ու- 17
րախ եղէ 'ի գալ ստեփանեայ և փոր-
տունատեայ և աքայիկոսի, զի զձեր պա-
կասութիւն նոքա լցին ։ *քանզի հանգու- 18
ցին զոգի իմ՝ և զձեր ։ արդ՝ ծանիջիք
զայնպիսիսն ։ *Ողջոյն տան ձեզ եկե- 19
ղեցիքն ասիացւոց ։ ողջոյն շատ տան ձեզ
'ի տ̃ր՝ ակիւղաս, և պրիսկիղա՝ հան-
դերձ առտնին եկեղեցեաւն իւրեանց ։
*Ողջոյն տան ձեզ եղբարքն ամենեքեան ։ 20
Ողջոյն տուք միմեանց 'ի համբոյր սըր-
բութե̃ ։ *Ողջոյնդ այդ՝ իմոյ ձեռին պօ- 21
ղոսի է ։ *Եթէ ոք ոչ սիրէ զտ̃ր յ̃ս, ե- 22
ղիցի նզովեալ՝ մարանաթայ ։ *Շնորհք 23
տ̃ն մերոյ յ̃սի ք̃սի ը̃ ձեզ ։ *և սէրն իմ 24
ը̃ ամենեսին ձեզ 'ի ք̃ս յ̃ս ։ ամէն ։

Առ կորնթացիս առաջին թուղթ՝ գրեցաւ 'ի փիլիպեայ, 'ի ձեռն ստեփանեայ և փորտունատեայ և աքայիկոսի ։

ԹՈՒՂԹ

digitised by A.R.A.R.@

# Թ Ո Ւ Ղ Թ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԵՐԿՐՈՐԴ։

### ԳԼ․ Ա․

1 Պօղոս առաքեալ յ՟ի ք՟ի կամօքն Բ Կ
ա՟յ, եւ տիմոթէոս եղբայր․ եկե-
ղեցւոյդ ա՟յ որ է 'ի կորնթոս՝ սրբովքդ-
ամենեքումբք՝ որ են յամենայն կող-
2 մանս աքայեցւոց։ *Շնորհք ը՟ն ձեզ եւ
խաղաղութի՟ւն յա՟յ հօրէ մերմէ՝ եւ 'ի տ՟նէ
3 յ՟սէ ք՟սէ։ *Օրհնեալ է ա՟ծ եւ հայր
տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի․ հայր գթութեց,
4 եւ ա՟ծ ամենայն մխիթարութե՟ն․ *որ
մխիթարէն զմեզ յամենայն նեղութի՟ս
մեր․ առ 'ի կարօղ լինելոյ մեզ մխի-
թարել զայնոսիկ՝ որ յա՟մ նեղութի՟ս
իցեն, մխիթարութե՟ն՝ որով մեք մխի-
5 թարիմք յա՟յ։ *Զի որպէս առաւելան
չարչարանքն ք՟սի 'ի մեզ․ նոյնպէս եւ 'ի
ձեռն ք՟սի առաւել լիցի եւ մխիթարու-
6 թի՟ն մեր։ *Զի եթէ նեղիմք, վ՟ս ձե-
րոյ մխիթարութե՟ն եւ փրկութե՟ն, եւ եթէ
մխիթարիմք, վ՟ս ձերոյ մխիթարութե՟ն եւ
փրկութե՟ն, որ յաջողեալն է համբերութե՟
նո-

digitised by A.R.A.R.@

նոյն չարչարանաց, զոր և մեքն չարչա-
րիմք. *Եւ յոյս մեր հաստատուն է վն 7
ձեր. Քանզի գիտեմք՝ եթէ որպ կցորդ էք
չարչարանացն, նոյնպէս և մխիթարու-
թեն։ *Քանզի ոչ կամիմ տգէտս լի- 8
նել ձեզ եղբարք՝ վն նեղութեն մերոյ ե-
ղելոյ յասիա. զի առաւել քան զկար մեր
ծանրացաք, մինչև անյոյս լինելոյ մեզ և
'ի կենաց։ *Այլ անձամբ յանձինս զվճիռ- 9
մահու ընկալաք. զի մի յանձինս ապաս-
տանիցիմք՝ այլ յած՝ որ յարուցանէ զմ-
մեռեալս. *որ յայնպիսի մահուանէ 10
փրկեաց զմեզ՝ և փրկեսցէ. *Քանզի յու- 11
սացեալ եմք, եթէ տակաւին փրկեսցէ
օգնականութ աղօթից ձերոց վն մեր։
Զի 'ի բազմադէմ շնորհացն՝ որ 'ի մեզ,
բազմօք յաճախեսցեն գոհութիւնք վն մեր։
ԲԴ *Քանզի պարծանք մեր այս են. վկայ- 12
ութի մտաց մերոց. զի սրբութ և ստու-
գութ այ, և ոչ մարմնեղէն իմաստութ,
այլ շնորհօքն այ շրջեցաք յաշխարհի.
բայց առաւել ևս առ ձեզ։ *Քանզի ոչ 13
եթէ այլազգ ինչ գրեմք առ ձեզ, այլ
զոր ընթեռնուցուքն՝ և գիտակ լինիջիք.
քանզի յուսամ եթէ մինչև 'ի վախճան
գիտիցէք. *ոպ և խելամուտ եղէք մեզ 14
փոքր 'ի շատէ։ զի պարծանք ձեր եմք,
ոպ և դուք մեր յաւուրն տն մերոյ յի
քի։ *Եւ յայս ապաստան կամէի նախ 15
առ ձեզ գալ, զի դուք կրկին շնորհս ըն-
դու-

digitised by A.R.A.R.@

16 դունիջիք. * և ՚ի ձէնջ երթալ ՚ի մակե-
դովնիա. և դարձեալ ՚ի մակեդովնիայ
գալ առ ձեզ. և ՚ի ձէնջ յուղարկել ՚ի
17 հրէաստան: * Իսկ եթէ զայս խորհե-
ցայ՝ միթէ թեթևութե̅՞ ինչ գնացի. և
կամ զոր խորհիմն՝ ը̅ս մարմնո՞յ ինչ խոր-
հիցիմ, այլ զի եղիցի յինէն կողմանէ,
18 այոն՝ այո, և ոչն՝ ոչ: * Հաւատարիմ է
ա̅ծ, զի բանն մեր որ առ ձեզ եհաս՝ ոչ
19 է այո, և ոչ: * Քանզի որդին ա̅յ յ̅ս ք̅ս,
որ ՚ի ձեզ մեօք քարոզեցաւ, ինև և սի-
լուանոսիւ և տիմոթէիւ, ոչ եղև այո և
20 ոչ. այլ այոն ՚ի նմին եղև: * Զի որչափ
աւետիքն ա̅յ են՝ ՚ի նմա այոն. վ̅ս որոյ և
21 նովին ամէնն մեօք ՚ի փառս ա̅յ: * Այլ
որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ
22 ՚ի ք̅ս, և որ օծ զմեզ, ա̅ծ է. * որ և կնք-
քեաց զմեզ, և ետ զառհաւատչեայ հոգ-
ւոյն ՚ի սիրտս մեր:
23 * Այլ ես վկայ զա̅ծ կոչեմ անձին իմոյ. Բ.Զ
զի վասն խնայելոյ ՚ի ձեզ՝ ոչ ևս եկի ՚ի
կորնթոս. զի ոչ եթէ տիրեմք ձեզ հա-
ւատովքդ՝ այլ գործակից եմք շնորհացդ
ձերոյ. քանզի հաւատովք հաստատեալ
կայք:

## ԳԼ. Բ:

1 Բայց զայս և եթ ընտրեցի՝ զի մի միւ-
անգամ տրտմութե̅ եկից առ ձեզ:
2 * Զի եթէ ես տրտմեցուցանեմ զձեզ.
և

digitised by A.R.A.R.@

և ո՞վ է՝ որ ուրախ առնիցէ զիս, եթէ ոչ՝
որ տրտմեցեալն յինէն։ *Եւ զայս զի գրե- 3
ցի՝ զի մի՛ յորժամ գայցեմ տրտմութ͞ն ինչ
կրիցեմ, ուստի արժանն իցէ ինձ ուրախ
լինել. յուսացեալ եմ ՚ի ձեզ ամենեսին,
զի իմ ուրախութիւն՝ ձեր ամենեցուն է։
*Զի ՚ի բ͞զմ վշտաց՝ և ՚ի նեղութ͞է սրտի 4
գրեցի առ ձեզ բ͞զմ արտասուօք. ոչ զի
տրտմեսջիք, այլ զի զսէրն իմ գիտաս-
ջիք, զոր ունիմ առաւելապէս առ ձեզ։
*Ապա եթէ ոք տրտմեցոյց՝ ոչ եթէ զիս 5
տրտմեցոյց՝ այլ փոքր ՚ի շատէ, զի մի՛
ծանրացայց ամենեցուն ձեզ։ *Շատ է 6
այնպիսւոյն պատուհասն այն՝ որ ՚ի բազ-
մաց անտի է։ *Ապա յուսհետև նմին հա- 7
կառակ՝ մանաւանդ շնորհել ձեզ նմա՝ և
մխիթարել. զի մի՛ յառաւել տրտմութ͞ն
ընկղմեսցի այնպիսին։ *Վ͞ն որոյ աղա- 8
չեմ զձեզ հաստատել ՚ի նա զսէրն։ *Վ͞ն 9
այնորիկ իսկ և գրեցի. զի զչափ առից
զձեր՝ եթէ յա͞մի հպատակ իցէք։ *Զի 10
եթէ ումեք շնորհիցէք՝ և ես. ք͞զի և
ես եթէ շնորհիցեմ, զոր ինչ շնորհեցի՝
վ͞ն ձեր ՚ի դէմս ք͞սի. *զի մի՛ զրկեսցիմք 11
՚ի սատանայէ. ք͞զի չեմք ինչ անտեղ-
եակ խորհրդոցն նորա։

Գ Կ *Այլ իբրև հասի ես ՚ի Տրովադա յա- 12
ւետարանն ք͞սի, և դուռն բաց էր ինձ
՚ի տ͞ր, *ոչ եղև հանգիստ հոգւոյ ի- 13
մում. ք͞զի ոչ գտի ես անդ զտիտոս զեղ-
բայր

digitised by A.R.A.R.@

բայր իմ. այլ հրաժարեալ 'ի նոցանէ՝ գը-
14 նացի 'ի Մակեդոնիա: *Այլ ա̃յ շնորհք՝
որ յա̃մի հռչակ հարկանէ զմեզ 'ի ք̃ս
յ̃ս, և զհոտ գիտութեան իւրոյ յայտնի
15 առնէ մեօք յա̃մ տեղիս. *զի հոտ անոյշ
եմք ք̃ի առ ա̃ծ՝ 'ի մէջ փրկելոցն՝ և 'ի
16 մէջ կորուսելոցն. *ոմանց հոտ՝ մահ-
ուանէ 'ի մահ, և ոմանց հոտ՝ կենդանու-
թե̃ 'ի կեանս. և առ այս ո՞ բաւական ի-
17 ցէ: *Քանզի ոչ եմք իբրև զայլսն, որ
վաճառականս լինին բանին ա̃յ. այլ իբրև
'ի հաստատութե̃, այլ իբրև յա̃յ առաջի
ա̃յ 'ի ք̃ս խօսիմք:

## ԳԼ. Գ:

1 Սկսանիմք այսուհետև վերստին զան-
ձինս ընծայեցուցանել. թէպէտ և
ոչ պիտոյ իցեն մեզ, ո̃պ ոմանց թուղթք
2 ընծայութե̃ առ ձեզ, կա̃մ 'ի ձէնջ: *Այլ
թուղթք մեր դուք էք. գրեալ 'ի սիրտս
մեր, ծանուցեալ և ընթերցեալ յա̃մ
3 մարդկանէ. *յայտնեալք՝ զի էք թուղթք
ք̃ի, պաշտեցեալ 'ի մէնջ. և գրեալ՝
ոչ մրով, այլ հոգւոյն ա̃յ կենդանւոյ.
ոչ 'ի տախտակս քարեղէնս, այլ 'ի տախ-
տակս սրտի մարմնեղէնս:
4 *Յոյս մի այսպիսի ունիմք 'ի ձեռն ք̃ի ԳԴ
5 առ ա̃ծ. *իբր ոչ եթէ անձամբ բաւա-
կան եմք խորհել ինչ իբրև 'ի մէնջ. այլ
6 բաւականութի̃ն մեր յա̃յ է. *որ և բա-
ւա-

digitised by A.R.A.R.@

ւականս արար զմեզ՝ պաշտօնեայս նորոց
կտակարանացս՝ ոչ գրով, այլ հոգւով.
զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցու-
ցանէ։ * Ապա եթէ պաշտօնն մահու 7
գրով դրոշմեալ 'ի տախտակս քարեղէ-
նս՝ եղև փառօք, զի մի կարասցեն հայել
որդիքն Իսրայէլի յերեսս Մովսէսի՝ վասն փառաց
երեսաց նորա, որ խափանելոցն էր. * որ- 8
չափ ևս առաւել պաշտօն հոգւոյն եղի-
ցի փառօք։ * Ապա եթէ պաշտօն դատա- 9
պարտութեան փառօք էր, որչափ ևս առաւել
պաշտօն արդարութեան փառօք։ * Քանզի 10
ոչ եթէ փառաւորի փառաւորեալն յայսմ
մասին, վասն առաւելութեան փառացն։ * Ապա 11
եթէ որ խափանելոցն էր՝ այն փառօք
էր, որչափ ևս առաւել՝ որ կալոցն է՝ փա-
ռօք իցէ. * Արդ՝ զի ունիմք այսպի- 12
սի յոյս, բազում համարձակութեամբ վարես-
ցուք. * և ոչ որպէս Մովսէս արկանէր քող 13
'ի վերայ երեսաց իւրոց, վասն չհայելոյ որդ-
ւոցն Իսրայէլի 'ի վախճան խափանելոցն։
* Այլ կուրացան միտք նոցա. քանզի մինչև 14
ցայսօր ժամու նոյն քող ձգեալ կայ 'ի վերայ ըն-
թերցուածոց հին կտակարանացն. և ոչ
վերանայ, զի Քրիստոսիւ խափանելոց է։ * Այլ 15
մինչև ցայսօր՝ յորժամ ընթեռնուն զՄով-
սէս, նոյն առագաստ կայ 'ի վերայ սրտից նոցա.
* այլ յորժամ դարձցին առ Տէր, ապա 16
վերասցի առագաստն։ * Ապա Տէր Հոգին 17
Վ.Ջե. է. ուր Հոգի Տեառն է, անդ ազատութիւն է։
* Բայց

digitised by A.R.A.R.@

18 * Բայց մեր ամենեցուն բացաւ երեսօք
զփառսն տն իբրեւ ը հայելի տեսեալ,
'ի նոյն պատկեր նորոգիմք փառաց 'ի
փառս, որպ եւ 'ի տն հոգւոյ ։

## Գլ. Դ ։

1 Վն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս՝
որպ եւ գտաք զողորմութի, եւ ոչ ձանձ-
2 րանամք. * այլ հրաժարեցաք 'ի գաղտ-
նեաց ամօթոյն. զի մի՛ գնասցուք խորա-
մանկութբ, եւ մի՛ նենգեսցուք զբանն այ.
այլ յայտնութբ ճշմարտութեն ընծայե-
ցուսցուք զանձինս մեր առ ամ միտս
3 մարդկան առաջի այ ։ * Ապա թէ իցէ
եւս ծածկեալ աւետարանն մեր, 'ի մէջ
4 կորուսելոցն է ծածկեալ. * որոց աստ-
ուած աշխարհիս այսորիկ կուրացոյց ըզ-
միտս անհաւատիցն, զի մի՛ ծագեսցէ
'ի նս լուսաւորութի աւետարանի փա-
ռացն քսի. որ է պատկեր աներեւութին
5 այ ։ * Զի ոչ եթէ զանձինս քարոզեմք,
այլ զյս քս զտր. եւ զմեզ ծառայս ձեզ
6 վն քսի ։ * Զի Ած որ ասաց 'ի խաւարէ
լոյս ծագել. որ եւ ծագեաց իսկ 'ի սիրտս
մեր 'ի լուսաւորութի գիտութե փառացն
7 այ 'ի դէմս յսի քսի ։ * Այսուհետեւ ու-
նիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս.
զի առաւելութի զօրութեն իցէ յայ, եւ
8 ոչ 'ի մէնջ ։ * Յամենայնի նեղեալք՝
այլ ոչ նուաղեալք. կարօտեալք՝ այլ



digitised by A.R.A.R.@

ոչ տարակուսեալք. *հալածեալք՝ այլ 9
ոչ լքեալք. չարչարեալք՝ այլ ոչ սատա-
կեալք. *յա՟մ ժամ զմահն յի՟ 'ի մար- 10
մինս մեր կրեսցուք՝ զի և կեանքն յի՟ 'ի
մարմինս մեր յայտնեսցին: *Վասնզի 11
միշտ մեք՝ որ կենդանիքս եմք, 'ի մահ
մատնիմք վասն յի՟. զի և կեանքն յի՟
յայտնի լիցին 'ի մահկանացու մարմինս
մեր: *Այսուհետև մահ 'ի մեզ զօրա- 12
նայ, և կեանք 'ի ձեզ: *Արդ՝ ունիմք 13
զնոյն հոգի հաւատոց. ո՟պ և գրեալ է.
հաւատացի՝ վ՟ն որոյ և խօսեցայ. և մեք
հաւատամք՝ վասն որոյ և խօսիմք իսկ:
*Զի այս գիտեմք՝ եթէ որ յարոյց զյ՟ս, 14
և զմեզ ը՟ն յի՟ յարուսցէ՝ և յանդիման
կացուսցէ ձեօք հանդերձ. *Քանզի ա՟մ 15
ինչ վ՟ն ձեր է. զի շնորհքն յաճախեալք
'ի բազմաց 'ի գոհութ՟ե անտի՝ առաւելեա-
ցին 'ի փառս ա՟յ: *Վ՟ն որոյ և ոչ ձանձ- 16
րանամք. այլ թէպէտ և արտաքին մար-
դըս մեր ապականի, այլ ներքին մարդն
մեր նորոգի օր ը՟ս օրէ: *Զի առժա- 17
մայն յաճախութ՟ի թեթև նեղութ՟եա մե-
րում՝ 'ի յաւիտենականն առաւելութ՟ի,
զմեծութիւն փառացն գործէ 'ի մեզ:
*Վասնզի ոչ գիտեմք զերևելիս՝ այլ 18
զաներևոյթս. զի երևելիքս առժամա-
նակ մի են, և աներևոյթքն յաւիտենա-
կանք:



digitised by A.R.A.R.@

## Գլ. Ե։

1 Քանզի գիտեմք՝ եթէ երկրաւոր տա-
ճար շինուածոյս մերոյ քակտեսցի,
շինած յա՟յ ունիմք՝ տաճար առանց ձե-
ռագործի, յաւիտենական յերկինս ։
2 *Եւ ե՟ այս տաղտկամք. քանզի զբնա-
կութի՟ երկնից փափագեմք զգենուլ.
3 *միայն թէ յորժամ զգենուցումքն՝ ոչ
4 մերկ գտանիցիմք: *Քանզի որ եմք ե՟
յարկաւս ե՟ այսուիկ՝ տաղտկամք ծան-
րացեալք. զի ոչ կամիմք մերկանալ, այլ
զայն 'ի վ՟ր այսր զգենուլ. զի ընկղմես-
5 ցի մահկանացուս 'ի կենաց անտի: *Այլ
որ յաջողէն մեզ 'ի սոյն ա՟ծ է. որ ետ
մեզ զառհաւատչեայ հոգւոյն ։
6 *Արդ՝ համարձակիմք յա՟մ ժամ, և Եգ.Զ
գիտեմք՝ եթէ որչափ յամեմք 'ի մարմ՟նի
7 աստ օտարանամք 'ի տ՟նէ. * զի հաւա-
8 տովք գնամք՝ և ոչ կարծեօք: *Այլ հա-
մարձակիմք՝ և առաւել ևս հաճել եմք
ելանել 'ի մարմնոյ աստի՝ և մտանել առ
9 տ՟ծ: *Վասն որոյ և առատանամք. զի
եթէ յամիցեմք՝ և եթէ ելանիցեմք՝ հա-
10 ճոյ ևեթ լիցեմք նմ՟: *Քանզի ամենե-
ցուն մեզ յանդիման լինել կայ առաջի
ատենին ք՟սի. զի ընկալցի իւրաքանչիւր
իւրով մարմնով զոր ինչ գործեաց յա-
11 ռաջ՝ եթէ բարի, և եթէ չար ։ *Իսկ
արդ՝ զահն տ՟ն գիտելով չափ, զմարդ-
կանս

digitised by A.R.A.R.@

կան ինչ միտս հաճեմք. սակայն առաջի
Այ՟ յայտնելոց եմք. բայց ես յուսամ և
՚ի ձեր միտս յայտնի լինել: *Իբր ոչ ե- 12
թէ միւսանգամ զանձինս ինչ ընծայե-
ցուցանեմք ձեզ, այլ պատճառս տամք
ձեզ պարծանաց վ՟ն մեր. զի ունիցիք առ
այնոսիկ՝ որ առ աչան պարծիցին, և ոչ
սրտիւք: *Զի եթէ առանցաք ինչ՝ այն 13
Այ՟ է. և եթէ զգաստանամք՝ այն ձեր է:
*Զի սէրն ք՟սի ստիպէ զմեզ քննել զայս. 14
զի եթէ մին փոխանակ ամենեցուն մե-
ռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռե-
լեն. *Եւ ՚ի վ՟ն ամենեցուն մեռաւ, զի 15
որ կենդանիքն իցեն՝ մի անձանց իցեն
կենդանիք, այլ այնմ՝ որ ՚ի վ՟ն նոցայն
մեռաւ, և յարեաւ: *Այսուհետև մեք 16
ոչ զոք գիտեմք մարմնով. զի թէպէտ և
գիտէաք մարմնով զք՟ս, այլ արդ ոչ ևս
նոյնպէս գիտեմք: *Բայց եթէ ինչ ՚ի 17
ք՟ս նոր արարած իցէ. զի հինն անց, և
արդ նոր եղև ամ՟: *Այլ ամ՟ ինչ յԱյ՟՝ 18
որ հաշտեցոյցն զմեզ ը՟ իւր ՚ի ձեռն ք՟սի.
Վ՟Ջ և ետ մեզ զպաշտօնն հաշտութե՟:
*Քանզի ա՟ծ էր՝ ք՟սիւ զաշխարհս հաշ- 19
տեցուցանել ընդ իւր, և չհամարել ն՟ց
զմեղս իւրեանց, և եդ ՚ի մեզ զբանն
հաշտութե՟: *Արդ՝ վ՟ն ք՟սի պատգա- 20
մաւորիմք՝ ո՟ր և Այ՟ բարեխօսութ՟ մեօք:
աղաչեմք վ՟ն ք՟սի՝ հաշտեցարուք ը՟ Այ՟:
*Զի զայն՝ որ ոչն գիտէր զմեղս, վ՟ն 21
մեր

digitised by A.R.A.R.@

մեր մեղս արար . զի մեք եղիցուք նովաւ
արդարութի̃ այ̃ :

## ԳԼ. Զ.

1 Գործակից եմք ձեր՝ և աղաչեմք . մի
ընդունայն զշնորհսն այ̃ ընդունել
2 ձեզ . * զի 'ի ժամանակի ընդունելութ̃՝
ասէ , լուայ քեզ , և յաւուր փրկութ̃
օգնեցի քեզ : * Ահաւասիկ ժամանակ ը̃
3 ունելի . ահա օր փրկութ̃ : * Մի և մի
իւիք տայցեք պատճառս , զի մի արա-
4 տեսցի պաշտօնն . * այլ յա̃մի ընծայե-
ցուցէք զանձինս ձեր իբրև զպաշտօնեայս
այ̃՝ համբերութ̃բ բազմաւ՝ 'ի նեղութիս 'ի
5 վիշտս 'ի չարչարանս , * 'ի գանս 'ի բանտս
'ի խռովութիս յաշխատութիս 'ի հսկմունս 'ի
6 պահս , * 'ի սրբութ̃ 'ի գիտութ̃ յերկայն-
մտութ̃ 'ի քաղցրութ̃՝ 'ի հոգի սբ̃ , 'ի սէր՝
7 առանց կեղծաւորութ̃ , * 'ի բանս ճշմար-
տութ̃ , 'ի զօրութ̃ այ̃ . վս̃ զինուն արդա-
8 րութ̃ որ ը̃ աջմէն և ը̃ ահեկէն է . * փա-
ռօք և անարգութ̃բ , գովութ̃բ և պարսա-
9 ւանօք , իբրև մոլարք՝ և ճշմարիտք . * իբ-
րև անծանօթք՝ և ծանուցեալք . իբրև
մահկանացուք՝ և ահաւասիկ կենդանի
եմք . իբրև խրատեալք՝ և ոչ մահապար-
10 տեալք . * իբրև տրտմեալք , և հանա-
պազ ուրախ եմք . իբրև տնանկք՝ և զբա-
զումս մեծացուցանեմք . իբրև ոչինչ ու-
11 նիցիմք , և զա̃մ ինչ ունիմք : * Բերանք
մեր

digitised by A.R.A.R.@

մեր բացեալ են առ ձեզ՝ կորնթացիք. եւ
սիրտք մեր ընդարձակեալք: * Ոչ ինչ 12
նեղիք 'ի մեզ՝ բայց եթէ 'ի գութս ձեր
նեղիցիք: * արդ՝ զնոյն հատուցումն իբ- 13
րեւ զ որդեակս ունիմ. ընդարձակեցա-
րուք եւ դուք, * եւ մի լինիք լծակիցք ան- 14
հաւատից. քանզի զի՞նչ հաղորդութիւն է
արդարութեան ընդ անօրէնութեան. եւ կամ զի՞նչ
հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի. * եւ 15
կամ զի՞նչ միաբանութիւն է քրիստոսի ընդ բելիա-
րայ. կամ զի՞նչ բաժին կայ հաւատա-
ցելոյն ընդ անհաւատին. * կամ զի՞նչ 16
նմանութիւն է տաճարի այ մեհենաց: Ա-
պաքէն դուք տաճար այ կենդանւոյ էք.
որպ եւ ասաց ած, թէ բնակեցայց 'ի նս,
եւ գնացից 'ի նս. եւ եղէց նց ած, եւ նո-
քա եղիցին իմ ժողովուրդք: * Վն որոյ 17
ելէք 'ի միջոյ նց եւ մեկնեցարուք, ասէ
տր. եւ 'ի պիղծս մի մերձենայք. * եւ ես 18
ընկալայց զձեզ. եւ ես եղէց ձեզ 'ի հայր,
եւ դուք եղիջիք ինձ յուստերս եւ 'ի դըս-
տերս, ասէ տր ամենակալ:

## ԳԼ. Է.

Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք 1
սիրելիք, սրբեսցուք զանձինս մեր
յամ պղծութէ մարմնոյ եւ հոգւոյ. կա-
տարեսցուք զսրբութիւն ահիւն այ: * Տա- 2
րայք մեզ, զի ոչ ումեք մեղաք, եւ ոչ
զոք եղծաք, եւ ոչ զոք զրկեցաք: * Ոչ 3
եթէ

digitised by A.R.A.R.@

եթէ 'ի դատապարտութիւն ինչ ասեմ. քանզի
յառաջ իսկ ասացի, եթէ 'ի սրտի մե-
րում կայք՝ 'ի կեալ և 'ի մեռանել ընդ ձեզ։
4 *Բազում համարձակութիւն է ինձ առ ԴԿ
ձեզ. բազում պարծանք են ինձ վասն ձեր. լի
եմ մխիթարութեամբ. առաւելեալ եմ ու-
5 րախութեամբ յամենայն նեղութիւնս մեր։ *Քանզի
յորժամ հասաք մեք 'ի Մակեդոնիա,
և ոչ միով իւիք հանգիստ գտաւ մարմ-
նոյ մերում, այլ յամենայնի նեղեալք. քան-
զի արտաքոյ մարտք՝ և 'ի ներքոյ արհա-
6 ւիրք։ *Այլ որ մխիթարէն զխոնարհս,
մխիթարեաց զմեզ Աստուած 'ի գալստեանն
7 Տիտոսի։ *ոչ միայն 'ի գալստեան նորա.
այլ և 'ի մխիթարութեանն՝ զոր մխիթարե-
ցաւ նա 'ի ձեզ, 'ի պատմել մեզ զանձուկն
ձեր՝ զողբումն ձեր՝ զնախանձն ձեր վասն
իմ, մինչ առաւել ուրախ լինել ինձ։
8 *Զի թէ և տրտմեցուցի զձեզ թղթովն՝
ոչ զղջանամ, թէպէտ և զղջացեալ էի.
քանզի տեսանեմ՝ զի թուղթն այն թէ
և առ ժամանակ մի տրտմեցոյց զձեզ.
9 *արդ ուրախ եմ, ոչ զի տրտմեցայք՝ այլ
զի յապաշխարութիւն տրտմեցարուք. քանզի
տրտմեցայք դուք ըստ Աստուծոյ. զի մի իւիք զըր-
10 կիցիք 'ի մէնջ։ *Զի որ ըստ Աստուծոյ տրտ-
մութիւն է, ապաշխարութիւն 'ի փրկութիւն առանց
զղջանալոյ գործէ. իսկ աշխարհի տրտ-
11 մութիւն մահ գործէ։ *Արդ՝ նոյն իսկ որ
ըստ Աստուծոյ տրտմեցարուք, որչափ ինչ փոյթ
գոր-

digitised by A.R.A.R.@

գործեաց 'ի ձեզ, կամ աղերս կամ սաստ
կամ երկիւղ կամ անձուկ կամ նախանձ
կամ վրէժխնդրութիւն. քանզի յամենայնի ըն-
ծայեցուցիք զանձինս ձեր՝ որպէս լինել յի-
րիդ յայդմիկ: *Ապա ուրեմն՝ թէ և գրե- 12
ցի ես առ ձեզ, ոչ վասն այնորիկ որ զըր-
կեացն, և ոչ վասն այնորիկ որ զրկեցաւն.
այլ վասն յայտնի լինելոյ փութոյն ձերոյ
որ վասն մեր՝ առ ձեզ առաջի Աստուծոյ: *Վասն 13
այնորիկ մխիթարեալ եմք 'ի վերայ մխիթա-
րութեանն մերոյ. առաւել ևս խնդացաք
'ի վերայ խնդութեանն տիտոսի. քանզի հան-
գուցեալ էր հոգի նորա 'ի ձէնջ ամենե-
ցունց: *Զի զինչ և պարծեցայ առ նմա 14
վասն ձեր՝ ոչ ամաչեցի. այլ որպէս զամենայն ճըշ-
մարտութիւն խօսեցաք ընդ ձեզ, նոյնպէս և
պարծանքն մեր առ տիտոսի ճշմարիտ ե-
ղեն: *Եւ գութք նորա առաւել ևս 15
են 'ի ձեզ. քանզի յիշեցուցանէր մեզ զա-
մենեցուն զձեր հնազանդութիւն, թէ որ-
պէս ահիւ և դողութեամբ ընկալարուք զնա:
*Եւ արդ՝ ուրախ եմ. զի յամենայնի համար- 16
ձակ եմ առ ձեզ:

## ԳԼ. Ը:

ԴԲ Ծանուցանեմ ձեզ եղբարք զշնորհսն Աստուծոյ, 1
որ տուեալ են եկեղեցեացն մակե-
դոնացւոց. *զի մեծաւ հանդիսիւ նե- 2
ղութեան առաւելութիւն խնդութեանն նոցա, և ծանր
աղքատութիւն նոցա, առաւել եղև 'ի մե-
ծու-

digitised by A.R.A.R.@

3 ծունըն առատութե նց. * զի ըստ կարի նց
4 վկայեմ, և աւելի քան զկար. * ինքնա-
կամ բազում աղաչանօք աղաչէին զշնորհսն
և զհաղորդութի պաշտամանն որ 'ի սուրբսն՝
5 տալ ցմեզ: * Ո՛չ որչափ ակն ունէաք,
այլ և զանձինս ես ետուն, նախ տն՝ և
6 ապա մեզ կամօքն այ. * աղաչել զտի-
տոս՝ զի որպ սկսաւն յառաջագոյն, նոյն-
պէս և կատարեսցէ 'ի ձեզ և զայդ ևս
7 շնորհ: * Այլ որպ յամի առաւել էք հա-
ւատովք՝ և բանիւ և գիտութբ և ամ
փութով, և որ 'ի մէնջ 'ի ձեզ սէրն է, զի
և յայդմ ևս շնորհի առաւել լինիցիք:
8 * Ո՛չ որպ հրամանաւ տալով ասեմ. այլ վսն
այլոց փութոյ, և վսն ձերոյ սիրոյ՝ զմտեր-
9 մութիդ փորձեմ: * Վանզի գիտէք ըզ-
շնորհսն տն մերոյ յսի քսի. զի վսն ձեր
աղքատացաւ՝ որ մեծատունն էր, զի դուք
10 նորա աղքատութբն մեծասջիք: * Եւ խրատ
մի յայսմիկ տամ. զի այն իսկ օգուտ ձեզ
է. որք ոչ միայն զառնելն՝ այլ և զկամելն
յառաջագոյն սկսայք 'ի հերուն հետէ:
11 * Բայց արդ և զառնելն իսկ կատարե-
ցէք. զի որպ յօժարութիւն 'ի կամաց է,
12 նոյնպէս և առնելն ըստ գոյից: * Զի ե-
թէ յօժարութիւն առաջի կայ, ըստ գոյից
13 ընդունելի է՝ և ոչ եթէ ըստ չգոյից: * Զի
ոչ եթէ այլոց հանգիստ կամիցիմ, և
14 ձեզ նեղութի: * Այլ հաւասարութբ
յայժմու ժամանակիս, ձեր առաւելու-

digitised by A.R.A.R.@

թի՟դ 'ի նո՟ց պակասութե՟ն. զի և նո՟ց առա-
ւելութի՟ն եղիցի 'ի ձերում պակասու-
թե՟դ. զի եղիցի հաւասարութի՟՝ որ՟պ և
գրեալ է. *Թէ որ բազումն առ՝ ոչ ա- 15
ռաւելաւ, և որ սակաւն՝ ոչ նուազեցաւ:
Դ-Գ *Բայց շնորհք ա՟յ՝ որ արկ զնոյն փոյթ 16
վ՟ն ձեր 'ի սիրտ տիտոսի. *զի զաղա- 17
չանսն ընկալաւ՝ և փութացաւ յօժարա-
գոյնս գնաց գալ առ ձեզ: *Եւ ա- 18
ռաքեցաք ը՟ն նմ՟ զեղբայրն՝ որոյ գովու-
թի՟ն յաւետարանի անդ է ը՟ն ա՟մ եկեղե-
ցիս: *Եւ ոչ այսչափ միայն, այլ և ձեռ- 19
նադրե՟լ յեկեղեցեաց անտի, նշդեհա-
կից մեր եղև 'ի շնորհս յայսմիկ՝ որ պաշ-
տին 'ի մէնջ 'ի փառս տ՟ն՝ և 'ի մեր յօ-
ժարութի՟: *Բայց զայս խղձեաք իսկ՝ 20
թէ գուցէ արատ ոք ինչ դնիցէ 'ի հաս-
տատութե՟ս յայսմիկ՝ որ պաշտեցաւս 'ի
մէնջ: *Քանզի խորհիմք զբարիս՝ ոչ 21
միայն առաջի տ՟ն, այլ և առաջի մարդ-
կան: *Եւ առաքեցաք ը՟ն ն՟ս զեղբայրն 22
մեր՝ զոր ընտրեցաք 'ի բազում իրս բ՟զմ
անգամ պինդ գտեալ. և առաւել ևս
այժմ պնդագոյն՝ յուսով մեծաւ 'ի ձեզ:
*Բայց եթէ վասն տիտոսի ինչ բանք 23
են, իմ հաւասար է՝ և ձեր գործակից.
և եթէ եղբարք մեր, առաքեալքն ե-
կեղեցւոյ՝ և փառք ք՟սի: *Եւ արդ՝ ըզ- 24
հանդէս սիրոյ ձերոյ՝ և զմերոյ պարծա-
նացն վասն ձեր, 'ի դոսա ցուցջիք յան-
դի-

digitised by A.R.A.R.@

դիմաց ամենայն եկեղեցեաց :

## ԳԼ. Թ.

1 Այլ վ՟ն պաշտամանն որ 'ի սուրբսն է, Դ.Դ.
2 աւելի է ինձ և գրել առ ձեզ: * Զի
գիտեմ զյօժարութի՟ ձեր, զոր վ՟ն ձեր
պարծեցեալ եմ 'ի մէջ մակեդովնաց-
ւոցն, թէ աքայեցիքն 'ի հերուն հետէ
պատրաստ են. և ձեր նախանձն զբա-
3 զումս յորդորեաց: * Եւ առաքեցաք
զեղբարսն՝ զի մի՛ պարծանքն մեր որ վ՟ն
ձեր՝ ընդունայն լինիցին 'ի մասինդ յայդ-
միկ. այլ ո՛չ ասէի իսկ, պատրաստա-
4 գոյնք գտանիջի՛ք. * գուցէ յորժամ
գայցեն ը՟ մեզ մակեդովնացիքն՝ և գտա-
նիցեն զձեզ անպատրաստս, և ամաչես-
ցուք մեք. զի մի՛ ասասցուք՝ թէ դուք,
5 'ի մասինդ յայդմիկ պարծանաց: * Արդ՝
կարևոր համարեցայ աղաչել զեղբարս,
զի յառաջագոյն իսկ եկեսցեն առ ձեզ
և յառաջագոյն պատրաստեսցեն զյա-
ռաջագոյն խոստացեալ օրհնութի՟ն ձեր 'ի
պատրաստի ունել. այնպ՟ իբրև զօրհնութի՟,
6 և մի՛ իբրև զագահութի՟: * Քանզի որ
սերմանէ ժլատելով՝ ժլատելով և հնձեսցէ.
և որ սերմանէ առատութ՟՝ առատութ՟ և
7 հնձեսցէ: * Իւրաքանչիւր ո՟պ և յօժա-
րեսցի ոք սրտիւ, մի՛ առ հարկի և տրտ-
մութե՟. քանզի զտուրս զուարթառատս
8 սիրէ ա՟ծ: * Այլ կարող է ա՟ծ զա՟մ շը-
նորհս

digitised by A.R.A.R.@

նորհս առաւելուլ ՚ի ձեզ. զի յամենայնի
յա՟մ ժամ զա՟մ բաւականութի՟ ընկալեալ՝
առաւելուցուք յա՟մ գործս բարութե՟,
*ո՟պ և գրեալ է. սփռեաց և ետ տնան- 9
կաց. արդարութի՟ նր՟ մնայ յաւիտեան:
Դ.Ե.*Իսկ այն որ պարգևէ սերմն սերմանա- 10
հանաց՝ և հաց ՚ի կերակուր, պարգևես-
ցէ և բազմացուսցէ զսերմանիս ձեր, և
աճեցուսցէ զարդիւնս արդարութե՟ ձե-
րոյ. *յամենայնի մեծացեալք ա՟մ ա- 11
ռատութե՟՝ որ յօրինէն մեօք գոհութի՟ այ՟.
*Զի պաշտօն հարկիս այսորիկ՝ ոչ միայն 12
առ ՚ի լնուլ զպակասութի՟ սր՟ցն է, այլ
և առաւելուլ բազմօք գոհութի՟ս այ՟.
*հանդիսիւ պաշտամանս այսորիկ փա- 13
ռաւորել զա՟ծ ՚ի վ՟ր հնազանդութե՟ խոս-
տովանութե՟ ձերոյ յաւետարանն ք՟սի.
և առատութե՟ հաղորդութե՟ն ՚ի նո՟՝ և յա-
մենեսին. և նո՟ աղօթք վ՟ ձեր. քանզի
անձկացեալ են առ ձեզ վ՟ առաւել շնոր-
հացն այ՟՝ որ ՚ի ձեզ: *Իսկ շնորհք այ՟ 14
՚ի վ՟ր անպատում պարգևացն նր՟:

## Գլ. Ժ.

Իսկ ես ինքն պօղոս աղաչեմ զձեզ հե- 1
զութ՟բն և հանդարտութ՟բն ք՟սի, որ
յանդիման ձեզ՝ իբրև տառապեալ մի
եմ ՚ի միջի ձերում. բայց ՚ի հեռուստ
համարձակիմ առ ձեզ: *Աղաչեմ, զի 2
մի՛ ՚ի մօտոյ ևեթ համարձակիցիմ վստա-
հու-

digitised by A.R.A.R.@

հութբ. կմ համարիցիմ յանդգնել 'ի
վր ոմանց, որ կարծեն զմէնջ՝ եթէ իբ
3 մարմնոյ գնայցեմք։ * Զի թէպէտ և
մարմնով գնամք՝ այլ ոչ եթէ իբ մարմ-
4 նոյ զինուորիմք։ * Զի զէն զինուորու-
թեն մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրա-
ւոր յԱյ, առ 'ի քակելոյ զամուրս, զխոր-
5 հուրդս քակեմք, * և զամ բարձրութի
հպարտացեալ 'ի վր գիտութեն Այ. և
գերեմք զամ միտս 'ի հնազանդութիւն Քսի.
6 * և 'ի պատրաստի ունիմք խնդրել զվրէժ
ամ անհնազանդութեն՝ յորժամ ձեր ևս
հնազանդութիւդ կատարեսցի։
7 * Ըստ իւրաքանչիւր երեսաց դիտեսջիք. Դ. Զ.
եթէ ոք վստահ յանձն իցէ Քսի լինել,
զայս խորհեսցի դարձեալ 'ի միտս իւր,
թէ որպ նայն Քսի է՝ նոյնպէս և մեք։
8 * Զի թէ առաւել ևս պարծեցայց վն
իշխանութես մերոյ՝ զոր ետ մեզ Տր 'ի շի-
նել՝ և ոչ 'ի քակել զձեզ, ոչինչ ամաչե-
9 ցից։ * զի մի թուեցայց իբրև ահ ինչ
10 արկանել ձեզ թղթովքս։ * Ասիցէք,
թուղթքս ծանունք են և սաստիկք. բայց
տեսիլ մարմնոյ տկար՝ և բանն արհա-
11 մարհեալ. * զայս խորհեսցի այնպիսին,
զի որպիսիք եմք բանիւք թղթոցդ 'ի հե-
ռուստ, նոյնպիսիք և 'ի մօտոյ արդեամբք։
12 * Քանզի ոչ իշխեմք կշռել և հաւասա-
րել զանձինս մեր ոմանց, որ զանձինս իւր-
եանց ձեզ ընծայեցուցանեն. այլ ան-
ձամբ

digitised by A.R.A.R.@

ձամբ յանձինս՝ զանձինս չափեն, եւ 'ի
կշռել անձամբ յանձինս՝ ոչ առնուն 'ի
միտ։ *Այլ մեք ոչ եթէ յանչափս ինչ 13
պարծեսցուք. այլ ըստ չափոյ կանոնին,
զոր բաժանեաց մեզ Աստուած չափով հասա-
նել մինչեւ առ ձեզ։ *Զի ոչ եթէ հա- 14
սու ինչ չիցեմք 'ի ձեզ, եւ ձգտեցուցանի-
ցեմք զանձինս. քանզի մինչեւ առ ձեզ
հասաք աւետարանաւն Քրիստոսի։ *Եւ ոչ 15
յանչափս ինչ պարծիմք օտար վաստա-
կօք։ Բայց յոյս մի ունիմք զաճմանն հա-
ւատոյ ձերոյ՝ այդրէն 'ի ձեզ մեծանալոյ՝
ըստ կանոնիս մերոյ յառաւելուլն. *'ի վեր 16
եւս քան զձեզ աւետարանել՝ ոչ օտար կա-
նոնաւ 'ի պատրաստականս ինչ պարծել։
*Զի որ պարծին՝ 'ի Տէր պարծեսցի։ 17
ԲԿ *Զի ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցու- 18
ցանէ՝ նա է ընտրեալ. այլ զոր Տէրն ըն-
ծայեցուցանէ։

## ԳԼ. ԺԱ.

Լաւ էր եթէ ներէիք փոքր մի եւ իմում 1
անզգամութեանս. այլ եւ անսայցէք իսկ։
*Նախանձեցուցանեմ զձեզ 'ի նախանձ 2
Աստուծոյ. զի խօսեցայ զձեզ առն միում, իբ-
րեւ զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել
Քրիստոսի։ *Բայց երկնչիմ գուցէ որպէս օձն
խաբեաց զԵւայ խորամանկութեամբ իւրով՝
ապականեսցին միտք ձեր 'ի միամտութենէն
որ 'ի Քրիստոս։ *Զի եթէ որ գալոցն իցէ՝ 4
այլ

digitised by A.R.A.R.@

այլ քարոզիցէ՝ զոր մեքն ոչ քարոզե-
ցաք, կամ ոգի օտար առնուցուք՝ զոր ոչ
առէք, կամ աւետարան օտար՝ զոր ոչ ըն-
5 կալարուք, բարւոք անսայիք նմա: * Բայց
ես այսպէս համարիմ, թէ ոչինչ իւիք
պակաս իցեմ քան զլաւ առաքեալսն:
6 *Թէպէտ և տգէտ ես իցեմ բանիւ, այլ
ոչ եթէ գիտութեամբ. սակայն յամենայնի յայտ-
7 նեցաք զանձինս ամենևին առ ձեզ: * Ու
եթէ վնաս ինչ գործեցի՝ զի զանձն խո-
նարհեցուցի. և այն՝ զի դուք բարձրաս-
ջիք. զի ձրի զաւետարանն այ աւետա-
8 րանեցի ձեզ: * զայլ եկեղեցիս կողոպ-
տեցի առեալ թոշակ 'ի ձեր սպասաւո-
9 րութիւն: * Ու յորժամ եկի առ ձեզ. թէ-
պէտ և պակասեաց ինչ, ոչ զոք 'ի ձէնջ
ձանձրացուցի, զի զպակասութիւն իմ լցին
եղբարքն եկեալք 'ի Մակեդոնիացւոց.
և յամենայնի առանց ծանրանալոյ ձեզ զանձն
10 իմ պահեցի՝ և պահեցից: * քանզի գոյ
յիս ճշմարտութիւն Քսի:
Զի պարծանքս այս ոչ արգելցին յինէն ԲԴ
11 'ի կողմանս աքայեցւոց: * Ընդէր. իբրու
թէ ոչ սիրիցեմ զձեզ. զայն այ գիտէ.
12 * զոր առնեմն՝ և արարից, զի հատից
զպատճառս այնոցիկ՝ որ զպատճառսն
կամիցին. զի որով պարծիցինն, և նոքա
13 իբրև զմեզ գտանիցին: * Զի այնպի-
սիքն սուտ առաքեալք, մշակք նենգա-
ւորք, կերպարանեալք 'ի կերպարանս ա-

digitised by A.R.A.R.@ ռա-

առաքելոց Քրի՟։ *Եւ չէ ինչ զարմանք. 14
քանզի և ինքն սատանայ կերպարանի 'ի
հրեշտակ լուսոյ. *Եւ ոչինչ է մեծ՝ թէ 15
և պաշտօնեայք նր՟ կերպարանին իբրև
պաշտօնեայք արդարութե՟. որոց կատա-
րածն եղիցի ը՟ գործոց իւրեանց։ *Դար-
ձեալ ասեմ. մի՛ ոք համարեսցի զիս անզգա- 16
գամ. ապա թէ ոչ՝ գո՛նէ իբրև զանզգամ
ընկալարո՛ւք զիս, զի և ես փոքր մի ինչ
պարծեցայց։ *Եւ զոր խօսիմս՝ ո՛չ եթէ 17
ը՟ տ՟ն խօսիմ, այլ իբրև անզգամութե՟
ը՟ կարգի այդց պարծանաց։ *Եւ ք՟զի 18
բզ՟մք պարծին ը՟ մարմնոյ՝ և ես պարծե-
ցայց։ *Ա՛տադիւր իմն անսայիք անմը- 19
տացն ձերովդ իմաստութե՟։ *Ք՟զի ան- 20
սայք, եթէ ոք խաբէ զձեզ, եթէ ոք ծա-
ռայեցուցանէ. եթէ ոք ուտէ զձեր, ե-
թէ ոք առնու ինչ, եթէ ոք հպարտա-
նայ, եթէ ոք զձեզ յանդիման հարկա-
նէ։ *Ըստ անարգանացդ ասեմ, իբրև 21
թէ մեք տկարացա՟ք արդեօք. յոր ինչ
ոք համարձակիցի, անզգամութե՟ ասեմ,
համարձակիմ և ես։ *Եբրայեցի՟ք ի- 22
ցեն, և ես. իէլացի՟ք իցեն, և ես. զա-
ւակ աբրահամու՟ իցեն, և ես. *պաշ- 23
տօնեա՟յք Քրի՟ իցեն, յանդգնագոյնս ա-
սացից՝ թէ առաւել ևս ես, եթէ վաս-
տակօք՝ առաւել, եթէ գանիւք՝ ևս ա-
ռաւել. եթէ բանտիւ՝ աւելի՛ քան զնո՟,
եթէ մահուամբք՝ բզ՟մ անգամ։ *'ի 24

Հրէ-

digitised by A.R.A.R.@

Հրէից հնգիցս՝ քառասուն միով պակաս
25 արբի. * Երիցս ձաղկեցայ. միանգամ
քարկոծ եղէ. երիցս նաւակոծ եղէ. ըզ-
տիւ և զգիշեր յանդունդս տառապեցայ.
26 * 'ի ճանապարհս բազում անգամ: վիշտս
'ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս
յազգէ, վիշտս 'ի հեթանոսաց, վիշտս
'ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս
27 'ի ծովու, վիշտս 'ի սուտ եղբարց: * 'Ի
ջանս՝ և 'ի վաստակս. 'ի տքնութի՟ս բա-
զում անգամ, 'ի քաղց և 'ի ծարաւ. 'ի
պահս բազում անգամ. 'ի ցուրտ և 'ի մեր-
28 կութե՟: * Թող զայլ նեղութի՟ս. և զի
հանապազ խուժանն 'ի վ՟ր իմ կուտէր՝
29 և հոգք ա՟մ եկեղեցեացն: * Ո՞ հիւան-
դանայ՝ և ոչ ես հիւանդանամ. ո՞ գայ-
թագղի՝ և ոչ ես տապանամ:
30 * Եթէ պարծել ինչ պարտ իցէ, զտը- Բ. Զ
31 կարութե՟ն պարծեցայց: * Ա՟ծ և հայր տ՟ն
մերոյ յ՟ի ք՟ի գիտէ՝ որ է օրհնե՟լ յա-
32 ւիտեանս, զի ոչ ստեմ: * 'Ի դամասկոս
ազգապետն արետայ արքայի պահէր ըզ-
33 քաղաքն դամասկացւոց ունել զիս. * և
ը՟ պատուհանն վանդակաւ կախեցայ ը՟
պարիսպն, և փախեայ 'ի ձեռաց ն՟ր:

## ԳԼ. ԺԲ.

1 Արդ՝ պարծել ինչ պարտ իցէ. այլ
օգնէ ինչ ոչ: Բայց եկից 'ի տեսիլս
2 և 'ի յայտնութի՟ս տ՟ն: * Գիտեմ այր մի
'ի

digitised by A.R.A.R.@

՚ի ք՟ս յառաջ քան զչորեքտասան ամ, ե-
թէ մարմնով՝ ոչ գիտեմ, և եթէ առանց
մարմնոյ՝ ոչ գիտեմ, ա՟ծ գիտէ. յափշ-
տակեալ զայնպիսին մինչև յերրորդ եր-
կինս: *Եւ գիտեմ զայնպիսի այր. ե- 3
թէ մարմնով և եթէ առանց մարմնոյ՝
ոչ գիտեմ. ա՟ծ գիտէ, *զի յափշտա- 4
կեցաւ ՚ի դրախտն. և լուաւ բանս ան-
ճառս, զոր ոչ է պարտ մարդոյ խօսել:
*Վասն այնպիսւոյն պարծեցայց. այլ 5
վ՟ս անձին իմ ոչ պարծեցայց. բայց ե-
թէ ՚ի տկարութ՟իս: *Զի եթէ և կամի- 6
ցիմ պարծել՝ ոչ եղէց անզգամ, քանզի
զարդարն ասեմ. այլ անխայեմ, գուցէ
ոք համարիցի ինչ յիս աւելի՝ քան զոր
տեսանիցէ յիս՝ կ՟մ լսիցէ յինէն: *Եւ զի 7
մի առաւելութ՟ք յայտնութեցն հպարտա-
ցայց, տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշ-
տակ սատանի՝ կռփել զիս. զի մի հպար-
տացայց: *Եւ վ՟ս այնորիկ երիցս անգամ 8
աղաչեցի զտ՟ր՝ զի ՚ի բաց արասցէ յինէն.
*և ասէ ցիս. շատ է քեզ շնորհք իմ, 9
զի զօրութ՟ի իմ ՚ի տկարութ՟ե կատարի: և
արդ՝ լաւ ևս լիցի ինձ պարծել ՚ի տկա-
րութ՟իս, զի բնակեսցէ յիս զօրութ՟իւն ք՟սի:
գ.դ.*Վասն որոյ հաճեալ եմ ընդ տկա- 10
րութ՟իս, ընդ թշնամանս, ընդ վիշտս,
ընդ հալածանս, և ը՟ նեղութ՟իս վասն
ք՟սի. զի յորժամ տկարանամ, յայնժամ
զօրանամ: *Եղէ անզգամ, ՟քզի դուք 11
ստի-

digitised by A.R.A.R.@

ստիպեցիք զիս. զի ինձ պարտ էր 'ի ձէնջ
վկայուլ առնուլ՝ թէ ոչինչ պակաս գը-
տայ քն զլաւ առաքեալսն. զի թէպէտ
12 և ես ոչինչ եմ. *սակայն նշանք առա-
քելոյ գործեցան 'ի ձեզ՝ ամ̃ համբերու-
թբ̃, նշանօք և արուեստիւք և զօրու-
13 թբ̃ք։ *Եւ արդ զի՞նչ իցէ, որո՞վ պա-
կաս գտայք քան զայլ եկեղեցիս. բայց
եթէ այսու զի ես զձեզ ոչ ձանձրացուցի,
14 շնորհեցէ՛ք ինձ զվնասդ զայդ։ *Ահա-
ւասիկ այս երիցս անգամ պատրաստեալ
եմ գալ առ ձեզ. և ձեզ բեռն ինչ ոչ
եղէց. զի ոչ խնդրեմ ինչ զձեր՝ այլ զձ-
ձեզ. քզի ոչ պարտին որդիք հարց գան-
15 ձել՝ այլ հարք որդւոց։ *Բայց ես մտա-
դիւրութբ̃ ծախեցից, և ծախեցայց վս̃
անձանց ձերոց. զի թէպէտ և յառաւել
16 սիրոյն զձեզ սակաւ սիրիցեմ։ *Այլ
դու եթէ ես ոչինչ ծանրացայ ձեզ. այլ
քզի խորագէտ էի, խեղօք կալայ զձեզ։
17 *Միթէ որովք առաքեցին առ ձեզ՝ նո-
18 քօք ինչ ագահեցի՞ 'ի ձէնջ։ *Աղաչե-
ցի զտիտոս՝ և առաքեցի ը̃ նմ զեղբայրն
միթէ ագահեա՞ց ինչ զձեր տիտոս։ ո՞չ
նովին ոգւով գնացաք. ո՞չ նովին շաւղօք
շրջեցաք։
19 *Դարձեալ համարիցիք՝ եթէ յողոք ան- գ. Զ.
կեալ ինչ ձեզ աղերսիցեմք։ առաջի այ̃
'ի քս̃ խօսիմք, զի ամենայն ինչ սիրելիք
20 վս̃ ձերոյ շինութե̃ է։ *Այլ երկնչիմ,
digitised by A.R.A.R.@ գու-

գուցէ եկեալ՝ ոչ որպէս ես կամիցիմ գտանի-
ցեմ զձեզ. եւ ես գտանիցիմ ձեզ՝ որպէս եւ
դուք ոչ կամիցիք: գուցէ դարձեալ՝ հեռ
նախանձ սրտմտութիւնք գրգռութիւնք, չարա-
խօսութիւնք քսութիւնք, հպարտութիւնք ամբար-
տաւանութիւնք խռովութիւնք: *Գուցէ դար- 21
ձեալ յորժամ գայցեմ նկուն ինչ առնի-
ցէ զիս Աստուած իմ առ ձեզ. եւ սուգ առնու-
ցում վասն բազմաց յառաջագոյն մեղուցելոց,
եւ ոչ ապաշխարելոց՝ 'ի վերայ պղծութեան եւ
պոռնկութեան եւ գիջութեան՝ զոր գործեցին:

## ԳԼ. ԺԳ.

Այս երիցս անգամ գամ առ ձեզ. զի 1
'ի բերանոյ երկուց եւ երից վկայից
հաստատեսցի ամենայն բան: *Յառաջ ասա- 2
ցի եւ դարձեալ կանխաւ ասեմ յանդի-
ման երկիցս անգամ. եւ այժմ 'ի բա-
ցուստ գրեմ յառաջագոյն յանցուցելոյն
եւ այլոցն ամենեցուն. զի եթէ եկից
դարձեալ՝ ոչ խնայեցից: *Եթէ զփորձ 3
ինչ խնդրէք զՔրիստոսի, որ ինեւս ընդ ձեզ խօսի
որ հզօրացեալն է 'ի ձեզ, եւ ոչ տկարա-
ցեալ: *Զի թէպէտ եւ խաչեցաւ 'ի 4
մերմէ տկարութենէ, այլ կենդանի է զօրու-
թեամբն Աստուծոյ: եւ մեք թէպէտ եւ տկարանայ-
ցեմք վասն նորա, այլ կենդանի լինիցուք ընդ նմա
զօրութեամբն Աստուծոյ:
Դ. Կ. *Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայք 5
'ի նոյն հաւատս. քննեցէք զանձինս, ե-
թէ

digitised by A.R.A.R.@

թէ ոչ գիտէք զանձինս՝ զի Քս Յս ՚ի ձեզ
6 է. բայց եթէ անպիտան ինչ իցէք։ *Այլ
ակն ունիմ թէ գիտիցէք. զի մեք ոչ եմք
7 անպիտանք։ *Այլ խնդրեմք յԱյ՝ զի մի
ինչ արասցէ ձեզ չար. ոչ զի մեք ընտիրք
երեւեսցուք, այլ զի դուք զբարիս գոր-
8 ծիցէք՝ և մեք անպիտանք իցեմք։ *զի
ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճշմար-
տութեն. այլ վերակացու եմք ճշմարտու-
9 թեն։ *Խրախ եմք՝ յորժամ մեք տկա-
րանայցեմք՝ և դուք զօրաւորք իցէք։ Ըզ-
դոյն իսկ և աղօթս առնեմք զձեր հաս-
10 տատութիւ։ *Վասն այնորիկ զայս ՚ի
հեռուստ գրեմ. զի մի յորժամ եկից՝
սաստկութբ վարեցայց՝ ըստ իշխանութեն,
զոր ետ ինձ Տր ՚ի շինել՝ և ոչ ՚ի քակել։
11 * Այսուհետև եղբարք, ողջ լերուք՝
հաստատուն կացէք՝ մխիթարեցարուք՝
միաբան լերուք՝ խաղաղութի արարէք.
և Ած խաղաղութե և սիրոյ՝ եղիցի ընդ ձեզ։
12 *Ողջոյն տուք միմեանց ՚ի համբոյր սըր-
բութե։ ողջոյն տան ձեզ սուրբք ամ։
13 *Շնորհք Տն մերոյ Յսի Քսի, և սէրն
Այ, և հաղորդութի հոգւոյն Սբոյ ընդ ձեզ
ամենեսին, ամէն։

Բ. Կորնթացւոց թղթոյն՝ գրեցաւ ՚ի փիլիպեայ,
՚ի ձեռն տիտոսի և ղուկասու։

Թ.ՃԽԳ Թ.

digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍՆ.

### ԳԼ. Ա.

Դ·Դ· Պօղոս առաքեալ ոչ 'ի մարդկանէ և ոչ 'ի ձեռն մարդոյ, այլ 'ի ձեռն յ՟սի ք՟սի և ա՟յ հօր՝ որ յարոյց զնա 'ի մեռելոց. * և որ ը՟ իս են եղբարք ամենեքին, եկեղեցեացդ գաղատացւոց: * Շնորհք ընդ ձեզ և խաղաղութի՟ յա՟յ 'ի հօրէ և 'ի տ՟նէ մերմէ յ՟սէ ք՟սէ. * որ ետ զանձն իւր վ՟ս մեղաց մերոց, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ աստի չարէ, ը՟ կամացն ա՟յ և հօր մերոյ. * որում փառք յաւիտեանս յաւիտենից՝ ամէն: * Զարմանամ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ որ կոչեաց զձեզ 'ի շնորհսըն ք՟սի՝ յայլ աւետարան. * որ ոչ գոյ այլ. բայց եթէ իցեն ոմանք որ խռովեցուցանիցեն զձեզ, և կամիցին շրջել զաւետարանն ք՟սի: * Այլ թէ մեք, կ՟մ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի: * Որպէս յառաջագոյնն ասա-

ցաք՝

digitised by A.R.A.R.@

ցաք՝ եւ արդ դարձեալ ասեմ, եթէ ոք ա-
ւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առիքն
10 նզովեալ լիցի: *Արդ՝ մարդկա՞ն հաճոյ լի-
նիցիմ, թէ այ. կամ խնդրիցեմ մարդկա՞ն
հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկան
հաճոյ լինէի, ապա քի ծառայ ո՛չ էի:
11 *Յուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն Դ.Զ.
որ աւետարանեցաւ յինէն. զի ո՛չ է ըստ
12 մարդոյ. *քանզի եւ ո՛չ ես 'ի մարդոյ ա-
ռի, եւ ո՛չ ուսայ յումեքէ. այլ 'ի յայտ-
13 նութենէ յի քի: *Քանզի լուեալ իսկ
է ձեր զիմ գնացսն՝ որ երբեմն 'ի հրէ-
ութեան անդ. զի անչափ հալածէի զեկե-
14 ղեցին այ, եւ աւար հարկանէի զնա: *Եւ
յառաջադէմ էի 'ի հրէութեան՝ քան զբա-
զում հասակակիցս իմ որ յազգին իմում
էին. առաւել նախանձախնդիր էի իմոյ
15 հայրենի աւանդութեանցն: *Այլ յոր-
ժամ կամեցաւ այծ՝ որոշեաց զիս յորո-
վայնէ մօր իմոյ, եւ կոչեաց 'ի ձեռն շնոր-
16 հաց իւրոց, *յայտնել զորդին իւր յիս.
զի աւետարանեցից զնա 'ի հեթանոսս.
անդէն վաղվաղակի ոչ ինչ զգացուցի մար-
17 մնոյ եւ արեան. *Եւ ո՛չ ելի յեմ առ որ
յառաջագոյն քան զիս առաքեալքն էին.
այլ չոգայ յարաբիա, եւ դարձեալ դար-
18 ձայ 'ի դամասկոս: *Ապա յետ երից ա-
մաց ելի յերուսաղէմ տեսանել զպետրոս
եւ եղէ առ նմա աւուրս հնգետասան:
19 *Զայլ ոք յառաքելոցն անտի ո՛չ տեսի,
բայց

digitised by A.R.A.R.@

բայց միայն զյակոբոս զեղբայրն տն ։
*Այլ զոր գրեմս առ ձեզ, ահաւասիկ 20
առաջի այ՝ զի ոչ ստեմ ։ *Ապա եկի 'ի 21
կողմանս ասորւոց և կիլիկեցւոց . * և 22
յանծանօթս էի երեսօք եկեղեցեացն՝ որ
'ի թլփատութե՛ անտի էին 'ի քս ։ *Բայց 23
զի լսելով լուեալ էր, թէ որ հալածէրն
զմեզ յայնժամ, արդ աւետարանէ զհաւ-
ատսն՝ զոր երբեմն խախտէր ։ *և փա- 24
ռաւոր առնէին լինել զած ։

## ԳԼ. Բ.

ԵԿ Ապա յետ ամացչորեքտասանից միւս- 1
անգամ ելի յեմ ընդ բառնաբայ . ա-
ռեալ ընդ իս և զտիտոս ։ *Ել ելի ըստ 2
յայտնութեն . և յգացուցի նց զաւետա-
րանն՝ զոր քարոզէի 'ի հեթանոսս, առան-
ձինն այնոցիկ՝ որ կարծեալքն էին, գու-
ցէ ընդունայն ինչ ընթացեալ իցեմ, կամ
ընթանայցեմ ։ *Այլ և ոչ տիտոս՝ որ ընդ 3
իս 'ի հեթանոսաց էր, բռնադատեցաւ
թլփատել . *այլ վս սպրդողաց սուտ եղ- 4
բարցն, որք սպրդեցին մտանել դիտել
զազատութին մեր՝ զոր ունիմք 'ի քս յս .
զի զմեզ ծառայեցուսցեն ։ *Որոց և ոչ առ 5
ժամանակ մի անսացաք հնազանդութեն .
զի ճշմարտութի աւետարանին հաստա-
տեսցի առ ձեզ ։ *Բայց զկարծեցելոցն ե- 6
թէ իցեն ինչ, որպիսի ոք երբեմն էին,
չէ ինչ ինձ փոյթ . քանզի ած ակն մարդ-
կան

digitised by A.R.A.R.@

կան ոչ առնու. զի ինձ կարծեցեալքն այն-
7 պիսի ինչ ոչ գգացուցին: *Այլ զնորին
հակառակն՝ իբրև տեսին թէ հաւատա-
ցեալ է ինձ աւետարանն անթլփատութեան.
8 որպէս պետրոսի 'ի թլփատութեան: *զի որ յա-
ջողեաց պետրոսի յառաքելութիւն թլփա-
տութեան, յաջողեաց և ինձ 'ի հեթանոսս:
9 *իբրև գիտացին զշնորհսն որ տուեալ
էին ինձ, յակովբոս՝ և կեփաս՝ և յովհան-
նէս, որ կարծեցեալք սիւնքն էին, ձեռն
ետուն հաւանութեան ինձ և բառնաբայ. զի
մեք 'ի հեթանոսս, և նոքա 'ի թլփատութեան.
10 *բայց միայն զի զաղքատսն յիշեսցուք.
զոր և ես փութացայ զնոյն առնել:
11 *Այլ յորժամ եկն կեփաս յանտիոք, ԵԴ
ընդդէմ դարձայ նմա. քանզի գոդ իբ-
12 րև ստգտեալ իմն էր: *Քանզի մինչ
չև եկեալ էին ոմանք առ 'ի յակովբայ,
ընդ հեթանոսս ուտէր անխտիր. իսկ իբ-
րև եկին, զատանէր և որոշէր զանձն,
երկուցեալ յայնցանէ՝ որ 'ի թլփատութենէ
13 անտի էին: *Եւ կեղծաւորեցան ընդ նմա
և այլ հրէայքն. մինչև բառնաբաս ան-
գամ խոնարհեցաւ 'ի նոցա կեղծաւորու-
14 թիւն: *Այլ իբրև տեսի թէ ոչ ուղիղ
գնան 'ի ճշմարտութիւն աւետարանին,
ասեմ ցկեփաս առաջի ամենեցուն, ե-
թէ դու որ հրէայդ ես՝ հեթանոսաբար
և ոչ հրէաբար կեաս, զիա՞րդ ստիպես
15 հեթանոսաց լինել հրէաբէն: *զի մեք



digitised by A.R.A.R.@

բուն հրէայք եմք, և ոչ 'ի հեթանոսաց
մեղաւորք: * Զայս գիտեմք՝ եթէ ոչ 16
արդարանայ մարդ 'ի գործոց օրինաց,
եթէ ոչ՝ 'ի հաւատոյն յ͞ի ք͞ի. և մեք
'ի ք͞ս յ͞ս հաւատացաք, զի արդարասցուք
'ի հաւատոյն ք͞ի, և ոչ 'ի գործոց օրի-
նաց. զի 'ի գործոց օրինաց ոչ արդարաս-
ցի ամենայն մարմին: * Իսկ եթէ մինչ 17
խնդրիցեմք արդարանալ 'ի ք͞ս, և գը-
տանիցիմք մեղաւորք. ապա ուրեմն՝ ք͞ս
մեղաց պաշտօնեայ եղև. քաւ լիցի: * Զի 18
եթէ զոր քակեցին՝ զնոյն միւսանգամ
շինիցեմ. ապա յանցաւոր զանձն իմ ես
ինձէն երևեցուցանեմ: * Զի ես օրի- 19
նօք՝ օրինացն մեռայ, զի ա͞յ կեցից, և ը͞ն
ք͞ի 'ի խաչ ելից: * Եւ կենդանի եմ այ- 20
սուհետև, ոչ ես՝ այլ կենդանի է յիս ք͞ս:
ԵՉ Այլ որ այժմ կեամ մարմնով, հաւա-
տովք՝ որդւոյն ա͞յ կեամ. որ սիրեաց
զիս, և մատնեաց զանձն վ͞ս իմ: * Եւ 21
ես ոչ անարգեմ զշնորհսն ա͞յ: զի եթէ
յօրինաց անտի էր արդարութի, ապա
ք͞ս զուր մեռաւ:

## ԳԼ. Գ.

Ո՞ անմիտ գաղատացիք, ո՞ նախանձ ա- 1
րար զձեզ (ոչ հնազանդել ճշմար-
տութե՞ն). որոց դրեթէ առաջի աչաց ք͞ս
յ͞ս գրեցաւ 'ի խաչ ելեալ: * Զայս մի- 2
այն կամիմ ուսանել 'ի ձէնջ. 'ի գործո՞ց
օրի-

digitised by A.R.A.R.@

օրինաց զհոգին ընկալարուք՝ եթէ 'ի լրոյ
3 հաւատոյ։ *Այդչափ անմիտ էք. սկը-
սեալ հոգւով՝ և արդ մարմնով վախճա-
4 նիք։ *Եւ այնչափ անցք անցին ը͞ ձեզ
5 զուր՝ եթէ իցէ զուր։ *Իսկ արդ՝ որ
բաշխեաց 'ի ձեզ զհոգին՝ և յաջողեաց
'ի ձեզ զզօրութիւնս. 'ի գործո՞ց օրինաց է՝
6 եթէ 'ի լրոյ հաւատոյ։ *Որպէս աբրահամ
հաւատաց յա͞ծ՝ և համարեցաւ նմ͞ յար-
7 դարութիւն։ *Գիտիցէք արդեօք. զի որք
'ի հաւատոց անտի են, նոքա են որդիք
8 աբրահամու։ *Յառաջագոյն գիտէր
գիրն, եթէ 'ի հաւատոց անտի արդարա-
ցուցանէ ա͞ծ զհեթանոսս՝ յառաջագոյն
խոստացաւ աբրահամու, թէ 'ի քեզ օրհ-
9 նեսցին ամենայն ազգք։ *Այսուհետև
որք 'ի հաւատոց անտի են, օրհնին ընդ
10 հաւատացելոյն աբրահամու։ *Զի որ
միանգամ 'ի գործոց օրինացն են, ը͞ ա-
նիծիւք են. քանզի գրեալ է. թէ անի-
ծեալ ա͞մ մարդ՝ որ ո՛չ կացցէ յամենայն
գրեալսն 'ի գիրս օրինաց՝ առնել զամե-
11 նայն։ *Զի օրինօքն ոչ ո՛ք արդարանայ
առաջի ա͞յ, այն յայտ իսկ է. զի արդարն՝
ասէ 'ի հաւատոց կեցցէ։ Կ.Ջ.
12 *Բայց օրէնքն չեն 'ի հաւատոց, այլ որ
13 արասցէ զայն՝ կեցցէ 'ի նոսին։ *Ք͞ս
գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեւ
վ͞ն մեր անէծք. զի գրեալ է, թէ անի-
ծեալ ա͞մ, որ կախեալ կայցէ զփայտէ.
*զի

digitised by A.R.A.R.@

* զի 'ի հեթանոսս օրհնութիւն աբրահա- 14
մու եղիցի 'ի քս՟ յս՟. զի մեք զաւետիս հոգ-
ւոյն մեզ առցուք հաւատովք: * Ըստ 15
մարդկութեան ասեմ, եղբարք. ապաքէն
զմարդկան հաստատեալ կտակ ոչոք կա-
րէ անարգել. և ոչ այլ հրաման 'ի վր՟
այնր տալ: * Իսկ աբրահամու խոստա- 16
ցան աւետիքն, և զաւակի նր՟. և ոչ ասէ
զաւակաց՝ իբրև զբազմաց, այլ իբրև
զմիոյ, թէ՝ և զաւակի քում, որ է քս՟:
* Բայց զայս ասեմ, զկտակն յառաջա- 17
դոյն հաստատեալ յայ՟ 'ի քս՟, օրէնքն որ
յետ չորեքհարիւր և երեսուն ամի եղան
ոչ կարեն խափանել առ 'ի խափանելոյ զա-
ւետիսն: * Եթէ յօրինաց անտի է ժա- 18
ռանգութիւն, ապա ոչ ևս յաւետեացն:
բայց աբրահամու աւետեօք շնորհեաց
այ՟: * Իսկ զի՞նչ իցեն օրէնք: յանցուա 19
ծոց վս՟ յաւելան, մինչև եկեսցէ զաւակն,
որում խոստացեալն էր՝ կարգեալ հրեշ-
տակօք 'ի ձեռն միջնորդի: * Իսկ միջ- 20
նորդ միոյ ուրուք ոչ է. բայց այ՟ մի է:
* Իսկ արդ՝ օրէնքն հակառակ ի՞նչ իցեն 21
աւետեացն այ՟. քաւ լիցի: զի եթէ տր-
ւեալ էին օրէնքն՝ որ կարող էին կենդա-
նի առնել, ապա հաստատ յօրինաց ան-
տի էր արդարութիւն: * Այլ փակեցին 22
գիրք զամենեսին ընդ մեղօք, զի աւետիքն
'ի հաւատոց անտի յսի քսի տացին հա-
ւատացելոց: * Մինչև հաւատքն ե- 23
կեալ

digitised by A.R.A.R.@

կեալ էին՝ ը՟ օրինօքն փակեալ պահէաք
'ի հանդերձեալ հաւատսն, որ յայտնե-
24 լոց էին 'ի մեզ։ * Արդ օրէնքն դաս-
տիարակ եղեն մեզ 'ի ք՟ս յ՟ս, զի 'ի հա-
25 ւատոցն արդարասցուք. *այլ իբրեւ եկին
հաւատքն, ոչ եւս ը՟ դաստիարակաւ եմք.
26 *ք՟զի ամենեքին որդիք ա՟յ էք հաւա-
27 տովք 'ի յ՟ս ք՟ս։ *Որք միանգամ 'ի ք՟ս
մկրտեցարուք, զք՟ս զգեցեալ էք. չիք
28 խտիր, *ոչ հրէի՝ եւ ոչ հեթանոսի, ոչ
ծառայի՝ եւ ոչ ազատի. ոչ արուի՝ եւ ոչ
իգի. զի ամենեքեան դուք մի էք 'ի ք՟ս
29 յ՟ս։ *Արդ եթէ դուք ք՟սի էք ուրեմն
աբրահամու զաւակ էք՝ ը՟ աւետեացն
ժառանգք։

## ԳԼ. Դ.

1 Զայս ասեմ. ցորքան ժամանակս ժա- ՁԿ
ռանգն տղայ է՝ չէ ինչ առաւել ք՟
զծառայն. թէպէտ եւ տէր իցէ ամենե-
2 ցուն. *այլ ը՟ հազարապետօք է, եւ ը՟
դաւառապետօք՝ մինչեւ 'ի ժամանակա-
3 կէտ հօրն։ *Նոյնպէս եւ մեք մինչ տղ-
այքն էաք՝ ը՟ տարերբք աշխարհիս 'ի
4 ծառայութե՟ կայաք։ *Այլ իբրեւ եկն
լրումն ժամանակին, առաքեաց ա՟ծ զոր-
դին իւր՝ որ եղեւ 'ի կնոջէ, եւ եմուտ ը՟
5 օրինօք. *զի զնո՟ս որ ը՟ օրինօքն իցեն,
գնեսցէ. զի մեք զորդեգրութի՟ ընկալ-
6 ցուք։ *Եւ զի էք դուք որդիք, առա-
քեաց

digitised by A.R.A.R.@

քեաց ա̃ծ զՀոգի որդւոյն իւրոյ 'ի սիրտս
մեր՝ որ աղաղակէ աբբա՝ հայր: *Ապա 7
ուրեմն ոչ ես ծառայ, այլ որդի. եթէ
որդի՝ և ժառանգ ա̃յ: *Այլ յայնժամ 8
մինչ ոչն գիտէիք զա̃ծ՝ ծառայէիք այնո-
ցիկ՝ որ ոչն էին 'ի բնէ աստուածք:*Այլ 9
այժմիկ ծանեայք զա̃ծ, մանաւանդ թէ
ծանուցայք իսկ յա̃յ, զիա՞րդ դառնայք
միւսանգամ անդրէն 'ի տարերսն՝ 'ի տը-
կարս և յաղքատս, որոց միւսանգամ
զանձինս ծառայեցուցանել կամիք:
*Զաւուրս խտրէք՝ և զամիսս՝ և զժա- 10
մանակս՝ և զտարիս: *երկնչիմ 'ի ձէնջ, 11
գուցէ թէ 'ի զուր ինչ վաստակեցի 'ի
ձեզ: *Եղերո՛ւք իբրև զիս, զի և ես 12
իբրև զձեզ էի: Եղբարք՝ աղաչեմ ըզ-
ձեզ, չիք ինչ ձեր մեղուցեալ առ իս:
*Գիտէք դուք՝ զի տկարութ̃ մարմնոյ 13
աւետարանեցի ձեզ զառաջինն. և զփոր-
ձանսն որ 'ի մարմնի իմում էին, *ոչ 14
անարգեցիք՝ և ոչ անգոսնեցիք. այլ իբ-
րև զհրեշտակ ա̃յ ընկալայք զիս՝ իբրև
զք̃ս յ̃ս: *Իսկ արդ ո՞ւր է երանութիւն 15
ձեր: վկայեմ ձեզ՝ եթէ հնար ինչ էր՝
զաչս ձեր հանէիք և տայիք ինձ: *արդ՝ 16
զի՞ թշնամի իմն եղէ ձեզ, զի զստոյգն
խօսեցայ: *Այլ նախանձեցուցանեն 17
զձեզ ոչ 'ի բարի. և արգելուլ կամին
զձեզ՝ զի նոցա նախանձաւորք լինիցիք:
*Բայց լաւ է նախանձաւոր լինել 'ի բա- 18
րիս

digitised by A.R.A.R.@

ըիս յամ ժամ, և ոչ միայն յորժամ 'ի
ձերում միջի իցեմ ։
19* Որդեակք իմ, զորս դարձեալ վերս- ԶԴ
տին երկնեմ, մինչև նկարեսցի Քս 'ի ձեզ.
20* կամէի այժմ գալ առ ձեզ՝ և փոխել
զբարբառ իմ. զի տարակուսեալ եմ ես
21 վս ձեր ։ *Ասէք ինձ՝ որ ընդ օրինօքն
կամիք լինել, չլսէք ընթերցեալ ձեր զօ-
22 րէնս. * զի գրեալ է՝ թէ Աբրահամու
երկու որդիք էին, մի յաղախնոյ անտի,
23 և մի յազատէն ։ *Այլ որ յաղախնոյն
էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր, և որ յազա-
24 տէն՝ ըստ աւետեաց. *որ է առակ օրի-
նակի ։ Զի այս ինքն են երկու կտակա-
րանք, մի 'ի լեռնէ սինայ 'ի ծառայութի
25 ծնեալ՝ որ է հագար ։ *քանզի հագարն՝
լեառն սինայ է յարաբիա, հաւասար է
այժմ երուսաղէմի. զի ծառայէ որդւովք
26 իւրովք հանդերձ ։ *Այլ վերինն երու-
սաղէմ ազատ է՝ որ է մայր մեր ամենե-
27 ցուն ։ *զի գրեալ է. ուրախ լեր ամուլ՝
որ ոչ ծնանէիր, գոչեա և աղաղակեա՝
որ ոչդ երկնէիր. զի բզմ են որդիք սկնդ-
28 կիդ առաւել քան զարամբւոյն ։ *Այլ
մեք եղբարք՝ ըստ սահակայ աւետեացն
29 որդիք եմք ։ *այլ որպէս յայնժամ, որ ըստ
մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն որ
30 ըստ հոգւոյն, նոյնպէս և այժմ ։ *Այլ
զի՞նչ ասէ գիր. 'ի բաց հան զաղախինդ
և զորդի դորա, զի մի՛ ժառանգեսցէ որ-
դի

digitised by A.R.A.R.@

դի աղախնոյն՝ է որդւոյն ազատի։ *Ապա 31
որոյ եղբարք՝ չեմք որդիք աղախնոյն,
այլ ազատին. ազատութեամբն, որով Քրիստոս
զմեզ ազատեցոյց։

## ԳԼ. Ե.

Պինդ կացէք այսուհետեւ, եւ մի միւս- 1
անգամ ընդ լծով ծառայութեան մը-
տանէք։
*Ահաւասիկ ես Պօղոս ասեմ ձեզ. զի 2
եթէ թլփատիք, Քրիստոս ինչ ձեզ ոչ օգնէ։
*Վկայեմ ամենայն մարդոյ՝ որ թլփատիցի, 3
թէ պարտական է զամենայն օրէնսն կատա-
րել։ *Խափանեալ էք 'ի Քրիստոսէ՝ որ օրինօքն 4
արդարանայք. եւ անկեալ էք 'ի շնորհաց
անտի։ *զի մեք հոգւոյն՝ 'ի հաւատոց 5
յուսոյն արդարութեան ակն ունիմք։ *Զի 6
'ի Քրիստոս Յիսուս՝ ոչ թլփատութիւն ինչ կարօղ է՝ եւ
ոչ անթլփատութիւն. այլ հաւատք սիրով
յաջողեալք։ *Բարւոք ընթանայիք, ո՞ 7
կասեցոյց զձեզ ճշմարտութեանն չհաւանել։
*զի այն հրապոյրք՝ ոչ յայնմանէ են՝ որ 8
կոչեաց զձեզ։ *Փոքր մի խմոր զամե- 9
նայն զանգուածն խմորէ։ *Այլ ես 10
յուսացեալ եմ 'ի ձեզ Տէր՝ թէ ոչ
այլազգ ինչ խորհիցիք։ եւ որ խռովեցու-
ցանէ զձեզ՝ կրեսցէ դատաստան՝ ո՛ ոք
եւ իցէ։ *Այլ ես եղբարք՝ եթէ թլփա- 11
տութիւն քարոզէի՝ ընդէ՞ր տակաւին հալա-
ծիմ։ ապա ուրեմն խափանեալ իցէ գայ-
թագ-

digitised by A.R.A.R.@

12 թակղութիւն խաչին : * Երանի թէ մոտա-
կայ իսկ լինէին՝ որ զձեզդ խռովեցու-
13 ցանեն : * Զի դուք յազատութիւն կոչեցայ-
էք՝ եղբարք, միայն զի ազատութիւն ձեր մի
լինիցի ՚ի պատճառս մարմնոյ. այլ սի-
14 րով ծառայեսջիք միմեանց : * Զի ամենայն
օրէնք ՚ի մի բան կատարին. ՚ի սիրեսցեսն
15 զընկեր քո իբրև զանձն քո : * Ապա ե-
թէ զմիմեանս խածատիցէք՝ և ուտիցէք.
զգոյշ լերուք՝ գուցէ ՚ի միմեանց սատա-
կիցիք :
16 * Բայց զայս ասեմ. հոգւով գնացէք, ԻԴ
17 և զցանկութիւն մարմնոյ մի կատարէք. * զի
մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և
հոգի հակառակ մարմնոյ : և զի սոքա մի-
մեանց հակառակ են. մի զոր կամիցիք՝
18 զայն առնիցէք : * Իսկ եթէ հոգւով վա-
19 րիք, ապա չէք ընդ օրինօք : * Զի յայտ-
նի են գործք մարմնոյ. այսինքն են՝ շը-
նութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիջութիւն,
20 * կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնա-
մութիւն, հեռ, նախանձ, բարկութիւն, հակա-
ռակութիւնք, երկպառակութիւնք, հերձուածք,
21 * չարակնութիւնք սպանութիւնք, արբեցութիւնք
անառակութիւնք, և որ ինչ սոյնինման են :
զոր յառաջագոյն իսկ ասեմ ձեզ, որպէս
կանխաւն ասէի, թէ որ զայսպիսի ինչ
գործեն՝ զարքայութիւնն այ ոչ ժառանգեն :
22 * Իսկ պտուղ հոգւոյն այս է. սէր խնդ-
23 դութիւն խաղաղութիւն երկայնմտութիւն, * քաղց-

 րու

րութիւն բարութիւն, հաւատք, հեզութիւն ժուժ-
կալութիւն. զայսպիսեաց ատի օրէնքն չեն
հակառակ: *Իսկ որ Քրիստոսեանքն են, ըզ- 24
մարմինս իւրեանց 'ի խաչ հանին կա-
րեօքն և ցանկութեամբք հանդերձ: *Եթէ 25
կեամք հոգւով՝ ըստ հոգւոյն և միաբա-
նեսցուք: *Եւ մի լիցուք սնապարծք՝ մի- 26
մեանց ձայն տալոյ, և ըստ միմեանս նա-
խանձելոյ:

## ԳԼ. Զ:

Է. Զ Եղբարք՝ եթէ յանկարծ ըմբռնեսցի 1
ոք 'ի ձէնջ յինչ և իցէ յանցանս,
դուք որ հոգևորքդ էք՝ հաստատեցէք
զայնպիսին հոգւով հեզութեան. զգո՛յշ լի-
նիցիք անձանց՝ զի մի և դուք փորձիցիք:
*Զմիմեանց բեռն բարձէք, և այնպէս 2
կատարեցէք զօրէնսն Քրիստոսի: *Եթէ հա- 3
մարիցի ոք լինել ինչ՝ և չիցէ, զանձն իւր
խաբէ: *Զգործ իւր կշռեսցէ իւրա- 4
քանչիւրոք, և ապա անձին իւրում միայն
պարծանս տացէ, և մի առ ընկերաւն:
*զի իւրաքանչիւրոք զիւր բեռն բառնա- 5
լոց է: *Հաղորդութիւն արասցէ աշակերտն 6
վարդապետին՝ յամենայն բարութիւնս: *Մի 7
խաբիք, Աստուած ոչ արհամարհի: *զի զոր 8
ինչ սերմանէ մարդ՝ զնոյն և հնձեսցէ:
որ սերմանէ 'ի մարմին իւր, 'ի մարմնոյ
անտի հնձեսցէ զապականութիւն. և որ սեր-
մանէ 'ի հոգին՝ 'ի հոգւոյ անտի հնձես-

ցէ

digitised by A.R.A.R.@

9 չէ զկեանսն յաւիտենից: * Այլ զբա-
րիս գործել մի՛ ձանձրասցուք, զի 'ի ժա-
մանակի իւրում հնձեսցուք առանց լքա-
10 նելոյ: * Այսուհետեւ մինչդեռ ժամա-
նակս 'ի ձեռս է՝ գործեսցուք զբարիս առ
ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն
11 հաւատոյ: * Տեսէք՝ որպիսի գրով գրե-
12 ցի առ ձեզ իմով ձեռամբ: * Ո՛ր որ
միանգամ կամին բարեմարդիկ լինել
մարմնով, նոքա ստիպեն զձեզ թլփատել.
միայն զի մի՛ զխաչին քսի զհետ երթայ-
13 ցեն: * Քանզի որ թլփատեալքն իսկ են,
նոքա զօրէնսն ո՛չ պահեն. այլ կամին՝ զի
դուք թլփատեսջիք, զի ձերով մարմնովդ
պարծեսցին: Գ.Ջ.
14 * Այլ ինձ քաւ լիցի պարծել՝ բայց միայն
'ի խաչն տն մերոյ յսի քսի, որով ինձ
աշխարհ 'ի խաչ ելեալ է՝ եւ ես աշխար-
15 հի: * Ո՛չ ('ի քն յս) ո՛չ թլփատութիւն
ինչ է՝ եւ ո՛չ անթլփատութիւն. այլ նոր ա-
16 րարած: * Եւ որ միանգամ այսմ կա-
նոնի միաբան լինին, խաղաղութիւն 'ի վր
նց եւ ողորմութիւն՝ եւ 'ի վր իսրայէլին այ:
17 * Այսուհետեւ աշխատ ոք զիս մի՛ արաս-
ցէ. զի ես զչարչարանսն քսի 'ի մարմնի ի-
18 մում կրեմ: * Շնորհք տն մերոյ յսի քսի
ընդ ոգւոյդ ձերում եղբարք. ամէն:

Առ Գաղատացիս՝ գրեցաւ 'ի Հռովմէ:

ԹՈՒՂԹ

digitised by A.R.A.R.@

# Թ Ո Ւ Ղ Թ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍՆ։

## ԳԼ. Ա։

ԲԿ Պօղոս առաքեալ յիսուսի քրիստոսի կամօքն 1
աստուծոյ, սրբոց որ են յեփեսոս, և հաւա-
տացելոց ՚ի քրիստոս յիսուս։ *Շնորհք ընդ ձեզ 2
և խաղաղութիւն յաստուծոյ հօրէ մերմէ՝ և ՚ի
տեառնէ յիսուսէ քրիստոսէ։ *Օրհնեալ է աստուած և 3
հայր տեառն մերոյ յիսուսի քրիստոսի, որ օրհնեաց
զմեզ ամենայն հոգևոր օրհնութեամբ յերկնաւորս
՚ի քրիստոս. *որպէս ընտրեաց զմեզ նովաւ յա- 4
ռաջ քան զլինելն աշխարհի, լինել
մեզ սուրբս և անարատս առաջի նորա սի-
րով։ *Յառաջագոյն սահմանեաց ըզ- 5
մեզ յորդեգրութիւն ՚ի ձեռն յիսուսի քրիստոսի ՚ի
նոյն, ըստ հաճութեան կամաց իւրոց, *՚ի 6
գովեստ փառաց շնորհաց իւրոց. որով
զուարճացոյց զմեզ սիրելեաւն։ *Որով 7
ունիմք զփրկութիւն ՚ի ձեռն արեան նորա,
զթողութիւն մեղաց՝ ըստ մեծութեան շնորհաց
իւրոց. *որ առաւելաւ ՚ի մեզ ամենայն իմաս- 8
տութեամբ և գիտութեամբ։ *Ցոյց մեզ ըզ- 9
խորհուրդս կամաց իւրոց՝ ըստ հաճութեան

իւ-

digitised by A.R.A.R.@

իւրում. զոր յառաջագոյն եդ նովաւ,
10 *'ի տնտեսութիւն լրման ժամանակաց,
բովանդակել զամենայն 'ի Քրիստոս, որ ինչ յեր-
11 կինս՝ եւ որ ինչ յերկրի՝ 'ի նմա։ *Որով
եւ վիճակեցաք յառաջագոյն հրաւիր-
եալք՝ ըստ յառաջադրութեան այնորիկ. որ զամենայն յա-
12 ջողէ ըստ խորհրդոց կամաց իւրոց. * լի-
նել մեզ 'ի գովեստ փառաց նորա յառաջա-
13 գոյն յուսացելոցս 'ի Քրիստոս։ *Որով եւ դուք
իբրեւ լուարուք զբանն ճշմարտութեան, զա-
ւետարանն փրկութեան ձերոյ, որով եւ հա-
ւատացեալ կնքեցայք հոգւովն սրբով աւե-
14 տեաց ։ *որ է առհաւատչեայ ժառան-
գութեան մերոյ 'ի փրկութիւն նուաճութեան, 'ի
գովեստ փառաց նորա ։
15 *Վասն այնորիկ եւ ես իբրեւ լուայ զհա- ԲԴ
ւատսն ձեր՝ որ 'ի Տէր Յիսուս, եւ զսէրն որ ընդ
16 ամենայն սուրբս, *ոչ դադարեմ 'ի գոհանա-
17 լոյ վասն ձեր՝ յիշել զձեզ յաղօթս. *զի
Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Հայրն փառաց՝ տա-
ցէ ձեզ զհոգին իմաստութեան եւ յայտնու-
18 թեան գիտութեան իւրում. *լուսաւոր առ-
նել զաչս սրտից՝ առ 'ի գիտելոյ մեզ՝
զինչ է յոյս կոչման նորա, եւ զինչ մե-
ծութիւն փառաց ժառանգութեան նորա 'ի
19 սուրբս. * եւ զինչ է առաւելուլն մեծութեան
զօրութեան նորա 'ի մեզ հաւատացեալս ։ ըստ յա-
20 ջողութեան կարողութեան զօրութեան իւրոյ, *զոր
յաջողեաց 'ի Քրիստոս. զի յարոյց զնա 'ի մեռե-
լոց. եւ նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնա-
ւորս,

digitised by A.R.A.R.@

ւորս, *'ի վ՟ր ա՟մ իշխանութ՟ե՝ և պետու- 21
թ՟ե և զօրութ՟ե և տէրութ՟ե՝ և ա՟մ ան-
ուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս
յայսմիկ՝ այլ և 'ի հանդերձելումն: *Եւ 22
զա՟մ ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից
ն՟ր: և զնա ետ գլուխ 'ի վերայ ա՟մ իրիք
եկեղեցւոյ, *որ է մարմին ն՟ր, լրումն՝ 23
որ զա՟մ յամենայնի լնու:

## ԳԼ. Բ.

Եւ դուք որ մեռեալն էիք 'ի մեղս ձեր 1
և յանցանս, *յորս երբեմն գնայիք 2
ըստ յաւիտենի աշխարհիս այսորիկ՝ ը՟ս
իշխանին իշխանութ՟ե օդոյս այսոյ, որ
այժմ ընդմտեալ է յորդիսն ապստամ-
բութեան. *յորս և մեք ամենեքեան 3
շրջէաք երբեմն 'ի ցանկութիս մարմնոյ
մերոյ, և առնէաք զկամս մարմնոյ՝ և ըզ-
մտաց, և էաք արդարև որդիք բարկու-
թ՟ե իբրև այլքն:
ԲՁ *Այլ ա՟ծ որ մեծն է ողորմութ՟բ վ՟ս բ՟զմ 4
սիրոյն իւրոյ՝ զոր սիրեաց զմեզ. *մինչ 5
դեռ մեռեալն էաք 'ի մեղս մեր, կեն-
դանիս արար զմեզ 'ի ք՟ս. ք՟զի շնորհօք
ապրեցաք. *ը՟ն նմին յարոյց, և ը՟ն նմին 6
նստոյց յերկնաւորս 'ի ք՟ս յ՟ս: *Զի ցուց- 7
ցէ 'ի յաւիտեանսն որ գալոցն են՝ զառա-
ւել մեծութ՟ի շնորհացն իւրոց՝ քաղցրու-
թ՟բ 'ի մեզ 'ի ք՟ս յ՟ս: *Զի շնորհօք ն՟ր 8
էք փրկեալք 'ի ձեռն հաւատոյն: և այս

ոչ

digitised by A.R.A.R.@

9 ոչ ՚ի ձէնջ, այլ ա՟յ պարգեւ է. *ոչ ՚ի գոր-
10 ծոց, զի մի՟ ոք պարծեսցի: *Զի նո՟ր արա-
րածք եմք՝ հաստատեալք ք՟սիւ յ՟սիւ ՚ի
գործս բարութ՟ե, յորս յառաջագոյն պատ-
րաստեաց ա՟ծ, զի ՚ի նոյն գնասցուք:
11 *Վ՟յ եւ դուք յիշեցէք՝ զի երբեմն հե-
թանոսք էիք մարմնով. որ կոչեցեալքն էն
անթլփատութի՟՝ յանուանէ՟ն թլփատու-
12 թ՟է անտի մարմնաւոր ձեռագործին. *զի
էիք ՚ի ժամանակին յայնմիկ առանց ք՟սի,
(եւ օտարացեա՟լ էիք յաւաքինութե՟ն ի՟ղի,)
եւ տարագիրք յուխտից աւետեացն, եւ
յոյս ինչ ոչ ունէիք՝ եւ անա՟ծք էիք յաշ-
13 խարհի: *Իսկ այժմիկ ՚ի ձեռն յ՟սի ք՟սի,
դուք՝ որ երբեմն հեռաւորքն էիք՝ մեր-
14 ձաւորք եղերուք արեամբն ք՟սի: *Զի
նա է խաղաղութ՟ի մեր՝ որ արար զերկո-
սեան մի. եւ զմիջնորմն ցանկոյն քակեաց՝
15 զթշնամութ՟ի ՚ի մարմնի իւրում. *եւ զօ-
րէնս պատուիրանացն հրամանօքն խա-
փանեաց. զի զերկոսին հաստատեսցէ
ինքեամբ ՚ի մի նոր մարդ, եւ արասցէ խա-
16 ղաղութ՟ի. *եւ հաշտեցուսցէ զերկոսին
միով մարմնով ը՟ն ա՟յ՝ խաչիւն իւրով, քան-
զի սպան զթշնամութ՟ի յանձին իւրում:
17 *Եւ եկն աւետարանեաց խաղաղութ՟ի
ձեզ հեռաւորաց՝ եւ խաղաղութ՟ի մեր-
18 ձաւորաց. *զի նովաւ ունիմք զնուա-
ճութ՟ի երկոքին միով հոգւով առ հայր.
19 *Ապա այսուհետեւ ոչ էք օտարք եւ պան-
դու-

դուխտք, այլ քաղաքակիցք սրբոց և ըն-
տանիք այ. *շինեալք 'ի վե՛ր հիման ա- 20
ռաքելոց և մարգարէից. որոյ է գլուխ
անկեանն քս յս. *յորում ամ շինուածն 21
յօդեալ և պատշաճեալ աճէ 'ի տաճար
սբ տն: *Յորում և դուք ըստ նմին 22
շինիք 'ի բնակութի այ հոգւով:

Ի.Ջ

## ԳԼ. Գ.

Վասն այսորիկ ես պօղոս կապեալ յսի 1
քսի վս ձեր հեթանոսաց: *Թերևս 2
լուեալ իցէ ձեր զտնտեսութի շնորհացն
այ, որ տուեալ են ինձ 'ի ձեզ: *Զի ըստ 3
յայտնութեն ցուցաւ ինձ խորհուրդն.
ոպէս յառաջագոյն գրեցի առ ձեզ սակա-
ւուք. *առ 'ի կարող լինելոյ ընթեռնուլ 4
և 'ի միտ առնուլ զիմաստութին զիմ 'ի
խորհրդեանն քսի: *Զի յայլոց ազգաց 5
ոչ ցուցաւ որդւոց մարդկան. ոպէս այժմ
յայտնեցաւ սրբոց իւրոց առաքելոց և
մարգարէից՝ հոգւովն. *լինել հեթա- 6
նոսաց ժառանգակիցս՝ և մարմնակիցս,
և հաղորդս աւետեացն 'ի քս յս՝ աւետա-
րանաւն, *որոյ եղէ ես սպասաւոր ըստ 7
պարգևաց շնորհացն այ՝ որ տուան ինձ
ըստ յաջողութե զօրութե նր: *Ինձ որ տը- 8
րուպս եմ ամ սրբ՝ տուան շնորհքս այս,
'ի հեթանոսս աւետարանել զանքննելի
մեծութին քսի. *և լուսաւոր առնել զա- 9
մենեսին, թէ զինչ է տնտեսութի խորհր-

դոյն

digitised by A.R.A.R.@

դոյն, որ ծածկեալ էր յա՟մ յաւիտենից
10 առ ա՟յ՝ որ զա՟մ ինչ արար ։ * Զի յայտ-
նեսցի արդ իշխանութեանց և պետութեանց՝ որ
յերկինս են 'ի ձեռն եկեղեցւոյ՝ բազմա-
11 պատիկ իմաստութիւն ա՟յ ։ * ը՟ս յառաջա-
դրութե՟ն յաւիտենիցն՝ զոր արար 'ի ձեռն
12 տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի ։ * Որով ունիմք զհա-
մարձակութի՟ւն և զնուաձուի՟ յուսով 'ի
13 ձեռն հաւատոց նո՟ր ։ * Վասն որոյ աղա-
չեմ մի ձանձրանալ 'ի նեղութիս մերում,
14 որ վ՟ն ձեր է. որ է փառք ձեր ։ * Վասն
այսորիկ դնեմ ծունր առ հայր տ՟ն մերոյ
15 յ՟ի ք՟ի. * ուստի ա՟մ նահապետութի՟ւն
16 յերկինս և յերկրի անուանի. * զի տա-
ցէ ձեզ ը՟ս մեծութե՟ն փառաց իւրոց, հաս-
տատել զօրութ՟ք 'ի ձեռն հոգւոյն իւրոյ
17 'ի ներքին մարդն. * բնակել ք՟ի հաւա-
տովք 'ի սիրտս ձեր. սիրով արմատաց-
18 եալք. * զի կարող լինիջիք հասանել ը՟ն
ա՟մ ս՟բս, զի՛նչ է լայնութի, և երկայնու-
19 թի, և բարձրութի, և խորութի. * Ճա-
նաչել զառաւելութի գիտութե սիրոյն
20 ք՟ի. զի լցջիք ա՟մ լրութ՟բն ա՟յ ։ * Այլ
այնմ որ կարողն է առաւել քան զա՟մ ինչ
առնել յաճախութ՟բ, ք՟ զոր խնդրեմքն
և իմանամք. ը՟ս զօրութեն որ յաջողեալն
21 է 'ի մեզ ։ * Նմա փառք յեկեղեցւոջ,
և 'ի ք՟ս յ՟ս, յա՟մ ազգս յաւիտենից յա-
ւիտեանս. ամէն ։

Գլ ։

digitised by A.R.A.R.@

## ԳԼ. Դ.

Արդ՝ աղաչեմ զձեզ ես որ կապեալս 1
եմ 'ի տր. արժանի գնալ կոչմանն,
յոր կոչեցարուք: *ամ խոնարհութբ՝ և 2
հեզութբ, և երկայնմտութբ՝ անսալ մի-
մեանց սիրով: *փութալ պահել զմիա- 3
բանութի հոգւոյն յօդիւ խաղաղութե:
*Մի մարմին՝ և մի հոգի. ոպ և կոչե- 4
ցարուք, 'ի մի յոյս կոչման ձերոյ: *Մի 5
տր, մի հաւատք, մի մկրտութի: *մի 6
ած, և հայր ամենեցուն, որ 'ի վր ամե
և ը ամենեսին՝ և յամենեսին 'ի մեզ:
*Այլ իւրաքանչիւր ումեք 'ի մէնջ տր- 7
ւեալ են շնորհք ըս չափոյ պարգևացն
քի: *Վասն որոյ և ասէ. ել 'ի բար- 8
ձունս՝ գերեաց զգերութի, և ետ պար-
գևս մարդկան: *Որ ելն, զի՞նչ է, ե- 9
թէ ոչ՝ զի էջ նախ 'ի ստորին կողմս երկ-
րի: *Որ էջն նոյն է՝ և որ ելն 'ի վերոյ 10
քան զամ երկինս. զի լցցէ զամ: *Նա 11
նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մար-
գարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս
հովիւս և վարդապետս, *առ 'ի հաս- 12
տատութի սբց, 'ի գործ պաշտաման, 'ի
շինուած մարմնոյն քի: *մինչև հաս- 13
ցուք ամենեքեան 'ի մի միաբանութի հա-
ւատոց և գիտութե որդւոյն այ. յայր կա-
տարեալ 'ի չափ հասակի կատարմանն
քի: *Զի մի յայսմհետէ իցեմք տղայք 14
խռով

digitised by A.R.A.R.@

խռովեալք՝ եւ տատանեալք յամ հողմոյ
վարդապետութե, խաբէութբ մարդկան.
խորամանկութբ 'ի խաբէութի մոլորութե ։
15 *Այլ ճշմարտեալք սիրով աճեցուսցուք
16 'ի նա զամ, որ է գլուխ քս. *ուստի ամ
մարմինն յօդեալ եւ պատշաճեալ ամ
խաղալեօք տարբերութե՝ ըստ ազդեցութե՝
չափով ըստ իւրաքանչիւր մասին՝ զաճումն
մարմնոյ գործէ՝ 'ի շինած անձին իւրոյ
17 սիրով ։ *Արդ՝ զայս ասեմ. եւ ուխտեմ
'ի տր. մի եւս ձեզ զնոյն օրինակ գնալ,
ոպ եւ այլ հեթանոսք գնան՝ ունայնութբ
18 մտաց իւրեանց ։ *որոց խաւարեալ են
միտք իւրեանց, եւ օտարացեալ են 'ի
կենաց անտի այ՝ վս տգիտութեն՝ որ է 'ի
19 նս՝ վս կուրութե սրտից իւրեանց ։ *Որք
զանձանց իւրեանց զյոյսն հատին, եւ
մատնեցին զանձինս գիջութե, 'ի գործս
20 ամ պղծութե ագահութբ ։ *Այլ դուք
21 ոչ այսպէս ուսարուք զքս. *Թէպէտ եւ
լուարուք զնմանէ՝ եւ նովաւ ուսայք՝ ոպ
22 է ճշմարտութին յսի. *'ի բաց մերկանալ
'ի ձէնջ ըստ առաջին գնացիցն զմարդն
հին՝ զապականեալն ցանկութբք խաբէու-
23 թեն ։ *Նորոգել հոգւոյն մտաց ձե-
24 րոց, *եւ զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ
այն հաստատեալ է՝ արդարութբ եւ սըր-
25 բութբ ճշմարտութեն ։ *Վս որոյ 'ի բաց
ընկեցէք զստութի. խօսեցարուք զճշմար-
տութի իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում.

զի

digitised by A.R.A.R.@

զի եմք միմեանց անդամք։ * Բարկա- 26
նայք՝ և մի՛ մեղանչէք. արեգակն 'ի վր
բարկութե ձերոյ մի՛ մտցէ։ * Եւ մի՛ տայք 27
տեղի սատանայի։ * Որ գողանայրն, մի՛ 28
ևս գողասցի, այլ մանաւանդ վաստա-
կեսցէ՝ գործել ձեռօք իւրովք զբարիս
զի բաւական իցէ տալ ում պիտոյ իցէ։
* Ամենայն բան տգեղ 'ի բերանոյ ձեր- 29
մէ մի՛ ելցէ. այլ որ ինչ բարին է 'ի շի-
նած պիտոյից, զի տացէ շնորհս այնոցիկ
որ լսենն։ * Եւ մի՛ տրտմեցուցանէք 30
զհոգին սբ այ, որով կնքեցարուք յաւ-
ուրն փրկութե։ * Ամենայն դառնութի՝ 31
և բարկութի, և սրտմտութի և աղա-
ղակ՝ և հայհոյութիւն բարձցի 'ի ձէնջ
ամենայն չարութեբն հանդերձ։ * Ե- 32
րուք ընդ միմեանս քաղցունք՝ գթածք.
շնորհել միմեանց. որպէս և ած քսիւ
շնորհեաց մեզ։

# ԳԼ. Ե.

Եղերուք նմանօղք այ, իբրև որդիք սի- 1
րելիք։ * Եւ գնացէք սիրով ոպ և 2
քս սիրեաց զմեզ, և մատնեաց զանձն իւր
'ի վս մեր՝ պատարագ և զենումն այ 'ի հոտ
անուշից։ * Բայց պոռնկութի, և ամ 3
պղծութի, կմ ագահութի, և անուա-
նեսցի մի՛ 'ի միջի ձերում. ոպ և վայել է
սրց։ * Եւ զազրութի կամ խօսք յիմա- 4
րութե, կմ խեղկատակութի որ ոչ վայել
է.

5 է. այլ մանաւանդ գոհութի՟ւ: * Զայս
տեղեկացեալ գիտասջիք. թէ ա՟մ պոռ֊
նիկ՝ կամ պիղծ՝ կա՟մ ագահ, որ է կռա֊
պաշտ՝ ոչ ունի ժառանգութի՟ւն յարքայ֊
6 ութեա՟ն ք՟սի և ա՟յ: * Մի՛ ոք զձեզ խա֊
բեսցէ բանիւք սնոտեօք. զի վ՟ն այսո֊
րիկ իսկ գայ բարկութի՟ւն ա՟յ ՚ի վ՟յ որդ֊
7 ւոցն անհաւանութե՟ան: * Մի՛ այսուհետև
8 լինիք բաժանորդք ն՟ց: * Զի թէպէտ
և երբեմն էիք խաւար, արդ լոյս էք ՚ի
9 տ՟ր, իբրև զորդիս լուսոյ գնացէ՛ք. * զի
պտուղ լուսոյ ա՟մ բարութե՟ամբ է՝ և արդա֊
10 րութե՟ամբ և ճշմարտութե՟ամբ: * Փորձեցէ՛ք զինչ
11 է հաճոյ տ՟ն. * և մի՛ կցորդ լինիք ան֊
պտղութե՟ան գործոցն խաւարի՝ այլ մանա֊
12 ւանդ յանդիմանեցէ՛ք: * Զի որ ՚ի ծա֊
ծուկ ինչ գործի ՚ի նո՟ց՝ զայն և խօսել
13 աղտեղի է: * Այլ ամենայն ինչ յան֊
դիմանեալ ՚ի լուսոյ՝ յայտնի լինի. զի
14 ա՟մ ինչ որ յայտնի է՝ լոյս է: * Վասն
որոյ և ասէ. արի որ ննջեսդ, և կանգ֊
նեաց ՚ի մեռելոց՝ և լուսատու լիցի
քեզ ք՟ս:
15 * Տեսջի՛ք ո՟րպ ճշմարտիւ գնայցէք, մի՛ Դ Կ
16 իբրև անիմաստք, * այլ իբրև իմաս֊
տունք: գնեցէ՛ք զժամանակս՝ զի ա֊
17 ւուրքս չարութե՟ան են: * Վասն այնորիկ մի՛
լինիք անմիտք, այլ իմացարո՛ւք զինչ
18 կամք են տ՟ն: * Եւ մի՛ արբենայք գի֊
նւով, յորում գեղխութի՟ւն է. այլ մանաւանդ
լցա֊

digitised by A.R.A.R.@

լցարո՛ւք Հոգւով: * խօսել 'ի սիրտս ձեր 19
սաղմոսիւք, և օրհնութի՛ւք՝ և երգովք հո-
գևորօք. երգել և սաղմոս ասել 'ի սիր-
տըս ձեր Տն: *Գոհացարո՛ւք յամ ժամ 20
'ի վր ամի, յանուն Տն մերոյ Յի Քի՝
Հօրն և Այ:* Հնազանդ լերուք միմեանց 21
երկիւղիւն Քի: *Կանայք՝ իւրեանց ա- 22
րանց Հնազանդ լիցին իբրև Տն: *զի այր 23
է գլուխ կնոջ, որպ և Քս գլուխ է եկե-
ղեցւոյ. և ինքն է փրկիչ մարմնոյ: *Այլ 24
որպ եկեղեցին Հնազանդ լինի Քի. նոյն-
պէս և կանայք իւրեանց արանց յամի:
*Արք՝ սիրեցէ՛ք զկանայս ձեր. որպ և 25
Քս սիրեաց զեկեղեցի. և զանձն իւր
մատնեաց վն նր: *զի զնա սրբեսցէ սըր- 26
բութբ աւազանին բանիւ. *զի կացուսցէ 27
ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղե-
ցի, զի մի՛ ունիցի ինչ արատ՝ կմ աղտե-
ղութի, կմ այլ ինչ յայնպիսեաց. այլ զի ի-
ցէ սբ և անարատ: *Նոյնպ պարտին 28
արք սիրել զիւրեանց կանայս իբրև զիւ-
րեանց մարմինս: որ սիրէ զկին իւր,
զանձն իւր սիրէ: *Ոչ ոք երբէք ա- 29
տեաց զանձն իւր, այլ սնուցանէ, և
դարմանէ զնա. որպ և Քս զեկեղեցի:
*զի անդամք եմք մարմնոյ նր, 'ի մարմ- 30
նոյ նր և յոսկերաց նր: *Վն այսորիկ 31
թողցէ այր զհայր և զմայր իւր, և եր-
թիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին եր-
կոքին 'ի մարմին մի: *Խորհուրդս այս 32
մեծ

digitised by A.R.A.R.@

մեծ է, բայց ես ասեմ 'ի քս և յեկեղե-
33 ցի։ * Այլ և դուք նոյնպէս մի ըստ միո-
ջէ. զի իւրաքանչիւրոք զիւր կին այնպ
սիրեսցէ՝ իբրև զիւր անձն. և կին երկըն-
չիցի յառնէ իւրմէ։

## ԳԼ. Զ.

1 Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձե- ԹԴ
2 րոց 'ի Տր. զի այն է արժան։ *Պա-
տուեա զհայր քո և զմայր, որ է առաջին
3 պատուիրան յաւետիսն. *զի քեզ բարի
եղիցի, և երկայնակեաց լինիցիս 'ի վր
4 երկրի։ *Հարք՝ մի զայրացուցանէք զոր-
դիս ձեր, այլ սնուցանիջիք զնս խրատու
5 և ուսմամբ Տն։ *Ծառայք՝ հնազանդ
լերուք տերանց ձերոց մարմնաւորաց,
ահիւ և դողութբ և միամտութբ սըր-
6 տից ձերոց, որպ և Քսի։ *Մի առ ակա-
նէ ծառայել իբրև մարդահաճոյք. այլ
իբրև ծառայք Քսի առնել զկամս Այ։
7 *սրտի մտօք ծառայել իբրև Տն, և մի իբ-
8 րև մարդկան։ *գիտասջիք՝ թէ իւրա-
քանչիւր ոք որ զինչ առնէ զբարին, ըզ-
նոյն ընկալցի և 'ի Տնէ՝ եթէ ծառայ և
9 եթէ ազատ։ *Եւ դուք տեարք՝ զնոյն
առնիջիք առ նս. ներելով առնել զպա-
տուհասն. գիտասջիք թէ և նց և ձեր
Տր գոյ յերկինս. և ակնառութի ոչ գոյ
առաջի նորա։
10 *Այսուհետև զօրացարուք Տերամբ, և
կա-

digitised by A.R.A.R.@

կարողութ̃ զօրութ̃ նր̃։ *Եւ զգեցարո՛ւք 11
զսպառազինութի՛ն այ̃․ զի կարօղ լինի֊
ջիք կալ ընդդէմ հնարից սատանայի։
*Զի ո՛չ է մեզ պատերազմ ը̃ մարմնոյ 12
և ը̃ արեան․ այլ ը̃ իշխանութիս, և ը̃
պետութիս, և ը̃ աշխարհակալս խա֊
ւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութե՝ որ
'ի ներքոյ երկնից։
Թ․Զ *Վ̃ն այսորիկ առէք զսպառազինու֊ 13
թիւնն այ̃․ զի կարօղ լինիցիք 'ի դիմի
հարկանել չարին յաւուրն չարութե։
*Եւ իբրև զամենայն ինչ կատարիցէք, 14
հաստատո՛ւն կացէք․ զտեղի կալջիք պըն֊
դեալ զմէջս ձեր ճշմարտութ̃․ և զգե֊
ցեալ զզրահսն արդարութե․ *և ագու֊ 15
ցեալ զոտս պատրաստութ̃ աւետարա֊
նին խաղաղութե։ *Եւ 'ի վերայ ամե֊ 16
նայնի առէք զվահանն հաւատոյ․ որով
կարօղ լինիջիք զամենայն նետս մուխս
չարին շիջուցանել։ *Եւ առէք զսաղա֊ 17
ւարտն փրկութե, և զսուսեր հոգւոյն՝
որ է բանն այ̃։ *ամենայն աղօթիւք և 18
խնդրուածովք՝ աղօթս առնել յամե֊
նայն ժամանակի հոգւով։ և 'ի նոյն տըք֊
նիջիք ամենայն ժուժկալութ̃՝ և խըն֊
դրուածովք՝ վասն ամենայն սրբոց, *և 19
վասն իմ․ զի ինձ տացի բան 'ի բանալ
բերանոյ իմոյ, համարձակութ̃ ցու֊
ցանել զխորհուրդ աւետարանին․ *վ̃ն 20
որոյ պատգամաւորիմ կապանօքս․ զի նո֊
վին

digitised by A.R.A.R.@

վին համարձակեցայց, որպէս և պարտ
21 իցէ ինձ խօսել: *Բայց զի գիտիցէք և
դուք զինէն, զինչ գործիցեմ. զամենայն
ինչ ցուցցէ ձեզ տիւքիկոս սիրելի եղ-
բայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ ՚ի տէր,
22 *զոր առաքեցի առ ձեզ վասն իրի. զի
գիտասջիք դուք զմէնջ, և մխիթարես-
23 ցէ զսիրտս ձեր: *Խաղաղութիւն ընդ
եղբարս, և սէր հաւատովքն հանդերձ
24 յայ ՚ի հօրէ՝ և ՚ի տնէ յսէ քսէ: *Շնորհք
ընդ ամենեսին՝ ոյք սիրեն զտր մեր յս
քս անեղծութբ. ամէն:

Առ Եփեսացիս՝ գրեցաւ ՚ի հռոմէ ՚ի ձեռն
տիւքիկոսի:



digitised by A.R.A.R.@

# Թ Ո Ւ Ղ Թ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍՆ։

## ԳԼ. Ա։

Ժ Կ Պօղոս եւ տիմոթէոս ծառայք յի՟ի 1
քսի՟ ամ՟ սրբոց 'ի քս՟ յս՟, որ են 'ի
կողմանս փիլիպեցւոց, եպիսկոպոսա-
ցօք եւ սարկաւագօք։ * Շնորհք ը՟ 2
ձեզ եւ խաղաղութի՟ յայ՟ հօրէ մերմէ՝
եւ 'ի տնէ յսէ քսէ։ * Գոհանամ զայ՟ 3
իմոյ 'ի վ՟ր ամ՟ յիշատակաց ձերոց,
* յամ՟ ժամ յամ՟ խնդրուածս իմ՝ վասն 4
ձեր ամենեցուն առնել աղօթս խնդու-
թե՟, * վասն հաղորդութե՟ ձերոյ ընդ 5
աւետարանին, յօրէ յառաջնմէ մինչեւ
ցայժմ։ * Ստահակ եմ յայդ, թէ որ ըս- 6
կսաւն 'ի ձեզ զգործս բարեաց՝ կատա-
րեսցէ մինչեւ յօրն յի՟ի քսի՟։ * որ՟ իրաւ 7
իսկ թուի ինձ խորհել զայս վ՟ս ձեր ա-
մենեցուն. վ՟ս ունելոյ ինձ զձեզ 'ի սրտի
'ի կապանս իմում, եւ 'ի պատասխանա-
տուութե՟ իմում. եւ 'ի հաստատութե՟ աւե-
տարանին, կցորդս ինձ շնորհաց զձեզ ա-
մենեսին լինել։ * Վկայ է ինձ ած, որ՟ 8
անձ-

digitised by A.R.A.R.@

անձկացեալ եմ առ ձեզ ամենեսին գը-
9 թովքն ք՟ի յ՟ի: *Եւ զայս աղօթս առ-
նեմ. զի սէրն ձեր եւս քան զեւս առաւել
լիցի 'ի գիտութեան և յա՟մ իմաստութեան.
10 *ընտրել ձեզ զլաւն՝ զի իցէք հաստա-
տունք՝ և առանց գայթագղութեան 'ի յաւ-
11 ուրն ք՟ի. *լցեալ պտղովք արդարութեան
'ի ձեռն յ՟ի.ք՟ի՝ 'ի փառս և 'ի գովեստ ա՟յ:
12 *Կամիմ թէ գիտիցէք եղբարք. զի որ ԺԴ
ինչ վ՟ն իմ էր, եւս քան զեւս 'ի յառաջա-
13 գիմութ՟ի աւետարանին եկն, *մինչեւ կա-
պանաց իմոց յայտնի լինել 'ի ք՟ս յամե-
նայն հրապարակիս, և առ այլս ամենե-
14 սին. *և առ բազում եղբարս 'ի տ՟ր. որ
վստահ են կապանօքս իմովք՝ առաւել
եւս համարձակել՝ առանց երկիւղի զբանն
15 ա՟յ խօսել: *Ոմանք առ նախանձու և
հակառակութ՟ե, և ոմանք մտադիւրու-
16 թ՟ե իսկ զ.ք՟ս.քարոզեն. *և ոմանք 'ի սի-
րոյ. քանզի գիտեն՝ եթէ 'ի պատասխա-
17 նատուութ՟ի աւետարանին կամ: *և ոմանք
առ հեստութ՟ե զ.ք՟ս պատմեն, այլ ո՛չ սըր-
բութ՟բ. քանզի համարին նեղութ՟ի յարու-
18 ցանել 'ի վ՟ն կապանաց իմոց: *Բայց
այս զի՛նչ է. որով օրինակաւ և իցէ, ե-
թէ պատճառանօք՝ և եթէ ճշմարտութ՟բ,
ք՟ս պատմի. և ը՟դ այս խնդամ, այլեւ ու-
19 րախ եւս եղէց: *Զի գիտեմ եթէ այս
պահի ինձ 'ի փրկութ՟ի 'ի ձերոց խնդրուա-
ծոց, և 'ի պարգեւաց հոգւոյն յ՟ի.ք՟ի:

*ըստ

digitised by A.R.A.R.@

* ըստ ակնկալութեան և յուսոյն իմոյ. զի 20
մի՛ իւիք յամօթ եղէց. այլ ամ համար-
ձակութբ ոպ և յամ ժամ, և այժմ մե-
ծասցի քս 'ի մարմնի իմում, եթէ կե-
նօք՝ և եթէ մահու: * Զի ինձ կեանք 21
քս է, և մեռանել շահ: * Ապա եթէ 22
կեանքս մարմնոյ՝ այս ինձ պտուղ գոր-
ծոյ է. և զինչ ընտրեցից՝ զայն ոչ գի-
տեմ: * Նեղեալ եմ յերկոցունց՝ զցան- 23
կալն, ելանել և ընդ քսի լինել՝ առաւել
լաւ համարիմ. * և կալ մնալ աստէն 'ի 24
մարմնի, կարևոր ևս վն ձեր: * Եւ զայս 25
յուսացեալ գիտեմ, եթէ կացից՝ և մնա-
ցից ամենեցուն ձեզ, 'ի ձեր զարգանալ
և խրախ լինել 'ի հաւատս. * զի պար- 26
ծանք ձեր առաւել լիցին 'ի քս յս իւև 'ի
Վ. ջ միւսանգամ գալստեան իմում առ ձեզ:
* Միայն թէ արժանի աւետարանին քսի 27
գնայցէք: զի եթէ գայցեմ, և տեսանի-
ցեմ զձեզ. և եթէ հեռի իցեմ, և լսի-
ցեմ զձէնջ. զի հաստատուն կայցէք 'ի
մի հոգի, և միով շնչով նահատակիցիք
'ի հաւատս աւետարանին. * և մի՛ զան- 28
գիտիցէք, և մի՛ իւիք 'ի հակառակոր-
դաց անտի, որ է նց հանդէս կորստեան.
և ձերոյ փրկութե: * Եւ այդ՝ յայ է, 29
որ ձեզ շնորհեցաւ վն քսի, ոչ միայն 'ի
նա հաւատալ՝ այլ և վն նր չարչարիլ:
* զնոյն պատերազմ ունել զոր յիմն տե- 30
սէք, և այժմ լսէք յինէն:

ԳԼ.

digitised by A.R.A.R.@

## ԳԼ. Բ.

1 Արդ՝ եթէ մխիթարութիւն ինչ իցէ ՚ի Ք՟ս,
եթէ սփոփումն սիրոյ՝ եթէ հաղոր-
դութիւն հոգւոյ, եթէ գթութիւն եւ ողոր-
2 մութիւն. *Լցէք զխնդութիւն իմ, զնոյն խոր-
հիջիք, զնոյն սէր յանձին ունիջիք. հա-
3 մաշունչք՝ միախորհուրդք: *Մի ինչ ը՟ս
գրգռութեան, եւ մի ինչ ը՟ս սնապարծութեան.
այլ խոնարհութեամբ զմիմեանս լաւ համա-
4 րել քան զանձինս: *Մի զան-
ձանց եւ եթ զիտել՝ այլ իւրաքանչիւրոք
5 զընկերին: *Զայն խորհեսցի իւրա-
6 քանչիւրոք ՚ի ձեզ, որ եւ ՚ի Ք՟ս Յ՟ս. *որ
՚ի կերպարանս Ա՟յ է, ոչինչ յափշտակու-
թիւն համարեցաւ զլինելն հաւասար Ա՟յ.
7 *այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս
ծառայի առեալ, ՚ի նմանութիւն մարդ-
կան եղեալ՝ եւ կերպարանօք գտեալ իբ-
8 րեւ զմարդ: *խոնարհեցոյց զանձն, լեալ
հնազանդ մահու չափ՝ եւ մահու խաչի:
9 *Վ՟ն որոյ եւ Ա՟ծ զնա առաւել բարձ-
րացոյց. եւ շնորհեաց նմա անուն՝ որ ՚ի
10 վեր է քան զա՟մ անուն: *Զի յանուն
Յ՟ի Ք՟ի ա՟մ ծունր կրկնեսցի, երկնա-
ւորաց՝ եւ երկրաւորաց՝ եւ սանդարամե-
11 տականաց: *եւ ա՟մ լեզու խոստովան
լիցի, թէ Տ՟ր է Յ՟ս Ք՟ս ՚ի փառս Ա՟յ Հօր:
12 *Այսուհետեւ սիրելիք իմ, ո՟պ յա՟մ ժ. Զ
հնազանդեցարուք, մի միայն ՚ի գալըս-
տեան

digitised by A.R.A.R.@

տեան իմում, այլ առաւել եւս այժմ՝
յորժամ հեռիս եմ 'ի ձէնջ, ահիւ եւ
դողութ͞բ զանձանց փրկութի͞ն գործեցէք։
* զի ա͞ծ է՝ որ յաջողէ 'ի ձեզ զկամելն 13
եւ զառնելն վ͞ս հաճութե͞ն։ * Զա͞մ ինչ 14
գործեցէք առանց տրտնջելոյ եւ քրթմն֊
ջելոյ. *զի եղիջիք անբիծք եւ անարատք՝ 15
որդիք ա͞յ, անմեղք 'ի մէջ կամակոր եւ
խեղաթիւր ազգին. յորոց միջի երեւի֊
ցիք իբրեւ լուսաւորք յաշխարհի. *զ֊ 16
բանն կենաց ունել յանձինս՝ 'ի պար֊
ծանս ինձ յաւուրն ք͞սի. զի ոչ ը͞ ունայն
ինչ ընթացայ՝ եւ ոչ ընդունայն վաստա֊
կեցի։ * Այլ թէպէտ եւ նուիրիմ 'ի 17
վ͞ր պատարագի եւ պաշտաման հաւատոց
ձերոց, խնդամ եւ ուրախակից եմ ամե֊
նեցուն ձեր. *Նոյնպէս եւ դուք խնդա֊ 18
ցէք եւ ուրախակից եղերո́ւք ինձ։ *Բայց 19
յուսամ 'ի տ͞ր յ͞ս, զտիմոթէոս վաղվա֊
ղակի արձակել առ ձեզ. զի եւ ինձ սըր֊
տի դիւր լինիցի, յորժամ գիտիցեմ ինչ
զձէնջ։ * Զի ոչ զոք ունիմ համաշունչ՝ 20
եթէ ընտանեբար հոգայցէ վասն ձեր։
*զի ամենեքին զանձանց խնդրեն, եւ ոչ 21
զյ͞սի ք͞սի։ *Բայց զփորձ նո͞ր գիտէք եւ 22
դուք. զի իբրեւ որդի հօր ծառայեաց ը͞
իս յաւետարանին։ *Արդ՝ զսա ակնու֊ 23
նիմ արձակել՝ ո͞պ նոյնհետայն զանձնէ
ստուգեցից։ * այլ յուսացեալ եմ 'ի տ͞ր՝ 24
թէ եւ ես իսկ ընդ հուպ եկից։ *Բայց 25
լաւ

digitised by A.R.A.R.@

լաւ համարեցայ զեպափրոդիտոս զեղ-
բայր՝ եւ զգործակից եւ զզինուորակից
իմ, զձեր առաքեալ, եւ պաշտօնեայ ի-
26 մոց պիտոյից՝ առաքել առ ձեզ: *Քան-
զի եւ ինքն իսկ յոյժ անձկացեալ է տե-
սանել զամենեսին զձեզ. եւ հոգայր, զի
27 ձեր լուեալ էր թէ խօթացաւ: *Եւ ար-
դարեւ խօթացաւ մերձ 'ի մահ, այլ ա՟ծ
ողորմեցաւ նմա. ոչ նմա միայն, այլ եւ
ինձ՝ զի մի՛ տրտմութի՟ 'ի վ՟ր տրտմութե՟
28 կրիցեմ: *Արդ՝ փութապէս յղեցի զնա,
զի տեսեալ զնա միւսանգամ ուրախ լի-
նիցիք. եւ ես առանց տրտմութե՟ եղէց:
29 *Ընկալջիք զնա 'ի տ՟ր ա՟մ խնդութ՟, եւ
զայնպիսիսն առ պատուականս ունիջիք.
30 *զի վ՟ս գործոյ ք՟ի մինչեւ 'ի մահ մեր-
ձեցաւ, գուն գործեալ ոգւովք չափ.
զի լցցէ զձեր պակասութի իմոյ սպասա-
ւորութե՟: Վ.Ջ.

## ԳԼ. Գ.

1 Այսուհետեւ եղբարք իմ, ուրախ լե-
րուք 'ի տ՟ր. զնոյն գրել առ ձեզ՝ ինձ
ոչինչ դանդաղելի է, եւ ձեզ կարի զգու-
2 շալի: *Զգոյշ եղերուք 'ի շանց անտի.
զգոյշ եղերուք 'ի չար մշակաց անտի.
զգոյշ եղերուք 'ի կրճատութե՟ անտի:
3 *Զի թլփատութի՟ մեք եմք, որ հոգ-
ւովն ա՟յ պաշտեմք. եւ պարծիմք 'ի ք՟ս յ՟ս,
4 եւ ոչ 'ի մարմին պանծացեալ եմք: *Թէ-
պէտ

digitised by A.R.A.R.@

պէտ և ես իսկ զնոյն վստահութիւն ունիմ
՚ի մարմնի, եթէ ոք համարիցի այլ ազգ-
վստահ լինել ՚ի մարմին, առաւել ևս ես.
* Թլփատութիւն ութօրեայ, յազգէ Իսրայէլի, 5
՚ի ցեղէ Բենիամենի. Եբրայեցի յԵբ-
րայեցւոյ. ըստ օրինացն փարիսեցի. * ըստ 6
նախանձայոյզն լինելոյ հալածէի զեկե-
ղեցին. ըստ արդարութեան օրինացն լեալ
անարատ: * Այլ որ ինչ ինձ շահն էր, 7
զայն վնաս համարիմ վասն Քրիստոսի: * այլ 8
և համարիմ իսկ զամենայն վնաս՝ վասն
առաւել գիտութեանն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ:
վասն որոյ զամենայն զրկեցայ՝ և համարիմ
կղկղանս, զի զՔրիստոս շահեցայց, և գտայց 9
՚ի նմա, ոչ եթէ զիմ ինչ արդարու-
թիւն՝ որ յօրինաց անտի է՝ ունիցիմ, այլ
զհաւատոցն Քրիստոսի, որ յԱստուծոյ արդարութիւնն
է. * հաւատովք ճանաչել զնա՝ և զզօ- 10
րութիւն յարութեանն նորա՝ և զհաղորդութիւն
չարչարանաց նորա, կերպարանակից լի-
նել մահու նորա. * թէ որպէս հասից ՚ի մեռե- 11
լոցն յարութիւն: * Ոչ եթէ արդէն 12
առեալ իցէ, կամ արդէն կատարեալ ի-
ցեմ. զհետ մտեալ եմ թէ հասից, մա-
նաւանդ թէ ըմբռնեալ իսկ իցեմ ՚ի Քրիստոսէ
Յիսուսէ: * Եղբարք՝ ես ոչ համարիմ զանձն 13
իմ թէ հասեալ իցեմ. բայց մի ինչ է՝
զի զառ ՚ի յետոյսն մոռացեալ է, և ՚ի
յառաջադէմսն նկրտեալ եմ: * ուշ ե- 14
դեալ ընթանամ ՚ի կէտ կոչմանն Աստուծոյ ՚ի

Քրիստոս

digitised by A.R.A.R.@

15 քս յս։ *Այսուհետև որ միանգամ կա-
տարեալքդ էք՝ զայս խորհեցարուք. և
եթէ այլ ազգ ինչ խորհիցիք՝ սակայն և
16 զայն ած ձեզ յայտնեսցէ։ *Բայց յոր
ժամանեցաքս՝ զնոյն խորհել՝ և նմին կա-
17 նոնի միաբան լինել։ *Նմանօղք ինձ
եղիջիք եղբարք՝ և դիտասջիք զայնպի-
սիսն որ այնպէսն գնայցեն, որպ ունիքդ
18 զմեզ ձեզ օրինակ։ *Զի բազումք
գնան, զորոց բզմ անգամ ասէի ձեզ.
բայց արդ և լալով իսկ ասեմ զթշնամեաց
19 խաչին քսի. *որոց կատարածն կորուստ
է. որոց ած որովայնն իւրեանց է, և
փառք ամօթն իւրեանց, որք զերկրաւորս
20 և եթ խորհին։ *Այլ մեր առաքինու-
թի յերկինս է, ուստի և փրկչին ակն ու-
21 նիմք՝ տն յսի քսի. *որ նորոգեսցէ զմար-
մին խոնարհութե մերոյ՝ կերպարանա-
կից լինել մարմնոյ փառաց իւրոյ, ըստ զօ-
րութեն՝ առ 'ի կարօղ լինելոյ հնազան-
դեցուցանել ընդ իւրև զամ։

## ԳԼ. Դ.

1 Այսուհետև եղբարք իմ սիրելիք և
անձկալիք, ուրախութիւն իմ, և
պսակ. այսպէս հաստատուն կացէք 'ի
2 տր՝ սիրելիք։ *Զևոդիա աղաչեմ, և
զսիւնտիք աղաչեմ, զնոյն խորհել 'ի տր։
3 *Այո աղաչեմ և զքեզ՝ մտերիմ իմ և
լծակից, և դու օգնական լինիջիր նոցա՝



digitised by A.R.A.R.@

որք յաւետարանին նահատակեցան ը՟ն
իս կղեմաւ հանդերձ՝ և այլովք գործակ-
ցօք իմովք. որոց անուանքն են ՚ի դպրու-
թ՟ե կենաց: *Ուրախ լերուք ՚ի տ՟ր յա՟մ 4
ժամ. դարձեալ ասեմ՝ ուրախ լերուք:
*Հեզութ՟ի ձեր յայտնի լիցի ա՟մ մարդ- 5
կան. տ՟ր մերձ է: *Մի ինչ հոգայք. 6
այլ ա՟մ աղօթիւք և խնդրուածովք, գո-
հութ՟բ, խնդրուածք ձեր յայտնի լիցին
առ ա՟ծ: *Եւ խաղաղութիւն ա՟յ՝ որ ՚ի 7
վեր է ք՟ն զա՟մ միտս, պահեսցէ զսիրտս
ձեր և զմիտս ՚ի ք՟ս յ՟ս:

Ակ *Այսուհետև եղբարք՝ որ ինչ ճշմար- 8
տութ՟ի է՝ որ ինչ պարկեշտութ՟ի, որ ինչ
արդարութ՟ի, որ ինչ սրբութ՟ի, որ ինչ
սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ
քաջութ՟ի, որ ինչ գովութ՟ի՝ զայն խոր-
հիջիք: *Զոր ուսարուքն, և ընկալա- 9
րուք, և լուայք՝ և տեսէք յիս, զայն ա-
րարէք. և ա՟ծ խաղաղութ՟ե եղիցի ը՟ն
ձեզ: *Ուրախ եղէ ես ՚ի տ՟ր յոյժ. զի 10
և դուք զմտաւ ածիք հոգալ ինչ վ՟ս իմ,
որպէս և հոգայիքն. բայց բարբարէիք
իմն է: *Իբր ոչ առ կարօտութ՟ե ինչ ա- 11
սեմ. զի ես ուսայ որովք կարեմ բաւա-
կան լինել: *Գիտեմ նուաղել, գիտեմ 12
առաւելուլ, յա՟մի ամենայնի խելամուտ
եմ, և յագել՝ և քաղցենալ, և առաւե-
լուլ՝ և նուաղել: *յա՟մի կարող եմ, այ- 13
նու՝ որ զօրացուցն զիս: *բայց բարւոք 14

արա-

digitised by A.R.A.R.@

արարէք՝ զի կցորդ եղերուք ինձ 'ի նե-
15 ղութեան: *Գիտէք և դուք փիլիպեցիք,
զի 'ի սկզբան աւետարանին իբրև ելի
ես 'ի մակեդովնիա, և ոչ մի եկեղեցի
հաղորդեաց ինձ յաղագս տալոյ և առ-
16 նլոյ, բայց միայն դուք: *զի և 'ի Թեսա-
ղոնիկ՝ միանգամ և երկիցս զպէտս իմ
17 ետուք բերել: *Ոչ եթէ խնդրեմ
զտուրսն, այլ խնդրեմ զպտուղն որ յա-
18 ճախէ 'ի քում ձեր: *Այլ իմ ամե՟ն զա՟մ,
և առաւելեալ եմ. ընկալայ՝ և լի եմ 'ի
ձեռն եպափրոդիտեայ, որ է 'ի ձէնջ
հոտ անուշից՝ պատարագ ը՟ունելի՝ հա-
19 ճոյ ա՟յ: *Եւ ա՟ծ իմ լի արասցէ զա՟մ
պէտս ձեր ը՟ստ իւրում մեծութե՟ն՝ փա-
20 ռօք 'ի ք՟ս յ՟ս: *Այլ ա՟յ և հօր մերում
փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:
21 *Ողջոյն տաջիք ա՟մ սրբոց՝ 'ի ք՟ս յ՟ս:
22 *Ողջոյն տան ձեզ՝ որ ը՟ն իս են եղբարք:
23 *Ողջոյն տան ձեզ ա՟մ սուրբք. մանա-
24 ւանդ որ 'ի տանէ կայսեր են: *Շնորհք
տ՟ն յ՟ի ք՟ի ը՟ն ոգւոյդ ձերում. ա՟մէն:

Առ Փիլիպեցիս՝ գրեցաւ 'ի հռովմէ 'ի ձեռն
Եպափրոդիտեայ:

ԹՈՒՂԹ

digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍՆ:
## ԳԼ. Ա:

Ար Պօղոս առաքեալ Յսի Քսի կամօքն 1
Այ, եւ Տիմոթէոս եղբայր. * առ
կողոսացիս սուրբս եւ հաւատացեալս եղ- 2
բարս 'ի Քս: * Շնորհք ընդ ձեզ եւ խա-
ղաղութիւն յԱյ Հօրէ մերմէ՝ (եւ 'ի Տնէ 3
Յսէ Քսէ): Գոհանամք զԱյ եւ զՀօրէ
Տն մերոյ Յսի Քսի, յամ ժամ վն ձեր
աղօթս առնեմ. * իբրեւ լուաք զհա- 4
ւատսն ձեր՝ որ 'ի Քս Յս Տր մեր, եւ զսէրն
որ ընդ ամենայն սրբս ունիք. * վասն յու- 5
սոյն որ պահի ձեզ յերկինս. զորմէ
լուարուք բանիւն ճշմարտութեան աւե-
տարանին, * որ եհաս առ ձեզ. որպէս 6
ընդ ամենայն աշխարհ աճէ եւ պտղաբե-
րէ. որպս եւ 'ի ձերում միջի. յօրէ յոր-
մէ լուարուք՝ եւ ծանեայք զշնորհսն Այ
ճշմարտութբ. * որպս եւ ուսարուք յԵպափ- 7
րեայ սիրելւոյ ծառայակցէ մերմէ, որ է
հաւատարիմ վն ձեր՝ պաշտօնեայ Քսի.
* որ եւ պատմեաց մեզ զձեր սէրն հոգ- 8
ւով:

digitised by A.R.A.R.@

9 ւով: *Վասն այնորիկ և մեք յօրէ յոր-
մէ լուաք՝ ոչ դադարեմք վասն ձեր աղօ-
թըս առնել՝ և խնդրուածս մատուցա-
նել. զի լնուցուք զգիտութի̃ կամացն նր̃,
ամենայն իմաստութբ̃ և հոգևոր հան-
10 ճարով. *գնալ ձեզ արժանի տն̃ յամե-
նայն հաճութէ̃, յամենայն գործս բա-
րութեան պտղաբերք և աճեցունք գի-
11 տութբ̃ն այ̃. *ամենայն զօրութբ̃ զօ-
րացեալք ըստ զօրութե̃ փառաց նորա.
յամենայն համբերութիւն և երկայն-
մտութի̃:
12 Գոհութբ̃ *գոհանալ զայ̃ հօրէ՝ որ Աթ
կոչեաց զձեզ 'ի մասն վիճակի սրբոցն
13 'ի լոյս. *որ փրկեաց զմեզ յիշխանութէ̃
խաւարի, և փոխեաց զմեզ յարքայութի̃
14 որդւոյն իւրոյ սիրելւոյ: *որով ունիմք
զփրկութի̃ արեամբն նր̃, և զթողութի̃
15 մեղաց՝ մարմնովն նր̃.*որ է պատկեր ան-
երևութին այ̃, անդրանիկ ամենայն
16 արարածոց:*Զի նովաւ հաստատեցաւ
ամենայն, որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկ-
րի, որ երևին՝ և որ ոչն երևին. եթէ
աթոռք, եթէ տէրութիք, եթէ պետու-
թիք, եթէ իշխանութիք. ամենայն ինչ
17 նովաւ՝ և 'ի նոյն հաստատեցաւ: *Նա
նա է յառաջ քան զամենայն, և ամե-
18 նայն ինչ նովաւ եկաց բովանդակ: *Նա
նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ. որ է
սկիզբն, անդրանիկ 'ի մեռելոց, զի ե-
ղի-

digitised by A.R.A.R.@

զիցի ինքն յամի յառաջացեալ: * Զի 'ի 19
նմ հաճեցաւ ամենայն լրումն ածուեն
բնակել. * և նովաւ հաշտեցուցանել 20
զամենայն 'ի նոյն: արար խաղաղութի
արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի՝ և
որ ինչ յերկինս: * Եւ զձեզ՝ որ երբեմն 21
օտարացեալն էիք, և թշնամիք խորհր-
դովք 'ի գործսն չարութե. * այժմ ա- 22
ւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ
իւրոյ 'ի ձեռն մահուն իւրոյ, յանդի-
ման կացուցանել զձեզ սրբս՝ և ամբիծս՝
և անարատս առաջի նր. * եթէ կայցէք 23
'ի հաւատսն արմատացեալք և հաստա-
տեալք. և անշարժք 'ի յուսոյ աւետա-
րանին՝ զոր լուարուք քարոզելոյ ը ամե-
նայն արարածս 'ի ներքոյ երկնից. որոյ
եղէ ես պօղոս պաշտօնեայ:
{ԱԴ} * Եւ արդ՝ ուրախ եմ 'ի չարչարանս իմ 24
վս ձեր. և լնում զպակասութի նեղութեցն
քի 'ի մարմնի իմում վս մարմնոյ նր՝ որ
է եկեղեցի. * որոյ եղէ ես պօղոս պաշ- 25
տօնեայ՝ ըստ տնտեսութեն այ, որ տուեալ
է ինձ 'ի ձեզ կատարել զբանն այ. * ըզ- 26
խորհուրդն՝ որ ծածկեալն էր 'ի յաւի-
տեանցն և յազգաց. որ այժմ յայտնեցաւ
սրբոց իւրոց: * Որոց կամեցաւ ած ցու- 27
ցանել, թէ զինչ է մեծութի փառաց
խորհրդոյ նր 'ի հեթանոսս, որ է քս 'ի
ձեզ՝ յոյսն փառաց. * զոր մեքն քարո- 28
զեմք. և խրատեմք զամ մարդ՝ և ու-

սու-

digitised by A.R.A.R.@

ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն
հոգևոր իմաստութբ̅. զի կացուսցուք
զամենայն մարդ կատարեալ 'ի քս̅ յս̅.
29 *յոր և աշխատիմ պատերազմեալ ըստ
յաջողութե̅ն նորա՝ որ յաջողեալ է յիս
զօրութբ̅ ։

## ԳԼ. Բ.

1 Կամիմ զի գիտիցէք դուք՝ որպիսի ճգ-
նութի̅ ունիմ յանձին վս̅ ձեր՝ և վս̅
լաւոդիկեցւոցն, և որոց չիցէ տեսեալ
2 զերեսս իմ մարմնով։ *Զի մխիթարես-
ցին սիրտք նց̅ տեղեկացեալք սիրով. և
յամենայն մեծութի̅ լրութե̅ իմաստու-
թե̅՝ 'ի գիտութի̅ խորհրդոյն այ̅ (հօր),
3 'ի քս̅ յս̅. *յորում ա̅մ գանձք իմաստու-
4 թե̅ և գիտութե̅ ծածկեալ կան։ *Զայս
զայս ասեմ, զի մի̅ ոք զձեզ զառանցուս-
5 ցէ պատիր բանիւք։ *Զի թէպէտ և
մարմնով հեռի եմ, այլ հոգւովն̅ ձեզ
եմ. խնդամ՝ իբրև տեսանեմ զկարգն
ձեր՝ և զհաստատութի̅ հաւատոյն ձերոյ
6 որ 'ի քս̅ յս̅։ *Արդ՝ ոպ̅ ընկալարուք զքս̅
7 յս̅ զտր̅, նովին գնասջի՛ք. *արմատա-
ցեալք և շինեալք 'ի նա, և հաստատ-
եալք 'ի հաւատս, որպէս ուսարուքն՝
առաւելեալք 'ի նմին գոհութբ̅։ Վ.Ջ
8 *Զգո՛յշ լերուք՝ մի̅ ոք իցէ որ զձեզ կո-
ղոպտիցէ ճարտարմտութբ̅՝ և սնոտի խա-
բէութբ̅, որք ըստ մարդկան աւանդութե̅՝
և

digitised by A.R.A.R.@

և ը՟ս տարերց աշխարհիս՝ և ոչ ըստ յի՟ի
ք՟սի՝ * զի 'ի նմա բնակէ ա՟մ լրումն 9
ա՟ծութեան մարմնապէս ։ * Եւ էք դուք 10
նովաւ լցեալք, որ է գլուխ ամենայն իշ-
խանութե և պետութե ։ * որով թլփատե- 11
ցարուք հաւատովք զանձեռագործ թլ-
փատութի՟ն 'ի մերկանալ զանդամն մարմ-
նոյ թլփատութե՟ն ք՟սի ։ * թաղեալք ը՟ն 12
նմին 'ի մկրտութեն, որով և ը՟ն նմին յա-
րեայք հաւատովք՝ ա՟յ ազդեցութե՟ն, որ
յարոյց զնա 'ի մեռելոց ։ * Եւ զձեզ որ 13
երբեմն մեռեալն էիք 'ի մեղս և յանթլ-
փատութե մարմնոյ ձերոյ, կենդանացոյց
յանձին իւրում. շնորհեաց մեզ զամե-
նայն յանցանս մեր. * և ջնջեաց զձեռա- 14
գիր մերոյ հակառակութե՟ն հրամանօքն
իւրովք։ որ կայր մեզ հակառակ եբարձ
զայն 'ի միջոյ՝ և բևեռեաց ը՟ն խաչափայ-
տին ։ * Մերկեաց զիշխանութի՟ս և զպե- 15
տութի՟ս. յայտ յանդիմանս խայտառակեաց
նշաւակեաց զնո՟ս յանձին իւրում՝ 'ի յարութե
իւրում ։ * Մի ոք այսուհետև զձեզ դա- 16
տեսցի՝ ուտելով կա՟մ ըմպելով, կամ մա-
սամբք տօնից կա՟մ ամսամտիւք կա՟մ շաբա-
թուք. * որ են ստուերք հանդերձելոցն. 17
այլ մարմին ք՟սի է ։ * Մի ոք զձեզ խաբես- 18
ցէ, որ կամիցի խոնարհութ՟բ և կրօնիւք
հրեշտակաց, զոր չիցէ տեսեալ զրահետ
վարել՝ տարապարտ հպարտացեալ 'ի մտաց
մարմնոյ իւրոյ. * և ոչ ունիցի զգլուխն 19
ք՟ս,

digitised by A.R.A.R.@

քս՟, ուստի ամենայն մարմինն յօդիւք և
խաղալեօք տարաբերեալ և խառնեալ՝
20 աճէ զաճումն այ՟ ։ * Եթէ մեռարուք
ընդ քսի՟ 'ի տարերց աշխարհիս՝ զի՞ ևս իբրև
զկենդանիս աստէն յաշխարհի կրօնաւո-
21 րիք։ * Մի՛ մերձենար, մի՛ ճաշակեր, մի՛
22 հուպ լինիր. * որ է ամ՟ ինչ 'ի պէտս
ապականութե՟, ըստ պատուիրանաց և
23 վարդապետութե՟ մարդկան. * որ յիմաս-
տութի՟ ինչ համարի, ինքնակամ կրօ-
նիւք և խոնարհութբ՟ և անխնայութբ՟
մարմնոյ. և ոչ 'ի պատիւ ինչ լրութե՟
մարմնոյ։

## ԳԼ. Գ.։

1 Եթէ յարերուք ընդ քսի՟, ապա զվերինն
խնդրեցէք, ուր քս՟ նստի ընդ աջմէ
2 այ՟. * զվերինն խորհեցարո՛ւք, մի՛ զայս
3 որ յերկրի աստ է։ * Քանզի մեռարուք՝
և կեանքն ձեր ծածկեալ են ընդ քսի՟ յայ՟ ։
4 * իսկ յորժամ քս՟ յայտնեսցի՝ կեանքն
ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնես-
5 ջիք փառօք։ * Սպանէք այսուհետև զան-
դամս ձեր զերկրաւորս. 'ի բաց ընկեցէք
զպոռնկութի՟ զպղծութի՟ զախտ զցանկութի՟
չարեաց, և զագահութի՟ որ է կռապաշ-
6 տութի՟. * վասն որոյ գայ բարկութի՟ այ՟ 'ի
7 վր՟ որդւոցն անհաւանութե՟. * որովք և
դուք երբեմն գնայիք՝ մինչ կենդանիքն
8 էիք 'ի նմա։ * Արդ՝ 'ի բաց թօթափեցէք
և

digitised by A.R.A.R.@

և դուք զայն ա՟մ, զբարկութիւն զսրտմտութիւն
զչարութիւն զհայհոյութիւն, զխեղկատակութիւն
'ի բերանոց ձերոց։ *Մի՛ ստէք միմեանց. 9
մերկացարո՛ւք զհին մարդն գործովք իւ-
րովք. * և զգեցարո՛ւք զնորն նորոգեալ 10
'ի գիտութիւն ը՟ս պատկերի արարչին իւրոյ.
*ուր ոչ է հրեայ՝ և ոչ հեթանոս, թլփ- 11
փատութիւն և անթլփատութիւն, խուժ՝
դուժ՝ սկիւթացի՝ ծառայ՝ ազատ. այլ
ամենայն և յամենայնի ք՟ս։ *Զգեցա- 12
րո՛ւք այսուհետև իբրև ընտրեալք ա՟յ՝
սուրբք և սիրեցեալք՝ զգութ ողորմու-
թեան զքաղցրութիւն զխոնարհութիւն զհե-
զութիւն զերկայնմտութիւն, *ներել միմեանց, 13
շնորհել իրերաց. եթէ ուրուք զումե-
քէ տրտունջ իցէ. որպէս ք՟ս քաւ
շնորհեաց ձեզ՝ նոյնպէս և դուք։ *Եւ 14
'ի վերայ այսր ա՟մի զսէրն, որ է զօդ կա-
տարմանն. * և խաղաղութիւն ք՟ի հաս- 15
տատեսցի 'ի սիրտս ձեր, յոր և կոչեցա-
րուքն միով մարմնով։

ԱՌ.Ե Եւ գոհացօ՛ղք լինիջիք. * զի բանն ք՟ի 16
բնակեսցէ 'ի ձեզ առատապէս. ա՟մ ի-
մաստութ՟բ ուսուցանել և խրատել զմի-
մեանս. սաղմոսիւք և օրհնութ՟բք և եր-
գովք հոգևորօք՝ և շնորհօք օրհնել 'ի
սիրտս ձեր զա՟ծ։ *Եւ զա՟մ զոր և առ- 17
նիցէք բանիւ և արդեամբք, զամենայն
յանուն տ՟ն յ՟ի արասջի՛ք։ գոհացօ՛ղք
լինիջիք զա՟յ և զհօրէ նովաւ։ *Կանայք՝ 18
հնա-

digitised by A.R.A.R.@

հնազանդ լերուք արանց ձերոց, որպ և
19 վայել է ՚ի տր։ *Արք սիրեցէք զկանայս
20 ձեր, և մի դառնացուցանիցէք զնս։ *Որ-
դիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց յա-
մենայնի՝ զի այն է հաճոյ առաջի տն։
21 *Հարք մի զայրացուցանիցէք զորդիս ձեր,
22 զի մի տրտմեսցին։ *Ծառայք՝ հնա-
զանդ լերուք տերանց ձերոց յամի. մի
առ ականէ ծառայութբ իբրև մարդահա-
ճոյք, այլ միամտութբ սրտի երկնչել ՚ի
23 տնէ։ *Զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք
գործեսջիք իբրև տն, և ոչ իբրև մարդ-
24 կան. *գիտասջիք՝ զի ՚ի տնէ առնուցուք
զհատուցումն ժառանգութե ձերոյ. զի
25 տն քսի ծառայէք։ *Իսկ ապիրատն ըն-
կալցի ըստ իւրում ապիրատութեն. զի չիք
ակնառութի առաջի այ։

## ԳԼ. Դ.

1 Տեարք՝ զիրաւունս և զհաւասարութի
ծառայից ձերոց շնորհեցէք. գիտաս-
2 ջիք՝ զի և ձեր տր գոյ յերկինս։ *Աղօ-
թից ստէպ կացէք. տքնել ՚ի նմին գո-
3 հութբ։ *Աղօթս արարէք միանգամայն
և վս մեր, զի ած բացցէ մեզ դուռն
բանին՝ խօսել զխորհուրդն քսի, վասն
4 որոյ և կապեալս կամ. *զի յայտնի ա-
րարից զնա որպ արժան իցէ ինձ խօսել։ Աջ
5 *Իմաստութբ գնասջիք առ արտաքինսն,
6 զնոյ առեալ զժամանակս. *և բանն ձեր
յամ

digitised by A.R.A.R.@

յա̃մ ժամ լի շնորհօք ա̃ծ իբրև աղիւ
համեմեալ լիցի, գիտել ո̃պ արժան ի-
ցէ ձեզ իւրաքանչիւրումեք տալ պա-
տասխանի։ * Այլ որ ինչ զինէն իցէ՝ 7
ցուցցէ ձեզ զա̃մ Տիւքիկոս սիրելի եղ-
բայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ՝ և ծա-
ռայակից 'ի տ̃ր. * զոր առաքեցի առ ձեզ 8
դմին իրի, զի գիտասջիք վասն մեր. և
մխիթարեսցէ զսիրտս ձեր. * ոնեսիմաւ 9
հանդերձ եղբարբ հաւատարմաւ և սի-
րելեաւ՝ որ է 'ի ձէնջ. զա̃մ ինչ ցուցցեն
ձեզ՝ որ ինչ աստ է։ * Ողջոյն տայ ձեզ 10
արիստարքոս գերեկից իմ, և Մարկոս եղ-
բօրորդի Բառնաբայ. վասն որոյ առէք
պատուէր՝ եթէ եկեսցէ առ ձեզ ընկալ-
ջիք զնա. * և Յիսուս՝ որ անուանեալն 11
է Յուստոս, որք են 'ի թլփատութե̃ անտի։
զի դոքա միայն գործակից եղեն ինձ յար-
քայութե̃ն ա̃յ, որք և եղեն իսկ ինձ մխի-
թարութի̃։ * Ողջոյն տայ ձեզ Եպափրաս՝ 12
որ 'ի ձէնջ ծառայ քի̃ի յի̃ի է. յամենայն
ժամ պատերազմեալ վ̃ն ձեր յաղօթս,
զի կայցէք կատարեալք և լցեալք յա̃մ
կամս ա̃յ։ * Վկայեմ նմա, զի բազում 13
աշխատութի̃ ունի վասն ձեր, և վ̃ն Լաւո-
դիկեցւոյն, և վասն այնոցիկ՝ որ յԵրա-
պօլիս են։ * Ողջոյն տայ ձեզ Ղուկաս 14
բժիշկ և սիրելի, և Դեմաս։ * Ողջոյն 15
տասջիք եղբարց՝ որ են 'ի Լաւոդիկիայ և
Նիմփայ, և որ առ տանն եկեղեցին է նո-
րա։

digitised by A.R.A.R.@

16 րա ։ * Եւ յորժամ ընթեռնուցու առ
ձեզ թուղթդ՝ արասջիք զի և 'ի Լաւոդի-
կեցւոց եկեղեցւոջն ընթերցցի. և զառ
'ի Լաւոդիկեցւոցն՝ զի և դուք ընթեռ-
17 նուցուք։ * Եւ ասասջի՛ք Արքիպպոս.
զգո՛յշ լեր սպասաւորութեանդ՝ զոր ընկա-
լար 'ի Տէր, զի զայդ կատարեսցես ։
16 * Ողջոյնդ ձեռամբ իմով Պօղոսի է. յո՛ւշ
լիցին ձեզ կապանքս իմ։ Շնորհք ընդ
ձեզ ։ ամէն ։

Առ Կողոսացիս՝ Գրեցաւ 'ի Հռոմէ 'ի ձեռն
Տիւքիկոսի և Ոնեսիմեայ ։



digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ։

## ԳԼ. Ա։

Բկ Պօղոս եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս՝ 1
եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց
յած հայր մեր եւ ՚ի տր յսքս։ *Շնորհք 2
ը ձեզ եւ խաղաղութի։ Գոհանամք զայ
յամ ժամ վասն ձեր ամենեցուն՝ յիշա-
տակ առնել յաղօթս մեր անդադար.
*յիշել զձեր գործն հաւատոյ՝ եւ զվաս- 3
տակ սիրոյ՝ եւ զհամբերութի յուսոյ տն
մերոյ յսի քսի՝ առաջի այ եւ հօր մե-
րոյ։ *Գիտեմք եղբարք սիրեցեալք յայ՝ 4
զընտրութին ձեր. *զի աւետարանն մեր 5
ոչ եղեւ առ ձեզ միայն բանիւ, այլ եւ
զօրութբ եւ հոգւովն սրբով՝ եւ լրութբ
բազմաւ. որպ եւ գիտէք իսկ՝ թէ որպի-
սիք եղեաք ՚ի միջի ձերում վասն ձեր։
*Եւ դուք նմանեալք մեզ՝ եւ տն, ընկա- 6
լայք զբանն ՚ի բազում նեղութե՝ խըն-
դութբ հոգւոյն սբյ. *լինել ձեզ օրի- 7
նակ ամ հաւատացելոց, որ են ՚ի Մակե-

դով-

digitised by A.R.A.R.@

8 դոնիա՝ և յաքայիա: * Զի 'ի ձէնջ
հնչեաց բանն տն. ոչ միայն 'ի մակեդո-
նիա և յաքայիա, այլ յամ տեղիս հա-
ւատքն ձեր որ առ այ են՝ սփռեցան.
զի այսուհետև ոչինչ է պիտոյ մեզ և
9 խօսել ինչ: * Զի նոքին իսկ պատմեն
վն մեր, թէ որպէս եղև մեզ մուտ առ
ձեզ. և որպ դարձայք առ այ 'ի կռոց ան-
տի, ծառայել այ կենդանւոյ և ճշմար-
10 տի. * և ակն ունել որդւոյ նրյերկնից,
զոր յարոյց 'ի մեռելոց զյս՝ որ փրկելոցն
է զմեզ 'ի բարկութ անտի որ գալոցն է:

## ԳԼ. Բ:

1 Դուք ինքնին գիտէք եղբարք զմուտն ԲԴ
մեր առ ձեզ. զի ոչ ընդունայն ինչ
2 եղև. * այլ յառաջագոյն չարչարեալք և
թշնամանեալք, որպ և դուք իսկ գիտէք.
'ի մէջ փիլիպեցւոց համարձակեցաք այ
մերով պատմել ձեզ զաւետարանն այ
3 մեծաւ պատերազմաւ: * Զի մխիթա-
րութիւն մեր ոչ 'ի մոլորութէ է՝ և ոչ 'ի պղ-
4 ծութէ՝ և ոչ նենգութբ. * այլ որպ ընտրեցաք
յայ հաւատարիմ լինել աւետարանին,
նոյնպ և խօսիմք. ոչ իբրև մարդկան հա-
ճոյ լինել՝ այլ այ որ քննէն զսիրտս մեր:
5 * Զի ոչ երբէք բանիւք շողոքանաց ե-
ղեաք առ ձեզ, որպ և դուք իսկ գիտէք.
և ոչ 'ի պատճառս ագահութե, որպ և այ
6 վկայ է. * և ոչ խնդրեաք փառս 'ի մարդ-
կա-

digitised by A.R.A.R.@

կանէ, ո՛չ 'ի ձէնջ և ո՛չ յայլոց։ *Կարօղ
էաք իբրև քսի առաքեալս ծանրանալ,
այլ եղեաք հեզք 'ի միջի ձերում. որպէս
դայեակ մի որ սնուցանիցէ մանկունս.
*Նոյնպէս և մեք գթայաք 'ի ձեզ. հա-
ճոյ թուէր մեզ տալ ձեզ ո՛չ միայն զաւե-
տարանն այ, այլ և զանձինս մեր. քզի
սիրելիք մեր եղերուք։ *Յիշէք եղբարք
զվաստակն մեր և զջան. զի զցայգ և ըզ-
ցերեկ գործէաք վասն չծանրանալոյ ու-
մեք 'ի ձէնջ. և քարոզէաք ձեզ զաւե-
տարանն այ։ *Դուք ինքնին վկայէք՝ և
ած, որպ սրբութ և արդարութ և անբ-
ծութ՝ ձեզ հաւատացելոցդ եղեաք. *որպ
և գիտէք իսկ. զի զիւրաքանչիւրոք 'ի
ձէնջ՝ իբրև հայր զորդիս՝ մխիթարէաք
և սփոփէաք. և դնէաք վկայուի գնալ
ձեզ արժանապէս այ, որ կոչեացն զձեզ
Վ.Ջ յիւր արքայութն և 'ի փառս։
*Վն այնորիկ և մեք գոհանամք զայ ան-
պակաս՝ զի առեալ զլուր բանին այ առ 'ի
մէնջ՝ ընկալարուք, ո՛չ իբրև զբան մարդ-
կան, այլ որպ ճշմարտիւ զբան այ. որ և
յաջողեալ իսկ է 'ի ձեզ հաւատացելոցդ։
*Զի դուք նմանօղք եղերուք եղբարք
եկեղեցեացն այ՝ որ են 'ի Հրէաստանի 'ի
քսի յսի. զի զնոյն չարչարանս չարչարեցայք
և դուք 'ի ձերոց ազգականաց, որպ և նո-
քայն 'ի հրէից. *որք և զտէրն յսն սպանին
և զմարգարէսն, և զմեզ հալածեցին, և
այ

digitised by A.R.A.R.@

այ յաչաց ելին. և ամ մարդկան հակա-
16 ռակ եղեն. *և արգելուին զմեզ խօսել
հեթանոսաց՝ զի ապրեսցին. զի կատա-
րեսցեն զմեղս իւրեանց յամ ժամ. քզի
հասեալ է 'ի վերայ նոցա բարկութիւն
մինչև իսպառ :
17 *Այլ մեք եղբարք՝ թէպէտ և որբ մնա- Բ Զ
ցաք 'ի ձէնջ առ ժամանակ մի, երեսօք՝
և ոչ սրտիւք. առաւել ևս փութացաք
տեսանել զերեսս ձեր մեծաւ ցանկութբ :
18 *Վս այսորիկ կամեցայ գալ առ ձեզ
ես պօղոս՝ միանգամ և երկիցս, և խա-
19 փանեաց զմեզ սատանայ: *Քանզի ո՞վ է
մեր յոյս կամ խնդութի կամ պսակ պարծա-
նաց մերոց, եթէ ոչ դուք 'ի տր՝ առաջի
20 տն մերոյ յսի քսի 'ի նորա գալստեանն :
*զի դուք էք փառք մեր և խնդութի:

## ԳԼ. Գ.

1 Վասն որոյ ոչ ևս ունիմք ժոյժ, զի բար-
ւոք թուեցաւ մեզ միայն մնալ յա-
2 թէնս : *Եւ առաքեցաք զտիմոթէոս
զեղբայր մեր և զգործակից աւետարա-
նին՝ այ և հօրն քսի, հաստատել զձեզ՝
և մխիթարել վս հաւատոյն ձերոյ : Վ Զ
3 *Զի մի տագնապեսցէք 'ի նեղութես յայսո-
սիկ. քանզի դուք ինքնին իսկ գիտէք,
4 զի 'ի սոյն կամք : *Քանզի մինչ առ
ձեզն էաք՝ յառաջագոյն ասէաք ձեզ,
թէ նեղութիւնք հասանելոց են 'ի վերայ



digitised by A.R.A.R.@

մեր. որպէս և եղև իսկ՝ և գիտացէք։
*Վասն այնորիկ և ես զի ոչ ևս ունէի 5
ժոյժ՝ առաքեցի գիտել զհաւատսն ձեր.
գուցէ արդեօք փորձեաց և զձեզ փորձիչն,
և ընդունայն լինիցի ջանն մեր։ *Բայց 6
արդ՝ իբրև եկն Տիմոթէոս 'ի ձէնջ առ
մեզ, և ետ մեզ զաւետիս հաւատոյն ձե-
րոյ և զսիրոյ, զի ունիք 'ի միտ զյիշա-
տակս մեր բարեաց յա՟մ ժամ. ցանկա-
ցե՟լ էք տեսանել զմեզ՝ ո՟պ և մեք զձեզ.
*Վ՟ն այնորիկ մխիթարեցաք 'ի ձեզ եղ- 7
բարք՝ 'ի վերայ ա՟մ վշտաց և նեղութե՟ց
ձերոց՝ 'ի ձեռն հաւատոցն ձերոց. *զի 8
այժմ կենդանի եմք՝ եթէ դուք հաստա-
տուն կայցէք 'ի Տ՟ր։ *Ո՞ր ինչ կարեմք 9
գոհութի՟ն մատուցանել Ա՟յ վ՟ն ձեր, 'ի
վերայ ամենայն խնդութե՟ն, զոր խնդ-
ամք վ՟ն ձեր առաջի Ա՟յ մերոյ. *զցայգ 10
և զցերեկ առաւել ևս աղաչեմք՝ տեսա-
նել զերեսս ձեր, և հաստատել զպակա-
սութի՟ն հաւատոցն ձերոց։ *Այլ ինքն 11
Ա՟ծ և Հայր մեր՝ և Տ՟ր մեր Յ՟ս Ք՟ս՝ ուղղես-
ցէ զճանապարհս մեր առ ձեզ։ *Եւ զդ- 12
ձեզ ինքն Տ՟ր բազմապատիկս և առաւելս
արասցէ սիրով ը՟ն միմեանս և առ ամե-
նեսին՝ որպէս և մեք 'ի ձեզ. *հաստա- 13
տել զսիրտս ձեր անարատս 'ի սրբութ՟ե
առաջի Ա՟յ և Հօր մերոյ՝ 'ի գալըս-
տեանն Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի հանդերձ ա-
մենայն սրբովք իւրովք։

ԳԼ:

digitised by A.R.A.R.@

## ԳԼ. Դ.

1 Այսուհետեւ եղբարք՝ աղաչեմք զձեզ Գ Կ
եւ մխիթարեմք 'ի քն յն. զի որպ ըն-
կալարուք 'ի մէնջ, թէ որպէս պարտ ի-
ցէ ձեզ գնալ՝ եւ հաճոյ լինել այ. որպ եւ
գնայքդ իսկ, զի եւս քան զեւս յաւելու-
2 ցուք 'ի նոյն: *Լաւ գիտէք՝ թէ որպիսի
3 պատուիրանս տուաք ձեզ 'ի տր յն: *Զի
այս են կամք այ, սրբութի ձեր. 'ի բաց
4 լինել ձեզ 'ի պոռնկութէ. *գիտել իւ-
րաքանչիւրումեք 'ի ձէնջ զիւր աման
5 ստանալ սրբութբ եւ պատուով. *մի 'ի
ցաւս ցանկութե որպէս եւ այլ հեթա-
6 նոսք՝ որ ոչ գիտեն զած: *Մի զանցա-
նել եւ զրկել յիրիք յայդմիկ զեղբայր
իւր. քզի վրէժխնդիր է տր 'ի վր ամե
այդորիկ. որպէս յառաջագոյն ասացաք
7 ձեզ, եւ եդաք վկայութի: *Քզի ոչ կո-
չեաց զմեզ ած 'ի պղծութի այլ 'ի սրբու-
8 թի: *Այսուհետեւ որ անարգէ, ոչ
զմարդ անարգէ, այլ զած՝ որ եւ ետ
9 զհոգին սբ 'ի ձեզ: *Այլ վս եղբայր-
սիրութե՝ չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ.
զի դուք ինքնին իսկ ածուսոյցք էք առ
10 'ի զմիմեանս սիրելոյ: *Քզի եւ առնէք
իսկ զդոյն յամ եղբարս որ են յամ կող-
մանս մակեդոնիացւոց: *Աղաչեմք զձեզ
եղբարք՝ առաւել եւս առաւելուլ եւ ա-
11 ռատանալ. հանդարտել, *եւ գործել
զիւ-

digitised by A.R.A.R.@

զխւրաքանչիւր . և գործել ձեռօք ձե-
րովք, որպէս և պատուիրեցաք ձեզ, զի
գնայցէք պարկեշտութեամբ առ արտա-
քինսն՝ և մի՛ ինչ կարօտեալք իցէք ։
*Ո՛չ կամիմ եղբարք՝ եթէ տգէտք իցէք 12
վասն ննջեցելոցն . զի մի՛ տրտմիցիք ո՟պ
և այլքն՝ որոց ո՛չ գոյ յոյս ։ *Եթէ հա- 1
ւատամք՝ եթէ յ՟ս մեռաւ և յարեաւ .
նոյնպէս և ա՟ծ զննջեցեալսն ՚ի ձեռն յ՟սի
Վ.Ջ ածցէ ընդ նմա ։
*Բայց զայս ասեմք տ՟ն բանիւ, եթէ մեք 1
որ կենդանիքս եմք մնացեալք՝ ՚ի գալըս-
տեանն տ՟ն ո՛չ ժամանեմք ննջեցելոցն ։
* Զի ինքնին տ՟ր հրամանաւ, ՚ի ձայն 1
հրեշտակապետի և ՚ի փող ա՟յ իջանէ յերկ-
նից . և մեռեալք ՚ի ք՟ս յարիցեն յառա-
ջագոյն ։ *Ապա և մեք որ կենդանւոյն 1
մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշ-
տակեսցուք ամպովք ը՟ առաջ տ՟ն յօդս .
և այնպէս յա՟մ ժամ ը՟ տ՟ն լինիցիմք ։
*Այսուհետև մխիթարեցէք զմիմեանս 1
բանիւքս այսոքիւք ։

## ԳԼ. Ե ։

ԳԴ Այլ վ՟ս ժամուց և ժամանակաց եղ-
բարք՝ չէ՛ ինչ պիտոյ գրել առ ձեզ .
*զի դուք ինքնին իսկ ստոյգ գիտէք,
թէ օրն տ՟ն իբրև զգող գիշերի՝ այնպէս
հասանէ ։ *Յորժամ ասիցեն թէ խա-
ղաղութ՟ի և շինութ՟ի է, յայնժամ յան-
կար-

digitised by A.R.A.R.@

կարծակի հասցէ նց՟ սատակումն՝ ոպ՟ և
4 երկն յղւոյ, և մի՛ ապրեսցին: *Այլ դուք
եղբարք ո՛չ էք 'ի խաւարի, թէ օրն ձեր
5 իբրև զգող 'ի վր՟ հասանիցէ. *զի ամե-
նեքին դուք որդիք լուսոյ էք՝ և որդիք
տունջեան. չե՛մք գիշերոյ՝ չե՛մք խաւա-
6 րի: *ապա մի՛ զքնով անկանիցիմք ոպ՟ և
այլքն, այլ արթունք և զուարթունք եղի-
7 ցուք: *Զի որ ննջեն՝ գիշերի ննջեն,
8 և որ արբենան՝ գիշերի արբենան. *այլ
մեք զի տունջեան եմք, արթունք եղի-
ցուք, և զգեցցուք զզրահս հաւատոց և
զսիրոյ, և դիցուք զսաղաւարտ յուսոյն
9 փրկութե՟: *Զի ո՛չ ետ զմեզ ած՟ 'ի բար-
կութի՟, այլ 'ի փրկութի՟ կենդանութե՟ 'ի
10 ձեռն տն՟ մերոյ յսի՟ քսի՟. *որ մեռաւն
վս՟ մեր. զի եթէ արթունք իցեմք՝ և
եթէ ննջիցեմք, նովաւ համդերձ կեց-
11 ցուք: *Վասն որոյ մխիթարեցէք զմի-
մեանս, և շինեցէք զիրեարս՝ որպէս և
առնէք իսկ:

12 *Աղաչեմք զձեզ եղբարք՝ ճանաչել ըզ- Գ.Ջ
վաստակաւորս և զվերակացուս ձեր 'ի
13 տր՟, և զխրատիչս ձեր: *և համարեցա-
րո՛ւք զնս՟ արժանիս առաւել սիրոյ՝ վս՟
գործոյ նց՟. խաղաղութի՟ արարէք ը՟ մի-
14 մեանս: *Աղաչեմք զձեզ եղբարք՝ խրա-
տեցէք զստահակս, մխիթարեցէք զկար-
ճամիտս, պատսպարան լերուք տկարաց,
երկայնամիտ լերուք առ ամենեսեան:

*Զգոյշ

digitised by A.R.A.R.@

* Զգոյշ լերուք՝ գուցէ ոք չարի չար 15
հատուցանիցէ. այլ յամենայն ժամ զբարեաց
զհետ երթայք առ միմեանս և առ ամե-
նեսեան: * Յամենայն ժամ ուրախ լե- 16
րուք: * անդադար աղօթս արարէք: * յա- 17
մենայնի գոհացարուք. զի այս են կամք 18
այ քսիւ յսիւ 'ի ձեզ: * Զհոգին մի շի- 19
ջուցանէք: * զմարգարէութիս մի արհա- 20
մարհէք: * Զամենայն ինչ փորձեցէք, 21
զբարին ընկալարուք. * յամենայն իրաց 22
չարաց 'ի բաց կայցէք: * Եւ ինքն ած 23
խաղաղութե սուրբս արասցէ զձեզ համօ-
րէնս. և բովանդակ ձեր ոգի և շունչ և
մարմին՝ անարատ 'ի գալըստն տն մե-
րոյ յսի քսի պահեսցի: * Հաւատարիմ 24
է՝ որ կոչեացն զձեզ, որ և արասցէ զնոյն:
* Եղբարք՝ աղօթս արարէք և 'ի մեր 25
վր: * Ողջոյն տաջիք եղբարց ամենե- 26
ցուն 'ի համբոյր սրբութե: * Երդմնեցու- 27
ցանեմ զձեզ 'ի տր՝ ընթեռնուլ զթուղ-
թըդ առաջի ամենայն եղբարց սրբոց:
* Շնորհք տն մերոյ յսի քսի ը ձեզ: 28
ամէն:

Առ Թեսաղոնիկեցիս առաջին Թուղթ գրեցաւ
յԱթենայ:



digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ ԵՐԿՐՈՐԴ։
### ԳԼ. Ա։

1 Պօղոս և սիղուանոս և տիմոթէոս՝ Դ Կ
եկեղեցւոյդ թեսաղոնիկեցւոց՝
2 յա՟ծ հայր մեր և 'ի տ՟ր յ՟ս ք՟ս։ *Շնորհք
ը՟ն ձեզ և խաղաղութ՟ի յա՟յ հօրէ մերմէ,
3 և 'ի տ՟նէ յ՟սէ ք՟սէ։ *Գոհանալ պար-
տիմք զա՟յ յա՟մ ժամ վասն ձեր եղբարք՝
ո՟պ և արժան իսկ է. զի ևս քան զևս
աճէն հաւատքն ձեր, և յաճախէ սէր
իւրաքանչիւր ամենեցուն ձեր առ մի-
4 միմեանս։ *Որպէս և մեզ ձեօք պարծել
յեկեղեցիսն ա՟յ՝ վ՟ն համբերութ՟ե ձե-
րոյ և հաւատոյ՝ յա՟մ հալածանս ձեր
և 'ի նեղութ՟իս, որում դուքն համբե-
5 րէք. *յօրինակ արդար դատաստանին
ա՟յ. արժանի լինել ձեզ արքայութ՟են ա՟յ,
6 վասն որոյ և զճգնութ՟իդ կրէք. *եթէ
պարտ է առաջի ա՟յ՝ հատուցանել նեղ-
7 չացն ձերոց նեղութ՟ի. *և ձեզ նեղելոցդ
հանգիստ ը՟ն մեզ՝ 'ի յայտնութ՟են տ՟ն մե-

րոյ

digitised by A.R.A.R.@

րոյ Յսի, յերկնից հրեշտակօք զօրութե՟ն
իւրոյ. *'ի բոց հրոյ առնուլ զվրէժս 8
յայնցանէ՝ որք ոչ ճանաչեն զած, եւ որ
ոչ հնազանդին աւետարանին տն մերոյ
Յսի (քսի). *որք տայցեն վրէժս 'ի սա- 9
տակումն յաւիտենից՝ յերեսաց տն՝ եւ 'ի
փառաց զօրութե՟ն նր: *յորժամ գայցէ 10
փառաւոր լինել 'ի մէջ սրբոց իւրոց, եւ
սքանչելի 'ի մէջ ամենայն հաւատացե-
լոց. զի հաւատարիմ եղեւ վկայութիւն
մեր 'ի վր ձեր յաւուր յայնմիկ: *Յոր եւ 11
աղօթս առնեմք վս ձեր յամենայն ժամ,
զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն ձե-
րում ած (մեր) մինչեւ լցցէ զամ հաճութե՟
բարութե, եւ զգործս հաւատոցն զօրու-
թբ. *զի փառաւոր լիցի անուն տն մե- 12
րոյ Յսի քսի 'ի ձեզ՝ եւ դուք 'ի նմ, ըստ
շնորհացն այ մերոյ եւ տն Յսի քսի:

## ԳԼ. Բ.

Դ·Դ Աղաչեմ զձեզ եղբարք՝ վս գալստեանն 1
տն մերոյ Յսի քսի, եւ մերոյ ժողո-
վելոյն առ նա. *մի վաղվաղակի խռո- 2
վել ձեզ 'ի մտաց՝ եւ մի զարհուրել, մի
հոգւով եւ մի բանիւ եւ մի թղթովք՝ իբ-
րեւ թէ 'ի մէնջ. ոպ թէ եկեալ հասեալ
իցէ օրն տն: *Մի ոք զձեզ խաբեսցէ՝ 3
եւ մի իւիք իրօք. զի եթէ ոչ նախ եկես-
ցէ ապստամբութիւն. եւ յայտնեսցի մար-
դըն անօրէնութե՝ որդին կորստեան,
*հա-

digitised by A.R.A.R.@

4 *Հակառակորդն հպարտացեալ 'ի վերայ
ամենայնի, որ անուանեալ իցէ ա՟ծ, կա՟մ
պաշտօն. մինչև նստել նմա 'ի տաճարին
ա՟յ, և ցուցանել զանձն՝ թէ ա՟ծ իցէ:
5 *Ո՞չ յիշէք՝ զի մինչ առ ձեզն էի ա-
6 սէի զայս: *Եւ արդ դուք ինքնին գի-
տէք զայն՝ որ ունին յայտնել նմա յիւրում
7 ժամանակի: *Զի խորհուրդն անօրէ-
նութեան արդէն իսկ զօրանայ. բայց յայն
ժամ մինչ 'ի միջոյ բարձցի՝ որ այժմդ ու-
8 նի: *Եւ ապա յայտնեսցի անօրէնն.
զոր տ՟ր յ՟ս սատակեսցէ հոգւով բերանոյ
իւրոյ, և խափանեսցէ յայտնութ՟բ գալըս-
9 տեանն իւրոյ: *Որոյ գալուստն ը՟ստ ազ-
դեցութեան սատանայի է, ամենայն զօրու-
թ՟բ և նշանօք և արուեստիւք ստովք,
10 *և ամենայն պատրանօք անիրաւութեան
'ի վ՟ր կորուսելոցն. փոխանակ զի զսէրն
ճշմարտութեան ոչ ընկալան՝ զի ապրեսցին,
և վ՟ն այնորիկ առաքեսցէ նոցա ա՟ծ ազ-
դեցութիւն մոլորութեան՝ հաւատալ նոցա ստու-
11 թեան: *Զի դատապարտեսցին ամենե-
քեան՝ որ ոչ հաւատացին ճշմարտութեան,
12 այլ հաճեցան ը՟ն անօրէնութիւն: *Բայց
մեք պարտիմք գոհանալ զ՟այ յամենայն
ժամ վ՟ն ձեր եղբարք սիրեցեալք 'ի տ՟նէ.
զի ընտրեաց զձեզ ա՟ծ իսկզբանէ 'ի փըր-
կութիւն՝ սրբութ՟բ հոգւոյն՝ և հաւատովքն
13 ճշմարտութեան. *յոր և կոչեաց զձեզ աւե-
տարանաւն մերով 'ի փրկութիւն փառացն



digitised by A.R.A.R.@

տն մերոյ յսի քսի: *Այսուհետև եղ- 14
բարք հաստատուն կացէք՝ և պինդ կա-
լարուք զաւանդութիւն՝ զոր ուսարուք,
եթէ բանիւ և եթէ թղթով մերով:
*Այլ ինքն տր մեր յսքս և ած և հայր 15
մեր, որ սիրեաց զմեզ՝ և ետ մեզ մխի-
թարութիւն յաւիտենից՝ և յոյս բարեաց
շնորհօք, *մխիթարեսցէ զսիրտս ձեր՝ 16
և հաստատեսցէ յամ բանս և ՚ի գործս
բարութե:

## ԳԼ. Գ:

ԴՁ Այսուհետև եղբարք՝ աղօթս արարէք 1
՚ի վր մեր, զի բանն տն ընթանայ-
ցէ. և փառաւոր լինիցի յամ տեղիս՝ որպ
և առ ձեզդ. *զի ապրեսցուք յանօրի- 2
նաց և յանզգամաց մարդոյ. զի ոչ ամե-
նեցուն են հաւատք: *Այլ հաւատա- 3
րիմ է տր, որ և հաստատեսցէ զձեզ՝ և
պահեսցէ ՚ի չարէ անտի: *վստահ եմք 4
՚ի ձեզ տրամբ. թէ զոր պատուիրեցաքն
ձեզ, և առնէք՝ և առնիցէք: *այլ տր 5
ուղղեսցէ զսիրտս ձեր ՚ի սէրն այ՝ և ՚ի
համբերութիւն քսի: *Պատուիրեմ ձեզ 6
եղբարք յանուն տն մերոյ յսի քսի, խոր-
շել ձեզ յամ եղբօրէ՝ որ ստահակս
գնայցեն. և ոչ ըստ աւանդութեն՝ զոր ըն-
կալարուք ՚ի մէնջ: *Զի դուք ինքնին 7
գիտէք՝ թէ որպ պարտ է ձեզ նմանել
մեզ. և ոչ երբեք ստահակեցաք առ ձեզ.
* և

digitised by A.R.A.R.@

8 * Եւ ոչ ձրի զուրուք հաց կերաք, այլ ջա-
նիւ և վաստակով զցայգ և զցերեկ գոր-
ծէաք՝ վ՟ն չծանրանալոյ ումեք 'ի ձէնջ։
9 *Ոչ եթէ չունէաք իշխանութի. այլ զի
զանձինս օրինակ արասցուք ձեզ՝ նմա-
10 նօղս լինել մեզ։ *Վ՟ասնզի մինչ դե-
ռ առ ձեզն իսկ էաք՝ զայս պատուիրեաք
ձեզ, թէ որ ոչն կամիցի գործել՝ և կե-
11 րիցէ մի։ *Արդ՝ լսեմք զոմանց 'ի ձէնջ՝
թէ ստահակութ՟բ գնան. գործ ինչ ոչ
գործեն, այլ յուլացեալ՝ հետաքրքիր
12 շրջին։ *Այնպիսեացն պատուէր տամք՝
և աղաչեմք 'ի տ՟ր յ՟ս ք՟ս, զի հանդար-
տութ՟բ գործեսցեն՝ և զիւրեանց հաց կե-
13 րիցեն։ *Այլ դուք եղբարք՝ մի ձանձ-
14 րանայք զբարիս գործել։ *Ապա եթէ ոչ
ոք հնազանդեսցի բանիս մերում թղթ-
թովս այդուիկ, դուք նշանակեսջիք ըզ-
նա, և մի խառնակեսջիք ը՟դ նմա՝ զի պատ-
15 կառեսցէ։ *Բայց մի իբրև զթշնամի հա-
մարիջիք՝ այլ խրատեսջիք իբրև զեղ-
16 բայր։ *Եւ ինքն տ՟ր խաղաղութ՟ն՝ տա-
ցէ ձեզ խաղաղութ՟ի յա՟մ ժամ յա՟մ իրս։
17 Տ՟ր ը՟դ ամենեսին ը՟դ ձեզ։ *Ողջոյնս իմոյ
ձեռին պօղոսի է, որ է նշանակ. յա՟մ
18 թուղթս այսպէս գրեմ։ *Շնորհք տ՟ն
մերոյ յ՟սի ք՟սի ը՟դ ամենեսին ձեզ. ամէն։

Առ Թեսաղոնիկեցիս Երկրորդ՝ գրեցաւ յԱթե-
նայ։

ԹՈՒՂԹ Ա

digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ։

### ԳԼ. Ա.

Ա կ Պօղոս առաքեալ յի՟ի քի՟ի ը՟ հրա- 1
մանի փրկչին մերոյ ա՟յ՝ և քի՟ի յի՟ի
յուսոյն մերոյ. *տիմոթեայ որդւոյ սի- 2
րելւոյ հաւատովք։ շնորհք ողորմութի՟
խաղաղութի՟ յա՟յ հօրէ և 'ի տ՟նէ մերմէ
յի՟է քի՟է։ *Որպէս աղաչեցի զքեզ կալ 3
յեփեսոս՝ մինչ երթայի 'ի մակեդով-
նիա. զի պատուէր տացես ոմանց չլի-
նել օտարուսմունս, *և չհայել յառաս- 4
պելս և 'ի տոհմաթիւս անչափս. որ մա-
նաւանդ խնդիրս յուզեն, և ոչ զտնտե-
սութի՟ ա՟յ հաւատովք։ *Քանզի գլուխ 5
պատուիրանին սէր է, 'ի ս՟բ սրտէ՝ և 'ի
մտաց բարեաց՝ և յանկեղծաւոր հա-
ւատոց։ *յորոց ոմանք վրիպեցան խո- 6
տորեալք յունայնութի՟ բանից։ *Կա- 7
մին լինել վարդապետք օրինաց. ին-
քեանք ոչ իմանան զինչ խօսին՝ և ոչ վ՟ն
որոց պնդեն են։ *Գիտեմք՝ եթէ բար- 8
ւոք են օրէնք՝ եթէ ոք ը՟ս օրինօքն կի-
րես-

digitised by A.R.A.R.@

9 րեսցէ: *Բայց զայս գիտասցէ, զի 'ի վ՟ր
արդարոյ օրէնք ոչ կան, այլ 'ի վ՟ր անօ-
րինաց եւ անհնազանդից՝ ամպարշտաց եւ
մեղաւորաց՝ անսրբոց եւ պղծոց, զհայր
եւ զմայր անարգողաց, մարդասպանաց,
10 * պոռնկաց արուագիտաց՝ մարդելաւ-
ղաց ստոց ստերդմանց. եւ եթէ այլ ինչ
իցէ հակառակ ողջամիտ վարդապետու-
11 թ՟ե. *որ ը՟ս աւետարանի փառաց երա-
նելւոյն ա՟յ է, որում եղէ ես հաւատա-
րիմ: Վ.Ձ
12 * Շնորհ ունիմ այնմիկ որ զօրացոյցն
զիս 'ի ք՟ս յ՟ս 'ի տ՟ր մեր, զի հաւատարիմ
համարեցաւ կարգել 'ի սպասաւորու՟ի.
13 *որ յառաջագոյն հայհոյիչն էի եւ հա-
լածիչ եւ թշնամանիչ. այլ գտի ողոր-
մու՟ի, զի զայն յանգիտու՟ե եւ յանհա-
14 ւատու՟ե գործէի: *եւ առաւել եղեն
շնորհք ա՟ն մերոյ հաւատովքն եւ սիրով
15 որ 'ի ք՟ս յ՟ս: *Հաւատարիմ է բանն՝ եւ
ա՟մ ընդունելութ՟ե արժանի է. զի ք՟ս
յ՟ս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, ո-
16 րոց գլուխն ես եմ: *Այլ վ՟ն այնորիկ
գտի ողորմու՟ի, զի նախ յիս եցոյց յ՟ս ք՟ս
զա՟մ երկայնմտութ՟ի յօրինակ այնոցիկ
որ հաւատալոցն իցեն 'ի նա՝ 'ի կեանսն
17 յաւիտենից: *Այլ թագաւորին յա-
ւիտենից՝ անեղծի եւ աներեւութի, միոյն
ա՟յ՝ փառք եւ պատիւ յաւիտեանս յաւի-
18 տենից. ամէն: *Զայս պատուիրան ա-

ւան-

digitised by A.R.A.R.@

ւանդեմ քեզ որդեակ իմ տիմոթէոս,
ը՟ կանխելոց 'ի քեզ մարգարէութեանն.
զի դու զինուորիցես նոքօք զգեղեցիկ զի-
նուորութիւնն. *ունիցիս հաւատս սրբովք 19
մտօք, զոր ոմանց մերժեալ յանձանց
իւրեանց՝ նաւաբեկեցան 'ի հաւատս.
*որոց սակի են հիմենոս՝ և աղէքսանդ- 20
րոս, զորս մատնեցի սատանայի, զի խրա-
տեսցին չհայհոյել:

## ԳԼ. Բ.

Աւ արդ՝ աղաչեմ նախ քան զա՟մ, առ- 1
նել աղօթս՝ խնդրուածս՝ պաղա-
տանս՝ գոհութիւնս վասն ա՟մ մարդկան.
*մանաւանդ վասն թագաւորաց և ա՟մ 2
իշխանաց. զի խաղաղութ՟բ և հանդար-
տու՟բ վարեսցուք զկեանս մեր, ամենայն
ա՟ծպաշտութ՟բ և սրբու՟բ: *Զի այն է 3
բարի և ընդունելի առաջի փրկչին մե-
րոյ ա՟յ. *որ զա՟մ մարդիկ կամի զի կեց- 4
ցեն՝ և 'ի գիտութի՟ ճշմարտութե՟ եկեսցեն:
* Զի մի է ա՟ծ, և մի միջնորդ ա՟յ և 5
մարդկան՝ մարդ յ՟ս ք՟ս. *որ ետ զանձն 6
փրկանս ը՟ ամենեցուն՝ վկայութի՟ ժամա-
նակաց իւրոց. *յոր եդայ ես քարոզ և 7
առաքեալ: ճշմարիտ ասեմ 'ի ք՟ս՝ և ոչ
ստեմ, եղէ վարդապետ հեթանոսաց հա-
ւատովք և ճշմարտութ՟բ:
ԱԳ *Կամիմ զի արք կայցեն յաղօթս յա՟մ 8
տեղիս. բառնայցեն զսուրբ ձեռս 'ի վեր ա-
ռանց

digitised by A.R.A.R.@

9 ռանց բարկութե եւ երկմտութե։ *Նոյնպ
եւ կանայք 'ի զարդ խոնարհութե ակնա-
ծութբ եւ զգաստութբ զարդարել զան-
ձինս. մի 'ի հիւսս ոսկեմանս ընդելու-
զեալս մարգարտով, կամ 'ի հանդերձս
10 պաճուճեալս. *այլ որպ վայելէ կանանց՝
զածպաշտութի յանձնառելոց գործովք
11 բարութե։ *Կին մարդ ցածութբ ուսցի
12 ամ հնազանդութբ։ *Այլ ուսուցանել
կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, եւ ոչ ճո-
խաբան լինել քան զայր մարդ. այլ 'ի
13 լռութե կալ։ *Զի ադամ նախ ստեղ-
14 ծաւ՝ եւ ապա եւայ։ *Եւ ադամ ոչ
պատրեցաւ՝ այլ կինն պատրեցաւ եւ յան-
15 ցեաւ. *բայց կեցցէ վասն որդեծնու-
թեանն եթէ կացցեն 'ի հաւատս եւ 'ի
սէր եւ 'ի սրբութի պարկեշտութբ։

## ԳԼ. Գ.

1 Հաւատարիմ է բանս. եթէ ոք եպիս-
կոպոսութե ցանկայ՝ բարւոյ գործոյ
2 ցանկայ։ *Պարտ է եպիսկոպոսին անա-
րատ լինել, միոյ կնոջ այր, հեզ՝ ցած՝
3 պարկեշտ՝ հիւրասէր՝ ուսուցիչ։ * մի
թշնամանօղ, մի հարկանօղ, այլ հան-
դարտ. մի կռուօղ, մի արծաթասէր.
4 *զի իւրում տանն իսկ բարւոք վերակա-
ցու լեալ իցէ. որդեակս ունիցի, որ 'ի
հնազանդութե կայցեն ամ պարկեշտութբ։
5 *Ապա եթէ ոք իւրում տանն վերակա-
ցու

digitised by A.R.A.R.@

ցու չգիտիցէ լինել, զիա՞րդ եկեղեցւոյ
ա՟յ խնամակալ լինիցի։ *Մի՛ մատաղա- 6
տունկ, զի մի՛ հպարտացեալ 'ի դատաս-
տանս սատանայի անկանիցի։ *Այլ 7
պարտ է նմա վկայութիւն բարի և յարտաք-
նոցն ունել. զի մի՛ 'ի նախատինս անկա-
նիցի՝ և յորոգայթս սատանայի։ *Նոյն- 8
պէս և զսարկաւագունս պարկեշտս. մի՛
երկբանս, մի՛ գինեսէրս, մի՛ զօշաքաղս.
* այլ ունիցին զխորհուրդ հաւատոյն 9
սուրբ մտօք։ *Նոքեանք նախ փորձեա- 10
ցին, և ապա 'ի պաշտօնն մատիցեն, զի
անարատք իցեն։ *Նոյնպէս և կանայք 11
ն՟ց պարկեշտք. մի՛ չարախօսք, հեզք՝ հա-
ւատարիմք յա՟մի։ *Սարկաւագք լինի- 12
ցին միոյ կնոջ արք. որք որդւոց իւրեանց
բարւոք վերակացու լեալ իցեն, և տանց
իւրեանց. *զի որ բարւոքն պաշտիցեն, 13
աստիճան բարի անձանց իւրեանց շահին
և բազում համարձակութիւն 'ի հաւատն՝
Վ. Ջ. որ 'ի ք՟ս յ՟ս։
*Զայս գրեմ առ քեզ, զի ակնունիմ 14
'ի մօտոյ գալ։ *Ապա թէ յամեցից՝ զի 15
գիտասցես, թէ ո՛րպէս պարտ իցէ քեզ
'ի տան ա՟յ շրջել. որ է եկեղեցի ա՟յ կեն-
դանւոյ, սիւն և հաստատութիւն ճշմար-
տութեան։ *Եւ յայտնի իսկ մեծ է խոր- 16
հուրդն ա՟ծպաշտութեան. որ երևեցաւ մարմ-
նով՝ արդարացաւ հոգւով՝ յայտնեցաւ
հրեշտակաց՝ քարոզեցաւ 'ի հեթանոս՝

հա-

digitised by A.R.A.R.@

հաւատարիմ եղեւ յաշխարհի՝ եւ վերա-
ցաւ փառօք։

## ԳԼ. Դ.

1 Այլ Հոգին սուրբ յայտնապէս ասէ. թէ Ա.ձ
'ի ժամանակս յետինս՝ քակեսցին ո-
մանք 'ի հաւատոցն. եւ հայեսցին յայս
մոլորութեան, եւ 'ի վարդապետութիւնս դիւաց,
2 * կեղծաւորութեամբ ստաբանք, խարեալք
3 իւրեանց խղճիւն մտաց. * որ արգելու-
ցուն յամուսնանալոյ, եւ մեկնիցեն 'ի
կերակրոց՝ զոր Աստուած հաստատեաց 'ի վայե-
լել հաւատացելոց, եւ որք հասեալ իցեն
4 'ի ճշմարտութեան վերայ։ * Զի ամենայն արա-
րածք Աստուծոյ՝ բարի են, եւ չիք ինչ խոտան.
5 մանաւանդ որ գոհութեամբ ընդունիցին. * զի
6 սրբի բանիւն Աստուծոյ՝ եւ աղօթիւք։ * Զայս
խրատ տուեալ եղբարց, բարւոք պաշ-
տօնեայ լինիցիս Քրիստոսի Յիսուսի, սնանիցիս բա-
նիւք հաւատոց, եւ բարւոք վարդապե-
7 տութեամբն՝ զորոյ զհետ իսկ եղեր։ * Այլ
'ի պիղծ բանից՝ եւ յառասպելաց պառա-
ւանց հրաժարեսջիր։ Բայց կրթեա
8 զանձն քո յաստուածպաշտութիւն. * զի մարմնոյ
կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է.
իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար
է. եւ զաւետիս կենաց ունի՝ զարդիս եւ
9 զհանդերձելոյն։ * Հաւատարիմ է բա-
10 նս եւ ամենայն ընդունելութեան արժանի է։ * զի
'ի սոյն իսկ վաստակեմք՝ եւ նախատինս
յանձն

digitised by A.R.A.R.@

յանձն առնումք. զի յուսացեալ եմք
յԱծ կենդանի, որ է փրկիչ ամ̃ մարդ-
կան, մանաւանդ հաւատացելոց: *Պա- 11
տուէր տայցիր զայդ՝ և ուսուցանիցիր.
* զի մի ոք զքո մանկութիւն արհամար- 12
հիցէ:

Բ. Կ Այլ օրինակ լինիջիր հաւատացելոց՝
բանիւք՝ գնացիւք՝ սիրով հաւատովք սր-
բութբ: * Մինչև գամ ես, միտ դիր ըն- 13
թերցուածոց մխիթարութե՝ վարդապե-
տութե: * Մի անփոյթ առներ զշնոր- 14
հացդ՝ որ 'ի քեզ են, որ տուաւ քեզ
մարգարէութբ 'ի ձեռնադրութէ երիցութե:
*Զայդ խորհեաց՝ և 'ի դոյն կանխես- 15
ջիր. զի քո յառաջադիմութիւնդ ամենե-
ցուն յայտնի լիցի: *Զգոյշ լինիջիր ան- 16
ձին և վարդապետութեդ՝ և 'ի դմին յա-
մեսջիր: զայդ եթէ առնիցես՝ և զանձն
ապրեցուսցես, և զայնոսիկ՝ որ քեզն
լսիցեն:

## ԳԼ. Ե:

Զծերն մի պատուհասեսցես, այլ մխի- 1
թարեսջիր իբրև զհայր, զերիտա-
սարդս իբրև զեղբարս, * զպառաւունս 2
իբրև զմարս, զմանկամարդս իբրև ըզ-
քորս՝ ամենայն սրբութբ: * Զայրիս պա- 3
տուեա, որ ստոյգ այրիքն իցեն: * Ապա 4
թէ ոք այրի՝ որդիս և թոռունս ունիցի,
ուսանիցին նախ իւրեանց տանց բարի
առ-

digitised by A.R.A.R.@

առնել՝ և զփոխարէնս հատուցանել ծը-
նողացն. զի այն է բարի՝ և ընդունելի
5 առաջի ա՟յ : * Իսկ որ ճշմարիտն այրին
իցէ. և մենացեալ յուսացեալ յա՟ծ, և
կանխեսցէ յաղօթս և 'ի խնդրուածս ըզ-
6 ցայգ և զցերեկ: * Իսկ գիրգ այրին՝ կեն-
7 դանւոյն մեռեալ է : * զայս պատուի-
8 րեա՛ զի անարատք իցեն: * Իսկ եթէ ոք
իւրոյ՝ և մանաւանդ ընտանեացն խնամ
ոչ տանիցի, 'ի հաւատոցն ուրացեալ է՝
9 և չար ևս քան զանհաւատն է : * Այրի
ը՟ այրիս անուանեսցի, որ չիցէ պակաս
'ի վաթսնամենից, միոյ առն կին լեալ.
10 * և 'ի գործս բարիս վկայեալ, եթէ ման-
կունս սնուցեալ իցէ, եթէ զհիւրս ըն-
կալեալ իցէ, եթէ զսրբոց զոտս լուա-
ցեալ իցէ, եթէ նեղելոց բաւական լեալ
իցէ, եթէ զա՟մ գործոց բարեաց զհետ
11 երթեալ իցէ: * Այլ 'ի մանկամարդաց
այրեացն հրաժարեա՛, զի յորժամ խայ-
12 տան զ.ք՟սիւ՝ ամուսնանալ կամին. * իսկ
զդատապարտանս ընդունին, զի զառաջին
13 հաւատսն արհամարհեցին : * Միան-
գամայն և դատարկանձունք ուսանին՝
շրջօղ.ք տանէ 'ի տուն. և ոչ միայն դա-
տարկք, այլ և փաքուսք և հետաքըր-
14 քիրք. և խօսին՝ որ ինչ ոչ է պիտոյ: * Կա-
միմ զմանկամարդացդ ամուսնանալ, որ-
դիս ծնանել, տնարարս լինել, և մի ինչ
պատճառս տալ հակառակորդին 'ի հայ-
հոյ-

digitised by A.R.A.R.@

հոյուէ ազգաց։ * զի արդէն իսկ ոմանք 15
խոտորեցան զկնի սատանայի ։ * Եթէ 16
ոք հաւատացեալ՝ այրիս ունիցի՝ բաւա-
կան լիցի նոցա, և մի՛ ծանրասցի եկե-
ղեցւոյն. զի զճշմարիտ այրեացն բաւա-
կան լինիցի.

ԲԴ * Որ բարւոք վերակացու լինին երիցունք 17
կրկին պատուոյ արժանի եղիցին. մանա-
ւանդ որ աշխատիցին բանիւ և վարդա-
պետութք։ * քանզի ասէ գիր. մի՛ կա- 18
պեսցես զցռուկ եզին կալոտւոյ. և ար-
ժանի է մշակն վարձու իւրոյ։ * Զ երի- 19
ցուէ չարախօսուէ մի՛ ընդունիցիս. բայց
եթէ երկուք՝ և երիւք վկայիւք։ * Իսկ 20
որ մեղանչենն՝ առաջի ամենեցուն յան-
դիմանեա, զի և այլքն երկիցեն։ * Վկայ- 21
ուէ դնեմ առաջի այ և յի քի՝ և ընտ-
րելոց հրեշտակաց, զի զայդ պահեսցես
առանց մտահաճուէ. մի՛ ինչ առնել ա-
չառանօք։ * Ձեռս վաղվաղակի յումեք 22
մի՛ դնիցես, և մի՛ կցորդ լինիցիս մե-
ղաց օտարաց. զանձն քո սուրբ պահես-
ջիր ։ * Մ՛ յաուհետև մի՛ ջուր ևեթ ըմ- 23
պիցես՝ այլ սակաւիկ մի և գինի խառ-
նեսջիր վն ստամոքսի և ստէպ հիւան-
դուէց։ * Են մարդք՝ որոց մեղքն յայտնի 24
են՝ և յառաջագոյն հասեալ ՚ի դատաս-
տան, և են՝ որոց զկնի երթան։ * Նոյնպ 25
և բարի գործքն յայտնի են. և որ այլ
ազգ ես ինչ իցեն՝ թաքչել ոչ կարեն։

Գ.Լ.

digitised by A.R.A.R.@

## Գլ. Զ։

1 Որ միանգամ ընդ լծով ծառայութեան իցեն,
զիւրաքանչիւր տեարս պատուոյ ար-
ժանի համարեսցին. զի մի անունն Աստուծոյ
2 և վարդապետութիւնն հայհոյեսցի։ * Իսկ
որ հաւատացեալ տեարս ունիցին՝ մի ար-
համարհեսցեն, զի եղբարք են. այլ ա-
ռաւել ծառայեսցեն՝ զի հաւատացեալք
են և սիրելիք. որք զբարերարութի յան-
ձինս ունիցին։ զայս ուսուցանիցես՝ և
3 մխիթարեսցես։ * Իսկ եթէ ոք այլազգ-
ինչ ուսուցանիցէ, և ոչ անսայցէ ողջ-
մտութեան բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ըստ
4 աստուածպաշտութեան վարդապետութեանն. * այն-
պիսին հպարտացեալ է, և ոչինչ ոչ գի-
տէ. այլ տապի 'ի խնդիրս և 'ի բանս
հակառակութեան. ուստի լինին նախանձ
5 հեռ հայհոյութիւն՝ կարծիք չարեաց, *խառ-
նակութիւնք ապականելոց մտաց մարդ-
կան՝ և օտարացելոց 'ի ճշմարտութենէ ան-
տի, որ շահավաճառ համարին զաստուածպաշ-
տութիւն. բայց դու մերժեսցես յայն-
պիսեաց։
6 * Այլ շահավաճառ մեծ աստուածպաշտութի բ. Զ
7 է՝ բաւականութեամբ հանդերձ։ * զի ոչ բե-
րաք ինչ յաշխարհս՝ և ոչ տանել ինչ
8 կարասցուք. * այլ ունիմք կերակուր և
9 հանդերձս, և այնու շատասցուք։ * Իսկ
որք կամին մեծանալ՝ անկանին 'ի փոր-

ձու

digitised by A.R.A.R.@

ձուն և յորոգայթ, և 'ի բազում ցան-
կութիւնս անմիտս և վնասակարս. որք ընկղ-
մեն զմարդիկ 'ի սատակումն և 'ի կո-
րուստ: *Զի արմատ ամ չարեաց ար- 10
ծաթսիրութիւն է. որում ոմանց ցանկա-
ցեալ՝ մոլորեցան 'ի հաւատոյն, և զան-
ձինս արկին ը բազում ցաւովք: *Այլ 11
դու ով մարդ այ՝ փախիր յայնցանէ, և
երթ զհետ արդարութե զածպաշտութե
զհաւատոյ զսիրոյ զհամբերութե զհե-
զութե: *Դու մարտիր զբարւոք մարտն 12
հաւատոյ, և բուռն հար զկենացն յա-
ւիտենականաց յոր կոչեցարն, և դա-
ւանեցեր զբարւոք դաւանութիւն առաջի
բազում վկայից: *Պատուիրեմ քեզ ա- 13
ռաջի այ՝ որ կենդանի առնէ զամենայն,
և յսի քսի՝ որ վկայեաց առաջի պոնտաց-
ւոյ պիղատոսի զբարւոք դաւանութիւն.
*պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ 14
անարատ, մինչև 'ի յայտնութիւն տն մերոյ
յսի քսի. *զոր յիւր ժամանակս ցուց- 15
ցէ երանելին՝ և միայն հզօր, թագաւոր
թագաւորաց և տր տերանց. *որ միայն 16
ունի զանմահութի՝ բնակեալ 'ի լոյս ան-
մատոյց. զոր ոչ ոք ետես 'ի մարդկանէ՝
և ոչ տեսանել կարող է. որում պատիւ
և զօրութի յաւիտեանս, ամէն: *Մե- 17
ծատանց՝ որ են յայսմ աշխարհի՝ պատ-
ուէր տայցես մի հպարտանալ և մի յու-
սալ 'ի մեծութի մնոտի, այլ յած՝ որ
տայ
digitised by A.R.A.R.@

տալ մեզ զա՟մ առատապէս 'ի վայելել,
18 * զբարիս գործել, մեծանալ գործովք
բարութ՟, առատս սիրունս հաղորդս լի-
19 նել. * գանձել անձանց հիմն բարի 'ի
հանդերձեալսն. զի բուռն հարկանիցեն
20 զճշմարիտ կենացն ։ * Ո՜վ տիմոթէէ՝
պահեա զաւանդն՝ խոտորեալ 'ի պղծոց
և 'ի նորաձայն բանից և 'ի հակառակու-
21 թ՟է և 'ի մոլարանուն գիտութ՟է. * զոր
ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան 'ի հա-
ւատոյ անտի։ Շնորհք ը՟ քեզ ։ ամէն ։

Առ տիմոթէոս առաջին թուղթն գրեցաւ 'ի լա-
ւոդիկեայ, որ է մայր քաղաքաց պակատիանաց-
ւոց ։



digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ։

## ԳԼ. Ա.

Գ Կ Պօղոս առաքեալ յ՟սի ք՟սի կամօքն 1
ա՟յ, ը՟ստ աւետեաց կենացն՝ որ 'ի ք՟ս
յ՟ս։ * Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ՝ շ- 2
նորհք ողորմութի՟ և խաղաղութի՟ յա՟յ
հօրէ՝ և 'ի ք՟սէ յ՟սէ տ՟նէ մերմէ։ * Շնորհ 3
ունիմ ա՟յ՝ զոր պաշտեմն 'ի նախնեաց՝
մտօք սրբովք, իբրև զի անպակաս ու-
նիմ զքեն յիշատակ յաղօթս իմ. զցայգ
և զցերեկ * ցանկացեալ եմ տեսանել 4
զքեզ. յիշատակեալ զարտասուսն քո՝
զի լցայց ուրախութե՟. * զմտաւ ածեալ 5
զանխիղճ հաւատսն՝ որ են 'ի քեզ. որ
յառաջագոյն բնակեցաւ 'ի հանոյ քում
Լաւոդեայ, և 'ի մօր քում Եւնիկեայ.
հաստատեալ եմ թէ և 'ի քեզ է։
* Վա՟ն որոյ յիշեցուցանեմ քեզ արծար- 6
ծել զշնորհսն ա՟յ՝ որ են 'ի քեզ 'ի ձեռ-
նադրութենէ իմմէ։ * Զի ոչ ետ մեզ 7
ա՟ծ հոգի վհատութե՟, այլ զօրութե՟ և սի-
րոյ՝ և զգաստութե՟։ * Մի այսուհետև 8
ամօթ

digitised by A.R.A.R.@

ամօթ համարիցիս զվկայութի̄ տ̄ն մերոյ՝
և մի՛ զիս զկապեալ ն̄ր, այլ կցորդ լեր
չարչարանաց աւետարանին՝ ը̄ս զօրութե̄ն
9 ա̄յ: *Որ փրկեաց զմեզ, և կոչեաց 'ի
կոչումն սուրբ ո՛չ ը̄ս գործոց մերոց՝ այլ
ը̄ս խորհուրդ յառաջադրութե̄ն և շնորհաց,
որ տուաւ մեզ 'ի ք̄ս յ̄ս յառաջ քան զժա֊
մանակս յաւիտենից:
10 *Բայց յայտնեցաւ այժմիկ յերևել Գ.Գ.
փրկչին մերոյ յ̄ի ք̄ի. որ խափանեաց
զմահ՝ և լուսաւոր արար զկեանս և զա֊
11 նեղծութի̄ 'ի ձեռն աւետարանին. *որոյ
եդայ ես քարոզ և առաքեալ՝ և վարդա֊
12 պետ հեթանոսաց: *Վ̄ն որոյ և զայս
չարչարանս կրեմ, այլ ո՛չինչ ամօթ հա֊
մարիմ. քանզի գիտեմ՝ յո՛ հաւատա֊
ցեալն եմ. և հաստատեալ եմ, թէ կա֊
րող է զաւանդն իմ պահել յօրն յայն:
13 *Ունիցիս օրինակ ողջմտութե̄ բանիցն,
զորս յինէն լուար՝ հաւատովք և սիրով
14 որ 'ի ք̄ս յ̄ս: *Զբարւոք աւանդն պա֊
հեսջի՛ր՝ 'ի ձեռն հոգւոյն ս̄րբոյ 'ի մեզ բնա֊
15 կելոյ: *Զայս գիտասջիր՝ զի մեկնե֊
ցան 'ի մէնջ ամենեքեան որ էին յասիա,
որոց սակի են փիգեղոս և հերմոգենէս.
16 *Տացէ ա̄ծ ողորմութի̄ տանն ոնէսիփո֊
րայ. զի բ̄զմ անգամ հանգոյց զիս, և ըզ֊
կապանս իմ ո՛չ ամօթ համարեցաւ. *այլ
17 իբրև եկն 'ի հռովմ, պնդադոյնս խնդ֊
18 րեաց զիս՝ և եգիտ: *Տացէ նմա տ̄ր՝ ողոր֊



digitised by A.R.A.R.@

մութն գտանել ՚ի տնէ յաւուրն յայնմիկ.
և որչափ ինչ միանգամ յեփեսոս սպաս
կալու ինձ, զայն դու ինքնին քաջ գիտես։

## ԳԼ. Բ.

Արդ դու որդեակ իմ, զօրացիր շնոր-
հօքն՝ որ ՚ի քս յս։ *Եւ զոր լուար
յինէն բզմ վկայիւք՝ զայն աւանդես-
ցես հաւատարիմ մարդոց՝ որք բաւա-
կան իցեն և զայլս ուսուցանել։
Գ.Զ *Աշխատակից լեր իբրև զբարւոք զինուոր
քսի յսի։ *Ոչ ոք զինուորեալ ասատէն ը
կեանս աշխարհիս պատաղի, եթէ զօրա-
վարին հաճոյ լինիցի։ *և եթէ մարտիկ
ոք իցէ, ոչ պսակի՝ եթէ ոչ ըստ օրինին
մարտիցէ։ *Եւ հողագործին աշխատե-
լոյ պարտ է նախ ՚ի պտղոյն վայելել։ *Ի-
մա զինչ ասեմս, տացէ քեզ տր իմաստու-
յամի։ *Յիշեա զքս յս յարուցեալ ՚ի մե-
ռելոց ՚ի զաւակէ դաւթի՝ ըստ աւետարա-
նիս իմում. *յորում չարչարիմ կապանօք
չափ իբրև զչարագործ. այլ բանն այ ոչ
եթէ կապեալ իցէ։ *Վս այնորիկ ամի 1
համբերեմ վս ընտրելոցն, զի և նք փըր-
կութեն հասանիցեն որ ՚ի քս յս երկնաւոր
փառօքն համդերձ։ *Հաւատարիմ է 1
բանս. զի եթէ ընդ նմ մեռաք՝ ընդ նմին և
կեցցուք. *և եթէ համբերեմք, ընդ նմին և 1
թգաւորեսցուք. և եթէ ուրանամք՝ և նա
ուրանայ զմեզ. *և եթէ չհաւատամք, 1

նա

digitised by A.R.A.R.@

նա հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն
14 իւր ոչ կարէ: *Զայս յուշ արասջիր վկայ-
ուն եդեալ առաջի այ. մի բանակռուիւ լի-
նել յոչինչ պէտս՝ ՚ի կործանումն լսողաց:
15 *Փութասջիր զանձն քո ընտիր կացու- ԿԻԲ
ցանել առաջի այ, մշակ առանց ամօթոյ.
ուղիղ համառօտել զբանն ճշմարտութե:
16 *Այլ ՚ի պղծոց և ՚ի սնոտի խօսից մեր-
ժեսջիր. զի առաւել յառաջ դայցեն
17 յամբարշտութիւն. *և բանք նց իբրև ըղ-
քաղցկեղ ճարակ գտանեն. որոց սակի են
18 Հիմենոս՝ և Փիղետոս. *որք վրիպեցան
՚ի ճշմարտութէ, և ասեն՝ եթէ յարութի
մեռելոց արդէն իսկ եղեալ է. և կործա-
19 նեն զհաւատս ոմանց: *Այլ հաստա-
տուն հիմն այ կայ՝ և ունի զկնիքս զայս,
եթէ ծանեաւ տր զայնոսիկ՝ որ իւրն են.
և ՚ի բաց լիցի յանիրաւութէ ամ որ ան-
20 ուանէ զանուն տն: *Այլ ՚ի տան մե-
ծի ոչ միայն են անօթք ոսկեղէնք և ար-
ծաթեղէնք, այլ և փայտեղէնք և խեցե-
ղէնք. են՝ որ ՚ի պատուի են, և են որ յա-
21 նարգութե: *Եթէ ոք սրբեսցէ զանձն
իւր յայնպիսեաց անտի, եղիցի անօթ
պատուական՝ սրբեալ և պիտանի տն իւ-
րում յամ գործս բարութե պատրաստեալ:
22 *Այլ յերիտասարդական ցանկութեց
փախիր. և երթ զհետ արդարութե՝ զհա-
ւատոյ զսիրոյ զխաղաղութե զորութե, ը
այնոսիկ՝ որ կարդան զանուն տն սուրբ

սըր-

digitised by A.R.A.R.@

սրտիւք: *Այլ 'ի յիմար և յանխրատ 23
խնդրոց հրաժարեա. գիտասջիր՝ թէ ան-
տի ծնանին կռիւք: *Բայց ծառայի տն 24
ոչ է պարտ կռուել, այլ հեզ լինել առ
ամենին՝ ուսուցիչ անոխակալ. *Հանդար- 25
տութբ խրատել զհկռկօղսն. թերևս տա-
ցէ նցա ած ապաշխարութի 'ի գիտութի ճշ-
մարտութե. *և սթափեսցին յորոգայթից 26
սատանայի, որսացեալք 'ի նմէ 'ի նր կամս:

## Գլ. Գ:

ԿԻՐ. Զայս գիտասջիր՝ եթէ յաւուրս յե-
տինս եկեսցեն ժամանակք չարք.
*զի եղիցին մարդիկ անձնասէրք արծա-
թասէրք հպարտք ամբարտաւանք հայ-
հոյիչք՝ անհաւանք ծնողաց, անշնորհք ան-
սուրբք, *անողորմք անգութք բանսար-
կուք անժոյժք վէսք անբարեսէրք, *մատ-
նիչք յանդգունք ամբարհաւաճք, ցան-
կասէրք մանաւանդ՝ քան աստուածասէրք. *որ
ունիցին զկերպարանս աստուածպաշտութե, և
'ի զօրութէ անտի նր ուրացեալ իցեն. և
խորշեսջիր 'ի նոցանէ: *Քանզի 'ի նոցա-
նէ են՝ որ մտանեն տանէ 'ի տուն, և գե-
րեն զկանայս շեղջակուտեալս մեղօք վա-
րեալք 'ի պէսպէս ցանկութիս. *որ յամ
ժամ ուսանին, և երբէք 'ի գիտութի ճշ-
մարտութե ոչ հասանեն: *Այլ որպս յանէս 8
և յամբրէս հակառակ կացին մովսեսի.
նոյնպս և սք հակառակ կան ճշմարտու-
թեն:

digitised by A.R.A.R.@

թէն. մարդք ապականեալք մտօք՝ ան-
9 պիտանք 'ի հաւատս: *Այլ ոչ երբէք
գայցեն յառաջ 'ի լաւ անդր. զի ան-
մտուի սց յայտնի լինիցի ամենեցուն,
որպէս և նոցայն իսկ եղև:
10 *Այլ դու զհետ եկիր վարդապետուե
իմոյ՝ առաջնորդուե յօժարուե հաւա-
տոց՝ երկայնմտուե սիրոյ համբերուե,
11 *հալածանաց չարչարանաց. որպիսիք
եղեն ինձ յանտիոք և յիկոնիոն և 'ի
լիւստրոս, որպիսի հալածանաց համբե-
12 րի. և յամէ փրկեաց զիս տր: *և ամքին՝
որ կամիցին ածպաշտուբ կեալ 'ի քս յս,
13 'ի հալածանս կացցեն: *Այլ մարդք
չարք և կախարդք յառաջ եկեսցեն 'ի չար
անդր. մոլորեալք՝ և մոլորեցուցանիցեն:
14 *Այլ դու հաստատուն կաց յոր ուսարդ,
և հաւատարիմ եղեր. գիտես ուստի ու-
15 սար. *զի 'ի մանկուե զգիրս սբս գիտես,
որ կարօղ են իմաստուն առնել զքեզ 'ի
փրկուի՝ 'ի ձեռն հաւատոյն որ 'ի քս յս:
16 *Ամենայն գիրք ածաշունչք և օգտա- Դ.Հ
կարք, 'ի վարդապետուի են և յանդիմա-
նուի և յուղղուի և 'ի խրատ արդարուե.
17 *զի կատարեալ իցէ մարդն այ յամենայն
գործս բարուե հաստատեալ:

Գ.Լ: Դ:

1 Զայս վկայուի դնեմ առաջի այ՝ և յսի
քսի, որ դատելոց է զկենդանիս և
զմե-

digitised by A.R.A.R.@

զմեռեալս՝ ՚ի յայտնութեան իւրում և յար-
քայութեան. *Եւ դու քարոզեա զբանն, հա՛ս 2
՚ի վր̃ ժամու և տարաժամու, յանդիմա-
նեա՛ սաստեա՛ մխիթարեա՛ ամ̃ երկայն-
մտութբ̃ և վարդապետութբ̃։ *Քանզի ե- 3
կեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան վարդա-
պետութեանն ոչ անսայցեն. այլ ը̃ս իւրաքան-
չիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վար-
դապետս՝ ըստ մարմաջելոյ լսելեաց իւ-
րեանց. *Եւ ՚ի ճշմարտութենէ անտի դար- 4
ձուցանիցեն զլսելիս՝ և յառասպելս կոր-
ծանեսցին։ *Այլ դու զուարթ կաց 5
յամի, ճգնեա՛ց, զգործս աւետարանչի
գործեա՛. զպաշտօնդ քո կատարեալ կա՛լ։
*Զի ես այսուհետև նուիրեալ եմ, և 6
ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ։ *Ըզ- 7
բարւոք պատերազմ պատերազմեցայ,
զընթացսն կատարեցի, զհաւատսն պա-
հեցի։ *Այսուհետև կայ մնայ ինձ ար- 8
դարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ Տր̃
յաւուր յայնմիկ արդարն դատաւոր. ոչ
միայն ինձ, այլև ամենեցուն՝ որ սիրե-
ցին զյայտնութի̃ նորա։

ՉԸ Փութասջիր գալ առ իս վաղվաղակի, 9
*զի Դեմաս եթող զիս՝ և սիրեաց զաշ-
խարհ, և գնաց ՚ի Թեսաղոնիկէ. *Կրեսկէս՝ 10
՚ի Գաղղիա. Տիտոս ՚ի Դաղմատիա. *Ղու- 11
կաս միայն է ը̃ իս։ Զմարկոս առեալ ը̃
քեզ ածիցես զի է ինձ պիտանի ՚ի սպաս-
ւորութիւն։ *Զտիւքիկոս առաքեցի յԵփե- 12

սոս

digitised by A.R.A.R.@

13 սոս։ *Զփելոնն թողի ՚ի Տրովադայ առ
Կարպոսի։ յորժամ գայցես՝ բերջիր և ըզ-
14 գիրսն, մանաւանդ զմագաղաթսն։ *Աղեք-
սանդրոս (դարբին) բազում չարչարանս ե-
ցոյց ինձ. հատուսցէ նմա Տէր ըստ գործս նորա։
15 *յորմէ և դու անձնապահ լինիջիր. զի
16 շատ հակառակ եկաց բանից մերոց։ *Յա-
ռաջնում ատենին ոչ ոք ինձ ՚ի թիկունս
եկաց, այլ ամենեքին թողին զիս. մի համա-
17 րեսցի նոցա այն։ *Այլ Տէր օգնեաց ինձ, և
զօրացոյց զիս, զի ինև քարոզութիւնն հաս-
տատեսցի, և լուիցեն ամենայն հեթանոսք.
և ապրեցայ ես ՚ի բերանոյ առիւծուն։
18 *Փրկեսցէ զիս Տէր յամենայն գործոց չարաց,
և զերծուսցէ զիս յարքայութիւն իւր՝ որ յեր-
կինս է. որում փառք յաւիտեանս յաւի-
19 տենից. ամէն։ *Ողջոյն տաջիր Պրիսկեայ
20 և Ակիւղեայ՝ և Ոնեսիփորայ տանն։ *Ե-
րաստոս մնաց ՚ի Կորնթոս։ զՏրոփիմոս
21 թողի ՚ի Միլիտոս հիւանդագին։ *Փու-
թասջիր յառաջ քան զձմեռն գալ։ Ողջոյն
տան քեզ Եւբուղոս և Պուդէս և Լինոս և
12 Կղոդիա՝ և եղբարք ամենեան։ *Տէր Յիսուս Քրիստոս
ընդ հոգւոյդ քում։ Շնորհք ընդ քեզ։ ամէն։

Առ Տիմոթէոս երկրորդ թուղթն, որ էր եփե-
սացւոց եկեղեցւոյն եպիսկոպոս առաջին ձեռնա-
դրեալ. գրեցաւ ՚ի Հռոմէ՝ յորժամ երկրորդ ան-
գամ եկաց յատենին պօղոս առաջի Ներոնի կայսեր
Հռոմայ։



digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ՏԻՏՈՍ։
## ԳԼ. Ա.

ԿԻԲ Պօղոս ծառայ այ եւ առաքեալ յի 1
քսի, ըստ հաւատոց ընտրելոցն այ,
եւ 'ի գիտութի ճշմարտութեն՝ որ ընդ
ածպաշտուէն է. *յուսով կենացն յա- 2
ւիտենից, զոր խոստացաւ անսուտն ած
յառաջ քան զժամանակս յաւիտենից.
*բայց յայտնեաց իւրովք ժամանակօք 3
զբանն իւր քարոզութբ, որոյ եղէ ես
հաւատարիմ ըստ հրամանի փրկչին մե-
րոյ այ։ *Տիտոսի որդւոյ սիրելւոյ ըստ 4
հասարակաց հաւատոց, շնորհք՝ եւ խա-
ղաղութի յայ հօրէ՝ եւ 'ի տնէ յսէ քսէ
փրկչէ մերմէ։ *Վասն այնորիկ իսկ 5
թողի զքեզ 'ի կրետէ, զի որ ինչ միան-
գամ պակաս իցէ՝ ուղղեսցես, եւ կա-
ցուսցես ըստ քաղաքաց երիցունս, որ-
պէս եւ ես քեզ պատուիրեցի։ *Եթէ 6
ոք անարատ իցէ, միոյ կնոջ այր, որ-
դեակս ունիցի հաւատացեալս՝ եւ ոչ
յամբաստանութի անառակութե, կամ
ան-

digitised by A.R.A.R.@

7 անհնազանդս։ * Զի պարտ է եպիսկո-
պոսին անարատ լինել՝ որպէս Աստուծոյ տնտեսի.
մի՛ յանդուգն, մի՛ բարկացօղ, մի՛ թըշ-
նամանօղ, մի՛ հարկանօղ, մի՛ զօշաքաղ.
8 * այլ՝ հիւրասէր, բարեսէր, ցած, ար-
9 դար, սուրբ, ժուժկալ. * վերակացու
լինել հաւատարիմ բանին վարդապե-
տութեան, զի կարօղ իցէ և մխիթարել ողջ-
մտութեամբ վարդապետութեան, և զհակա-
10 ռակորդսն կշտամբել։ * Քանզի բա-
զումք են անհնազանդք՝ զրախօսք և
մտախաբք. մանաւանդ որ 'ի թլփատու-
11 թեան անտի են. * զորս պարտ է ըմբերա-
նել. որք զամենայն տունս կործանեն, և ու-
սուցանեն զոր չէ՛ արժան վասն զօշաքաղութեան։
12 * Ասաց ոմն 'ի նոցանէ՝ իւրեանց իսկ ԴՇ
մարգարէ, կրետացիք հանապազասուտք,
13 չարագազանք դատարկապորտք։ * Եւ ըս-
տոյգ է վկայութիւնս այս. վասն որոյ կըշ-
տամբեսցես զնոսա խստագոյնս, զի ա-
14 ռողջասցին 'ի հաւատս. * և մի՛ հայեսս-
ցին 'ի հրէական առասպելս, և 'ի պա-
տուէրս մարդկան զառածելոցն 'ի ճըշ-
15 մարտութենէ։ * Ամենայն ինչ սուրբ է սրբոց,
բայց պղծոցն և անհաւատից՝ ոչինչ է
սուրբ. այլ պղծեալ են միտք և խոր-
16 հուրդք նոցա։ * խոստանան գիտել զԱստուած,
և գործովք իւրեանց ուրանան. պիղծք
և անհաւանք՝ և յամենայն գործս բարեաց
անպիտանք։



digitised by A.R.A.R.@

## ԳԼ. Բ.

Բայց դու խօսեա՛ց որ ինչ վայել է ողջա- 1
միտ վարդապետութե՟ն: *Ծերոց 2
զգաստս լինել, պարկեշտս՝ ցածունս,
ողջամիտս ՚ի հաւատս ՚ի սէր ՚ի համբե-
րութի՟ն ՚ի ժուժկալութե՟ն: *Պառաւանց 3
նոյնպէս ՚ի զգաստութե՟ն՝ ՚ի սուրբ վայել-
չութե՟ն, մի՛ բանսարկուս՝ մի՛ գինեմոլս,
այլ բարեխրատս. *զի զգաստացուցա- 4
նիցեն զմանկամարդսն՝ այրասէրս լինել՝
որդեսէրս, *ցածունս սուրբս տնարարս 5
բարեգործս, հնազանդս իւրեանց ա-
րանց. զի մի՛ բանն ա՟յ և վարդապետու-
թի՟ն հայհոյեսցի: *Զերիտասարդս 6
նոյնպէս աղաչեսջի՛ր՝ ցածունս լինել:
*ամենեցուն զանձն օրինակ կացուցա- 7
նել՝ գործոց բարութե՟ն, վարդապետութե՟բ
զանեղծութի՟ն ունել, զսրբութի՟ն, զպարկեշ-
տութի՟ն, *զբանն ողջմտութե՟ն, անպարսաւ 8
լինել. զի որ հակառակորդն իցէ՝ յամօթ
լիցի, և մի՛ ինչ ունիցի ասել զմէնջ չա-
րութի՟ն: *Ծառայից՝ իւրեանց տերանց 9
հնազանդ լինել՝ և հաճոյս յա՟մի. մի՛ հա-
կառակօղս, *մի՛ հատուածս. այլ զա՟մ հա- 10
ւատս ցուցանել բարութե՟բ, զի զվդ՟պտութի՟ն
Վ. Ք. փրկչին մերոյ ա՟յ զարդարեսցեն յա՟մի:
*Երևեցաւ շնորհն ա՟յ փրկիչ 11
ա՟մ մարդկան. *որ խրատէ զմեզ՝ զի ու- 12
րացուք զամպարշտութի՟ն և զաշխարհ-
հա-

digitised by A.R.A.R.@

հական ցանկութիւս։ զգաստութբ և արդա-
րութբ և ա՛ծպաշտութբ կեցցուք յաշխար-
13 հի ․ * և ակնկալցուք երանելի յուսոյն՝
և յայտնութե փառաց մեծին ա՛յ՝ և փրկ-
14 չին մերոյ յի քի ․ *որ ետ զանձն վասն
մեր, զի փրկեսցէ զմեզ յա՛մ անօրէնու-
թե, և սրբեսցէ իւր ժողովուրդ սեպ-
հական՝ նախանձաւոր գործոց բարութե։
15 * Զայդ խօսեաց՝ և մխիթարեա և յան-
դիմանեա ա՛մ սաստիւք ․ զի մի ոք լցէ
որ զքեզ արհամարհիցէ ։

## ԳԼ ․ Գ ։

1 Եւ յուշ արասջիր նց, իշխանութեց և ՁԸ
պետութեց հնազանդ լինել՝ և հպա-
տակ կալ ․ և ա՛մ գործոց բարութե պատ-
2 րաստ գտանել ․ * մի զոք հայհոյել՝ ան-
կռիւս լինել՝ հեզս, զա՛մ ցածութի առ ա-
3 մենայն մարդիկ ցուցանել ։ * Զի էաք
երբեմն և մեք անմիտք անհաւանք՝ մո-
լորեալք՝ ծառայէաք ցանկութեց և պէս-
պէս անառակութեց ․ չարութբ և նախան-
ձու շրջէաք, ատեցեալք՝ և զմիմեանս ա-
4 տէաք ։ * Իսկ յորժամ քաղցրութի և մար-
դասիրութի փրկչին մերոյ ա՛յ յայտնեցաւ,
5 * ո՛չ 'ի գործոց արդարութե զոր արարաք
մեք, այլ ը՛ իւրում ողորմութեն ապրե-
ցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին միւսան-
գամ ծննդեանն, և նորոգութբ հոգւոյն
6 սբյ ․ * զոր եհեղ 'ի մեզ առատութբ, 'ի
ձեռն

digitised by A.R.A.R.@

ձեռն յի̃ք̃ի փրկչին մերոյ. *զի արդա- 7
րացեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգա-
ւորք յուսով կենացն յաւիտենականից։
*Հաւատարիմ է բանս, և 'ի սոյն կամիմ 8
զքեզ հաստատուն լինել, զի փոյթ արաս-
ցեն գործոց բարեաց վերակացու լինել՝
հաւատացեալքն յա̃ծ, զի այն է բարի և
օգտակար մարդկան։ *Բայց զյիմարութե̃ 9
խնդիրս՝ և զտոհմաթիւս, և զհեռ՝ և զօ-
րինական կռիւսն 'ի բաց մերժեսջիր. զի
անօգուտք են՝ և սնոտիք։ *Զայր հեր- 10
ձուածող՝ յետ միանգամ և երկիցս խրա-
տելոյ՝ հրաժարեսջիր. *գիտասջիր՝ զի 11
թիւրեալ է այնպիսին, և մեղանչէ՝ ան-
ձամբ զանձն դատապարտեալ։ *Բայց յոր- 12
ժամ յղեցից առ քեզ զարտեմայ կամ զտ-
իւքիկոս, փութասջիր գալ առ իս 'ի
նիկոպօլիս. զի անդ եդի 'ի մտի ձմերել։
*Եւ զզենոն զօրինական դպիր՝ և զապո- 13
ղոս՝ փութով արձակեսջիր, զի մի ինչ պա-
կասիցէ նոցա։ *Ուսցին և մերքն ևս՝ բար- 14
եաց գործոց վերակացու լինել 'ի պէտս
կարևորս. զի մի անպտուղք լինիցին։ 15
*Ողջոյն տան քեզ՝ որ ը̃ իս են ամ̃ենքն։
Ողջոյն տուր սիրելեաց մերոյ հաւատովք։
Շնորհք ը̃ ձեզ ամենեսին։ ամէն։

Առ տիտոս կրետացւոց եկեղեցւոյն առաջին ձեռնադրեալ եպիսկոպոս, գրեցաւ 'ի նիկոպօլիս մակեդոնացւոց։

ԹՈՒՂԹ

# Թ Ո Ւ Ղ Թ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ՓԻԼԻՄՈՆ։

## ԳԼ. Ա.

1 Պօղոս կապեալ յսի քսի, եւ տիմո-
թէոս եղբայր. փիլիմոնի սիրել-
2 ւոյ՝ եւ գործակցի մերոյ, * եւ ապփեայ
քեռ, եւ արքիպպեայ զինուորակցի մե-
3 րոյ՝ եւ առտնին եկեղեցւոյդ։ * Շնորհք
ը ձեզ եւ խաղաղութի յայ հօրէ մեր-
4 մէ՝ եւ 'ի տնէ յսէ քսէ։ * Գոհանամ
զայ իմոյ յամ ժամ, յիշատակեալ յա-
5 ղօթս իմ վն քո, * իբրեւ լսեմ զքո հա-
ւատսն եւ զսէր, զոր ունիս առ տր յս՝
6 եւ առ ամ սուրբս։ * Զի հաղորդութի
հաւատոյն քոյ արդիւնաւոր լինիցի՝ գիտութե
ամ բարութե, որ 'ի ձեզ է 'ի քս յս։
7 * Խնդութի յոյժ ընկալայ՝ եւ մխիթարու-
թի 'ի վր սիրոյն քո. զի գութք սրբոց
8 քո հանգուցեալ են եղբայր։ * Վասն
որոյ բզմ համարձակութի ունիմ 'ի քս
9 հրամայել քեզ զարժանն։ * Վասն
սիրոյ՝ մանաւանդ թէ աղաչեմ իսկ այն-

պի-

digitised by A.R.A.R.@

պիսի լինել՝ որպէս և պօղոս ծերացեալ,
արդ և կապեալ եւս յի՛ի ք՛ի։ *Աղաչեմ 10
զքեզ վ՟ն որդւոյ իմոյ՝ զոր ծնայ 'ի կա-
պանս իմ, զոնեսիմոս. *որ երբեմն ան- 11
պիտան էր քեզ. բայց արդ քեզ և ինձ
պիտանի. *զոր յղեցի առ քեզ։ և դու 12
զդա ընկալջիր՝ այսինքն է՝ զիմ աղիս։
*Զոր կամէի առ իս արգելուլ, զի ը՟ 13
քո ունիցի ինձ սպաս 'ի կապանս աւետա-
րանին։ *Բայց առանց քո կամաց ոչինչ 14
կամեցայ առնել, զի մի՛ բարիքդ քո 'ի
հարկէ լինիցին՝ այլ կամաւ։ *Եւ թեր- 15
եւս վ՟ն այնորիկ մեկնեցաւ առ ժամա-
նակ մի, զի յաւիտեան ունիցիս զդա.
*մի՛ եւս իբրև զծառայ՝ այլ 'ի վեր քան 16
զծառայ, իբրև զեղբայր սիրելի. եթէ
ինձ այնչափ որչափ եւս առաւել քեզ մարմ-
նով և տ՟րամբ։ *Եթէ զիս քեզ հա- 17
ղորդ համարիցիս, ընկալ զդա իբրև զիս։
*Եւ եթէ յանցուցեալ ինչ իցէ՝ կամ 18
պարտիցի, զայն ինձ համարեսցես։ *Ես 19
պօղոս գրեցի իմով ձեռամբ. ես հա-
տուցից, զի մի՛ ասիցեմ քեզ՝ թէ և դու
զանձն քո ինձ պարտիս։ *Այո եղբայր՝ 20
ես քո փոխանակ եղէց 'ի տ՟ր. հանգո՛
զաղիսդ իմ 'ի ք՟ս։ *Յուսացեալ 'ի հնա- 21
զանդութիդ քո՝ գրեցի առ քեզ. քանզի
գիտեմ թէ առաւել եւս զոր ասեմդ՝
առնիցես։ *Միանգամայն և պատրաս- 22
տեսջի՛ր ինձ վանս. քանզի յուսամ եթէ

աղօ-

digitised by A.R.A.R.@

23 աղօթիւք ձերովք շնորհեցայց ձեզ։ *Ող-
ջոյն տայ ձեզ Եպափրաս գերեկից իմ 'ի
24 ք̅ս̅ յ̅ս̅. *և Մարկոս, և Արիստարքոս,
և Դեմաս, և Ղուկաս՝ գործակիցք իմ։
25 *Շնորհք տ̅ն̅ մերոյ յ̅ս̅ի ք̅ս̅ի ը̅ն̅դ̅ ոգւոյդ
ձերում։ ամէն ։

Առ Փիլեմոնն և առ Ապփիա տեարս Ովնեսիմայ. և առ Արքիպպոս սարկաւագ Կողոսացւոց եկե-
ղեցւոյն, գրեցաւ 'ի Հռոմայ 'ի ձեռն Ովնեսիմայ
ծառայի ։



digitised by A.R.A.R.@

# Թ Ո Ւ Ղ Թ

# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ:

## ԳԼ: Ա:

(Ակ) Բազում մասամբք և բազում օրի- 1
նակօք կանխաւ խօսեցաւ ա՟ծ ընդ
հարսն մեր մարգարէիւք. *՚ի վախճան 2
աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ
որդւո՟վն՝ զոր եդ ժառանգ ա՟մի. որով
և զյաւիտեանսն արար: *Որ է լոյս 3
փառաց՝ և նկարագիր էութե՟ նորա.
որ կրէ զա՟մ բանիւ զօրութե՟ իւրոյ.
սրբու՟ի մեղաց մերոց արարեալ՝ նստաւ
ը՟ աջմէ մեծութե՟ն ՚ի բարձունս: *Այն- 4
չափ առաւել եղեալ քան զհրեշտակս,
որչափ լաւ ևս քան զն՟ս անուն ժառան-
գեաց: *Քանզի ցո՞ երբեք ասաց ՚ի 5
հրեշտակաց, որդի իմ ես դու՝ ես այ-
սօր ծնայ զքեզ. և դարձեալ՝ թէ ես
եղէց նմա ՚ի հայր, և նա եղիցի ինձ յոր-
դի: *Եւ յորժամ միւսանգամ մուծ- 6
ցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ. եր-
կիր պագցեն նմա ա՟մ հրեշտակք ա՟յ:
*Եւ առ հրեշտակսն ասէ. ո՛ արար ըզ- 7

հրեշ-

digitised by A.R.A.R.@

հրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս
8 իւր բոց հրոյ: *Իսկ ցորդին ասէ. Ա-
թոռ քո ած յաւիտեանս յաւիտենից.
գաւազան ուղղութեան գաւազան արքայ-
9 ութեան քո: *Սիրեցեր զարդարութիւն և
ատեցեր զանօրէնութիւն. վն այսորիկ օծ ըզ-
քեզ ած ած քո իւղով ուրախութեան առա-
10 ւել քան զընկերս քո: *Եւ դու Տր ի սկզ-
բանէ զերկիր հաստատեցեր. և գործք
11 ձեռաց քոց երկինք են: *Նոքա կորն-
չին, և դու կաս և մնաս. ամենեքեան
12 իբրև զձորձս մաշեսցին, *և իբրև զվե-
րարկուս. գալարեսցես զնոսա իբրև
զհանդերձ, և գալարեսցին. բայց դու
նոյն իսկ ես, և ամք քո ոչ պակասեն:
13 *Յո՞ երբէք ասաց ի հրեշտակաց. նիստ
ըն աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո
14 պատուանդան ոտից քոց: *Ո՞չ ապաքէն
ամենեքեան հոգիք են հարկաւորք, որ
առաքին ի սպասաւորութիւն վն այնոցիկ
որ ժառանգելոցն են զփրկութիւն:

## ԳԼ. Բ.

1 Վասն այնորիկ պարտ է մեզ առաւել ԵԴ
ևս ունկնդիր լինել բանիցն ասա-
2 ցելոց, զի մի երբէք նուաղեսցուք: *Զի
եթէ որ ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ
բանն, հաստատուն եղև, և ամ յանցա-
ւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ
3 զպատիժ պատուհասի. *մեք զիա՞րդ
ապ-

digitised by A.R.A.R.@

ապրեսցուք հեղգացեալք յայնպիսի փըր-
կութենէ, որ սկիզբն առ խօսելոյ ՚ի Տեառնէ.
եւ ՚ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ ՚ի մեզ
հաստատեցաւ. * վկայեալ յԱստուծոյ նշանօք 4
եւ արուեստիւք եւ պէսպէս զօրութեամբք, եւ
մասամբք Հոգւոյն սրբոյ ըստ իւրոց կամաց:
* Զի ոչ եթէ հրեշտակաց հնազանդե- 5
ցոյց զհանդերձեալ աշխարհն, վասն որոյ
մեքս խօսիմք: * Վկայեաց ոք ուրեք՝ եւ 6
ասէ. զի՞նչ է մարդ՝ եթէ յիշեսցես զնա,
կամ որդի մարդոյ՝ թէ այց արասցես նմա:
* Փոքր մի խոնարհ արարեր զնա քան 7
զհրեշտակս. փառօք եւ պատուով պսա-
կեցեր զնա՝ եւ կացուցեր զնա ՚ի վերայ ձե-
ռակերտաց քոց: * զամենայն ինչ հնա- 8
զանդ արարեր ՚ի ներքոյ ոտից նորա: Արդ՝
՚ի հնազանդեցուցանելն զամենայն, ոչինչ ե-
թող անհնազանդ ՚ի նմանէ. բայց այժմ
ոչ եւս տեսանեմք հնազանդեալ նմա զամենայն:
* Այլ զփոքր մի խոնարհեալ քան ըզ- 9
հրեշտակս տեսանեմք զՅիսուս՝ վասն չարչարա-
նաց մահուն. փառօք եւ պատուով պսա-
կեալ. զի շնորհօքն Աստուծոյ վասն ամենեցուն
զմահ ճաշակեսցէ: * Զի վայելէր իսկ 10
նմա, վասն որոյ ամենայն՝ եւ որով ամենայն, բազում
որդիս ՚ի փառս ածել՝ եւ զառաջնորդ
Վ.Ջ փրկութեան նոցա չարչարանօք կատարել:
* Զի որ սրբէն եւ որ սրբին՝ ՚ի միոջէ 11
էին ամենեքին, վասն որոյ ոչ ամօթ հա-
մարի եղբարս անուանել զնոսա, եւ ասէ.
* Պատ-

digitised by A.R.A.R.@

12 * Պատմեցից զանուն քո եղբարց իմոց.
13 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։ * Եւ
դարձեալ՝ Թէ ես եղէց յուսացեալ 'ի
նա։ Եւ դարձեալ. Ահաւասիկ ես և ման-
14 կունք իմ, զոր ետ ինձ ա͞ծ։ * Արդ՝ ո-
րովհետև մանկունք հաղորդեցին ա-
րեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձա-
ւորութ͞բ կցորդ եղև նոցունց. զի մահուն
իւրով խափանեսցէ զայն, որ զիշխանու-
թ͞ին մահուն ունէր, այսինքն է զսատա-
15 նայ. * Եւ ապրեցուսցէ զայնոսիկ, որ մա-
հուն երկիւղիւ հանապազ կէին վտա-
16 րանդեալք 'ի ծառայութ͞ե։ * Քանզի ոչ
երբէք զհրեշտակաց բունն հարկանէ.
այլ զզաւակէն աբրահամու բունն հար-
17 կանէ։ * Ուստի պարտ իսկ էր նմա ա-
մենայնիւ եղբարց նմանել. զի ողորմած
լինիցի, և հաւատարիմ քահանայապետ
յա͞ծակողմանէ անտի, առ 'ի քա-
18 ւելոյ զմեղս ժողովրդեանն։ * Զի որով
ինքն չարչարեցաւ զփորձ առեալ, կա-
րող է և փորձանաւորացն օգնական լի-
նել։

## ԳԼ. Գ.

1 Ուստի եղբարք սուրբք՝ երկնաւոր կոչ-
մանն բաժանորդք, նայեցարուք ը͞ն
առաքեալն և ը͞ն քահանայապետ խոս-
2 տովանութ͞ե մերոյ ը͞ն յ͞ս ք͞ս. * որ հաւա-
տարիմ է արարչին իւրոյ՝ ո͞պ և մովսէս
յա͞մ

digitised by A.R.A.R.@

յամ 'ի տան նորա: *Զի առաւել ևս 3
փառաց քան զմովսէս արժանի եղև. որ-
չափ առաւել պատիւ ունիցի քան զտունն՝
տանն առնելի: *զի ամ տուն կազմի, 4
յումեքէ կազմի. իսկ որ զամ արար, ած
է: *Մովսէս հաւատարիմ է յամ տան 5
նորա իբրև զծառայ՝ առ 'ի վկայութե
բանիցն ասացելոց: *Բայց Քս իբրև որ- 6
դի 'ի վերայ տան իւրոյ. որոյ տունն մեք
իսկ եմք. միայն թէ զհամարձակութի
և զպարծանս յուսոյն մինչև 'ի վախճան
հաստատուն ունիցիմք: *Վասն որոյ 7
այսպէս ասէ հոգին սբ. այսօր եթէ ձայ-
նի նորա լուիցէք, *մի խստացուցանէք 8
զսիրտս ձեր իբրև 'ի դառնութեն յաւուրն
փորձութեն յանապատի. *ուր փորձեցին 9
զիս հարքն ձեր. քննեցին զիս՝ և տեսին
զգործս իմ զքառասուն ամ. *վս որոյ 10
տաղտկացայ ազգաւն այնուիկ, և ա-
սացի. միշտ մոլորեալ են սրտիւք. և նո-
քա ոչ ծանեան զճանապարհս իմ. *որ- 11
պէս երդուայ 'ի բարկութե իմում՝ թէ
մտցեն 'ի հանգիստ իմ:

ԵԶ *Տեսէք եղբարք՝ գուցէ երբէք լինիցի 12
յումեք 'ի ձէնջ սիրտ չար անհաւատու-
թե՝ ապստամբ լինել յայ կենդանւոյ,
*Բայց մխիթարեցէք զմիմեանս զօրհա- 13
նապազ՝ մինչդեռ այսօրդ անուանի կայ.
զի մի ոք խստասցի 'ի ձէնջ խաբէութե
մեղաց: *Քանզի բաժանորդք եղեաք 14
Քսի.

digitised by A.R.A.R.@

քսի. միայն թէ զսկիզբն հաստատութեն
15 մինչև ցվախճան պինդ կալցուք: *Յա-
սելն, այսօր եթէ ձայնի նորա լուիջիք՝
մի խստացուցանէք զսիրտս ձեր իբրև ՚ի
16 դառնութեն : *Բանզի ոմանք լուան՝
և դառնացուցին, այլ ոչ ամենեքեան՝
որ ելեալ էին յեգիպտոսէ ՚ի ձեռն Մով-
17 սէսի: *Յումմէ՞ տաղտկացաւ զքառա-
սուն ամն. ո՞չ ապաքէն ՚ի յանցուցելոցն.
որոց ոսկերքն անկան յանապատի անդ:
18 *Ո՞ւմ երդուաւ չմտանել ՚ի հանգիստն
19 իւր, եթէ ոչ անհաւատիցն : *Եւ տե-
սանեմք՝ զի ոչ կարացին մտանել վասն
անհաւատութեն :

## ԳԼ. Դ.

1 Երկիցուք այսուհետև, գուցէ ՚ի թո-
ղուլ զաւետիսն՝ ՚ի մտանելոյ ՚ի հան-
գիստն նորա՝ գտանիցի ոք ՚ի ձէնջ նուա-
2 ղեալ : *Բանզի եմք աւետարանեալք
որպէս և նոքայն. այլ ոչ ինչ օգնեաց լուր
բանին, չամոքելոյն ՚ի հնազանդութեն
3 հաւատոց: *Այլ մեք մտանեմք ՚ի հան-
գիստն, որք հաւատացաքս. որպէս և
ասացն՝ թէ որպէս երդուայ ՚ի բարկու-
թեն իմում, թէ մտցեն ՚ի հանգիստ իմ.
թէպէտ և արդիւնքն իսկզբանէ աշխար-
4 հի լեալ էին: *Բանզի ասէ ուրեք վասն
աւուրն եօթներորդի այսպէս. և հան-
գեաւ Աստուած յաւուրն եօթներորդի յամե-
նայն

digitised by A.R.A.R.@

նոյն գործոց իւրոց ։ *Եւ աստ դար- 5
ձեալ ասէ՝ Թէ մտցեն 'ի հանգիստ իմ։
*Եւ արդ՝ քանզի արգելեալ ոմանք մը- 6
տանել 'ի նա, և որք յառաջագոյն ա-
ւետարանեալն էին՝ չմտին վն անհաւա-
տութեն. *դարձեալ այլ օր սահմանէ՝ 7
զայսօրն 'ի դաւիթ, և ասէ՝ յետ այն-
չափ ժամանակաց, որպ յառաջագոյնն ա-
սաց, այսօր եթէ ձայնի նր լուիցէք՝ մի
խստացուցանէք զսիրտս ձեր ։ *Զի ե- 8
թէ զնն յեսուայ հանգուցեալ էր, ապա
վն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այնորիկ։
*Արդ ուրեմն նուազեալ է շաբաթութիւն 9
ժողովրդեանն այ ։ *Զի որ եմուտ 'ի 10
հանգիստն նր, և նա հանգեաւ յիւրոց
Վ.Զ գործոց անտի. որպ և ած յիւրայոյն ։
*Փութասցուք այսուհետև մտանել 11
յայն հանգիստ. զի մի ոք ընդ նոյն օ-
րինակաւ անհաւատութեն անկանիցի։
*Քանզի կենդանի է բանն այ՝ և ազ- 12
դող՝ և հատու քան զամ սուր երկսայ-
րի, և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ՝ և
ոգւոյ՝ և յօդից՝ և ուղղոց. և քննիչ է
մտաց՝ և խորհրդոց սրտից ։ *Եւ չիք 13
արարած աներևոյթ յերեսաց նր. այլ
ամ ինչ մերկապարանոց կայ առաջի ա-
չաց նր՝ զորմէ մեր բանքս են։ *Ունիմք 14
այսուհետև քահանայապետ մեծ անցեալ
ը երկինս, զյն զորդին այ. ունի՛ կալ-
ցուք զխոստովանութիւն ։ *Քանզի ոչ 15
եթէ

եթէ ունիմք քահանայապետ՝ որ չիցէ
կարող չարչարակից լինել տկարութեան մե-
րոյ. այլ փորձ է ամենայնիւ ըստ նմա-
նութեան առանց մեղաց ։
16 *Մատիցուք այսուհետեւ համարձակու- ԶԿ
թեամբ առաջի աթոռոյ շնորհացն նորա. զի
ընկալցուք զողորմութիւն եւ գտցուք շը-
նորհս 'ի դէպ ժամանակի օգնականութեան ։

## ԳԼ. Ե.

1 Զի ամենայն քահանայապետ 'ի մարդկանէ
առեալ՝ վասն մարդկան կայ յԱստուածա-
կոյս կողմն անդր. զի մատուսցէ պատա-
2 րագս եւ զոհս վասն մեղաց ։ *Զափով
չարչարակից կարող է լինել տգիտաց եւ
մոլորելոց. քանզի եւ ինքն իսկ տկարութեամբ
3 զգածեալ է ։ *Վասն այնորիկ հարկ է
որպէս վասն ժողովրդեանն, նոյնպէս եւ ընդ ան-
ձին մատուցանել պատարագս վասն մե-
4 ղաց ։ *Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու
պատիւ. այլ կոչեցեալն յԱստուծոյ՝ որպէս եւ Ա-
5 հարոնն ։ *Նոյնպէս եւ Քրիստոս ոչ եթէ ան-
ձին ինչ շուք եդ լինել քահանայապետ.
այլ որ խօսեցաւն առ նա՝ թէ որդի իմ
6 ես դու՝ ես այսօր ծնայ զքեզ ։ *Որպէս եւ 'ի
միւսումն ասէ. դու ես քահանայ յաւի-
7 տեան ըստ կարգին Մելքիսեդեկի ։ *Որ
յաւուրս մարմնոյ իւրոյ՝ աղօթս եւ պա-
ղատանս առ այն, որ կարողն էր ապրե-
ցուցանել զնա ('ի մահուանէ), ուժգին

գոչ

digitised by A.R.A.R.@

գոչմամբ և արտասուօք մատուցանէր․
և լսելի լինէր առ լաւութեն։ *Թէպէտ 8
և որդի է՝ ուսաւ 'ի չարչարանաց անտի
զհնազանդութի։ *Եւ իբրև կատարե- 9
ցաւ՝ եղև ամ հնազանդելոց իւրոց պատ-
ճառ փրկութեն յաւիտենից․ *և ա- 10
նուանեցաւ յայ քահանայապետ յաւի-
տենից ըստ կարգին Մելքիսեդեկի։
ԶԴ *Վասն որոյ բազում են մեզ բանք, և 11
դժուարապատում 'ի մեկնել․ քզի խօ-
թամիտք եղերուք լսելեօք։ *Փոխանակ 12
զի պարտ էր ձեզ լինել վարդապետս վս
ժամանակին․ դարձեալ պիտոյ է ձեզ
ուսանել՝ թէ զինչ են նշանագիրք իսկզ-
բան բանիցն այ․ և եղերուք կարօտք կա-
թին՝ և ոչ հաստատուն կերակրոյ։ *Զի 13
ամ որ կաթնկեր է՝ տգէտ է բանին ար-
դարութե, քզի տղայ է։ *Բայց կատա- 14
րելոցն է հաստատուն կերակուր․ որոց
վասն 'ի չափս հասանելոյ՝ ճաշակելիքն
կիրթ են ընտրութե բարւոյ և չարի։

## ԳԼ․ Զ։

Վասն որոյ թողեալ զբան սկզբանն 1
քի, 'ի կատարումն եկեսցուք․ մի
միւսանգամ արկանել հիմն ապաշխա-
րութե՝ 'ի մեռելոտի գործոց անտի, և
հաւատոցն որ յած, *և մկրտութեցն 2
վարդապետութե, և ձեռնադրութե ձե-
ռաց, և յարութե մեռելոց, և դատաստա-
նին

digitised by A.R.A.R.@

նեն յաւիտենից ։ * Եւ արդ՝ արասցուք
4 զայն, եթէ ա՟ծ հրամայեսցէ ։ * Բան-
զի անհնար է միանգամ մկրտելոցն, որ
ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն, եւ
5 հաղորդք եղեն հոգւոյն ս՟բյ, * եւ զգե-
ղեցիկ բանին ա՟յ ճաշակս ճաշակեցին, եւ
6 զզօրութիս հանդերձելոյ աշխարհին, * եւ
կործանեցին, միւսանգամ նորոգել յա-
պաշխարութ՟ի. եւ վերստին 'ի խաչ հա-
նել անձանց զորդին ա՟յ, եւ դարձեալ
7 խայտառակել ։ * Բանզի երկիր՝ որ ըմ-
պիցէ զանձրեւ բազում անգամ եկեալ
'ի վ՟ն ն՟ր, եւ ծնանիցի արդիւնս շայեկանս
ն՟ց՝ վ՟ն որոյ գործեցին, ընդունի զօրհ-
8 նութ՟ի յա՟յ ։ * Իսկ որ բերէ զփուշ եւ ըզ-
տատասկ, անպիտան է՝ եւ մերձ յանէծս.
եւ վախճան նորա յայրումն ։
9 * Բայց հաստատեալ եմ վ՟ն ձեր սիրե- ԶԶ
լիք՝ 'ի լաւ անդր, եւ որ լին է փրկութ՟ե ։
10 զի Թէպէտ եւ այսպէս խօսիմք. * ոչ ե-
թէ անիրաւ ինչ է ա՟ծ՝ մոռանալ ըզ-
գործս ձեր եւ զսէրն՝ զոր ցուցէք յանուն
ն՟ր. զի պաշտեցիք զսուրբսն՝ եւ պաշտէք ։
11 * Եւ մեք ըղձանամք՝ զի իւրաքանչիւր-
ոք 'ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ 'ի
հաստատութ՟ի յուսոյն՝ մինչեւ ցվախճան.
12 * զի մի հիւանդամիտք լինիցիք ։ Նմա-
նօղք եղերուք այնոցիկ՝ որ հաւատովքն
եւ երկայնմտութ՟բ ժառանգեցին զաւե-
13 տիսն ։ * Զի աբրահամու խոստացեալ

14 զա-

digitised by A.R.A.R.@

զաւետիսն ա՟յ, քանզի յայլ որ ՚ի մեծ ոչ
գոյր երդնուլ, * յանձն իւր երդուաւ՝ և 14
ասէ. այո՛, օրհնելով օրհնեցից զքեզ, և
բազմացուցանելով բազմացուցից զքեզ։
* Եւ այնպէս երկայնամիտ եղեալ՝ եհաս 15
աւետեացն։ * Ապաքէն մարդիկ՝ որ ինչ 16
՚ի վեր է քան զինքեանս՝ յայն երդնուն.
և ա՟մ հակառակութե՟ն նց՟ վճիռ առ ՚ի
հաստատութի՟ երդումն է։ * Որով ա- 17
ռաւել ևս կամեցեա՟լ ա՟յ ցուցանել ժա-
ռանգաւորաց աւետեացն զհաստատու-
թե՟ն խորհրդոյն իւրոյ, միջնորդեաց երդ-
մամբ։ * Զի երկու անփոփոխելի իրօքն՝ 18
որովք ա՟նհնարին էր ստել ա՟յ, հաս-
տատուն մխիթարութի՟ ունիցիմք. որք
ապաստան եղեաք բուռն հարկանել ըզ-
հանդերձել՟ յուսոյն. * զոր իբրև զխա- 19
րիսխ հաստատուն և անշարժ ունիցիմք
անձանց մերոց. որ և մտանիցէ ՚ի ներքին
կողմն վարագուրին, * ուր կարապետն 20
մեր յս՟ եմուտ վ՟ն մեր, ը՟ կարգին Մել-
քիսեդեկի՝ եղև քահանայապետ յաւի-
տենից։

## ԳԼ. Է.

Քանզի այս Մելքիսեդեկ՝ թագաւոր 1
էր Սաղիմայ. քահանայ ա՟յ բար-
ձրելոյ, որ ել ընդ առաջ աբրահամու՝
յորժամ դարձեալ գայր ՚ի կոտորածէ
թագաւորացն՝ և օրհնեաց զնա. * որում 2
և

digitised by A.R.A.R.@

և տասանորդս յամենայնէ ետ աբրահամ.
նախ թարգմանի թագաւոր արդարութեան,
ապա թագաւոր սաղեմայ՝ որ է թագա-
3 ւոր խաղաղութեան. *անհայր՝ անմայր՝
չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն ա-
ւուրց և ոչ կատարած կենաց. նմանեալ
որդւոյ Աստուծոյ՝ կայ մնայ քահանայ մշտնջե-
4 նաւոր։ *Արդ՝ տեսէք որպիսի ոք էր սա,
որում և աբրահամ տասանորդս ետ յա-
5 ւարէ անտի՝ նահապետն։ *և որք յորդ-
ւոցն ղևեայ զքահանայութիւն առնուն,
պատուէր ունին տասանորդել զժողո-
վուրդն ըստ օրինացն. այսինքն է՝ զեղ-
բարս իւրեանց՝ թէպէտ և ելեալ իցեն
6 յերանացն աբրահամու։ *Իսկ չհամա-
րեալն յազգս ՚ի նոցանէ՝ տասանորդեաց
զաբրահամ. և զնա՝ որոյ զաւետիսն ըն-
7 կալեալ էր, օրհնեաց։ *Զի առանց
ամենայն հակառակութեան, նուաստն ՚ի լաւէ
8 անտի օրհնեսցի։ *Եւ աստ մարդք մահ-
կանացուք տասանորդս առնուն. բայց
անդ վկայեցաւ՝ թէ կենդանի է։ և որպէս
9 բանից կարգ է ասել. *թէ աբրահամաւ
և ղևի իսկ՝ որ զտասանորդսն առնոյր,
10 տասանորդեցաւ։ *Զի դեռ ևս յերանս
հօր իւրոյ էր՝ յորժամ ընդ առաջ եղև նմա
մելքիսեդեկ։
11 *Իսկ արդ՝ եթէ կատարումն ՚ի ձեռն Է Կ
ղևտացւոց քահանայութեանն էր, քանզի
ժողովուրդն յայն օրէնս դրեցաւ. զինչ
պէ

digitised by A.R.A.R.@

պիտոյ էր ը͞ս կարգին մելքիսեդեկի այ-
լում քահանայի յառնել, եւ ոչ ասել՝
թէ ըստ կարգին ահարոնի: * Իսկ 'ի 12
փոփոխել քահանայութեան, հարկ էր եւ
օրինացն փոփոխումն լինել: * Զի զորմէ 13
այսպէսն ասի՝ յայլմէ ազգէ կալաւ հա-
ղորդութիւն, յորմէ ոչ ոք երբէք եղեւ հա-
ղորդ սեղանոյն: * Որդ յայտ իսկ է, 14
թէ յազգէ յուդայ ծագեաց տ͞ր մեր.
յորմէ ազգէ վ͞ն քահանայից մովսէս ինչ
ոչ ճառեաց: * Եւ եւս առաւել յայտ է՝ 15
թէ ը͞ս նմանութեան մելքիսեդեկի յառնե-
լոց է այլ քահանայ. * որ ոչ ը͞ս մարմնա- 16
ւոր պատուիրանին եղեւ, այլ ը͞ս զօրութե͞
կենացն անվախճանից: * Քանզի վկայե- 17
ցաւ, թէ դու ես քահանայ յաւիտեան
ը͞ս կարգին մելքիսեդեկի: * Արհամար- 18
հութիւն լինէր առաջին պատուիրանին՝
վ͞ն նորին տկարութե͞ եւ անշահութե͞. * Ք͞զի 19
ոչինչ կատարումն գործեցին օրէնքն, եւ
մուտ ազնուական յուսոյն՝ որով մերձե-
նամք առ ա͞ծ: * Եւ այնչափ, զի ոչ ա- 20
ռանց երդման. զի են ոմանք՝ որ առանց
երդման են կացեալ քահանայք: * Բայց 21
սա երդմամբ՝ 'ի ձեռն այնորիկ՝ որ ասացն
'ի նա. երդուաւ տ͞ր՝ եւ ոչ եւս զղջասցի,
դու ես քահանայ յաւիտեան: * Եւ այն- 22
չափ լաւագոյն ուխտի եղեւ երաշխաւոր
յ͞ս: * Եւ բազում են կացեալ քահա- 23
նայք՝ վ͞ն մահու արգել լինելոյ 'ի մշտըն-
ջե-

digitised by A.R.A.R.@

24 ջենաւորել ։ * Իսկ սա վ̅ն յաւիտեան
կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքահա-
25 նայութի̅ն ։ * Ուստի և կենդանի առնել
համօրէն կարող է զմատուցեալսն նովաւ
առ ա̅ծ ․ քանզի միշտ կենդանի է՝ լինել
բարեխօս վասն նոցա ։
26 * Զի այսպիսի իսկ և վայել էր մեզ քա- Ա
հանայապետ, ո̅ր անմեղ անարատ՝ զա-
տեալ՝ի մեղաւորաց, և բարձրացեալ քան
27 զերկինս ․ * որում ո՛չ հանապազ հարկ
է ո̅պ այլոց քահանայապետիցն, նախ վ̅ն
իւրեանց մեղացն պատարագս մատու-
ցանել՝ և ապա վ̅ն ժողովրդեանն ։ իսկ
սա զայն միանգամայն կատարեաց, զի
28 զանձն իւր մատոյց պատարագ ։ * Օրէն-
քըն զմարդիկ կացուցանէն քահանայա-
պետս զգածեալս տկարութ̅բ․ իսկ բանն
երդման յետ օրինացն՝ զորդի, որ յաւի-
տեան կատարեալ է ։

## ԳԼ ։ Ը ։

1 Ու բանից գլուխ խօսիցս՝ այնպիսի ու-
նիմք քահանայապետ, որ նստաւ
ընդ աջմէ մեծութե̅ աթոռոյն յերկինս,
2 * սրբութե̅ցն պաշտօնեայ՝ և խորանին
ճշմարտութե̅, զոր տ̅րն կանգնեաց՝ և
3 ո՛չ մարդ ։ * Զի ա̅մ քահանայապետ վ̅ն
մատուցանելոյ զոհս և զպ̅տրագս կայ․
ուստի հարկ է և նմ̅ ունել ինչ՝ զոր մա-
4 տուցանիցէ ։ * Զի եթէ էր յերկրի,
թեր-

digitised by A.R.A.R.@

Թերևս չէր իսկ քահանայ. զի գոյին՝ որ
մատուցանէին ը՟ օրինացն պատարագ.
* որք առակաւ և օրինակաւ պաշտէին 5
երկնաւորացն. ո՟պ և հրամայեցաւ մովսէ-
սի՝ յորժամ գործելոց էր զխորանն ժամուն.
տեսջիր՝ ասէ, արասցես զա՟մ ը՟ օրինա-
կին՝ որ ցուցաւ քեզ ՚ի լերինն։ * Բայց 6
արդ՝ առատագոյն ևս պաշտաման եհաս
նմ՟, որչափ լաւագոյն ևս ուխտի է միջ-
նորդ՝ որ յառաւել աւետիսն օրինադրե-
ցաւ։ * Զի եթէ առաջինն անարատ էր, 7
ապա երկրորդին տեղի ոչ խնդրէր։ * Նա 8
աւանիկ բամբասէ զն՟ս՝ և ասէ. ահաւա-
սիկ աւուրք եկեսցեն՝ ասէ տ՟ր, և կա-
տարեցից ՚ի վ՟ր տանն ի՟ղի և ՚ի վ՟ր տանն
յուդայ՝ ուխտ նոր. * ոչ ը՟ ուխտին՝ զոր 9
եդի ը՟ հարս ն՟ց՝ յաւուր յորում առի ՚ի
ձեռն՝ հանել զն՟ս յերկրէն եգիպտացւոց.
և զի ն՟ք ոչ կացին յուխտին իմում, և
ես անփոյթ արարի զնոցանէ՝ ասէ տ՟ր ա-
մենակալ։ * Այլ այս է ուխտն՝ զոր ե- 10
դից տանն ի՟ղի յետ աւուրցն այնոցիկ՝ ա-
սէ տ՟ր. տաց զօրէնս իմ ՚ի միտս ն՟ց՝ և ՚ի
սիրտս ն՟ց գրեցից զն՟ս. և եղէց ն՟ց ա՟ծ, 11
և նոքա եղիցին ինձ ՚ի ժողովուրդ։ * Եւ
ոչ ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր զքա-
ղաքակից իւր, և իւրաքանչիւր զեղբայր
իւր, և ասիցեն թէ ծանիր զտ՟ր. զի ա-
մենեքին ծանիցեն զիս ՚ի փոքրկանց մին- 12
չև ՚ի մեծամեծս ն՟ց։ * Զի քաւիչ եղէց
անի-

digitised by A.R.A.R.@

անիրաւութեանց նոցա. և զմեղս նոցա՝ և զանօ-
13 րէնութիւնս այլ ոչ ևս յիշեցից։ *Արդ՝ ա-
սելովն նոր, հնացոյց զառաջինն. և որ
հնանայն և ծերանայ՝ մերձ է յապակա-
նութիւն։

Վ. Ջ.

## Գլ. Թ.

1 Ունել ունէր և առաջինն իրաւունս
պաշտաման յայնժամ զաշխարհական
2 սրբութիւն։ *Զի խորանն առաջին հան-
դերձեցաւ այսպէս. յորում աշտանակն
և սեղանն և հացն նուիրաց՝ որ սրբութիւն
3 կոչէր։ *Իսկ յետ երկրորդ վարագուրին
խորանն՝ որ կոչէր սրբութիւն սրբութեանց.
4 *յորում կայր բուրվառն ոսկի, և արկղն
կտակարանաց պատեալ ներքոյ և արտա-
քոյ ոսկւով. յորում սափորն ոսկի լի մա-
նանայիւ, և գաւազանն Ահարովնի՝ որ
ծաղկեցաւ, և տախտակք կտակարանացն.
5 *և ՚ի վերայ նորա քերովբէքն փառաց՝ որ
հովանի ունէին ՚ի վերայ քաւութեանն. վասն
6 որոյ ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ։ *Իս-
այն ամ իբրև այնպէս հանդերձեալ կայր,
յառաջին խորանն յամենայն ժամ մտանէին
քահանայք զպաշտամունսն կատարել.
7 *բայց յերկրորդն միանգամ ՚ի տար-
ւոջն քահանայապետն. և զայն ոչ ա-
ռանց արեան, զոր մատուցանէր վասն իւր՝
և վասն ժողովրդեանն անգիտութեան։
8 *Զայս յուցեալ Հոգւոյն սրբոյ՝ մինչև
յայտ-

digitised by A.R.A.R.@

յայտնեալ էր ճանապարհն սրբութեանցն .
քանզի դեռ առաջին խորանն ունէր ըզ-
հաստատութիւն . * որ է առակ ժամանա- 9
կին , որ առաջի կայր . յորում պատա-
րագքն եւ զոհքն մատչէին , որք ոչ կա-
րէին ըստ միտս կատարել զպաշտամունսն .
բայց միայն կերակրովք եւ ըմպելեօք,* եւ 10
պէսպէս մկրտութեամբք՝ մարմնոյ արդարու-
թիւքն . որ մինչեւ ՚ի ժամանակս ուղղու-
թեան ՚ի վերայ կային : * Բայց Քրիստոս եկեալ քա- 11
հանայապետ հանդերձելոցն բարեաց՝
մեծաւն եւ կատարելովն՝ եւ անձեռագործ
խորանաւ , այսինքն է՝ որ ոչ յայսց արա-
րածոց , * եւ ոչ արեամբ նոխազաց եւ զ- 12
ուարակաց . այլ իւրով արեամբն եմուտ
միանգամ ՚ի սրբութիւնն՝ յաւիտենականս
գտեալ զփրկութիւն : * Զի եթէ արիւն 13
ցլուց եւ նոխազաց՝ եւ մոխիր երնջոց
ցանեալ՝ զպղծեալսն սրբէր առ ՚ի մար-
մնոյ սրբութիւն . * Որչափ եւս առաւել ա- 14
րիւնն Քրիստոսի , որ ՚ի ձեռն հոգւոյն յաւիտե-
նականի մատոյց զանձն անարատ պատա-
րագ Աստուծոյ , սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց ՚ի
մեռելոտի գործոց անտի՝ պաշտել զԱստուած
կենդանի : * Եւ վասն այնորիկ նորոյ ուխ- 15
տի է միջնորդ . զի յորժամ մահ լինիցի՝
՚ի փրկութիւն վասն առաջին ուխտին յանցա-
նաց , զաւետիս առցեն հրաւիրեալքն ՚ի
ժառանգութիւն յաւիտենից : * Քանզի ուր 16
կտակ է , հարկ է զմահ ՚ի մէջ բերել
ըդ-

digitised by A.R.A.R.@

17 զկտակագրին։* Զի կտակ յետ մահու
հաստատուն է։ ապա թէ ոչ՝ զիա՞րդ
իցէ հաստատուն, մինչ կտակագիրն կեն֊
18 դանի է։* Ուստի և ոչ առաջինն առանց
19 արեան նորոգէր։* Քանզի իբրև պատ֊
մեցաւ ամ պատուիրանք օրինացն՝ ի մով֊
սեսէ՝ ժողովրդեանն, առեալ զարիւն
ցլուցն և նոխազացն, ջրով և բրդով
կարմրով և զոպայիւ, զկտակարանօքն
իսկ և զամ ժողովրդեամբն սրսկեաց,
20 * և ասէ. այս է արիւն կտակին՝ զոր պա֊
21 տուիրեաց ձեզ ած։ * Եւ զխորանն
և զամենայն կահիւ սպասուն նոյնպէս
22 սրսկեաց զարիւնն։ * Եւ գրեթէ ամ
ինչ արեամբն սրբէր ըստ օրինացն. և ա֊
ռանց հեղման արեան չլինէր թողութի։
23 * Ապա հարկ էր օրինաւորացն այնպի֊
սեօքն սրբել. և բուն իսկ երկնաւորացն՝
առաւել ևս պատարագօք քան զնոյնս։
24 * Զի ոչ եթէ ՚ի ձեռագործ սրբութիւն
եմուտ քս յօրինակս ճշմարտութեն. այլ
՚ի բուն իսկ յերկինս, յանդիման լինել
25 երեսացն այ վն մեր։ * Ոչ զի բազում ան֊
գամ մատուցանիցէ զանձն պատարագ՝
ոպ քահանայապետն, որ մտանէր ՚ի սրբ֊
բութի սրբութեցն ամի ամի արեամբն օտա֊
26 րաւ. * ապա թէ ոչ՝ պարտ էր նմ բազում
անգամ չարչարել իսկզբանէ աշխարհի,
բայց արդ ասաւսիկ միանգամ ՚ի կատա֊
րած յաւիտեանց՝ յանարգութի մեղաց



digitised by A.R.A.R.@

իւրով պատարագաւն յայտնեալ է։ *Եւ 27
զոր օրինակ կայ մնայ մարդկան միան֊
գամ մեռանել՝ եւ յետ այնորիկ դատաս֊
տան. *նոյնպէս եւ Քրիստոս միանգամ մատուցեալ 28
պատարագ առ 'ի բառնալոյ զմեղս բազ֊
մաց. իսկ յերկրորդումն առանց մեղաց
յայտնեսցի այնոցիկ, որ ակն ունիցին
նմա հաւատովք 'ի փրկութիւն ։

## ԳԼ. Ժ.

Բ Քանզի զստուեր հանդերձելոց բա֊ 1
րեացն ունէին օրէնքն, եւ ոչ զնոյն
կերպարանս իրացն. ամի ամի զնոյն պատա֊
րագս մատուցանեն ցանգ, որք ոչ են կա֊
րող զմատուցեալսն կատարել. *ապա թէ 2
ոչ՝ դադարէին 'ի մատուցանելոյ, վասն եւ
ոչ մի ինչ այնուհետեւ խիղճ մնայր ունե֊
լոյ պաշտօնէիցն միանգամ սրբեցելոցն.
*այլ անդէն 'ի նմին 'ի յիշատակս մե֊ 3
ղացն կային ամի ամի։ *Քանզի ոչ կա֊ 4
րէր արիւն նոխազացն եւ ցլուց բառնալ
զմեղս։ *Վասն որոյ 'ի մտանելն իւրում 5
յաշխարհ՝ ասէ. զզոհս եւ զպատարագս
ոչ կամեցար, բայց մարմին հաստատե֊
ցեր ինձ. *Զողջակէզս եւ զվասն մեղացն 6
ոչ հաճեցար։ *Յայնժամ ասացի թէ 7
ահաւասիկ եկի. 'ի գլուխ գրոց գրեալ
է վասն իմ, առնել զկամս քո Աստուած։
*Վերագոյնն ասէ, թէ զզոհս՝ եւ ընդ 8
պատարագս՝ եւ զողջակէզս՝ եւ զվասն մե֊
ղացն

digitised by A.R.A.R.@

ղացն ոչ հաճեցար, և ոչ կամեցար՝ որք
9 ըստ օրինացն մատչէին ։ * Ապա ասէ՝
ահաւասիկ գամ առնել զկամս քո
10 ած ։ մերժէ զառաջինն՝ զի զերկրորդն
հաստատեսցէ. *որով կամօք և մեք սըր-
բեցաք՝ ՚ի ձեռն պատարագի մարմնոյն
յսի քսի միանգամ ։ * Եւ ամենայն քա-
11 հանայապետ կայ հանապազորդ ՚ի պաշ-
տաման, և զնոյն պատարագս մատուցա-
նէ բզմ անգամ, որք ոչ երբէք կարօղ են
12 բառնալ զմեղս ։ * Իսկ սա զմին վն մեղաց
մատոյց պատարագ. և միանջենաւոր
13 նստաւ ընդ աջմէ այ ։ * և այսուհետև
ակն ունի՝ մինչև դիցին թշնամիք իւր ՚ի
14 ներքոյ ոտից իւրոց ։ * քանզի միով պա-
տարագաւ կատարեաց զսրբեալսն ՚ի
15 միանջենաւորս ։ * Այլ վկայէ մեզ և
հոգին սբ՝ յետ ասելոյն յառաջագոյն.
16 * եթէ այս է ուխտն՝ զոր եդից ը հարս
նց յետ աւուրցն այնոցիկ, ասէ տր. տաց
զօրէնս իմ ՚ի սիրտս նց, և ՚ի խորհուրդս
17 նց գրեցից զնս ։ * Ապա ասէ՝ թէ զմեղս
նոցա և զանօրէնութիւնս նոցա այլ ոչ ևս
18 յիշեցից ։ * Իսկ ուր թողութիւն է, ոչ
ևս պիտոյ է վն մեղաց պատարագ ։ Վ.Զ
19 * Ունիմք այսուհետև եղբարք՝ համար-
ձակութիւն ՚ի մուտս սրբութեցն արեամբն
20 յսի. * զոր նորոգեաց մեզ ճանապարհ
նորոգ և կենդանի՝ ՚ի ձեռն վարագուրին,
21 այսինքն է՝ մարմնոյ իւրոյ. * և քահանայ
մեծ

digitised by A.R.A.R.@

մեծ ՚ի վերայ տանն այ. * մատիցուք 22
ճշմարիտ սրտիւք՝ լրութեամբ հաւատոյ, լը-
ուացեալ զսիրտս ՚ի խղճէ չարեաց՝ և մը-
կրտեալ զմարմինս ՚ի ջուրն սրբութեան։
* Պինդ կալցուք զխոստովանութիւն ան- 23
շարժ յուսոյն, զի հաւատարիմ է որ խոս-
տացաւն։ * Եւ զգուշասցուք միմեանց 24
յորդորմամբք սիրոյ և գործոյ բարեաց.
* և մի թողցուք զժողովս միմեանց, որպ 25
և սովոր են ոմանք. այլ մխիթարեսցուք,
և այնչափ ևս առաւել՝ որչափ տեսանի-
ցէք զօրն մերձեալ։* Զի կամակար մտօք 26
եթէ յանցանիցեմք՝ յետ ընդունելոյն
գիտութեն ճշմարտութեն՝ այնուհետև ոչ ևս
պիտոյ է վն մեղաց պատարագ. * այլ 27
ահեղ ակնկալութիւն դատաստանին, և
նախանձ հրոյն՝ որ ուտիցէ զհակառա-
կորդսն։ * Արհամարհեալ ուրուք զօ- 28
րէնսն Մովսէսի, առանց ողորմութեց՝
առ երկուք կմ երիւք վկայիւք մեռանէր.
* Իսկ որչափ սաստիկ պատժոյ արժանի 29
համարիցիք զայն, որ զորդին այ առ ոտն
եհար. և զարիւն նորոյ ուխտին խառ-
նակ համարեցաւ՝ որով և սրբեցաւն. և
զհոգին շնորհաց թշնամանեաց։ * Այլ 30
գիտեմք զայն՝ որ ասացն. իմ են վրէժ-
խնդրութիւնք, և ես հատուցից՝ ասէ տր.
և դարձեալ թէ՝ դատի տր զժողովուրդ
իւր։ * Ահ մեծ է անկանել՚ի ձեռս այ 31
կենդանւոյ։

* Արդ՝

digitised by A.R.A.R.@

32 * Արդ՝ յիշեցէք զաւուրսն զառաջինս .
յորս լուսաւորեալք բզմ ձգանց և չար-
33 չարանաց համբերէք . * մերթ 'ի նախա-
տինս և 'ի նեղութիւնս խայտառակեալք ,
մերթ կցորդք այնպիսեաց վաստակաւո-
34 րացն լինել : * Քանզի և ընդ կապեալս
չարչարեցարուք, և զյափշտակութիւն ըն-
չից ձերոց խնդութ ընկալարուք . քանզի
գիտէիք թէ լաւագոյն ևս ստացուածս
ունիք անձանց յերկինս՝ ուր կանն և
35 մնան : * Արդ մի՛ մերժէք 'ի ձէնջ զհա-
մարձակութիւն ձեր, յորում կայ մեծայ
36 վարձուց հատուցումն : * Պիտոյ է ձեզ
համբերութիւն . զի զկամս այ արարեալ
37 հասջիք աւետեացն : * Զի փոքր մւս
ևս քան որչափ՝ որ գալոցն իցէ՝ եկեսցէ,
38 և ոչ յամեսցէ : * Զի արդարն իմ 'ի
հաւատոց կեցցէ . և եթէ յերկմիտս ոք
իցէ , ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ :
39 * Բայց մեք ոչ եթէ երկմտութ եմք 'ի
կորուստ . այլ հաւատովք 'ի փրկութիւն
հոգւոյ :

## ԳԼ. ԺԱ.

1 Զի՞նչ են հաւատք , եթէ ոչ՝ յուսա-
ցելոց իրաց հաստատութիւն, և յան-
2 դիմանութիւն որոց ոչն երևին : * զի նովաւ
3 վկայեցան առաջինքն : * Հաւատովք
իմանամք հաստատեալ զյաւիտեանսն
բանիւ այ , յաներևութից զերևելիս
եղ-

digitised by A.R.A.R.@

եղեւ: *Հաւատովք լաւ պատարագս 4
Հաբէլ քան զԿայէն մատուցանէր այ, ո-
րով վկայեցաւ իսկ արդար լինել. զի ՚ի
վերայ պատարագացն եղեւ նմ վկայութի
յայ. զի թէպէտ և մեռաւ ՚ի նմին, սա-
կայն տակաւին խօսի: *Հաւատովք ե- 5
նովք փոխեցաւ՝ զի մի՛ զմահ ճաշակես-
ցէ. և ո՛չ ուրէք գտանէր, քզի փոխեաց
զնա ած. և յառաջ քան զփոխելն նորա՝
վկայեցաւ հաճոյ լինել այ: *Բայց ա- 6
ռանց հաւատոց անհնար է հաճոյ լինել.
այլ հաւատալ արժան է այնմ որ մերձե-
նայ առ ած՝ թէ է ած. և որ խնդրեն
զնա՝ լինի պարգեւատու: *Հաւատովք 7
առեալ հրաման Նոյի՝ վս չեւես երեւե-
լեացն՝ զահի հարեալ կազմէր զտապանն
՚ի փրկութի տան իւրոյ, որով դատեցաւն
զաշխարհ. և հաւատոյն արդարութե
եղեւ ժառանգաւոր: *Հաւատովք՝ որ 8
աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղեւ ելա-
նել ՚ի տեղին, զոր առնլոց էր ՚ի ժառան-
գութի. ել գնաց՝ և ո՛չ գիտէր յո՛վ եր-
թիցէ: *Հաւատովք պանդխտեցաւ 9
յերկրին աւետեաց իբրեւ յօտարութե.
խորանօք բնակեաց սահակաւ և յակով-
բաւ հանդերձ՝ ժառանգակցօք նոցին
աւետեաց: *Քզի ակն ունէր հիմամբք 10
հաստատելոյ քաղաքին, որոյ ճարտա-
րապետ և արարիչ ած է: *Հաւատովք 11
և ինքն սառա՝ որ ամուլն էր, զօրութի
առնը-

digitised by A.R.A.R.@

առնլոյ զսերմն որդեծնութեան ընդունէր,
և 'ի տարաժամ հասակի ծնանէր. քանզի
հաւատարիմ համարեցաւ զայն՝ որ խոս-
12 տացաւն: * վասն որոյ և 'ի միոջէն ծնա-
նէին, և այն 'ի յանցեալ ժամանակի,
իբրև զաստեղս երկնից բազմութեամբ, և
իբրև զաւազ առ ափն ծովու առանց թը-
13 ուոյ: * Ըստ հաւատոց մեռան ամենե-
քին սոքա, և չև ևս ընկալեալ զաւետի-
սըն. այլ 'ի հեռուստ տեսին զնոսա՝ և ցըն-
ծացան, և խոստովան եղեն՝ եթէ օ-
14 տարք և պանդուխտք են յերկրի: * Զի
որք զայնպիսիսն խօսին, յայտ առնեն՝
15 եթէ գաւառ իւրեանց խնդրեն: * զի եթէ
զայն յիշէին՝ ուստի ելինն, գոյր ժամա-
16 նակ դառնալոյ անդրէն: * Նա աւանիկ
ազնուականի իւրեանց ցանկացեալ են, այս-
ինքն է՝ երկնաւորին. վասն որոյ ոչ ա-
մօթ համարի աստուած՝ կոչել նոցա աստուած. քանզի
17 պատրաստեաց նոցա քաղաք: * Հաւա-
տովք մատոյց աբրահամ 'ի փորձութեան
իւրում զիսահակ պատարագ. և զմիա-
մօրն մատուցանէր, որոյ զաւետիսն ըն-
18 կալեալ էր. * որում ասացաւն, թէ
19 սահակաւ կոչեսցի քեզ զաւակ. * եդ
'ի մտի իւրում թէ և 'ի մեռելոց կարօղ
է յարուցանել աստուած. ուստի և յառակս
20 ընկալաւ զնա: * Հաւատովք՝ վասն հան-
դերձելոց իրաց օրհնեաց իսահակ զյա-
21 կոբ և զեսաւ: * Հաւատովք յակոբ
'ի

digitised by A.R.A.R.@

'ի մեռանել իւրում, զիւրաքանչիւրոջ
յորդւոցն Յովսեփու օրհնեաց, և երկիր
եպագ 'ի ծագ գաւազանի իւրոյ: * Հա- 22
ւատովք Յովսէփ 'ի վախճանել իւրում
յիշեաց զելս որդւոցն Իսրայէլի, և վն
ոսկերաց իւրոց պատուիրեաց: * Հա- 23
ւատովք զՄովսէս իբրև ծնաւ, թաքու-
ցաւ ամիսս երիս 'ի հարց իւրոց. քանզի
տեսին կայտառ զմանուկն, և ոչ զան-
գիտեցին 'ի հրամանէ թագաւորին:
* Հաւատովք Մովսէս իբրև աճեաց՝ ու- 24
րացաւ կոչել որդի դստերն փարաւոնի.
* Լաւ համարեցաւ չարչարել ընդ ժողովր- 25
դեանն այ, քան առ ժամանակ մի վայե-
լել 'ի մեղս: * Կարևոր համարեցաւ ըզ- 26
նախատինսն քի, քան զմեծութիւն գան-
ձուցն եգիպտացւոց. զի հայեցեալ ակն
ունէր վարձուցն հատուցմանն: * Հաւա- 27
տովք թողոյր զերկիրն եգիպտացւոց, և
ոչ երկնչէր 'ի ցասմանէ թագաւորին.
զի զաներևոյթն իբրև զտեսեալ համ-
բերութբ համարեցաւ: * Հաւատովք ա- 28
րար զզատիկն և զհեղումն արեանն. զի
մի սատակիչ անդրանկացն մերձենայցէ
'ի նս: * Հաւատովք անցին ընդ ծովն 29
կարմիր՝ իբրև ընդ ցամաք երկիր. զորոյ
զփորձ առեալ եգիպտացւոցն՝ ընկղմե-
ցան: * Հաւատովք պարիսպքն երիքովի 30
անկան, շուրջ եկեալ զնոքօք զեօթն օր:
* Հաւատովք Ռախաբ պոռնիկ ոչ կորեաւ 31
ընդ

digitised by A.R.A.R.@

ընդ անհաւատսն, որոյ ընկալեալ էր
32 զլրտեսսն խաղաղութբ̃ ։ * Եւ արդ՝
զինչ ևս ասացից. զի չէ́ բաւական ժա-
մանակս պատմելոյ վասն գեդեոնի բա-
րակայ սամփսոնի յեփթայայ՝ դաւթի
33 և սամուելի և այլոց մարգարէիցն.* որք
հաւատովք պարտեցին զթագաւորութիս̃.
գործեցին զարդարութի̃. հասին աւե-
34 տեաց. խցին զբերանս առիւծուց.* շի-
ջուցին զզօրութի̃ հրոյ. ապրեցան 'ի բե-
րանոյ սրոյ. զօրացան 'ի տկարութէ̃.
եղեն զօրաւորք 'ի պատերազմի. առին
35 զբանակս օտարաց ։ * Ընկալան կանայք
'ի յարութէ̃ զմեռեալս իւրեանց. կէսք
կոչկոծեցան՝ և ոչ ևս ընկալեալ զփրկու-
թի̃, զի լաւագոյն յարութեն հասանի-
36 ցեն ։ * Եւ կէսք զտանջանաց և զգանից
զփորձ առին, զկապանաց և զբանտից ։
37 * Քարկոծեցան, սղոցեցան, փորձե-
ցան. սպանմամբ սրոյ մեռան. շրջեցան
լեաշկ մաշկօք՝ և մորթովք այծենեօք.
կարօտեալք, նեղեալք, չարչարեալք.
38 * զորս ոչ արժէ աշխարհս. յանապատի
մոլորեալք՝ և 'ի լերինս՝ և յայրս՝ և 'ի
39 փապարս երկրի ։ * Եւ սոքա ամենեքին
վկայեալք 'ի հաւատոցն, ոչ ևս ընկա-
40 լան զաւետիսն ։ * Այ̃ վ̃ մեր լաւագոյն
համարեալ, զի մի́ առանց մեր կատա-
րեսցին ։



digitised by A.R.A.R.@

## ԳԼ. ԺԲ.

Արդ այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ 1
զմեօք մածեալ ունիմք զբազմութիւն
վկայից, զհպարտութիւն զամ ՚ի բաց ըն-
կեսցուք՝ եւ զմեղս կարեւորս. համբերու-
թեամբ ընթասցուք ՚ի պատերազմ՝ որ ա-
ռաջի կայ մեզ: * Հայեսցուք ՚ի զօրագլ- 2
լուխն հաւատոց՝ եւ ՚ի կատարիչն յս. որ
փոխանակ ուրախութեանն՝ որ նմա առաջի
կայր, յանձն առ զխաչն, արհամար-
հեաց զամօթ, նստաւ ընդ աջմէ աթոռոյն
այ: * Աղէ՝ ածէք զմտաւ, որ զայսպի- 3
սի համբերութիւն ՚ի մեղաւորաց հակառա-
կութիւն անտի կրեաց. զի մի աշխատ լինի-
ջիք անձամբք ձերովք՝ եւ լքանիցիք:
* Ո՛չ եւ՛ս արեամբ չափ պատերազ- 4
մեալք՝ հակառակ կացէք մեղացն. * եւ 5
մոռացարուք զմխիթարութիւնն, որ ընդ
ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի:
Գ Որդեակ իմ՝ մի լքանիր ՚ի խրատու տն.
եւ մի վհատիցիս՝ յանդիմանեալ ՚ի նմա-
նէ: * Զի զոր սիրէ տր՝ խրատէ, տան- 6
ջէ զամ որդի՝ զոր ընդունի: * ՚Ի խրա- 7
տու համբերութեան կայք, իբրեւ յորդիս
մատուցեալ է ՚ի ձեզ ած. ո՞ր որդի է՝
զոր ո՛չ խրատիցէ հայր: * Զի եթէ ա- 8
ռանց խրատու լինիցիք, որում ամենեքին
բաժանորդք եղեն. ապա խորթք իցէք՝
եւ ո՛չ որդիք: * Զի եթէ ՚ի մարմնա- 9
ւոր

digitised by A.R.A.R.@

ւոր հարցն մերոց՝ զոր ունիմք խրատիչս՝
պատկառեմք, ո՞րչափ ևս առաւել հնա-
զանդեսցուք հօրն հոգւոց՝ և կեցցուք:
10* Զի սոքա առ սակաւ ժամանակս ըստ
կամաց իւրեանց խրատէին. իսկ նա վասն
օգտի, առ 'ի ընդունելոյ զսրբութիւն նորա:
11* Ամենայն խրատ առ ժամանակն ոչ
ուրախութեան թուի՝ այլ տրտմութեան. բայց
յետոյ պտուղ խաղաղութեան նոցա կրթե-
12 լոցն հատուցանէ յարդարութիւն: * Վասն
որոյ զձեռս լքեալս՝ և զծունկս կթոտս
13 հաստատեցէք. * և շաւիղս ուղիղս ա-
րարէք ոտից ձերոց. զի մի՛ որ կաղն իցէ՝
գլորիցի, այլ մանաւանդ բժշկեսցի:
14* Զխաղաղութեան զհետ երթա՛յք ընդ ամե-
նեսին՝ և զսրբութեան. առանց որոյ ոչ ոք
15 տեսանիցէ զՏէր: * Զգո՛յշ լերուք՝ գու-
ցէ ոք յետնեալ գտանիցի 'ի շնորհացն
Աստուծոյ: Մի՛ ոք արմատ դառնութեան 'ի վեր
երևեալ նեղիցէ, և նովաւ բազումք պղծի-
16 ցին: * Մի՛ ոք պոռնիկ և պիղծ իբրև
զեսաւ. որ ընդ միոյ կերակրոյ զանդրան-
17 կութիւնն վաճառեաց: * գիտէ՛ք զի թէ-
պէտև յետոյ կամեցաւ ժառանգել զօրհ-
նութիւնն, խոտան գտաւ, զի ապաշխարու-
թեան տեղի ոչ եգիտ. թէպէտ և արտաս-
ւօք խնդրեաց զնա:
18* Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօ- Դ
շափելի, որ հրով վառեալ էր՝ և միգով
և մառախղով և խաւարաւ և մթով.

* ուր

digitised by A.R.A.R.@

* ուր փողն հնչէր և բարբառ պատգա- 19
մացն. ուստի՝ որք լուանն՝ հրաժարեցին,
զի մի՛ կրկնեսցի առ նոսա բանն: * Քանզի 20
ոչ հանդարտէին հրամանին. Թէպէտ
և գազան մերձենայր 'ի լեառն՝ քարկոծ
լինէր: * Եւ այնպէս ահագին էր տե- 21
սիլն, զի և Մովսէս ասէր, եթէ զահի
հարեալ եմ և դողամ: * Այլ մատու- 22
ցեալ էք 'ի Սիոն լեառն և 'ի քաղաք այ
կենդանւոյ՝ յեէմ յերկինս, և 'ի բիւ-
րաւոր բանակս հրեշտակաց, * և յեկե- 23
ղեցիս անդրանկաց գրելոց յերկինս, և
առ դատաւորն ամենեցուն ած, և յո-
գիս արդարոց կատարելոց. * և 'ի նորոգ 24
կտակարանաց միջնորդն յս, և 'ի հե-
ղումն արեան նորա՝ որ առաւել խօսի
քան զհաբելին:
* Զգոյշ լերուք գուցէ հրաժարիցէք 25
յայնմանէ՝ որ խօսեցաւն. զի եթէ նո-
քա ոչ կարացին զերծանել հրաժարեալք
յայնմանէ՝ որ յերկրին հրաման տայր.
որչափ ևս առաւել մեք, եթէ յերկնա-
ւորէն թիկունս դարձուցանիցեմք: * Ո- 26
րոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ.
և այժմ խոստացեալ է՝ և ասէ. միւսան-
գամ շարժեցից ոչ միայն զերկիր՝ այլ և
զերկինս: * Այլ միւսանգամն յայտ 27
առնէ զշարժելոցն իբրև զեղելոց փո-
փոխումն, զի հաստատունն կացցեն ան-
շարժքն: * Վասն որոյ թագաւորութիւն ան- 28

շարժ

digitised by A.R.A.R.@

շարժ ընկալեալ, ունիմք կալցուք զշնորհսն,
որով պաշտեմք զԱծ հաճութբ՝ ահիւ և
29 դողութբ ․ * քանզի Ած մեր հուր ծա-
խիչ է ։

## ԳԼ․ ԺԳ․ ։

1 Եղբայրասիրութիւն հաստատեսցի առ
2 ձեզ։ * Զօտարասիրութիւն մի՛ մոռա-
նայք ․ զի այնու ոմանք յանգէտս ընկա-
3 լան զհրեշտակս։ * Յո՛ւշ լիցին ձեզ կա-
պեալքն՝ որպէս թէ դուք ընդ նոսին կապեալ ի-
ցէք ․ և չարչարեալքն, որպէս և դուք իսկ
4 մարմնաւոր էք։ * Պատուական է ամուս-
նութիւն ամենևին՝ և սուրբ անկողինք ․
բայց զշունս և զպոռնիկս դատի Ած ։
5 * Լերուք անարծաթասէրք լինիցիք, բա-
ւական համարել որչափ ինչ ՚ի ձեռս ի-
ցէ ․ քանզի ինքն իսկ ասաց ․ ո՛չ թողից
6 զքեզ՝ և ո՛չ ընդ վայր հարից ․ * որպէս համար-
ձակ լիցուք ասել ․ Տէր է իմ օգնական ,
և ես ո՛չ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ ։
7 * Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան
ձեզ զբանն Այ ․ հայեցեալք յելս գնա-
ցից նց՝ նմանօղք եղերուք հաւատոյն ։
8 * Յս Քս երէկ և այսօր, նոյն և յաւի-
9 տեանս ։ * Յուսմունս պէսպէս և յօ-
տարաձայնս մի՛ դանդաչէք ․ զի լաւ է շնոր-
հօք հաստատել զսիրտ՝ և ո՛չ կերակ-
րովք ․ որովք ո՛չինչ օգտեցան՝ որ այն-
պէս գնացին ։

* Ու-

digitised by A.R.A.R.@

ե * Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին 10
իշխանութիւն ճաշակել, որք պաշտեն ըզ-
պաշտօն խորանին։* Զի որոց անասնոց 11
մատչէր արիւնն 'ի սրբութիւնս վն մեղաց
'ի ձեռն քահանայապետին, նոցուն մար-
մինքն այրէին արտաքոյ բանակին։ * Վն 12
որոյ և յս՝ զի սրբեսցէ իւրով արեամբն
զժողովուրդն, արտաքոյ դրանն չարչա-
րեցաւ։ * Արդ՝ եկա՛յք ելցո՛ւք առ նա 13
արտաքոյ բանակին, առեալ յանձն ըզ-
նախատինս նր։ * Զանզի ոչ եթէ ու- 14
նիմք քաղաք՝ որ աստէն մնալոց իցէ, այլ
զհանդերձեալսն խնդրեմք։ * Արդ՝ 'ի 15
ձեռն նր մատուսցո՛ւք պատարագ օրհ-
նութեան յամ ժամ այ. այսինքն է՝ զպը-
տուղ շրթանց խոստովանելոց յանուն նո-
րա։* Զբարերարութիւն և զհաղորդութիւն 16
մի՛ մոռանայք, զի ը այնպիսի պատարագս
հաճի այ։ * Ունկնդիր լերուք առաջ- 17
նորդաց ձերոց, և հպատա՛կ կայջիք նց.
զի նոքա տքնին վն ոգւոց ձերոց՝ որպ թէ
համարս տալոց իցեն ը ձեր. զի խնդու-
թբ արասցեն զայս և մի՛ յոգւոց հանե-
լով. զի այն ոչ յօգուտ ձեր է։
կիր *Աղօթս արարէք վն մեր. զի հաստա- 18
տեալ գիտեմք եթէ բարւոք միտս ու-
նիմք. յամի կամիմք բարւոք գնացս ցու-
ցանել։ *Առաւել աղաչեմ՝ զի զայս 19
առնիցէք, զի վաղագոյն պատսպարեցայց
ձեզ։ * Այլ այ խաղաղութեան որ եհան 'ի 20
մե-

digitised by A.R.A.R.@

մեռելոց զհովիւն հօտից զմեծն արեամբ
յաւիտենական ուխտին զՏր մեր Յս,
21 * Հաստատեսցէ զձեզ 'ի գործս բարու-
թե՛՝ առնել զկամս նորա․ և արասցէ 'ի
մեզ զհաճոյսն առաջի իւր 'ի ձեռն Յի
Քի․ որում փառք յաւիտեանս․ ամէն։
22 * Աղաչեմ զձեզ եղբարք՝ անսալ բանիս
մխիթարութե․ քանզի սակաւուք գրեցի
23 ձեզ ։ * Եւ ճանաչէք զեղբայրն մեր ըզ-
տիմոթէոս զարձակեալն առ ձեզ․ Ը ո-
րում, եթէ վաղագոյն գայցէ՝ տեսից ըզ-
24 ձեզ ։ * Ողջոյն տաջիք ամենայն առաջ-
նորդաց ձերոց, և ամենայն սրբոց ։ Ող-
ջոյն տան ձեզ՝ որ 'ի կողմանս Իտալիա-
25 ցւոց են ։ * Շնորհք Ը ամենեսին ձեզ․
ամէն ։

Առ Եբրայեցիս՝ գրեցաւ յԻտալիայ 'ի ձեռն
Տիմոթեայ ։



digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ
## ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
## ՅԱԿՈՎԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
### ԳԼ. Ա.

ԱԴ ՅԱԿՈՎԲՈՍ ԱՍՏՈՒ- 1
ծոյ և տն̃ յսի քսի ծառայ.
երկոտասան ազգացդ որ 'ի
սփիւռս էք՝ ողջոյն: * Զամենայն ու- 2
րախութեան արժանի համարիջիք եղ-
բարք, յորժամ 'ի պէսպէս փորձութեանց
'ի մէջ անկանիջիք: * Գիտասջիք զի 3
հանդէս ձերոյ հաւատոյն յօրինեալ
գործէ զհամբերութիւն: * Իսկ համբերու- 4
թիւն գործ կատարեալ ունիցի, զի իցէք
ողջանդամք և կատարեալք, և ոչ իւիք
նուազեալք: * Ապա թէ ոք 'ի ձէնջ 5
իցէ նուազեալ յիմաստութենէ, խնդրեսցէ
յԱյ, որ տայ ամենայն առատապէս՝ և ոչ
նախատէ. և տացի նմա: * Բայց խնդ- 6
րեսցէ հաւատովք՝ և մի երկմտեսցէ.
զի որ երկմիտն է՝ նման է հողմակո-
ծեալ և տատանեալ ալեաց ծովու:
* Մի՛ ակնկալցի մարդն այն առնուլ 7
ինչ յԱյ. * զի այր երկմիտ՝ առանց 8
հաստատութեան է յամենայն ճանապարհս
իւր:

digitised by A.R.A.R.@

9 իւր ։ * Պարծեսցի եղբայր խոնարհ ՚ի
10 բարձրութ՟ի իւր, * և որ մեծատունն իցէ
՚ի խոնարհութ՟ի իւր . քանզի երբև զծա֊
11 ղիկ խոտոյ անցցէ . * զի ծագեաց արև
հանդերձ խորշակաւ՝ և ցամաքեցոյց ըզ֊
խոտն, և թօթափեցաւ ծաղիկն ն՟ր, և
կորեաւ վայելչութ՟ի երեսաց ն՟ր . նոյն֊
պէս և մեծատունն հանդերձ շահիւքն
12 իւրովք թարշամեսցի ։ * Երանեալ է այր
որ համբերիցէ փորձանաց . զի եթէ ըն֊
տիր եւս գտանիցի , առցէ զպսակն կե֊
նաց՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ։
13 * Մի ոք որ ՚ի փորձութ՟ե իցէ, ասիցէ՝ {Աւ}
թէ յԱ՟յ փորձիմ . զի Ա՟ծ անփորձ է չա֊
14 րեաց . փորձէ նա և ոչ զոք . * իւրաքան֊
չիւրոք փորձի առ յիւրոցն ցանկութ՟եց
15 ձգեալ և պատրեալ ։ * Ապա այնուհե֊
տև ցանկութ՟ին յղացեալ՝ զմեղս ծնանի .
16 և մեղքն կատարեալ զմահ ծնանին ։ * Մի
17 խաբէք եղբարք իմ սիրելիք . * զի ա՟մ
տուրք բարիք՝ և ա՟մ պարգևք կատա֊
րեալք ՚ի վերուստ են իջեալ առ ՚ի հօրէն
լուսոյ . յորում չիք փոփոխումն՝ և կ՟մ
18 շրջելոյ ստուեր ։ * Կամեցեալ ծնաւ ըզ֊
մեզ բանիւ ճշմարտութ՟են՝ լինել մեզ
19 պտուղ ինչ ստացուածոց նորա ։ * Գի֊
տասջիք եղբարք իմ սիրելիք ։ Եղիցի
ա՟մ մարդ արագ առ ՚ի լսել, և ծանր առ
՚ի խօսել, և ծանր առ ՚ի բարկանալ ։
20 * Զի բարկութ՟ի մարդոյ զարդարութ՟ի ա՟յ



digitised by A.R.A.R.@

ոչ գործէ ։ *Որով՝ի բաց թօթափեալ 21
զամ աղտեղութիւն և զյաւելուածս չա-
րեաց, հեզութբ ընդունիջիք զբանն ըն-
դաբոյս. որ կարօղն է կեցուցանել զո-
գիս ձեր։ *Լինիջիք առնելիք բանին, և 22
մի լսելիք միայն համարեսջիք զանձինս։
*Զի թէ ոք լսօղ միայն իցէ բանին՝ և 23
ոչ առնելի, նման է նա մարդոյ՝ որ պը-
շուցեալ հայիցի զերեսս իւր՝ որ ծնա-
նիցին 'ի հայելւոջ. *զի հայեցեալ եւեթ 24
զինքն՝ և զանց արար, և անդէն մոռա-
ցաւ թէ որպիսի ոք էր ։ *Իսկ որ յա- 25
ռեալ 'ի կատարեալ օրէնս ազատութե
հայիցի՝ և 'ի նմին կացցէ, ոչ եղև նա լը-
սօղ մոռացութե՝ այլ առնելի գործոյն։ նա՝
յառնելն իւրում լիցի երանելի ։ *Ե- 26
թէ ոք կամիցի կրօնաւոր լինել՝ և ոչ
սանձահարիցէ զլեզու իւր՝ այլ զբաղե-
ցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայ-
րապար է կրօնաւորութիւն ։ *Կրօնաւո- 27
րութի սուրբ և անարատ՝ առ 'ի յայ և 'ի
հօրէ՝ այս է, այցելու լինել որբոց և այ-
րեաց 'ի նեղութե իւրեանց, անարատ
պահել զանձն յաշխարհէ ։

## ԳԼ. Բ.

Ա.Զ Եղբարք իմ, մի աչառութբ ունիցիք ըղ- 1
հաւատսն տն մերոյ յի քսի, որ տրն
է փառաց ։ *Եթէ մտանիցէ 'ի ժողո- 2
վուրդ ձեր այր՝ որ ունիցի մատանի ոսկի
և

digitised by A.R.A.R.@

և հանդերձս պայծառս, մտանիցէ անդր
և աղքատ ոք՝ 'ի հանդերձս աղտեղիս,
3 * հայիցիք ընդ այն՝ որ ունիցի զհան-
դերձն պայծառս, և ասիցէք՝ եթէ դու
նիստ աստ պատուով. և ցաղքատն ասի-
ցէք՝ եթէ յոտն կաց դու այդր, կամ թէ՝
էկ նիստ առ պատուանդանիս իմում:
4 * Ո՞չ խղճիցէք յանձինս՝ և լինիցիք դա-
5 տաւորք չարեաց խորհրդոց: * Լուա-
րո՛ւք ինձ եղբարք իմ սիրելիք, ո՞չ ապա-
քէն ա̄ծ ընտրեաց զաղքատս աշխարհիս,
որ են մեծատունք հաւատովք, և ժա-
ռանգաւորք արքայութե̄ն՝ զոր խոստա-
6 ցաւ սիրելեաց իւրոց: * և դուք անար-
գէք զաղքատս: Ո՞չ մեծատունքն յաղ-
թահարեն զձեզ՝ և նոքա քարշեն զձեզ
7 'ի դատաստան: * Ո՞չ նոքա հայհոյեն
զբարւոք անունն՝ որ կոչեցեալ է 'ի վ̄ր
8 ձեր: * Ապա թէ զօրէնսն կատարիցէք
զարքունականս ը̄ստ գրոց, եթէ սիրեսցես
զընկեր քո իբրև զանձն քո, բարւոք առ-
9 նէք: * Իսկ եթէ աչառիցէք, մեղս գոր-
ծէք՝ յանդիմանեալք յօրինացն իբրև օ-
10 րինազանցք: * Որ ոք զա̄մ օրէնսն պա-
հիցէ, և միով իւիք ինչ գթիցէ, եղև
11 ա̄մ օրինացն պարտապան: * Զի որ ա-
սացն՝ թէ մի՛ սպանանիցես, ասաց թէ և
մի՛ շնայցես. զի եթէ սպանանիցես ո՛չ՝
բայց շնայցես, եղեր յանցաւոր օրինացն:
12 * Այնպէս խօսեցարո՛ւք՝ և այնպէս ա-

րա-

digitised by A.R.A.R.@

բարէք, որպէս զի ազատութեան օրինօքն իցէք
դատելոց։ *Զի անողորմ դատաստան 13
լինելոց է այնմ, որ ոչ առնիցէ զողոր-
մութիւն. քանզի բարձրագլուխ պարծի ո-
ղորմութիւն առ դատաստանաւն։
Առ *Զի՞նչ օգուտ իցէ եղբարք իմ, եթէ 14
ասիցէ ոք հաւատս ունել՝ եւ գործս ոչ
ունիցի. միթէ կարիցէ՞ն հաւատքն ա-
պրեցուցանել զնա։ *Եթէ եղբայր ոք 15
կամ քոյր՝ իցեն մերկ կամ կարօտեալ ա-
ւուրն կերակրոյ, *ասիցէ ոք 'ի ձէնջ ցնո- 16
սա. երթայք խաղաղութեամբ, ջեռարուք եւ
յագեցարուք. եւ տայցէք ոչ նոցա զպէտս
մարմնոյ, զի՞նչ օգուտ իցէ։ *Այնպէս 17
եւ հաւատք եթէ գործս ոչ ունիցին, մե-
ռեալ են առանձինն։ *Այլ թերեւս ա- 18
սիցէ ոք. եթէ դու հաւատս ունիս՝ եւ
ես գործս ունիմ. ցոյց ինձ զհաւատսն
քո առանց գործոց, եւ ես ցուցից քեզ 'ի
գործոցն իմոց զհաւատս։ *Դու հա- 19
ւատաս՝ զի մի է Աստուած, բարւոք առնես.
եւ դեւք հաւատան եւ սարսեն։ *Կամի՞ս 20
գիտել ո՛վ մարդ մնոտի, զի հաւատք ա-
ռանց գործոց դատարկ են։ *Աբրահամ 21
հայր մեր ո՞չ ապաքէն 'ի գործոց արդա-
րացաւ՝ հանել 'ի սեղան զորդին իւր զի-
սահակ պատարագ։ *Տեսանես՝ զի հա- 22
ւատքն եղեն գործակից գործոց նորա. եւ
'ի գործոց անտի հաւատքն կատարեցան։
*Եւ կատարեցաւ գիրն՝ որ ասէ. հա- 23
ւա-

digitised by A.R.A.R.@

ւատաց Աբրահամ յԱծ, և համարեցաւ
նմա յարդարութի. և կոչեցաւ բարեկամ
24 Այ։ *Տեսանէ՞ք՝ զի 'ի գործոց արդարա-
նայ մարդ՝ և ո՛չ 'ի հաւատոց միայն։
25 *Սոյնպէս և Ռախաբ պոռնիկ՝ ո՞չ ապա-
քէն 'ի գործոց արդարացաւ, ընկալեալ
զլրտեսսն՝ և ը այլ ճանապարհ արձա-
26 կեաց։ * Զի որպէս մարմին առանց
հոգւոյ մեռեալ է, սոյնպէս և հաւատք
առանց գործոց մեռեալ են։

## ԳԼ. Գ։

1 Մի՛ բազում վարդապետք լինել եղ- Բ Կ
բարք իմ, գիտասջի՛ք՝ զի մեծ դա-
2 տաստան ընդունելոց եմք. *Քզի բզմ
ինչ յանցանեմք ամենեքեան։ Եթէ
ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա է մարդ
կատարեալ, որ կարօղն է սանձահարել
3 զամ մարմին իւր։ *Տես զի ձիոց սանձս
'ի բերան դնեմք՝ առ անսալոյ նց մեզ, և
4 զամ մարմինս նց նուաճեմք։ *Ահաւա-
սիկ և նաւք որպիսի՛ ինչ են, և 'ի սաս-
տիկ հողմոց վարին. և փոքր թեւովն շըր-
ջին՝ յոր կոյս և միտք ուղղչին կամիցին։
5 *Սոյնպէս և լեզու փոքր ինչ անդամ
է՝ և մեծամեծս բարբառի. ահա և սա-
կաւ ինչ հուր զորպիսի՛ անտառս հրդե-
6 հէ։ *Եւ լեզու հուր՝ զարդ անիրաւ-
ութե, լեզու հաստատեալ է յանդամս
մեր, որ զամ մարմինն ապականէ, և
վա-

digitised by A.R.A.R.@

վառէ հրով զանիւ ծննդեան, եւ բորբո-
քեալ տոչորի 'ի գեհենի ։ * Ամենայն 7
բնութի գազանաց՝ եւ թռչնոց եւ սողնոց՝
եւ որ 'ի ծովու են, հնազանդեալ է՝ եւ
հնազանդի մարդկեղէն բնութե ։ * Բայց 8
զլեզու մարդկան ոչ՛ք կարէ հնազան-
դել՝ զչարն եւ զանկարգ՝ եւ զլի թունոք
մահաբերին ։ * Նովաւ օրհնեմք զՏէրն 9
եւ զՀայր, եւ նովաւ անիծանեմք զմար-
դիկ՝ որ ըստ նմանութե այ արարան ։ * 'Ի 10
նմին բերանոյ ելանեն օրհնութիք եւ ա-
նէծք ։ ո՛չ է պարտ եղբարք իմ այդ
այսպէս լինել ։ * Միթէ աղբիւր ան- 11
դստին 'ի միոյ ականէ բղխիցէ քաղցր
եւ դառն ։ * Միթէ մարթ իցէ եղ- 12
բա՛րք իմ՝ թզենւոյ ձէթ բերել, կամ
որթոյ՝ թուզ, եւ ո՛չ աղտաղտին տեղւոյ
ջուր քաղցր առնել ։
ԲԲ * Ո՞վ իցէ իմաստուն եւ հանճարեղ 'ի 13
ձեզ, ցուցցէ 'ի բարւոք գնացից զգործս
իւր հեզութբ իմաստութեն ։ * Ապա ե- 14
թէ նախանձ՝ եւ դառնութի եւ հակառա-
կութի ունիցիք 'ի սիրտս ձեր, մի՛ պարծիք
սուտ առնել զճշմարտութին ։ * Ո՛չ է 15
իմաստութիս այս իջեալ 'ի վերուստ, այլ
երկրաւոր՝ շնչաւոր՝ եւ դիւական ։ * զի 16
ուր հեռ եւ նախանձ, անդ է անկարգու-
թի՝ եւ ամ իրք չարք ։ * Իսկ վերին ի- 17
մաստութի, նախ զի սուրբ է՝ ապա խա-
ղաղարար, հեզ՝ դիւրահաւան՝ լի ողոր-
մու-

digitised by A.R.A.R.@

մութբ՟ եւ պտղովք բարեաց, անխտիղծ,
18 առանց կեղծաւորութե՟ ։ *Պտուղ ար-
դարութե՟ խաղաղութբ՟ սերմանի այնոցիկ՝
որ առնեն զխաղաղութի՟ ։

## ԳԼ. Դ.

1 Ուստի՞ պատերազմունք՝ եւ ուստի՞ կռ-
ուիւք 'ի ձեզ. ո՞չ յայսպիսի ցանկու-
թեանց ձերոց՝ որ զօրացեալ են յանդամս
2 ձեր ։ *Ցանկանայք՝ եւ ո՛չ ունիք. սպա-
նանէք եւ նախանձիք՝ եւ ո՛չ կարէք հասա-
նել. պատերազմիք կռուիք՝ եւ ո՛չ ունիք,
3 վ՟ զի ո՛չ խնդրէք ։ *Խնդրէք՝ եւ ո՛չ առ-
նուք, վասն զի չարաչար խնդրէք. զի
արդէն 'ի ցանկութիւս ձեր մաշեսջիք ։
4 *Շնացողք՝ ո՞չ գիտէք՝ զի սէր աշխար-
հիս՝ այսորիկ թշնամութի՟ է առ ա՟ծ. զի
որ ոք կամիցի սիրել զաշխարհ՝ թշնամի
5 առնէ զանձն իւր ա՟յ ։ *Կամ թէ վայ-
րապար համարիցիք՝ զոր ասէ գիրն. առ
նախանձ ինչ՝ որում փափաքէ հոգին՝ որ
6 բնակեաց 'ի մեզ, *տալ զառաւել շը-
նորհսն ։ վ՟ որոյ ասէ. ա՟ր ամբարտա-
ւանից հակառակ կայ, տայ շնորհս խո-
նարհաց ։
7 *Հնազանդեցարո՛ւք այսուհետեւ ա՟յ, եւ ԲԳ
կացէ՛ք հակառակ չարախօսին. եւ լիցի
8 փախստական առ 'ի ձէնջ ։ *Մերձեցա-
րո՛ւք առ ա՟ծ՝ եւ մերձեսցի առ ձեզ ։ Սրր-
բեցէ՛ք զձեռս մեղաւորք, եւ ուղի՛ղ ա-
րա-

digitised by A.R.A.R.@

րարէք զսիրտս՝ երկմիտք։ *Տառապե- 9
ցարո՛ւք՝ սգացարո՛ւք և լացէ՛ք. ծաղր ձեր
'ի սուգ դարձցի, և ուրախութ͞ի ձեր 'ի
տրտմութ͞ի։ *Խոնարհեցարո՛ւք առաջի 10
տ͞ն՝ և բարձրացուսցէ զձեզ։ *Մի՛ բամ- 11
բասէք զմիմեանս եղբարք. որ բամբա-
սէ զեղբայր՝ կամ դատի զեղբայր իւր,
զօրէնսն բամբասէ՝ և զօրէնսն դատի.
իսկ եթէ զօրէնսն դատիցիս՝ ոչ առնելի
օրինացն ես՝ այլ դատաւոր։ *Մի՛ է օ- 12
րէնսդիր և դատաւոր՝ որ կարօղն է փր-
կել և կորուսանել։ *Դու ո՞ ես՝ որ դա- 13
տիս զընկերն։ Ահաւասիկ էն, որ ա-
սեն. այսօր՝ և վաղիւ երթիցուք յայս ա-
նուն քաղաք, եղիցուք անդ տարի մի,
վաճառեսցուք՝ և շահեսցուք. *որք ոչ 14
գիտէք զվաղիւն, *որպիսի՞ ինչ են 15
կեանք ձեր. զի իբրև զմրրիկ էք, որ առ-
սակաւ մի երևեալ՝ և ապա ապականել։
փոխանակ զի ասէիք՝ եթէ տ͞ր կամեսցի՝
և կեցցուք, արասցուք զայս ինչ՝ կամ
զայն։ *Իսկ արդ՝ պարծիք յամբարտա- 16
ւանութ͞ե ձերում. ա͞մ ինչ այսպիսի պար-
ծանք չարութ͞ե են։ *Որոք գիտիցէ զբա- 17
րին՝ և ոչ առնիցէ, մեղք են նմա։

## Գլ. Ե.

ԲԴ Արդ՝ այսուհետև մեծատունք լացէ՛ք 1
և ողբացէ՛ք 'ի վ͞ր թշուառութ͞եցն, որ
գալոց են 'ի վ͞ր ձեր։ *Զի մեծութիւն 2
ձեր

digitised by A.R.A.R.@

ձեր յոչինչ է, և հանդերձք ձեր կերա-
3 կուր ցեցոյ։ *Արծաթ ձեր և ոսկի ժան-
գահար, և ժանգ նց՟ լիցի ձեզ 'ի վկայ-
ութի՟ւ, և կերիցէ զմարմինս ձեր։ Իբրև
4 զհուր գանձեցէք աւուրցն յետնոց։ *Ա-
հաւասիկ վարձք մշակաց՝ որ գործեն
զանդս ձեր առ ձեզ են. զրկեալն 'ի ձէնջ
աղաղակէ, և բողոք հնձողացն եհաս
5 յականջս տն՟ զօրութե՟ց ։ *Փափկացայք
'ի վ՟ր երկրի՝ և զբօսայք. սնուցէք զսիր-
6 տս ձեր իբրև աւուր սպանման։ *Զըր-
կեցիք սպանիք զարդարն, որ ոչ կայր ձեզ
7 հակառակ։ *Երկայնամիտ լերուք եղ-
բարք իմ մինչև 'ի գալուստն տն՟. ահա
մշակ երկայնամտեալ սպասէ պատուա-
կան պտղոյն երկրի, մինչև առցէ զկա-
8 նուխ և զանագան։ *Երկայնամտեցէք
և դուք, և հաստատեցէք զսիրտս ձեր.
9 զի գալուստն տն՟ մերձեալ է։ *Մի տըրտ-
մեցուցանէք զմիմեանս եղբարք, զի մի
դատիցիք. ահաւասիկ դատաւորն առ
10 դուրս կայ։ *Օրինակ առէք եղբարք՝
չարչարանաց և երկայնմտութե՟ն զմարգա-
11 րէսն, որ խօսեցան յանուն տն՟։ *Ահա-
ւասիկ երանեմք համբերողաց. զհամ-
բերութիւն յոբայ լուարուք՝ և զկատա-
րումն տն՟ տեսէք. զի բազմագութ է տր՟՝
և ողորմած։
12 *Յառաջ քան զամ՟ ինչ եղբարք իմ, մի Բե
երդնուցուք՝ մի յերկինս՝ մի յերկիր՝ մի



digitised by A.R.A.R.@

յայլ ինչ երդումն, այլ եղիցի ձեր այոն
այո, և ոչն՝ ոչ. զի մի՛ ՚ի կեղծաւորութիւն
ինչ անկանիցիք: *Վշտանայցէ ոք ՚ի 13
ձէնջ, յաղօթս կացցէ. բերկրեսցի ոք,
սաղմոս ասասցէ: *Հիւանդանայցէ ոք 14
՚ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն՝
և արասցեն ՚ի վ՛ր ն՛ր աղօթս, օծցեն իւ-
ղով յանուն տ՛ն. *և աղօթքն հաւա- 15
տովք փրկեսցեն զաշխատեալն, և յա-
րուսցէ զնա տ՛ր. և եթէ մեղս ինչ իցէ
գործեալ՝ թողցի նմա: *Խոստովան ե- 16
ղերուք միմեանց զմեղս, և աղօթս արա-
րէք ՚ի վ՛ր միմեանց՝ ո՛պ զի բժշկեսջիք.
քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդա-
րոյ յօգնականութ՛ն: *Եղիա մարդ էր 17
իբրև զմեզ չարչարելի. և յաղօթս ե-
կաց՝ և ոչ տեղաց յերկիր զերիս ամս և
զվեց ամիս: *Եւ դարձեալ եկաց յա- 18
ղօթս՝ և ետուն երկինք զանձրև՝ և բու-
սոյց երկիր զպտուղ իւր: *Եղբարք իմ, 19
եթէ ոք ՚ի ձէնջ մոլորեսցի ՚ի ճշմարտութ՛է
ճանապարհէն՝ և դարձուսցէ ոք զնա.
*գիտասցէ, զի որ դարձուսցէ զմեղա- 20
ւորն ՚ի մոլորութ՛է ճանապարհէն իւրմէ,
փրկեսցէ զոգի իւր ՚ի մահուանէ՝ և ծած-
կեսցէ զբազմութ՛ի մեղաց:



digitised by A.R.A.R.@

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

# ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌԱՋԻՆ։

## ԳԼ. Ա.

1 Պետրոս առաքեալ յի̃ի ք̃ի, ընտրե- Բջ
լոցդ նժդեհից, որ 'ի սփիւռս պոն-
տացւոց գաղատացւոց եւ կապադովկեց-
2 ւոց եւ ասիացւոց եւ բիւթանացւոց, *ը̃ս
կանուխ գիտութե̃ն ա̃յ հօր. սրբութ̃բ
հոգւոյն, 'ի հնազանդութի̃ եւ 'ի հեղու̃մն
արեանն յի̃ի ք̃ի. շնորհք ը̃ ձեզ եւ խա-
3 ղաղութի̃ բազմասցի։ *Օրհնեալ է
ա̃ծ եւ հայր տ̃ն մերոյ յի̃ի ք̃ի, որ ըստ
բազում ողորմութե̃ իւրում ծնաւ զմեզ
վերստին 'ի յոյս կենդանի. 'ի ձեռն
4 յարութե̃ն յի̃ի ք̃ի 'ի մեռելոց, *յա-
նեղծ եւ յանարատ եւ յանթառամ ժա-
ռանգութի̃ն որ պահեալ է յերկինս 'ի
5 ձեզ. *որ զօրութե̃ն ա̃յ պահեալ եք հա-
ւատովք 'ի պատրաստեալ փրկութի̃ն,
6 յայտնեալ 'ի յետին ժամանակս։ *Ու-
րով ուրախ լինիջիք՝ որ այժմ սակաւիկ
ինչ

digitised by A.R.A.R.@

ինչ ե՟ պատշաճի իրացդ տրտմեալ էք 'ի
պէսպէս փորձութիւնս ։ * Զի հանդէս ձե- 7
րոյ հաւատոցն առաւել ք՟ զոսկի կորու-
տական պատուական է . որ հրով փոր-
ձեալ՝ գտցի 'ի գովութի՟ և 'ի փառս, և
'ի պատիւ 'ի յայտնութե՟ն յսի քսի ։ * Զոր 8
ոչն տեսիք՝ և սիրեցիք . և՟ որ այժմ ո՟չ
հայեցեալք՝ բայց հաւատացիք . և ու-
րախ էք անճառ և փառաւորեալ խնդու-
թե՟ն . * ընկալեալ զկատարումն հաւա- 9
տոցն ձերոյ զոգւոցն փրկութի՟ ։ * Վասն 10
որոյ փրկութե՟ խնդրեցին և քննեցին մար-
գարէքն . որք վ՟ որոյ 'ի ձեզ լինելոց էին
շնորհքն՝ մարգարէանային . * քննէին 11
յորում և յորպիսի ժամանակի ցուցա-
նէր 'ի նո՟ հոգին քսի . որ նախ զչարչա-
րանացն քսի վկայէր՝ և յետ այնորիկ
զփառացն ։ * Որոց և յայտնեցաւ իսկ . զի 12
ոչ եթէ անձանց, այլ մեզ մատակարարք
լինէին նոցին . որք այժմ պատմեցան
այնոքիւք, որ աւետարանեցինն ձեզ հոգ-
ւովն սրբով, որ առաքէրն յերկնից .
զոր ցանկային տեսանել գոնեայ և՟ ա-
ղօտ հրեշտակք ։

Բէ * Որով պնդեալ զմէջս մտաց ձերոց՝ զը- 13
ուարթացեալք բովանդակ սպասեցէք
հասելոցն ձեզ շնորհաց 'ի յայտնութե՟ն
յսի քսի , * իբրև զորդիս հնազանդու- 14
թե՟ . մի կերպարանեալք առաջին ձերովք
անգիտութե՟ն ցանկութեք . * այլ ըստ 15
սրբյն

digitised by A.R.A.R.@

սբյն որ կոչեաց զձեզ՝ և դուք սուրբք
16 յամ գնացս ձեր լինիջիք : * Վասն որոյ
գրեալ է, եթէ եղերո՛ւք սուրբ զի ես սբ
17 եմ : * Եւ եթէ հայր կոչիցէք զայն, որ
առանց ակնառութե դատի ը̄ իւրաքան-
չիւր գործոց . ապա երկիւղիւ զձերոցն
պանդխտութե ժամանակս գնասջիք :
18 * Գիտասջիք, զի ոչ ապականացու ար-
ծաթեղինօք՝ և ոսկեղինօքն փրկեցա-
րուք 'ի ձերոց ունայնութե հայրենաւանդ
19 գնացիցն. * այլ պատուական արեամբն
Քսի, իբրև անբիծ և անարատ գառին :
20 * Որ յառաջձանօթն էր՝ նախ քան զխա-
կրզբանէ աշխարհի. և երևեցաւ 'ի վախ-
21 ճան ժամանակաց վն ձեր . * որք նովաւ
հաւատայք յԱծ՝ որ յարոյց զնա 'ի մե-
ռելոց, և ետ նմա փառս. զի հաւատքն
22 ձեր և յոյս իցեն յԱծ : * Զանձինս ձեր
սրբեալ հնազանդութբ ճշմարտութեն ,
յեղբայրսիրութե առանց կեղծաւորու-
թե , 'ի սուրբ սրտէ սիրել սերտիւ զմի-
23 մեանս : * Ծնեալք վերստին ոչ յապա-
կանութե սերմանէն . այլ յանապականա-
ցուէն , կենդանի և մշտնջենական բա-
24 նիւն Այ : * Քանզի ամ մարմին իբրև
զխոտ է. և ամ փառք մարդոյ իբրև զծա-
ծաղիկ խոտոյ . խոտն ցամաքեցաւ՝ և
25 ծաղիկն թօթափեցաւ. * և բան Տն մնայ
յաւիտեան . այսինքն է բանն, որ 'ի ձեզ
աւետարանեցաւ :

Գ. Լ.

digitised by A.R.A.R.@

## ԳԼ. Բ.

ԳԿ Ի բաց թօթափել այսուհետեւ զամ 1
չարութի՝ եւ զամ նենգութի եւ ըղ-
կեղծաւորութիս եւ զնախանձ, եւ զամ
չարախօսութի. * իբրեւ զարդի. ծնեալ 2
մանկունս խօսունս. եւ անխարդախ կա-
թինն փափաքեցէք, զի նովաւ աճիցէք
'ի փրկութի ։ * Եթէ ճաշակեցէք՝ զի 3
քաղցր է տր ։ * Առ որ մատուցեալ 'ի 4
վէմն կենդանի, որ թէպէտ 'ի մարդկա-
նէ անարգեալ. այլ առ 'ի այ ընտրեալ
եւ պատուական է. * եւ դուք իբրեւ զվէմս 5
կենդանիս շինիք տաճար հոգեւոր յանա-
րատ քահանայութի, մատուցանել զհո-
գեւորն պատարագս՝ հաճոյս այ, 'ի ձեռն
յսի քսի ։ * Վասնզի կայ իսկ 'ի գրի, թէ 6
ահաւասիկ դնեմ 'ի սին վէմ ընտիր՝
գլուխ անկեան պատուական, եւ որ 'ի
նա հաւատասցէ՝ մի ամաչեսցէ ։ * Ձեզ 7
այսուհետեւ հաւատացելոց է վէմ պա-
տուական. իսկ անհաւատիցն, վէմ զոր
անարգեցին շինօղքն, նա եղեւ գլուխ ան-
կեան. * եւ վէմ գլորման եւ վէմ գայ- 8
թագղութե, որ գայթագղին ապստամ-
բեալք 'ի բանէն՝ յոր եւ եդանն ։ * Այլ 9
դուք ազգ էք ընտիր, թագաւորութի,
քահանայութի. ազգ սուրբ, ժողովուրդ
սեպհական. ոպ զի զձեր առաքինութիս
նուիրիցէք այնմ, որ զձեզ 'ի խաւարէն
կո-

digitised by A.R.A.R.@

10 կոչեաց յիւր սքանչելի լոյսն ։ * Որք եր-
բեմն չժողովուրդ՝ բայց արդ ժողովուրդ
ա̅յ . որք չողորմեալք՝ այժմ ողորմութիւն
11 գտէք ։ * Սիրելիք՝ աղաչեմ, իբրեւ ըզ-
պանդխտս եւ զնժդեհս ՚ի բաց մեր-
ժել ՚ի մարմնաւոր ցանկութեանցն, որ զի-
12 նուորին ընդդէմ ոգւոյ . * զվարս ձեր
՚ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցա-
նել . զի որով բամբասիցեն զձեզ իբրեւ
զչարագործս՝ ՚ի բարւոք գործոցն ձերոց
դիտեալ՝ փառաւոր առնիցեն զա̅ծ յա-
ւուրն այցելութեան ։
13 * Հնազանդ լերուք ա̅մ մարդկեղէն Գ. Բ
ստեղծուածոյ վ̅ս տ̅ն . եթէ թագաւո-
14 րի՝ իբրեւ առաւել ումեք, * եթէ դա-
տաւորաց՝ իբրեւ ՚ի նմանէ առաքելոց ՚ի
վրէժխնդրութիւն չարագործաց՝ եւ ՚ի գո-
15 վութիւն բարեգործացն ։ * Զի այսպէս են
կամք ա̅յ, բարեգործացն պապանձեցու-
ցանել զանզգամ մարդոյ զանգիտութիւն ։
16 * Իբրեւ զազատս լինել՝ եւ մի իբրեւ պատ-
րուակ չարութեան ունել զազատութիւն . այլ
17 իբրեւ ա̅յ ծառայք ։ * Զամենեսեան պա-
տուեցէք . զեղբայրսիրութիւն սիրեցէք .
յա̅յ երկերուք . զթագաւորս պատուե-
18 ցէք ։ * Ծառայք հնազանդ լինել յա̅մ
երկիւղիւ տերանց, ոչ միայն բարերա-
19 րացն եւ հեզոց՝ այլ եւ կամակորացն ։ * Զի
այս շնորհք յա̅յ են, եթէ բարւոք ինչ
մտօք տանիցի ոք վշտաց յանիրաւի ։
* Քան-

digitised by A.R.A.R.@

* Վասն զի զի՞նչ երախտիք իցեն, եթէ 20
յորժամ մեղանչիցէք՝ տանջիցիք,և համ-
բերիցէք. այլ թէ բարիս գործիցէք՝ չար-
չարիցիք՝ և համբերիցէք, այն շնորհք
յայ են ։ * Վասն զի 'ի դոյն իսկ կոչեցա- 21
րուք. զի և Քս վս ձեր մեռաւ, և ձեզ
եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք հե-
տոցն նորա. * որ ոչ արար մեղս, և ոչ գտաւ 22
նենգութիւն 'ի բերան նորա. * որ բամբասէր՝ 23
և ոչ փոխարէն բամբասէր. չարչարեալ՝
և ոչ պահէր սպառնալիս. բայց իրա-
ւամբք մատնէր դատաւորին ։ * որ զմեր 24
մեղս իւրով մարմնովն վերացոյց 'ի խա-
չափայտն. զի լիցուք զերծեալք 'ի մե-
ղաց անտի, և իցեմք արդարութեամբն
կենակիցք. որոյ վիրօքն բժշկեցայք ։
* Վասն զի էիք իբրև զոչխարս մոլո- 25
րեալս. այլ այժմ դարձարուք առ հո-
վիւն և տեսուչ ոգւոց ձերոց ։

## ԳԼ. Գ ։

Գ. Գ. Սոյնպէս և կանայք հնազանդ լինել ա- 1
ռանց իւրեանց. զի եթէ իցեն նոքա
ապստամբք 'ի բանէ անտի յաղագս կա-
նանց գնացից, և առանց բանին իսկ շա-
հեսցին, * դիտել երկիւղիւ զձեր պար- 2
կեշտ գնացս ։ * Որոց լինիցի ոչ արտա- 3
քուստ հիւսիւք և ոսկեհուռ ճամակա-
լօք՝ կամ պաճուճեալ զգեստուք զարդ.
* այլ ծածուկ սրտին մարդն. անեղծու- 4

թբ

digitised by A.R.A.R.@

թե՟ հեզութե՟՝ և հանդարտութե՟ հոգւոյն ,
5 որ է առաջի Այ բազմապատիկ : *Քան-
զի այսպէս երբեմն և կանայք՝ որ յու-
սացեալ էին յԱծ՝ զարդարէին զանձինս
6 հնազանդեալ իւրեանց արանց : *Որպէս և
սառայ՝ զի հնազանդ էր աբրահամու ,
և տէր իւր կոչէր զնա . որոյ եղերուք
դուք որդիք : բարեգործք էին , և ոչ
կասկածէին՝ և ոչ ՚ի միոջէ ինչ երկիւղէ :
7 *Սոյնպէս և արք իմաստութբ բնակես-
ցեն ընդ նմ . իբրև տկար անօթոյ առնի-
ցեն պատիւ կանանց՝ իբրև ժառանգակ-
ցաց շնորհացն կենաց . զի մի խափան լի-
8 նիցին աղօթիցն ձերոց : *Իսկ գլուխ ա-
մենայնի , զի համամիտք իցէք՝ համակա-
րիք եղբայրասէրք՝ ագնուագութք խո-
9 նարհք : *Մի՛ չար փոխանակ չարի հա-
տուցանել , կմ բամբասանս ընդ բամբա-
սանաց . այլ զորին հակառակն՝ օրհնել ,
զի յայս իսկ կոչեցարուք՝ զի զօրհնութի
ժառանգիցէք :
10 *Զի որ կամիցի զկեանս սիրել՝ և տե- գ. դ.
սանել զաւուրս բարութե , լռեցուսցէ
զլեզու իւր ՚ի չարութե , և զշրթունս
11 իւր ՚ի չխօսելոյ զնենգութի : *Խոտորես-
ցի ՚ի չարէ , և արասցէ զբարի . խնդ-
րեսցէ զխաղաղութի , և երթիցէ զհետ
12 նր : *Զի աչք Տն ՚ի վերայ արդարոց ,
և ականջք նր յաղօթս նց . երեսք Տն ՚ի
13 վր չարագործաց : *Իսկ ո՞ իցէ որ չարչա-
րիցէ

digitised by A.R.A.R.@

րիցէ զձեզ, եթէ դուք բարւոյն նախան-
ձաւորք լինիցիք: * Այլ թէ և չարչարի- 14
ցիք ևս յաղագս արդարութե՟ն, երանելի
էք. բայց յերկիւղէ նց՟ մի երկնչիցիք և
մի խռովեսջիք: * Այլ զՏ՟ր զնոյն զՔ՟ս՝ 15
սուրբ առնիջիք 'ի սիրտս ձեր: Պատ-
րաստ իցէք տալ պատասխանի ա՟մի որ
խնդրիցէ զբանն. որ է վ՟ն յուսոյն ձե-
րոյ: * Այլ հեզութ՟բ և երկիւղիւ ու- 16
նիցիք բարս քաղցունս. զի որով չարա-
խօսիցեն զձէնջ՝ յամօթ լիցին՝ որք բամ-
բասեն զձեր բարւոք գնացս 'ի Ք՟ս: * Զի 17
լաւ է բարեգործաց, եթէ կամիցին ըստ
ա՟յ կամացն չարչարիլ՝ ք՟ չարագործացն.
* զի և Ք՟ս միանգամ վ՟ն մեղաց 'ի վերայ 18
ձեր մեռաւ, արդարն 'ի վ՟ր անարդարոց.
զի զձեզ մերձեցուսցէ առ ա՟ծ: Թէպէտ
և մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգ-
ւով: * Որով և ոգւոցն՝ որ էին 'ի բան- 19
տին, երթեալ քարոզեաց՝ * երբեմն ապս- 20
տամբելոցն, յորժամ ներէր նց՟ ա՟յ եր-
կայնմտութ՟ն յաւուրս Նոյի, յորս տա-
պանն կազմէր. յոր նուազունք՝ այսինքն
ոգիք ութ ապրեցան 'ի ջրոցն:
* Որ և զձեզ ը՟ նմին օրինակի կեցու- 21
ցէ մկրտութ՟ն. ոչ զմարմնոյ աղտն 'ի
բաց ընկենլով՝ այլ զբարւոք մտացն
հանդէս առ ա՟ծ 'ի ձեռն յարութ՟ն յի՟ի
Ք՟ի. * որ է ը՟ աջմէ ա՟յ երթեալ յեր- 22
կինս, 'ի հնազանդել նմա հրեշտակաց
և

digitised by A.R.A.R.@

և իշխանութեանց և զօրութեանց ։

## ԳԼ. Դ.

1 Արդ՝ չարչարելն մարմնով վն մեր, և ԳԵ
դուք 'ի նոյն միտս վառեցարուք. զի
որ չարչարի մարմնով դադարէ 'ի մեղաց.
2 *զի մի ևս ըս մարդկան ցանկութեանց՝ այլ ըս
կամացն այ կեցցէ զայլ ևս ժամանակն ։
3 *Բաւական է անցեալ ժամա-
նակն լինելոյ կամացն հեթանոսաց, որք
գնային գիջութբք՝ ցանկութբք գինե-
հարութբք անառակութբք արբեցութբք՝
4 անօրէն կռապաշտութբք ։ *Որով օտա-
րացեալք ոչ ըն ձեզ վարին 'ի նոյն ան-
5 կարգութե զեղխութե, և հայհոյեն ։ *Որ
տայցեն պատասխանի այնմ, որ 'ի պատ-
րաստին ունի դատել զկենդանիս և զմե-
6 ռեալս ։ *Զի 'ի սոյն իսկ և մեռելոց
խոստացեալ է, զի դատեսցին ըս մարդ-
կան մարմնով՝ և կենդանի լինիցին ըս
7 այ հոգւով ։ *Ամենեցուն վախճան մեր-
ձեալ է. զգաստացարուք այսուհետև՝ և
8 լերուք զուարթունք յաղօթս ։ *Նախ
քան զամ սէր սերտ ունել ըն միմեանս.
զի սէր ծածկէ զբազմութե մեղաց ։
9 *Օտարասէրք լինել ընդ միմեանս ա-
10 ռանց տրտնջելոյ ։ *Իւրաքանչիւրոք որ
և ընկալաւ շնորհս ինչ՝ 'ի միմեանս ըն-
նոյն մատակարարել, իբրև զբարւոք
հազարապետս պէսպէս շնորհացն այ ։
* Ե-

digitised by A.R.A.R.@

* Եթէ ոք խօսեսցի՝ իբրեւ զա՟յ պատգա- 11
մըս . եթէ ոք մատակարարիցէ՝ իբրեւ 'ի
զօրուԹ՟՝ զոր շնորհէ ա՟ծ . զի յա՟մի փա-
ռաւորեսցի ա՟ծ 'ի ձեռն յ՟սի ք՟սի, որում
փառք և զօրուԹի՟ յաւիտեանս ամէն ։
Գ.Դ * Սիրելիք՝ մի՛ օտարոտի համարել զե- 12
ռանդն ինչ՝ որ 'ի փորձուԹ՟ ձեզ լինիցի,
որ՟պ Թէ օտար ինչ իրք ձեզ դիպիցին ։
* այլ իբրեւ հաղորդեալք ք՟սի չարչարա- 13
նացն՝ ուրա՛խ լինիջիք , զի և 'ի յայտնու-
Թ՟ փառաց ն՟ր ցնծացեալք բերկրես-
ջիք ։ * Իսկ եԹէ նախատիցիք ևս վ՟ն ա- 14
նուանն ք՟սի , երանելի էք . զի փառացն՝
և զօրուԹ՟ անուն է , և ա՟յ հոգին 'ի վ՟ր
ձեր հանգուցեալ է ։ * Մի՛ ոք 'ի ձէնջ 15
չարչարեսցի իբրեւ սպանօղ , կա՟մ իբրեւ
գող , կամ իբրեւ զչարագործ , կա՟մ իբ-
րեւ զօտարատեսուչ ։ * Ապա եԹէ իբրեւ 16
զքրիստոնեայ՝ մի՛ ինչ ամաչեսցէ . այլ
փառաւոր առնիցէ զա՟ծ անուամբս այ-
սուիկ ։ * Զի ժամանակ է սկիզբն լինե- 17
լոյ դատաստանին 'ի տանէն ա՟յ ։ զի ե-
Թէ նախ 'ի մէնջ , իսկ զի՛նչ կատարած
այնոցիկ իցէ՝ որ ոչ հաւանեցան ա՟յ աւ-
ետարանին ։ * Եւ եԹէ արդարն հազիւ 18
կեցցէ , իսկ ամբարիշտն և մեղաւորն ու՞ր
գտանիցի ։ * Որպէս զի որ չարչարիցին 19
ըստ ա՟յ կամացն , հաւատարիմ հաստա-
չին աւանդեսցեն զիւրեանց ոգիս բա-
րերարուԹ՟ք ։

Գ.Ե.

digitised by A.R.A.R.@

## Գլ. Ե։

1 Զերիցունս այսուհետեւ աղաչեմ՝ իբ- Գ.Ե
րեւ երիցակից՝ եւ վկայ չարչարա-
նացն քրի, որ եւ հանդերձեալ փառացն
2 յայտնելոց հաղորդ. * արածեցէք՝ որ՚ի
ձեզ հօտդ է այ. վերակացու լինել՝ մի
իբրեւ ակամայ՝ այլ կամաւ ըստ այ. մի զօ-
3 շաքաղութ, այլ յօժարութ. * մի իբրեւ
տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ
4 հօտին։ * Զի յերեւել հովուապետին՝
ընդունիջիք զանթառամ փառացն պս-
5 սակ։ * Նոյնպէս եւ երիտասարդք հնա-
զանդ լերուք ծերոց։ Ամենեքեան ընդ-
միմեանս զխոնարհութի ունիցիք. զի ած
ամբարտաւանից հակառակ կայ, տայ
6 շնորհս խոնարհաց։ * Խոնարհեցարուք
ընդ հզօր ձեռամբն այ. զի զձեզ բարձ-
7 րացուսցէ ՚ի ժամանակի։ * Զամենայն
հոգս ձեր ընկեցէք ՚ի նա, զի նա է՝ որ
հոգայ վասն ձեր։
8 * Արթուն լերուք՝ հսկեցէք, զի ոսոխն Դ.Կ
ձեր սատանայ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի
9 եւ խնդրէ՝ թէ զո կլանիցէ։ * Որում ՚ի
դիմի հարկանիցիք հաստատեալք հաւա-
տովք. գիտասջիք զնոյն անցս չարչարա-
նաց եղբայրութե ձերոյ՝ յաշխարհի յան-
10 ձինս կատարել։* Եւ ած ամենայն շնոր-
հաց՝ որ կոչեաց զձեզ յիւր ՚ի յաւիտե-
նական փառսն քրի յսի, որում փոքր
մի

digitised by A.R.A.R.@

մի եղերուք չարչարակիցք, նա կազդու-
րեցուսցէ կարողացուսցէ հաստահիմն ա-
րասցէ ։ * Նմա իշխանութ̃ի և փառք յա- 11
ւիտեանս. (ամէն)։ * Ի ձեռն սիղուա- 12
նոսի հաւատարիմ եղբօր, ոպ̃ կարծեմ՝
փոքր ՚ի շատէ գրեցի առ ձեզ մխիթա-
րել. և ՚ի վ̃ր սորին վկայել. զի և այս
ճշմարիտ շնորհք Այ̃ են՝ յոր հաստա-
տեալ կայցէք ։ * Ողջոյն տայ ձեզ՝ որ ՚ի 13
Բաբելոն ընտրելակից եկեղեցին է. և
Մարկոս որդի իմ։ * Ողջոյն տաջիք մի- 14
մեանց ՚ի համբոյր սրբութեան ։ Խա-
ղաղութիւն ընդ ձեզ ամենեսին, որ էք
՚ի Քս̃ Յս̃. ամէն ։

ԹՈՒՂԹ

digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ
# ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
# ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
# ԵՐԿՐՈՐԴ:

## ԳԼ. Ա:

1 Շմաւոն պետրոս ծառայ եւ առա- ԴԲ
քեալ յսի քսի, որոց հանգի-
տապատիւ մեզ հասեալ հաւատոց յար-
դարութն այ մերոյ եւ փրկչին յսի քսի:
2 * Շնորհք ընդ ձեզ՝ եւ խաղաղութի
բազմասցի՝ գիտութբն այ եւ յսի քսի տն
3 մերոյ: * Որպէս ամ ինչ մեզ՝ իւրոյ
ածեղէն զօրութեն առ 'ի կենաց եւ
յածպաշտութն շնորհեալ. 'ի ձեռն գի-
տութե այնորիկ, որ կոչեացն զմեզ
4 յիւր 'ի փառսն եւ 'ի վայելչութն: * Որով
մեծամեծքն եւ պատուականն աւետիք
պարգեւեալ են մեզ. զի նոքիմբք ածե-
ղէն բնութեն լինիցիմք հաղորդակիցք,
փախուցեալք 'ի ցանկութեց աշխարհիս
5 եւ յապականութեց: * Եւ սմին այսմիկ
զամ փոյթ 'ի մէջ առեալ՝ ձերովք հա-
ւատովքն մատակարարեսջիք զառաքի-
նութի, եւ առաքինութբն զգիտութի,
* եւ

digitised by A.R.A.R.@

* և գիտութեան զժուժկալութի̃, և ժուժ- 6
կալութեան զհամբերութի̃, և համբե-
րութեան զա̃ծպաշտութիւն, * և ա̃ծ- 7
պաշտութեան զեղբայրսիրութի̃, և եղ-
բայրսիրութեան զսէր ։ * Զայսոսիկ ձեր 8
յանձին կալեալ՝ և ՚ի սոյն յաճախեալ,
ոչ դատարկս և անպտուղս զձեզ հաս-
տատիցեն ՚ի տն̃ մերոյ յի̃ի ք̃ի գիտու-
թեան ։ * Իսկ յոր ոչն իցեն սոքա մերձ, 9
կոյր է և զաչացու . ՚ի մոռացօնս դար-
ձուցեալ զսրբուի̃ առաջնոց իւրոցն յան-
ցանաց ։ * Վասն որոյ եղբարք՝ առաւել 10
փութասջիք՝ զի բարեացն գործովք հաս-
տատուն զձեր կոչումն և զընտրութի̃
պահիցէք ։ Զայս արարեալ՝ ոչ երբեք
յանցանիցէք. * զի այսպէս առատապէս 11
շնորհեսցի ձեզ մուտ ՚ի յաւիտենական
արքայութի̃ տն̃ մերոյ և փրկչին յի̃ի ք̃ի ։
ԴԳ * Որով պատրաստիցեմ միշտ ձեզ յիշե- 12
ցուցանել վասն սոցին առաւել ևս գի-
տակացն և հաստատելոցն՝ եկեալ հա-
սեալ ճշմարտութեան ։ * Քանզի իրա- 13
ւունս համարիմ մինչդեռ եմ ՚ի մարմնի
աստ՝ զարթուցանել զձեզ յիշատակօք ։
* Գիտեմ թէ վաղվաղակի է լինելոց 14
մերկանալ յինէն մարմնոյս . որպէս և
տր̃ մեր յս̃ ք̃ս եցոյց ինձ ։ * Այլ փութամ 15
ճեպիմ միշտ զձեզ յորդորել . զի և յետ
իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զյի-
շատակս այսոցիկ ։ * Քանզի ոչ եթէ 16
պա-
digitised by A.R.A.R.@

պաճուճեալ ինչ առասպելաց զհետ եր-
թեալ ցուցաք ձեզ զՏն մերոյ Յի Քի
զզօրութիւն և զգալուստն. այլ մեզէն
եղեալ ականատեսք նորա մեծութեանն :
17 * Քանզի առեալ յԱյ և ՚ի Հօրէ ըղ-
փառս և զպատիւ. եկեալ յայնպիսի
բարբառոյ՝ ՚ի մեծվայելչութենէ փառաց
անտի. եթէ դա է որդի իմ սիրելի՝ ընդ
18 որ ես հաճեցայ : * Եւ զայս բարբառ-
մեք իսկ լուաք եկեալ յերկնից՝ որ ընդ
19 նմա իսկ էաք ՚ի սբ լերինն : * Եւ ու-
նիմք հաստատագոյն զբանն մարգարէա-
կան. որում եթէ անսայցէք՝ բարւոք
առնէք. իբրև ճրագի որ տայցէ լոյս ՚ի
խաւարչտին տեղւոջ, մինչև տիւն լու-
սաւորեսցէ, և արուսեակն ծագեսցէ ՚ի
սիրտս ձեր :
20 * Զայս նախ այսմ գիտակ լինիջիք. զի Դ.Դ.
ամ մարգարէութի իւրոյ դրոց լուծումն
21 ոչ ունի : * Քանզի ոչ եթէ ըստ կամաց
մարդկան տուաւ մարգարէութի երբէք,
այլ ՚ի Հոգւոյն սբյ կրեալք՝ խօսեցան
մարդիկ յԱյ :

## ԳԼ. Բ :

1 Լինէին և սուտ մարգարէք ՚ի ժողովր-
դեանն՝ որպէս և այժմ ՚ի ձեզ լինի-
ցին սուտ վարդապետք. որք սպրդեալ
մուծանեն հերձուածս կորստեան, և
զորս Տրն գնեաց զնս ուրացեալ՝ ածեն



digitised by A.R.A.R.@

'ի վր անձանց զարագահասն կորուստ:
*Եւ բազումք անկեալ երթիցեն զհետ
նոցա անառակութեցն. վասն որոյ ճշր-
մարտութեն ճանապարհ հայհոյեսցի: *Եւ 3
ագահութբ մտացածին բանիւք առնի-
ցեն զձեզ վաճառանդի: որոց դատաս-
տանն 'ի բնէ ոչ դատարկանայ, և կո-
րուստն նոցա ոչ նիրհեսցէ: *Զի եթէ 4
'ի հրեշտակն յանցուցելոց ած ոչ խնայ-
եաց, այլ խաւարին կապանօք արկեալ
'ի տարտարոսն՝ ետ պահել 'ի դատաս-
տանն: *Սա և ոչ 'ի սկզբանն աշխարհի 5
խնայեաց. բայց զութերորդն զնոյ՝ զար-
դարութեն քարոզ պահեաց 'ի ջրհեղե-
ղէ աշխարհի՝ ամբարշտելոցն ածեալ:
*Եւ զքաղաքս սոդոմացւոցն և գոմո- 6
րացւոց դարձուցեալ յաճիւն՝ դատեաց,
օրինակ առ յապա ամբարշտելոցն կա-
ցուցանէր: *Եւ զարդարն զղովտ ձանձ- 7
րացեալ յանկարգ գիջութեն գնացից
փրկեաց. *քանզի ականատես և ական- 8
ջալուր արդարն բնակեալ 'ի մէջ նց,
որ ըստ օրէ զիւր սուրբ ոգին նոցա ա-
նօրէն գնացիւքն տանջէր:
Գե *Գիտէ տր զածապաշտս փրկել 'ի փոր- 9
ձութէ, և զանիրաւս պահել 'ի տանջանս
աւուրն դատաստանի. *մանաւանդ՝ որ 10
զհետ մարմնոյ պղծալից ցանկութեց իցեն
երթեալ. արհամարհօղք տէրութեն՝ ժը-
պիրհք յանդգունք՝ չզանգիտեն զփառս
հայ-

digitised by A.R.A.R.@

11 հայհոյել: * Ուր հրեշտակք զօրութ՛ք և
կարողութ՛ք քան զնոսա մեծամեծք՝ չա-
ծեն զնոքօք 'ի տ՛նէ զհայհոյութեն դա-
12 տաստան: * Այլ սոքա իբրև զանխօս
անասունս ըստ բնածին բարուցն յեղ-
ծումն և յապականութի՝ որոց չենն գի-
տակ, հայհոյեն յապականութե իւրեանց,
13 և ապականեսցին՝ * տանջեալք 'ի վար-
ձուց անիրաւութե. որ ցանկութի զաւուրն
փափկութի համարին. բծկանք արատա-
ւորք՝ փափկացեալք 'ի պատիրս իւրեանց.
14 լեալ ձեզ խրախճանակիցք: * Աչս ու-
նին հանդոյնս պոռնկաց՝ անդադարս 'ի
մեղաց, պատրեն զանձինս յողդողդաց.
որ ունին սիրտ հարեալ զագահութե,
15 մանկունք անիծից: * Թողեալ զուղորդ
ճանապարհն՝ մոլորեցան. զհետ երթեալ
ճանապարհին Բաղաամայ Բեովրեան՝
16 զվարձս անիրաւութե սիրեցին. * որ կշտ-
ամբանս իւրոյ անօրէնութեն ստացաւ
զէշն անխօսուն, մարդկեղէն բարբա-
ռոմն բարբառեալ՝ արգել զմարգարէին
17 զանօրէնութի: * Այսպիսիքն են աղ-
բիւրք անջրդիք՝ և մէգք վարեալք 'ի
մրրկէ. որոց աղջամուղջ խաւարին յա-
18 ւիտեան պահեալ կան: * Քանզի մեծա-
բանս սնոտեաց բարբառեալ՝ պատրեն
գիջութեք ցանկութեք մարմնոյ զայնո-
սիկ որ սակաւ փախչիցին յայնցանէ՝ որ
19 'ի մոլորութեն շրջիցին: * Նմ ազատութի
խոստ-

digitised by A.R.A.R.@

խոստանան, և ինքեանք ապականութեան
ծառայք են. զի որով իւիք յաղթիցի ոք,
նորին և ծառայ է: * Զի եթէ փախու- 20
ցեալք 'ի պղծութեանց աշխարհի գիտութ͞բ
տ͞ն մերոյ և փրկչին յ͞ի ք͞սի, և դարձեալ
ը͞դ նոյնս շաղեալք պատիցին՝ եղև նոցա
վախճանն չար քան զառաջինն: * Զի 21
լաւ էր նոցա՝ եթէ բնաւ իսկ չէր ծանու-
ցեալ զարդարութեան ճանապարհ, քան՝
զի ծանեան՝ և յետս կացին 'ի ս͞բ պա-
տուիրանէն՝ որ նոցա աւանդեցաւ: * Ան- 22
կեալ 'ի դէպ նոցա ճշմարիտ առակին
զգօնութ͞ե, եթէ շուն դառնայ անդրէն
'ի փսխած իւր, և խոզ լուացեալ՝ ընդ
տիղմ թաւալեալ:

## ԳԼ. Գ:

Դ.Զ. Զայս ձեզ սիրելիք՝ երկրորդ թուղթ 1
գրեմ. որով զարթուցից 'ի յիշա-
տակ զհաստատուն միտս ձեր. * յիշել 2
զյառաջագոյն ասացեալ պատգամս 'ի
ս͞բց մարգարէից և յառաքելոցն ձերոց,
զպատուէրս տ͞ն և փրկչին: * Բայց զայս 3
նախ գիտասջիք, զի յաւուրս յետինս
եկեսցեն արհամարհօղք՝ այպանօղք, որ
ը͞ս իւրեանց ցանկութ͞եց գնայցեն. * և 4
ասիցեն՝ ո՞ւր են աւետիք գալստեան նո-
րա. զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝ ա-
մենայն ինչ նոյնպէս կայ մինչ 'ի սկզբա-
նէ արարածոց: * Եւ զայն մոռացեալ 5
իցէ

digitised by A.R.A.R.@

իցէ նոցա որ զայն կամին. եթէ երկինք
եղեն իսկզբանէ՝ եւ երկիր 'ի ջրոց, եւ
6 ջուրք հաստատեալ բանիւն ա̄յ. * վասն
որոյ երբեմն աշխարհ ջրհեղեղաւ ապա-
7 կանեալ կորեաւ։ * Իսկ այժմ երկինք եւ
երկիր նովին բանիւ գանձեալ են, հրոյ
պահեալք յօրն դատաստանի՝ եւ կորըս-
8 տեան ամբարշտ մարդկան։ * Իսկ այս
եւս մի՛ լիցի 'ի ձէնջ ծածկեալ սիրելիք,
զի մի օր տ̄ն իբրեւ զհազար ամ է, եւ հա-
9 զար ամ իբրեւ զմի օր։ * Ո՛չ յամեցուցա-
նէ տ̄ր զաւետիսն՝ ո՛պ ոմանք յամր հա-
մարին, այլ երկայնամիտ լինի առ ձեզ.
քանզի ո՛չ կամի՝ եթէ ոք կորիցէ, այլ
զամենեցուն հասանել յապաշխարու-
թիւն։

10 * Այլ եկեսցէ օր տ̄ն իբրեւ զգող. յո- Դէ
րում երկինք տագնապաւ անցցեն, եւ
բնութիւնք հրով կիզեալ լուծցին, եւ եր-
11 կիր՝ եւ որ 'ի նմ̄ գործք գտանիցին։ * Իսկ
'ի լուծանել այսպէս այսր ա̄մ, որպիսի̄
իւիք պարտ իցէ ձեզ գտանել. այլ սուրբ
12 եւ ա̄ծապաշտ կարգաւ ակն ունել, * եւ
փութալ հասանել գալստեան աւուրն
տ̄ն. յորում երկինք հրայրեացք լուծա-
նիցին, եւ բնութիւնք հրդեհեալ հալիցին։
13 * Նորոյ երկնից՝ եւ նորոյ երկրի ը̄ աւե-
տեացն հայեցեալ սպասիցեմք, յորս ար-
14 դարութիւն բնակէ։ * Վասն որոյ սիրե-
լիք՝ այսոցիկ սպասեալ, փոյթ յանձին
ու-

digitised by A.R.A.R.@

ունիջիք՝ անբիծք և անարատք գտանել
նմա 'ի խաղաղութի՟. *և զտ՟ն երկայն- 15
մտութի՟ն՝ փրկութի՟ համարիջիք: Որ
օրինակ և սիրելի եղբայրն մեր պօղոս՝ ըստ
շնորհելոյ իմաստութե՟ն նմա յա՟յ՝ գրեաց
ձեզ. *որպ՟ և յամենայն իսկ թուղթսն 16
խօսի վասն այսոցիկ. յորս գտանի ինչ
ինչ դժուարիմաց, զոր անուսմունքն և
յողդողդքն կամակորեն. որպէս և զա-
մենայն իսկ գիրս առ իւրեանց անձանցն
կորուստ: *Դուք այսուհետև սիրելիք՝ 17
իբրև զկանխագէտս զգուշասջի՟ք, զի մի
անառակ մոլորութե՟ն զգածեալք՝ ան-
կանիջիք յաստեաց հաստատութե՟ն: *Ա- 18
ճեցէ՟ք շնորհօք և գիտութե՟ն տ՟ն մերոյ
և փրկչին յի՟ի քի՟ի: Նմա փառք՝ և այժմ,
և յօրն յաւիտենից. ամէն:



digitised by A.R.A.R.@

# Թ Ո Ւ Ղ Թ
## Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի Կ Ե Ա Յ
# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
## Ա Ռ Ա Ջ Ի Ն:

### ԳԼ. Ա:

1 ՈՐ ԷՐՆ ԻՍԿԶԲԱՆԷ, ԵՒ ԵԿ
զոր լուաքն՝ որում ականա-
տեսն իսկ եղեաք. և որ հայե-
ցաքն, և ձեռք մեր շօշափեցին
2 'ի վերայ բանին կենաց: *Եւ կեանքն
յայտնեցան, և տեսաք՝ և վկայեմք և
պատմեմք ձեզ զյաւիտենական կե-
նացն, որ էր առ Հօր՝ և երևեցաւ մեզ:
3 *Զոր տեսաքն և լուաք՝ պատմեմք և
ձեզ, զի և դուք հաղորդութիւն ունիցիք
ընդ մեզ. և մեր հաղորդութիւն իցէ ընդ
Հօր՝ և ընդ որդւոյ իւրում յիսուսի քրիստոսի:
4 *Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախու-
5 թիւն կատարեալ լիցի: *Եւ այս են ա-
ւետիքն՝ զոր լուաք առ'ի նմանէ՝ և պատ-
մեմք ձեզ. զի Աստուած լոյս է, և խաւար 'ի
6 նմա չիք և ոչ մի: *Եթէ ասիցեմք՝ ե-
թէ հաղորդութիւն ունիմք ընդ նմա՝ և 'ի
խաւարի շրջիցիմք, ստեմք՝ և ոչ առնեմք
զճշմա-

digitised by A.R.A.R.@

զճշմարտութիւն: * Իսկ եթէ ընդ լոյս գը- 7
նայցեմք՝ որպ̃ և նա լոյս է, հաղորդութի̃
ունիմք ընդ միմեանս. և արիւնն յ̃ի որդ-
ւոյ ն̃ր սրբէ զմեզ յա̃մ մեղաց: * Եթէ 8
ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք,
զանձինս խաբեմք. և ճշմարտութի̃ 'ի
մեզ ոչ գոյ: * Ապա եթէ խոստովան 9
լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա՝
և արդար առ 'ի թողուլ մեզ զմեղս մեր
և սրբել զմեզ յա̃մ անիրաւութե̃: * Եւ 10
եթէ ասիցեմք՝ եթէ ոչինչ մեղաք, սուտ
առնեմք զնա. և բանն ն̃ր ոչ է 'ի մեզ:

## ԳԼ. Բ:

Ե Բ Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ 1
մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ու-
նիմք բարեխօս առ ա̃ծ զյ̃ս.ք̃ս՝ զարդարն՝
և զանարատ: * Եւ նա է քաւութի̃ մե- 2
ղաց մերոց. և ոչ եթէ մերոցն միայն՝
այլ և ա̃մ աշխարհի: * Եւ յայսմիկ գի- 3
տեմք՝ եթէ ծանեաք զնա, եթէ զպատ-
ուիրանս ն̃ր պահիցեմք: * Որ ասիցէ՝ ե- 4
թէ ծանեայ զնա, և զպատուիրանս ն̃ր
ոչ պահիցէ, սուտ է՝ և ճշմարտութի̃ 'ի
նմ̃ ոչ գոյ: * Իսկ որ պահիցէ զբանն նո- 5
րա, արդարև 'ի նմա կատարեալ է սէրն
ա̃յ: այսուիկ ճանաչեմք՝ եթէ 'ի նմա
եմք: * Որ ասիցէ 'ի նմա բնակել, այն- 6
պէս պարտի գնալ՝ որպ̃ և նայն գնաց:
Ե Գ * Սիրելիք՝ ոչ եթէ նոր ինչ պատուիրան 7
գրեմ

digitised by A.R.A.R.@

գրեմ ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր
ի սկզբանէ ունէիք ․ և հին պատուիրան՝
8 բանն է զոր լուարուք ։ * Դարձեալ նոր
պատուիրան գրեմ ձեզ՝ որ է ճշմարիտ
'ի նմա՝ և 'ի ձեզ ․ զի խաւարն անցանէ,
9 և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի ։* Որ
ասէ եթէ 'ի լոյսն իցէ՝ և զեղբայր իւր
ատիցէ, սուտ է՝ և 'ի խաւարի է տակա-
10 ւին ։* Որ սիրէ զեղբայր իւր, 'ի լոյսն բը-
նակէ՝ և գայթագղութիւն 'ի նմա չիք ։
11 * Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ 'ի խաւա-
րի է, և ընդ խաւար շրջի ․ և ոչ գիտէ յո՛
երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նո-
12 րա ։* Գրեմ ձեզ որդեակք՝ զի թողեալ
են ձեզ մեղքն ձեր վասն անուան նորա ։
13 * Գրեմ ձեզ հարք՝ զի ծանեայք դուք
զայն՝ որ ի սկզբանէն է ։ Գրեմ ձեզ երի-
տասարդք՝ զի յաղթեցիք դուք չարին ։
14 * Գրեցի ձեզ մանկունք՝ զի ծանեայք
դուք զհայրն ։ Գրեցի ձեզ հարք՝ զի ծա-
նեայք դուք զայն որ ի սկզբանէն է ։ Գրե-
ցի ձեզ երիտասարդք՝ զի էք դուք հզօ-
րացեալք՝ և բանն այ 'ի ձեզ բնակէ, և
15 յաղթեցիք դուք չարին ։ * Մի՛ սիրէք
զաշխարհ՝ և մի՛ որ ինչ յաշխարհի է ։
16 * Եթէ ոք սիրէ զաշխարհ, ոչ է 'ի նմա
սէր հօր ․ զի ամ որ ինչ յաշխարհի է՝
ցանկութիւն է մարմնոյ, և ցանկութիւն է ա-
չաց, և ամբարտաւանութիւն աստի կե-
նացս ․ որ ոչ է առ 'ի հօրէ՝ այլ յաշխար-



digitised by A.R.A.R.@

հէ աստի է: *Եւ աշխարհս անցանէ՝ և 17
ցանկութի՛ւն իւր. իսկ որ առնէ զկամս այ՝
մնայ յաւիտեան:
ԵԴ *Որդեակք յետին ժամանակ է, և որպ 18
լուարուք՝ եթէ նեռն գալոց է, և ար-
դէն իսկ նեռինք բազումք եկեալ են, ո-
րով մարթեմք իմանալ՝ եթէ յետին ժա-
մանակ է: *Առ 'ի մէնջ ելին, այլ ոչ 19
էին 'ի մէնջ. զի եթէ 'ի մէնջ էին՝ ապա
առ մեզ մնային. այլ զի յայտնի լինի-
ցին՝ եթէ ոչ էին ամենեքին նք 'ի մէնջ:
*Եւ դուք օծութի ունիք առ 'ի սրբոյն, 20
և գիտէք ամենեքին: *Ո՛չ գրեցի ձեզ՝ 21
եթէ ոչ գիտէք զճշմարտութի՛ւն, այլ թէ
գիտէք զնա: և թէ՝ զի ամ սուտ ոչ է
'ի ճշմարտութէ անտի: *Իսկ ո՞վ իցէ սուտ, 22
եթէ ոչ՝ որ ուրանայ եթէ յս չէ քս: նա
իսկ է նեռն, որ ուրանայ զհայր և զոր-
դի: *Ամենայն որ ուրանայ զորդի, և 23
ոչ զհայր ընդունի. իսկ որ խոստովանի
զորդի, նա և զհայր ընդունի: *Դուք՝ 24
զոր լուարուքն իսկզբանէ՝ 'ի ձեզ բնա-
կեսցէ. զի եթէ 'ի ձեզ բնակեսցէ՝ զոր
իսկզբանէն լուարուք, և դուք յորդի և
'ի հայր բնակեսջիք: *Եւ այս են աւե- 25
տիքն՝ զոր աւետարանեաց նա մեզ՝ ըզ-
կեանս յաւիտենականս:
ԵԵ *Զայս գրեցի ձեզ, զի մի ոք զձեզ մո- 26
լորեցուցանիցէ: *Եւ դուք օծութի՛ւն՝ 27
զոր ընկալարուք 'ի նմանէ՝ բնակեսցէ 'ի
ձեզ.

digitised by A.R.A.R.@

ձեզ. եւ չէ ինչ պիտոյ՝ թէ որ զձեզ ու-
սուսցէ, այլ որպ՟ զի նր՟ օծութիւն ուսու-
ցանիցէ զձեզ վ՟ն ա՟մի. եւ ճշմարիտ է՝ եւ
չէ սուտ. եւ որպ՟ ուսոյցն զձեզ, կայք ՚ի
28 նմա: * Եւ այժմ որդեակք՝ կացէք ՚ի
նմին. զի եթէ յայտնեսցի, ունիցիմք
համարձակութիւն. եւ մի ամաչեսցուք ՚ի
29 նմանէ ՚ի գալստեանն նր՟: * Զի եթէ
գիտիցէք՝ եթէ արդար է նա, իմասջիք՝
եթէ ա՟մ որ առնէ զարդարութիւն՝ առ
՚ի նմանէ է ծնեալ:

## ԳԼ. Գ.

1 Տեսէք որպիսի սէր շնորհեաց մեզ
Հայր, զի որդիք ա՟յ կոչեսցուք եւ եմք:
վ՟ն այսորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ՝
քանզի ոչ ծանեաւ զնա:
2 * Սիրելիք՝ այժմ որդիք ա՟յ եմք, եւ չեւ եւս
է յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք. գի-
տեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման
նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա
3 որպ՟ եւ էն: * Եւ ա՟մ որ ունի զայս յոյս
յանձին՝ սրբէ զանձն իւր՝ որպ՟ եւ նայն ս՟բ
4 է: * Ամենայն որ զմեղս գործէ, նա եւ
զանօրէնութիւն առնէ, եւ ինքն իսկ մեղքն
5 անօրէնութիւն է: * Եւ գիտեմք՝ զի նա
յայն սակս յայտնեցաւ՝ զի զմեղս բարձ-
6 ցէ, եւ ՚ի նմա մեղք ոչ են: * Ամենայն որ
՚ի նմա է հաստատեալ՝ ոչ մեղանչէ. եւ
ա՟մ որ մեղանչէ, ոչ ետես զնա՝ եւ ոչ ծա-
նեաւ

digitised by A.R.A.R.@

նեաւ զնա ։ * Մանկունք՝ մի՛ ոք զձեզ 7
խաբեսցէ. որ առնէ զարդարութիւն, ար-
դար է՝ ոպ̃ և նայն արդար է ։ * Իսկ որ 8
առնէ զմեղս՝ ՚ի սատանայէ է, զի ՚ի սկզբ-
բանէ սատանայ մեղանչէ. վ̃ն այսորիկ
յայտնեցաւ որդին ա̃յ՝ զի լուծցէ զգործս
սատանայի ։ * Ամենայն որ յա̃յ է ծըն- 9
եալ՝ մեղս ոչ առնէ, զի սերմն նո̃ր ՚ի նմա
մնայ. և ոչ կարէ մեղանչել, զի յա̃յ է
ծնեալ ։ * Այսուիկ յայտնի են ՚ի մի- 10
մեանց որդիք ա̃յ՝ և որդիք սատանայի ։
ԵԵ Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ
նա յա̃յ, և որ ոչ սիրէ զեղբայր իւր. * զի 11
այս է պատուիրանն՝ զոր լուարուք ՚ի ս-
կզբանէ՝ զի սիրեսցուք զմիմեանս ։ * Ոչ 12
որպէս կայէնն ՚ի չարէ անտի էր՝ և սպան
զեղբայրն իւր, և յո՞ր սակս սպան զնա.
զի իւր գործքն չար էին, և եղբօրն բա-
րիք ։ * Իսկ մի՛ ինչ զարմանայք եղբարք, 13
եթէ աշխարհ զձեզ ատեայ ։ * Մեք գի- 14
տեմք՝ զի փոխեցաք ՚ի մահուանէ ՚ի կեա-
նըս, քանզի սիրեմք զեղբարս. իսկ որ
ոչն սիրէ, անդէն ՚ի մահուն մնայ ։ * Ա- 15
մենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մար-
դասպան է. և գիտէք՝ զի ա̃մ մարդաս-
պան ոչ ունի կեանս յաւիտենականս յան-
ձին հաստատեալ ։ * Այսուիկ գիտա- 16
ցաք զսէրն (ա̃յ). զի նա զանձն իւր եդ վ̃ն
մեր. և մեք վ̃ն եղբարց մերոց պարտիմք
դնել զանձինս ։ * Որ ունիցի զկեանս ինչ 17
զաշ-

digitised by A.R.A.R.@

զաշխարհիս՝ և տեսանիցէ զեղբայր իւր
կարօտեալ իւիք՝ և փակիցէ զգութս
իւր առ 'ի նմանէ, զիա՞րդ սէրն ա̃յ 'ի
նմա իցէ բնակեալ :
18 *Որդեակք՝ մի՛ բանիւք և լեզուօք սիրես- ՃԿ
ցուք, այլ արդեամբք և ճշմարտութբ̃ :
19 *Եւ այսուիկ լիցուք ծանուցեալք՝ եթէ
'ի ճշմարտութե̃ անտի իցեմք. և առաջի
նորա արասցուք հանդէս սրտից մերոց :
20 * Եթէ ստգտանիցեն զմեզ սիրտք մեր՝
այլ ա̃ծ մեծ է քան զսիրտս մեր՝ և գիտէ
21 զա̃մ : * Սիրելիք՝ եթէ սիրտք մեր զմեզ
ոչ ստգտանիցեն, համարձակութի̃ ու-
22 նիմք առ ա̃ծ. * և զոր ինչ հայցեմք առ-
նումք 'ի նմանէ. զի զպատուիրանս նր̃
պահեմք, և զհաճոյս առաջի նորա առ-
23 նեմք : * Եւ այս է պատուիրան նր̃, զի
հաւատասցուք յանուն որդւոյ նորա յի̃
քի̃, և սիրեսցուք զմիմեանս, ո̃պ և ետ
24 մեզ պատուէր : * Եւ որ պահէ զպատ-
ուիրանս նր̃, 'ի նմի է հաստատեալ՝ և նա
'ի սմա. և յայսմանէ գիտեմք եթէ բնա-
կէ 'ի մեզ 'ի հոգւոյ անտի՝ զոր ետ մեզ:

## ԳԼ. Դ:

1 Սիրելիք՝ մի՛ ա̃մ հոգւոյ հաւատայք, ՃԲ
այլ ընտրեցէք զհոգիսն՝ եթէ յա̃յ
իցեն. զի բազում սուտ մարգարէք ելեալ
2 են յաշխարհ: * և մեք այսուիկ ճանա-
չեմք զհոգին ա̃յ : Ամենայն հոգի՝ որ
խոս-

digitised by A.R.A.R.@

խոստովանի զյս քս մարմնով եկեալ, յայ
է նա։ *Եւ ամ հոգի՝ որ ոչ խոստովանի 3
զյս մարմնով եկեալ, չէ նա յայ. Եւ այս
նեռինն է, զորմէ լուարուք՝ եթէ գալոց
է, եւ արդէն իսկ յաշխարհի է։ *Դուք 4
յայ էք որդեակք, եւ յաղթեցիք նմա. զի
մեծ է որ 'ի ձեզդ է՝ քան զայն որ յաշ-
խարհին է։ *Նոքա յաշխարհէ են, վս 5
այնորիկ յաշխարհէ խօսին, եւ աշխարհ
լսէ նց։ *Մեք յայ եմք, որ զած ճանա- 6
չէ՝ լսէ մեզ, եւ որ չէ յայ՝ ոչ լսէ մեզ։
այսուիկ ճանաչեմք զհոգին ճշմարտու-
թեն եւ զհոգին խաբէութեն։

ՁԳ *Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր 7
յայ է. եւ ամ որ սիրէ՝ յայ է ծնեալ՝ եւ
ճանաչէ զած։ *Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանա- 8
չէ զած, զի ած սէր է։ *Եւ զի յայսմ 9
երեւեցաւ սէրն այ 'ի մեզ, զի զորդին իւր
միածին առաքեաց յաշխարհ, զի եզի-
ցուք նովաւ կենդանիք։ *Յայսմ է սէրն. 10
ոչ զի մեք սիրեցաք զած՝ այլ զի նա սի-
րեաց զմեզ, եւ առաքեաց զորդին իւր 'ի
քաւութի մեղաց մերոց։ *Սիրելիք՝ եթէ 11
ած այնպէս սիրեաց զմեզ, ապա եւ մեք
պարտիմք զմիմեանս սիրել։

ՁԴ *Զած ուրուք երբէք չիք տեսեալ. Ե- 12
թէ սիրեսցուք զմիմեանս՝ ած 'ի մեզ
բնակէ, եւ սէր նորա 'ի մեզ կատարեալ
է։ *Այսուիկ գիտեմք, եթէ մեք 'ի 13
նմա բնակեալ եմք՝ եւ նա 'ի մեզ, զի 'ի
հո-

digitised by A.R.A.R.@

14 հոգւոյն իւրմէ ետ մեզ։ *Եւ մեք տե-
սաք՝ և վկայեմք զի հայր առաքեաց զոր-
15 դին իւր փրկիչ աշխարհի։ *Որ ոք խոս-
տովանեսցի՝ եթէ յս է որդի այ, ած 'ի
16 նմա բնակէ՝ և նա յած։ *Եւ մեք հա-
ւատացաք, և ծանեաք զսէրն այ՝ զոր ու-
նի առ մեզ։ Ած սէր է, և որ կայ 'ի սէրն՝
բնակեալ է յած, և ած 'ի նմ բնակէ։
17 *Յայսմիկ կատարեալ է սէրն նր 'ի մեզ.
զի համարձակութի ունիցիմք յաւուրն
դատաստանի։ զի որպ և նայն է՝ նոյնպէս
18 և մեք եմք յաշխարհի յայսմիկ։ *Եր-
կիւղ ոչ գոյ 'ի սէր, այլ սէրն կատարեալ
'ի բաց մերժէ զերկիւղն. զի երկիւղ ընդ-
տանջանօք է. իսկ որ երկնչին, չէ կա-
19 տարեալ 'ի սէրն։ *Մեք սիրեսցուք զած,
20 զի նա նախ սիրեաց զմեզ։ *Եթէ ոք
ասիցէ՝ եթէ սիրեմ զած, և զեղբայր
իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղ-
բայր իւր՝ զոր տեսանէ, զած զոր ոչն ե-
21 տես՝ զիարդ կարիցէ սիրել։ *Եւ զայս
պատուէր ունիմք առ 'ի նմանէ, զի որ
սիրէ զած՝ սիրէ նա և զեղբայր իւր։

## ԳԼ. Ե.

1 Ամենայն որ հաւատայ՝ եթէ յս է քս, ԶԶ
յայ ծնեալ է. և ամենայն որ սիրէ
զծնօղն, սիրէ և զծնեալն 'ի նմանէ։
2 *Այսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զոր-
դին այ, յորժամ զած սիրեսցուք՝ և ըզ-

պա-

digitised by A.R.A.R.@

պատուիրանս նր պահեսցուք : * Քանզի 3
այս է սէրն այ, եթէ զպատուիրանս նր
պահեսցուք. և պատուիրանք նր չեն ինչ
ծանունք : * Զի ամ որ յայ ծնեալ է՝ 4
յաղթէ աշխարհի. և այս է յաղթութին՝
որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր :
* Ո՞վ իցէ՝ որ յաղթիցէ աշխարհի. ե- 5
թէ ոչ որ հաւատայցէ՝ եթէ յս է որդի
այ : * Սա է՝ որ եկն ջրով և հոգւով և ա- 6
րեամբ, յս քս. ոչ ջրով միայն, այլ և ա-
րեամբ և ջրով. և հոգին է՝ որ վկայէ,
զի հոգին իսկ է ճշմարտութի : ( * Զի 7
երեք են որ վկայեն յերկինս. հայր,
բանն, և հոգին սբ. և երեքինս մի են:
* և երեք են որ վկայեն յերկրի. հոգի, 8
ջուր, և արիւն. և երեքինն մի են : )
* Եթէ զմարդկան ինչ վկայութի ունի- 9
ցիմք՝ ապաքէն այ վկայութին մեծ իցէ :
Այս է վկայութին այ, զի վկայեաց 'ի
վր որդւոյն իւրոյ : * Որ հաւատայ յոր- 10
դին այ, ունի յանձին զվկայութիս զայս.
որ ոչ հաւատայ որդւոյ այ, սուտ առնէ
զնա. քանզի ոչ հաւատայ վկայութեն՝
զոր վկայեաց ած 'ի վր որդւոյն իւրոյ :
* Եւ այս իսկ է վկայութին, զի կեանս 11
յաւիտենականս ետ մեզ ած. և այս են
կեանք՝ որ յորդին նր են : * Որ ընդու- 12
նի զորդին, ընդունի և զկեանս. և որ
ոչ ընդունի զորդին այ, և ոչ զկեանս
ընդունի :

* Զայս

digitised by A.R.A.R.@

13 * Զայս գրեցի ձեզ՝ զի գիտասջիք եթէ զ
կեանս յաւիտենականս ունիք. և զի հա-
14 ւատայցէք յանուն որդւոյն ա̄յ: * Եւ
այս է համարձակութի̄ն զոր ունիմք մեք
առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ը̄ս կա-
15 մաց նո̄ր, լսէ մեզ: * Զի եթէ գիտի-
ցեմք՝ եթէ լսէ հայցուածոյն մերոյ.
ապա գիտեմք՝ եթէ առնումք զհայցու-
16 ածսն՝ զոր հայցեմք առ ՚ի նմանէ: * Ե-
թէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ
մեղս՝ որ ոչ առ ՚ի մահ, խնդրեսցէ՝ և
տացէ նմա կեանս՝ մեղուցելոյն ոչ առ
՚ի մահ: Են մեղք՝ որ մահուչափ են,
ոչ վ̄ն այսորիկ ասեմ եթէ խնդրեսցես:
17 * Ամենայն անիրաւութի̄ մեղք են. և
18 են մեղք՝ որ մահու չափ են: * Գիտեմք
եթէ ամենայն որ յա̄յ է ծնեալ՝ ոչ մե-
ղանչէ. այլ որ յա̄յն է ծնեալ՝ պահէ
զանձն, և չարն առ նա ոչ մերձենայ:
19 *Գիտեմք եթէ յա̄յ եմք, և աշխարհ ա-
20 մենայն ՚ի չարի կայ: * Եւ գիտեմք՝ ե-
թէ որդի̄ն ա̄յ եկն, և ետ մեզ միտս. զի
ծանիցուք զճշմարիտն. և եմք ՚ի ճշմար-
տին որդւոյ նո̄ր յի̄ի քի̄ի: զի նա է ճշմա-
21 րիտ ա̄ծ՝ և կեանք յաւիտենականք: * Որ-
դեակք՝ պահեցէք զանձինս ՚ի կռապաշ-
տութէ:

ԹՈՒՂԹ

digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ

## ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ:

### ԳԼ. Ա:

էկ Երիցուն առ ընտրեալ կիւրիա, և 1
առ որդեակս իւր զոր ես սիրեմ
ճշմարտութբ. և ոչ եթէ ես միայն, այլ
և ամենեքեան ոյք գիտակ են ճշմար-
տութեն. * վասն որոյ ճշմարտութեն՝ 2
որ 'ի մեզ հաստատեալ է, զի և ը̅ մեզ
իցէ. և դուք յաւիտենից ը̅ մեզ իցէք:
* Շնորհք՝ ողորմութի խաղաղութի 3
յԱյ 'ի հօրէ, և 'ի Տնէ յսէ քսէ որդ-
ւոյն հօր՝ ճշմարտութբ և սիրով եղիցին
ը̅ մեզ: * Ուրախ եղէ յոյժ, զի գտի 4
յորդեկայդ քոց՝ որ գնան ճշմարտու-
թբ, ըստ պատուիրանին զոր առաք 'ի
հօրէ: * Եւ այժմ աղաչեմ զքեզ կիւ- 5
րիա. իբրև ոչ եթէ նոր ինչ պատուիրան
գրեմ քեզ, այլ զոր իսկզբանէն ունէաք,
զի սիրեսցուք զմիմեանս: * Եւ այս է 6
սէրն, զի գնասցուք ը̅ պատուիրանաց
նր. և այս է պատուիրանն, զի որպէս
լուարուքն իսկզբանէ՝ ըստ նմին գնաս-
ջիք:

digitised by A.R.A.R.@

7 ջիք։ *Զի բազում մոլորեցուցիչք ելին
յաշխարհ. որք ոչ խոստովանին զՅիսուս Քրիստոս
եկեալ մարմնով, նա մոլորեցուցիչ է՝ և
նեռն։

8 *Զգոյշ լինիջիք անձանց՝ զի մի՛ կորուսանիցէք՝ զոր վաստակեցէքն, այլ զի առ- ԿԲ
նուցուք բովանդակ զվարձս։ *Ամենայն
9 որ յանցանէ՝ և ոչ կայ ՚ի վարդապետութեան Քրիստոսի, զԱստուած ոչ ճանաչէ։ որ կայ ՚ի
վարդապետութեան, նա՝ և զորդի և զհայր ընդունի։ *Եթէ ոք գայցէ առ
10 ձեզ՝ և զվարդապետութիւն զայս ոչ ունիցի, մի՛ ընդունիցիք զնա ՚ի տուն, և մի՛
11 ողջոյն տայցէք նմա։ *Զի որ ասասցէ
նմա ողջոյն՝ կցորդ լիցի չարեաց գործոց
12 նորա։ *Բազում ինչ ունէի գրել առ
ձեզ՝ այլ ոչ կամեցայ քարտիսիւ և դեղով
գրել. զի ակնունիմ ինձէն իսկ գալ առ
ձեզ, և բերան ՚ի բերան խօսել. զի ու-
13 րախութիւն մեր լիցի կատարեալ։ *Ողջոյն տան քեզ որդիք քեռ քո ընտրելոյ։
Շնորհք ընդ ձեզ։



digitised by A.R.A.R.@

# ԹՈՒՂԹ
## ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԵՐՐՈՐԴ։

ԷԳ Յերիցունէ առ Գայիոս սիրելի. զոր 1
եսդ սիրեմ ճշմարտութբ։ * Սիրե- 2
լի՝ վասն ամենայն իրաց քոց յաջողու-
թե և առողջութե աղօթս առնեմ. որ-
պէս է իսկ յաջողութի անձինդ քո։
* Յոյժ ուրախ եղէ 'ի գալ եղբարց՝ և 3
լինել վկայ քոյոյ ճշմարտութեդ, որ-
պէս գնաս դու ճշմարտութբ։ * Մեծ 4
ես ինչ ուրախութի քան զայս ոչ ունիմ,
զի լսեմ եթէ իմ որդեակքն ճշմարտու-
թբ գնան։ * Սիրելի՝ հաւատարիմ գոր- 5
ծես զայդ, զոր եթէ առնիցես առ եղ-
բարս՝ գդոյն և առ օտարս. * որք վկայե- 6
ցին զքո սիրոյդ առաջի եկեղեցւոյ. որոց
բարիս արարեալ յուղարկես արժանիս
այ։ * Զի վասն անուանն ելին, և ոչ 7
ինչ յումեքէ առնուն զհեթանոսակա-
նացն։ * Մեք այսուհետև պարտիմք ըն- 8
դունել զայնպիսիսն, զի գործակիցք լի-
ցուք ճշմարտութենն։

* Գրե-

digitised by A.R.A.R.@

9 * Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ որ յա- ԵԴ
ռաջադէմն 'ի նոցանէ է՝ Դիոտրեփէս,
10 ոչ ընդունի զմեզ: * Վասն այսորիկ ե-
թէ եկից՝ յիշեցուցից զգործս նորա՝ զոր
առնէ, բանիւք չարեօք շատախօսութե̃
առնէ զմեզ աշխատ: և ոչ այսոքիւք շա-
տացեալ, ո՛չ ինքն ընդունի զեղբարս,
և զայնոսիկ որ ընդունինն, արգելու.
11 նաև յեկեղեցւոյ ևս հանէ: * Սիրելի՝
մի՛ լինիցիս նմանօղ չարի՝ այլ բարւոյ.
զի որ զբարիս առնէ՝ յա̃յ է. և որ զչա-
րիս գործէ՝ նա ո՛չ ետես երբէք զա̃ծ:
12 * Զդեմետրեայ վկայեալ է յամենե-
ցունց, և յեկեղեցւոյն՝ և 'ի ճշմարտու-
թե̃, և մեք վկայեմք. և դու գիտես՝ զի
13 ճշմարիտ է մեր վկայութի̃ն: * Բազում
ինչ ունէի գրել քեզ. այլ ո՛չ կամիմ
14 քարտիսիւ և դեղով գրել. * զի ակն ու-
նիմ 'ի մօտոյ իսկ տեսանել զքեզ, և
15 բերան 'ի բերան խօսել: * Խաղաղութի̃
ընդ քեզ: Ողջոյն տան քեզ սիրելիք:
Ողջո՛յն տաջիր սիրելեաց մերոց իւրա-
քանչիւր յանուանէ:

# ԹՈՒՂԹ
# ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
# ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԻԵ ՅՈՒԴԱՅ ՅԻՍՈՒՍԻ 1
ք՟ի ծառայ, եւ եղբայր՝ յակով-
բայ. հեթանոսաց՝ որ յա՟յ Հօրէ
էք սիրեցեալք, եւ ՚ի յ՟ի ք՟ի պա-
հեալք եւ ընտրեալք։ * Ողորմութի՟ ձեզ՝ 2
եւ խաղաղութի՟ եւ սէր բազմասցի։ *Սի- 3
րելիք՝ զա՟մ փոյթ յանձին կալեալ գրել
ձեզ վասն մերոյ հասարակաց փրկութե՟,
հարկ յանձին կալայ գրել ձեզ եւ աղա-
չել՝ զի ճգնիցիք ՚ի վերայ հաւատոյն, որ
միանգամ աւանդեցաւն սրբոց։ *Բան- 4
զի սպրդեցին մտին ոմանք, որ յառա-
ջագոյն իսկ կատարեալ էին ՚ի սոյն դա-
տաստան. ամպարիշտք, որ զա՟յ մերոյ
շնորհսն դարձուցին յանկարգութի՟. եւ
զմի միայն իշխանն՝ եւ զտ՟ր մեր յ՟ս ք՟ս
ուրացեալք։ *Յիշեցուցանել ձեզ այ- 5
սուհետեւ կամ է ինձ՝ որ գիտէքդ զա-
մենայն. զի տ՟ծ միանգամ զժողո-
վուրդն փրկեաց յեգիպտոսէ. երկրորդ-
անգամ զանհաւատսն կորոյս։ *Եւ 6

զհրեշ-

digitised by A.R.A.R.@

զհրեշտակս՝ որ ոչ պահեցին զիւրեանց
'իշխանութիւն, այլ թողին զիւրեանց բը-
նակութիւն, 'ի դատաստանս մեծի ա-
ւուրն՝ մշտնջենաւոր կապանօք պահեաց
7 'ի խաւարի ։ *Որպէս սոդոմ և գոմոր,
և որ շուրջ զնոքօք քաղաքքն, որ ըստ
նմին օրինակի պոռնկեցան զհետ ընկե-
րացն մարմնոց, կան առաջի օրինակ՝ զյա-
ւիտենականն հրոյն ընկալեալ զդատաս-
8 տան ։ *Իսկ նմին օրինակի և սոքա իբ-
րև քնով՝ դանդաչեալք՝ զմարմին պղ-
ծեն, զտէրութիւն քամահեն՝ զփառս հայ-
9 հոյեն ։ *Իսկ միքայէլ հրեշտակապետ՝
յորժամ բանսարկուն սատանայի վիճէր
տայր պատասխանի վասն մովսիսեան մարմ-
նոյն, ոչ ժպրհեցաւ հայհոյութեան դա-
տաստանին հանդուրժել. այլ ասէ, սաս-
10 տեսցէ 'ի քեզ տէր ։ *Իսկ սոքա զոր ինչ
ոչն իմանան՝ հայհոյեն ։ և զայլն ևս զոր
բնութեամբ իբրև զանխօս անասունս գի-
11 տեն. 'ի նոսին ապականեցին ։ *Վայ
է նոցա, զի ընդ ճանապարհին կայենի գը-
նացին, և ըստ մոլորութեան բաղաամայ
զեղխեցան զհետ վարձուց, և ընդ հակա-
ռակութեան կորխայ կորեան ։
12 *Սոքա են ատեցեալք շոգմոգք՝ երթեալ Կ.Զ
զհետ ցանկութեանց իւրեանց. 'ի սէրս իւ-
րեանց խարդախութեամբ, լինին ընդ ձեզ ու-
րախակիցք. աներկիւղ զանձինս հարա-
կեն. ամպք անջրդիք հողմակոծեալք,
ծառք

digitised by A.R.A.R.@

ծառք պտղակորոյսք անպտուղք կրկնա-
մեռք՝ խլեալք արմատաքի. * անսաստ 13
ալիք ծովու, որ միշտ փրփրեն զիւրեանց
զանձանց զամօթ. աստեղք մոլարք, ո-
րոց վիհ խաւարին յաւիտենից պահեալ
է: * Մարգարէացաւ վասն նց և եօթ- 14
ներորդն յադամայ Ենովք՝ և ասէ. ահա-
ւասիկ եկն տր բիւրովք սրբովք հրեշ-
տակօք, * առնել դատաստան ընդ ամե- 15
նայնի, և յանդիմանել զամենայն ամ-
բարիշտս վասն գործոց իւրեանց՝ զոր
ամբարշտեցին. և վս ամենայն խիստ
բանից, զոր խօսեցան զնմանէ մեղա-
ւորք և ամբարիշտք: * Սոքա են տրտն- 16
ջօղք և չոգմոգք, երթեալք ըստ իւրեանց
անձանց ցանկութեց. և բերանք նոցա
զամբարտաւանս բարբառին. առնուն
ակն երեսաց վասն օգտի:
ԻԵ * Բայց դուք սիրելիք՝ յիշեցէք զկան- 17
խաստաց բանս զառաքելոցն տն մերոյ յի
քի. * զի ասէին ձեզ, եթէ 'ի յետին 18
ժամանակս եղիցին մարդք արհամար-
հօղք, երթեալք ըստ իւրեանց ամբարշ-
տութեցն ցանկութեց: * Սոքա են նշա- 19
ւակեալք ընչաւորք, որ զոգին ոչ ունի-
ցին: * Այլ մեք սիրելիք՝ եղիցուք շի- 20
նել զանձինս սրբութն հաւատոց 'ի հո-
գին սբ. կացցուք յաղօթս, * պահել 21
զանձինս սիրովն այ. ակնունել ողոր-
մութն տն մերոյ յի քի 'ի կեանսն
յա-

digitised by A.R.A.R.@

22 յաւիտենականս ։ * Եւ ոմանց դատա-
23 պարտելոյ լինիջիք կշտամբիչք, * և զո-
մանս ապրեցուցանիջիք՝ յափշտակեալ
'ի հրոյ. և ոմանց ողորմեսջիք երկիւղիւ
ատել, և զպատմուճանն որ 'ի մարմ-
24 նոյն իցէ աղտեղեալ ։ * Եւ այնմ, որ
կարողն է պահել զձեզ անարատս և
անբիծս, հաստատել առաջի իւրոց փա-
25 ռացն անբերկեան ցնծութբ. * միոյն այ
փրկչին մերոյ յսի քսի տն մերոյ՝ փառք
մեծութի զօրութի և իշխանութի՝ յառաջ
քան զամ յաւիտեանս, և այժմ և յա-
մենայն յաւիտեանս. ամէն ։

digitised by A.R.A.R.@

# ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԵՒ
## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ։
### ԳԼ. Ա։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ 1
յսի քսի, 'ի ձեռն որոյ ետ ած
ցուցանել ծառայից իւրոց՝ որ
ինչ լինելոց է վաղվաղակի. և
նշանակեաց առաքելով 'ի ձեռն հրեշտա-
կի իւրոյ, առ ծառայ իւր յովհաննէս։
*Որ վկայեաց զվկայութիւն բանին այ, և ըզ- 2
վկայութիւն յսի քսի՝ զոր ետես. և որ էր՝ և որ
լինելոցն էր յետ այնորիկ։ * Երանի՝ որ 3
կարդասցէ կամ լուիցէ զբանս մարգա-
րէութեանս, և պահեսցէ զոր 'ի սմա գրեալ
է. զի ժամանակս մերձեալ է։
* 'Ի յովհաննէ առ եօթն եկեղեցիս՝ որ 4
են յասիայ, շնորհք ընդ ձեզ և խաղաղութի
յայ՝ յէէն՝ և որ էն՝ և որ գալոցն է, և
յեօթն զօրութեանց հոգւոյն՝ որ է առաջի ա-
թոռոյն իւրոյ. * և 'ի յսէ քսէ հաւատա- 5
րիմ վկայէն, որ է անդրանիկ 'ի մեռելոց,
և իշխան թագաւորութեանց երկրի. որ սի-
րեաց

digitised by A.R.A.R.@

րեաց զմեզ, և ելոյծ զկապանս մեղաց
6 մերոց արեամբն իւրով. *և արար զմեզ
Թագաւորս և քահանայս այ և Հօր իւ-
րոյ. որում փառք և զօրութիւն այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ։
7 *Ահաւասիկ գալոց է ըն ամպս. և տեսա-
ցեն զնա ամ աչք, և տեսցեն զնա ծագք
երկրի, և որք խոցեցին զնա ամքեան յերկ-
րի, և կոծեսցին 'ի վր նր. այո՛ ամէն ։
8 *Ես եմ այբ և ես եմ քէ, ասէ տր ած,
որ էն՝ և որ է՝ և որ գալոցն է՝ ամենակալ ։
9 *Ես յովհաննէս եղբայր ձեր և հաղորդա-
կիցնեղութեան և արքայութեան և համբերութեան
որ 'ի քս յս. եղէ ես 'ի կղզւոջն որ անուա-
նեալ կոչի պատմոս՝ վս բանին և վս վկայ-
10 ութեան յսի քսի ։ *Եւ եղէ յիս հոգի 'ի
կիւրակէի աւուր, և լուայ զձայն զհետ
իմ զմեծ իբրև զձայն փողոյ, որ ասէր
ցիս. Ես եմ ալփա՝ և ով. առաջին և վեր-
11 ջին ։ *զոր տեսանես գրեա՛ 'ի գիրս, և
տո՛ւր տանել յեօթն եկեղեցիս՝ որ յե-
փեսոս, և 'ի զմիւռնիա՝՝ 'ի պերգամոն, և
'ի Թիւատիրա, և 'ի սարդիկէ, և 'ի փի-
12 ղադեղփեա, և 'ի լաւոդիկեա ։ *Եւ
դարձայ տեսանել զձայնն՝ որ խօսէր ցիս.
և 'ի դառնալն իմում տեսի եօթն ճրա-
13 գարան ոսկի ։ *Եւ 'ի մէջ եօթն ճրա-
գարանացն նման որդւոյ մարդոյ, զգե-
ցեալ պատմուճան պճղնաւոր, և գօտեւո-
14 րեալ առ ստեամբքն գօտի ոսկեղէն. *և

գլուխ

digitised by A.R.A.R.@

գլուխ նորա և հերքն իբրև զասր սպիտակ՝
և որպէս զձիւն. և աչք նորա որպէս բոց հրոյ. *և 15
ոտք նորա նմանեալ պղնձոյ ծխելոյ 'ի մէջ
հնոցի հրաշէկ. և ձայն նորա իբրև զձայն
ջուրց բազմաց: *Եւ ունէր յաջոյ ձե- 16
ռին իւրում աստեղս եօթն, և 'ի բերա-
նոյ նորա ելանէր սուր երկբերանեան. և ե-
րեսք նորա իբրև զարեգակն ճառագայթեալ
երևէին: *Եւ իբրև տեսի զնա՝ անկայ 17
առ ոտս նորա իբրև զմեռեալ. և եդ 'ի վերայ
իմ զաջ իւր՝ և ասէ ցիս. մի՛ երկնչիր, ես
եմ առաջին, և ես եմ յետին. *և ես 18
եմ կեանք՝ և ես նոյն որ մեռայ, և եմ
կենդանի այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն: և ունիմ զփականս
մահու և դժոխոց: *Գրեա՛ զոր տեսա- 19
նես՝ որ են, և որ յապա՝ և որ հանդեր-
ձեալ է լինել այս. *զխորհուրդ եօթն աս- 20
տեղացդ՝ զոր տեսերդ յաջոյ իմ, և զեօթն
ճրագարանս ոսկիս. եօթն աստեղքն՝
հրեշտակք եօթն եկեղեցեացն են, և ճրա-
գարանքն եօթն՝ եօթն եկեղեցիքն են:

## Գլ. Բ.

Եւ հրեշտակ եփեսացւոց եկեղեցւոյն 1
գրեա. այսպէս ասէ կալողն՝ որ ունի
զաստեղս եօթն յաջու ձեռին իւրում, և
շրջի 'ի մէջ եօթն աշտանակի ոսկւոյ:
*Գիտեմ զգործս քո և զվաստակս քո և 2
զհամբերութիւն քո. և զի ոչ բառնաս ըզ-
չարս,

digitised by A.R.A.R.@

չարս, և փորձեցեր՝ որ ասեն զինքեանս
առաքեալս՝ և ոչ են, և հերքայեցիր՝ և
3 ստեն: *Եւ համբերեցեր և վշտացար
4 վասն անուան իմոյ՝ և աշխատեցար: *Այլ
ունիմ առ քեզ, զի զսէրն քո զառաջին
5 թողեր: *յիշեա այժմ ուստի անկարն՝
և ապաշխարեա, և զառաջին գործսն քո
արա. ապա թէ ոչ՝ գամ ես վաղվաղակի,
և շարժեցից զաշտանակս քո՚ի տեղւոջէ
6 իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարեսցես: *Այդ՝
զայս արա՝ զի ատեսցես զգործսն նիկո-
7 ղայոսի, զոր ես ատեամ: *Որ ունի ա-
կանջս լսելոյ, լուիցէ զինչ ասէ հոգին
ՙըն առ եկեղեցիս. որ յաղթէն, տաց նմ
ուտել՚ի փայտէն կենաց՝ որ է՚ի մէջ
8 դրախտին այ: *Եւ առ հրեշտակ զմիւռ-
նացւոց եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ
անսկիզբնն և անվախճանն, որ եղև մե-
9 ռեալ՝ և կենդանացաւ: *Գիտեմ զգործս
քո՝ և զնեղութիւն և զաղքատութիւն, այլ
աղքատութիւն քո մեծութիւն եղիցի. և
զհայհոյութիւն՝ որ ասէին զինքեանս հր-
էայս գոլ՝ և չէին ինչ, այլ ժողովս սա-
10 տանայի: *Մի երկնչիր՝ վասն որոյ կա-
միս չարչարիլ. ահա հանդերձէ բանսար-
կուն արկանել՚ի ձէնջ՚ի բանտ, զի փոր-
ձիցիք, և ունիք նեղութի աւուրս տասն.
լեր հաւատարիմ մինչև՚ի մահ, և տաց
11 քեզ զպսակն կենաց: *Որ ունի ականջս
լսելոյ՝ լուիցէ զինչ հոգին ՙըն ասէ առ ե-
կե-

digitised by A.R.A.R.@

կեղեցիս. որ յաղթէ, ոչ անիրաւի յերկ-
րորդ մահուանէն: *Եւ առ հրեշտակն՝ 12
որ 'ի պերգամոյ եկեղեցւոյն, գրեա՛. այս-
պէս ասէ՝ որ ունի զսուրն երկսայրի սր-
րեն: *Տեսի զգործս քո՝ և զի բնակեալ 13
ես ուր աթոռն է սատանայի. և ունիս
զանուն իմ, և ոչ ուրացար զհաւատս իմ
յաւուր յորում անթիպասվկայն իմ հա-
ւատարիմ եղև. զի վկայ է իմ հաւատա-
րիմ ամ հետացեալ՝ որ սպանաւ 'ի ձէնջ,
որ կայք՝ ուր սատանայ է բնակեալ:
*Այլ ունիմ առ քեզ սակաւ. զի կայ 14
առ քեզ վդպտութին բաղաամու՝ որ ու-
սոյց զբաղակ դնել գայթագղութ առա-
ջի որդւոցն իսրլի, ուտել նց զոհեալ՝ և պոռ-
նկել: *այսպէս և դու ունիս զվարդապե- 15
տութին նիկողայեցւոց՝ զոր ես ատեամ:
*Արդ՝ ապաշխարեա՛, ապա թէ ոչ՝ գամ 16
վաղվաղակի. և պատերազմեցայց ընդ նս
սրով բերանոյ իմոյ: *Որ ունիցի ականջս 17
լսելոյ՝ լուիցէ զինչ հոգին ասէ առ եկեղե-
ցիս. որ յաղթէ տաց նմ ուտել 'ի մանա-
նայէն թագուցելոյ, և տաց նմ զգիրն
սրբութ. և գրեալ անուն նոր 'ի գիրն, զոր
ոչ ոք գիտէ՝ բայց միայն որ առնուն: *Եւ 18
առ հրեշտակն որ 'ի Թիւատրոյ եկեղեցւոյն՝
գրեա՛. այսպէս ասէ որդին այ, որոյ աչք
իւր են իբրև զբոց հրոյ, և ոտք նր նման
պղնձի ծխելոյ: *Տեսի զգործս քո՝ և զսէր 19
և զհաւատ՝ և զպաշտօն քո համբերութ.
զի

digitised by A.R.A.R.@

զի բազում է վաստակ քո վերջինն քան
20 զառաջինն: *Այլ ասեմ առ քեզ բա-
զում. զի թողեր զկինն զյեզաբէլ. որ
ասէր զինքն մարգարէ, և ուսուցանէր
մոլորութի զծառայս իմ՝ պոռնկել և
21 ուտել զզոհեալ: *Եւ ետու նց ժամա-
նակ ապաշխարել զպոռնկութենէ իւրեանց՝
22 և ոչ ապաշխարեցին: *Ահաւասիկ ես
արկանեմ զնա 'ի հնոց, և զգործակիցս
իւր ը որս շնացաւ՝ 'ի նեղութիւս մեծա-
մեծս. եթէ ոչ ապաշխարեսցեն 'ի գոր-
23 ծոց իւրեանց: *Եւ զորդիս նց սպանից
մահուամբ. և ծանիցեն ամ եկեղեցիք՝
թէ ես եմ որ յանդիմանեմ զերիկա-
մունս և զսիրտս. և տամ ձեզ իւրա-
24 քանչիւր ըստ գործոց իւրեանց: *Այլ
ձեզ ասեմ որք 'ի Թիւատիր էք, և ոչ
ունիք զվարդապետութիս զայս. որ ոչ
ծանեայք զխորս սատանայի՝ զոր խօսին.
25 ոչ արկից զձեօք ծանրութի: *այլ զոր ու-
26 նիք, պահեցէք՝ մինչև ես գամ: *Եւ
որ յաղթէ՝ և պահէ զգործս իմ մինչև
ցվախճան, տաց նմ իշխանութի 'ի վր
27 ազգաց: *և հովուեսցէ զնս գաւազա-
նաւ երկաթեաւ. և իբրև զանօթ բրտի
28 փշրեսցէ զնս: *Որպ և ես ընկալայ 'ի
հօրէ իմմէ, և տաց նց զաստղն առա-
29 ւօտուն: *Որ ունի ականջս լսելոյ՝ լուի-
ցէ զինչ հոգին ասէ առ եկեղեցիս:


digitised by A.R.A.R.@

# ԳԼ. Գ.

Եւ առ հրեշտակն սարդիացւոց եկեղեց- 1
ւոյն գրեա՛. այսպէս ասէ՝ որ ունի
զեօթն հոգին այ՝ եւ զեօթն աստեղս. տե-
սի զգործս քո՝ զի անուն կենդանւոյ ու-
նիս՝ եւ մեռեալ ես։ *Լեր արթուն՝ եւ հաս- 2
տատեա՛ այսուհետեւ՝ զի հանդերձեալ ես
մեռանել. քզի ոչ գտի զգործս քո կա-
տարեալ առաջի այ։ *Արդ եօք յիշեա՛ թէ 3
ոպ լուար, եւ պահեա՛ եւ ապաշխարեա՛.
ապա թէ ոչ զուարթնանաս՝ գամ ոպ գող.
եւ ոչ ո՛ք իմանայ զգալուստ իմ առ քեզ։
*Ունիս սակաւ մի զանուն սարդիացւո- 4
ցն, որք ոչ աղտեղացուցին զհանդերձս
իւրեանց. եւ շրջին 'ի սպիտակս՝ որում
արժանի եղեն։ *Որ յաղթէ՝ այսպ զգեց- 5
ցի սպիտակս, եւ ոչ ջնջեցի անուն նր
'ի դպրութեն կենաց. եւ խոստովանեցայց
զանուն նր առաջի հօր իմոյ՝ եւ առաջի
հրեշտակաց։ *Որ ունի ականջս լսելոյ՝ 6
լուիցէ զինչ ասէ հոգին առ եկղցիս։ *Եւ 7
առ հրեշտակն փիղադեղփեացւ եկղցւոյն
գրեա՛. այսպ ասէ սրբն ճշմարիտն, որ ու-
նի զփականս դաւթի. բանայ՝ եւ ոչ ո՛ք է
որ փակէ, եւ փակէ՝ եւ ոչ ո՛ք է որ բանայ։
*Տեսի զգործս քո. ահա ետու առաջի քո 8
դուռն բացեալ, զոր ոչ ո՛ք կարէ փակել.
զի սակաւիկ ունիս զօրութի, եւ պահեցեր
զբանս իմ, եւ ոչ ուրացար զանուն իմ։ *Ա- 9
հա-

digitised by A.R.A.R.@

հաւասիկ ես տամ քեզ զժողովն սատա-
նայի, որք ասեն զինքեանս հրէայս գոլ՝
և ոչ են, այլ ստեն. արարից զնո՝ զի ե-
կեսցեն՝ և երկիր պագցեն առաջի ոտից
10 քոց, և ծանիցեն զի ես սիրեցի զքեզ: * Զի
պահեցեր զբան համբերութե̃ իմոյ, և ես
պահեցից զքեզ 'ի ժամ փորձութե̃ քո. որ
հանդերձեալ է գալ յա̃մ տիեզերս փոր-
11 ձել զա̃մ բնակեալս յերեսս երկրի: * Ահա
գամ վաղվաղակի, կա՛լ զոր ունիսդ՝ զի
12 մի՛ ոք առցէ զպսակ քո: * Որ յաղթէ՝ ա-
րարից զնա սիւն տաճարի ա̃յ իմոյ, և ար-
տաքս այլ մի՛ ևս ելցէ. և գրեցից 'ի վր̃
նր̃ զանուն ա̃յ իմոյ, և զանուն քաղաքի
ա̃յ իմոյ՝ զնորն Ե̃էմի, որ իջանելոց է յերկ-
13 նից ա̃յ իմոյ. և անուն նր̃ նոր: * Որ ու-
նի ականջս՝ լուիցէ՛ զինչ ասէ հոգին առ
14 եկեղեցիս: * Եւ առ հրեշտակն լաւոդի-
կեայ եկղ̃ցւոյն գրեա. այսպ̃ ասէ ամէնն
վկայն հաւատարիմ և ճշմարիտ, սկիզբն
15 սկզբան արարածոց ա̃յ: * Գիտեմ զգործս
քո՝ զի ոչ ցուրտ ես՝ և ոչ ջերմ. պարտ էր
16 քեզ ցուրտ լինել՝ և կա՛մ ջերմ: * Այլ դու
գաղջ ես՝ և ոչ ջերմ և ոչ ցուրտ, հան-
17 դերձեալ ես փսխել 'ի բերանոյ իմմէ: * Զի
ասես. մեծատուն եմ՝ և մեծացայ, և ոչ
ինչ կարօտ եմ. և ոչ գիտես՝ եթէ դու
ես ողորմելի և հեղգ և աղքատ՝ մերկ և
18 կոյր: * Արդ՝ ես խորհրդակից եղէց քեզ,
առ գնեա՛ յինէն ոսկի փորձեալ 'ի հրոյ՝ զի



digitised by A.R.A.R.@

մեծասցիս, և հանդերձս սպիտակս՝ զի ըզ-
գեցցիս, զի մի երևեսցի անվայելչութիւն մեր-
կութեան քո. և դի՛ր դեղ յաչս քո՝ զի տեսցես:
* Զսա՝ զոր սիրեմ, յանդիմանեմ և խրա- 19
տեմ. նախանձեա՛ այժմ, և ապաշխարեա՛:
* Ահաւասիկ կամ ես առ դուրս և բախեմ. 20
եթէ ոք լուիցէ ձայնի իմում՝ և բանայցէ
զդրունսն, մտից առ նա՝ և ընթրիս ա-
րարից առ նա, և նա ընդ իս: * Որ յաղթէ՝ 21
տաց նմա նստել ընդ իս յաթոռ իմ, որպէս և
ես յաղթեցի՝ և նստայ յաթոռ Հօր իմոյ:
* Որ ունիցի ականջս՝ լուիցէ զինչ ասէ 22
Հոգին առ եկեղեցիս :

## ԳԼ. Դ:

Եւ յետ այսր իրի տեսի՝ և ահա դրունք 1
երկնից բացեալ էին, և ձայն փողոյն
առաջնոյ զոր լուայ՝ խօսէր ընդ իս և ասէր.
ել այսր՝ և ցուցից քեզ՝ զինչ լինելոց է յա-
պա ժամս: * Եւ ժամանեալ յիս Հոգի, և 2
տեսի աթոռ մի՝ զի կայր յերկինս. * և 3
'ի վերայ աթոռոյն նստէր նման տեսլեան
ականց յասպիսոյ և սարդիոնի: * և քնյք 4
շուրջ զաթոռովն նմանք տեսլեան զմրխ-
տի և շուրջ զաթոռովն աթոռք քսան և
չորք՝ և 'ի վերայ աթոռոցն նստէին քսան և
չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս սպի-
տակս, և 'ի գլուխս իւրեանց պսակս ոս-
կիս: * Եւ յաթոռոյ անտի ելանէին փայ- 5
լատակմունք և ձայնք և որոտմունք. և
եօթն

digitised by A.R.A.R.@

եօթն ղամբարք հրոյ բորբոքելոյ առաջի
6 աթոռոյն, որ են եօթն հոգիքն այ։ *Եւ
էր առաջի աթոռոյն ծով ապակեղէն՝ նը-
ման սպիտակութեան սառին, եւ 'ի մէջ աթո-
ռոյն չորք կենդանիք եւ լի էին աչօք ա-
7 ռաջոյ եւ յետոյ։ *Եւ էր կենդանին ա-
ռաջին նման առիւծու, եւ երկրորդ կենդա-
նին նման զուարակի, եւ երրորդ կենդանին
ունէր երեսս մարդոյ, եւ չորրորդ կենդանին
8 նման արծուոյ թռուցելոյ։ *Եւ չորից
կենդանեացն էին միոյ միոյ 'ի նմանէ վեց
թեւք, շուրջանակի եւ 'ի ներքոյ լի էին ա-
չօք, ոչ հանգչէին՝ ոչ զտիւ եւ ոչ զգիշեր՝
ասելով. սբ սբ սբ տր ած ամենակալ՝ որ
9 էն եւ էս, եւ որ գալոց ես։ *Եւ յորժամ
տային կենդանիքն փառս եւ պատիւ եւ գո-
հութիւն նստելոյն 'ի վերայ աթոռոյն՝ կենդան-
10 ւոյն յաւիտեանս յաւիտենից, (*անկա-
նէին քսան եւ չորք երիցունքն առաջի նըս-
տելոյն յաթոռն, եւ երկիր պագանէին
կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից.) եւ
դնէին զպսակս իւրեանց առաջի աթո-
11 ռոյն ասելով, *արժանի ես տր ած մեր
սբ՝ առնուլ փառս եւ պատիւ եւ զօրութիւն,
զի դու ստեղծեր զամ. եւ 'ի կամելն քո
ստեղծան՝ եւ կան հաստատուն։

## ԳԼ. Ե.

1 Եւ տեսի 'ի ձեռս աջոյ՝ որ նստէր 'ի վերայ
աթոռոյն՝ գիրք գրեալ ներքոյ եւ ար-

տա-

digitised by A.R.A.R.@

տաքոյ, և կնքեալ եօթն կնքով։ *Եւ տե- 2
սի հրեշտակ մի զօրաւոր՝ զի քարոզէր ՚ի
ձայն մեծ. ո՞ է արժանի բանալ զգիրքս՝
և լուծանել զկնիքս նր։ *Եւ ոչ ոք կարէր՝ 3
ոչ ՚ի յերկինս և ոչ յերկիր և ոչ ՚ի ներ-
քոյ երկրի՝ բանալ զգիրքն, զի ոչ տեսին
զնա։ *Եւ ես լայի ուժգին՝ զի ոչ ոք գը- 4
տաւ արժանի բանալ զգիրքն և հայել ՚ի
նա։ *Եւ մի յերիցանցն ասէ ցիս. մի 5
լար, ահաւասիկ յաղթեաց առիւծն յազ-
գէն յուդայ յարմատոյն դաւթի՝ բանալ
զգիրքն՝ և լուծանել զեօթն կնիքսն նր։
*Եւ տեսի ՚ի մէջ աթոռոյն և ՚ի մէջ չո- 6
րից կենդանեացն՝ և ՚ի մէջ երիցանցն
գառն կայր զենեալ, որ ունէր եօթն եղ-
ջիւրս՝ և աչս եօթն, որ են եօթն հոգիք
այ որ են առաքեալ ընդ ամ երկիր։ *Եւ 7
եկն ընկալաւ յաջոյ ձեռանէ նր՝ որ նըս-
տէր ՚ի վր աթոռոյն։ *Եւ յորժամ առ- 8
զգիրսն, չորք կենդանիքն և քսան և չորք
երիցունքն անկանէին առաջի գառինն.
և ունէին իւրաքանչիւր քնար՝ և բուր-
վառ ոսկի լի խնկով, որ է աղօթք սրբցն։
*Եւ օրհնէին երգս նորս և ասէին. ար- 9
ժանի ես առնուլ զգիրդ՝ և բանալ զկը-
նիքս դորա, զի զենար՝ և գնեցեր զմեզ
այ արեամբդ քով յամ ազգաց և ՚ի լե-
զուաց և ՚ի ժողովրդոց հեթանոսաց։ *Եւ 10
արարեր զսոսա այ մերոյ թագաւորս և
քահանայս՝ թագաւորել ՚ի վր երկրի։
*Եւ

digitised by A.R.A.R.@

11 *Եւ տեսի, և լուայ զձայն հրեշտակաց
բազմաց՝ որք կային շուրջ զաթոռովն և
զչորիւք կենդանեօքն և զքահանայիւքն.
և էր թիւն նոցա՝ բիւրք բիւրուց՝ և հազարք
12 հազարաց ։ *ասէին ձայնիւ մեծաւ . ար-
ժան է գառնդ զենեալ առնուլ զմեծութիւն
և զիմաստութիւն և զզօրութիւն և զպատիւ և
13 զփառս և զօրհնութիւն ։ *Եւ ամենայն արարածք՝
որ են յերկինս և յերկրի և՛ի ծովու և որ
՚ի նոսա՝ լուայ զի ասէին . որ նստի յաթոռն՝
և գառինն օրհնեալ բարձրացեալ և փա-
ռաւորեալ յաւիտեանս յաւիտենից ։
14 *Եւ չորք կենդանիքն ասէին , ամէն .
և երիցունքն անկանէին առաջի նորա
և երկիրպագանէին ։

## ԳԼ . Զ .

1 Եւ տեսի զի եբաց զմին ՚ի կնքոցն , և
լուայ ՚ի միոյ ՚ի չորից կենդանեացն իբ-
րև զձայն որոտման՝ զի ասէր՝ թէ գամ ։
2 *և տեսի՝ և ահա ձի սպիտակ , և որ հե-
ծեալն էր ՚ի նմա՝ ունէր աղեղն. և տուաւ
նմա պսակ , և ել յաղթող՝ զի յաղթես-
3 ցէ ։ *Եւ յորժամ եբաց զկնիքն երկրորդ ,
լուայ յերկրորդ կենդանւոյն՝ զի ասէր ,
4 գամ ։ *և ել այլ ձի կարմիր . և որ հե-
ծեալն էր ՚ի վերայ նորա՝ տուաւ նմա առնուլ
զխաղաղութիւն յերկրէ , զի զմիմեանս զեն-
5 ցեն . և տուաւ նմա սուր մի մեծ ։ *Եւ
յորժամ եբաց զկնիքն երրորդ, լուայ յեր-
րորդ

digitised by A.R.A.R.@

րորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ Թէ գամ. եւ
տեսի՝ եւ ահա ձի սեաւ, եւ որ նստէրն էր
'ի վերայ նորա՝ ունէր կշիռք 'ի ձեռին իւրում։
* Եւ լուայ ձայն 'ի միջոյ չորից կենդա- 6
նեացն. կապիճ մի ցորեան՝ դենարի միոջ,
եւ երեք կապիճ գարի՝ դենարի միոջ. եւ
ձէթ եւ գինի մի՛ վնասեսցես։ * Եւ յոր- 7
ժամ եբաց զկնիքն չորրորդ, լուայ ձայն 'ի
չորրորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ Թէ գամ։ * Եւ 8
տեսի՝ եւ ահա ձի շլոռոս, եւ որ նստէրն 'ի
վերայ՝ ունէր զմահ, եւ դժոխք երթային
զհետ նորա. եւ տուաւ նմա իշխանութիւն չոր-
րորդ մասին աշխարհի՝ սատակել սրով եւ
սովով եւ մահուամբ՝ եւ գազանօք երկրի։
* Եւ յորժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ 9
տեսի 'ի ներքոյ սեղանոյն զհոգիս ամենայն
մարդկան զենելոց վասն բանին Աստուծոյ՝ եւ վասն վը-
կայութեանն նորա զոր ունէին։ * որք ասէին 'ի 10
ձայն մեծ. մինչեւ յերբ Տէր սուրբ եւ ճշմա-
րիտ՝ ոչ դատիս, եւ խնդրես զվրէժ արեան
մերոյ 'ի բնակչաց երկրի։ * Եւ տուաւ 11
նոցա արկանելիս սպիտակս, եւ ասացաւ նոցա
զի հանգիցեն փոքր մի ժամանակ, մինչեւ
լցցին ծառայակիցք նոցա եւ եղբարք նոցա՝ որք
հանդերձեալ են կատարիլ իբրեւ զնոսա։
* Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցե- 12
րորդ՝ եղեւ շարժումն մեծ, եւ արեգակն
եղեւ սեաւ իբրեւ զկապերտ այծեայ, եւ
լուսինն բոլորովին եղեւ արիւն։ * Եւ աս- 13
տեղք երկնից թօթափեցան 'ի յերկիր,

որպէս

digitised by A.R.A.R.@

ոմ տերեւ թզենւոյ զի ուժգին շարժիցի
14 'ի հողմոյ ։ * Եւ երկին իբրեւ զմագա-
ղաթեայ գիրս գալարեր ․ եւ ա՟մ լերինք
եւ կղզիք 'ի տեղւոյ իւրեանց շարժեցան ։
15 * Եւ թագաւորք երկրի եւ իշխանք՝ հա-
զարապետք եւ մեծամեծք եւ զօրաւորք՝
եւ ա՟մ ծառայք եւ ա՟մ ազատք թաքու-
ցին զինքեանս յայրս եւ 'ի ծերպս վի-
16 մաց ։ * Եւ ասէին լերանց՝ թէ անկե-
րուք 'ի վ՟ր մեր, եւ ցբլուրս՝ թէ ծածկե-
17 ցէք զմեզ ։ * զի եկն օր մեծ բարկուե՟
նորա ․ եւ ով կարէ կալ առաջի նորա ։

## ԳԼ ։ Է ։

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս՝
զի կային 'ի չորս անկիւնս երկրի ․ եւ ու-
նէին զչորս հողմս երկրի՝ զի մի շնչեսցէ
հողմ 'ի վ՟ր երկրի, եւ մի 'ի ծովու՝ եւ մի 'ի
2 ծառս ։ * Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի ել
յարեւելից, եւ ունէր զկնիք ա՟յ կենդանւոյ,
եւ աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս
հրեշտակսն՝ որոց առեալ էր իշխանութի ա-
3 պականել զերկիր եւ զծով ։ * եւ ասէր ․ մի
վնասէք երկրի՝ մի ծովու՝ մի ծառոց, դա-
դարեցէք մինչեւ կնքեսցեմ զծառայս ա՟յ ի-
4 մոյ 'ի ճակատս ն՟ց ։ * Եւ լուայ զթիւ կնի-
քելոցն՝ հարիւր քառասուն եւ չորք հազար
5 կնքեալք յազգէ որդւոցն ի՟ղի ։ * Յազգէն
յուդայ՝ երկոտասան հազար կնքեալ ։
Յազգէն ռուբենի՝ երկոտասան հազար
կնի-

digitised by A.R.A.R.@

կնքեալ։ Յազգէն Գադայ՝ երկոտասան
հազար կնքեալ։ * Յազգէն Ասերայ՝ եր- 6
կոտասան հազար կնքեալ։ Յազգէն Նեփ-
թաղիմայ՝ երկոտասան հազար կնքեալ։
Յազգէն Մանասէի՝ երկոտասան հազար
կնքեալ։ * Յազգէն Շմաւոնի՝ երկոտա- 7
սան հազար կնքեալ։ Յազգէն Ղեւեայ՝ եր-
կոտասան հազար կնքեալ։ Յազգէն Իսա-
քարայ՝ երկոտ̃ան հազար կնքեալ։ * Յազ- 8
գէն Զաբուղոնի՝ երկոտ̃ան հազար կըն-
քեալ։ Յազգէն Յովսեփայ՝ երկոտասան
հազար կնքեալ։ Յազգէն Բենիամենի՝ եր-
կոտասան հազար կնքեալ։ * Եւ յետ այսո- 9
րիկ տեսի՝ եւ ահա ժողովուրդ բ̃զմ որոց
ոչ գոյր թիւ, յ̃ամ հեթանոսաց եւ յ̃ամ
ազգաց եւ յ̃ամ լեզուաց եւ յ̃ամ ժ̃ղվրդոց,
որք կային առաջի աթոռոյն եւ առաջի գա-
ռինն՝ արկեալ զիւրեամբք հանդերձս ըս-
պիտակս, եւ արմաւենիս ՚ի ձեռս իւրեանց։
* աղաղակէին ՚ի ձայն մեծ՝ եւ ասէին. 10
փրկութի̃յ մերոյ՝ որ նստի ՚ի վ̃ր աթոռոյն,
եւ Գառինն։ * Եւ ա̃մ հրեշտակք կային 11
շուրջ զաթոռովն եւ զերիցամբք եւ զչո-
րիւք կենդանեօքն, եւ անկանէին յերեսս
առաջի աթոռոյն՝ եւ երկրպագանէին ա̃յ,
* ասելով. ամէն. օրհնութի̃ եւ փառք եւ ի- 12
մաստութի̃ եւ գոհութի̃ եւ պատիւ եւ զօրութի̃
եւ շնորհք ա̃ծն ա̃յ մերոյ՝ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն։ * Եւ ասէ ցիս մի յերիցանց 13
անտի. մ̃ք որ զգեցեալս են զհանդերձս
սպի-

digitised by A.R.A.R.@

14 սպիտակս՝ ո՞յք են՝ և կ՟մ ուստի՞ գան: *Եւ
ասացի ցնա. տ՟ր՝ դու գիտես: և ասէ ցիս.
ս՟ք են՝ որ գան 'ի վշտաց մեծաց, և լուա-
ցին զարկանելիս իւրեանց՝ և սպիտակա-
15 ցուցին արեամբ գառինն: * վ՟ն այնորիկ
են առաջի աթոռոյն այ՟՝ և պաշտեն զնա
զտիւ և զգիշեր 'ի տաճարի ն՟ր. և որ նստի
16 'ի վ՟ր աթոռոյն՝ բնակեալ է 'ի նս. * ոչ
քաղցիցեն և ոչ ծարաւիցեն, և ոչ՟ք մե-
17 ղիցէ նց՟՝ ոչ արեգակն և ոչ տօթ: *Եւ
գառնն 'ի միջոյ աթոռոյն իւրոյ հովուես-
ցէ զնս, և առաջնորդեսցէ նոցա 'ի կե-
նաց աղբիւր ջրոյ կենդանւոյ. քանզի ե-
հատ այ՟ծ զամ՟ արտօսր յերեսաց նոցա:

## ԳԼ. Ը:

1 Եւ յորժամ եբաց զկնիքն եօթներորդ՝
2 եղև լռութի՟ յերկինս՝ ո՟պ կէս ժամու: * և
տեսի հրեշտակս եօթն, որ առաջի այ՟
3 կային. և տուաւ նոցա եօթն փողս: *Եւ
այլ հրեշտակ եկն եկաց առ սեղանն, և
ունէր խնկանոց ոսկի. և տուաւ նմա
խունկ բ՟զմ, զի մատուսցէ զաղօթս ամ՟
սրբոց 'ի վ՟ր ոսկեղէն սեղանոյ առաջի ա-
4 թոռոյն: * և ել ծուխ խնկոցն աղօթք
սրբցն 'ի ձեռաց հրեշտակացն առաջի այ՟:
5 *Եւ ելից հրեշտակն զխնկանոցն 'ի հրոյ
սեղանոյն՝ և արկ զնա յերկիր. և եղև
որոտումն և ձայնք և փայլատակումն և
6 շարժումն մեծ: *Եւ եօթն հրեշտակքն

որ

digitised by A.R.A.R.@

որ ունէին եօթն փողս՝ պատրաստեցին
զինքեանս առ 'ի հարկանել: * Եւ առա- 7
ջին հրեշտակն եհար զփողն, և եղև կար-
կուտ և հուր և արիւն խառնեալ, և ան-
կաւ յերկիր, և զերրորդ մասն երկրի այ-
րեաց, և զեր̃րդ մասն ծառոց այրեաց, և
զա̃մ դալար խոտոյ այրեաց: * Եւ երկ̃դ 8
հրեշտակն փողեաց, և իբրև զլեառն մի
մեծ հրդեհեալ անկաւ 'ի ծով, և եղև
եր̃րդ մասն ծովու արիւն. * և սատակե- 9
ցաւ եր̃րդ մասն ղուղակաց, և որ ունէր
շունչ կենդանի՝ ապականեցաւ. (և եր̃րդ
մասն նաւուց ընկղմեցաւ: ) * Եւ եր̃րդ 10
հրեշտակն փողեաց, և անկաւ յերկնից
աստղ մի մեծ՝ բորբոքե̃լ իբրև զղամբար,
և անկաւ յերրորդ մասն գետոց և աղբե-
րաց. * և էր անուն աստեղն դառնու̃թ. 11
և բազումք մեռան 'ի դառնու̃թ ջուրցն:
* Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, և 12
վիրաւորեր երրորդ մասն արեգական՝ և
երրորդ մասն լուսնի՝ և երրորդ մասն
աստեղաց. և խաւարէր երրորդ մասն
նոցա, և երրորդ մասն գիշերոյ նոյնպէս:
* Եւ տեսի՝ և լուայ ձայն հրեշտակի 13
թռուցելոյ 'ի մէջ երկնից՝ զի ասէր 'ի
ձայն մեծ, վա՛յ վա՛յ վա՛յ՝ որ բնակեալ են
յերկրի. յորժամ լինիցի ձայն երիցն եւս
փողոց, զոր կամիցին հրեշտակքն հար-
կանել:

ԳԼ.

digitised by A.R.A.R.@

## ԳԼ. Թ.

1 Եւ հինգերորդ հրեշտակն փողեր. և տե-
սի զի աստղ մի անկաւ յերկնից, և
2 տուաւ նմա բանալի դրոյն անդնդոց. * և
ելանէր ծուխ 'ի դրոյն որպէս զծուխ հնոցի
մեծի. և խաւարեցաւ արեգակն և օդք։
3 * Եւ 'ի դրոյն ելանէր մարախ 'ի յերկիր.
և տուաւ նոցա իշխանութիւն իբրև զխայթոցս
4 կարճի. * և ասացաւ նոցա՝ զի մի մեղիցեն
խոտոյ երկրի և մի ամենայն ծառոց, բայց
միայն մարդոյ երկրայնոյ, որ ոչ ունիցին
5 զկնիք 'ի վերայ ճակատու իւրեանց։ * Եւ
տուաւ նոցա հրաման՝ զի մի սպանանիցեն
զնոսա, այլ չարչարեսցեն զնոսա ամիսս հինգ.
և չարչարանք նոցա իբրև զխայթոցս կարճի՝
6 որ հարկանիցէ զմարդ։ * Եւ յաւուրսն
յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝ և
մի գտցեն. և ցանկան մեռանել՝ և փա-
7 խիցէ 'ի նոցանէ մահ։ * Եւ նմանութիւն
մարախոյն, նմանութիւն ձիոյ պատրաստելոյ
'ի պատերազմ. և 'ի վերայ գլխոց նոցա իբրև ըզ-
պսակ՝ նմանեալ ոսկւոյ. և երեսք նոցա իբրև
8 զերեսս մարդոյ. * և հերք նոցա իբրև ըզ-
հերս կնոջ. և ատամունք նոցա իբրև զա-
9 ռիւծու։ * Եւ ունէին զրահս իբրև ըզ-
զրահս երկաթի. և ձայն թևոց նոցա իբրև
զձայն կառավարձիոց բազմաց՝ որ արշա-
10 ւեն 'ի պատերազմ։ * և ունէին ագիս ըստ
նմանութեան կարճի. և խայթոց յագիս նոցա.
և

digitised by A.R.A.R.@

և ունէին իշխանութի՟ չարչարել զմարդիկ
ամիսս հինգ: * և ունէին թգւոր՝ 'ի վ՟ր իւ- 11
րեանց զհրեշտակն դժոխոց. և անուն նր՟
եբրայեցերէն՝ աղբադոն, որ կոչի 'ի հայ
բարբառ՝ կորուստ: * Ահաւասիկ վայ մի 12
էանց, և վայք երկու գալոց են: * Եւ վե- 13
ցերորդ հրեշտակն հարկանէր զփողն. և
լուայ ձայն 'ի չորից կենդանեացն՝ որ էին
առաջի սեղանոյն այ՟. * զի ասէր ցհրեշ- 14
տակն վեցերորդ՝ որ ունէր զփողն. լո՛յծ
զչորս հրեշտակսն զկապեալս 'ի վ՟ր գե-
տոյն եփրատայ: * Եւ լուծան չորս հրեշ- 15
տակքն՝ պատրաստեալք 'ի ժամ և յօր և
յամիս և 'ի տարի, զի սպանցեն զերրորդ
մասն մարդկան: * և համարք հեծելոց 16
զօրացն նց՟՝ բիւրք բիւրուց՝ և հազարք հա-
զարաց՝ լուայ զթիւ նց՟: * Եւ տեսի ձիս 17
'ի տեսլեանն, և հեծեալս 'ի նս՟՝ որք ու-
նէին զրահս հրեղէնս, և յակինթս հր-
դեհեղս ծծմբով. և գլուխք ձիոցն իբրև
զգլուխս առիւծուց. և 'ի բերանոյ նց՟
հուր ելանէր՝ և ծուխ և ծծումբ: * Եւ 18
'ի հարուածոցս յայսցանէ մեռաւ եր՟րդ
մասն մարդկան՝ 'ի հրոյն և 'ի ծխոյն և 'ի
ծծմբոյն, որ ելանէր 'ի բերանոյ նց՟: * զի 19
իշխանութի՟ 'ի բերանս է նց՟՝ և յագիս նց՟.
և ագիք նց՟ նմանութի՟ օձի. և ունէին գլ-
լուխք՝ որովք սատակէին զանիրաւս: * Եւ 20
այլք 'ի մարդկանէ որ ոչ մեռան 'ի հար-
ուածոցս յայսցանէ, ոչ ապաշխարեցին և
ոչ
digitised by A.R.A.R.@

ոչ դարձան 'ի գործոց ձեռաց իւրեանց,
յերկրպագութենէ դիւաց և կռոց յոսկեղէ-
նաց և յարծաթեղինաց՝ և 'ի պղնձոյ և'ի
քարէ և'ի փայտէ որք ոչ տեսանել կարեն
21 և ոչ լսել և ոչ գնալ. * և ոչ ապաշխարե-
ցին'ի մարդասպանութենէ՝ և'ի դեղատուու-
թենէ, և'ի պոռնկութենէ և'ի գողութենէ իւրեանց:

## ԳԼ. Ժ.

1 Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի ի-
ջանէր յերկնից, և զգեցեալ էր ամպ՝ և
ծիածան 'ի գլուխ նր. և երեսք նր իբրև
2 զարեգակն, և ոտք նր որպ սիւն հրոյ: * Եւ
ունէր'ի ձեռին իւրում գրկոյք մի բացեալ.
և եդ զոտն իւր զաջ'ի վր ծովու, և զձախն
3 'ի վր երկրի: * և աղաղակեաց 'ի ձայն
մեծ՝ գոչեաց իբրև զառիւծ. և յորժամ
աղաղակեաց՝ խօսեցան եօթն որոտմունք
4 յիւրեանց ձայնս: * Եւ յորժամ խօսե-
ցան եօթն որոտմունքն՝ կամէի գրել. և
լուայ ձայն յերկնից՝ զի ասէր, կնքեա զոր
խօսեցան եօթն որոտմունքն՝ և մի գրեր:
5 * Եւ հրեշտակն զոր տեսի, որ եդ զոտն
իւր 'ի վր ծովու և զմիւսն 'ի ցամաքի,
6 համբարձ զձեռն իւր զաջ յերկինս. * և
երդուաւ 'ի կենդանին յաւիտենից՝ որ
հաստատեաց զերկինս՝ և որ 'ի նմ, և զեր-
կիր և որ 'ի նմա. զի ոչ ևս կայ այլ ժմկ.
7 * այլ յաւուրս ձայնի եօթներորդ հրեշ-
տակին՝ յորժամ հարցէ զփողն, կատա-
րես-

ռեսցի խորհուրդն այ̃՝ որ աւետարանեցաւ
՚ի ձեռն ծառայից իւրոց մրգ̃րէից։ *Եւ 8
ձայնն զոր լուայ յերկնից՝ դարձեալ խօսե-
ցաւ ըն̃իս՝ և ասէ. երթ առ զգրկոյսն՝ զոր
ունի հրեշտակն բացեալ ՚ի ձեռին իւրում,
և կայ ՚ի վր̃ ծովու և ցամաքի։ *Եւ ես 9
երթեալ առ հրեշտակն՝ խնդրեցի ՚ի նմա-
նէ. և ասէ ցիս, առ զսա՝ և կեր զդոյն,
և դառնասցի յորովայն քո. այլ ՚ի բերան
քո է քաղցր իբրև զմեղր։ *Եւ առի զգր- 10
կոյսն բացեալ ՚ի հրեշտակէն՝ և կերայ զնա.
և էր ՚ի բերան իմ որպ̃ մեղր. և յորժամ
կերայ, դառնացաւ որովայն իմ։ *Եւ 11
ասէ ցիս. հասանէ քեզ դարձեալ մար-
գարէանալ ՚ի ժողովուրդս՝ և ՚ի հեթա-
նոսս և ՚ի լեզուս և ՚ի թգ̃աւորս երկրի։

## ԳԼ. ԺԱ։

Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազա- 1
նի. և կայր հրեշտակն՝ և ասէր ցիս. արի
և չափեա՛ զտաճարն այ̃ և զսեղանն՝ և
զերկրպագուսն որ ՚ի նմ̃։ *Եւ զգաւիթն 2
որ արտաքոյ տաճարին՝ թո՛ղ զնա՝ և մի
չափեր. զի տուեալ է զնա հեթանոսաց.
և զքաղաքն սբ̃ կոխեսցեն ամիսս քառա-
սուն և երկուս։ *Եւ տաց երկուց վկայից 3
իմոց՝ և մարգարէասցեն աւուրս հազար
երկերիւր և վաթսուն՝ զգեցեալ քուրձ։
*Սոքա են երկու ձիթենիքն՝ և երկու 4
ճրագք, որ կան առաջի այ̃ յերկրի։ *և 5
որք

digitised by A.R.A.R.@

որք կամիցին վնասել նց՟, հուր ելցէ 'ի բե-
րանոյ նց՟՝ և կերիցէ զթշնամիս նց՟. և որք
կամիցին մեղանչել նց՟՝ այնպէս սատակես-
6 ցին: * Սոքա ունին իշխանութի՟ փակել
զերկինս՝ զի մի տեղասցէ զաւուրս մար-
գարէութե՟ նց՟. և ունին իշխանութի՟ 'ի վր՟
ջուրց՝ դարձուցանել զնս՟ յարիւն, և հար-
կանել զերկիր յամ՟ հարուածս՝ քանիցս
7 անգամ և կամիցին:* Եւ յորժամ կատա-
րեսցեն զամ՟ աւուրս վկայութե՟ իւրեանց,
յայնժամ գազանն որ ելանէ յանդնդոց՝
տացէ ընդ նս՟ պատերազմ, և յաղթեսցէ նց՟ և
8 սպանցէ զնս՟: * Եւ դին նց՟ անկեալ կայցէ
'ի մէջ հրապարակաց քաղաքին նց՟ մեծի,
որ անուանեալ կոչի հոգևոյն՝ սոդոմ և
եգիպտոս. ուր և տրն՟ նոցա խաչեցաւ:
9 *Եւ տեսցեն զնս՟ ամ՟ ցեղք և ժողովուրդք՝
և ամ՟ լեզուք և հեթանոսք, զի դին նց՟
անկեալ կայցէ զերիս աւուրս և կէս. և
ոչ տացեն թաղել 'ի գերեզմանս զոսկերս
10 նց՟: * Եւ որ բնակեալ են յերկրի՝ ուրախ
լինին և խնդան 'ի վր՟ նց՟, մինչև ընծայս
և պատարագս տանել միմեանց. վս՟ զի
սք՟ երկոքին մարգարէքս չարչարեսցեն
11 զբնակիչս երկրի:* Եւ յետ երից աւուրց
և կիսոյ՝ հոգի կենդանի յայ՟ մտցէ 'ի նս՟
և յարիցեն կացցեն 'ի վր՟ ոտից իւրեանց.
և ահ և երկիւղ մեծ անկաւ 'ի վր՟ ամենե-
12 ցուն՝ որ սպանինն զնս՟: * Եւ լուայ բղ-
ձայն մեծ՝ որ ասէր ցնս՟. վերացէ՛ք ելէ՛ք
աստ.

digitised by A.R.A.R.@

սատ. և՛ վերացան ելին յերկինս ամպովք.
և տեսին զնս թշնամիք իւրեանց: * և 'ի 13
ժամուն յայնմիկ շարժումն մեծ եղև, և
տասներորդ մասն քաղաքին ընկղմեցաւ,
և մեռան 'ի շարժմանէն արք եօթն հա-
զար. և յետ այնորիկ ահ մեծ եղև յամե-
նեսեան, և փառս տային այ երկնաւորի:
* Ահաւասիկ վայն երկդ էանց, և վայն 14
երրդ գալոց է վաղվաղակի:* Եւ յորժամ 15
եօթներորդ հրեշտակն հարկանէր զփո-
ղն, եղև ձայն յերկինս՝ և ասէ. եղև թա-
գաւորուի ամ տիեզերաց տն մերոյ՝ և
յսի քսի իւրոյ. և թագաւորեսցէ 'ի վր
ամի յաւիտեանս յաւիտենից:* Եւ քսան 16
և չորս երիցունքն՝ որ նստէին յաթոռս
իւրեանց առաջի այ, անկանէին 'ի վր ե-
րեսաց իւրեանց՝ և երկիրպագանէին տն
այ. և ասէին. * գոհանամք զքէն տր ած 17
ամենակալ, որ էն և ես՝ և առեր զզօրուի
քո մեծ, և թագաւորեցեր:* Եւ հեթա- 18
նոսք բարկացան, և եկն բարկուի քո, և
ժամանակ մեռելոց՝ զի դատեսցին. և
տալ վարձս ծառայից քոց մարգարէից,
և սրբոց երկիւղածաց անուան քոյ՝ փո-
քունց և մեծամեծաց, և ապականես զա-
պականիչս երկրի:* Եւ բացաւ տաճարն 19
այ որ յերկինս, և երևեցաւ տապանակն
այ՝ 'ի տաճարն իւր. և եղեն փայլատակ-
մունք և ձայնք և որոտմունք և շարժումն,
և կարկուտ մեծամեծ:

Գ. Լ:

digitised by A.R.A.R.@

# ԳԼ. ԺԲ.

1 Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին
մի արկեալ զիւրեւ զարեգակն, եւ լու-
սին 'ի ներքոյ ոտից նորա. եւ 'ի վերայ գլխոյ նորա
2 պսակ աստեղեայ յերկոտասանից: *Եւ էր
յղի. եւ Ճչէր յերկնելն, եւ բազում վշտօք
3 մերձ էր 'ի ծնանել: *Եւ երեւեցաւ այլ
նշան յերկինս՝ եւ ահաւասիկ վիշապ մի մեծ
հրեղէն, որոյ էին գլուխք եօթն՝ եւ եղ-
ջիւրք տասն. եւ 'ի վերայ գլխոյ նորա եօթն
4 խոյրք: *Եւ տուտն նորա քարշէր զերրորդ-
մասն աստեղաց երկնից, եւ արկ զնոսա յեր-
կիր. եւ վիշապն կայր առաջի կնոջն՝ որ
հանդերձեալ էր ծնանել, զի յորժամ ծնցի
5 կինն զորդի իւր՝ կլցէ զնա վիշապն: *Եւ
ծնաւ կինն արու՝ որ հանդերձեալ է հով-
ուել զամենայն հեթանոսս գաւազանաւ եր-
կաթեաւ. եւ յափշտակեցաւ որդի նորա առ
6 Աստուած, եւ առ աթոռ նորա: *Եւ կինն փա-
խեաւ յանապատ՝ ուր էր տեղի նորա պատ-
րաստեալ յԱստուծոյ, զի կերակրեսցին անդ աւուրս
7 հազար երկերիւր եւ վաթսուն: *Եւ եղեւ
պատերազմ յերկինս, Միքայէլ եւ հրեշտակք
իւր կռուէին ընդ վիշապին. եւ վիշապն պա-
8 տերազմէր զօրօք իւրովք: *Եւ ոչ կարացին
կալ ընդդէմ, եւ տեղի ոչ գտաւ նոցա յերկինս:
9 *Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն առաջին,
որ անուանեալ կոչի բէեղզեբուղ եւ սատա-
նայ, որ մոլորեցոյց զամենայն տիեզերս երկրի.
10 եւ հրեշտակք նորա ընդ նմա անկան: *Եւ լու-



digitised by A.R.A.R.@

ւայ ձայն մեծ յերկնից՝ որ ասէր. արդ ե-
ղև զօրութի՟ն և փրկութի՟ն և արքայութի՟ն ա՟յ մե-
րոյ, և իշխանութի՟ն օծելոյ ն՟ր. զի անկաւ
չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէր
զն՟ցնէ առաջի ա՟յ զտիւ և զգիշեր: *Եւ 11
ն՟ք յաղթեցին ն՟մ արեամբ գառինն, և
բանիւ վկայութե՟ն ն՟ր. և ոչ հաճեցան ը՟ն
վիշապն մինչև 'ի մահ: *Վ՟ն այսորիկ ու- 12
րախ լիցին երկինք՝ և ա՟մ որ բնակեալ են
'ի ն՟մ: Վ՟այ երկրի և ծովու՝ զի անկաւ
բանսարկուն առ ձեզ, որ ունի զցասումն
բ՟զմ. և կացցէ առ սակաւ մի ժ՟մկս: *Եւ 13
յորժամ ետես վիշապն թէ անկաւ յեր-
կիր, զհետ եղև կնոջն՝ որ ծնաւ զմանու-
կըն արու. *Եւ տուաւ կնոջն երկու թևք 14
արծուոյ մեծի՝ զի թռիցէ յանապատ 'ի
տեղի իւր. ուր կերակրէր անդ ժ՟մկ և
ժ՟մկս և կէս ժ՟մկի՝ յերեսաց օձին: *Եւ ե- 15
հեղ օձն 'ի բերանոյ իւրմէ զհետ կնոջն
ջուր զի ընկղմեսցէ զնա: *Եւ օգնեաց 16
երկիր կնոջն, և եբաց երկիր զբերան
իւր և եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն
'ի բերանոյ իւրմէ: *Եւ ցասեաւ վի- 17
շապն ը՟ն կնոջն, և գնաց պատերազմել
ը՟ն այլ զաւակս ն՟ր՝ որք պահէին զպատ-
ուիրանս ա՟յ, և ունէին զվկայութի՟ն յ՟ի:
*Եւ կաց 'ի վերայ աւազոյ ծովու: 18

## ԳԼ. ԺԳ.

Եւ տեսի զի ելանէր 'ի ծովէն գազան, 1
և ունէր գլուխս եօթն՝ և եղջիւրս
տասն

digitised by A.R.A.R.@

տասն, և 'ի վ՟ր եղջերաց ն՟ր տասն խոյր,
2 և 'ի վ՟ր գլխոյ ն՟ր անուն հայհոյութե՟։ *Եւ
գազանն զոր տեսի՝ նման ընձու, և ոտք
ն՟ր իբրև զարջու, և բերան ն՟ր ո՟պ զառիւ-
ծու։ և ետ ն՟մ վիշապն զզօրութի՟ իւր՝ և զա-
3 թոռ իւր և զիշխանութի՟ մեծ։ *Եւ մի 'ի
գլխոց ն՟ր վիրաւորեա՟լ էր 'ի մահ. և վէր
մահուան ն՟ր ողջանայր։ Եւ զարմացաւ
ա՟մ երկիր զ՟հ գազանն, զի ետ ն՟մ վիշապն
4 զթագաւորութի՟ իւր։ *և երկիր պագին
վիշապին՝ որ ետ զիշխանութի՟ն գազանին, և
ասէին. ո՞վ իցէ նման գազանիս. կա՟մ ո՞վ
5 կարիցէ պատերազմել ը՟ դա։ *Եւ տր-
ուաւ նմա բերան խօսել զմեծամեծս, և
զհայհոյութի. և տուաւ ն՟մ իշխանութի՟ զա-
6 միս քառասուն և երկու։ *Եւ եբաց
զբերան իւր հայհոյութ՟ առ ա՟ծ, և հայ-
հոյեաց զանուն ն՟ր՝ և զխորանն ն՟ր, և
7 զերկնայինն խորանն։ *(Եւ տուաւ ն՟մ իշ-
խանութի՟ առնել պ՟տրզմ ը՟ ս՟րբս՝ և յաղ-
թել ն՟ց.) և տուաւ ն՟մ իշխանութի՟ 'ի վ՟ր
ա՟մ ազգաց և լեզուաց և ժողովրդոց.
8 *զի երկրպագեսցեն ն՟մ ա՟մ որ բնակեա՟լ
են ը՟ երեսս երկրի. որոց ո՛չ են գրեա՟լ ա-
նուանք ն՟ց 'ի դպրութի՟ կենաց գառինն
9 զենլոյ ի սկզբանէ աշխարհի։ *Ոյք ունին
10 ականջս լսելոյ՝ լուիցեն։ *Օ իեն ոմանք՝
որք 'ի գերութե՟ վարեսցին, և են ոմանք՝ որ
սրով մեռցին, և են ոմանք՝ որ անձամբ
զանձինս սպանանեն։ աստ է համբերութի՟
11 և հաւատոց։ *Եւ տեսի այլ գազան՝
digitised by A.R.A.R.@

զի ելանէր յերկրէ, և ունէր եղջիւրս եր-
կու նման գառինն. և խօսէր իբրև զվի-
շապն: *Եւ զիշխանութի զա՟մ զառաջնոյ 12
գազանին գործէր առաջի նր. և առնէր
զերկիր և զա՟մ բնակիչս նորա՝ զի երկիր
պագանիցեն գազանին առաջնոյ՝ մինչև
ողջացի վէր մահու նր: *Եւ առնէր 13
նշանս բազումս, և տայր հրոյ իջանել
յերկնից յերկիր՝ առաջի մարդկան: *Եւ 14
մոլորեցուցանէր զորս բնակեալ են յեր-
կիր՝ նշանօքն որ տուեալ են 'ի ձեռս նր՝
առնել առաջի գազանին: ասեն ցնա
բնակիչք երկրի. արա՛ զպատկեր գազա-
նին, որ 'ի վէրաց սրոյն եկեալ: *Եւ 15
տուաւ նմա իշխանութի, զի տացէ հո-
գի պատկերի գազանին, և զի խօսեսցի
պատկերն. և երկիրպագցեն նմա ա՟մ
բնակիչք երկրի. և որ ոչ պագցէ երկիր
պատկերի գազանին, սպանցէ զնա: Եւ
արասցէ զա՟մ՝ փոքունս և զմեծամեծս
և զմեծատունս և զազատս և զաղքատս
և զծառայս, զի տացէ նց դրոշմ յաջու
ձեռին՝ և 'ի վր ճակատու նց: *Եւ ոչ 16
ոք կարասցէ գնել և վաճառել՝ եթէ ոչ
ունիցի զդրոշմ գրոյն՝ և զանուն գազա-
նին և զթիւ անուան նորա: *Աստ է ի- 17
մաստութի. որ ունի միտս՝ համարեսցի
զթիւ գազանին. թիւ եղեալն մարդոյ,
և թիւ անուան նր է այս. վեց հարիւր
վաթսուն և վեց:

digitised by A.R.A.R.@

## ԳԼ. ԺԴ.

1 Եւ տեսի՝ եւ ահա գառն կայր 'ի վ՟ր լե-
րինն սիովնի. եւ ը՟ նմ՟ հարիւր քա-
ռասուն եւ չորս հազարք, որ ունէին զա-
նուանն նր՟՝ եւ անուն հօր նր՟ գրե՛ալ 'ի վ՟ր ճա-
2 կատուցն։ *Եւ լուայ ձայն յերկնից՝ ո՟պ
զձայն ջուրց բազմաց՝ եւ ձայն որոտման
մեծի. եւ լուայ իբրեւ զձայն զքնարհարաց,
3 զի հարկանէին զքնարս իւրեանց։ *Եւ
երգէին զերգս նորս առաջի աթոռոյն՝ եւ
առաջի չորից կենդանեացն՝ եւ առաջի ե-
րիցանցն. եւ ոչ՟ք կարէ գիտել զերգսն՝
բայց միայն հարիւր քառասուն եւ չորս հա-
4 զարքն, որք ազատեցեալ են յերկրէ։ *Ս՟ք են՝
որք ը՟ կանայս ոչ խառնակեցան, եւ են
կուսանք. ս՟ք զկնի երթան գառինն՝ ուր
եւ երթիցէ. ս՟ք ընտրեցան 'ի մարդկանէ
5 առաջի ա՟յ եւ գառինն։ *Եւ 'ի բերանն՟ց ոչ
6 գտաւ սուտ՝ զի անբիծք են։ *Եւ տեսի
այլ հրեշտակ թռուցեալ 'ի մէջ երկնից. եւ
ունէր աւետիս յաւիտենական՝ աւետա-
րանել ա՟մ ազգաց եւ լեզուաց՝ որ բնակեալ
7 են յերկրի։ *Եւ ասէր 'ի ձայն մեծ. երկե-
րո՛ւք յա՟յ՝ եւ տո՛ւք փառս նմ՟, զի եկն ժամ
դ՟տաստանի նր՟. եւ երկի՛ր պագէք արարչին
երկնի եւ երկրի եւ ծովու եւ աղբերց ջուրց։
8 *Եւ այլ հրեշտակ երկր՟ դայր զհետ նր՟
եւ ասէր. անկաւ անկաւ բաբելոն մեծն՝
'ի գինւոյ արբեցութե՟՝ 'ի ցասմանէ՝ 'ի պոռն-
կութե՟ իւրմէ՝ որ արբեցոյց զա՟մ հեթա-
նոսս։

digitised by A.R.A.R.@

նոսա։ *Եւ այլ հրեշտակ երրդ գայր զհետ 9
նց՝ և 'ի ձայն մեծ ասէր. ով որ երկրպա-
գեաց գազանին և պատկերի նր՝ և կամ
զդրոշմ նշանին նր առ 'ի ճակատ իւր՝ և կմ
'ի վր աջու ձեռին իւրոյ, *այնպիսին արբ- 10
ցէ 'ի բաժակէ ցասմանն այ՝ արկելոյ յա-
նապակէ բարկութե բաժակին. և տան-
ջեսցի հրով և ծծմբով առաջի այ և գա-
ռինն։ *Եւ ծուխ նց ելցէ յաւիտեանս 11
յաւիտենից. և ոչ ունին հանգիստ՝ որք
երկիրպագին գազանին 'ի տուէ և 'ի գի-
շերի. և որք երկիր պագին պատկերին, և
առին զդրոշմ և զանուն նր։ *Եւ համբե- 12
րութի սրբց աստ է. այս որք պահեն զպա-
տուիրանս այ, և զհաւատս յի։ *Եւ լու- 13
ւայ ձայն յերկնից՝ որ ասէր ցիս. գրեա, ե-
րանի մեռելոյն՝ որք 'ի տր ննջեցին այժ-
միկ վղվղակի՝ զայս ասէ հոգին, քզի հան-
գեան յաշխատութե իւրեանց. բայց միայն
գործք իւրեանց չոգան զհետ նց։ *Եւ 14
տեսի՝ և ահա ամպ սպիտակ, և 'ի վր ամ-
պոյն նստէր նման որդւոյ մարդոյ, և 'ի
գլուխ իւր պսակ ոսկի, և 'ի ձեռին իւ-
րում ունէր գերանդի սրել։ *Եւ այլ հր- 15
րեշտակ ելանէր յերկնից, աղաղակէր 'ի
ձայն մեծ՝ և ասէր. որ նստիդ 'ի վր ամ-
պոյդ՝ առաքեա զգերանդիդ քո՝ և հնձեա,
զի եկն ժմկ հնձոց, և հասել են հունձք
երկրի։ (*Եւ արկ՝ որ նստէր 'ի վր ամ- 16
պոյն՝ զգերանդին իւր յերկիր, և հնձէր
զամ բնակիչս երկրի։) *Եւ այլ հրեշտակ 17
ե.

digitised by A.R.A.R.@

ելանէր ՚ի տաճարէն՝ որ յերկինս, եւ ունէր
18 եւ սա գերանդի սրեալ։ *Եւ այլ հրեշտակ
ելանէր ՚ի սեղանոյն՝ որ ունէր իշխանութի՟ն
՚ի վ՟ր հրոյ, եւ աղաղակեաց ՚ի ձայն մեծ
առ հրեշտակն՝ որ ունէր զգերանդին սր-
եալ՝ եւ ասէր. կթեա՛ զողկոյզս յայգւոյ
19 երկրէ, զի հասեալ է խաղողդ ՚ի դմա։ *Եւ
արկ հրեշտակն զգերանդի իւր յերկիր, եւ
կթէր զխաղող ն՟ր, եւ արկանէր ՚ի հնձանն
20 ա՟յ ՚ի մեծ։ *Եւ կոխեցաւ հնձանն ար-
տաքոյ քաղաքին, եւ ելանէր ՚ի հնձանէն
արիւն մինչեւ ՚ի սանձս ձիոյն. եւ երկայնու-
թ՟ին ն՟ր հազար եւ վեց հարիւր ասպարէզ։

## ԳԼ. ԺԵ.

1 Եւ տեսի այլ նշան (յերկինս) մեծ եւ
սքանչելի. հրեշտակս եօթն՝ որք ու-
նէին եօթն վէրս զկնի. զի նոքօք կատա-
2 րէր բարկութի՟ն ա՟յ։ *Եւ տեսի ո՟պ ծով ա-
պակեղէն խառնեալ հրով. եւ որք յաղթե-
ցին գազանին՝ եւ թուոյ անուան ն՟ր՝ եւ
պատկերի ն՟ր՝ եւ դրոշմի ն՟ր, ն՟ք կային ՚ի
վ՟ր ծովուն ապակեղինի. եւ ունէին զքնարս
3 ա՟յ։ *Եւ երգէին զերգս մովսէսի ծառայի
ա՟յ, եւ զերգս գառինն՝ ասելով. թէ մե-
ծամեծ եւ սքանչելի են գործք քո՝ տ՟ր ա՟ծ
ամենակալ, արդար՝ եւ ճշմարիտ են ճա-
նապարհք քո՝ թագաւոր ա՟մ հեթանոսաց։
4 *Եւ ո՞վ ոք ոչ երկիցէ՝ եւ փառաւորեսցէ
զտ՟ր անուն քո. զի դու միայն ս՟բ, եւ ար-
ժանի երկրպագելոյ. զի ա՟մ հեթանոսք
ե-

digitised by A.R.A.R.@

եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո Տէր՝
յորժամ արդարութիւնք քո յայտնեցան։ *Եւ 5
յետ այսորիկ տեսի՝ և բացաւ տաճարն
խորանին վկայութեան՝ որ էր 'ի յերկինս. *և 6
ելանէին եօթն հրեշտակք՝ որք ունէին
եօթն հարուածս, և զգեցեալ էին 'ի տաճա-
րին կտաւս մաքուրս՝ և պայծառս. և գօ-
տևորեալ էին առ ստեամբք իւրեանց գօ-
տիս ոսկեղէնս։ *Եւ 'ի չորից կենդա- 7
նեացն տուաւ եօթն հրեշտակացն՝ եօթն
սկաւառակս լի ցասմամբն այ կենդան-
ւոյն յաւիտեանս յաւիտենից։ *Եւ լցաւ 8
տաճարն ծխով փառացն այ՝ և զօրութեան
նր. և ոչ ոք կարէր մտանել 'ի տաճարն՝
մինչև կատարեսցին եօթն հարուածքն
յեօթն հրեշտակացն։

## ԳԼ. ԺԶ.

Եւ լուայ ձայն մեծ 'ի տաճարէն՝ զի ա- 1
սէր ցեօթն հրեշտակսն, երթայք հե-
ղէք զեօթն սկաւառակսդ ցասմանն այ
յերկիր։ *Եւ գնաց առաջին հրեշտակն՝ 2
և եհեղ զսկաւառակ իւր յերկիր. և եղև
հարուածք չարաչար 'ի վր մարդկան, որ
ունէին զդրոշմ գազանին, և երկիր պա-
գին պատկերին նր։ *Եւ երկրորդ հրեշտակն 3
եհեղ զսկաւառակ իւր 'ի ծով, և դարձան
ջուրքն յարիւն մեռելոյ. և ամ շունչ կեն-
դանի որ էր 'ի ծովու՝ սատակեցաւ։ *Եւ 4
երրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր 'ի
գետս՝ և յաղբերս ջուրց, և եղև արիւն։
digitised by A.R.A.R.@ *Եւ

5 *Եւ լուայ ՚ի հրեշտակէն՝ զի ասէր. ար-
դար է՝ որ էնն և է, և սուրբ ՚ի գործս իւր՝
6 զի այսպէս դատեցաւ։ *Վասն զի զարիւն սրբոց՝
և զարիւն մարգարէիցն հեղին ամպա-
րիշտք. վասն այնորիկ արիւն ետ ըմպել նոցա ըստ
7 արժանւոյն։ *Եւ լուայ ՚ի սեղանոյ անտի
զի ասէր. այո՛ Տէր Աստուած ամենակալ, արդար
8 և ճշմարիտ են դատաստանք քո։ *Եւ
չորրորդ հրեշտակն եհեղ ՚ի սկաւառակէ
9 իւրմէ ՚ի վերայ արեգական։ *և տուաւ նմա
խորշակահար առնել զմարդիկ հրով. և
տապացան մարդիկ ՚ի տապ մեծ, և հայ-
հոյեցին զԱստուած՝ որ ունի իշխանութիւն ՚ի վերայ
հարուածոցս այսոցիկ. և ոչ ապաշխարե-
10 ցին ՚ի փառս նորա։ *Եւ հինգերորդ հրեշ-
տակն եհեղ ՚ի սկաւառակէ իւրմէ ՚ի վերայ
աթոռոյ գազանին, և եղև թագաւորութիւն
նորա խաւարեալ. և ծամէին զլեզուս իւր-
11 եանց յախտէ ցաւոցն, *և հայհոյեցին
զԱստուած երկնից ՚ի ցաւոց իւրեանց՝ և յախտէ
դառնութեան, և ոչ ապաշխարեցին ՚ի գոր-
12 ծոց իւրեանց։ *Եւ վեցերորդ հրեշտակն ե-
հեղ ՚ի սկաւառակէ իւրմէ ՚ի վերայ գետոյն
մեծի եփրատայ, և ցամաքեցան ջուրք նորա՝
զի պատրաստեսցի ճանապարհ թագաւորի
13 ելիցն արևու։ *Եւ տեսի՝ զի ելանէր ՚ի բե-
րանոյ վիշապին՝ և ՚ի բերանոյ գազանին՝
և ՚ի բերանոյ սուտ մարգարէին ոգիք ե-
14 րեք անսուրբք իբրև զգորտս։ *Քանզի նոքա
էին ոգիք դիւականք, որք առնէին ըզ-
նշանս՝ և երթային առ թագաւորս ամենայն երկրի՝



digitised by A.R.A.R.@

ժողովել զնս՟ ՚ի պտրզմ, յօրն մեծ ա՟ծն ամե-
նակալի: Զի այսպէս ասաց տ՟ր. * Ահա 15
գամ իբրև զգող, երանի որ լիցեն ար-
թունք, և պահեսցեն զհանդերձս իւ-
րեանց. զի մի մերկ շրջեսցին, և երևես-
ցին ամօթանք իւրեանց: *Եւ ժողովեսցին 16
զնս՟ ՚ի տեղի մի, որ կոչի եբրայեցերէն՝
արմագեդոն: *Եւ եօթներորդ հրեշտակն 17
եհեղ ՚ի սկաւառակէ իւրմէ ՚ի վ՟ր օդոյ.
և ել ձայն մեծ յերկնից՝ և յաթոռոյն՝ ա-
սելով. եղև: *Եւ եղեն փայլատակմունք 18
և ձայնք և որոտմունք. և եղև շարժումն
մեծ՝ որպէս չէր եղեալ իսկզբանէ՝ յորմէ հե-
տէ եղև մարդ ՚ի վ՟ր երկրի՝ այնպիսի շար-
ժումն մեծ: *Եւ եղև քաղաքն մեծ յե- 19
րիս մասն, և քաղաքք ազգացն անկան. և
բաբելոն մեծ յիշեցաւ առաջի ա՟յ, տալ նմա
զբաժակն գինւոյ ցասման բարկութեան նորա:
*Եւ ամ՟ կղզիք փախեան, և լերինք ՚ի մի- 20
ջոյ բարձան: *Եւ կարկուտ մեծ իբրև կշ- 21
իռ տաղանդոյ միոյ իջանէր յերկնից ՚ի վ՟ր
մարդկան. և հայհոյեցին մարդիկ զա՟ծ
յերկինս՝ վ՟ս հարուածոյ կարկտին, զի
մեծ էր հարուածն և սաստիկ:

## ԳԼ. ԺԷ.

Եւ եկն միումն յեօթն հրեշտակացն՝ որք 1
ունէին զեօթն սկաւառակսն. խօ-
սեցաւ ը՟ն իս՝ և ասէ. Եկ այսր և ցուցից
քեզ զդատաստանս մեծ պոռնկին՝ որ նստի ՚ի
վ՟ր ջուրց բազմաց: *Ը՟ն որում պոռնկեցան 2

digitised by A.R.A.R.@

թա-

թագաւորք երկրի՝ եւ արբեցան բնակիչք եր-
կրի 'ի գինւոյ արբեցութեան պոռնկութեան նորա:
3 *Եւ առ տարաւ զիս յանապատ հոգւովն.
եւ տեսի կին մի՝ զի նստէր 'ի վերայ կարմիր
գազանի, եւ լի էր անուամբք հայհոյութեան. եւ
գազանն զոր տեսի՝ ունէր գլուխս եօթն
4 եւ եղջիւրս տասն: *Եւ կինն զգեցեալ էր
ծիրանիս եւ կարմիրս, եւ զարդարեալ ոսկ-
ւով եւ մարգարտով եւ ականբք պատուա-
կանօք, ունելով բաժակ ոսկի 'ի ձեռին
իւրում, եւ լի էր գարշելի եւ անմաքուր
5 պոռնկութեամբ: *Եւ 'ի ճակատն նորա գրեալ ա-
նուն՝ խորհրդով. մեծն բաբելոն՝ մայր
6 պոռնկաց եւ գարշելեաց երկրի: *Եւ տե-
սի զկինն արբեցեալ յարենէ սրբոց՝ եւ յա-
րենէ յսմ վկայիցն. եւ զարմացայ՝ տեսեալ
7 զնա՝ զարմացումն մեծ: *Եւ ասէ ցիս հր-
եշտակն. ընդէ՞ր զարմացար, ես ասացից
քեզ զխորհուրդ կնոջն, եւ զգազանին որ բար-
ձեալ ունի զնա, որ ունի զեօթն գլուխն՝ եւ
8 զտասն եղջիւր: *Եւ գազանդ զոր տե-
սեր՝ որ էր, եւ չէր, եւ հանդերձեալ է ելա-
նել 'ի դժոխոց՝ եւ 'ի կորուստ երթալ. եւ
զարմասցին ամենեքեան՝ որ բնակեալ են 'ի
վերայ երկրի. որոց ոչ էր գրեալ անուանք նոցա
'ի գիր կենաց ի սկզբանէ աշխարհի. զոր
տեսանէին զգազանն, զի էր՝ եւ չէ, եւ մերձ
9 է: *Աստ է իմաստութիւն՝ որ ունի միտս: Եւ
եօթն գլուխն՝ եօթն լերինք են, ուր կինն
նստեալ էր 'ի վերայ նոցա. եւ նոքին թագաւորք են
10 եօթն. եւ թագաւորք եօթն գոլով. *հինգն

digitised by A.R.A.R.@

անկան, և մին եկաց, և միւսն ոչ է եկեալ.
և յորժամ գայ՝ սակաւիկ մի ժամ ունի:
*Եւ գազանն՝ որ էր՝ և չէ՝ և նա ութերորդ 11
է. և է յեւթանց անտի, և 'ի կորուստ եր-
թալոց է: *Եւ տասն եղջիւրն՝ զոր տե- 12
սեր՝ տասն թագաւորք են. որոց չևևս է ա-
ռեալ զթագաւորութի, այլ առնուն՝ և կան
իշխանք 'ի մի ժամ. և առնուն նք զիշխա-
նութի ընդ գազանին: *Սոքա մի կամս ունին, 13
և զզօրութի և զիշխանութի գազանին տան:
*Եւ ընդ գառինն պատերազմին. և գառնն 14
յաղթէ նց. զի տր է նց, և թգւր թագա-
ւորաց. և որք ընդ նմա՝ կոչեցեալք են, ընտ-
րեալք՝ և հաւատացեալք: *Եւ ասաց ցիս. և 15
զջուրսն զոր տեսեր՝ ուր նստէր պոռնիկն,
ժղվրդք են, և բազմութիք և ազգք և լե-
զուք: *Եւ տասն եղջիւրքն՝ զոր տեսեր 16
գազանին, նք ատեսցեն զպոռնիկն՝ և ա-
տեսցեն զնա, և զմարմինս նր կերիցեն և
այրեսցեն զնա հրով: *Քզի ած եդ 'ի 17
սիրտս նց առ 'ի լինել նց մի կամս, և տալ
զթագաւորութի գազանին՝ մինչև կատա-
րեսցի բանն այ: *Եւ կինն զոր տեսեր՝ է 18
քաղաքն մեծ, որ ունի զթագաւորութի 'ի
վր թագաւորութեց երկրի:

## ԳԼ. ԺԸ.

Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ է- 1
ջեալ յերկնից՝ որ ունէր իշխանութի
մեծ, և երկիր լուսաւորեցաւ 'ի փառց նր:
*Եւ աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ ասելով. 2
ան-

digitised by A.R.A.R.@

անկաւ բաբելոն մեծն, որ եղեւ էր բնա-
կութիւն դիւաց՝ և արգել ամ այսոց պղծոց,
և բանտ պահպանութե ամ ոգւոց անսրբ-
3 բից՝ և ատեցելոց: *Վն զի 'ի բարկութէ
գինւոյ պոռնկութե նր արբին ամ ազգք և
Թգւորք երկրի՝ որ ը նմ պոռնկեցան. և
վաճառականք երկրի՝ 'ի նր զօրութեն յորա-
4 նալոյ մեծացան: *Եւ լուայ ձայն յերկ-
նից՝ զի ասէր. ելէք 'ի միջոյ դր ժղվուրդ-
իմ, զի մի հաղորդ լինիցիք մեղաց դր, և մի
5 զհարուածս դր ըռունիցիք. *զի հասին
կցեցան մեղք դր մինչև յերկինս. և յի-
6 շեաց ած զամբարշտութիս դր: *Եւ հատու-
ցանէք դմա՝ որպ և հատոյցն մեզ, և աւցէ
դա երկպատիկ ըստ գործոց իւրոց. և զբա-
ժակն որով խառնեաց՝ խառնեցէք դմա
7 կրկին: *Եւ որչափ փառաւորեաց զինքն և
խայտաց, այնչափ հատուցէք դմա սուգ. զի
'ի սրտի իւրում ասէր՝ Թէ յամ ժամ նըս-
տայց ես Թագուհի՝ և այրի ոչ ևս եղէց:
8 *Վն այնորիկ 'ի միում աւուր եկեսցեն 'ի
վր դր հարուածք՝ մահ և սուգ և սով, և
'ի հուր այրեսցի. զի հզօր է տր ած՝ որ
9 դատեցաւն զդա: *Եւ լայցեն՝ և կոծես-
ցին 'ի վր դր Թգւորք երկրի, որք ը դմա
պոռնկեցան և խաղացին. և հեծեսցեն՝
յորժամ տեսցեն զծուխ կիզման տանջա-
10 նաց դր: *'ի հեռաստանէ կայցեն վս եր-
կիւղի տանջանաց դր՝ և ասասցեն. վայ
քաղաքիդ մեծի բաբելոնի. քաղաք հը-
զօր, զի 'ի միում ժամու եկին հասին դա-
digitised by A.R.A.R.@

տաստանք քո։ *Եւ վաճառականք երկրի 11
ողբասցեն եւ սգասցեն 'ի վ՟ր քո, զի բեռն
նց ոչ ոք գնէ։ *Եւ շահք որ 'ի քէն՝ ոչ եւս 12
իցէ՝ ոսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատ-
ուականաց՝ եւ մրգրտոյ եւ բեհեզոյ եւ ծի-
րանւոյ եւ ոսկեթելի եւ որդան, եւ ա՟մ
փայտ խնկոյ՝ եւ ա՟մ անօթ փղոսկրեայ, եւ
ա՟մ անօթ 'ի փայտէ պատուականէ եւ 'ի
պղնձոյ եւ յերկաթոյ եւ 'ի կճոյ. *Եւ կինա- 13
մոմոն եւ ա՟մ խունկ եւ իւղ եւ կնդրուկ, եւ
գինի եւ ձէթ եւ նաշիհ եւ ցորեան, եւ ստա-
ցուածք ա՟մ, արջառ եւ ոչխար. եւ երիվա-
րաց եւ կառաց՝ որ վայել է մարմնոց եւ ոգ-
ւոց մարդկան։ *Եւ ա՟մ ցանկութ՟ի անձին 14
քո գնաց 'ի քէն, եւ ա՟մ լուսափայլ վայել-
չութ՟ին, պարարտն եւ գէրն եւ սպիտակն
գնաց 'ի քէն, եւ ոչ եւս գտցես զայդ։ *Եւ 15
ա՟մ շահավաճառք այսոքիւք մեծացե՟լք՝
'ի քէն 'ի բաց կացցեն վ՟ս երկիւղի տան-
ջանաց քոց լալով՝ եւ սուգ առնլով։ *Եւ 16
ասասցեն. վա՜յ վա՜յ քաղաք մեծ. որ զգե-
ցեալ էիր բեհեզս եւ ծիրանիս եւ որդան եւ
ոսկեզօծս՝ եւ քարինս պատուականս՝ եւ
մրգրիտս. *զի 'ի միում ժամու պակա- 17
սեցաւ այսչափ մեծութ՟ի քո. եւ ա՟մ նաւա-
վար՝ եւ ա՟մ որ 'ի տեղիս տեղիս նաւէն, եւ
նաւազք եւ որք միանգամ ուռկնաւ գոր-
ծեն՝ 'ի հեռաստանէ կայցեն լալով, *եւ 18
աղաղակեսցեն՝ տեսանելով զծուխ կիզ-
ման ն՟ր, ասելով. ո՞ նման է ք՟ղքիս այսմիկ
մեծի։ *Եւ արկցեն հող 'ի վ՟ր գլխոց իւ- 19
րեանց՝

digitised by A.R.A.R.@

րեանց՝ եւ գուժալով ձայնիւ մեծաւ՝ լա-
լով եւ սգալով ասասցեն. վայ վայ քաղաք
մեծ, որով ամենեքեան մեծանայաք՝ որք ու-
նէաք զնաւս ՚ի ծովս՝ վասն պատուականութեան
քո. զի ՚ի միում ժամու ապականեցաւ կոր-
20 ծանեցար։ *Ուրախ լերուք ՚ի վերայ նորա եր-
կինք՝ եւ սուրբ առաքեալք եւ մարգարէք. զի դա-
տեցաւ Աստուած զդատաստան ձեր ՚ի դմանէ։
21 *Եւ առ հրեշտակն հզօր՝ քար մի իբրեւ
զերկան մեծ, եւ ընկէց ՚ի ծով՝ ասելով.
այսպէս յարձակմամբ անկցի բաբելոն քաղաք
22 մեծ, եւ այլ ոչ եւս գտցի։ *եւ ձայն քնա-
րերգաց եւ երաժշտականաց՝ արուեստա-
կանաց՝ եւ փողահարաց՝ եւ Թմբկի, այլ
23 ոչ եւս լուիցի ՚ի քեզ։ *եւ լոյս ճրագի եւ
ձայն երկանի՝ այլ ոչ եւս երեւեսցի ՚ի քեզ,
եւ ձայն փեսայի եւ ձայն հարսին այլ ոչ եւս
լուիցի ՚ի քեզ. եւ ոչ վաճառականք քո՝
փառաւորք եւ մեծամեծք երկրի, որ զուար-
ճացեալ էին ՚ի քեզ. վասն զի կախարդութեամբ
դեղատուութեամբ քո մոլորեցան ամենայն ազգք։
24 *Եւ ՚ի քեզ ամենայն արիւն մարգարէից եւ սրբոց գը-
տաւ, եւ ամենայն զրելոց յերկրին կենդանեաց։

## ԳԼ. ԺԹ.

1 Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազ-
մութեան յերկինս ասելով. ալէլուիա,
փրկութիւն եւ փառք եւ պատիւ եւ զօրութիւն Աստուծոյ
2 մերում. *զի ճշմարիտ եւ արդար են դա-
տաստանք նորա. զի դատեաց զպոռնիկն
մեծ ՚ի պոռնկութեան իւրում, եւ խնդրեաց


digitised by A.R.A.R.@

զվրէժ արեան ծառայից իւրոց 'ի ձեռաց
նր՟: *Եւ կրկին անգամ օրհնեցին՝ և ասա- 3
ցին, ալէլուիա. և ծուխ նր՟ ելանէր յա-
ւիտեանս յաւիտենից: *Եւ անկան քը- 4
սան և չորք երիցունքն՝ և չորք կենդա-
նիքն, և երկիրպագին ա՟յ՝ որ նստէրն յա-
թոռ փ՟ռց, ասելով, ամէն՝ ալէլուիա:
*Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝ ասելով. 5
օրհնեցէք զա՟ծ մեր ա՟մ ծառայք նր՟, և
որք երկնչիք 'ի ն՟մէ՝ փոքունք և մեծա-
մեծք: *Եւ լուայ ձայն բազմու՟ մեծի՝ 6
իբրև զձայն ջուրց բազմաց, և իբրև ըզ-
ձայն հզօր որոտման, ասելով դարձեալ ա-
լէլուիա, զի թ՟գ՟ւրեաց տ՟ր ա՟ծ մեր ա-
մենակալ: *Խնդամք՝ (և ցնծամք) և 7
տամք փառս նմ՟, զի եկն հարսանիք գա-
ռինն: և կինն հարսն նր՟ պատրաստեաց
զինքն: *Եւ տուաւ նմ՟ զգենուլ բեհեզս 8
սպիտակս ս՟քս և լուսափայլս. որ է բե-
հեզն արդարու՟ սրբոցն: *Եւ մի յերի- 9
ցանցն ասէր ցիս. գրեա՛ զայդ, երանելիք
են ա՟մքեան՝ որ կոչեցեալ են յընթրիս հար-
սանեաց գառինն:*Եւ ես անկեալ առա- 10
ջի ոտից նր՟, երկիրպագի նմ՟: և ասէ ցիս.
անսա՛՝ մի՛ անկանիր առաջի իմ, ք՟զի և ես
ծառայակից քո եմ, և եղբարց քոց որք
ունին զվկայու՟ն յի՟ի ք՟ի. ա՟ն ա՟յ միայն
երկրպագեա՛. ք՟զի հաստատու՟ թ՟ յի՟ի է
տեսիլդ, և հոգի մարգարէու՟դ. զի վը-
կայու՟ յի՟ի է հոգւով՟ ս՟քով, որ 'ի մար-
գարէսն էր: *Եւ տեսի զերկինս բացեալ, 11
և

digitised by A.R.A.R.@

և ահա ձի սպիտակ. և որ հեծեալն էր 'ի
նմա՝ հաւատարիմ և ճշմարիտ, և արդա-
12 րութեամբ դատի՝ և պատերազմի: *Եւ աչք նորա
բոց հրոյ, և 'ի վերայ գլխոյ նորա պսակս բազումս.
և ունէր անուն գրեալ, զոր ոչ ոք գիտէ՝
13 բայց միայն ինքն: *Եւ արկեալ զիւրեաւ
համդերձ ներկեալ արեամբ. և կոչէր ա-
14 նուն նորա՝ բան Աստուծոյ: *Եւ զօրավարք երկնից՝
և զօրք երկնից զհետ երթային նորա ձիովք
(սպիտակօք), զգեցեալ բեհեզս սուրբս և
15 սպիտակս: *Եւ 'ի բերանոյ նորա ելանէր
սուր սրեալ. զի նովաւ հարցէ զազգս. և նա
հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ.
և նա կոխեսցէ զհնձան գինւոյ՝ ցասման
16 բարկութեան Աստուծոյ ամենակալի: *Եւ ունէր 'ի
վերայ պատմուճանի իւրոյ, և 'ի վերայ անդա-
մոց իւրոց գիր գրեալ. Թագաւոր թագաւորաց,
17 և տէր տերանց: *Եւ տեսի այլ հրեշտակ
որ կայր 'ի վերայ արեգական, զի աղաղա-
կեաց 'ի ձայն մեծ ամենայն հաւուց թռուցե-
լոց ընդ մէջ երկնից՝ ասելով. եկայք ժողո-
18 վեցարուք յընթրիս մեծին Աստուծոյ. *Եւ կե-
րիջիք զմարմինս թագաւորաց, (և զմարմինս
հզօրաց,) և զմարմինս երիվարաց՝ և ամենայն
հեծելոց 'ի նոսա, և զմարմինս ազատաց և
19 ծառայից՝ մեծի և փոքու: *Եւ տեսի
զգազանն՝ և զթագաւորս երկրի՝ և զզօրս նոցա
ժողովեալս առնել պատերազմ ընդ այնմ, որ
հեծեալն էր 'ի ձին սպիտակ՝ և ընդ զօրս նորա:
20 *Եւ ըմբռնեցաւ գազանն, և որ ընդ նմա
սուտ մարգարէն՝ որ առնէր զնշանսն առաջի
նորա,

digitised by A.R.A.R.@

նր, եւ զորս մոլորեցոյց. եւ ետ առնուլ
զդրոշմ գազանին՝ եւ զերկրպագուս պատ-
կերի նր. եւ կենդանւոյն արկին զնա 'ի
լիճ հրոյ այրեցելոյ ծծմբով: * Եւ այլքն 21
մեռան 'ի սրոյ հեծելոյն 'ի վր ձիոյն, յո-
րոյ բերանոյ ելանէր սուրն. եւ ամ թռչ-
չունք յագեցան 'ի մարմնոց նց:

## ԳԼ. Ի:

Եւ տեսի այլ հրեշտակ զի իջանէր յերկ- 1
նից, եւ ունէր զփականս դժոխոց, եւ
շղթայս մեծ 'ի ձեռին իւրում. * եւ ըմ- 2
բռնեաց զվիշապն՝ (զօձն) զառաջին, որ
է բանսարկուն եւ սատանայ, եւ կապեաց
զնա հազար ամ, * եւ արկ զնա յանդունդս 3
դժոխոց, եւ փակեաց եւ կնքեաց զնա՝ զի
այլ մի եւս մոլորեցուսցէ զազգս, մինչեւ
կատարեսցի հազար ամն. եւ յետ այնորիկ
պարտ է լուծանել նմա սակաւ մի ժմկ:
* Եւ տեսի աթոռս, եւ նստան 'ի վր նց. 4
եւ դատաւորութի տուաւ նց, ընտրել զհո-
գիս չարչարելոցն վս վկայութն յի՝ եւ վս
բանին այ. եւ զորս ոչ երկրպագին գա-
զանին, եւ ոչ առին զդրոշմ նր 'ի ճակատս
իւրեանց՝ եւ ոչ 'ի վերայ աջու ձեռին իւ-
րեանց. եւ կացին՝ եւ թագաւորեցին ը քսի
հազար ամ: * Եւ յետ այսորիկ 'ի մեռե- 5
լոց ոչ ոք եկաց, մինչեւ 'ի կատարել հա-
զար ամին: այս է յարութի առաջին: * Ե- 6
րանելի՝ սրբյն, որք ունին բաժին 'ի յարու-
թեն առաջնում, 'ի վր սց երկդ մահն

ոչ

digitised by A.R.A.R.@

ոչ ունի իշխանութի՟. այլ եղիցին քահանայք
այ՟՝ և ա՟ն յս՟ի ք՟սի, և թագաւորեսցեն ը՟նմ
7 հազար ամ: *Եւ յետ հազար ամին լուծ-
ցէ զսատանայ՝ և հանցէ ՚ի բանտէ անտի.
ելցէ և մոլորեցուսցէ զազգս ա՟մ ը՟ չորս
կողմանս երկրի. և զԳոգ և զՄագոգ առ-
ցէ ՚ի ձեռս՝ ժողովել նոքօք զա՟մ զօրս ՚ի
պատերազմ. որոց թիւ ն՟ց իբրև զաւազ
8 ծովու : *և ելցեն ՚ի լայնութի՟ երկրի, և
պատեսցեն շուրջ զբանակս ս՟րբց, և ըզ-
9 քաղաքն սիրելոյ: *Եւ իջցէ հուր յերկ-
նից առ ՚ի յա՟յ՝ և կերիցէ զն՟ս և զզօրագը-
լուխն ն՟ց զսատանայ՝ որ մոլորեցոյց զն՟ս.
և արկցէ զն՟ս ՚ի ծովն հրոյ և ծծմբոյ,
ուր էր գազանն՝ *և սուտ մ՟րգրէն : և
10 չարչարեսցին զտիւ և զգիշեր: *Եւ տե-
11 սի աթոռ սպիտակ մեծ. և ՚ի վ՟ր ն՟ր նըս-
տեալ՝ յորոյ երեսացն երկնչէին և փախ-
չէին երկինք և երկիր, և տեղի ոչ գտաւ
12 ն՟ց: *Եւ տեսի զմեռեալս մեծամեծս և
զփոքունս, որ կային առաջի աթոռոյն.
և գրեանք բանային. և այլ գիրք բա-
ցաւ կենաց, և դատեցան մեռեալք ՚ի
13 գրելոցն՝ ըստ գործոց իւրեանց : *Եւ
ետ ծով զմեռեալս իւր, և մահ և դժոխք
զիւրեանց մեռեալս. և դատեցան իւրա-
14 քանչիւր ըստ գործոց իւրեանց : *Մահ
և դժոխք մատնեցան ՚ի լիճ հրոյն: (այս
15 է մահն երկրորդ : ) *և որ ոչ ոք գտաւ
՚ի գիրն կենաց գրեալ՝ արկաւ ՚ի լիճ
հրոյն :

ԳԼ.

digitised by A.R.A.R.@

## ԳԼ. ԻԱ.

Եւ տեսի երկին նոր՝ և երկիր նոր. ք̃զի 1
առաջինն երկինք և երկիր էանց. և
ծով ոչ գոյր: *և զք̃ղքն ս̃բ զնորն Եհ̃մ 2
տեսի՝ զի իջանէր յա̃յ՝ և յերկնից, զարդա-
րեալ և պատրաստեալ ո̃պ հարսն առն իւրոյ:
*Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր. ա- 3
հաւասիկ խորանն ա̃յ՝ ի մէջ մարդկան, և
բնակեսցէ ը̃ն նոսա. և նք̃ ժ̃ղվուրդ նմ̃. և
սա ա̃ծ նց̃: *և ջնջեսցէ զա̃մ արտօսր յա- 4
չաց նց̃. և մահ ոչ ևս գոյ, ոչ սուգ՝ և ոչ
աղաղակ, ոչ ցաւք՝ և ոչ աշխատանք ոչ ևս
գոյ, զի առաջինն էանց: *Եւ ասաց ցիս՝ 5
որ նստէր ՚ի վ̃ր աթոռոյն. ահաւասիկ
առնեմ զա̃մ նոր. և ասէ ցիս, գրեա. այս
բանք ճշմ̃րիտ և հաւատարիմք: *Եւ ասէ 6
ցիս: եղէ՝ ես եմ ալփա և օվ, սկիզբն և կա-
տարած. ես ծարաւելոցն տամ յաղբերէ
ջրոյ կենաց ձրի: *Որ յաղթէ, ժառան- 7
գեսցէ զայս ա̃մ. և ես եղէց նց̃ ա̃ծ, և նք̃
եղիցին ինձ որդիք: *Եւ ծուլիցն և անհա- 8
ւատից՝ սպանողաց և պոռնկաց՝ և կախար-
դաց և կռապաշտից՝ և դեղատուաց, և ա̃մ
ստոց՝ ամպարշտաց. որոց բաժինն իւրեա̃նց
՚ի լճին այրեցելոյ հրով և ծծմբով. որ է
մահն երկ̃ր: *Եւ եկն առ իս մի յեօթն 9
հրեշտակացն, որք ունէին զեօթն սկա-
ւառակսն լցե̃լս եօթն վախճանաւ կատա-
րածովք, խօսեցաւ ը̃նդ իս և ասէ: Եկ՝ ցուցից
քեզ զհարսնն և զկին գառինն: *Եւ առ 10

տա-

digitised by A.R.A.R.@

տարաւ զիս 'ի լեառն մի բարձր և մեծ՝
հոգւովն, և եցոյց ինձ զքաղաքն մեծ և զսուրբ՝
11 Երուսաղէմ. զի իջեալ էր յերկնից առ 'ի յԱստուծոյ, *և
ունէր զփառս Աստուծոյ. և էր 'ի նմա լուսաւորու-
թիւն, նման ականց պատուականաց՝ քար
12 յասպիս սառնատեսակ և կենդանի։ *և
էին պարիսպք նորա մեծ և բարձր, և ունէր
դրունս երկոտասան. և յերկոտասան դրունսն
երկոտասան հրեշտակս, և անուանք խորա-
քանդակուրոցն 'ի վերայ դրանցն գրեալ էին՝ որ
13 երկոտասան ցեղիցն Իսրայէլի։ *Յարևելից կող-
մանէ դրունք երեք, և 'ի հիւսիսոյ կող-
մանէ դրունք երեք, և 'ի հարաւոյ կող-
մանէ դրունք երեք, և յարևմտից կող-
14 մանէ դրունք երեք։ *Եւ պարիսպ քաղաքին
ունէր հիմունս երկոտասան, և 'ի նմա եր-
կոտասան անուանք երկոտասան առաքելոց գա-
15 ռինն։ *Եւ որ խօսէրն ընդ իս, ունէր ե-
ղէգն ոսկի 'ի ձեռին իւրում, զի չափեսցէ
զքաղաքն՝ և զդրունս նորա՝ և զպարիսպս նորա։
16 *Եւ էր քաղաքն քառակուսի. և որչափ եր-
կայնութիւն նորա՝ նոյնչափ և լայնութիւն՝ և բարձ-
րութիւն հաւասար։ և էր չափ երկայնութեան
նորա երկոտասան հազար ասպարիզս. և լայ-
նութիւն նորա և բարձրութիւն միաչափ՝ կիմոս։
17 *Եւ չափեաց զպարիսպն նորա հարիւր և
քառասուն և չորս ասպարիզս. չափ մար-
18 դոյ՝ որ է հրեշտակի։ *և էր շինուած
պարսպաց քաղաքին յասպիս. և քաղաքն էր ոս-
կի մաքուր՝ նման ոք և սպիտակ ապակ-
19 ւոյ։ *Եւ հիմունք քաղաքին յամ ականց
պատ-

digitised by A.R.A.R.@

պատուականաց. Հիմն առաջին պարս֊
պին յասպիս, երկրորդն շափիղա, երրորդն
պղնձագոյն, չորրորդն զմրուխտ, *Հինգե֊ 20
րորդն եղնգնաքար, վեցերորդն սարդիոն.
եօթներորդն ոսկեքար, ութերորդն բիւրեղ,
իններորդն տպազիոն, տասներորդն քրիսոպ֊
րասոս, մետասանն յակինթ, երկոտասանն
ամեթուս։ *Եւ էին երկոտասան դրունքն 21
յերկոտասան մարգրտաց՝ միաձև։ Եւ իւրա֊
քանչիւրոյն դրունք՝ էին մի մի դուռն՝ ՚ի
միոյ միոյ մարգրտէ. Եւ հրապարակն քաղաքին
ոսկի մաքուր՝ որպէս զապակի պայծառ։ *Եւ 22
տաճար ոչ տեսի ՚ի նմա, քանզի Տէր Աստուած ամե֊
նակալ տաճար էր ՚ի նմա՝ և Գառնն։ *Եւ 23
քաղաքին չէին պէտք արեգական և լուս֊
նի, զի լուսաւորեսցեն զնա. քանզի փառքն
Աստուծոյ լուսաւորէին զնա յամենայն ժամ. և ճրագ
՚ի նմա Գառնն։ *Եւ գնային հեթանոսք 24
՚ի լոյս նորա. և թագաւորք երկրի լուսազ֊
գեաց լինէին ՚ի փառաց նորա։ *Եւ դր֊ 25
րունք նորա ոչ փակէին ՚ի տուէ և ՚ի գիշե֊
րի, այլ բաց կային հանապազորդ. և գի֊
շեր ոչ ևս լինէր ՚ի նմա։ *այլ փառք և 26
պատիւ ազգաց։ *Եւ ոչ մտցէ անդր ամենայն 27
չարակամ՝ և պիղծ և ստութ, բայց միայն
որ գրեալ են ՚ի դպրութեան կենաց Գառինն։

## ԳԼ. ԻԲ.

Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի 1
ջրոյ՝ սառնատեսակ, որ ելանէր յա֊
թոռոյն Աստուծոյ և Գառինն։ *Եւ գնայր ՚ի 2
մէջ

digitised by A.R.A.R.@

մէջ հրապարակաց քաղաքին. և զեզերբ
գետոյն աստի և անտի ծառ կենաց՝ որ
բերէր պտուղս երկոտասան. ըստ միոյ միոյ ամ-
սոյ տայրն զպտուղս իւրեանց. և տերև
3 ծառոյն էր բժշկութիւն հեթանոսաց։ *Եւ
նզովք անդ ոչ ևս էին. և աթոռն այ և
գառինն նր էր 'ի նմա. և ծառայք նր պաշ-
4 տէին զնա. *և տեսանէին զերեսս նր.
5 և անունն նր գրեալ էր 'ի ճակատս նց։ *Եւ
գիշեր ոչ անդ, և չէր ինչ անդ պէտք ճր-
րագի և լուսոյ արեգական. վն զի տր
ած լուսաւորէր զնս. և թգւրեսցեն յա-
6 ւիտեանս յաւիտենից։ *Եւ ասէ ցիս.
այս բանք հւտրիմ է և ճշմարիտ. և տր
ած մրգրէից ոգւց՝ առաքեաց զհրեշտակ
իւր՝ ծռյից իւրոց ցուցանել՝ զոր լինե-
7 լոց է վղվղակի. (*ահա գամ վաղվա-
ղակի.) երանի՝ որ պահէ զբանս մրգրէու-
8 թեն զայս։ *Եւ ես յովհաննէս լուայ՝ և
տեսի զայս ամ. և յորժամ լուայ և տեսի,
անկայ՝ և երկիր պագի հրեշտակին՝ որ
9 ցուցանէր ինձ զայս ամ։ *Եւ ասէ ցիս. մի
անկանիր առաջի իմ՝ և երկիր պագաներ.
քզի և ես ծառայակից քո եմ և եղբարց
քոց՝ որ պահեսցեն զբանս մարգարէութե
10 գրոյս այսորիկ. այ երկիր պագ։ *Եւ ասէ
ցիս դրձլ. մի կնքեր զբանս մրգրէական
11 գրոցս այսմիկ. քզի ժամս մերձ է։ *Որ
ամպարշտելոցն է՝ ամպարշտեսցի, և որ
աղտեղանալոցն է՝ աղտեղասցի, և որ ար-
դարանալոցն է՝ արդարասցի, և որ սրբե-

լոցն

digitised by A.R.A.R.@

լոցն է՝ որբեսցի։ *Ահա գամ վաղվաղա- 12
կի՝ և վարձք իմ ընդ իս, հատուցանել իւ-
րաքանչիւր ըստ գործս իւրեանց։ *Ես 13
եմ ալփայ և օվ, սկիզբն և կատարած,
առաջին և վերջին։ *Երանելիք են՝ որ 14
պահեն զպատուիրանս նր. նք ունիցին իշ-
խանութի ուտել 'ի փայտէն կենաց, և մը-
տանել ընդ դրունս քաղաքին։ *Այլ ել- 15
ցեն արտաքս՝ շունք և դեղատուք և
պոռնօղք և կռապաշտք, և ամենեան որ
սիրեն զստութի։ *Ես յս առաքեցի ըզ- 16
հրեշտակ իմ վկայել զայս ձեզ եկեղե-
ցեաց. ես արմատ և սեռ 'ի դաւթայ,
և աստղ պայծառ առաւօտին։ *Եւ հոգի 17
և փեսայն՝ որ գալոցն եմ. և որ լսէ՝ ա-
սելով թէ եկ, և որ ծարաւի իցէ՝ եկես-
ցէ, և որ ոք կամի առնուլ զջուրն կե-
նաց ձրի։ *Վկայեմ և ես ամի՝ որ լսէ 18
զբանս մարգարէութեան գրոցս այսմիկ. թէ
ոք յաւելցէ 'ի սա, յաւելցէ ած 'ի վր
նր զեօթն հարուածսն՝ գրեալս 'ի գիրս
յայս։ *Եւ եթէ ոք պակասեցուսցէ 'ի 19
բանից մրգրէութեն գրոցս այսմիկ՝ պակա-
սեցուսցէ և հատցէ ած զբաժին նորա 'ի
ծառոյն կենաց՝ և 'ի քղքէն սրց՝ որ գրել
է 'ի գիրս յայս։ *Ասաց՝ որ վկայեացն 20
զայս. գամ ես վաղվաղակի. ամէն։ Եկն
տր յս քս։ Շնորհք տն մերոյ յսի քսի 'ի
վր ամ սրբոց. ամէն։

ՎԱԽՃԱՆ։

Библиотека
digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@